ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Դ

ՀՐԱՄԱՆԱՒ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

CHURCH FATHERS
IV

MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF RA
INSTITUTE OF PHILOSOPHY, SOCIOLOGY AND LAW

ST. HOVHAN VOROTNETSY

EXEGETICAL-PHILOSOPHICAL HOMILIES

ОТЦЫ ЦЕРКВИ
IV

ПЕРВОПРЕСТОЛЬНЫЙ СВ. ЭЧМИАДЗИН

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ФИЛИСОФИИ, СОЦИОЛОГИИ И ПРАВА

СВ. ОВАН ВОРОТНЕЦИ

БИБЛЕЙСКИЕ ТОЛКОВАТЕЛЬНО-ФИЛИСОФСКИЕ РЕЧИ

HOLY ETCHMIADZIN – 2009 – СВ. ЭЧМИАДЗИН

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ, ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ
ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՈՐՈՏՆԵՑԻ

ՄԵԿՆՈՂԱԿԱՆ-ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՃԱՌԵՐ

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2009

ՀՏԴ 23/28 : 1/14 (091)
ԳՄԴ 86.37 + 87.3
Հ 851

Հրատարակության է երաշխավորել
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի գիտական խորհուրդը

Քննական բնագրերը, առաջաբանը և
ծանոթագրությունները
ԱՆՈՒՇ ՄԻՆԱՍՅԱՆԻ

Պատասխանատու խմբագիր՝
ակադեմիկոս Ս. Ս. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

Ս. Հովհան Որոտնեցի
Հ 851 Մեկնողական-իմաստասիրական ճառեր –Ս. Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2009.– 304 էջ:

Հայ Եկեղեցու հայր, եկեղեցական գործիչ, փիլիսոփա և մանկավարժ Ս. Հովհան Որոտնեցու (1315-1388 թթ.) հոգևոր ժառանգության բաղկացուցիչ մաս կազմող աստվածաշնչական տեղիների մեկնությունները կարևորագույն դեր են ունեցել միջնադարյան Հայաստանի մշակութային կյանքում և բազմիցս ընդօրինակվել են: Ներկա հրատարակության մեջ ամփոփված են Ս. Հովհան Որոտնեցու մեկնողական-իմաստասիրական յոթ ճառեր, որոնցում արտահայտված են միջնադարյան հայ մտածողի ոչ միայն դավանաբանական դիրքորոշումն ու աստվածաբանական դիտարկումները, այլև նրա փիլիսոփայական հայացքները:

Գիրքը հասցեագրված է հայ հոգևոր մշակույթի և փիլիսոփայության պատմությամբ հետաքրքրվողներին:

ԳՄԴ 86.37 + 87.3

Տպագրվում է մեկենասությամբ
ՄԱՐԳԻՍ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ISBN 978-9939-59-035-6

© ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ, 2009 թ.
© Ա. ՄԻՆԱՍՅԱՆ, 2009 թ.

ԱՌԱՋԱԲԱՆ

Ս. Հովհան Որոտնեցին (1315-1388 թթ.) միջնադարի հայ նշանավոր փիլիսոփա, աստվածաբան, մանկավարժ, եկեղեցական գործիչ է և իր բեղուն գործունեությամբ խոր հետք է թողել ազգային մշակույթի զարգացման վրա: Որոտնեցու հեղինակած աշխատությունները, որոնք, ըստ գրավոր աղբյուրների, մեզ են հասել նրա աշակերտների, հատկապես նրա մեծահամբավ հետևորդի՝ Գրիգոր Տաթևացու ջանքերի շնորհիվ, իմաստասիրական երկերի և Սուրբ գրքի մեկնություններ են:

Աստվածաշնչից քաղված բնաբանների մեկնությունը, որ հայտնի է «քարոզ» անվանմամբ (երբեմն անվանվում է «ճառ»), քրիստոնեական հավատի ուսուցման ու տարածման, հավատացյալի՝ որպես քրիստոնեավայել ապրող անհատի, բարոյական կերպարի ձևավորման միջնադարյան բնորոշ եղանակներից է: Աստվածաշնչական այս կամ այն դրույթը մատչելի, հասկանալի ձևով ներկայացնելու միջոցով քարոզը ներազդում է հավատացյալի վրա՝ նրան մղելով ապրել քրիստոնեական հավատով և բարոյականությամբ: Տարբերակվում է քարոզի երկու ձև. առաջինը եկեղեցու բեմից հոգևորականի՝ հավատացյալների հոտին ուղղված բանավոր խոսքն է, որի ընթացքում մատչելի, ժողովրդին հասկանալի ձևով արծարծվում են քրիստոնեական հիմնական հավատալիքները՝ դրանք կապելով մարդկանց առօրյա կյանքի ու գործունեության, միջանձնային հարաբերությունների հետ: Երկրորդ իմաստով քարոզը ներկայանում է որպես եկեղեցական մատենագրության ժանր, երբ մեկնիչը վերլուծում և մեկնաբանում է աստվածաշնչական ճշմարտությունները՝ կիրառելով աստվածաբանական և իմաստասիրական գրականության մեջ շրջանառվող՝ փաստարկման և հիմնավորման, ինչպես նաև այդ ճշմարտություններից շեղումների կամ մոլորությունների հերքման տեսական հարուստ զինանոցը, քարոզի բովանդակության մեջ ներառելով փիլիսոփայական հիմնախնդիրների քննարկումներ: Այս դեպքում քարոզը պահպանելով իր բարոյադաստիարակչական ուղղվածությունն ու աստվածաբանական-դավանաբանական նշանակությունը՝ ձեռք է բերում նաև փիլիսոփայական բովանդակություն և տեսական մեծ արժեք: Ս. Հովհան Որոտնեցու ներկայացվող քարոզները հիրավի կարող են կոչվել իմաստասիրական, քանի որ՝

- Սուրբ Գրքից ընտրված բնաբանի իմաստը պարզաբանելու համար հեղինակը դիմում է ոչ միայն «ներքին գրոցն», այսինքն՝ ներեկեղեցական վարդապետություններին, այլ նաև «արտաքին գրոցն», այսինքն՝ փիլիսոփայական գրականությանը: Իր քարոզներում Որոտնեցին հաճախակի հղում է փիլիսոփայական մտքի պատմության մեջ հայտնի այնպիսի մտա-

ծողների, ինչպիսիք են Արիստոտելը, Պլատոնը, Պորփյուրը, Փիլոն Ալեքսանդրացին, Դավիթ Անհաղթը և ուրիշներ:

- Ի հիմնավորումն աստվածաշնչական դրույթի՝ նա շատ հաճախ առաջադրում է իմաստասիրական-տրամաբանական բնույթի փաստարկներ:

- Սուրբգրային մեկնության որոտնեցիական տեքստը հագեցած է փիլիսոփայության տարբեր բնագավառներին (գոյաբանություն, իմացաբանություն, տրամաբանություն, հոգեբանություն, բնագիտություն, բարոյագիտություն, գեղագիտություն) առնչվող հանգամանալից վերլուծություններով:

- Հարուստ է նաև որոտնեցիական քարոզների տեսական զինանոցը, որում, սակայն, վճռորոշ դեր է կատարում Արիստոտելի տրամաբանական ուսմունքը:

Այսպիսով, Ս. Հովհան Որոտնեցու քարոզները փիլիսոփայական հարուստ բովանդակությամբ և քննական վերլուծության իմաստասիրական-տրամաբանական մեթոդներով հագեցած աշխատություններ են, որոնք ունեն տեսական լայն հետաքրքրություն և ճանաչողական մեծ արժեք:

Գրական ժառանգությունը

Ս. Հովհան Որոտնեցու գրական ժառանգությունը բավականին հարուստ է[1]: Նա մեկնել է Արիստոտելի «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» երկերը, Արիստոտելի «Կատեգորիաներին» նվիրված Պորփյուրի՝ միջնադարում լայն ճանաչում գտած, «Ներածությունը»[2], ինչպես նաև Փիլոն Ալեքսադրացու «Նախախնամության մասին» աշխատությունը[3]: Միջնադարյան հայ մտածողը աստվածաբանական բնույթի մի շարք երկերի հեղինակ է, որոնց զգալի մասը աստվածաշնչական բնաբանների մեկնություններ են.

1. Յովհաննու Որոտնեցւոյ տիեզերալոյս բաբունապետի արարեալ ի

---

[1] Հայ փիլիսոփայական մտքի հետազոտողները (Հ. Գաբրիելյան, Վ. Չալոյան, Լ. Խաչիկյան, Ս. Արևշատյան) անդրադարձել են Հովհան Որոտնեցու տեսական ժառանգությանը: Որոտնեցու կյանքին, գործունեությանը և փիլիսոփայական ուսմունքին հանգամանալից ուսումնասիրություն է նվիրել Գ. Գրիգորյանը (Գ. Հ. Գրիգորյան, Հովհան Որոտնեցու փիլիսոփայական ուսմունքը, Երևան, 1980): Այստեղ առանձին բաժիններով ներկայացված և վերլուծված են միջնադարյան հայ մտածողի գոյաբանական, իմացաբանական, տրամաբանական, բարոյագիտական և հոգեբանական հայացքները, ընդ որում, լայնորեն օգտագործված են Որոտնեցու թէ՛ իմաստասիրական և թէ՛ աստվածաբանական աշխատություններից քաղված նյութերը: Տե՛ս նաև Ա. Մինասյան, Հովհան Որոտնեցին Արիստոտելի երկերի մեկնիչ, Ե., 2004:

[2] Արիստոտելի «Կատեգորիաներ» երկի և Պորփյուրի «Ներածության» Որոտնեցու մեկնությունները հրատարակվել են՝ Յովհաննու Որոտնեցւոյ Վերլուծութիւն «Ստորոգութեանց» Արիստոտէլի: Հավաքական տեքստը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Կ. Չալոյանի, ռուս. թարգմ. Ա. Ա. Ադամյանի և Վ. Կ. Չալոյանի, խմբագրությամբ Ս. Ս. Արևշատյանի, Երևան, 1956:

[3] Տե՛ս Վարդազարյան Օ., Հովհան Որոտնեցու «Հաւաքումն յայտնաբանութեան ի Փիլոնէ իմաստնոյ, որ «Յաղագս նախախնամութեան» // «Բանբեր Մատենադարանի», 2006, թիվ 17, էջ 213-257:

բան Աւետարանին ըստ Յովհաննու, որ ասէ. «Ի սկզբանէ էր Բանն. և Բանն էր առ Աստուած. և Աստուած էր Բանն... Ամենայն ինչ նովաւ եղև» [Յովհ. Ա. 1, 3]:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Մատենադարանի որոշ գրչագրերում (ձեռ. 437, 4412, 5871 և այլն) Ս. Հովհան Որոտնեցուն է վերագրվում Հովհաննեսի Ավետարանի նույն բնաբանի մի այլ մեկնություն, որի հեղինակը, և այդ է վկայում նաև մեկնությանը ուղեկցող հեղինակային հիշատակարանը, 14-15-րդ դարերի հայ մատենագիր, Ս. Հովհան Որոտնեցու և Ս. Գրիգոր Տաթևացու աշակերտ Մատթեոս Ջուղայեցին է[1]: Ըստ երևույթին, միջնադարյան հայ գրիչների համար շփոթության պատճառ է դարձել այն հանգամանքը, որ Մատթեոս Ջուղայեցին իր մեկնությունը սկսում է ճիշտ նույն կերպ, ինչպես Որոտնեցին՝ Հովհաննեսի Ավետարանի «Ի սկզբանէ էր Բանն. և Բանն էր առ Աստուած. և Աստուած էր Բանն» բնաբանին նվիրված իր վերոնշյալ աշխատությունը, որն արդեն իսկ լայնորեն շրջանառվում էր հայ միջնադարյան հոգևոր կենտրոններում: Իր մեկնության սկզբում գրեթե նույնությամբ կրկնելով «եղելութեան» ու «անեղութեան» տեսակների որոտնեցիական բաժանումը՝ այնուհետև Ջուղայեցին դրույթ առ դրույթ մեկնում է Հովհաննեսի Ավետարանն ամբողջությամբ, այնինչ Որոտնեցու արծարծած բազմաթիվ իմաստասիրական-աստվածաբանական խնդիրները չեն գերազանցում առաջադրված բնաբանի սահմանները, այսինքն՝ մենք գործ ունենք Հովհաննեսի Ավետարանի միևնույն բնաբանի երկու տարբեր հեղինակների միանգամայն տարբեր մեկնությունների հետ:

2. Եռամեծի և երիցս երանեալ բազմերջանիկ և տիեզերալոյս մեծ հռետորի և անյաղթ փիլիսոփայի հայոց մեծաց Յովհաննու Որոտնեցւոյ արարեալ մեկնութիւն բանին, որ ասէ. «Ո ստեղծ առանձին զսիրտս նոցա» [Սաղ. ԼԲ. 15]:

3. Յովհաննու Որոտնեցւոյ ասացեալ ի բան մարգարէին Դաւթի, որ ասէ. «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր, և գործք ձեռաց քոց երկինք են» [Սաղ. ՃԱ. 26][2]:

4. Մեծ բաբունապետին Յովհաննու Որոտնեցւոյ ասացեալ ի բանն առաքելական, որ ասէ. «Նայեցարուք ընդ առաքեալն և ընդ քահանայապետ խոստովանութեան մերոյ ընդ Յիսուս, որ հաւատարիմ է արարչին իւրոյ» [Եբր. Գ. 1]:

---

[1] Տե՛ս Լ. Խաչիկյան, Մատթեոս Ջուղայեցու կյանքն ու մատենագրությունը, ԲՄ, թիվ 3, էջ 64, նաև՝ Սուրբ Գրքի հայերեն մեկնությունների մատենագիտություն: Պատրաստեցին Եզնիկ եպս. Պետրոսյան, Արմեն Տեր-Ստեփանյան, 2002, Հայաստանի աստվածաշնչային ընկերություն, էջ 95:

[2] 1956 թ. հրատարակվել է «Յովհաննու Որոտնեցւոյ հաւաքեալ ի բանից իմաստասիրաց» երկը՝ քննական բնագիրը և առաջաբանը Ս. Արևշատյանի և Ս. Լալաֆարյանի, թարգմանությունը գրաբարից ռուսերեն Ս. Արևշատյանի (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», 1956, թիվ 3, էջ 343-386), որը հանդիսանում է Յովհաննու Որոտնեցւոյ ասացեալ ի բան մարգարէին Դաւթի, որ ասէ. «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր, և գործք ձեռաց քոց երկինք են» իմաստասիրական քարոզի՝ հետագա դարերում ստեղծված համառոտ տարբերակը:

5. Յովհաննու Որոտնեցւոյ՝ քաջ հռետորի և արդիւնաբան բաբունապետի, արարեալ ի բան մարգարէին, որ ասէ. «Արդարութիւն Տեառն ուղիղ է և ուրախ առնէ զսիրտս, պատուիրանք Տեառն լոյս են և լոյս տան աչաց, երկիւղ Տեառն սուրբ է և մնայ յաւիտեան» [Սաղ. ԺԸ. 9]:

6. Եռամեծի և երիցս երջանկի վարժապետին իմոյ Յովհաննու Որոտնեցւոյ ասացեալ ի յաւրհնութիւն նորակերտ չինուածոյ տաճարին և զանկակատանն առաքելական աթոռոյ վանիցն Ստաթէի, որ է գլուխ և աթոռ Սիւնեաց վիճակին, ի բանն, որ ասէ. «Տէր ի տաճար սուրբ իւրում, Տէր յերկինս յաթոռ իւրում» [Սաղ. Ժ. 5]:

7. Մեծ բաբունապետին Յովհաննու Որոտնեցւոյ ասացեալ ի բան առաքելոյն Պօղոսի, որ ասէ. «Մարդով եղև մահ, և մարդով՝ յարութիւն մեռելոց» [Ա. Կորն. ԺԵ. 21]:

8. Երանելի սուրբ հօրն մերոյ եռամեծի իմաստասիրի և տիեզերահռչակ բաբունապետի Յովհաննու Որոտնեցւոյ ի յառաջաբանս Պօղոսի համառօտ տեսութիւն[1]:

9. Զորեքտասան Թղթոյն Պօղոսի մեկնութիւն համառօտ... Յովհաննու եռամեծի և տիեզերալոյս բաբունապետի հայոց, ի խնդրոյ բանասիրաց ոմանց նորին աշակերտելոց անձանց[2]:

10. Եռամեծի Յովհաննու Որոտնեցւոյ ի բան աւետարանչին Ղուկասու, որ ասէ. «Եւ յամսեանն վեցերորդի առաքեցաւ Գաբրիէլ...» [Ղուկ. Ա. 26][3]:

11. Այս են հաւատոյ դաւանութիւնք, զոր գրեաց մեծ վարդապետն Յովհաննէս Որոտնեցի, հրամանաւ պարոն Խութլուշին ի Հայս, առ կաթողիկոսն տէր Կոստանդին[4]:

12. ...Այժմ դարձուսցուք զմակոյկ լեզուիս մեր ի բանս յորդորական՝ շարժել զշրթունս մեր յաւրհնաբանութիւն...[5]:

13. Համառօտ լուծումն Աստուածաբանի՝ ի լուսաւոր բանից արդիւնական վարժապետի Յովհաննէ Որոտնեցւոյ, հաւաքեալ աշխատասիրութեամբ աշակերտի նորին Գէորգայ Երզնկացւոյ[6]:

Եզակի գրչագրերում Որոտնեցուն են վերագրվում նաև հետևյալ ոչ ծավալուն աշխատությունները.

---

[1] Ձեռ. 1233, 174բ-184բ, տե՛ս նաև ձեռ. 57, 2250:

[2] Ձեռ. 1233, 185ա-263բ, տե՛ս նաև ձեռ. 1130:

[3] Մատենադարանի շուրջ տասը ձեռագրերում (ձեռ. 152, 512, 677, 923, 2120, 2196, 2243, 2281, 5139, 10201) առկա այս փոքրածավալ քարոզը հրատարակվել է Գրիգոր Տաթևացու քարոզգրքում («Գիրք քարոզութեան, որ կոչի Ճմեռան հատոր», Կոստանդնուպոլիս, 1730, էջ 15-18):

[4] Այս գրությունը հրատարակել է Մ. Բաղդասարյանը (տե՛ս Բաղդասարյան Է., Հովհաննես Որոտնեցու դավանաբանական գրությունը Կոստանդին Ե. Սսեցի կաթողիկոսին, «Էջմիածին», 1973, թիվ 2, էջ 19-28):

[5] Այս օրհնաբանութիւնը (ծավալուն և համառոտ տարբերակներով) ուղեկցում է Որոտնեցու քարոզներին մեծաթիվ գրչագրերում՝ ձեռ. 1410, 159ա-66ա, ձեռ. 1437, 305բ-10բ, ձեռ. 1760, 266ա-87բ, ձեռ. 1717, 17ա-21բ, ձեռ. 1843, 186ա-92բ, ձեռ. 1844, 234ա-43բ, ձեռ. 1845, 268ա-78ա, ձեռ. 1850, 213ա-8ա, ձեռ. 2178, 87բ-91բ, ձեռ. 3231, 172ա-9բ, ձեռ. 3979, 70բ-9բ, ձեռ. 5142, 277բ-85բ, ձեռ. 6573, 13ա-9ա, ձեռ. 7581, 137բ-41բ:

[6] Ձեռ. 1931, 177բ, տե՛ս նաև ձեռ. 61, 3939, 5657:

- Երանելոյ սուրբ հօրն մերոյ և տիեզերահռչակ Յովհաննու Որոտնեցւոյ՝ մականուն Կախեալ ի սէրն Աստուծոյ, ի բան մարգարէին Դաւթի, որ ասէ. «Անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր» [Սաղ. ԿԵ. 12][1]:

-Ի քաղուածոյն Յովհաննու Որոտնեցւոյ ի վերայ բանին, որ գրէ աւետարանիչն, թէ. «Այլ մի ոմն ի զինուորացն տիգաւ խոցեաց զկողս նորա, և վաղվաղակի ել արիւն և ջուր» [Յովհ. ԺԹ. 34][2]:

- Յովհաննէս վարդապետի Որոտնեցւոյ՝ մականուամբ Կախեալ ի սէրն Յիսուսի, արարեալ մեկուութիւն աւետարանին ի բանն, որ ասէ. «Եւ բանն մարմին եղև, և բնակեաց ի մեզ» [Յովհ. Ա. 14][3]:

- Երանելոյն Յովհաննու Որոտնեցւոյն տեսութիւն ի վերայ բանին, որ ասէ. «Ծնաւ ձեզ այսօր փրկիչ, որ է օծեալ Տէր ի քաղաքի Դաւթի» [Ղուկ. Բ. 11][4]:

- Յովհաննու Որոտնեցւոյ մեծ րաբունապետին քարոզ և խրատ կրօնաւորաց[5]:

- Սրբոյն Յովհաննու Որոտնեցւոյ յաղագս անձին ինչ խօսեցեալ[6]:

- Յովհաննու Որոտնեցւոյ հարցմունք պիտանիք[7]:

- Յովհաննու Որոտնեցւոյ ասացեալ նախերգանք[8]:

-Նորին (Յովհաննու Որոտնեցւոյ) քարոզ վասն աղքատաց, ի բանն Դաւթի, որ ասէ. «Երանի որ խորհի զաղքատն...» [Սաղ. Խ. 2][9]:

Ի դեպ, Մատենադարանում հանդիպում են Ս. Հովհան Որոտնեցու որևէ գրվածքին հաջորդող՝ «Նորին» (Նույնի) բառով սկսվող, և այդպիսով, Որոտնեցուն վերագրվող այլ քարոզներ ևս, որոնք չենք թվարկում, քանի որ դրանց՝ Որոտնեցուն պատկանելը դեռևս ճշգրտված չէ:

Մեկնողական սկզբունքները և առանձնահատկությունները

Մեկնողական ժանրի կիրառումը, որն ընդհանուր առմամբ միջնադարյան մշակույթին բնորոշ առանձնահատկություն է, չի խոչընդոտում հեղինակին՝ ընդգրկելու փիլիսոփայական և աստվածաբանական հարցերի լայն շրջանակ և առաջադրված հիմնախնդիրներին տալու ուրույն, ինքնատիպ լուծումներ: Ավելին, այն թույլ է տալիս վերլուծության ընթացքում ներկայացնել քննվող հիմնահարցերի վերաբերյալ այլ մտածողների կարծիքները՝ կա՛մ իբրև փաստարկ ծառայեցնելով սեփական տեսակետի հիմնավորման

[1] Ձեռ. 1217, 71բ-4ա:
[2] Ձեռ. 3124, 10բ-1ա:
[3] Ձեռ. 2752, 97բ-101բ:
[4] Ձեռ. 2715, 335բ-47ա:
[5] Ձեռ. 5128, 266ա-70բ:
[6] Ձեռ. 1838, 239բ-42ա:
[7] Ձեռ. 2063, 351բ-2ա (1413-1414 թթ., Տաթևացու քարոզգիրքը):
[8] Հովհան Որոտնեցու որոշ քարոզների նախաբանների ծաղկաքաղն է. տե՛ս ձեռ. 2120, 137աբ, ձեռ. 2121, 375ա-96ա, ձեռ. 2190, 81բ-3ա:
[9] Ձեռ. 923, 95ա-6բ, ձեռ. 1431, 244ա-8բ:

համար, կա՛մ որպես խնդրի լուծման հնարավոր տարբերակ՝ առաջադրելով այլ հավասարազոր կարծիք-լուծումների շարքում, և կա՛մ էլ որպես ճշմարտությունից շեղվող, անընդունելի մոտեցում՝ քննադատելով և հերքելով դրանք:

Միջնադարում իմաստասիրական միտքը զարգացել է, մի կողմից, փիլիսոփայական բնույթի աշխատությունների, մասնավորապես փիլիսոփայական մեկնությունների ձևով, մյուս կողմից՝ հարակից ոլորտների, այդ թվում՝ աստվածաբանական գրականության շրջանակներում: Աստվածաբանական քննարկումների և վեճերի կենտրոնում գտնվող բազմաթիվ հարցեր սերտ առնչություններ ունեն իմաստասիրական կարևորագույն հիմնախնդիրների հետ: Ինչպես իրավացիորեն նկատում է ակադեմիկոս Հ. Գևորգյանը. «Կրոնափիլիսոփայական-աստվածաբանական խնդիրների լուծումը ներքին տրամաբանությամբ առնչվում է ընդհանուր փիլիսոփայական այնպիսի հարցերի հետ, ինչպիսիք են իդեալականի բնույթը և նրա հարաբերությունը նյութականի հետ, ակտուալ անվերջության և պոտենցիալ իրականացման վերացության փոխհարաբերությունները, անփոփոխ, միշտ նույնական բացարձակը և ակտուալ անվերջությունը, վերացական էությունը և առարկայական գոյությունը, մեկմիասնականը և բազմազանը և այլ հարցեր, որոնք անընդհատ արծարծվում են մաթեմատիկայի փիլիսոփայության, տրամաբանական իմաստաբանության, տեսական բնագիտության և ժամանակակից փիլիսոփայության մեջ»[1]: Այդ պատճառով ևս միջնադարյան փիլիսոփայության, այդ թվում հայ իմաստասիրական մտքի, պատմության ուսումնասիրության շրջանակներում կարևորվում են Աստվածաշնչից քաղված բնաբանների մեկնությունների բովանդակության ներկայացումը, վերլուծությունը, դերի և նշանակության պարզումը:

Իր քարոզներում Որոտնեցին ձգտում է Աստվածաշնչի դրույթները ներկայացնել Աստծու խոսքին համահունչ, «ուղղափառ» մեկնաբանությամբ: Նա ջանում է հասու լինել և ուրիշներին էլ հասցնել Աստվածային գրի ճշմարիտ բովանդակությունը, յուրաքանչյուր կոնկրետ դեպք քննելիս ցուցաբերել «պատշաճ» մոտեցում, այսինքն, ըստ անհրաժեշտության, աստվածաշնչական խոսքը հասկանալ կա՛մ ուղղակի, «բառացի» իմաստով, կա՛մ անուղղակի, փոխաբերական նշանակությամբ:

Իր մեկնողական մեթոդի էությունը բավականին հստակ ներկայացրել է ինքը՝ Որոտնեցին, պատկերավոր մի համեմատությամբ. «Ե՛ն ջրհորք՝ որ յերես ունին զջուր, և ե՛ն՝ որ խոր: Իսկ որ երեսք են՝ ի խոր փորել յիմարութիւն է, և որ խոր ունի՝ յերես փորել և դադարել՝ անմտութիւն է: Այսպէս և Գիրք Աստուածաշունչ՝ ե՛ն, որ մօտաւոր[2] ունին զգիտութիւն, և ե՛ն, որ

---

[1] Հ. Ա. Գևորգյան, Հայ փիլիսոփայության պատմության մշակութաբանական տեսանկյունները // Փիլիսոփայություն. պատմություն. մշակույթ, Երևան, 2005, էջ 35:

[2] Որոտնեցին «մօտաւոր» ասելով նկատի չունի «մոտավորապես», կամ, ինչպես ձեռագրերից մեկն է ընթերցում, «մտաւոր» իմաստը: Նա նկատի ունի «մոտ»՝ «ոչ խոր», «առձեռն» լինելը, մակերեսին մոտ գտնվելը, այսինքն՝ ուղղակի, բառացի նշանակություն ունենալը:

ի խոր. զիւրաքանչիւր խնդիր ըստ իւրում պատշաճի պարտ է խնդրել՝ ըստ այնմ, թէ՝ «Կթեա՛ կթն, և եղիցի կոգի, և թէ առաւել ճմլեսցես՝ եղիցի արիւն» [Առակ. Լ. 33]»[1]:

«Զիւրաքանչիւր խնդիր ըստ իւրում պատշաճի պարտ է խնդրել»՝ իր իսկ կողմից ձևակերպված տեսական սկզբունքին Որոտնեցին հավատարիմ է մնում ինչպես աստվածաշնչական գրքերի, այնպես էլ իմաստասիրական երկերի իր մեկնություններում: Հայտնի է, որ Ս. Հովհան Որոտնեցին հեղինակ է զույգ ծավալուն և հանգամանալից մեկնությունների՝ նվիրված Արիստոտելի «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» աշխատություններին: Իր մեկնություններում Որոտնեցին հիմնականում հավատարիմ մնալով Ստագիրացու երկերի կառուցվածքին ու բովանդակությանը, ժառանգելով ու ստեղծագործաբար օգտագործելով արիստոտելյան երկերի՝ հայ իրականության մեջ հայտնի, այլ մեկնությունների մի շարք գաղափարներ ու լուծումներ՝ ներկայացնում ու վերլուծում է հասկացության և դատողության արիստոտելյան տրամաբանական ուսմունքը[2]:

Եթե «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» երկերը վերլուծելիս Որոտնեցին որպես մեկնիչ չէր կարող չներկայացնել բնագրի հեղինակի իմաստասիրական-տրամաբանական ուսմունքը, ապա աստվածաշնչական բնաբանների մեկնություններում, Արիստոտելի գաղափարներին անդրադառնալու առումով, նա լիովին ազատ էր: Որոտնեցու աշխարհայացքի վրա Արիստոտելի իմաստասիրական ուսմունքի, մասնավորապես նրա տրամաբանության, խորը, հիմնարար ազդեցության հետևանքով իր քարոզներում ևս նա բազմիցս անդրադառնում է Ստագիրացու փիլիսոփայական հայացքներին, իսկ հարկ եղած դեպքում արիստոտելյան տրամաբանությունը ծառայեցնում է որպես մեկնաբանության, տեսական հետազոտության մեթոդ: Պատահական չէ, որ ստորև ներկայացվող հաջորդ մեկնողական սկզբունքը, որ տեսականորեն ձևակերպում և գործնականում կիրառում է Ս. Հովհան Որոտնեցին, հիմնվում է հենց Արիստոտելի տրամաբանական ուսմունքի վրա:

Աստվածաշնչի «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր, և գործք ձեռաց քոց երկինք են» բնաբանի մեկնության մեջ Որոտնեցին, անդրադառնալով Սաղմոսի «Հաստատեաց զերկիր ի վերայ ջուրց» [Սաղ. ՃԼԵ. 6] դրույթի տարբեր վարդապետների իրարամերժ մեկնություններին, հանգում է հետևյալ համոզմանը. «Բայց զայս գիտել պարտ է, զի մեկնութիւնք ոչ կարեն ընդ ներքոյ սահմանի արկանել զգիրս Աստուածաշունչս: Զի թէպէտ մեկնողն մեծ վարդապետ գոլով ոչ կարէ ասել, թէ մարգարէն յայս միտս

---

[1] Եռամեծի և երիցս երանեալ բազմերջանիկ և տիեզերալոյս մեծ հռետորի և անյաղթ փիլիսոփայի հայոց մեծաց Յովհաննու Որոտնեցւոյ արարեալ մեկնութիւն բանին, որ ասէ. «Ո ստեղծ առանձին զսիրտս նոցա», ձեռ. 6573, 230աբ:

[2] Արիստոտելի «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» աշխատությունների Հովհան Որոտնեցու մեկնությունների մասին տե՛ս Մինասյան Ա. Ա., Արիստոտելի «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» երկերի Հովհան Որոտնեցու մեկնությունները // Աշխատություններ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի, պրակ 1, Ե., 1998, էջ 63-88:

մեկնութեան ասաց զայս բան: Եւ թէ այս հարկաւ լինի, այնժամ Գիրք Աստուածաշունչ աղարտեալ լինէր ի հեթանոսաց: Բայց Գիրք Աստուածաշունչ ընդարձակ ունի զիմաստ և ի բազումս տարածանի, և մեկնութիւն վարդապետի չիջանի, իսկ Գիրք և բանք Աստուածաշունչ անչիջանելի մնան»[1]: Այսինքն, քանի որ աստվածաշնչական դրույթներն ունեն լայն ընդգրկում և իմաստային առումով միանշանակ չեն, ապա, որքան էլ հեղինակավոր ու խորամիտ լինի Աստվածաշնչի մեկնիչը, նա չի կարող վերջնական ճշգրիտ ձևակերպումների հանգել Աստվածաշնչի իսկական բովանդակությունը բացահայտելու իմաստով: Ուրեմն, հնարավոր են աստվածաշնչական միևնույն դրույթի տարբեր «ընթերցումներ»՝ մեկնաբանություններ, հնարավոր են տարակարծություններ և անգամ իրարամերժ տեսակետներ: Այդ դեպքում ինչպե՞ս վարվել, ինչպե՞ս տարբերել ճիշտը ստից: Որոտնեցին հանգում է հետևյալ եզրակացությանը. «Ապա ուրեմն, հարկ է մեզ ընտրողութիւն առնել և որ ըստ շաւղաց Աստուածաշունչ գրոց ընթանայ՝ ընդունե՛լ, իսկ որ արտաքոյ է ի շաւղաց Աստուածաշունչ գրոց՝ ո՛չ ընդունել, թէպէտ ասողն մեծ ոք իցէ: Զի ասէ Արիստոտէլ, թէ սիրելի է այր և սիրելի է ճշմարտութիւն. երկուց ելոց սիրելեաց՝ մանաւանդ սիրելի է ճշմարտութիւն»[2]: Փաստորեն, նա կոչ է անում գերի չլինել որևէ հեղինակության ու աստվածաշնչական մեկնությունների, և ընդհանրապես աստվածաբանական գրականության նկատմամբ, ցուցաբերել քննական, ընտրողական վերաբերմունք: Ընդ որում, հաշվի առնելով մի շարք հանգամանքներ (այն, որ, ինչպես նշեցինք, աստվածաշնչական դրույթներն ունեն խորության տարբեր աստիճաններ և կարող են տեղիք տալ ինչպես բառացի, այնպես էլ՝ այլաբանական մեկնաբանության, որ դրանք բազմիմաստ են ու ընդգրկում են տարաբնույթ հարցեր և այլն) ճշմարտության տարբերակման նրա կողմից առաջարկվող չափանիշը («որ ըստ շաւղաց Աստուածաշունչ գրոց ընթանայ՝ ընդունե՛լ, իսկ որ արտաքոյ է ի շաւղաց Աստուածաշունչ գրոց՝ ո՛չ ընդունել») միանշանակ բնույթ չունի, և փաստորեն յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ճշմարտությունը (այսինքն՝ այն, «որ ըստ շաւղաց Աստուածաշունչ գրոց ընթանայ») Աստվածաշնչի «մեկնիչ-հետազոտողի» կողմից բացահայտվում է ըստ նրա անկանխակալ, բազմակողմանի ուսումնասիրության արդյունքների: Այդպիսով, Սուրբ Գրքի մեկնիչը ստանում է հեղինակություններին գերի չլինելու, տարաբնույթ կարծիքները քննելու և ճշմարիտ լուծումը ընտրելու, աստվածաշնչական դրույթի խորության աստիճանը որոշելու և ըստ այդմ՝ այն բառացի կամ այլաբանորեն մեկնաբանելու իրավունք, և, նույնիսկ, կարելի է ասել, հրահանգ:

Աստվածաբանական գրականության նկատմամբ քննական և ընտրողական վերաբերմունքի համար «տեսական արդարացում» գտնելու նպատակով Ս. Հովհան Որոտնեցին, ինչպես նշեցինք, դիմում է Արիստոտելի

---

[1] Յովհաննու Որոտնեցւոյ ասացեալ ի բան մարգարէին Դաւթի, որ ասէ. «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր, և գործք ձեռաց քոց երկինք են», ձեռ. 6573, 132բ:

[2] Նույն տեղում, 133բ:

տրամաբանական ուսմունքին. «Արիստոտէլ ի Վերլուծականումն ի հինգ բաժանէ զամենայն հաւաքաբանութիւն՝ զապացուցական, ի տրամաբանական, ի ճարտասանական, ի մասնական և ի քերթողական...Ըստ այսմ սարասի ծանիր և զեկեղեցւոց վարդապետութիւնս բաժանել ի հինգ...»[1]: Այդպիսով Ս. Հովհան Որոտնեցին եկեղեցական «վարդապետությունները» ևս բաժանում է հինգ խմբի, ճիշտ այնպես, ինչպես Արիստոտելը տարբերակում է մտահանգման հինգ եղանակներ, որոնք ունեն ճշմարտության և կեղծության տարբեր հարաբերակցություններ: Ըստ Արիստոտելի, «ապացուցական հաւաքաբանութիւնը» լիովին ճշմարիտ է, այնինչ «քերթողականը»՝ լիովին կեղծ է, «ճարտասանական»-ում ճշմարիտը և կեղծը հավասարակշռում են միմյանց, «տրամաբանական»-ում գերակշռում է ճշմարիտը, ի տարբերություն «մասնական»-ի, որում գերակշռում է կեղծը: Ըստ այդմ, կարծում է Որոտնեցին, եկեղեցական ուսմունքները ևս լինում են «ամենևին ճշմարիտ» (ինչպես օրինակ, առաքյալների և մարգարեների աստվածաշնչական գրքերը), «ամենևին սուտ» (ինչպես օրինակ, առասպելական պատմությունները), «հաւասարապէս ճշմարիտ և սուտ» (ինչպես օրինակ, հմտացած վարդապետների բեմասացության խոսքը), «առաւել ճշմարիտ, քան սուտ» (այդպիսիք են, օրինակ, սուրբ հայրապետների՝ Աթանասի, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Աստվածաբանի և այլոց գրվածքները), և, վերջապես, «առաւել սուտ, քան ճշմարիտ» (ինչպես օրինակ, թագավորների մասին գովաբանական պատմությունները): Այսպիսի տրամաբանական հիմնավորմամբ Որոտնեցին լիովին արդարացված է համարում աստվածաբանական բնույթի գրականության նկատմամբ ևս տարբերակված մոտեցման կիրառումը, ինչը նշանակում է, որ կարելի է քննության ենթարկել դրանում արտահայտված ցանկացած տեսակետ՝ նախապատվությունը տալով որևէ մեկին կամ առաջադրելով այլ՝ նաև իմաստասիրական բնույթի լուծում: Դավանաբանական գրականության նկատմամբ քննական և ընտրողական մոտեցում ցուցաբերելու արդարացված և անհրաժեշտ լինելը լիակատար իրավունք է ընձեռում Ս. Հովհան Որոտնեցուն հրաժարվել եկեղեցական որոշ վարդապետների այս կամ այն տեսակետից և ընդունելի համարել կարևորագույն շատ հիմնահարցերի «արտաքին իմաստասերների» լուծումները: Ղեկավարվելով նշված սկզբունքով՝ Որոտնեցին առաջադրում է որոշ բնագիտական-տիեզերագիտական բնույթի հիմնախնդիրների լուծումներ[2]:

Այդպիսով բացահայտ դրսևորվում է միջնադարյան հայ մտածողի աշխարհայացքին հատուկ ռացիոնալականությունը, որը նաև հստակ ձևակերպվում է նրա կողմից: «Նախ պարտիմք բանական արհեստիւ ներածիլ ի մակացութիւն աստուածաբանական իմաստից»[3],- այս արտահայտությամբ

[1] Յովհաննու Որոտնեցւոյ ասացեալ ի բան մարգարէին Դաւթի, որ ասէ. «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր, և գործք ձեռաց քոց երկինք են», ձեռ. 6573, 132բ-133ա:

[2] Տե՛ս նույն տեղը, 122բ-148բ:

[3] Յովհաննու Որոտնեցւոյ՝ քաջ հռետորի և արդիւնաբան ռաբունապետի, արարեալ ի բան մարգարէին, որ ասէ. «Արդարութիւն Տեառն ուղիղ է և ուրախ առնէ զսիրտս, պատուիրանք

է սկսում Որոտնեցին աստվածային արդարության վերլուծությանը նվիրված հատվածը «Արդարութիւն Տեառն ուղիղ է և ուրախ առնէ զսիրտս» աստվածաշնչական բնաբանի մեկնության մեջ: Անշուշտ, միջնադարյան հայ մտածողի աշխարհայացքում ռացիոնալականությունը օրգանապես ներաճած է քրիստոնեական աշխարհընկալման հետ, ինչը հատկապես ակնհայտ դրսևորում է ստանում նրա իմաստասիրական քարոզներում:

Հավատ և բանականություն՝ ահա այն երկու հիմնասյուները, որոնց հենքի վրա կառուցում է իր քարոզները Ս. Հովհան Որոտնեցին. հավատը որպես ցանկացած իմացության, իմաստավորման նախապայման, իսկ բանականությունը՝ աստվածաշնչական խորախորհուրդ ճշմարտություններին հասու լինելու միջոց, եղանակ: Ինչպես մարդու աչքերը, ունենալով բնական լույս, կարող են տեսնել շրջապատը և տարբերել գույները միայն արեգակի լույսի օժանդակությամբ, այնպես էլ, Որոտնեցու կարծիքով, «միտք բնական հայեցմամբ լուսոյ՝ օժանդակեալ ի ծագմանէ լուսոյն Աստուծոյ՝ սովաւ դատէ և ընտրէ զամենայն իմանալի գոյութիւնս»[1]: Այսինքն՝ միայն աստվածային հավատով ներշնչված, լուսավորված լինելու դեպքում է մարդկային միտքն ի զորու թափանցել իրերի և երևույթների խորքը, ճանաչել և արժեվորել իմացվածը: Այդպիսով, իր քարոզներում Որոտնեցին նպատակ ունի «ելանել ի բարձրագոյն գահաւանդակս» և «բնական բանականության» միջոցով պարզել աստվածաշնչական դրույթների և հասկացությունների «ճշմարիտ նշանակութիւնը»:

Արիստոտելի տրամաբանական ուսմունքի համապարփակ, համընդգրկուն բնույթի անվերապահ ընդունումը թույլ է տալիս միջնադարյան հայ մեկնիչին քրիստոնեական ուղղադավան աստվածաբանության մեջ ավանդաբար բանական քննության առարկա չհամարվող ոլորտներում ևս կիրառել արիստոտելյան տրամաբանությունը:

Այսպես, չարունակելով քրիստոնեական հայրաբանության ավանդույթները՝ Ս. Հովհան Որոտնեցին Աստծուն վերագրում է ժխտողական (անեղ, անհաս, անորակ, անքանակ, անուր, անները, անսկիզբ և այլն) և դերադրական (ամենակարող, ամենակալ, ամենահզոր, ամենաիմաստուն, ամենաբարի և այլն) բնութագրիչներ: Որոտնեցին լիովին գիտակցում է, որ Աստծու նկատմանը առավել կիրառելի են ժխտողական, քան աստվածային էությունն ինչ-որ կերպ արտահայտող որակումները. «Առաւել ստորոգի անեղութիւնն ի վերայ Աստուծոյ, քան էութիւնն»[2]: Եվ, այնուամենայնիվ, նա փորձում է Աստծու նկատմամբ կիրառել կատեգորիաների արիստոտելյան ուսմունքը:

Տեառն լոյս են և լոյս տան աչաց, երկիւղ Տեառն սուրբ է և մնայ յաւիտեան», ձեռ. 1760, 291բ:

[1] Եռամեծի և երիցս երանեալ բազմերջանիկ և տիեզերալոյս մեծ հռետորի և անյաղթ փիլիսոփայի հայոց մեծաց Յովհաննու Որոտնեցւոյ արարեալ մեկնութիւն բանին, որ ասէ. «Ո ստեղծ առանձին զսիրտս նոցա», ձեռ. 6573, 230բ:

[2] Յովհաննու Որոտնեցւոյ տիեզերալոյս ռաբունապետի արարեալ ի բան Աւետարանին ըստ Յովհաննու, որ ասէ. «Ի սկզբանէ էր Բանն. և Բանն էր առ Աստուած. և Աստուած էր Բանն... Ամենայն ինչ նովաւ եղև», ձեռ. 6573, 154բ:

«Արիստոտէլ զամենայն գոյս ի տաս բաժանէ՝ ստորոգութիւնս մակագրէ»[1],- գրում է Ս. Հովհանը և ապա շարունակում, որ Օլիմպիոդորոս փիլիսոփան[2] արիստոտելյան տասը կատեգորիաներից միայն չորսն է համարում պարզ, իսկ մնացածը՝ կապով գոյացածներ (այսպես, էությունից և քանակից գոյացել են տեղի և ժամանակի, էությունից և որակից՝ գործելու և կրելու, իսկ էությունից և հարաբերությունից՝ դրության և ունենալու կատեգորիաները): Այդպիսով, «Պարզ ստորոգութիւն՝ միայն գոյացութիւն, քանակ, որակ, առինչ: Իսկ ի սոցանէ գոյացութիւնն միայն ասի ի վերայ Աստուծոյ, իսկ այլքն՝ որակն և քանակն՝ ո՛չ, զի Աստուած անորակ և անքանակ է: Բայց ըստ կերպի ինչ, որպէս ի վերայ ստորնայնոցս, ասի»[3],- կարծում է Որոտնեցին: Եվ Որոտնեցին «գտնում է» այն «կերպը», որով ոչ միայն էության, այլ նաև քանակի, որակի և հարաբերության կատեգորիաները կիրառվում են Աստծու նկատմամբ: Այսպես, գոյացություն կատեգորիայից նա բխեցնում է նույնության, որակի կատեգորիայից՝ նմանության և քանակի կատեգորիայից՝ հավասարության հասկացությունները: Այնուհետև Որոտնեցին մատնանշում է աստվածային Եռյակ Միասնության այնպիսի որակումներ՝ հավիտենական բանականություն, ամենակարող հզորություն և մեծություն, որոնց հիմքում ընկած են նշված հասկացությունները. «Աստուածային անձինքն ըստ գոյացութեան ունին զնույնութիւն՝ բանականութիւն յաւիտենական, զզօրութիւն ամենակատար՝ ըստ նմանութեան, զմեծութիւն՝ ըստ հաւասարութեան»[4]: Այսինքն՝ աստվածային եռյակ անձերը նույնն են իրենց հավիտենական բանականությամբ, նման են ամենակարող հզորությամբ և հավասար են մեծությամբ: Ինչ վերաբերում է հարաբերություն կատեգորիային, ապա այն, ըստ Որոտնեցու, ևս կարելի է գործածել Սուրբ Երրորդության նկատմամբ՝ «որպէս հայր և որդի, բղխող և բղխեալ», իսկ այդ կատեգորիային բնորոշ այնպիսի հատկություն՝ ինչպիսին է միաժամանակյա, միմյանցով պայմանավորված գոյությունը («համանգամայն գոլ»), նույնպես «ցուցանի ի նոյն Երրորդութիւնն՝ համանգամայն գոլ ըստ էութեան, ըստ մեծութեան, ըստ զօրութեան»[5]: Ահա այսպես, կատեգորիաների արիստոտելյան ուսմունքը գործուն կիրառություն է ստանում Սուրբ Երրորդության աստվածային էության բնութագրության ընթացքում:

Մի այլ դեպքում, դարձյալ կիրառելով արիստոտելյան տրամաբանությունը որպես աստվածաշնչական դրույթների քննության և մեկնաբանու-

[1] Յովհաննու Որոտնեցւոյ՝ քաջ հռետորի և արդիւնաբան բաբունապետի, արարեալ ի բան մարգարէին, որ ասէ. «Արդարութիւն Տեառն ուղիղ է և ուրախ առնէ զսիրտս, պատուիրանք Տեառն լոյս են և լոյս տան աչաց, երկիւղ Տեառն սուրբ է և մնայ յաւիտեան», ձեռ. 1760, 291բ:

[2] Արիստոտելի «Կատեգորիաների» Դավիթ Անհաղթի մեկնությունը Հովհան Որոտնեցին սխալմամբ վերագրել է Օլիպիոդորոս փիլիսոփային:

[3] Յովհաննու Որոտնեցւոյ՝ քաջ հռետորի և արդիւնաբան բաբունապետի, արարեալ ի բան մարգարէին, որ ասէ. «Արդարութիւն Տեառն ուղիղ է և ուրախ առնէ զսիրտս, պատուիրանք Տեառն լոյս են և լոյս տան աչաց, երկիւղ Տեառն սուրբ է և մնայ յաւիտեան», ձեռ. 1760, 291բ:

[4] Նույն տեղում:

[5] Նույն տեղում:

թյան մեթոդ, Որոտնեցին դիմում է հոմանունների մասին Արիստոտելի ուսմունքին:

Այսպես, համաձայն արիստոտելյան «Հոմանունք ասին՝ որոց անուանք միայն հասարակ, իսկ ըստ անուանն բան գոյացութեանն՝ այլ» սահմանման՝ եթե տարբեր իրեր կամ երևույթներ նշանակվում են նույն անուններով, մենք գործ ունենք «հոմանունության» հետ: Ըստ այդմ Ս. Հովհան Որոտնեցին ձևակերպում է հոմանունների ուսումնասիրության հետևյալ սկզբունքը. «Եւ ի վերայ հոմանուանց զերիսս զայսոսիկ պարտ է խնդրել. նախ, թե քանի՞ նշանակութիւն ունի: Երկրորդ, թէ յաղագս որո՞յ նշանակութեան է հանդէս: Եւ ապա զերրորդն՝ սահմանել կամ ստորագրել»[1]: Այսինքն՝ հոմանունների հանդիպելիս (բառի բազմանշանակության դեպքում) պետք է պարզել բառի հնարավոր իմաստները, ճշտել, թե այն իր ո՛ր իմաստով է գործածված տվյալ ենթախորքում և ապա սահմանել բառ-հասկացությունը իր ճշտված նշանակությամբ: Այս մեթոդաբանական սկզբունքով Որոտնեցին տարբեր քարոզներում քննում և մեկնում է «բան», «ախտ», «առաքելութիւն», «հաւատարիմ», «անուն», «տէր», «երկինք» և այլ հասկացություններ՝ բացահայտում է հնարավոր նշանակությունները և ճշտում տվյալ ենթախորքում ունեցած ստույգ իմաստը:

Ս. Հովհան Որոտնեցու համար Արիստոտելի տրամաբանական ուսմունքի շատ դրույթներ նաև փաստարկ են հանդիսանում աստվածաբանական նյութի հիմնավորման համար: Այսպես, հիմնավորելով «Է անեղութիւն Աստուած հայր» դրույթը՝ Որոտնեցին առաջադրում է վեց փաստարկ, որոնցից երրորդը մեր այս վերջին պնդման ակնառու դրսևորումն է. «Երրորդ, ի հարկաւոր պատճառաց... քանզի Արիստոտէլ ի Պերի արմէնիասն յորժամ բաժանէ զհակասութիւն, տրամատէ ի կարելի և յանկարելի, ի հարկաւոր և ի ներընդունական: Կարելի է մարդոյ լինել ճարտասան կամ ոչ, իսկ անկարելի է մարդոյ լինել ձի, և ներընդունական է լինել անձրև կամ ոչ, իսկ հարկաւոր է մարդոյ լինել բանական: Հարկն միշտ ներգործապէս երևի ամենայն էակս. որպէս բնութիւն տնկոց և անասնոց հարկ է զաճումն և զպտղածնութիւն, զկերակրականն և զվտարականն: Եւ ոչինչ է յէակացս, որ ոչ ունի զհարկն առաւել կամ նուազ: Յայտ է ուրեմն, թէ է՛ ոմն սկզբնագոյն հարկեցուցիչ բոլորից, որ ըստ չափոյ պիտոյից եղեալ է զհարկն զայս ամենեսեան. և է նա Աստուած»[2]: Մեջբերված հատվածում ակնառու ձևով դրսևորվում է Որոտնեցու քննախույզ միտքն իր շարժման մեջ: Եղանակավորող դատողությունների մասին արիստոտելյան իմացաբանական-տրամաբանական ուսմունքից անցում է կատարվում անհրաժեշտության հասկացության գոյաբանական ընկալմանը՝ «հարկն միշտ ներգործապէս երևի

---

[1] Յովհաննու Որոտնեցւոյ ասացեալ ի բան մարգարէին Դաւթի, որ ասէ. «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր, և գործք ձեռաց քոց երկինք են», 141բ:

[2] Յովհաննու Որոտնեցւոյ տիեզերալոյս ռաբունապետի արարեալ ի բան Աւետարանին ըստ Յովհաննու, որ ասէ. «Ի սկզբանէ էր Բանն. և Բանն էր առ Աստուած. և Աստուած էր Բանն... Ամենայն ինչ նովաւ եղև», 153բ:

ամենայն էակս»[1], որից և արվում է պահանջվող հետևությունը. «է՛ ոմն սկզբնագոյն հարկեցուցիչ բոլորից», որը պահանջվող չափով յուրաքանչյուր էակի օժտում է անհրաժեշտությամբ և դա, ըստ Որոտնեցու, չի կարող լինել որևէ այլ ոք, եթե ոչ Աստված: Այսպիսով, աստվածաբանական դրույթի հիմնավորմանը իբրև փաստարկ ծառայեցվում է մոդալ դատողությունների մասին արիստոտելյան տրամաբանական ուսմունքը, որը, նախքան այդ, ենթարկվում է որոշակի գոյաբանական մեկնաբանության:

Ընդհանրապես, իր քարոզներում Ս. Հովհան Որոտնեցին օգտագործում է ամենաչնչին առիթն իսկ արիստոտելյան տրամաբանության հիմնադրույթներին որևէ կերպ անդրադառնալու համար: Նման առիթ կարող են հանդիսանալ մեկնվող բնաբանում հանդիպող «բան», «գործ» և այլ հասկացություններ, որոնք հնարավորություն են ընձեռում մեկնիչին ծավալուն էքսկուրսներ կատարել «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» երկերի բնագավառը: Որոտնեցու քարոզների համար լիովին օրինաչափ է, որ աստվածաբան մեկնիչը մեծաթիվ էջեր ու ամբողջական գլուխներ է նվիրում արիստոտելյան տրամաբանության առանցքային դրույթների շարադրմանը[2]: Եթե մեկնվող բնաբանում բացակայում են Արիստոտելի նշված երկերի խնդրաբույլին անմիջականորեն առնչվող հասկացությունները, ապա Որոտնեցին այնպես է կառուցում իր քննական շարադրանքը, որ այսպես թե այնպես հանգում է դրանց: Աստվածաշնչական «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր, և գործք ձեռաց քոց երկինք են...» բնաբանի քննության ընթացքում մեկնաբանելով «տէր» հասկացությունը, Որոտնեցին գրում է. «Զի՞նչ նշանակէ «տէրս» աստանօր: Գիտելի է, զի «տէրն» անուն է և մի է ի մասանց բանի: Բայց նախ տեսցուք՝ զի՞նչ է բան...»[3]: Մտքերի նման ընթացքը հնարավորություն է ընձեռում Որոտնեցուն աստվածաբանական նյութի քննարկումից անցնելու «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» երկերի խնդրաբույլին. քննել «բան», ապա «անուն», «բայ», «հոմանուն», «փաղանուն», «հարանուն» և այլ հասկացություններ, անդրադառնալ «հոմանունության» պատճառներին և իմացաբանական-տրամաբանական այլ կարևորագույն հիմնախնդիրների:

Ահա այսպես, ամենաբազմազան ձևերով գործառնելով աստվածաշնչյան

---

[1] Ընդհանրապես Որոտնեցուն՝ որպես Արիստոտելի երկերի մեկնիչի, հատուկ է Ստագիրացու տրամաբանական ուսմունքի գոյաբանական մեկնաբանությունը, այդ մասին մանրամասն տե՛ս Ա. Ա. Մինասյան, Արիստոտելի «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» երկերի Հովհան Որոտնեցու մեկնությունները, էջ 78-83:

[2] Տե՛ս Յովհաննու Որոտնեցւոյ տիեզերալոյս ռաբունապետի արարեալ ի բան Աւետարանին ըստ Յովհաննու, որ ասէ. «Ի սկզբանէ էր Բանն. և Բանն էր առ Աստուած. և Աստուած էր Բանն... Ամենայն ինչ նովաւ եղև», էջ 164-166, տե՛ս նաև՝ Յովհաննու Որոտնեցւոյ ասացեալ ի բան մարգարէին Դաւթի, որ ասէ. «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր, և գործք ձեռաց քոց երկինք են», էջ 117-120, Յովհաննու Որոտնեցւոյ՝ քաջ հռետորի և արդիւնաբան ռաբունապետի, արարեալ ի բան մարգարէին, որ ասէ. «Արդարութիւն Տեառն ուղիղ է և ուրախ առնէ զսիրտս, պատուիրանք Տեառն լոյս են և լոյս տան աչաց, երկիւղ Տեառն սուրբ է և մնայ յաւիտեան», ձեռ. 1760, էջ 296-298:

[3] Յովհաննու Որոտնեցւոյ ասացեալ ի բան մարգարէին Դաւթի, որ ասէ. «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր, և գործք ձեռաց քոց երկինք են», 117բ:

բնաբանների Ս. Հովհան Որոտնեցու մեկնություններում՝ Արիստոտելի տրամաբանական ուսմունքը ներթափանցում է կրոնա-աստվածաբանական հիմնադրույթների՝ «հավատի ճշմարտությունների» մեջ և սերտորեն միաձուլվում դրանց հետ: Որոտնեցու աշխարհընկալման մեջ բանականության և հավատի ճշմարտությունները ոչ միայն և ոչ այնքան «խաղաղ» համագոյակցում են, որքան որոշակիորեն համագործակցում են միմյանց հետ: Ընդ որում, եթե տրամաբանական-իմաստասիրական դրույթները գործուն կիրառություն են ստանում կրոնա-աստվածաբանական նյութի ապացուցման և փաստարկման ընթացքում, ապա կրոնա-աստվածաբանական նյութը, իր հերթին, փաստարկ և անալոգիա է հանդիսանում իմաստասիրական շատ հիմնադրույթների համար՝ միաժամանակ իր «ճշգրտումները» մտցնելով դրանցում: Միջնադարյան հայ մտածողի աշխարհայացքում դրսևորվող այս յուրատիպ «դաշինքի» շնորհիվ իմաստասիրությունը «զինում է» աստվածաբանությանը բանականության զորեղ զենքով, իսկ աստվածաբանությունը հավատի պայծառ լույսով «լուսավորում», «մաքրագործում է» փիլիսոփայական հիմնադրույթները:

Ս. Հովհան Որոտնեցու տեսական ժառանգության մեջ համադրվում են հին հույն իմաստասերների, առաջին հերթին՝ Արիստոտելի փիլիսոփայական ուսմունքը և քրիստոնեական վարդապետությունը: Որոտնեցու աշխարհայացքում այս երկուսը համաձուլվում և ամբողջանում են: Այսուհանդերձ, դա չի նշանակում, որ Որոտնեցին ձևափոխում, խեղաթյուրում է սրանցից որևէ մեկը՝ մյուսին հաշտեցնելու, հարմարեցնելու նպատակով: Որպես բարեխիղճ գիտնական՝ որևէ հիմնախնդրի «արտաքին», իմաստասիրական լուծման և «ներքին», եկեղեցական-վարդապետական տեսակետի հակասության դեպքում Որոտնեցին արձանագրում է մոտեցումների այդ բախումը, հակադրությունը, սակայն, իբրև սկզբունքային մտածող՝ յուրաքանչյուր կոնկրետ խնդրի առաջադրում է ուրույն լուծում:

«Ո ստեղծ առանձին զսիրտս նոցա...» աստվածաշնչյան բնաբանի մեկնության մեջ Որոտնեցին հանգամանալից քննարկում է հոգու և մարմնի փոխհարաբերության հիմնահարցը: Նախքան խնդրի վերաբերյալ իր հայացքները շարադրելը Որոտնեցին տասը կետով առաջադրում է հոգու մասին թե՛ «արտաքին» իմաստասերների, թե՛ եկեղեցական վարդապետների տեսակետները և տալիս դրանց հիմնավոր հերքումները: Որոտնեցու քննական հերքումների համար ելակետ է ծառայում հետևյալ սահմանումը. «Հոգի է էութիւն անմարմին, անմահ, անձնիշխան, մշտաշարժ, բանական»[1]: Միջնադարյան հայ մտածողը ըստ ամենայնի հիմնավորում է սահմանվող հասկացության թե՛ սեռը («էութիւն»), և թե՛ տարբերիչ հատկություններից յուրաքանչյուրը («անմարմին», «անմահ», «անձնիշխան», «մշտաշարժ», «բանական»): Բնականաբար, նրա կողմից քննադատվում և հերքվում են

[1] Եռամեծի և երիցս երանեալ բազմերջանիկ և տիեզերալոյս մեծ հռետորի և անյաղթ փիլիսոփայի հայոց մեծաց Յովհաննու Որոտնեցւոյ արարեալ մեկնութիւն բանին, որ ասէ. «Ո ստեղծ առանձին զսիրտս նոցա», ձեռ. 6573, 257բ:

այն տեսակետները, համաձայն որոնց հոգին ոչ թե «էութիւն» է, այլ «պատահումն», ոչ թե «անմարմին», այլ «մարմին» և այլն: Իր քննական շարադրանքի երկրորդ գլխում Որոտնեցին անդրադառնում է հոգու մասին Արիստոտելի հայացքներին: Ըստ Որոտնեցու, Արիստոտելը գտնում է, որ «առանց մարմնոյ ոչ գոլ զանձն, և ոչ է մարմին անձն, բայց ի մարմնոյ է»[1]: Այսինքն՝ հոգին մարմնի հետ կազմում է միասնություն, լինելով «անմարմին», այն պատկանում է մարմնին: Ինչ վերաբերում է այդ պատկանելության բնույթին, ապա Արիստոտելը, Որոտնեցու կարծիքով, «զանձն կատարօնութիւն ասէ», այսինքն՝ հոգին համարում է էնտելեխիա (իրականացում, որն իր մեջ ունի իր ավարտը, նպատակը): Բանն այն է, որ Արիստոտելը մարդկային մարմինը դիտում է որպես նյութ, իսկ հոգին՝ ձև, ընդ որում առաջինը հանդես է գալիս որպես հնարավորություն, իսկ երկրորդը՝ էնտելեխիա, «իբր նիւթն՝ զօրութիւն, իսկ տեսակն՝ կատարօնութիւն»[2],- հակիրճ ներկայացնում է արիստոտելյան տեսակետը Ս. Հովհան Որոտնեցին:

Հոգին համարելով էնտելեխիա, Որոտնեցու կարծիքով, Արիստոտելը զրկում է այն «էութիւն» լինելու կարգավիճակից, «ինքն ըստ ինքեան» գոյությունից և դիտում է ընդամենը որպես ակցիդենցիա՝ «պատահումն»: Հարցի նման լուծումը անընդունելի է Որոտնեցու համար, քանի որ նա հոգին աներկբայորեն համարում է «էութիւն». «Բոլոր մարդն բաղկանայ ի հոգւոյ և ի մարմնոյ, իսկ միևնոյն էութիւն զիա՞րդ լինի մի մասն գոյացութիւն և մի մասն պատահումն՝ որ է անհնար, յայտ է ուրեմն, թէ ոչ է <հոգին> պատահումն, այլ էութիւն»[3]:

Հոգու մասին Արիստոտելի հայացքներին Որոտնեցին վերադառնում է իր քննական վերլուծության 7-րդ գլխում՝ Արիստոտելին և ստոյիկներին վերագրելով այն կարծիքը, որ հոգին «որպէս մարմին ի մարմնոյ ծնանի»[4]: Եվ դարձյալ Որոտնեցին քննադատում և մերժում է արիստոտելյան տեսակետը: Այստեղ Որոտնեցին կարծես գործնականում կիրառում է արիստոտելյան՝ իր համար կարգախոս դարձած այն թևավոր խոսքը, թե «Սիրելի է այր և սիրելի է ճշմարտութիւն. երկուց ելոց սիրելեաց՝ մանաւանդ սիրելի է ճշմարտութիւն»:

Որոտնեցու տեսական ժառանգության մեջ առկա են ոչ միայն Արիստոտելի հայացքների քննական հերքումներ, այլ նաև այնպիսի դեպքեր, երբ որևէ խնդրի շուրջ Ստագիրացու տեսակետը իբրև հավասարազոր կարծիք տեղադրվում է ուրիշ իմաստասերների լուծումների կողքին՝ նույն շարքում: Օրինակ, քննելով տեսողության մեխանիզմը, Որոտնեցին զուգահեռաբար շարադրում է Արիստոտելի, էպիկուրականների, Պլատոնի, Գալիանոսի և այլոց տեսակետները[5], իսկ զգայելի էակների բաժանման խնդրի

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում: Արիստոտելյան «էնտելեխիա» հասկացության Որոտնեցու գործածած համարժեքը, կարծում ենք, հունաբան դպրոցի բառացի թարգմանության նմուշներից է: Այդ բառը հունարենից բառացի թարգմանությամբ նշանակում է «ունենալ ավարտը (կատարումն) ինքն իր մեջ», այստեղից էլ «կատարօնություն»-ը կամ «կատարունութիւն»-ը:

[3] Նույն տեղում, 257բ:

[4] Նույն տեղում, 249բ:

[5] Յովհաննու Որոտնեցւոյ՝ քաջ հռետորի և արդիւնաբան ռաբունապետի, արարեալ ի բան

քննության ընթացքում նա շարադրում է Օլիմպիոդորոսի, Նոմելախոսի, Պլատոնի, Պորփյուրի, Արիստոտելի լուծումները՝ առանց որևէ մեկին գերապատվություն տալու[1]:

Ս. Հովհան Որոտնեցու տեսական ժառանգությունը սերտորեն առնչվում է նաև Պլատոնի փիլիսոփայական հայացքների հետ: Նախ և առաջ նշենք, որ Որոտնեցին շատ նրբորեն և դիպուկ է տարբերակում արիստոտելյան փիլիսոփայությունը պլատոնականից: «Մեկնության մասին» երկին նվիրված իր աշխատության մեջ մեկնելով Անանուն հեղինակի մեկնությունից քաղված «Բնաբանական իմաստասիրութեան՝ որպէս ճեմականքն և աստուածաբանական՝ որպէս պղատոնականքն» բնաբանը, Որոտնեցին գրում է. «Ճեմականքն զայս («իրի» և «իմացմունքի» փոխհարաբերության խնդիրը - Ա.Մ.) ի բնաբանականն քննեն վասն իրին, զի իրն բնական իմն է, իսկ պղատոնականքն յաստուածաբանականն քննեն վասն իմացմանն, զի անմարմին է և աստուածային»[2]: Փաստորեն, ըստ Որոտնեցու, և՛ Պլատոնի, և՛ Արիստոտելի հետևորդները իմացության գործընթացում տարբերակում են երկու հիմնական կողմ՝ իրը և այդ իրի իմացումը: Սակայն եթե «ճեմականները» ելնում են բնական գոյությամբ օժտված իրից, ապա պլատոնականները որպես հիմք ընդունում են իմացումը, որն անմարմին է և աստվածային: Պլատոնի և Արիստոտելի իմաստասիրական ուսմունքների տարբերությունը հիմնականում դիրքորոշման, յուրաքանչյուրի համար նախընտրելի «դիտակետի» տարբերություն է:

Ս. Հովհան Որոտնեցու տեսական ժառանգության մեջ Պլատոնի հայացքները ընդունվում են թե՛ որպես հեղինակավոր փաստարկ առաջադրված դրույթի հիմնավորման համար, թե՛ որպես հավասարազոր կարծիք՝ այլ լուծումների կողքին, և թե՛ որպես վիճահարույց, անընդունելի տեսակետ: Իր թե՛ իմաստասիրական, թե՛ աստվածաբանական մեկնություններում Որոտնեցին խիստ հաճախակի անդրադառնում է լեզվի, «արտաբերեալ» խոսքի բնույթի վերաբերյալ Արիստոտելի և Պլատոնի տարաձայնությանը: Վերջինիս իմաստն այն է, որ, ըստ Արիստոտելի, իրերի անուններն ու անվանումները պայմանական են և որոշվում են մարդկանց փոխհամաձայնությամբ և փոխպայմանավորվածությամբ, այնինչ Պլատոնի կարծիքով, «արտաբերեալ» խոսքը բնությամբ է մարդուս մեջ՝ որպես բանականության գործիք: Տարբեր աշխատություններում այս հանրահայտ վեճը Որոտնեցու կողմից ներկայացվում է տարբեր երանգավորմամբ: Մենք հարմար գտանք ընտրել այնպիսի հատված, որտեղ երկու նշանավոր փիլիսոփաների տեսակետների բախումն ու հակադրումը հատկապես ակնառու են. «Զնախնի իմաստասի-

---

մարգարէին, որ ասէ. «Արդարութիւն Տեառն ուղիղ է և ուրախ առնէ զսիրտս, պատուիրանք Տեառն լոյս են և լոյս տան աչաց, երկիւղ Տեառն սուրբ է և մնայ յաւիտեան», ձեռ. 1760, 310աբ:

[1] Յովհաննու Որոտնեցւոյ ասացեալ ի բան մարգարէին Դաւթի, որ ասէ. «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր, և գործք ձեռաց քոց երկինք են», 129աբ:

[2] Յովհաննու Որոտնեցւոյ համառաւտ լուծմունք Պերի արմէնիաս գրոցն. ձեռ. 1701, 150բ-151ա:

բացն հարցաքննութիւն զ Պղատոնին ասեմ և զ Արիստոտէլին: Քանզի Պղատոն կամի զբանն բնութեամբ ի մեզ գոլ, վասն զի գործի է բանական զօրութեան, որպէս է ակն տեսութեան գործի և այլ իւրաքանչիւր զգայարանք: Բայց Արիստոտէլ սուտ առնէ զնա, քանզի ասէ, թէ Պղատոն զներգործութեամբն և զզօրութեամբն իբրև զնոյն կարծեաց, քանզի բանական զօրութիւնն ի մեզ ոչ է ներգործութեամբ ընդունելութեան, այլ զօրութեամբ, վասն այնորիկ ոչ է բանն բնութեամբ ի մեզ»[1]: Միշտ և ամենուր Որոտնեցու դիրքորոշումը հաստատուն է. «Բան մարդոյ՝ բան բաղկացեալ առ իրեարս շարադրութեամբ, և ոչ բնութեամբ»[2]: Այս վերջին դրույթը ըստ ամենայնի հիմնավորվում է Որոտնեցու կողմից. «...և զի դրութեամբ են <անուանքն> յայտ է ի չորիցս՝ այսինքն, ի հոմանունութենէ, և ի զանազան կոչմանց յայլ և յայլ լեզուաց, ի բազմանունութենէ, ի փոխադրութենէ»[3]:

Անգերագնահատելի է Դավիթ Անհաղթի իմաստասիրական ուսմունքի ազդեցությունը Ս. Հովհան Որոտնեցու տեսական ժառանգության վրա: Թեև «Կատեգորիաների» դավթյան մեկնությունը Որոտնեցին սխալմամբ վերագրում է Օլիմպիոդորոսին, սակայն նրա իմաստասիրական և աստվածաբանական մեկնություններում բազմիցս հիշատակվում է Անհաղթի անունը և մեջբերվում են հատվածներ նրա աշխատություններից: Դավիթ Անհաղթի մտքերը ոչ միայն հեղինակավոր հղում-փաստարկ են հանդիսանում Որոտնեցու համար («Եւ վասն է՞ր զտարորոշն նախադասէ ամենուրեք շարունակին, վասն զի պատուական է զտարորոշն քան զշարունակն, որպէս ասէ ի Սահմանքն ի Ժէ ճառն»[4]. «...վասն զի մայր ապացութեանն իմաստասիրութիւնն է, որպէս ասէ ի Սահմանն Դաւիթ»[5]), այլև գործուն կիրառություն են ստանում նրա կողմից: Խոսքը Դավթի հանրահայտ մեթոդաբանական սկզբունքի մասին է, որի ձևակերպմամբ նա սկսում է իր «Սահմանք իմաստասիրութեան» երկը: «Արդարութիւն Տեառն ուղիղ է...» աստվածաշնչյան բնաբանի Որոտնեցու մեկնությունը սկսվում է այսպիսի նախաբանով. «Բայց զի ասէ ոմն ի հանճարեղաց, թէ յամենայն իրողութիւնս զչորս զայսոսիկ խնդրել պարտ է. եթե է՞ և զի՞նչ է և որպիսի՞ ինչ էր և վասն է՞ր է ...»[6]: Այնուհետև մանրամասն վերլուծելով և պարզաբանե-

---

[1] Յովհաննու Որոտնեցւոյ տիեզերալոյս րաբունապետի արարեալ ի բան Աւետարանին ըստ Յովհաննու, որ ասէ. «Ի սկզբանէ էր Բանն. և Բանն էր առ Աստուած. և Աստուած էր Բանն... Ամենայն ինչ նովաւ եղև». ձեռ. 6573, 163բ:

[2] Նույն տեղում:

[3] Յովհաննու Որոտնեցւոյ համառաւտ լուծմունք Պերի արմէնիաս գրոցն. ձեռ. 1701, 156բ-157ա:

[4] Յովհաննու Որոտնեցւոյ վերլուծութիւն «Ստորոգութեանց» Արիստոտէլի: Հավաքական տեքստը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Կ. Չալոյանի, թարգմ. Ա. Ա. Ադամյանի և Վ. Կ. Չալոյանի, խմբագրությամբ Ս. Ս. Արևշատյանի: Երևան, 1956, էջ 76:

[5] Յովհաննու Որոտնեցւոյ համառաւտ լուծմունք Պերի արմէնիաս գրոցն. ձեռ. 1701, 147ա, տե՛ս նաև 173ա և այլն:

[6] Յովհաննու Որոտնեցւոյ՝ քաջ հռետորի և արդիւնաբան րաբունապետի, արարեալ ի բան մարգարէին, որ ասէ. «Արդարութիւն Տեառն ուղիղ է և ուրախ առնէ զսիրտս, պատուիրանք Տեառն լոյս են և լոյս տան աչաց, երկիւղ Տեառն սուրբ է և մնայ յաւիտեան». ձեռ. 1760, 288ա:

լով հանճարեղ Դավթի այս ելադրությամբ՝ Որոտնեցին փորձում է հենց այդ մեթոդով մեկնել առաջադրված աստվածաշնչյան բնաբանը. «Բե՛ր հետևեսցուք բնական իմաստասիրացն ոճոյ: Նախ խնդրեսցուք, թե «է՞ արդարութիւն», և «զի՞նչ է», և «որպիսի՞ ինչ է», և «վասն է՞ր է» ...»[1]: Արիստոտելի «Մեկնության մասին» երկին նվիրված աշխատասիրության մեջ Որոտնեցին դարձյալ անդրադառնում է Անհաղթի նշված մեթոդաբանական սկզբունքին և բացահայտում, թե ինչպես Արիստոտելը «բացերևական բանի»՝ դատողության նկատմամբ «յայտնապէս երևեցոյց» նշված չորս կետերը. նախ ցույց տվեց, որ դատողությունը իրոք գոյություն ունի, ապա սահմանելով հաստատական և ժխտական դատողությունը՝ պատասխանեց «զի՞նչ է» հարցին, տալով դատողության տեսակները՝ բաժանման միջոցով լուծեց «որպիսի՞ ինչ է» հարցը, իսկ ասելով, որ «պիտանութիւն սորա ի տրամաբանութեան հարցումն»՝ պատասխանեց նաև վերջին՝ «վասն է՞ր» հարցմանը: Ահա այսպիսի բազմազան երանգավորումներով Որոտնեցին կիրառության մեջ է դնում Դավթի իմաստասիրական ուսմունքը:

Այսպիսով, հանձինս Ս. Հովհան Որոտնեցու կարելի է տեսնել հայ իմաստասիրական մտքի ավանդույթները շարունակող ինքնատիպ մտածողի, որը ազգային հոգևոր և մտավոր մշակույթի հենքի վրա հաղորդակցվում է համաշխարհային փիլիսոփայական արժեքներին և յուրովի զարգացնում դրանք:

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԱՅԱԾՔՆԵՐԸ

Համառոտակի անդրադառնանք Ս. Հովհան Որոտնեցու փիլիսոփայական ուսմունքի որոշ առանցքային հիմնադրույթների: Համաձայն Որոտնեցու գոյաբանական ուսմունքի, աշխարհն Աստծու արարչագործության արդյունքն է. Աստված ստեղծել է աշխարհը ոչնչից: Իբրև անչափելի և անսահման հզորությանը օժտված էություն՝ միայն Աստված է ունակ հաղթահարելու «ոչնչի» և «իրի» միջև ընկած «անսահման և անվախճան հեռավորությունը» և «զոչինչն ի յիր հասուցանէ», այսինքն՝ արարել աշխարհը: Որոտնեցին անդրադառնում է «արտաքին» իմաստասերների այն տեսակետին, համաձայն որի «ոչ երբէք էն ոչինչ լինի. իբր թէ ստեղծանելն՝ որ է ի յոչ[ը]նչէ առնել ինչ՝ է անկարելի»[2]: Ոչնչից ինչ-որ բանի ստեղծումը մերժող փիլիսոփաների մոլորությունն այն է, ըստ Ս. Հովհանի, որ նրանք չեն տարբերում «յառաջագայութեան» երկու տիպերը. մեկը, երբ որևէ մասնավոր իր առաջ է գալիս մեկ այլ մասնավոր իրից, ինչպես օրինակ, կրակը ծնվում է մեկ այլ մասնավոր պատճառից և, երկրորդը, երբ «ընդհանուր էակն յառաջ գայ այլ ընդհանուր պատճառէ»[3]. «Արտաքին փիլիսոփայքն» ստեղծագործելը հասկանում էին միայն ըստ առաջին եղանակի,

[1] Նույն տեղում:

[2] Յովհաննու Որոտնեցւոյ ասացեալ ի բան մարգարէին Դաւթի, որ ասէ. «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր, և գործք ձեռաց քոց երկինք են», 104բ:

[3] Տե՛ս նույն տեղը:

այսինքն՝ որպես կոնկրետ իրի ստեղծում, և այս առումով, ըստ Որոտնեցու, իրոք անհնար է, որ որևէ կոնկրետ, մասնավոր իր առաջանա ոչնչից: Այլ է, կարծում է նա, երբ ստեղծվում է ընդհանուրը՝ ընդհանուր պատճառից, այսինքն՝ Աստծուց, այս դեպքում արդեն հնարավոր է արարչագործությունը՝ ոչնչից աշխարհի ստեղծումը: Որոտնեցին պարզաբանում է, որ տվյալ դեպքում «ոչինչը» ոչ միայն նշանակում է «զնիւթ բացասական՝ ի յոչ[ը]նչէ, այսինքն՝ յոչինչ իրաց», այլև կարգը՝ «իբր թէ զկնի ոչ[ը]նչին՝ լինի ինչ, քանզի այս է ստեղծանելն՝ յետ ոչ[ը]չին՝ առնել ինչ», այսինքն՝ Աստծուն հավետակից չկար ոչ մի «ինչ», և Աստծուց՝ որպես ընդհանուր պատճառից, առաջացել է ընդհանուրը կամ «հասարակական նիւթը»: Այս վերջինս, չունենալով տեսակ, տարածվում է բազմաթիվ տեսակների վրա, անմարմին է և գոյություն ունի միայն որպես «զօրութիւն», այսինքն՝ հնարավորություն: Դրա հետ միասին («համանգամայն ընդ նմին») ստեղծվել են նաև չորս որակները (կամ «գոյացական տեսակները»)՝ չորության, խոնավության, սառնության և տաքության հատկությունները: Արարչագործության հետագա ընթացքը Ս. Հովհան Որոտնեցին պատկերացնում է այսպես. «Իսկ որ ի ջերմն հպեալ նիւթ՝ հուր եղև, իսկ որ ի ցուրտ՝ ջուր եղև, և որ ի չոր՝ երկիր, և ի գէջ՝ օդ: Սոյնպես չորս տարերք կազմեցան ի նիւթէ և ի տեսակէ... Եւ ի սոցանէ խառնմանէն լինելութիւն լինի այլ էակաց»[1]:

«Ոչինչ» և «արարչագործութիւն» հասկացությունների յուրովի մեկնաբանության միջոցով Որոտնեցին փորձում է ոչ միայն չշրջանցել առողջ բանականության «Ոչնչից ոչինչ չի առաջանում» սկզբունքը, այլև պահպանել «Ամենայն ինչ ի նիւթոյ և ի տեսակէ բաղկանայ» արիստոտելյան փիլիսոփայության հիմնադրույթը՝ նյութը հասկանալով որպես «հասարակական նիւթ», իսկ տեսակը՝ որպես չորս «գոյացական տեսակներ»: Այդպիսով, ոչնչից աստվածային աշխարհարարման քրիստոնեական հիմնադրույթը ստանում է այնպիսի տեսական հիմնավորում և մեկնաբանություն, որ այն ընդունելի լինի ոչ միայն հավատի, այլև բանականության համար:

Որոտնեցու կարծիքով, գերագույն արարիչն Աստված է, սակայն ստեղծել կարող են նաև բնությունը և մարդը՝ շնորհիվ արհեստի (արվեստի): Մարդկային ստեղծագործությունն անհնարին է առանց «հիման» , այսինքն՝ նյութի, որին մարդը տալիս է «ձև պատահական»: «Իսկ բնութիւն առաւել ունի զօրութիւն, քան զարհեստն», քանի որ այն ստեղծում է անմիջականորեն Աստծու կողմից արարված պարզ նյութի հիման վրա, որին հաղորդում է «ոչ միայն ձև պատահական, այլև զտեսակ գոյացական»: Այս երկուսին գերազանցում է աստվածային ստեղծագործությունը, որն «ինքն ստեղծանէ զհիմն և տայ նմա զձև արհեստական և զտեսակ գոյացական»[2]:

---

[1] Նույն տեղում:

[2] Տե՛ս նույն տեղը: «Գոյացական տեսակ» ասելով Որոտնեցին հասկանում է այնպիսի տեսակը, «որ ի գոլն բաղարկացոցէ զէութիւն իրին և ի բառնալն ապականէ զէութիւն, որպէս բանականն՝ զմարդն և անբանն՝ զձի»: «Արհեստական ձևը», որին զուգահեռ Որոտնեցին օգտագործում է նաև «պատահական տեսակ» հասկացությունը, վերաբերում է իրի ոչ թե էությանը, այլ արտաքին և պատահական կողմերին: Ըստ Որոտնեցու, արհեստավորը առ-

Աստվածային, բնության և մարդկային ստեղծագործությունների՝ որպես ստեղծագործելու երեք տեսակների նմանությունների ու տարբերությունների խնդրին Որոտնեցին անդրադառնում է բազմիցս և ամենատարբեր առիթներով: Նախ այն մասին, որ, Որոտնեցու պատկերացմամբ, ոչ մի ստեղծագործություն աննպատակ և անօգուտ չէ, ցանկացած ինչ ունի իր գործնական կամ տեսական կիրառելիությունն ու արժեքը. «Ոչ երբէք ո՛չ Աստուած, ո՛չ բնութիւնն և ո՛չ արհեստն վայրապար և ձրի իրս երբէք ոչ է ստեղծ, այլ ամենայն ինչ սակս պիտոյից ինչ ստեղծան»[1]: Իսկ առաջադրելով «ի՞ւ զանազանի գործք մարդոյս ի գործոց Աստուծոյ» հարցը, Որոտնեցին տասնհինգ կետով հանգամանորեն շարադրում է մարդկային և աստվածային ստեղծագործությունների տարբերությունները: Ընդհանրացնելով Որոտնեցու ծավալուն պատասխանը, կարելի է եզրակացնել, որ, ըստ Ս. Հովհանի, մարդու ստեղծագործության համար հարկավոր են նյութ, ժամանակ, անհրաժեշտություն, ուսում և աշխատանք, որոնք անհրաժեշտ չեն աստվածային արարման համար: Ի տարբերություն աստվածայինի, մարդկային «գործը» «չօշափմամբ և ըմբռնելով է», այն «նախ զօրութեամբ և յետոյ ներգործութեամբ եղանի», մարդս «սխալական է ի յարուեստ և ի գործ» «մարդ զինչ և կամի՝ ոչ կարէ» և, վերջապես, «մարդ յետ ստեղծանելոյն՝ ոչ է ընդ ստեղծուածս իւր»[2]: Նշված բոլոր առումներով մարդկային ստեղծագործությունը տարբերվում է աստվածայինից:

Ինչ վերաբերում է բնության ստեղծագործությանը, ապա, համաձայն Որոտնեցու հայեցակարգի, «Աստուած զերկրորդաբար ստեղծումն եդ ի բնութիւնս, և բնութիւնս արուեստիւն իւրով ստեղծանէ զտեսակն»[3]: Եվ քանի որ Աստված իր արարածներին ստեղծում է կատարյալ, գեղեցիկ և անթերի, ապա մարդկային մարմնի «անկատարութիւն անդամոց և աւելորդութիւն ի բնութեան լինի»: Խորհրդածելով դավանաբանական բնույթի այն հարցի շուրջ, թե երբ մահից հետո մարդիկ հարություն են առնում, արդյոք «կատարեալ անդամո՞ք յառնեն», թե մարմնական թերությունները պահպանվում են, Որոտնեցին արձանագրում է բնության ստեղծագործության հետևյալ առանձնահատկությունը. «Թէ բնութիւն մարդոյն առաջին լինի, նա զիւրաքանչիւր անդամ յիւրում տեղւոջ գեղեցիկս կազմէ, իսկ թէ բնութիւն մարմնոյն տկար լինի՝ նա զիւրաքանչիւր անդամ ոչ կարէ ողջ կազմել, վասն որոյ սխալի»[4]: Այսպիսով, զգայելի էակների անկատարությունը և տգեղությունը արդյունք են բնութեան, և ոչ Աստծու տկարու-

---

կա նյութին հավելում է «ձև և չափ, եռանկիւնի կամ քառանկիւնի և այլ սոյնպիսի, տալով նմա տեսակ պատահական»:

[1] Յովհաննու Որոտնեցւոյ՝ քաջ հռետորի և արդիւնաբան բաբունապետի, արարեալ ի բան մարգարէին, որ ասէ. «Արդարութիւն Տեառն ուղիղ է և ուրախ առնէ զսիրտս, պատուիրանք Տեառն լոյս են և լոյս տան աչաց, երկիւղ Տեառն սուրբ է և մնայ յաւիտեան». ձեռ. 1760, 288բ:

[2] Տե՛ս Յովհաննու Որոտնեցւոյ ասացեալ ի բան մարգարէին Դաւթի, որ ասէ. «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր, և գործք ձեռաց քոց երկինք են», 140բ-141ա:

[3] Մեծ բաբունապետին Յովհաննու Որոտնեցւոյ ասացեալ ի բան առաքելոյն, որ ասէ. «Մարդով եղև մահ և մարդով՝ յարութիւն մեռելոց». ձեռ. 6573, 194ա:

[4] Նույն տեղում:

թյան և սխալի: Այս վերջին միտքը լիովին համահունչ է Փիլոն Ալեքսանդրացու «Յաղագս նախախնամութեան» երկից քաղված հետևյալ դատողությանը. «Աստուած, զի աղբիւր է հանճարոյ, ստոյգ չափով բաւական առնէ զգործս ամենեցուն գովելի առաւել, քան զգործ բնութեան և քան զգործ արուեստի»[1]:

Աշխարհի, ընդհանրապես ողջ գոյավորի առաջացման գերագույն պատճառ համարելով Աստծուն՝ Ս. Հովհան Որոտնեցին, մյուս կողմից, արարված աշխարհի հատկություններով՝ դրանում պատճառահետևանքային կապերի, օրինաչափությունների, նպատակահարմարության, դասի ու կարգի, ձևի ու չափի, օգտակարի ու գեղեցիկի առկայությամբ է ապացուցում իր իսկ՝ Արարչի ու նրա նախախնամության գոյությունը: Այս իմաստով, զգայական իրերն ու երևույթները նրա կողմից դիտվում են որպես նշաններ (սիմվոլներ), որոնք վկայում են Աստծու և նրա ատրիբուտների մասին և ինչ-որ առումով հիմք են հանդիսանում նրա մասին իմանալու համար: Ելնելով «ամենայնիւ հարկ է յարուեստէ իմեմնէ զարուեստաւորն իմանալ» սկզբունքից՝ Որոտնեցին զգայականորեն ընկալելի իրերի և երևույթների հատկությունների իմացության միջոցով ջանում է հասու լինել նաև դրանց «ճարտարապետ»-ին, այսինքն՝ Աստծուն:

Անցնելով Ս. Հովհան Որոտնեցու իմացության տեսությանը՝ հարկ է հատկապես նշել նրա հիմնավոր և ուժգին հավատը մարդու ճանաչողական ունակությունների ու հնարավորությունների նկատմամբ, աշխարհի ճանաչելիության անվերապահ ընդունումը: Բոլոր այն դեպքերում, երբ կեցության և գիտակցության փոխհարաբերության հարցը դրվում է իմացաբանական կտրվածքով՝ «մակացութեան» և «մակացելի», «զգայութեան» և «զգալի» առաջնայնության տեսակետից, Որոտնեցին, առանց երկմտելու, առաջնությունը տալիս է «մակացելիին» և «զգալիին»: Ճանաչողության ենթակա իրերի առաջնությունը իմացության նկատմամբ ապացուցելիս Որոտնեցին առաջադրում է «Կատեգորիաներ» երկի արիստոտելյան զույգ փաստարկները. նախ, եթե վերացնելու լինենք «մակացելին»՝ իմացվողը, կվերանա նաև «մակացութիւնը»՝ իմացությունը, բայց ոչ հակառակը: Երկրորդ, «թէ և զկենդանին բառնաս, որ է մակացուն, ոչ է մակացութիւն, զի համանգամայն են սոքա, իսկ մակացելին գոյ, որպէս երկինք և երկիր»[2]: Այսինքն՝ եթե վերացնելու լինենք իմացող, ճանաչող էակին՝ անհնար կլինի իմացությունը, այնինչ իմացվողը, գիտության ենթակա իրերը միշտ և ամենուր գոյություն կունենան: Հարցը նույն ձևով է լուծվում նաև զգայվողի և զգայության փոխհարաբերությունը դիտարկելիս[3]:

Իմացվողի, գիտության ենթակա իրի և գիտության, իմացության փոխհարաբերության հարցը քննելիս Ս. Հովհան Որոտնեցին կատարում է մի

---

[1] Հաւաքումն յայտնաբանութեան ի Փիլոնէ իմաստնոյ՝ որ Յաղագս նախախնամութեան յառաջին բանէ, յերկասիրութեանց Յովհաննու Որոտնեցւոյ լուսաւոր դաբունապետի տեառն իմոյ // «Բանբեր Մատենադարանի», Ե., 2006, թիվ 17, էջ 250:

[2] Յովհաննու Որոտնեցւոյ վերլուծութիւն «Ստորոգութեանց» Արիստոտէլի, էջ 134:

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 134-136:

էական վերապահում: Նա տարբերակում է «ստացական գիտութիւնը», «որ ի հոգին բարձցի ընդ գիտելի իրացն, զի ունի զպատճառն յայլմէ» և աստ-վածային գիտությունը, որն ինքնին է և ոչ ստացմամբ, «վասն որոյ ոչ բարձցի ընդ իրին»[1]: Այսինքն՝ Որոտնեցին ճշտում է, որ արիստոտելյան «բարձցի գիտելին, բարձցի և գիտութիւնն» դրույթը վերաբերում է երկրա-յին, «ստացական» գիտությանը, երբ ճանաչվում են մեզնից դուրս գտնվող իրերը, և վերջիններիս վերացման հետ վերանում է նաև դրանց իմացու-թյունը: Նույնը չի կարելի ասել, ըստ Որոտնեցու, երբ հարաբերվում են Աստված և զգայելի աշխարհը. աստվածային գիտելիքն ինքնին է և չի վե-րանում զգայելի իրերի և երևույթների վերացման հետ: Տվյալ դեպքում Ս. Հովհան Որոտնեցին քրիստոնեական աշխարհընկալման դիրքերից կարևոր «ճշգրտում» է մտցնում Արիստոտելի իմացաբանական դրույթներում:

Ճշմարտության հիմնահարցը քննելիս Ս. Հովհան Որոտնեցին, բնակա-նաբար, դարձյալ հետևում է խնդրի դասական, արիստոտելյան լուծմանը: «Գոյութիւն Պետրոսին է պատճառ ճշտութեան բանին. և ոչ թէ ճշմարիտ բանն է պատճառ գոլոյն Պետրոսի»[2],-միանշանակ ձևով պնդում է նա:

Ըստ Որոտնեցու, Աստծու արարչագործության շնորհիվ ստեղծված աշ-խարհը, որ գոյություն ունի անկախ մարդկային որևէ զգայությունից ու մտքից՝ լիովին ճանաչելի է ու իմանալի. «Ոչինչ մնասցէ ի գոյիցս արտաքոյ մարդկան գիտութեան»[3]: Օժտված լինելով արտաքին (տեսողություն, լսո-ղություն, շոշափելիք, հոտոտելիք ու համի զգայություն) և ներքին («հա-սարակ զգայութիւն», «երևակայութիւն», «կարծիս», «տրամախոհութիւն» և «միտք») զգայարաններով[4] մարդն ի զորու է ճանաչել ոչ միայն եզակի ու մասնավոր իրերն ու երևույթները, այլ նաև ընդհանուրը, որին Որոտնե-ցին տալիս է նաև գոյաբանական կարգավիճակ. «Իսկ թէ կազմեցան զգա-յարանք ներքին, վասն զի արտաքին զգայարան մասնաւոր և զանհատն իմանամք, իսկ ընդհանուրն անգիտելի մնայ. և մասնականքն և անհատք անցաւորք են, իսկ ընդհանուրն մնացական և հաւիտենական: Իսկ իմացու-թիւն ի մնացականս ներգործէ և ոչ ի անցաւորս, վասն այնորիկ կազմեցան ներքին զգայարանք՝ առ ի ճանաչել զընդհանուրս»[5]:

Որոտնեցու կարծիքով, մարդը ճանաչում է ընդհանուրը ոչ միայն գիտության, այլև արվեստի միջոցով: Այս առումով նա շարունակում և զարգացնում է Դավիթ Անհաղթի այն տեսակետը, որ «արհեստ է ընդհա-նուր գիտութիւն՝ հանդերձ պատճառաւ»[6]: Ս. Հովհան Որոտնեցու համար

---

[1] Տե՛ս նույն տեղը, էջ 134:

[2] Նույն տեղում, էջ 264:

[3] Եռամեծի և երիցս երանեալ բազմերջանիկ և տիեզերալոյս մեծ հռետորի և անյաղթ փիլիսոփայի հայոց մեծաց Յովհաննու Որոտնեցւոյ արարեալ մեկնութիւն բանին, որ ասէ. «Ո ստեղծ առանձին զսիրտս նոցա». ձեռ. 6573, 242ա:

[4] Բացի արտաքին և ներքին զգայություններից կամ զգայական զորություններից, ըստ Որոտնեցու, զգայականին հատուկ են նաև «ցանկականն» ու «ցասմնականն», որոնք «ոչ են զգայութիւնք, բայց զօրութիւնք են զգայական կենդանութեան»:

[5] Նույն տեղում, 244ա:

[6] Դաւիթ Անյաղթ, Մեկնութիւն «Ստորոգութեանցն» Արիստոտէլի // Դաւիթ Անյաղթ, Երկա-

«գիտութեան» և «գործի», տեսության և պրակտիկայի միջև պատնեշ չկա. պատահական չէ, որ նա լիովին համամիտ է Արիստոտելի այն մտքին, որ «ամենայն գործ ոչ է առանց գիտութեան և ոչ գիտութիւն առանց գործոց»[1] կամ մի այլ ձևակերպմամբ. «զոր ինչ գործելովն ուսանիմք՝ զայսպիսի ուսանելովն և գործեմք»[2]: Ընդ որում, «գործ» ասելով Որոտնեցին հասկանում է թե՛ մարդու ստեղծագործ աշխատանքը՝ արհեստն ու արվեստը, թե՛ նրա բարոյական վարքն ու արարքները, թե՛ մարդու մտավոր գործունեությունը և թե՛ նրա կենցաղը: Այս բոլոր իմաստներով մարդկային գործը սերտորեն կապված է իմացության և ուսման հետ ու հանդիսանում է գիտության և կրթության շարունակությունը: Ինչ վերաբերում է «արուեստին», ապա այն, և այստեղ Որոտնեցին լիովին համաձայն է անհաղթության տեսակետին, ինչպես և գիտությունը, ճանաչում, մտահասում է ընդհանուրը. «Զի արժանի եղև մարդս բանիւ և ուսմամբ լինել տեսանող գործոցն Աստուծոյ, զի ոչ այլ ինչ են տեսուածք արուեստից, եթէ ոչ ընդհանրից իրաց հասումն, որպէս երաժշտականն և այլն. նոյնպէս և տեսութիւն մտացն և հանճարն՝ զընդհանուրն տեսանէ, զոր Աստուած յառաջագոյն գործեաց մտաւք, զոր և մտաւքն հասանէ»[3]: Այսպիսով, արվեստը և գիտությունը ճանաչում են ընդհանուրը, այն ընդհանուրը, որ նախապես գոյություն ունի աստվածային մտածողության մեջ և ապա, արարչագործության շնորհիվ՝ նաև իրական աշխարհում:

Ընդհանուրի մտահասումը, որ իրականանում է արվեստի և գիտության միջոցով, ամբողջությամբ վերցրած իմացության գործընթացը Ս. Հովհան Որոտնեցու համար անգերագնահատելի նշանակություն ունեն, դրանց մեջ է նա տեսնում մարդու ոչ միայն մեծագույն կոչումը, այլև հոգևոր բերկրանքը, որը վերաճում է գեղագիտական հաճույքի. «Մակացութիւնք և տեսութիւն, այսինքն՝ կատարումն իմացմանց և տեսութեանց՝ կամ էակաց զգալեաց կամ աստուածայնոց իմանելեաց, որով հանդիպեալ հոգին զմայլի»[4]: Որոտնեցին բազում խանդավառ տողեր ունի նվիրված մարդու ձգտմանը դեպի անհայտն ու չճանաչվածը, աստվածայինի հետ շփման պարգևած հոգևոր բավականությանն ու հիացմունքին:

Ինչպես աստվածային ստեղծագործությունը՝ աշխարհն իր ներքին օրի-

սիրութիւնք փիլիսոփայականք: Համահավաք քննական բնագրերը և առաջաբանը Ս. Ս. Արևշատյանի: Երևան, 1980, էջ 78:

[1] Յովհաննու Որոտնեցւոյ վերլուծութիւն «Ստորոգութեանց» Արիստոտէլի, էջ 304:

[2] Եռամեծի և երիցս երանեալ բազմերջանիկ և տիեզերալոյս մեծ հռետորի և անյաղթ փիլիսոփայի հայոց մեծաց Յովհաննու Որոտնեցւոյ արարեալ մեկնութիւն բանին, որ ասէ. «Ո ստեղծ առանձին զսիրտս նոցա». ձեռ. 6573, 260ա:

[3] Հաւաքումն յայտնաբանութեան ի Փիլոնէ իմաստնոյ՝ որ Յաղագս նախախնամութեան յառաջին բանէ, յերկասիրութեանց Յովհաննու Որոտնեցւոյ լուսաւոր ռաբունապետի տեառն իմոյ // «Բանբեր Մատենադարանի», Ե., 2006, թիվ 17, էջ 252: Թեև հղումը քաղված է Փիլոն Ալեքսանդրացու «Նախախնամության մասին» երկի Որոտնեցու վերապատումից, սակայն այն համահունչ է վերջինիս իմաստասիրական հայեցակարգին:

[4] Յովհաննու Որոտնեցւոյ՝ քաջ հռետորի և արդիւնաբան ռաբունապետի, արարեալ ի բան մարգարէին, որ ասէ. «Արդարութիւն Տեառն ուղիղ է և ուրախ առնէ զսիրտս, պատուիրանք Տեառն լոյս են և լոյս տան աչաց, երկիւղ Տեառն սուրբ է և մնայ յաւիտեան». ձեռ. 1760, 305ա:

նաչափություններով, արտաքին փայլ ու գույնով, իր գեղեցկությամբ վկայում է արարչի հզորության, բարության և իմաստության մասին, այնպես էլ մարդկային ստեղծագործությունները, արվեստի ու արհեստի գլուխգործոցները, մարդկանց բարի ու արժանավոր արարքներն ու իմաստուն մտքերը վկայում են դրանց արարչի՝ մարդկային հոգու ստեղծագործ բնույթի, մշտապես շարժման ու որոնման մեջ գտնվելու, բանական ու անձնիշխան լինելու մասին. «Հնարք և հանճարք, առաքինութիւնք և արուեստք և բանք իմաստունք վկայեն զմարդոյ թէ ունի հոգի բանական, անձնիշխան, ծնող սոյնպիսի իմն իմաստից և արուեստից»[1]:

Ս. Հովհան Որոտնեցու գրեթե բոլոր աշխատությունները ներծծված են անսահման հավատով մարդու ստեղծագործ ուժի ու կարողության, նրա արարիչ հոգու ներքին հնարավորությունների նկատմամբ: Այս առումով հատկապես աչքի է ընկնում այն քարոզը, որը Որոտնեցին կարդացել է Տաթևի վանքի նորակերտ տաճարի և զանգակատան բացման արարողության ժամանակ (կառույցի շինարարության նախաձեռնողը եղել է ինքը՝ Որոտնեցին): Այս մեկնության առաջաբանը մի գեղեցիկ ու խանդավառ ներբող է՝ նվիրված մարդուն, նրա ձգտմանը դեպի բարին, ճշմարիտն ու գեղեցիկը, մարդկային արարչագործ հոգուն և էությանը: Որոտնեցու կարծիքով, մարդը նման է Աստծուն երեք հատկությամբ՝ «այս է. նախ՝ զարարչութիւն. երկրորդ, զսէրն. երրորդ, զխոհականութիւնն»[2]: Խոհականության շնորհիվ մարդը տարբերվում է անբան արարածներից, ուսմամբ և աշխատանքով ճանաչում է իրեն շրջապատող աշխարհը, տարբերում է լավը՝ վատից, ճշմարիտը՝ սխալից: Սիրո շնորհիվ մարդը ձգտում է դեպի բաղձալին, դեպի ցանկալի նպատակը՝ ամենօրյա աշխատանքով և տքնությամբ ջանալով ի կատար ածել այն: Արդյունքում մարդն արարչակից է լինում Աստծուն, այսինքն՝ ինքն էլ զորու է դառնում ստեղծելու գեղեցիկ ու պիտանի իրեր. «Արհեստաւորք գոյացուցանեն յանպատշաճ իրաց՝ պատշաճաւորս և պիտանիս, որպէս հիւսունք՝ ի մայրից սեղան և աթոռ, կարուակք՝ յօդեաց կօշիկս և զգեստս, դարբինք՝ ի քարանց երկաթ և երկաթոյ սուսեր և այլ ինչ գործի: Ահա այսոքիւք նմանի մարդ Աստուծոյ և արարչակիցք կոչին»[3]: Ընդ որում, այս երեք հատկությունները Որոտնեցին համարում է անթաքույց, այսինքն՝ այս շնորհները, տրված լինելով մարդուն ի վերուստ, չեն կարող չբացահայտվել, չդրսևորվել մարդկային երկրային կյանքում: Այդպիսին է մարդն իր բնույթով, իր էությամբ և իր կոչումով. «Միշտ խորհի խոհականաւն և յօրինէ զհնարս պիտոյից, ջանայ ծնանել և ի կատարումն

---

[1] Եռամեծի և երիցս երանեալ բազմերջանիկ և տիեզերալոյս մեծ հռետորի և անյաղթ փիլիսոփայի հայոց մեծաց Յովհաննու Որոտնեցւոյ արարեալ մեկնութիւն բանին, որ ասէ. «Ո ստեղծ առանձին զսիրտս նոցա». ձեռ. 6573, 252ա:

[2] Տե՛ս Եռամեծի և երիցս երջանկի վարժապետին իմոյ Յովհաննու Որոտնեցւոյ ասացեալ ի յաւրհնութիւն նորակերտ շինուածոյ տաճարին և զանկակատանն առաքելական աթոռոյ վանիցն ՍՏաթէի, որ է գլուխ և աթոռ Սիւնեաց վիճակին, ի բանն, որ ասէ. «Տէր ի տաճար սուրբ իւրում, Տէր յերկինս յաթոռ իւրում». ձեռ. 6573, 199բ:

[3] Նույն տեղում:

ածել զբաղձալին: Եւ ապա առ բերեալ գործէ զոր յղացաւն սիրով, և յարմարեաց խոհականաւն և լինի արարիչ այնմ իրի»[1]:

Արվեստը, Որոտնեցու պատկերացմամբ, ոչ այլ ինչ է, եթե ոչ «ծնունդ գեղեցիկ յընտիր ծնողէ խոհականութեան»[2]: Արվեստի ստեղծագործությունը, նախքան դրա գործնական իրականացումը, գոյություն ունի ստեղծագործողի մտքի, երևակայության մեջ. «նախ խոհականաւն խորհեալ լինի և յետ բազում որոճմանց և ընտրողութեան լաւին և վատթարին, օգտին և անօգտին, ապա յառաջ եկեալ լինի իմաստ և բան խորհրդական և կամ արուեստ կատարեալ»[3]: Այսպիսով, ոչ միայն արվեստի, այլև մարդկային այլ շնորհների՝ գիտության ու իմաստասիրության, աղբյուրը Որոտնեցին տեսնում է խոհականության մեջ:

Որպես ռացիոնալիստ մտածող Ս. Հովհան Որոտնեցին մտքի կառուցիկության և ձևական տրամաբանական ճշմարտության մեջ տեսնում է գեղեցիկի յուրօրինակ դրսևորում: Նա շատ բարձր է գնահատում մարդկային բանականությունը, քանի որ դրա միջոցով է մարդը դատում, տարորոշում ճիշտը՝ սխալից, լավը՝ վատից, գեղեցիկը՝ տգեղից. «Բանն է ի մեզ, որ դատէ և որոշէ ի միմեանց զլաւն ու զվատն, վասն այն ստորասութիւնն և բացասութիւնն, որ բան է, նա միայն յայտնէ ճշմարիտն և զսուտն և ոչ այլքն. և զի տրամախոհութիւնն միայն ճշմարիտն է և բարին և լաւագոյն, վասն այն զայլսն ընտրէ ի միմեանց»[4]: Այսպիսով, տրամախոհությանը Որոտնեցին տալիս է ոչ միայն իմացաբանական («ճշմարիտ»), այլ նաև բարոյագիտական («բարի») և գեղագիտական («լաւագոյն») արժեքավորում, քանի որ դրանով է մարդն առաջնորդվում ոչ միայն գիտության և իմաստասիրության մեջ, այլև բարոյականության և արվեստի ընդգավառներում:

Այսպիսով, ճշմարիտը, գեղեցիկն ու բարին այն երեք հիմնական գործոն-բնութագրիչներն են, որոնք, ըստ Որոտնեցու, որոշիչ են մարդկային էության ինքնադրսևորման և արժեքավորման համար: «Ճշմարիտը» բնութագրում է մարդուն ճանաչողության իր անսահման ձգտումով և հնարավորությամբ, «գեղեցիկը»՝ Աստծուն արարչակից լինելու, «ճշմարտի» միջոցով ճանաչված ընդհանուրը արվեստի և արհեստի գործերում մարմնավորելու ունակությամբ և «բարին»՝ առաքինի արարքներ գործելու և ճիշտ կենցաղ վարելու ձգտմամբ:

Միանգամայն օրինաչափ է, որ Ս. Հովհան Որոտնեցու գեղագիտությունը սերտորեն շաղկապված է նրա բարոյագիտությանը. «գեղեցիկը» հոմանիշ է հանդիսանում «առաքինութեան», իսկ «գարշելիքը»՝ «չարութեան» համար: Զուտ արտաքին, երևութական գեղեցկությունը, հարստությունը,

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս Եռամեծի և երիցս երջանկի վարժապետին իմոյ Յովհաննու Որոտնեցւոյ ասացեալ ի յաւրհնութիւն նորակերտ շինուածոյ տաճարին և զանկակատանն առաքելական աթոռոյ վանիցն ՍՏաթէի, որ է գլուխ և աթոռ Սիւնեաց վիճակին, ի բանն, որ ասէ. «Տէր ի տաճար սուրբ իւրում, Տէր յերկինս յաթոռ իւրում». ձեռ. 6573, 199բ:

[4] Յովհաննու Որոտնեցւոյ վերլուծութիւն «Ստորոգութեանց» Արիստոտէլի, էջ 234:

ուժը և փառքը Որոտնեցին համարում է անցողիկ ու խաբուսիկ. «ոչ է բարեբախտութիւն կարծել զմարմնական մեծութիւն և զփառս մարդկան»[1]: Նա ծաղրում, «կույր ու խուլ» է համարում նրանց, ովքեր գերադասում են մարմնական վայելքներն ու հաճույքները, հարստությունն ու փառքը և արհամարհում են հոգևոր վեհ արժեքները, «զի զխոտանսն ընտրեն և զընտիրն խոտեն...», «...որպէս որք յարքունիս ընթանան և զարտաքոյ պայծառութիւն տեսեալ ի ներքս ոչ մտանեն, այլ անդէն ի նոյն պատշգամին, այսինքն՝ աստիճանացն երկիր պագանեն, սոյնպէս նոքա զմարմնաւոր իրս աստի կենացս տեսեալ հնազանդին և զհոգևորն արհամարհեն, զի չունին պայծառ տեսութիւն»[2]: Ցույց տալով արտաքին զարդ ու փայլի, երևութական գեղեցկության անցողիկ, փոփոխական, հարաբերական և խաբուսիկ լինելը, Որոտնեցին շեշտում է հոգևոր արժեքների մնայուն և անանց բնույթը:

Մի առիթով, պաշտպանելով Հոմերոսին և այլ քերթողների այն ընդդիմախոսների պարսավանքներից, ովքեր մեղադրում են նրանց Աստծուն վատախոսելու մեջ, Որոտնեցին, հետևելով Փիլոն Ալեքսանդրացուն, առաջադրում է մի շարք փաստարկներ, որոնցից մեկն էլ այն է, որ «բանք նոցա (քերթողների - Ա. Մ.) ոչ է հայհոյութիւն աստուածոցն, այլ է ընախաւսութիւն այլաբանութեամբ ծածկեալ, յայնցանէ, որ ոչ են իւղագլուխք, այսինքն՝ իմաստունք»[3]: Տվյալ դեպքում Որոտնեցին արձանագրում է պոեզիայի այն առանձնահատկությունը, որ բանաստեղծները արտահայտվում են այլաբանությամբ՝ պատկերներով, փոխաբերություններով, համեմատություններով և այլն՝ ծածկելով և թաքցնելով իրենց մտքերը: Այս առումով նրանք տարբերվում են փիլիսոփաներից, որոնք իրենց մտքերն արտահայտում են ուղղակի և միանշանակ ձևով (այս ընդհանուր կանոնից չեղվում է, օրինակ, Պլատոնը, քանի որ «Պղատոն հետևեցաւ քերդողականութեան»[4]):

Այս առումով պետք է նշել, որ Որոտնեցու խոսքը ևս իսկական փիլիսոփայի խոսքի պես հստակ է, համակարգված, նախապես խնամքով բաժանված գլուխների և ենթագլուխների: «Բեր նախ ի ձեռնարկ մեկնութեան աւետարանական և աստուածաբանական բանիս տրամատութիւն և կարգս գլխոց յարդարեսցուք՝ առ ի դիւրագոյն մեզ լինել յընթացս բանի և հեշտալուր, սիրող և լսողունկան»[5],-գրում է Որոտնեցին իր քարոզներից մեկում: Որպես հմուտ ու բազմափորձ տեսաբան, որ կատարարելապես

---

[1] Հաւաքումն յայտնաբանութեան ի Փիլոնէ իմաստնոյ՝ որ Յաղագս նախախնամութեան յառաջին բանէ, յերկասիրութեանց Յովհաննու Որոտնեցւոյ լուսաւոր ռաբունապետի տեառն իմոյ // «Բանբեր Մատենադարանի», Ե., 2006, թիվ 17, էջ 241:

[2] Հաւաքումն յայտնաբանութեան ի Փիլոնէ իմաստնոյ՝ որ Յաղագս նախախնամութեան յառաջին բանէ, յերկասիրութեանց Յովհաննու Որոտնեցւոյ լուսաւոր ռաբունապետի տեառն իմոյ // «Բանբեր Մատենադարանի», Ե., 2006, թիվ 17, էջ 243-244:

[3] Նույն տեղում, էջ 247:

[4] Նույն տեղում, էջ 248:

[5] Յովհաննու Որոտնեցւոյ տիեզերալոյս ռաբունապետի արարեալ ի բան Աւետարանին ըստ Յովհաննու, որ ասէ. «Ի սկզբանէ էր Բանն. և Բանն էր առ Աստուած. և Աստուած էր Բանն... Ամենայն ինչ նովաւ եղև», ձեռ. 6573, էջ 161բ:

տիրապետում է մեկնարվեստի նրբություններին, Որոտնեցին, որպես կանոն, նախքան բուն խնդրի քննությանն անցնելը, անհրաժեշտ է համարում նախապես տեղեկացնել ընթերցողին (ունկնդրին) քննվելիք հարցերին և դրանց քննության կարգին, երբեմն նաև ուսումնասիրության մեթոդին ու դիտավորությանը, ծանոթություն տալ խնդրի «պատմությանը»՝ դրա վերաբերյալ տեսական շրջանառության մեջ եղած տեսակետներին, այսինքն՝ տեսականորեն և հոգեբանորեն նախապատրաստել ուսանողին բուն նյութի ընկալման գործընթացին:

Աստվածաշնչական բնաբանների Ս. Հովհան Որոտնեցու մեկնությունները միջնադարի իմաստասիրական և աստվածաբանական հարստություններն իրենց մեջ ամբարած, տեսական արժեք ունեցող աշխատասիրություններ են: Դրանք պատկանում են հայ ժողովրդի ստեղծած այն գրական կոթողների թվին, որոնք ժամանակի ընթացքում չեն սպառում իրենց հոգևոր էներգիան, որոնց ասելիքը, ինչպես նաև այդ ասելիքի փաստարկման ու հաղորդման եղանակները չեն խունանում, այլ դարեդար պահպանում են իրենց իմաստասիրական արժեքն ու մշակութային նշանակությունը:

ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐԸ

Եվ այսպես, Ս. Հովհան Որոտնեցու տեսական ժառանգության անտիպ մնացած մասից ընտրվել և հրատարակման են պատրաստվել աստվածաշնչական բնաբանների այն մեկնությունները, որոնց դավանաբանական արժեքը լրացվում է իմաստասիրական հարուստ բովանդակությամբ (ներկայիս քննական ընագրերի համար հիմք հանդիսացող գրչագրերն ընդգծված են): Դրանք են՝

1. Յովհաննու Որոտնեցւոյ տիեզերալոյս բաբունապետի արարեալ ի բան Աւետարանին ըստ Յովհաննու, որ ասէ. «Ի սկզբանէ էր Բանն. և Բանն էր առ Աստուած. և Աստուած էր Բանն... Ամենայն ինչ նովաւ եղև» [Յովհ. Ա. 1, 3]:

Քարոզն ընդօրինակված է Երևանի Մատենադարանի[1] չուրջ 17 ձեռագրերում. ձեռ. 923 (17-րդ դ., 161ա-183բ), ձեռ. 1392 (17-րդ դ., 1732 թ., 3ա-48բ), ձեռ. 1410 (15-րդ դ., 149բ-159ա), ձեռ. 1431 (18-րդ դ., 148ա-163ա), ձեռ. 1760 (17-րդ դ., 91ա-122բ), ձեռ. 1840 (18-րդ դ., 74ա-80բ), ձեռ. 1843 (1711 թ., 144բ-157ա), ձեռ. 1844 (1711 թ.-ից առաջ, 180բ-197ա), ձեռ. 1845 (18-րդ դ., 211ա-227բ), ձեռ. 1850 (17-րդ դ., 47բ-64բ), ձեռ. 2119 (18-րդ դ., 83ա-107ա), ձեռ. 2178 (1391 թ., 30բ-48բ), ձեռ. 2281 (1666 թ.-ից առաջ, 13ա-38ա), ձեռ. 3979 (1659 թ., 24բ-38բ), ձեռ. 5142 (1705 թ., 232ա-245բ), ձեռ. 6573 (1715 թ., 149բ-173ա), ձեռ. 9801 (17-րդ դ., 45բ-63բ): Եւս մեկ

[1] Մենք օգտագործել ենք միայն Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրեր, ուստի գրականության մեջ սովորական ՄՄ համառոտությունը չենք օգտագործել, իսկ էջահամարները նշել ենք առանց «էջ» բառը գրելու, ասենք՝ «30բ»:

ձեռագրում պահպանվել է քարոզի համառոտագրությունը՝ 2271 (1724 թ., 183բ-188ա), իսկ 101 (433ա-437բ) ձեռագրում՝ հատված քարոզից:

2. Եռամեծի և երիցս երանեալ բազմերջանիկ և տիեզերալոյս մեծ հռետորի և անյաղթ փիլիսոփայի հայոց մեծաց Յովհաննու Որոտնեցւոյ արաբեալ մեկնութիւն բանին, որ ասէ. «Ո ստեղծ առանձին զսիրտս նոցա» [Սաղ. ԼԲ. 15]:

Քարոզն ընդօրինակված է Մատենադարանի չուրջ 19 ձեռագրերում. ձեռ. 603 (1709 թ., 155ա-199ա), ձեռ. 1410 (15-րդ դ., 166ա-178բ), ձեռ. 1431 (18-րդ դ., 129ա-148ա), ձեռ. 1760 (17-րդ դ., 44ա-90բ), ձեռ. 1771 (1500 թ., 1651 թ., 211ա-234ա), ձեռ. 1843 (1711 թ., 222ա-238ա), ձեռ. 1845 (18-րդ դ., 322ա-345բ), ձեռ. 1850 (17-րդ դ., 23բ-47ա), ձեռ. 1980 (1391 թ., 380բ-409բ), ձեռ. 2119 (18-րդ դ., 174ա-207բ), ձեռ. 2121 (1726 թ., 343բ-364բ), ձեռ. 2170 (1706 թ., 203ա-235բ), ձեռ. 2180 (1644 թ., 53ա-80ա), ձեռ. 2286 (1637 թ., 231ա-261բ), ձեռ. 2715 (1867 թ.-ից առաջ, 352ա-364բ), ձեռ. 3979 (1659 թ., 115ա-134ա), ձեռ. 6573 (1715 թ., 229ա-263ա), ձեռ. 9801 (17-րդ դ., 21բ-45բ), ձեռ. 10051 (1440-46 թթ., 108ա-138ա):

3. Յովհաննու Որոտնեցւոյ ասացեալ ի բան մարգարէին Դաւթի, որ ասէ. «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր, և գործք ձեռաց քոց երկինք են» [Սաղ. ՃԱ. 26]:

Քարոզն ընդօրինակված է Մատենադարանի չուրջ 18 ձեռագրերում. ձեռ. 1100 (1726 թ., 145ա-187ա), ձեռ. 1392 (17-րդ դ., 1732 թ., 48բ-135բ), ձեռ. 1410 (15-րդ դ., 130ա-149բ), ձեռ. 1431 (18-րդ դ., 102ա-129ա), ձեռ. 1771 (1500 թ., 1651 թ., 24ա-62բ), ձեռ. 1840 (18-րդ դ., 63բ-73բ), ձեռ. 1843 (1711 թ., 121ա-144ա), ձեռ. 1844 (1711 թ.-ից առաջ, 151բ-180բ), ձեռ. 1845 (18-րդ դ., 181ա-211ա), ձեռ. 1850 (17-րդ դ., 64բ-93ա), ձեռ. 2119 (18-րդ դ., 34ա-83ա), ձեռ. 2281 (1666 թ.-ից առաջ, 43բ-88ա), ձեռ. 2567 (1659 թ., 7բ-22բ, 46ա-55բ), ձեռ. 3961 (16-րդ, 17-րդ դդ., 12ա-38բ), ձեռ. 3979 (1659 թ., 1ա-24բ), ձեռ. 5142 (1705 թ., 209ա-232ա), ձեռ. 6573 (1715 թ., 101ա-149ա), ձեռ. 9801 (17-րդ դ., 63բ-99ա): Թիվ 101 (403ա-432բ) և 1760 (17-րդ դ., 122բ-169բ) ձեռագրերը պարունակում են քարոզի թերի օրինակը, թիվ 512 (1660 թ.-ից հետո, 122բ-123բ) և 2180 (1644 թ., 2ա-9բ) ձեռագրերը՝ հատվածներ քարոզից, իսկ 2018 (1621 թ., 94ա-96բ) և 2286 (1637 թ., 267ա-318ա) ձեռագրերը՝ քարոզի համառոտագրությունը:

4. Մեծ բաբունապետին Յովհաննու Որոտնեցւոյ ասացեալ ի բանն առաքելական, որ ասէ. «Նայեցարուք ընդ առաքեալն և ընդ քահանայապետ խոստովանութեան մերոյ ընդ Յիսուս, որ հաւատարիմ է արարչին իւրոյ» [Եբր. Գ. 1]:

Քարոզն ընդօրինակված է Մատենադարանի չուրջ 11 ձեռագրերում. ձեռ. 1431 (18դ., 193ա-202ա), ձեռ. 1840 (18դ., 82ա-84բ), ձեռ. 1843 (1711 թ., 157ա-163բ), ձեռ. 1844 (1711 թ.-ից առաջ, 197ա-205բ), ձեռ. 1845 (18-րդ դ., 228ա-237ա), ձեռ. 1850 (17դ., 154ա-163բ), ձեռ. 2119 (18դ., 107ա-119բ),

ձեռ. 3979 (1659 թ., 38բ-46բ), ձեռ. 5142 (1705 թ., 246ա-253բ), ձեռ. 6573 (1715 թ., 173ա-187ա), ձեռ. 9801 (17դ., 118ա-128ա): Թիվ 6562 ձեռագրում (1771 թ.-ից առաջ, 158բ-161բ) պահպանվել է հատված այս քարոզից:

5. Յովհաննու Որոտնեցւոյ՝ քաջ հռետորի և արդիւնաբան բաբունապետի, արարեալ ի բան մարգարէին, որ ասէ. «Արդարութիւն Տեառն ուղիղ է և ուրախ առնէ զսիրտս, պատուիրանք Տեառն լոյս են և լոյս տան աչաց, երկիւղ Տեառն սուրբ է և մնայ յաւիտեան» [Սաղ. ԺԸ. 9]:

Քարոզն ընդօրինակված է Մատենադարանի չուրջ 10 ձեռագրերում, որոնցից երկուսը թերի օրինակներ են. ձեռ. 1431 (18-րդ դ., 163ա-175ա), ձեռ. 1760 (17-րդ դ., 288ա-314բ), ձեռ. 1836 (1723 թ., 168ա-175բ, թերի), ձեռ. 1850 (17-րդ դ., 122ա-135ա), ձեռ. 1862 (1641 թ., 233ա-244բ), ձեռ. 2178 (1391 թ., 49բ-64բ), ձեռ. 2190 (1712 թ., 307ա-418ա), ձեռ. 8224 (1721-1722, 1726 թթ., 308բ-319բ, թերի), ձեռ. 8444 (1651-1695 թթ., 162բ-181ա), ձեռ. 9801 (17-րդ դ., 99ա-117բ):

6. Եռամեծի և երիցս երջանկի վարժապետին իմոյ Յովհաննու Որոտնեցւոյ ասացեալ ի յաւրհնութիւն նորակերտ չինուածոյ տաճարին և զանկակատանն առաքելական աթոռոյ վանիցն Ստեփէի, որ է գլուխ և աթոռ Սիւնեաց վիճակին, ի բանն, որ ասէ. «Տէր ի տաճար սուրբ իւրում, Տէր յերկինս յաթոռ իւրում» [Սաղ. Ժ. 5]:

Քարոզն ընդօրինակված է Մատենադարանի չուրջ 10 ձեռագրերում. ձեռ. 1843 (1711 թ., 170ա-186ա), ձեռ. 1844 (1711 թ.-ից առաջ, 213ա-234ա), ձեռ. 1845 (18-րդ դ., 245բ-267բ), ձեռ. 1850 (17-րդ դ., 174ա-199բ), ձեռ. 2119 (18-րդ., 208ա-242բ, վերջին էջը պատռված է), ձեռ. 2178 (1391 թ., 65ա-87ա), ձեռ. 3979 (1659 թ., 53բ-70բ), ձեռ. 5142 (1705 թ., 261ա-277բ), ձեռ. 6573 (1715 թ., 199ա-228բ), ձեռ. 7581 (1822 թ., 129ա-137բ): Եւս երկու ձեռագրերում պահպանվել է այս քարոզի համառոտագրությունը՝ ձեռ. 665 (1710 թ., 349բ-350ա) և ձեռ. 2271 (1724 թ., 174ա-181ա), իսկ մեկում՝ հատված քարոզից՝ ձեռ. 6562 (1771 թ.-ից առաջ, 156ա-158բ):

7. Մեծ բաբունապետին Յովհաննու Որոտնեցւոյ ասացեալ ի բան առաքելոյն Պօղոսի, որ ասէ. «Մարդով եղև մահ, և մարդով՝ յարութիւն մեռելոց» [Ա. Կորն. ԺԵ. 21]:

Քարոզն ընդօրինակված է Մատենադարանի չուրջ 14 ձեռագրերում. ձեռ. 663 (1724 թ., 219ա-224ա), ձեռ. 1337 (1706 թ., 319ա-330ա), ձեռ. 1843 (1771 թ., 163բ-170ա), ձեռ. 1844 (1711 թ.-ից առաջ, 205բ-213ա), ձեռ. 1845 (18-րդ դ., 237ա-245բ), ձեռ. 1850 (17դ., 164ա-174ա), ձեռ. 2119 (18-րդ դ., 120ա-133ա), ձեռ. 2196 (1683 թ., 262ա-276բ), ձեռ. 2715 (1867 թ.-ից առաջ, 347բ-352ա), ձեռ. 3979 (1659 թ., 46բ-53բ), ձեռ. 5142 (1705 թ., 253բ-260բ), ձեռ. 6573 (1715 թ., 187ա-198բ), ձեռ. 6921 (1719 թ., 221ա-254բ), ձեռ. 9801 (17-րդ դ., 128ա-138ա): Եւս երեք ձեռագրերում պահպանվել են հատվածներ այս քարոզից. ձեռ. 1431 (18-րդ դ., 202բ, յոթ տող), ձեռ. 8198 (14-րդ դ., 116ա-120բ), ձեռ. 10323 (1715 թ., 385ա-388ա):

Նշված բոլոր յոթ քարոզները ներառող Մատենադարանի միակ գրչագիրն է 1850-ը, ներկայացվող քարոզներից վեցն ընդգրկված են Մատենադարանի 1843, 1845, 2119, 3979, 6573 և 9801 ձեռագրերում, իսկ հնագույն գրչագրերն են՝ 1980/1391 թ., 2178/1391 թ., 8198/14-րդ դ. (Որոտնեցու քարոզը՝ թերի), 1410/15-րդ դ., 10051/1440-46 թթ., 1771/1500 թ.:

Ներկայացվող քննական ընագրերը կազմելիս ձգտել ենք ընտրել հնագույն և հնարավորինս ընթեռնելի, խնամքով գրված և քարոզների ամբողջական տեքստերը պարունակող, ինչպես նաև տարընթերցումները չկրկնող, տարբեր ձեռագրային խմբերի պատկանող գրչագրերը: Ներկայիս ընագրային հրատարակության մեջ ձեռնպահ ենք մնացել իմաստային պարզաբանումներից և ծանոթագրություններից՝ դա համարելով որոտնեցիական երկերի հետագա թարգմանական հրատարակության խնդիրը:

Ընագրում ուղղակի (բառացի և ոչ բառացի) մեջբերումներն Աստվածաշնչից վերցված են չակերտների մեջ, որոնցից, ինչպես նաև անուղղակի մեջբերումներից անմիջապես հետո, քառակուսի փակագծերում [ ] տրվում է համապատասխան հղումը:

Տարընթերցումները տրված են տողատակում, ավանդական եղանակով, միայն «փոխարեն»-ը՝ «փխ»-ն, նշանակված է], իսկ «չիք»-ը՝ > պայմանական նշաններով. բոլոր դեպքերում նախ դրված են ձեռագրերի պայմանանիշերը, ապա՝ ընթերցումը, հիշյալ նշաններից մեկը, վերջում՝ հիմնաբառը: Աննշան, իմաստային տարբմբռնում չարտահայտող, ուղղագրորեն սխալ որոշ տարընթերցումներ հաշվի չեն առնվել: Ձեռագրի խոշոր բացթողումը կամ տարընթեռնելի մեծ հատվածը ընագրում վերցվում է ձևավոր փակագծերի մեջ՝ { }, նույն նշանը կրկնվում է նաև համապատասխան տարընթերցման մեջ: Տարընթերցումների բաժնում տրված են նաև որոշ գրչագրային առանձնահատկություններ:

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՐՈՏՆԵՑԻՈՅ ՏԻԵԶԵՐԱԼՈՅՍ ՐԱԲՈՒՆԱՊԵՏԻ[1] ԱՐԱՐԵԱԼ Ի ԲԱՆ[2] ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ԸՍՏ[3] ՅՈՎՀԱՆՆՈՒ, ՈՐ ԱՍԷ. «Ի ՍԿԶԲԱՆԷ ԷՐ ԲԱՆՆ. ԵՒ ԲԱՆՆ ԷՐ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ. ԵՒ ԱՍՏՈՒԱԾ ԷՐ ԲԱՆՆ... ԱՄԵՆԱՅՆ ԻՆՉ ՆՈՎԱՒ ԵՂԵՒ[4]» [ՅՈՎՀ. Ա. 1, 3]

Բնագիրը կազմված է հետևյալ վեց ձեռագրով.
A - Ձեռ. 2178, 30բ-48բ, B - Ձեռ. 1410, 149բ-159ա, C - Ձեռ. 2281, 13ա-38ա,
D - Ձեռ. 1760, 91ա-122բ, E - Ձեռ. 923, 161ա-183բ, F - Ձեռ. 6573, 149բ-173ա:

Կահաւորիմ[5] ով կաճառք լուսերամից և դասք սերովբէից[6] սակս տրամաբանութեան երկու[7] ներհակ[8] հոմանուանց, որոց մինն ասի եղելութիւն և միւսն՝ անեղութիւն: Որոց[9] իւրաքանչիւր ոք[10] ի սոցանէ տրամատութիւն ընդունի ըստ հինգ յեղանակի: Եւ նախ ասասցուք զանեղութիւն, զի[11], առաջին[12], ասի անեղութիւն ունայնն, որ բնաւ չէ եղեալ: Երկրորդ, ասի անեղութիւն, որ ի նիւթոյ իմեքէ կարէ լինել ինչ տակաւին չև ևս եղեալ. որպէս ի փայտէ աթոռ կամ ի պղնձոյ անդրի՝ այսպիսիքս ասի անեղ սակս չև ևս եղելոյն: Երրորդ, ասի անեղ, որ ոչ է եղեալ և ոչ կարէ լինիլ. որպէս եռանկիւնին՝ քառանկիւնի՝ թարց եղծանելոյ միւսոյն և տալ զմիւս ձևն[13], վասն որոյ առանց եղծանելոյ եռանկիւնին ոչ ասի քառանկիւնի: Չորրորդ, ասի անեղութիւն ոչ փոխարկութիւն տեսակին, զի ասի անեղ ոչխար տեսակն, յորժամ ոչ է եղեալ[14] մարդ: Հինգերորդ, ասի անեղ մշտագոյ էն, զի ոչ է եղեալ, այլ առանց եղելութեան է միշտ էն՝ Աստուած բոլորից:

Իսկ եղելութիւն դարձեալ հոմանուն է, զի են եղեալք՝ նախ, որպէս էքս ամենայն յանգոյից ի գոյ ածան: Երկրորդ, եղեալ ասի, որ ի ծնօղէն եղանի[15] ըստ բնութեան ներգործութեան, որ զհասարակականն և զյատկականն[16] յինքեան բերէ. զհասարակն[17] որպէս մարդ և ձի, իսկ զյատուկն[18] որպէս Պետրոս[19] կամ Ջլորոս[20]: Երրորդ, ասի եղելութիւն, որ ի նիւթոյ ինչ եղանի ի ձեռն արուեստի, այլ ընկալեալ զանուն և զձև և զներգործութիւն՝ որպէս յերկաթէ սողոց և ի փայտէ գաւազան[21]: Չորրորդ, ասի եղելութիւն, որ յերկուց խառնմանէ նա-

[1] F եղև + և առանց նորա եղև և ոչինչ
[2] C վարդապետի] ռաբունապետի
[3] D բանս
[4] B > ըստ
[5] B կահաւորիմ, այսինքն՝ շահատրիմ **(ավելացված տողատակին)**
[6] ED սէրոբէից
[7] BCDF երկուց
[8] D ներհակաց
[9] A որոյ
[10] Fիւրաքանչիւրք] իւրաքանչիւր ոք
[11] AE > զի
[12] B նախ] առաջին
[13] ADE զմիաձևն] զմիւս ձևն
[14] F > եղեալ
[15] ADE ելանի
[16] C > և զյատկականն
[17] B զհասարակականն
[18] BD զյատկականն
[19] CDEF Պօղոս
[20] BF Շլօրոս
[21] BCDE տարգաղ

յից այլ իմն եղանի՝ որպէս ջուր ընդ գինի և կամ ալիւր[2] ընդ ջուր, զի ոչ պահեն զսահման բնական: Հինգերորդ, ասի[3] եղելութիւն, որ երկուց[4] ոմանց[5] էակաց ի միասին գոլով յաղթէ վեհագոյնն տկարին զորակութիւնսն փոխելով և ոչ զբնութիւն, որպէս երկաթ ի հրոյն[6] և ասր ի ծիրանւոյ՝[7] ասի երկաթն եղեալ հուր և ասրն եղեալ ծիրանի:

Արդ, որովհետև ծանեաք զանեղութիւն և զեղելութիւն, տեսցուք և զայն ևս, թէ զիա՞րդ երկու ներհակք անուանք[8] ի վերայ Աստուծոյ կոչին: Անեղութիւնն և էութիւնն մի՞ իմն են՝ վասն այն ստորոգին[9] ի վերայ Աստուծոյ, և թէ ոչ են մի՝ զիա՞րդ ասին ի վերայ Աստուծոյ:

Եւ նախ գիտելի է, զի թէ անեղութիւնն էութիւն է, յայնժամ ոչ է ներհակ անեղութիւնն էութեանն: Երկրորդ, թէ անեղութիւնն[10] էութիւն է, յայնժամ էութիւնն լինի անեղութիւն, որ է անհնար, վասն զի ամենայն գոյակս էութիւն են, բայց ոչ են անեղ: Երրորդ, թէ անեղութիւնն լինէր էութիւն, ոչ լինէին ներհակք, վասն զի ոչ երբէք ասի գոյացութիւնն ներհակ գոյացութեան: Չորրորդ, զի ամենայն էութիւն փաղանունաբար ստորոգի, իսկ թէ անեղութիւնն էութիւն էր՝ փաղանունաբար ստորոգէր[11] ներքոյ[12] անկելոցն իւր[13]: Արդ, յայտնի է, զի անեղութիւնն ոչ փաղանունաբար ստորոգի ի վերայ ամենայն էի, յայտ է, թէ ոչ է անեղութիւնն էութիւն: Հինգերորդ, զի էութիւն քան զէութիւն ոչ ասի առաւել և նուազ ըստ գոյացութեան[14] սահմանի, իսկ անեղութիւն առաւել երևի, քան զէութիւն, զի էութիւն միայն զէութիւն նշանակէ, իսկ անեղ էութիւն[15]՝ զոչ եղեալ էութիւն[16], յայտ է, թէ ոչ է անեղութիւնն էութիւն: Վեցերորդ, զի թէ[17] էութիւն Աստուծոյ մի ինչ նշանակէ, իսկ անեղութիւն բազում ունի նշանակութիւն՝ յայտ է, թէ ոչ է մի էութիւն և անեղութիւն: Եւթներորդ, զի թէ անեղութիւն առ եղելութիւն[18] ունի զտարբերութիւն, իսկ էութիւնն Աստուծոյ առ[19] ոչինչ ունի կալումն՝ զիա՞րդ եղիցի նոյն ունելն առ ոչ ունելն[20]: Ութերորդ, թէ անեղութիւն ի վերայ Աստուծոյ էութեան[21] էր նշանակիչ և ո՛չ ոչ լինելոյն[22], կարօտանայր այլում բառի, թէ ոչ յիմեքէ պատճառէ է: Իններորդ, թէ անեղն, անծինն, անմահն բազում նշանակութիւն ունին, այսոքիկ ձայնիւ ասին, հարկ էր էութեան այսպէս[23] գոլ, զի ամենայն

1 AE ելանէ
2 BCF ալեր
3 C > ասի
4 CDF երկու
5 B > ոմանց
6 B հրոյ ներկեալ, C հրոյ ներկանեալ, F հրոյ ներկանալ] հրոյն
7 AE ծիրանս
8 C > անուանք
9 C ստուգին
10 A անեղն
11 A ստորոգեար
12 A ներքս
13 A էր] իւր
14 A գոյացութեանցս
15 BFանեղութիւն] անեղ էութիւն
16 BFեղելութիւն] եղեալ էութիւն
17 AC > թէ
18 AE առաւելութիւն] առ եղելութիւն
19 A > առ
20 ADE չունելն] ոչ ունելն
21 AE էութիւն
22 AE լինոյն
23 E որպէս

ձայնիցն հետևէր, և թէ ոչ հետևի, յայնժամ ոչ են էութիւն ձայնքս այս: Տասներորդ, զի անեղութիւն ի բացբարձական[1] անուանց[2] է և եղելութիւն՝ ի դրականացն, յայտ է, թէ ոչ է միևնոյն անեղութիւն և էութիւն:

Կա այլ ինչ ևս առաջի[3] մեզ հետազօտել, թէ էութիւն առաւել ստորոգի ի վերայ Աստուծոյ, թէ՞ անեղութիւն: Յայտնի է այս, զի ի վերայ Աստուծոյ էութիւն ոչ ասի, զի ոչ է նա վասն իրիք, զի յամենայն իր՝ է՞, և զի՞նչ է, և որպիսի՞ ինչ է և վա՞սն էր է, բայց Աստուած ոչ վասն իրիք է: Երկրորդ, զի ամենայն էութիւն ներհակաց է ընդունական, որպէս արարեալն զոչ արարելոյն, իսկ աստուածային էութիւնն ոչ է ներհակաց ընդունական: Երրորդ, զի ամենայն[4] սեռ և տեսակ էութիւն ոչ է առանց պատահմանց և ասին էութիւն տիրապէս, իսկ աստուածային էութիւն ոչ ինչ է յայսցանէ: Չորրորդ, զի ամենայն էութիւն ենթակայի ի ներքոյ որակութեանց, իսկ Աստուած ոչ երբէք ենթակայի ի ներքոյ որակութեանց: Հինգերորդ, զի ամենայն էութիւն փոփոխումն ունի, իսկ էութիւնն Աստուծոյ անփոփոխ է: Վեցերորդ, զի այլ ամենայն էութիւնք կրականք են, իսկ էութիւնն Աստուծոյ ոչ է կրական, այլ միշտ ներգործութիւն: Յայտ ուրեմն է, թէ ոչ ասի Աստուած էութիւն տիրապէս, իսկ անեղութիւն առաւել ասի Աստուած տիրապէս, քան էութիւն, վասն զի ոչ է եղեալ:

Բե՛ր տեսցուք, թէ որովհետև առաւել ստորոգի անեղութիւնն ի վերայ Աստուծոյ, քան էութիւնն՝ խնդրեսցուք, թէ[5] սահմանաբա՞ր ստորոգի[6]:

Եւ գիտելի է, զի սահման զոր ինչ էն[7] ըստ բնութեան՝ զայն նշանակէ, իսկ անեղութիւն՝ զոր ինչ ոչն է յայտնի՝ թէ[8] ոչ եղև: Երկրորդ, զի էութեան[9] սահման ոչ զհակակայսն ախորժէ, այլ որոց էնն խոստովանեալ, իբր թէ խնդրել՝ զի՞նչ է սպիտակն, ոչ ասելն թէ՝ ոչ է սեաւն, այլ թէ՝ գոյն է արտադատող աչաց: Իսկ անեղութիւն զոր ինչ ոչն է յայտնէ, այլ ոչ թէ զոր ինչն է ասէ: Երրորդ, զի անեղութիւն ի հոմանուանցն է, իսկ սահման[10] ոչ է ի հոմանուանց, յայտ է թէ՝ անեղութիւնն ոչ է սահման: Չորրորդ, թէ անեղութիւնն սահման էր, ամենայն ողջ սահման անդրադարձութիւն առնու, որպէս թէ՝ ամենայն մարդ կենդանի, բանաւոր[11], մահկանացու, մտաց և մակացութեան ընդունակ. և ամենայն՝ որ մտաց և մակացութեան և մահկանացու և բանաւոր կենդանի՝ նա մարդ է: Այսպէս թէ անեղութիւնն էութիւն էր, ապա ամենայն, որ[12] սահման էր՝ անդրադարձութիւն առնոյր, իբր թէ՝ յամենայն անեղութիւն

[1] AD բացարձակ
[2] BFբացբարձականացն] բացբարձական անուանց
[3] BF > առաջի
[4] B > ամենայն
[5] AE > թէ
[6] A > ստորոգի
[7] AE զոչընչէն] զոր ինչ էն
[8] A > թէ
[9] A էութիւն ոչ] էութեան
[10] ACDE սահմանք
[11] F բանական
[12] BCF > էութիւն էր, ապա ամենայն, որ

էութիւն է, ապա ամենայն, որ էութիւն է՝ նա անեղութիւն էր: Բայց ոչ այդպէս, այլ այսչափ միայն, զի զառաւելութիւն էութեանն[1] Աստուծոյ գերազանցութիւն նշանակէ՝ թէ էութիւն է, բայց ոչ եղական, այլ անեղ էութիւն[2] յաղագս այսորիկ ասի՝ գերագոյն գոյ, գոյիցս վեհագոյն գոյ, վասն զի ո՛չ ի ոչ գոյից գոյ[3], այլ միշտ է գոյ, անպատճառ գոյ, բոլոր և կատարեալ գոյ և յամենայն գոյեղինացս պատճառ գոյութեան[4] գոյ՝ կամաւ և ոչ աշխատութեամբ արարիչ գոյ, բարերար գոյ, վասն զի բնութեամբ բարի գոյ...

Բե՛ր տեսցուք և զայն ևս, զի ասի ի վերայ Աստուծոյ՝ «Հայր» «ամենակալ» և թէ ոչ՝ «Սա ինքն է Հայրն քո» և թէ՝ «Հայր առաքեաց զիս» [Յովհ. Ե. 36] և թէ՝ «մկրտեցէք յանուն Հօր» [Մատ. ԻԸ. 19]... Եւ զի «հայր» անունս ի մարգարէից և առաքելոց ի բազում տեղիս կոչի ի վերայ Աստուծոյ՝ քննելի է մեզ, թէ «անեղն» առաւել պատշաճի ի վերայ Աստուծոյ, թէ՞ «հայրն»:

Եւ զի անեղն տա մտածութիւն ոչ եղելոյ, իսկ հայրն տա մտածութիւն որդւոյ, ապա ուրեմն, բարւոք է եղելոյ նշանակ, քան զոչ եղելոյն[5]: Երկրորդ, զի հայր անունդ առընչաբար զորդի բերէ ի մէջ հաւասար իւր ի նոյն բնութիւն, իսկ անեղութիւն առընչաբար զեղելութիւն նշանակէ, որ է օտար յանեղութենէ: Երրորդ, ընտանէգոյն է զԱստուած իմանալ յայնմանէ, որ է՛ է, քան յայնմանէ, որ ոչ է: Զորրորդ, զի լաւագոյն նշանակի ասել Աստուած՝ որ էն, քան ասել անչար և անխորամանկ, զի բազումք են ի մարդկանէ անչար և անխորամանկ, այսպէս հաւատամք զհրեշտակք անչար և անխորամանկ[6]: Ապա առաւել պատշաճի ասել Աստուած հայր, քան թէ[7] անեղ, քանզի անեղք բազումք են, իսկ Հայրն նա[8] միայն է, որ միշտ է Հայր, որ ոչ երբեք եղև Որդի, որպէս[9] Որդին՝ որ[10] միայն է Որդի, իսկապէս[11] որ ոչ երբէք եղև Հայր, այլ միշտ[12] Որդի:

Տեսցու՛ք և զայն ևս, զի ասէ մարգարէն՝ «Աստուած մեր յերկինս և յերկրի» [Սաղ. ՃԺԳ. 3], թէ «Աստուած» անունդ[13] առաւե՞լ ստորոգի ի վերայ անեղին, քան[14] «Հայրն»:

Ծանի՛ր, ով վսեմականդ, զի «Աստուած» ասելով ընդ ստեղծուածն ունի զհամեմատութիւն, իսկ «Հայր» ասելն՝ ընդ Որդի, որ է ի բնութենէ իւրմէ: Ապա ուրեմն[15], բարւոք է համեմատութիւն ընդ միշտ էն, քան ոչ[16] միշտն:

[1] A էութիւնն
[2] F անեղութիւն է] անեղ էութիւն
[3] A ոչ գոյ գոյ գոյ, E գոյից գոյ] ոչ ի ոչ գոյից գոյ
[4] D գոյացութեան, A > գոյութեան
[5] A նշանակ եղելոյն] եղելոյն
[6] ADE > զի բազումք են ի մարդկանէ անչար և անխորամանկ, այսպէս հաւատամք զհրեշտակք անչար և անխորամանկ, C > այսպէս հաւատամք զհրեշտակք անչար և անխորամանկ
[7] AE > թէ
[8] B > նա
[9] A այսպէս
[10] ABCF > որ
[11] A իսկ
[12] BF է միշտ] միշտ
[13] BCDEF > Աստուած անունդ
[14] BC անեղ էին թէ] անեղին քան
[15] ABE > ուրեմն
[16] AE > ոչ

Երկրորդ, զի[1] յորժամ «Աստուած» ասեմք՝ զարուեստն[2] նշանակէ, իսկ յորժամ «Հայր» և «Որդի»՝ զբնութիւնն նշանակէ. պատուական[3] է զԱստուած ի բնութենէ թարգմանել, քան յարուեստէն[4]: Երրորդ, զի[5] յորժամ «զԱստուած» ասեմք, զստեղծօղն ընդ ստեղծուածն[6] համեմատեմք, իսկ յորժամ «Որդի»՝ իսկապէս զպատկերն ընդ սկզբնատիպն[7]: Չորրորդ, զի յորժամ[8] զաշակերտսն հրաւիրեաց ի մկրտութիւն՝ ի Հայր ասաց մկրտել [Մատ. ԻԸ. 19]: Եւ Փիլիպպոս, յորժամ յաղագս գերագոյն[9] էին խնդրէր, ասէ՝ «Ցոյց մեզ զՀայր» [Յովհ. ԺԴ. 8]: Եւ Փրկիչն հրամայէր[10], որ «Ետեսն զիս՝ ետես զՀայր» [Յովհ. ԺԴ. 9], և ոչ թէ որ՝ «Ետեսն զիս՝ ետես զԱստուած»: Եւ դարձեալ, նոյն ինքն Փրկիչն[11] լուծանէ զայս տարակոյս, մեծարելով «զՀայր» անունն, քան «զԱստուածն», ասելովն. «Ելանեմ ես առ Հայր իմ և առ Հայր ձեր» [Յովհ. Ի. 17], և ապա թէ՝ «Առ Աստուած իմ և Աստուած ձեր[12]» [Յովհ. Ի. 17]: Յայտ եղև, թէ «Հայր» անունն առաւել պատշաճի ի վերայ միշտ էին, քան թէ «Աստուածն»:

Կայ[13] և ս ելանել մեզ ի բարձրագոյն գահաւանդակս, տեսանել, թէ է ճշմարիտ նշանակութիւն էութեան անուանքս այս[14]:

Եւ հաստատի ի ձեռն վեց առաջարկութեանց բնական բանականութեամբ. նախ՝ ի հակառակաց[15] միաբանութեանց, երկրորդ՝ ի յանդադար շարժմանց, երրորդ՝ ի հարկաւոր պատճառաց, չորրորդ՝ ի փոքր և ի մեծ ճշմարտութեանց, հինգերորդ՝ ի ձևոց[16], ի զարդուց, ի դասուց և ի գունոց, վեցերորդ՝ ի պատճառելեաց, և զայն վկայութեամբ Աստուածաշունչ գրոց:

Եկեսցուք յառաջին գլուխն և ասասցուք, թէ հիմն և արմատ աշխարհիս և աշխարհայնոցս ի չորից հակառակ[17] տարերց է, և մանաւանդ, յերևելեաց և յաներևութից: Զի հակառակ է ջերմն ցրտին՝ որպէս հուր ջրոյ, և գէջն չորին՝ իբր օդն երկրին, իսկ երևելին աներևութին՝ որպէս մարմինն հոգւոյն և ծանրն թեթևին: Արդ, յայտնի է, զի սոքա բնութեամբ հակառակ են և ի միմեանց զհրաժարումն փութան և որքան կարեն՝ մեկ զմեկ[18] յաղթահարեն և ապականեն, որպէս յայտնի է ի բժշկական արուեստս հակառակութիւն սոցա՝ սակս[19] առաւելութեան ոմանց և նուազութեանց, իսկ բժշկութիւն ի հաւասարութենէ սոցա լինի: Յայտ է, թէ է՛ ոմն, որ ի հարկէ կամելոյն

---

1 AB > զի
2 AE զարհեստն
3 B պատշաճական
4 AE արհեստէն
5 BCDF > զի
6 ADE ստեղծուածոյն
7 BF սկզբնատպին
8 A > Որդի՝ իսկապէս զպատկերն ընդ սկզբնատիպն: Չորրորդ, զի յորժամ
9 AE > գերագոյն
10 AE ասէր
11 AE Քրիստոս
12 ADE > իմ և Աստուած ձեր
13 ADE նա
14 BF այսոքիկ
15 AE հակառակութեանց
16 A ձևուց
17 CD հակառակաց
18 BF մի զմի, E զմիմեանս] մէկ զմէկ
19 F > սակս

նորա գան սոքա ի միաբանութիւն՝ իբր թէ կամօք նորա եղեն սիրելիք անքակտելիք և թշնամիք անհաշտելիք: Եւ ըստ այնմ, թէ՝ մնամք կապողին և արձակողին և վերստին անլոյծ կապողին: Եւ այս այլ ոչ ոք է, քան թէ Հայրն և Արարողն ամենեցուն, զոր գտանելն գործ է և պատմելն անճառելի՝ ըստ Պղատոնի, քանզի անհնար է առանց կամաց նորա կցորդութիւն լինել ներհակաց կամ շաղկապութիւն: Յայտ է ի միաբանութենէ ներհակացն, թէ է՛ ոմն կարգող և կապող սոցա, և է՛ նա Աստուած:

Երկրորդ, ի շարժմանց արարածոցս, ի յօդոց, ի գետոց, ի յերկնից և յաստեղաց, զի միշտ անդադար ի շարժման են և ոչ երբէք հանգչին: Որպէս ասէ Արիստոտէլ ի գիրս Նկատման, թէ է՛ ոմն, որ շարժէ զերկնային մարմինն և մի է, և անմարմին և անբաւ զօրութիւն ունի: Զի թէ մարմին էր, բովանդակեալ էր և բովանդակելի[1] զօրութեան[2] պատահեալ[3], ոչ կարէր անդադարապէս շարժել զերկին և զաստեղս և զայլս ամենայն, որ շարժի: Բայց զի մի է և անմարմին և անբաւ զօրութիւն ունի[4], վասն այնորիկ ինքն անշարժ[5] գոլով՝ անդադարապէս շարժէ զամենայն, և նա է Աստուած բոլորից:

Եկեսցուք և յերրորդ գլուխն, զորս հրատարակէ հարկաւորն: Քանզի Արիստոտէլ ի Պերի արմէնիաս գիրքն[6] յորժամ բաժանէ զհակասութիւնն՝ տրամատէ ի կարելի և յանկարելի, ի հարկաւոր և ի ներընդունական. կարելի է մարդոյ[7] լինել ճարտասան կամ ոչ[8], իսկ անկարելի է մարդոյ լինել ձի, և ներընդունական է լինել անձրև կամ ոչ, իսկ հարկաւոր է մարդոյն լինել բանական: Հարկն միշտ ներգործապէս երևի յամենայն էակս, որպէս բնութիւն տնկոց և անասնոց հարկ է զաճումն և զպտղածնութիւնն, զկերակրականն և զվտարականն՝ և ոչինչ է յէակացս, որ ոչ ունի[9] զհարկն առաւել կամ նուազ: Յայտ ուրեմն է, թէ է՛ ոմն սկզբնագոյն հարկեցուցիչ բոլորիցս, որ ըստ չափոյ պիտոյից եղեալ է զհարկս զայս յամէնեսեան: Եւ է՛ նա Աստուած:

Տեսցուք և զչորրորդ գլուխն՝ զփոքր և զմեծ ճշմարիտն, քանզի է՛ սուտ սակաւ, և է՛ սուտ մեծ, որպէս ասել չորսն է հինգ՝ սակաւ սուտ է, քան ասել՝ չորսն է հազար կամ բիւր: Եւ սակաւ սուտն երևեցուցանէ զինքն մերձ ի ճշմարիտն, իսկ առաւել սուտն հեռի է ի ճշմարտէն: Ապա ուրեմն, յայտմանէ երևի, թէ է՛ փոքր ճշմարիտ և մեծ. փոքր ճշմարիտ, որ մօտ և մերձ լինի փոքր ստութեան, իսկ մեծ ճշմարիտն, որ ամենևին հեռի և օտար գոյ ի ստութեանց: Եւ նա անդրադարձի առ կատարեալ և անպատճառ էն, քանզի ամենայն[10],

[1] BF բաւանդակ
[2] BF և ի զօրութեան
[3] F պահեալ
[4] B > ունի
[5] F ինքնաշարժ] ինքն անշարժ
[6] BF Պերի արմէնիասն] Պերի արմէնիաս գիրքն
[7] ACDE > մարդոյ
[8] E > ոչ
[9] E > ունի
[10] F > ամենայն

որ ճշմարիտ է՝ է՛ է, և ամենայն, որ կատարեալ է՛ է՝ ճշմարիտ է: Եւ այս ոչ այլ ինչ է, քան թէ Աստուած, որ է՛ն ճշմարիտ:

Տեսցուք և զհինգերորդ գլուխն, քանզի զարդ, չափ, և ձև, և դասութիւն արարածոցս յայտնապէս նշանակեն զճարտարապետն սորա՝ որպէս երկիրս ծաղկօք և երկինքն աստեղօք, և ի մասանց կազմուածոց երկնի և երկրի: Չափ, և ձև, և գոյն, և դասաւորութիւն սոցա յայտնապէս գոչեն, թէ կա՛յ ոմն իմաստուն, որ կշռորդօք է չափեալ զիւրաքանչիւր տեսակ՝ զպիտանի, զչափ, զձև և զգոյն, զզարդ և զդասս և զմասունս[1] բոլորին, որ իւրաքանչիւր ըստ արժանւոյն ունին և ոչ[2] առաւել կամ նուազ, յորս թէ ի պատահարից ոմանց մասն կամ գոյն կամ դաս փոխին՝ յայտնապէս երևի պակաս կամ թերի: Յայսմանէ հաստատապէս երևի յերևելի արարածոցս աներևոյթն՝ Աստուած:

Տեսցուք և զվեցերորդն[3], որ ասի պատճառելեաւն գտանել զպատճառն բոլորեցունց: Քանզի չորս են պատճառ՝ նիւթական[4], տեսական, ներգործական, վախճանական. նիւթն[5] է պատճառ տեսակին, տեսակն[6] ներգործութեան, ներգործութիւնն՝ պատճառ[7] վախճանի: Եւ սոքա ոչ միշտ[8] լինին պատճառ, այլ երբեմն լինի իմն խափանումն ի պատահարէ իմեմնէ[9]: Վասն որոյ հարկիմք զանփոփոխ[10] պատճառն բոլորիցս գտանել՝ զԱստուած, որ է նա անշարժ[11] պատճառ չորից պատճառացն՝ նիւթոյ ասեմ և տեսակի և ներգործութեան և վախճանի: Եւ զի[12] մարգարէն Դաւիթ ի սոյն միտս ասէ. «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ և զարարածս[13] ձեռաց նորա պատմէ հաստատութիւն» [Սաղ. ԺԸ. 2]:

Արդ, յայտ եղև ըստ վեց յեղանակի, թէ է՛ անեղ էութիւն[14] Աստուած Հայր:

Բե՛ր այժմ տեսցուք, թէ մի է, թէ՞ բազում:

Եւ հաստատի[15] այսպէս, թէ մի՛ է Աստուած: Նախ՝ բնական բանականութեամբ, քանզի ամենայն գոյակքս[16] եթէ՛ սեռ, և եթէ՛ տեսակ, և եթէ՛ անհատք, ի վերջնոցն որքան յառաջ ի սկիզբն ճանապարհորդեն՝ ի մինն[17] ընթանան, որպէս բազմութիւն անհատից՝ ի մի՛ տեսակ, և բազմութիւն տեսակաց՝ ի մի՛ սեռ, և բազմութիւն սեռից՝ ի մի՛ գոյացութիւն: Երկրորդ՝ յերկրաչափութենէ, որպէս բազում մարմինք՝ ի մի՛ մակերևույթ, և բազում մակերևույթ՝ ի մի՛ գիծ, և բազում գիծ՝ ի մի՛ անյայտ նիշ: Երրորդ՝ ի թուական արհեստէ, ի բիւրուցն՝ ի հազարեակն, ի հազա-

[1] ACD զմասունք
[2] E > ոչ
[3] E զվեցերորդ գլուխն] զվեցերորդն
[4] E նախ նիւթական] նիւթական
[5] F նիւթական
[6] F տեսական
[7] BF > պատճառ
[8] F միայն
[9] E իմեքէ
[10] DF զանփոխ
[11] B միշտ անշարժ
[12] B > զի
[13] ADF զգործս
[14] EF անեղութիւն] անեղ էութիւն
[15] B հաստատեսցի
[16] BF գոյակս
[17] E նմին

բեկէն՝ ի հարիւրեակն, ի հարիւրեկէն՝ ի տասնեակն, ի տասնեակէն՝ ի միակն: Զորրորդ՝ ի բուսականաց, զի բազում ճուղք՝ ի մի՛ արմատ: Եւ այս յայտնապէս տայ մեզ վկայութիւն, թէ մի՛ է արարիչ սոցա, որ այնքան բազմութեանց զմիակն հիմն և արմատ վայելչագոյն համարեցաւ՝ ինքն մի՛ է, և[1] այսքան բազմութիւնք ի նմանէ յառաջացան:

Երկրորդ, թէ էին բազում աստուածք՝ կա՛մ լինէր, որ բազումքն հնազանդէին միոյն, և միոյն ստեղծանէր զաշխարհս և նախախնամէր, յայնժամ միոյն միայն լինէր ամենակալ, և որ ամենակալն է՝ նա՛ է Աստուած:

Երրորդ, թէ լինէին բազում աստուածք, հակառակ[2] իւրաքանչիւր ոք ի նոցանէ կազմէին որիշ աշխարհ և աննման միմեանց, բայց ոչ է այսպէս, այլ մի՛ է աշխարհ բաղկացութիւն[3] յերկնէ և յերկրէ և ոչ ի մէջ սոցա պարառեալ[4] են զմիմեանց բնութիւն:

Զորրորդ, թէ լինէին բազում աստուածք հակառակք միմեանց՝ մի[5] զմիոյ շինուածք և ստեղծուածք ապականէին, և այսպէս ապականեալ լինէր աշխարհս: Բայց յայտնի է, զի ոչ ապականի աշխարհ, որպէս ասէ Սողոմոն, թէ[6]՝ «Ազգ գայ և ազգ գնայ[7], և երկիր յաւիտեան կայ» [Ժող. Ա. 4]:

Հինգերորդ, զի թէ էին աստուածք հակառակք՝ լինէր ի մէջ նոցա հեռ և նախանձ: Եւ ուր լինի հեռ և նախանձ՝ անդ է անկարգութիւն և ամենայն բան չար: Եւ ուր լինի չար՝ ոչ կարէ ստեղծող լինել, զի ստեղծանելն բնութեամբ բարւոյն է պտուղ, իսկ չարն ապականարար է և ոչ բերէ պտուղ բարի: Յայսմանէ յայտ եղև, թէ մի՛ է Աստուած, և է՛ նա բնութեամբ բարի:

Վեցերորդ, զի գիրն Աստուածաշունչ վկայէ, թէ մի է Աստուած, ասելով[8]. «Լուր, Իսրայէլ, Տէր Աստուած քո Տէր մի՛ է» [Բ. Օրէնք. Զ. 4; Մար. ԺԲ. 29], և թէ՝ «Ծաներ-ուք և տեսէք[9], զի[10] ես եմ և ոչ գոյ այլ Աստուած՝ բաց յինէն» [Եսայ. ԽԳ. 10], և թէ՝ «Ես եմ[11] ալֆայ և օմեգա» [Յայտ. ԻԲ. 13], իբր թէ՝ ես եմ սկիզբն և աւարտ արարածոց:

Իսկ արդ, որովհետև ժամանեալ հասաք ի խորանս իմանալեաց, բե՛ր արտադրեսցուք զդաւանութիւն ուղղափառ քրիստոնէութեան հաւատոյս կարգեալս յառաքելոց և ի հոգելից հարանց[12], որ ի Նիկիայ գումարեցան և եդին զկանոն ուղղափառ հաւատոյ անջրելի և անդրդելի[13] հաստատութեամբ:

Եւ սկսցուք[14] ուստի պարտ է սկսանել, յորմէ ամենայնքս են սկզբնաւորեալ, այսինքն՝ ի մի՛ աստուածային բնութիւնն:

Հաւատամ և խոստովանիմ ըստ

---

1 ABCDF որ
2 A > հակառակ
3 E բաղկացաւ ի
4 E պարունակեալ
5 ADE զի
6 BCDF > թէ
7 F երթայ
8 B > ասելով
9 E > և տեսէք
10 F թէ
11 ABD > եմ
12 BF արանց, E հարց
13 AE անդրդուելի
14 F եկեսցուք

մարգարէական հոգէուսոյց վարդապետութեանն, որ ասէ. «Լուր, Իսրայէլ, Տէր Աստուած քո Տէր մի է» [Բ. Օրէնք. Զ. 4][1], որ ունի ի ներքոյ իւր[2] բանս այս եղծանել զհինգ մոլորութիւնն: Նախ, զհեթանոսաց բազմաստուածութիւնն, որ ասէ՝ մի է և ոչ բազում: Երկրորդ, զմոլորութիւն[3] մանիքեցւոցն, որ երկու սկզբունս ասեն՝ մինն չարի և միւսն բարւոյ: Զոր[4] ըմբերանէ զնոսա, թէ մի է և ոչ երկու, և Եսայի վկայէ ի սոյն միտս. «Ես եմ Աստուած, որ առնեմ[5] զլոյս և զխաւար. առնեմ զչար՝ իբր թէ զպատիժ մեղաւորաց[6] և հաստատեմ զխաղաղութիւն» [Եսայ. Խե. 7]: Երրորդ, զմոլորութիւն անթրոֆիտաց, այսինքն՝ մարդատնկաց, որ ասացին մի Աստուած մարմնեղէն՝ ի չորից տարերց մարդաձև: Ասէ մարգարէս, թէ մի է և ոչ ի չորից տարերց[7] մարդաձև, այլ մի է և պարզ մի, վասն որոյ Եսայի սաստելով ասէ. «Ու՞մ նմանեցուցէք զՏէր կամ որո՞վ նմանութեամբ պատկեր առնիցէք նմա» [Եսայ. Խ. 18]: Զորրորդ զմոլորութիւն եպիկուրեանցն, որ ասացին զԱստուած ոչ ունել գիտութիւն, որ նախախնամէ, այլ թէ՝ ա՛յլ է ստեղծօղն և ա՛յլ է նախախնամօղն: Վասն որոյ յանդիմանէ[8] մարգարէս, թէ՝ մի է Աստուած[9]: Եւ առաքեալն Պետրոս հանգունատիպ այսմ բարբառի, թէ մի է. «Զամենայն հոգս ձեր ի նա ընկեցէք, զի նա է, որ հոգայ զամենայն» [Ա. Պետ. Ե. 7]: Հինգերորդ, զմոլորութիւն այնոցիկ, որ ասացին ոչ է ամենակարող Աստուած, ասելով, թէ ոչ զամենայն, զոր կամի՝ կարէ առնել, զի բազում պատահարք ոչ ի կամաց նորա լինին: Զոր պատասխանէ մարգարէս, թէ[10] «Մի է կամեցողն և կարողն»: Եւ վկայէ հոգովն Դաւիթ, թէ՝ «Զամենայն, զոր ինչ կամեցաւ[11] և արար Տէր[12]» [Սաղ. ՃԼԴ. 6]: Վասն որոյ ի Նիկիական կանոնքն հաստատեցին ընդհանուր[13] ամենայնքրիստոնէից ուղղափառ դաւանութիւն, թէ՝ հաւատամք ի մի՛ Աստուած, յէութիւն և ի բնութիւն մի՛, ի Հայր ամենակալ՝ ոչ ծնեալ յումեքէ, այլ անծին, ոչ արարեալ յումեքէ, այլ[14] անեղ էութիւն և ոչ ինքնեղ, որպէս Արիստոտէլ զաշխարհս կարծեաց, այլ անեղ էութիւն՝ ոչ սկզբնաւորեալ, այլ անսկիզբն և մշտնջենաւոր Աստուած, որպէս ինքն առ Մովսէս ասաց, թէ՝ «Ես եմ, որ էն» [Ելից. Գ. 14]՝ ոչ սկսեալ և ոչ[15] դադարեալ, այլ միշտ է՛:

Հաւատամ զՈրդի ի բնութենէ Հօր, այսինքն՝ զԲանն Աստուած անժամանակաբար ծնեալ ի Հօրէ: Վասն որոյ Աստուածաբանն Գրի-

[1] Թեև հղվում են Հին Կտակարանի մարգարեական գրքերը, սակայն մեջբերումը երկրորդ Օրինաց գրքից է: Նույն դրույթը տես նաև Նոր Կտակարանում՝ [Մար. ԺԲ. 29]:
[2] E > իւր
[3] BE > զմոլորութիւն
[4] C զի
[5] E առաքեմ
[6] B մեղաց
[7] B > տարերց
[8] F ասէ
[9] BCDEF > Աստուած
[10] ABCDE > թէ
[11] E > կամեցաւ
[12] ABCDE > Տէր
[13] E հանուր
[14] F > այլ
[15] B > ոչ

գոր զգուշանայ, թէ[1] վասն այն, որ[2] ասեմ ծնեալ և սկսեալ ի Հօրէ, ժամանակի կարծիս ստանաս, և անսկզբնաբար ասեմ սկսեալ զնայ ի Հօրէ՝ զոյգ և հաւասար Աստուած ընդ Հօր՝ ամենակալ, ամենազօր, ամենիմաստ, համաբնութիւն, համիշխան, ստեղծող և Տէր բոլորից, ոչ սկսեալ վայրկէնիւ[3] և ոչ դադարեալ, այլ միշտ ընդ Հօր զոյգ Աստուած:

Հաւատամ և ի Սուրբ Հոգին յանեղն և ի կատարեալն, անժամանակ և անսկզբնաբար բխեալ ի Հօրէ, զոյգ և հաւասար Աստուած[4] ընդ Հօր և ընդ Որդոյ՝ համազօր, համաբնութիւն, համիշխան Աստուած և Տէր ամենակալ: Եւ այսմ վկայէ առաքեալն Յովհաննէս ի թուղթն կաթուղիկէից, թէ՝ «Երեք են, որ վկայեն յերկինս՝ Հայր և Բանն և Հոգին Սուրբ, և սոքա երեքեան մի են» [Ա. Յովհ. Ե. 8]: Ընդդէմ այսմ եղեն հինգ մոլորութիւնք: Առաջինն Սաբելի, որ ասաց, թէ որպէս մի է էութիւնն, մի է անձն, և երեք անունն մի անձինն կոչի՝ որպէս Սիմոն, Պետրոս, Կեփաս, այսպէս միոյ անձինն կոչի Հայր և Որդի և Հոգի Սուրբ, զոր Յովհաննէս յանդիմանէ[5], թէ «Երեք են, որ վկայեն յերկինս՝ Հայր և Բանն և Հոգին» [նույն տեղում]: Երկրորդ, մոլորութիւն է[6] Արիոսի, որ ուրանայ[7] զմիութիւն բնութեանն, թէպէտ զանձն ինքն խոստովանի, զոր յանդիմանէ[8] առաքեալս միւս հեգիւն, թէ՝ «Սոքա երեքեան մի են բնութեամբ», և ոչ որպէս Արիոս եհերձ[9] զՈրդի ոչ գոլ ի բնութենէ Հօր, այլ արարած և ստեղծուած, և զՀոգին՝ կրտսեր և պաշտօնատար, զոր ստէ զնա Փրկիչն ասելով, թէ՝ «Ես և Հայր իմ մի եմք» [Յովհ. Ժ. 30]: Երրորդ մոլորութիւն Եվնոմիոսին, որ դնէ զՈրդի աննման Հօր, զոր յանդիմանէ Պօղոս ի Կողոսացոցն, թէ՝ «Որդի, որ է պատկեր աներևութին Աստուծոյ» [Կող. Ա. 15]: Չորրորդ, մոլորութիւն է[10] Մակեդոնի, որ դնէ[11] զՀոգին ստեղծուած, զոր սուտ առնէ զնա[12] աւետարանիչն ասելով, թէ՝ Հոգին է Աստուած [Յովհ. Դ. 24], և Պետրոս, յորժամ սաստեաց Անանիայի, ասէ. «Ընդէ՞ր ելից սատանայ զսիրտ քո[13] ստել քեզ Հոգւոյն Սրբոյ, ոչ ստեցեր մարդոյ, այլ Աստուծոյ» [Գործ. Ե. 3-4], այլև առաքեալ ի Կորնթացոց առաջին թուղթն ասէ՝ Տէր է Հոգին [Բ. Կորն. Գ. 17]: Հինգերորդ, մոլորութիւն[14] Ֆռանկացն, որ ուրանան զաւետարանական վարդապետութիւնն, որ ասէ, թէ՝ «Հոգին ճշմարիտ[15] որ ի Հօրէ ելանէ» [Յովհ. ԺԵ. 26], և ասեն՝ գոլ զՀոգին իբր շաղկապ Հօր և Որդոյ՝ երկուցն բղխեալ: Զոր և ոչ եթէ միայն աւետարանական վարդապետու-

[1] CD > թէ
[2] CD այնորիկ, E որոյ, F այնր] այն որ
[3] BF ընդ վայրկենիւ
[4] F > Աստուած
[5] BEF վկայէ
[6] BF > մոլորութիւն է
[7] BF ուրացաւ
[8] F ասէ
[9] B հերձեաց Արիոս] Արիոս եհերձ
[10] BF > մոլորութիւն է
[11] BF ասաց
[12] E > զնա
[13] B > զսիրտ քո
[14] BF > մոլորութիւն
[15] E ճշմարտութեան

թեամբն յանդիմանին, որ ասէ, թէ[1] «Հոգին որ ի Հօրէ ելանէ» [նույն տեղում], այլև ի բնական բանականութենէ: Զի թէ Հայրն[2] կարող էր, որ կատարելապէս բղխէր զՀոգին, բղխումն Որդւոյ՝ աւելորդ էր և թէ ոչ կարաց կատարեալ[3] բղխել Հայր, այլ կարօտացաւ Որդւոյ, և երկուքն[4] ապա կարացին մի կատարեալ բղխել, որ յերկուց անկատարից յառաջ գայ՝ լինի և նա անկատար. որ է[5] իմացուածն նոցա անդունդք[6] հայհոյութեան ընդդէմ Երրորդութեանն: Որ և զայնպիսի ասացողսն նզովէ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի, վասն որոյ և ասի ի[7] կարգեալ դաւանութիւն հարցն, թէ՝ հաւատամք և ի Սուրբ Հոգին և մի Տէր Յիսուս Քրիստոս՝ Որդին Աստուծոյ ծնեալ յԱստուծոյ Հօրէ՝ լոյս ի լուսոյ, Աստուած՝ ճշմարիտ յԱստուծոյ. ճշմարիտ է՝ ծնեալ և ոչ արարեալ:

Հաւատամ զՀայր և զՈրդի և զՀոգին Սուրբ միապէս ստեղծող ամենայն գոյիցս երևելեաց և անեւրևութից, որպէս ասէ իմաստունն, թէ[8] «Աստուած իմաստութամբ հիմունս արկ[9] երկրի՝ պատրաստեաց զերկինս խորհրդով իւրով, հանճարով իւրով[10] զանդունդս[11] պատառեաց» [Առակ. Գ. 19-20]: «Խորհուրդ»՝ զԲանն ասէ և «հանճար»՝ զՀոգին, և թէ՝ Բանիւ Տեառն երկինք հաստատեցան և Հոգով բերանոյ նորա[12] ամենայն զօրութիւնք նորա[13]: Յայսմանէ հայտ է, թէ Հայր և Որդի և Սուրբ[14] Հոգին գոյգ և հաւասար են ստեղծողք՝ ոչ ոմն առաւել կամ[15] ոմն նուազ, որպէս և բան մարգարէականդ վկայէ: Ընդդէմ այսմ եղև[16] վեց մոլորութիւն: Առաջինն Դիմոկրիտեայ և Եպիկուրեայ և Քսիպոսի, որ ասացին, թէ ոչ նիւթ աշխարհիս, և ոչ բաղադրութիւն նորին իցէ[17] յԱստուծոյ, այլ թէ աշխարհս եղեալ է ի պատահմանէ, զորս յանդիմանեալ ասէ[18] Մովսէս ասելով, թէ՝ «Ի սկզբանէ արար Աստուած զերկինս և զերկիր» [Ծնն. Ա. 1], և թէ՝ «Աստուած իմաստութեամբ հիմունս արկ երկրի[19]» [Առակ. Գ. 19], իբր թէ հիմն[20] և կատարումն[21] աշխարհիս է Աստուած: Երկրորդ, մոլորութիւն է Պղատոնի և Անագսագորայ, որ ասացին[22] զաշխարհս եղեալ յԱստուծոյ, բայց ոչ[23] յոչընչէ, այլ թէ[24] կայր ասեն նիւթն յաւէտակից Աստուծոյ[25] և ի նմանէ իբր բրուտ ի կաւոյ[26] ստեղծ[27] յայնմ

1 BCD > թէ
2 C > Հայրն
3 E կատարելապէս
4 E երկոքեանն
5 ABE > է
6 AD անդուք, E յանդուքն
7 AE > ի
8 E > թէ
9 E էարկ
10 ACDE > իւրով
11 AC զանդունս
12 B > նորա
13 BF > նորա
14 ACDE > սուրբ
15 E և ոչ
16 BCDF եղեն
17 F > իցէ
18 ABE ստէ
19 BF > երկրի
20 BF սկիզբն
21 D կատարման
22 F ասաց
23 D > ոչ
24 CD > թէ
25 ACDE > Աստուծոյ
26 E կաւէ
27 E եստեղծ

նիւթոյ զաշխարհս, զոր ասէ[1] մարգարէն Դաւիթ, թէ՝ «Ասաց՝ և եղեն, ինքն հրամայեաց և հաստատեցան» [Սաղ. ԼԲ. 9]: Երրորդ, մոլորութիւն Արիստոտէլի, որ ասաց ոչ եղեալ զաշխարհս յԱստուծոյ, այլ յաւիտենից, ընդդէմ այսմ ասէ Աստուած մարգարէին, թէ «Ուր՞ էիր մինչ ես հիմունս արկանէի երկրի[2]» [Յոբ. ԼԸ. 4]: Չորրորդ, մոլորութիւն[3] մանիքեցւոցն, որ եդին զԱստուած գոյ արարիչ անեւութից, այլ ասացին[4] զերևելիսս եղեալ ի սատանայէ, ընդդէմ այսմ ասէ[5] առաքեալն[6] Պօղոս յԵբրայեցոցն. «Հաւատով իմանամք եղեալ զյաւիտեանս Բանիւն Աստուծոյ յանեւութից զերևելիքս» [Եբր. ԺԱ. 3]: Հինգերորդ, մոլորութիւն[7] Սիմոնի մոգի և Մոնանդրի՝ նորին աշակերտի և այլ բազում հերետիկոսաց, որք զստեղծումն աշխարհիս՝ ոչ յԱստուծոյ ասացին, այլ ի հրեշտակաց եղեալ, ընդդէմ այսմ ասէ Պօղոս ի Գործս առաքելոցն. «Աստուած է, որ արար զաշխարհս և զամենայն, որ ի նմա իցեն, և նա միայն է Տէր երկնի և երկրի» [Գործ. ԺԷ. 24]: Վեցերորդն է մոլորութիւն այնոցիկ, որ ասացին զԱստուած ոչ ինքեամբ կառավարեալ զաշխարհս, այլ պետութեամբ ոմամբք ընդ ինքեամբ ստորանկելովք, ընդդէմ այսմ ասէ Յոբ. «Զով ոք այլ կացոյց ի վերայ երկրի, կամ զո՞վ եդ ի վերայ տիեզերաց՝ զորս կազմեաց» [Յոբ. ԼԴ. 13]: Ընդդէմ ամենեցուն սորա ասացին սուրբ հարքն, որ ի Նիկիայ:

Հաւատամ ի թողութիւն մեղաց, ըստ մարգարէին ասելոյ, թէ՝ «Պատմեցից ինձէն զմեղս իմ և դու թողցէս զամբարշտութիւնս[8] մեղաց իմոց[9]» [Սաղ. ԼԱ. 5]: Ընդդէմ այսմ եղեն մոլորութիւնք չորք: Առաջինն Կերինթոսի, որ ասաց, թէ չնորհքն Քրիստոսի միայն ոչ կարէ արդարացուցանել[10] թէ ոչ թլփատին և պահեն զօրէնսն, զորս պատասխանէ Պօղոս ի Հռոմայեցոց թղթին[11], թէ՝ «Համարիմք հաւատով արդարանալ զմարդն առանց գործոց օրինացն» [Հռոմ. Գ. 28]: Երկրորդ, մոլորութիւն է Պելիգիանոսացն[12], որ ուրանան զսկզբնական մեղսն գոլ[13] ի տղայսն, զոր սուտ առնէ Պօղոս ի Հռոմայեցոց թղթին, թէ՝ «Միով մարդով մտին մեղք յաշխարհ» [Հռոմ. Ե. 12] և թէ՝ «Անօրէնութեամբ յղացաւ և ի մեղս ծնաւ զիս մայր[14] իմ[15]» [Սաղ. Ծ. 7]: Երրորդ, մոլորութիւն է Որոգինէսի, որ ասաց, թէ՝ ոգիքն[16] միահամուռ ստեղծան յերկնային քաղաքն և ըստ մեղաց աքսորեալք բանտին ի մարմինս մարդաձև, չարչարեալ անդանօր և ելեալ մտանեն յանասունս և անդի ի թուփս՝ և այսպիսի փոփոխմամբ

[1] ABCDF ստէ
[2] BF > երկրի
[3] BF > մոլորութիւն
[4] E > ասացին
[5] E > ասէ
[6] BF > առաքեալն
[7] BF > մոլորութիւն
[8] D զամենայն
[9] B > մեղաց իմոց
[10] AB արդար ցուցանել
[11] B > թղթին
[12] BCD պելեգիանոսացն
[13] F մեղքն լինել] մեղսն գոլ
[14] B > զիս մայր
[15] ABC > իմ
[16] D հոգիքն

մաքրին, զոր միահամուռ ստեղծանելոյն պատասխանէ Դաւիթ, թէ՝ «Ո ստեղծ առանձին զսիրտս նոցա, ի միտ առնուլ զամենայն գործս նոցա[1]» [Սաղ. ԼԲ. 15], և փոփոխմամբ քաւելոյն ասէ Եսայի. «Ասա դու նախ զանօրենութիւնս քո, զի արդարասցիս» [Եսայ. ԽԳ. 26]: Չորրորդ, մոլորութիւն այնոցիկ, որ ասացին, թէ որք զշնորհս[2] աւազանին ընկալան՝ ոչ կարեն մեղանչել, զոր բացահայտէ Պետրոս, թէ կարէն մեղանչել և է ըստ մեղացն[3] թողութիւն. ի հարցանելն Պետրոսի զՏէրն, թէ՝ «Եղբայրն իմ մեղիցէ՝ քանի՞ցս անգամ թողից»՝ այս զկար մեղանչելոյն ցուցանէ, իսկ զպատասխանին Տեառն, թէ՝ «Յեթանասնեկին եւթն» [Մատ. ԺԸ. 21-22]՝ զթողութիւն մեղացն: Յաղագս որոյ կարգի ի հաւատամք հարցն, թէ հաւատամք ի մի մկրտութիւն և ի թողութիւն մեղաց:

Հաւատամ ի յարութիւն մեռելոց, զորս հրամայէ Քրիստոս, թէ՝ «Ամենեքեան, որ ի գերեզմանս կայցեն՝ լուիցեն ձայնի Որդոյն Աստուծոյ և եկեսցեն արտաքս» [Յովհ. Ե. 28-29]: Ընդդէմ այսմ եղեն հինգ մոլորութիւնք: Առաջինն Վաղենդիանոսի[4], որ ունէր սերմ[5] ի սադուկեցոցն, որ բնաւ ուրացաւ զյարութիւն մարմնոց, որում պատասխանէ Պօղոս ի Կորնթացոց առաջին թուղթն[6]. «Ապա եթէ Քրիստոս քարոզի յարուցեալ ի մեռելոց՝ զիա՞րդ ասեն ոմանք ի ձէնջ, թէ յարութիւն մեռելոց[7] չիք» [Ա. Կորն. ԺԵ. 12]: Երկրորդ մոլորութիւնն է Հիմենի և Ֆիլէտի, որք մոլորեցան ի ճշմարտութենէն և վրիպեալ ասացին արդէն իսկ եղեալ զյարութիւն կամ ոչ հաւատացին մարմնաւոր յարութիւն[8], այլ հոգևորական, կամ ոչ ասէին զայլ ոք յառնել, բայց[9] միայն զայնոսիկ, որ ընդ Քրիստոսի յարեան: Երրորդ, մոլորութիւնն է, ոյք ասեն լինել[10] զհանդերձեալ յարութիւն, բայց ոչ[11] նոյնում[12] մարմնոց, այլ թէ հոգիքն առցեն[13] երկնային մարմին, ընդդէմ որոց[14] ասէ Պօղոս յերկրորդ թուղթն[15] Կորնթացոցն. «Պարտ է ապականացուիս այսմիկ[16] զգենուլ զանապականութիւն և մահկանացուիս[17] զանմահութիւն» [Ա. Կորն. ԺԵ. 53]: Չորրորդ, մոլորութիւն է Եվտիքոսի Կոստանդնուպօլսի[18] եպիսկոպոսի, որ ասաց, թէ մարմինք մեր լինելոց են ի յարութեանն որպէս օդոյ կամ հողմոյ նմանք, զոր Տէրն յանդիմանէ, թէ՝ «Շօշափեցէք զիս և տեսէք, զի ոգի մարմին և ոսկերս ոչ ունի, որպէս

---

[1] BF > ի միտ առնուլ զամենայն գործս նոցա
[2] D զշնորհ քո
[3] BC մեղանացն
[4] B Վաղադիանոսի
[5] B > սերմ
[6] F թղթին
[7] B > մեռելոց
[8] F յարութեան
[9] D սուրբ բայց
[10] E > լինել
[11] E > ոչ
[12] B նոյն
[13] E առնիցեն
[14] F այսմ, B > որոց
[15] ACDE > թուղթն
[16] BF այսուիկ
[17] ACDE > զանապականութիւն և մահկանացուիս
[18] CDE Կոստանդինուպօլսի

զիս տեսանէք, զի ունիմ» [Ղուկ. ԻԴ. 39], և առաքեալն[1], թէ՝ «Նորոգեսցէ զմարմին խոնարհութեան մերոյ՝ ըստ նմանութեան մարմնոյ փառաց իւրոց» [Փիլիպ. Գ. 21]: Հինգերորդ, մոլորութիւնն է Կերինթոսի, որ հազար ամ յետ յարութեանն երկրաւոր արքայութիւն առասպելաբանէ, յորս մարդիկ որովայնի և գիջութեան մարմնական հեշտութեան պարապին, ընդդէմ այսմ ասէ Մատթեոս յԱւետարանն[2]. «Ի յարութեանն ոչ արք կանայս առնեն, և ոչ կանայք արանց լինին, այլ են իբրև զհրեշտակս ի յերկինս[3]» [Մատ. ԻԲ. 30]: Ընդդէմ այսոցիկ ամենեցուն ասի ի դաւանութիւն հարցն, թէ՝ հաւատամք ի յարութիւն մեռելոց:

Հաւատամ ի դատաստանն յաւիտենական, որպէս առաքեալն Պօղոս յերկրորդ Կորնթացիս[4] ասէ[5], թէ «Մեզ ամենեցուն յանդիման լինել կայ[6] առաջի ատենին Քրիստոսի, զի ընկալցի իւրաքանչիւր ոք[7] իւրով մարմնով, զոր ինչ գործեաց[8] յառաջն[9] եթէ բարի և եթէ չար» [Բ. Կորն. Ե. 10], և սաղմոսէ Դաւիթ, թէ «Դու հատուցանես իւրաքանչիւր ըստ գործս[10]» [Սաղ. ԿԱ. 13]: Ընդդէմ այսմ եղեն երեք մոլորութիւն: Նախ, այնոցիկ, որ ասացին ի յարութեանն հաւասար գոլ զպարգևս, զոր սուտ առնէ զայսպիսի մտածութիւնս Պօղոս յառաջին Կորնթացիս ասելով, թէ՝ «Որպէս աստղ քան զաստղ առաւել է փառօք» [Ա. Կորն. ԺԵ. 41], այսպէս է լինելոց ի յարութեանն: Երկրորդ մոլորութիւն[11] է այնոցիկ, որ ասացին ոչ նոյն մարմնովս յառնել ի դատաստան, զոր պատասխանէ առաքեալն յերկրորդ Կորնթացիս[12], թէ «Մեզ ամենեցուն յանդիման լինել կայ առաջի ատենին Քրիստոսի, զի իւրաքանչիւր ոք[13] իւրով մարմնովն ընկալցի զվճիռ դատաստանին» [Բ. Կորն. Ե. 10]: Երրորդ, մոլորութիւն է այնոցիկ, որ ասեն, թէ վաղվաղակի յետ ելանելոյ հոգւոյն ի մարմնոյն առնուն իւրաքանչիւր զփոխարէն գործոց իւրոց թէ զպատիժ և թէ զպսակ՝ որպէս ասեն ազգն ֆռանկաց, զորս յանդիմանէ Քրիստոս յԱւետարանին, թէ «Յորժամ դայցէ Որդի մարդոյ փառօք Հօր իւրոյ և հրեշտակօք սրբովք[14], յայնժամ բաժանեսցէ զօդիսն յայծեաց» [Մատ. ԻԵ. 31-32]:

Հաւատոյ, ըստ կարգելոյ հայրապետացն, չորեքտասան են աստիճանք՝ եւթն ի յերրորդութիւնն է, իսկ եւթն՝ ի մարդեղութիւն Բանին[15]: Բայց զեւթն, որ առ Սուրբ[16] Երրորդութիւնն էր՝ ասացաք: Բե՛ր այժմ ասասցուք և վասն եւթեանն՝ որ ի մարդեղութիւն Բանին:

---

[1] BF Պօղոս
[2] BF Քրիստոս] Մատթեոս յԱւետարանն
[3] BF > ի յերկինս
[4] BF > յերկրորդ Կորնթացիս
[5] C յառաջ] յերկրորդ Կորնթացիս ասէ:
[6] B > կայ
[7] ACDE > ոք
[8] E > զոր ինչ գործեաց
[9] ACDE > յառաջն
[10] F>ԿասաղմոսէԴաւիթթէդուհատուցանես իւրաքանչիւր ըստ գործս
[11] ABCDE > մոլորութիւն
[12] BCF > յերկրորդ Կորնթացիս
[13] ABCDE > ոք
[14] BF > Հօր իւրոյ և հրեշտակօք սրբովք
[15] D > եւթն ի յերրորդութիւնն է, իսկ եւթն՝ ի մարդեղութիւն բանին
[16] ACDE > Սուրբ

Որոց առաջինն է կարգեալ ի դավանութիւն հարցն, թէ իջեալ յերկնից մարմնացաւ, ծնաւ[1] կատարելապէս. և այսմ վկայէ Եսայի, թէ՝ «Ահայ կոյսն յղասցի և ծնցի որդի, և կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ» [Եսայ. Է. 14], և հրեշտակն առ կոյսն ասաց[2]. «Ահա յղասցէս և ծնցես որդի և կոչեսցեն զանուն նորա Յիսուս» [Ղուկ. Ա. 31]: Ընդդէմ այսմ եղեն բազում մոլորութիւնք: Որոց առաջինն է, որ ասացին՝ սոսկ մարդ զոլ զՔրիստոս ի կուսէն սկզբնաւորեալ, զորս յանդիմանէ Պօղոս ի Հռոմայեցոցն, թէ՝ «Յորոց Քրիստոս ըստ մարմնոյ որ է ի վերայ ամենեցուն Աստուած աւրհնեալ յաւիտեանս» [Հռոմ. Թ. 5]: Իսկ երկրորդ միտք, որ ասացին, թէ Բանն ընդ մարմնոյն սկզբնաւորեցաւ ի կուսէն, և այսմ պատասխանէ Յովհաննէս աւետարանիչն[3], թէ «Ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր առ Աստուած, և Աստուած էր Բանն» [Հովհ. Ա. 1]: Երկրորդ, մոլորութիւն է Մանիքոսի, որ ասաց, թէ Քրիստոս ոչ ունէր մարմին ճշմարիտ, այլ առ աչօք, զորս յանդիմանէ Տէրն, թէ «Ոգի մարմին և ոսկերս ոչ ունի, որպէս զիս տեսանէք, զի ունիմ» [Ղուկ. ԻԴ. 39] և թէ՝ «Շօշափեցէք զիս և տեսէք, զի[4] ոգին ոչ չօշափի» [նույն տեղում]: Երրորդ, մոլորութիւն է Վաղէնտի, որ ասաց, թէ՝ Քրիստոս ի յերկնից եբեր զմարմինն, և ոչինչ էառ ի կուսէն, այլ իբրև ջուր ընդ խողովակ էանց ընդ կոյսն, ընդդէմ այսմ պատասխանէ Պօղոս ի Գաղատացոց թուղթն, թէ[5] «Առաքեաց Աստուած[6] զՈրդի իւր, որ եղև ի կնոջէ» [Գաղ. Դ. 4]: Զորրորդ, մոլորութիւն է Ապողինարի, որ ասաց, հոգի ունել Քրիստոսի, այլ միտս ոչ ունել[7], այլ ի տեղի մտաց Բանն Աստուած եղև ասէ, զորս յանդիմանէ Քրիստոս, թէ «Ընդէ՞ր խնդրէք զիս սպանանել զմարդ, որ ճշմարտութիւն խօսեցայ ընդ[8] ձեզ» [Յովհ. Ը. 40]: Հինգերորդ, մոլորութիւնն Եւտիքոսի, որ ասաց չփոթեալ զաստուածութիւնն և զմարդկութիւնն, և չփոթմամբ կոչէր մի բնութիւն յերկուց չփոթմանէ, զորս ի դաւանութիւն սուրբ հարցն քարոզեցին՝ զՏէր մեր Յիսուս Քրիստոս Աստուած կատարեալ և զնոյն մարդ կատարեալ անշփոթ միաւորութեամբ, անայլայլելի, անփոփոխելի Բանն մարմին եղեալ: Վեցերորդ, մոլորութիւն է Նեստորի, որ ասաց՝ երկու բնութիւն, երկու կամք և երկու ներգործութիւն՝ բնակութեամբ Աստուած ի մարմնի և ոչ միաւորութեամբ, և զսուրբ[9] կոյսն մարդածին և ոչ աստուածածին, զորս յանդիմանէ հրեշտակն ասելով, թէ «Որ ծնանելոցն ի քէն սուրբ է և Որդի Աստուծոյ կոչեսցի» [Ղուկ. Ա. 35]: Եւ այսմ հերձուածոյ հետևեցան ազգն Ֆռանգաց և Հոռոմոց, զոր Կիւրեղ Աղեքսանդրացի՝

[1] CD > ծնաւ
[2] ABCEF > ասաց
[3] BF > աւետարանիչն
[4] BF և

[5] B > թուղթն թէ
[6] F > Աստուած
[7] F > այլ միտս ոչ ունել
[8] ACE > ընդ
[9] ACD > զսուրբ

քաջ ախոյեանն ուղղափառ հաւատոյ, երկու հարիւր եպիսկոպոսօք և հայրապետօք ժողովեալ յԵփեսոս նզովեցին զՆեստոր և հալածեցին յաթոռոյ և յիշխանութենէ քահանայական կարգէ և ըստ նախակարգեալ սուրբ հօրն Աթանասի դաւանութեանն քարոզեցին ուղղափառ դաւանութիւն եկեղեցոյ սրբոյ, թէ մի է ընութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ: Եւթներորդ, մոլորութիւն է Կապակրատիոսի, որ ասաց՝ ի Յովսեփայ և ի Մարիամայ ծնեալ զՔրիստոս, զորս յանդիմանէ Աւետարանն Մատթեոսի, որ ասէ[1], թէ[2] «Նախքան զգալն առ միմեանս գտաւ յղացեալ ի Հոգոյն Սրբոյ» [Մատ. Ա. 18]: Զոր և ի սրբոց հարցն դաւանեցաւ, թէ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան՝ իջեալ յերկնից մարմնացաւ, մարդացաւ, յղացեալ ի Հոգոյն Սրբոյ՝ Բանն մարդ եղեալ, ծնաւ ի կուսէն:

Հաւատամ[3] զՔրիստոս չարչարեալ, այսինքն[4] խաչեալ և թաղեալ, որպէս ինքն Տէրն[5] յառաջագոյն վկայեաց, թէ՝ «Ահաւասիկ ելանեմք յԵրուսաղէմ, և Որդի մարդոյ մատնեսցի քահանայապետիցն և դպրացն[6] և դատապարտեսցեն զնա ի մահ և մատնեսցեն զնա հեթանոսաց՝ այպանել, հարկանել և ի խաչ հանել» [Մատ. Ի. 18-19]: Ընդդէմ այսմ է մոլորութիւն մանիքեցոցն, որք զմարմինն Քրիստոսի առ աչօք ճշգրտէին և այսպէս զչարչարանքն Քրիստոսի ոչ ճշմարտութեամբ, այլ առ աչօք գոլ ասէին, զոր և պատասխանէ Եսայի, թէ՝ «Արդարև չարչարեցաւ և[7] նա զհիւանդութիւնս[8] մեր եբարձ և իբրև զոչխար ի սպանդ վարեցաւ» [Եսայ. ԾԳ. 4-7]: Երկրորդ, մոլորութիւն է Գալիանոսի, որ երկնային և անապական ասաց գոլ զմարմինն և ոչ առեալ մարմին չարչարելի, զոր պատասխանէ[9] Պետրոս ի թուղթն[10] Կաթուղիկէից, թէ՝ «Քրիստոսի չարչարիլն մարմնով՝ վասն մեր[11]» [Ա. Պետ. Դ. 1], և դարձեալ, թէ՝ «Քրիստոս մի անգամ վասն մեղաց մերոց մեռաւ» [Ա. Պետ. Գ. 18]: Վասն որոյ ի դաւանութիւն սուրբ հարցն ասի՝ չարչարեալ, խաչեալ, թաղեալ:

Հաւատամ զՀոգին Քրիստոսի յետ բաժանելոյ ի մարմնոյն՝ իջեալ ի դժոխս, ըստ այնմ, որ ասէ Պօղոս յԵփեսացոց, թէ[12] «իջեալ ի ստորին կողմ երկրի» [Եփես. Դ. 9]: Ընդդէմ այսմ է հերձուած, որ ասացին ոչ իջանել հոգոյն Քրիստոսի[13] ի դժոխս, զոր պատասխանէ Պետրոս, թէ ոգի[14] նորա գնաց ի դժոխս, բայց «Ոչ թողաւ անդ մնալ, որպէս և մարմին նորա[15] ոչ ետես զապականութիւն» [Գործ. Բ. 31], թէպէտ եղաւ ի գերեզմանի: Իսկ հոգին

[1] BF > որ ասէ
[2] D > թէ
[3] CD երկրորդ հաւատամ
[4] E > այսինքն
[5] E > Տէրն
[6] B > և դպրացն
[7] BCDEF > չարչարեցաւ և
[8] B զհակառակութիւնս
[9] B յանդիմանէ
[10] B > թուղթն
[11] F > վասն մեր
[12] F թղթին թէ
[13] E սրբոյ
[14] E հոգի
[15] F > նորա

Քրիստոսի իջաւ[1] ի դժոխս՝ հանեալ զկապեալս ի բանտէն, որպէս ասէ Եսայի, թէ՝ «Որք ի կապանսդ էք՝ ելէք, և որք ի խաւարին էք՝ յայտնեցարուք» [Եսայ. ԽԹ. 9]:

Հաւատամ Քրիստոս յերրորդ յաւուր յարուցեալ ի մեռելոց, որպէս ասէ Մատթէոս, թէ՝ «Յերրորդ աւուր յարեաւ» [Մատ. ԻԸ. 6-7]: Ընդդէմ այս եղև երկու մոլորութիւն: Նախ, Կերինթոսի, որ ասաց, ոչ յարուցեալ զՔրիստոս, այլ[2] յառնել[3] ասէ յետին ժամանակս, առ որս պատասխանէ {Պօղոս ի Կորնթացոցն, թէ՝ «Յարեաւ յաւուր երրորդի ըստ գրոց» [Ա. Կորն. ԺԵ. 4]: Երկրորդ, մոլորութիւն է Որոգինի[4], որ ասաց, թէ դարձեալ[5] չարչարելոց է Քրիստոս վասն մարդկան փրկութեան, զոր ի Հռոմայեցոց թղթին յանդիմանէ Պօղոս}[6], թէ[7] «Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց, այլ ոչ ևս[8] մեռանի, և մահ նմա ոչ ևս տիրէ» [Հռոմ. Զ. 9]: Որ[9] և ի հարցն դաւանութիւնն կարգեցաւ, թէ յարեաւ յաւուր երրորդի՝ ըստ նախակարգելոյ[10] Աւետարանին Մատթէոսի, թէ՝ «Յարեաւ յաւուր երրորդի» [Մատ. ԻԸ. 6-7], և ըստ հրեշտակին[11], թէ «Զխաչ ելէալն[12] խնդրէք՝ չէ աստ, այլ յարեաւ» [Մատ. ԻԸ. 5]:

Հաւատամ զնոյն ինքն Քրիստոս, զի համբարձաւ յերկինս և նստաւ ընդ աջմէ Հօր, որում ոչ հետևեալ այսմ[13] ազգն Ֆռանկաց, այլ ասեն գոլ զՔրիստոս ի հրեղէն երկինն և ոչ ընդ աջմէ Հօր: Իսկ փելիկիանոսքն ասեն՝ մերկացաւ զմարմինն և եդ յերկին, բայց Ֆռանկք ասեն՝ ոչ մերկացեալ զմարմինն, այլ՝ ոչ է ընդ աջմէ Հօր, զորս յանդիմանէ Աւետարանն Ղուկասու, որ ասէ՝ «Համբարձաւ յերկինս և նստաւ ընդ աջմէ Հօր» [Մատ. ԺԶ. 19][14]: Եւ ի դաւանութիւն սուրբ հարցն, որ ի Նիկիայ, այնպէս կարգեցաւ, թէ համբարձեալ յերկինս նստաւ[15] ընդ աջմէ Հօր[16]:

Հաւատամ ի միւս անգամ գալուստն Քրիստոսի, ըստ աւետարանական[17] վարդապետութեանն, որ ասէ՝ «Յորժամ եկեսցէ Որդի մարդոյ փառօք Հօր իւրոյ և ամենայն հրեշտակք ընդ նմա, յայնժամ նստցի յաթոռ փառաց իւրոց[18] դատել զամենայն ազգս» [Մատ.

---

[1] E էջ
[2] B > այլ
[3] B յառնէ, F > այլ յառնել
[4] B Որոգինէին
[5] B > դարձեալ
[6] F > {ի Կորնթացոցն, թէ՝ յարեաւ յաւուր երրորդի ըստ գրոց: Երկրորդ, մոլորութիւն է Որոգինի, որ ասաց, թէ դարձեալ չարչարելոց է Քրիստոս վասն մարդկան փրկութեան, զոր ի Հռոմայեցոց թղթին յանդիմանէ Պօղոս}
[7] BF > թէ
[8] BF > ևս
[9] E որպէս
[10] E նախակարգեալ
[11] F հրեշտակապէտին
[12] DF խաչեալն] զխաչ ելէալն
[13] E > այսմ
[14] **Թեև հղվում է Ղուկասի Ավետարանը, սակայն մեջբերումը Մատթեոսի Ավետարանից է:**
[15] E և նստեալ
[16] F > զորս յանդիմանէ Աւետարանն Ղուկասու, որ ասէ՝ «Համբարձաւ յերկինս և նստաւ ընդ աջմէ Հօր»: Եւ ի դաւանութիւն սուրբ հարցն, որ ի Նիկիայ, այնպէս կարգեցաւ, թէ համբարձեալ յերկինս նստաւ ընդ աջմէ
[17] F Աւետարանին
[18] B > իւրոց

Իե. 31], և Պետրոս ասէ ի Գործսն. «Սա է սահմանեալ յԱստուծոյ դատաւոր կենդանեաց և մեռելոց» [Գործ. Ժ. 42], այսինքն՝ հատուցանող չարեաց և բարեաց, կամ թէ արդեն մեռելոցն և այնոցիկ, որ ի գալստեանն Քրիստոսի կենդանիք գտանիցին: Ընդդէմ այսմ մոլորեցան այնոքիկ, զոր ասէ Պետրոս յերկրորդ թուղթն Կաթուղիկէից, թէ[1] «Յաւուրս յետինս եկեսցեն խաբողք ոմանք այպանողք, որք ըստ իւեանց չար[2] ցանկութեանցն շրջելով և ասելով ու՞ր են այժմու խոստմունք կամ գալուստ նորա[3]» [Բ. Պետ. Գ. 3]: Որոց պատասխանէ Յոբ, թէ՝ «Փախերուք յերեսաց սրոյն, քանզի վրեժխնդիր անօրէնութեան սուր՝ ծաներուք դատաստան գոլ», և Դաւիթ ասէ. «Աստուած մեր յայտնապէս եկեսցէ» [Սաղ. ԽԹ. 3], և առաքեալն[4], թէ՝ «Մեզ ամենեցուն յանդիման լինել կայ առաջի ատենին Քրիստոսի, զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնովն[5], զոր ինչ գործեաց[6] եթէ բարի և եթէ չար» [Բ. Կորն. Ե. 10]:

Իսկ եւթներորդ աստիճան զառաջինն՝ որ է յղութիւնն, յերկու տրամատեն. նախ՝ յղանալն, որ ասէ, թէ որ ի նմայն[7] ծնեալ է՝ ի Հոգոյն Սրբոյ է, երկրորդ, զկուսութեամբ անախտ[8] ծնունդն, որով լինի եւթն աստիճան: Այսպէս և զեւթներորդ աստիճան՝ որ յերրորդութիւնն է, զառաջինն՝ ի մի բնութիւն հաւատալն, և երկրորդն՝ զՀայրն, որ լինի եւթն: Իսկ թէ[9] զառաջինն՝ որ յերրորդութիւնն, ոչ տրամատէս ի մի բնութիւնն և ի Հայր՝ վեց լինի, իսկ թէ տրամատէս՝ լինի եւթն. ըստ առաքելոց երգութեան՝ երկոտասան, իսկ ըստ հայրապետացն՝ չորեքտասան:

Արդ, ի ձեռնտուութենէ[10] Հոգւոյն և ի նպաստութենէ աղօթից ձերոց, ըստ կարգելոց առաքելական և հայրապետական ուղղափառ դաւանութեան, պարզեալ յամենայն հերձուածողական աղանդից, սրբեալ և մաքրեալ՝ արտադրեցաք[11] զդաւանութիւն հաւատոյ: Այժմ կայ մեզ առաջի բուռն հարկանել զբարձրաբարբառ[12] քարոզութեանց աւետարանական վարդապետութենէն, որ ի վերուստ որոտալով ասէ. «Ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր առ Աստուած, և Աստուած էր Բանն»:

Բե՛ր նախ ի ձեռնարկ[13] մեկնութեան աւետարանական և աստուածաբանական բանիս տրամատութիւն և կարգս գլխոց յարդարեսցուք[14]՝ առ ի դիւրագոյն մեզ լինել յընթացս բանի և հեշտալուր, սիրող և լսողունկան: Եւ կարգեսցուք՝ նախ, թէ զի՞նչ է սկիզբն և ի քանի՞ս բաժանի: Երկրորդ, զի՞նչ

[1] BF > յերկրորդ թուղթն Կաթուղիկէից, թէ
[2] ABCEF > չար
[3] B աւետիքն, F աւետիք գալստեանն] այժմու խոստմունք կամ գալուստ նորա
[4] BF Պօղոս
[5] B > իւրով մարմնովն
[6] E > զոր ինչ գործեաց
[7] E մարմնոյն
[8] BE անխախտ
[9] E > թէ
[10] C ձեռնտութեանէ
[11] A արտադրեսցուք
[12] CD զբարձրաբար
[13] E ձեռնարկութիւն, F ձեռնարկեսցուք
[14] A յարադրեսցուք, B յարմարեսցուք, D արտադրեսցուք

նշանակէ որ ասէ թէ՝ «էր Բանն»: Երրորդ, զի «բան» անունս հասարակ է, գիտելի է[1] մեզ, թէ զի՞նչ է հասարակ անուն և ի քանի՞ս բաժանի և յաղագս որո՞յ է մեր բանս: Չորրորդ, ի ներածութիւն Աստուծոյ Բանին, առնել քննութիւն նախ մարդկային բանին[2] թէ բնութեամբ է, թէ՞ շարադրութեամբ: Հինգերորդ, գիտելի է[3] մեզ, թէ բան մարդոյ ի հարկաւորացն է, թէ՞ ի հնարաւորացն: Վեցերորդ, թէ ի քանի՞ս բաժանի բան մարդոյ: Եւթներորդ, թէ քանի՞ են եղանակ բացորոշութեան, ստորասութեան և բացասութեան: Ութերորդ, թէ քանի՞ են եղանակ բաժանման և ըստ որու՞մ եղանակի լինի բաժանումն բանին Աստուծոյ և մարդոյ: Իններորդ, գիտել զորքանութիւն մասանց բանին: Տասներորդ, սահմանել զբան մարդոյ: Մետասաներորդ, խօսել յաղագս Աստուծոյ Բանին, որ ասէ, թէ՝ «էր Բանն, և Բանն էր առ Աստուած, և Աստուած էր Բանն»: Երկոտասաներորդ, տեսանել, թէ ի՞ւ զանազանի բան մարդոյ ի Բանէն Աստուծոյ:

Բեր եկեսցուք[4] յառաջին գլուխն և ասասցուք[5], թէ[6] զի՞նչ է սկիզբն և ի քանի՞ս բաժանի:

Սկիզբն է հիմն և պատճառ, յորմէ ամենայն լինելութիւնքն սկսանին զգոլն իւրեանց: Իսկ թէ ի քանի՞ս բաժանի՝ բե՛ր[7] ասասցուք: Նախ, ասի սկիզբն և պատճառ որպէս Աստուած Հայր՝ Որդոյ ծննդեամբ և Հոգոյն բխմամբ՝ անժամանակապէս և անհատաբար, ի Հօրէ և առ Հայր, ըստ այնմ, թէ՝ «Ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր առ Աստուած...»: Երկրորդ, ասի սկիզբն ստեղծմամբ կամաւորաբար, որպէս Աստուած՝ աշխարհի, ըստ այնմ, թէ՝ «Զամենայն, զոր ինչ կամեցաւ և արար Տէր[8]» [Սաղ. ՃԼԴ. 6]: Երրորդ, ասի սկիզբն, որպէս ամենայն սեռ տեսակի իւրում, ըստ այնմ, թէ[9] «Ես կենդանի եմ, և դուք կենդանի լինելոց էք» [Յովհ. ԺԴ. 19]: Չորրորդ, ասի սկիզբն յաղագս նիւթական բնութեանս, որպէս ամենայն ծնօղ՝ ծննդեանն իւրոյ, որպէս գաւառ կամ որպէս հայր. գաւառ՝ որպէս Յուդայ Իսկարիովտացի, և ի ծնողէն՝ որպէս թէ Սիմոն՝ որդի Յունանու: Հինգերորդ, ասի սկիզբն եղեալ հիմն և արմատ գործոյ, որպէս ի բնութենէ[10] սիրտն եղեալ է սկիզբն ամենայն կենդանոյ: Վեցերորդ, ասի սկիզբն ի յարուեստս գործական, որպէս փայտ՝ հիւսան և երկաթ՝ դարբնի և այլ ամենայն սոյնպիսիք յիւրաքանչիւր արուեստս: Եւթներորդ, ասի սկիզբն հիմն եղական, որպէս չորս տարերքս ամենայն մարմնոց: Ութերորդ, ասի սկիզբն վայրկեան ժամանակի, որով ամենայն ժամանակն սկսանի: Իններորդ, ասի սկիզբն խորհրդական և անձ-

[1] ABCDE գիտել] գիտելի է
[2] B > բանին
[3] ABCDE գիտել] գիտելի է
[4] E նախ տեսցուք
[5] E > և ասասցուք
[6] BF > թէ
[7] E > բեր
[8] ACDE > Տէր
[9] B > թէ
[10] C բնութեանն է

նական, որպէս թէ արդարութեան ճանապարհին է սկիզբն զգուշութիւն և սկիզբն իմաստութեան՝ երկիւղ Տեառն: Տասներորդ, ասի սկիզբն միտք ծննդական[1] ներտրամադրեալ բանին, յորմէ արտաքս գայ արտաբերական բանս:

Բե՛ր տեսցուք և[2] զերկրորդ գլուխն, որ ասէ թէ՝ «Էր Բանն»:

Եւ զայս գիտելի է, զի ժամանակն յերիս բաժանի՝ յանցեալն, ի ներկայն և յապառնին: Զանցեալ բառն[3] թարգմանէ «էրն», իսկ զներկայն՝ «էն», բայց զապառնին՝ «եղիցին»: Իսկ աստանօր «էրս» եդաւ յաւետարանչէն՝ ո՛չ ժամանակի բացայայտական, այլ իբր թէ՝ ընդ սկզբանն Հօր է՛ր միշտ ընդ նմա Բանն, և ո՛չ է ժամանակ ընդ մէջ Հօրն և ընդ մէջ[4] Բանին, այլ որքան էր Հայրն Հայր՝ է՛ր և ընդ նմա[5] Որդին, որպէս[6] որքան է հուրն՝ է՛ ընդ նմայ լոյսն և ջերմութիւնն իւր[7]:

Բե՛ր տեսցուք և զերրորդ գլուխն, թէ զի՞նչ է հասարակ անունն և ի քանի՞ս բաժանի և յաղագս որո՞յ է մեր բանս: Իսկ զի կոչեցեալ անունս «բան»՝ ոչ է ի փաղանուանցն կամ ի բազմանուանցն[8], այլ է ի հոմանուանցն: Այլ տեսցուք նախ՝ թէ զի՞նչ հոմանուն, երկրորդ՝ թէ քանի՞ նշանակութիւն ունի, երրորդ՝ թէ յաղագս որո՞յ է յառաջիկայս մեզ ի քննութիւն:

Եկեսցուք յառաջին գլուխն և ասասցուք, թէ զի՞նչ է հոմանունութիւն[9]: Հոմանունութիւն է, որոյ անունն հասարակ է, իսկ բան գոյացութեան[10] այլ և այլ՝ որպէս կենդանի մարդն և գրեալն, քանզի թէ բացատրեսցէ ոք զինչ է նոցա երկաքանչիւր ումեք[11]. ումեմն՝ կենդանի գոլ, ումեմն՝ ոչ գոլ: Եւ լինի հոմանունութիւնս ըստ երկու եղանակս՝ ըստ պատահման կամ մտածութեան. մտածութեանն՝ ըստ պատուոյ, ըստ յիշատակի, ըստ յուսոյ, ըստ աղօթից, ըստ կերպարանի, ըստ նմանութեան: Այս յաղագս առաջին գլխոյն՝ թէ զի՞նչ է հոմանունութիւն[12]:

Բե՛ր տեսցուք զերկրորդն, թէ ի քանի՞ս բաժանի հոմանունն: Եւ զի բանս ի հոմանուանցն է, քանզի կոչի Աստուծոյ Բան, կոչի և բան մարդոյ, կոչի և բան հրեշտակի: Եւ սոցա անունն միայն հասարակ, իսկ բան գոյացութեանն այլ և այլ, քանզի ասի[13] Բանն Աստուծոյ՝ անձնաւոր գոյացութիւն, իսկ բան մարդոյ՝ բան բաղկացեալ[14] առ իրեարս շարադրութեամբ և ոչ բնութեամբ, որպէս յառաջիկայսդ կամիմք[15] ուսանել[16], իսկ բան հրեշտակացն՝ իմացմամբ և ոչ շարադ-

[1] B ծննդեան
[2] BDEF > և
[3] F բանն
[4] AE > մէջ
[5] BF նմին
[6] E > որպէս
[7] BF > իւր
[8] DE բազում անուանցն

[9] BF > Եկեսցուք յառաջին գլուխն և ասասցուք, թէ զի՞նչ է հոմանունութիւն՝
[10] A գոյացութենէն
[11] A ուրումն, E ուրուք
[12] E հոմանուն
[13] F > ասի
[14] ABE բան կցեալ, D կցեալ] բաղկացեալ
[15] B կամիք, F կամիմ
[16] F ուսանիլ

բութեամբ: Այս յայտնի եղև, թէ քանի նշանակութիւն ունի կոչեցեալ անունս «բան»:

Բե՛ր տեսցուք, թէ յաղագս որո՞յ բանի է առաջիկայս մեզ ի քննութիւն: Եւ գիտելի է, զի յաղագս Աստուծոյ Բանին է մեզ առաջիկայս ի տեսութիւն, որ ասէ աւետարանիչն, թէ՝ «Ի սկզբանէ էր Բանն»: Բայց[1] նախքան ի մտանել ի քննութիւն Բանին Աստուծոյ, տացուք սակաւ վարդապետութիւն յաղագս մարդկային բանիս, զի յայսմանէ դիւրագոյն լիցի մեզ մտանել ի խորութիւն գիտութեան Բանին Աստուծոյ:

Բե՛ր տեսցուք զչորրորդ գլուխն՝ զնախնի իմաստասիրացն հարցաքննութիւն զՊղատոնին ասեմ և զԱրիստոտէլին: Քանզի Պղատոն կամի զբանն բնութեամբ ի մեզ գոլ, վասն զի գործի է բանական զօրութեանն, որպէս է ակն տեսութեան գործի և այլ իւրաքանչիւր զգայարանք[2]: Բայց Արիստոտէլ սուտ առնէ զնա, քանզի ասէ, թէ Պղատոն զներգործութեամբն և զզօրութեամբն իբրև զնոյն կարծեաց[3], քանզի բանական զօրութիւնն ի մեզ ոչ է ներգործութեամբ ընդ[4] լինելութեանն[5] այլ զօրութեամբ՝ վասն այնորիկ ոչ է բանն բնութեամբ ի մեզ: Եւ եթէ յաղագս այսորիկ կարծէ Պղատոն, թէ գործին բնութեամբ է, ապա և բանն բնութեամբ՝ վայրապար է կարծիքս այս, զի ոչ որով գործին բնութեամբ՝ և ահա իրքն ըստ բնութեան: Քանզի և[6] հնար է[7] զմի և զնոյն իր գործի՝ ումե՛մն ըստ բնութեան գոլ և ումե՛մն՝ ըստ պատահման. որպէս ձեռք մարդոյ[8] ըստ բնութեան կազմեցան առ տուր և առնն, իսկ թուելն և կամ գրելն ոչ ևս ըստ բնութեան, այլ ըստ պատահման կրթութեան: Դարձեալ, անասնական շունչ անընդհատ զկենդանութիւն պահելով ի մեզ առ ի զովացուցանել զընդաբոյս ջերմութիւն՝ ըստ այսմիկ բնականք[9] են, իսկ առ ի բանին առնել սպասաւորութիւն՝ յետոյ պատահեաց գոլ, ցուցեալ՝ զի ոչ իբր զգործի բնութեամբ, որպէս Պղատոն կամի, այլ ըստ շարադրութեան, վասն զի ոչ առնել զսպասաւորութիւն բանի բազմաց ի պատահմանէ եղև սխալումն, որպէս համերց, մնալով անվնաս էութեանն, իսկ առանց շնչոյ էութեանն կենդանի մնալ անհնար է: Արդ, ահա ցուցաւ, զի ոչ է բանն բնութեամբ ի մեզ, այլ զօրութեամբ:

Բե՛ր տեսցուք զհինգերորդ գլուխն, թէ բան մարդոյ ի հարկաւորացն է, թէ՞ ի հնարաւորացն: Գիտել արժան է, զի յայսպիսի գործառնութիւնս նախ և առաջին զարմատոյ և զհիմանէ սոցա բուռն հարկանել պարտ է, զի կատարելապէս զիրին զստուգութիւնն ծանի-

[1] F բեր
[2] D գործի զգայարանք
[3] E գործեաց
[4] C ըստ
[5] BF ունելութեանն
[6] CD > և
[7] EF անհնար է] և հնար է
[8] F > մարդոյ
[9] E բանականքն

ցուք: Եւ արդ[1], սկսանիմք ուստի պարտն է սկսանել, քանզի առնէլն ի կարողութենէ է և կարողութիւնն ի յէութենէ, վասն զի երեք են սոքա՝ կարողն, կարողութիւնն և կատարելին[2]: Արդ, յայսց կարելեացս յառաջ գայ հնարաւորն և հարկաւորն[3], որ նա ինքն է բանաւորն և անբանն: Եւ իւրաքանչիւր ոք ի սոցանէ երկակի: Անբանն, որ է հարկաւորն, զոր ոչն է պարտ[4] արգելուլ և կամ հակակայն անկարելի՝ որպէս հուրն միայն զայրելն ունելով, անկար գոլ[5] զոչ ջեռուցանելն: Այսպէս և ձեան հարկաւորաբար ի մինն կալով ներգործութիւն որակին՝ անկար[6] գոլ զոչ ցրտացուցանելն: Սոյնպէս և ամենայն կենդանոյ հարկաւոր է տուր և առ չնչոյն, որոց այսոցիկ հակակայն է անկարելի: Այս յաղագս անբանին: Իսկ բանաւորն, որ է հնարաւորն, առ երկոսեանն ունի զօրութիւն՝ ներգործել և ոչ ներգործել, կրել և ոչ կրել, որ խորհի և ի ձեռն խորհրդոյն հնարաւոր է զիրսն՝ երբե՛մն զգործն, և երբե՛մն զդիմակն: Եւ է, որ առ մինն միայն, զոր ոք և իցէ ի սոցանէ, քանզի ոչ ամենայն բանաւոր ունի զօրութիւն առ երկոսեան, զի աստուածայինքն ամենայն անբաժ և անկարօտ են այսպիսի խորհրդոց, երկբայութեանց և տարակուսանաց, և ոչ նամանակում ներգործութիւնք նոցա ընդունի զէութիւն, այլ անամանակաբար կալով միշտ ի նոյն ներգործութիւն: Դարձեալ, հնարաւորն՝ է՛ ինչ, որ յոլովակի ասի, և է՛ ինչ, որ սակաւ[7] որակի, և է՛, որ[8] հասարակապէս, և է՛, որ յատկեղ. յոլովակի՝ որպէս վաթսնամենի ալևորելն, և ոչ յոլովակի՝ որպէս վաթսնամենի ոչ ալևորելն, իսկ հասարակապէս՝ գնալ և ոչ գնալ, հատանել և ոչ հատանել, իսկ յատկեղ՝ որպէս քերականութիւն կամ հիւսնութիւն:

Բե՛ր տեսցուք և զվեցերորդ գլուխն, թէ ի քանի՞ս բաժանի բան մարդոյ: Գիտել պարտ է, զի հինգ են եղանակ բանի, որով բային հոլովմամբ փոփոխումն ընդունի ի ժամանակս երիս, քանզի ոմանք են ըղձականք, ոմանք՝ հարցականք, ոմանք՝ հոշականք, ոմանք՝ հրամայականք, ոմանք՝ բացերևականք. ըղձական՝ որպէս այն, որ ասէր Մովսէս. «Ո տայր զամենայն Իսրայէլ ինձ ի մարգարէս» [Թիւք. ԺԱ. 29], և Դաւիթ՝ «Օչ թէ յաջողեալ էին» [Սաղ. ՃԺԸ. 5], իսկ հարցական, որպէս առ Ադամ ասէր, թէ[9] «Ու՞ր ես» [Ծնն. Գ. 9]և Կային[10], թէ՝ «Ու՞ր է Աբէլ՝ եղբայրն քո» [Ծնն. Դ. 9], իսկ հոշական՝ որ է հիացական կամ կոչնական, հիացական, թէ՝ «Ո խորք մեծութեան» [Հռոմ. ԺԱ. 33] և՝ «Ո որ Արարիչդ ես ջրոյ» [Յուդիթ. Թ. 17] և կոչնական[11], որպէս այն, թէ՝ «Աբրահա՛մ, Աբրահա՛մ, մի՛ մխեր զձեռն քո ի պատանեակդ» [Ծնն. ԻԲ. 12],

[1] F > արդ
[2] F կարելին
[3] C > և հարկաւորն
[4] B > պարտ
[5] CD գոլով
[6] AE որ անկար, F անկարգ
[7] BF սակաւաւ
[8] F > որ
[9] BE > թէ
[10] E > Կային
[11] ABCDF թէ կոչնական

իսկ հրամայական, որպէս թէ՝ «Պատուեա զհայր քո և զմայր[1]» [Բ. Օրէնք. Ե. 16], և Տէրն ասէր, թէ[2] «Երթ այսօր գործեայ այգին» [Մատ. ԻԱ. 28], իսկ բացերևական՝ որ է ստորասական և բացասական, որ միայն զճշմարիտն և զստուն յայտնէ, որպէս ասել թէ՝ «Պետրոս խաչեալ է»՝ ստորասական և ճշմարիտ, իսկ որ ասելն՝ «Ոչ է խաչեալ»՝ է բացասական և սուտ: Այլ զի ըստ Արիստոտէլի արտաճառութեանն, որ ասէ թէ՝ ներձայնողքն ներանձին ախտիցն նշանակք են[3], և գրեցեալքն՝ ներձայնողացն: Իբր թէ քառիցելոց՝ իրաց, իմացման[4], ձայնի և գրոց, իրքն և իմացմունքն՝ ոչ որք յանձին, այլ որք ի ներս իմացմունքն՝ ե՛ն երկոքեան սոքա բնութեամբ: Իսկ ձայնքն և գիրն յետոյ պատահեցին գոլ, քանզի որպէս ընդ[5] ձայնի ստորասութիւն և բացասութիւն, այսպէս և ընդ[6] խորհրդումն շարադրութիւն և տրոհութիւն: Եւ որպէս իմացմունքն երբեմն պարզ և երբեմն շարամանեալ, այսպէս և ձայնքն զնոյն ընդունին, վասն զի խօսիցն զինչ և խօսի ոք՝ է՛, որ ըստ շարամանութեան և է՛, որ առանց շարամանութեան: Բայց ոչ յամենայն ժամ ձայնքն և իմացմունքն հետևանան միմեանց. այլ է՛ երբեմն, զի զձայնն պատահէ պարզ գոլ, իսկ զիմացումն բաղադրեալ՝ որպէս ընթանամ կամ վերծանեմ[7], և է՛, զի ձայնքն բաղադրեալ և իմացմունքն պարզ, որպէս՝ «Կենդանի՝ բանաւոր, մահկանացու...», և է՛, զի ձայնքն պարզ և իմացմունքն պարզ, որպէս[8] «Սոկրատէս իմաստասիրէ», «Հոմերոս քերթողաբանէ», և է՛, զի ձայնքն բաղադրեալ և իմացմունքն բաղադրեալ, որպէս թէ՝ «Ասացի թէ պատմեցից ինձէն զմեղս իմ և դու թողցէս զամենայն զամբարշտութիւնս մեղաց իմոց[9]» [Սաղ. ԼԱ. 5] և կամ թէ՝ «Լեզու իմ խօսեսցի զարդարութիւնս քո զոր հանապազ զգովութիւնս քո» [Սաղ. ԼԴ. 28]:

Բե՛ր տեսցուք զեւթներորդ գլուխն, թէ քանի՞ են եղանակ բացորոշութեան, ստորասութեան և բացասութեան[10] և թէ յո՞րք[11] յեղանակս տրամատի:

Եւ գիտել պարտ է, զի ի հինգս տրամատի՝ յապացուցականն, ի տրամաբանականն, ի ճարտասանական, ի մասնական, ի քերթողական, քանզի սոքա են, որ զճշմարտութեան և զստութեան զառաւելութիւն և զնուազութիւն[12] բացայայտեն, քանզի յոր խօսս և դիմէ[13] ոք՝ կա՛մ ամենևին ճշմարտէ և լինի ապացուցական, կա՛մ ամենևին[14] ստէ և լինի քերթողական,

[1] BCF > և մայր
[2] BE > թէ
[3] BF > են
[4] B իմացմանց
[5] B ըն, C ըստ
[6] ABE ըն, C ըստ
[7] F զերծանիմ
[8] F > «Կենդանի՝ բանաւոր, մահկանացու...», և է՛, զի ձայնքն պարզ և իմացմունքն պարզ, որպէս
[9] E > մեղաց իմոց, BF > զամենայն ամբարշտութիւնս մեղաց իմոց
[10] C > և բացասութեան
[11] BF յորքան
[12] E զանազանութիւն
[13] E ի դէմ
[14] F > ճշմարտէ և լինի ապացուցական,

և թէ խառն ունի զճշմարիտն և զսուտն և զնոյն հաւասար՝ լինի ճարտասանական, և եթէ առաւելու ճշմարիտն քան զսուտն՝ լինի տրամաբանական, և եթէ առաւելու սուտն քան զճշմարիտն՝ լինի մասնական:

Դարձեալ, ասասցուք և զայն ևս, զի հոգիս մեր կրկին ունի զօրութիւն՝ միտք և բան: Եւ իւրաքանչիւր ոք ի սոցանէ է մասամբ հնգիւք զարդարեալ յարարչէն, քանզի ունի[1] միտքն իմաստութիւն, տեսողութիւն, ուսողութիւն, անմոռացութիւն և կատարումն զճշմարտութիւն, իսկ բանն ունի զխոկումն, առաքինութիւն, գործ, հաւատ և կատարումն զբարին: Եւ խառնին սոքա ընդ միմեանս այսպէս[2] իմաստութիւնն ընդ խոկումն, տեսողութիւնն ընդ գործն, ուսողութիւնն ընդ առաքինութիւնն, անմոռացութիւնն ընդ հաւատս, ճշմարտութիւնն ընդ բարին: Եւ կատարումն սոցա երկոցունց՝ է՛ աստուածային ճշմարիտ բարին՝ որ է բանն:

Իսկ որովհետև զբաժանումն բանիս ըստ որքանութեան եղանակաց արտադրեցաք, բե՛ր ասասցուք[3] զութերորդ գլուխն, թէ քանի՞ են եղանակ բաժանման և ըստ որում եղանակի լինի բաժանումն բանին Աստուծոյ և մարդոյ:

Եւ արդ, գիտել պարտ է, զի բնաւորեալ իսկ է, զի ամենայն, որ բաժանումն ընդունի՝ կա՛մ որպէս սեռէ ի տեսակս, կա՛մ որպէս տեսակէ յանհատս, կա՛մ որպէս բոլորէ ի մասունս[4] և այս երկակի՝ կա՛մ ի նմանամասնեայսն, կա՛մ յաննմանամասնեայսն, կա՛մ որպէս հոմանուն ձայն ի զանազան նշանակեցեալս, կա՛մ որպէս էութիւն ի պատահումն, կա՛մ որպէս պատահումն յէութիւն, կա՛մ որպէս ի միոջէ և առ մի: Բայց գիտել արժան է, զի յասացելոց եղանակացդ երեք են ստուգապէս եղանակ բաժանման՝ որպէս սեռէ ի տեսակս, որպէս բոլորէ ի մասունս[5], որպէս հոմանուն ձայնէ[6] ի զանազան նշանակեցեալս: Իսկ առաջին բաժանումն, որ եղև ըստ հասարակ բանին՝ էր բաժանումն ըստ հոմանուանց, իսկ յորժամ յատկապէս առեալ զմարդկային բանս[7] բաժանեցաք՝ էր իբր բոլորէ ի մասունս[8]:

Բե՛ր աստանօր տեսցուք[9] զիններորդ գլուխն՝ զորքանութիւն մասանց բանին և ընդ նմին գիտել զիսկապէս մասունս և ապա սահմանել:

Եւ գիտելի է, զի ըստ արտաքին բնական իմաստասիրացն հինգ են՝ անուն, բայ, ստորասութիւն, բացասութիւն և բացերևութիւն: Իսկ ըստ քերական արուեստաւորացն մասունք են բանի ութ՝ անուն, բայ, ընդունելութիւն, յօդ, դերանուն, նախադրութիւն, մակբայ, շաղկապ: Իսկ Արիստոտէլ ասէ ի

կա՛մ ամենևին

[1] E > ունի

[2] D այսինքն

[3] CDF աստանօր տեսցուք, E տեսցուք] ասասցուք

[4] E իմաստունսն] ի մասունս

[5] E իմաստունս

[6] ACDE ձայն

[7] B > բանս

[8] E իմաստունս]ի մասունս

[9] B > տեսցուք

Պերի արմէնիասն, թէ իսկապէս մասունք են բանի անուն և բայ, իսկ այլքն կոչմունք առ մանկագոյնսն ասել սովորեցին: Քանզի ոմանք են ընդ անուամբ, իսկ ոմանք ընդ բայիւ[1]. ընդ անուամբ՝ իբր դերանուն և մակբայ, իսկ ընդ բայիւ՝ որպէս ընդունելութիւն, և այլոցն ամենեցուն պիտոյից սակս առեալ լինի. որպէս ի նաւի առ այլ իմն պէտս ունին առ ի մածուցանել[2] որպէս կուպրն և վուշն, և առ ի զօդսն՝ պնդել բևեռք, և կամ առ ի գեղեցկութիւն՝ կարմրադեղն. ո՛չ[3] առ մի ի սոցանէ մասն ինչ ոչ ասի նաւին, այլ ի պիտոյից սակս վերաբերեալ լինի: Այսպէս և մասունք բանին՝ առ ի պնդել՝ որպէս շաղկապքն, և առ ի լրութիւն՝ որպէս նախդիրն՝ ոչ իբր կատարելով, այլ իբրև պայծառացուցանելոյ և գեղեցկացուցանելոյ զբանն:

Արդ, որովհետև ծանեաք զմասունս բանի և զիսկապէս մասունս, բե՛ր այժմ տեսցուք զտասներորդ գլուխն, թէ զի՞նչ են սահմանք բանի ըստ բնական իմաստասիրացն:

Եւ գիտելի է, զի այսպէս սահմանէ Արիստոտէլէս, թէ՝ բան է ձայն նշանական, որոյ[4] մասունքն զատեալ ոչ ինչ նշանակեն[5] իբր ասութիւն, այլ ոչ իբր ստորասութիւն: Իսկ ըստ քերական արուեստաւորացն[6] սահմանի այսպէս. բան է հետևակ[7] բառի շարադրութիւն զտրամախոհութիւնն ինքնակատար յայտնելով: Այս յաղագս մարդկային բանիս այսքան:

Բե՛ր ասասցուք[8] զմետասաներորդ գլուխն՝ յաղագս Աստուծոյ Բանին, որ ասէ, թէ՝ «Էր Բանն. և Բանն էր առ Աստուած. և Աստուած էր Բանն»:

Եւ գիտելի է, քանզի[9] Աստուած է իմացական բնութիւն, վասն այնորիկ ասի Բան ունել՝ ոչ ըստ նմանութեան յատկապէս բանին[10], որ է ձայն նշանական, կամ միւսոյ[11] բանին, որ է անկատար յղացումն մտաց, զի յԱստուած ոչ ինչ կայ զգալի և ոչ անկատար, այլ է Աստուած Բանն ըստ նմանութեան կատարեալ յղացման մտաց, զի Աստուած զինքն և զայլ ամենայն իրս ճանաչէ միով տեսութեամբ կատարեալ: Ուստի յայտնի է զանազանութիւն ի մէջ աստուածային[12] բանին և մեր, զի Բանն Աստուծոյ մի է, և ճանաչումն Աստուծոյ մի է[13], իսկ բան մեր բազմանայ ըստ բազմութեան իրացն, զոր ճանաչեմք: Եւ մերս անցաւոր է և պատահումն, յաղագս այնր, զի ոչ միշտ ներգործութեամբ իմանամք, բայց ի յԱստուած նոյն է ճանաչումն ըստ աստուածութեան, նմին իրի ոչ ասի պատահումն և ոչ անցաւոր, այլ մնացական և յաւիտենական:

Երկրորդ, գիտելի է, զի առ կատարեալ որդիութիւնն խնդրի

[1] D > ընդ անուամբ, իսկ ոմանք ընդ բայիւ
[2] F մածնուլ
[3] F իսկ
[4] ACDEF որով
[5] B են] նշանակեն
[6] ADE արուեստացն
[7] F հետուկ
[8] E տեսցուք
[9] B զի
[10] CD > բանին
[11] CD միւսում
[12] ABCD Աստուած
[13] F > և ճանաչումն Աստուծոյ մի է

ելումն կենդանոյ ի կենդանոյ[1]՝ ըստ նմանութեան բնութեան, ըստ տեսակի կամ հուպ սեռի, քանզի թէպէտ յանկենդան տարերց մինն ի միւսոյն ելանէ՝ որպէս հուր ի ջրոյ, սակայն ոչ ասի որդի մինն միւսոյն, վասն զի կենդանիք ոչ են: Նոյնպէս, թէ ոչ կենդանի ինչ ելանէ ի կենդանոյ՝ ոչ ասի որդի նմին՝ որպէս արհեստ յարհեստաւորէ[2]: Դարձեալ, թէպէտ կենդանի ի կենդանոյ ելանէ և ոչ լինի ըստ նմանութեան բնութեանն՝ ըստ տեսակի կամ թէ հուպ սեռի՝ ոչ ասի որդի նմին, որպէս քրտնածին ճըճիք ելանեն ի մարդոյն և են կենդանիք ի կենդանոյ, բայց ոչ ասին որդի: Բայց գիտելի է, զի ոչ խնդրի առ ի կատարեալ որդիութիւնն, զի ըստ զանազանութեան[3] անձին ծնողի և ծնիցելոց զանազան բնութիւն լիցի ըստ անհատին, զի այն պատահի յանկատարութենէ բնութեանն, որ վասն չափաւորութեանն իւրոյ ոչ կարէ կալ համանգամայն ի բազում անձինս: Վասն այն պարտ է ասել, թէ աստուածային անձն ելանէ յաստուածային անձնէ ըստ նմանութեան բնութեանն, և ծնեալ[4] անձն Որդի է յորմէ ելանէ, զի Աստուած ոչ միայն է կենդանի, այլ կենդանութիւն[5] և կեանք: Եւ Աստուած Բանն ելանէ ի Հօրէ, որպէս կենդանի ի կենդանոյ ըստ նմանութեան բնութեան՝ ոչ միայն տեսակաբար, այլև անհատապէս և համեմատի առ ծնօղն: Իսկ կատարելութիւն բանին այս է՝ զի զիւրոյ խօսողին կատարեալ նմանութիւն ունիցի, վասն այն Աստուծոյ Որդին և Բանն նոյն են, քանզի ամենայն կենդանի ելեալ ի կենդանոյ ըստ միութեան բնութեանն՝ որդի ասի նմին: Իսկ Բանն Աստուծոյ ըստ այսմ օրինակի ելանէ յԱստուծոյ Հօրէ, յաղագս այնորիկ ասի Բանն Աստուծոյ՝ Որդի Աստուծոյ: Եւ զի որդին թարգմանի այսպէս՝ համեմատ և հաւասար իմ[6]: Եւ զայս յայտնէ աւետարանիչս ասելով՝ «Ի սկզբանէ էր Բան», զսկիզբն ասելով՝ զպատճառն յայտնէ: Եւ զի պատճառն յաւիտենական է՝ ելեալն ի նմանէ պարտի յաւիտենական գոլ:

Երրորդ[7], գիտել պարտ է[8], զի ամենայն, որ ելանէ յայլմէ՝ ըստ երից եղանակաց լինի՝ կա՛մ ըստ բնութեան, կա՛մ ըստ շարժման, կա՛մ ըստ արարչութեան: Արդ, որ ելանէ ի բնութենէն, նախ պարտի գոլ բնութեանն և գոլ կատարելութեանն, որ զիւր նմանն ծնանի: Յաղագս այսորիկ ամենայն գաւակ յետոյ լինի, քան զծնօղն իւր, վասն զի թէպէտ է՛ բնութիւն՝ մինչ ոչ է առեալ զկատարեալ կարողութիւն մասանց՝ ոչ կարէ ծնանել զնմանն իւր: Յաղագս այսորիկ ամենայն ծնօղ նախ է, քան զծնունդն իւր: Երկրորդ[9], ամենայն, որ շարժմամբ ելանէ և փոփոխմամբ[10] առաջին շարժումն նախ է, քան զյետինն,

[1] C > ի կենդանոյ
[2] AE յարուեստաւորէ
[3] AE զանազան
[4] E կարծեալ] և ծնեալ
[5] D կենդանի
[6] D հաւատարիմ] հաւասար իմ
[7] B երկրորդ
[8] BF գիտելի է] գիտել պարտ է
[9] AE չորրորդ
[10] E փափաքմամբ

և որքան երկարի[1] շարժումն՝ առաջինն նախ է, քան զյետինն[2]: Իսկ երրորդ, ըստ ստեղծման, որ կամաւ և կարողութեամբ լինի՝ որպէս[3] աշխարհս յԱստուծոյ:

Տեսցուք, թէ զի՞արդ ասէ աւետարանիչս, թէ՝ ընդ սկզբանն Հօր է՛ր Որդի:

Գիտելի է՝ ըստ առաջին կերպին, զի Աստուած ոչ է անկատարութիւն բնութեան, այլ մի՛շտ կատարեալ, յաղագս[4] այնորիկ որքան է՛ Հայրն՝ ընդ նմայ է՛ և[5] Որդին և ոչ յետոյ: Երկրորդ, որ շարժմամբն է, ո՛չ է Աստուած[6], վասն զի Արարիչ է յաւիտեանց և ժամանակաց, յորս ասէ Յակոբոս եղբայրն Տեառն, յորում ոչ է շարժումն և կամ ստուեր փոփոխելոյ: Իսկ ըստ ստեղծմանն՝ է՛ Աստուած ամենակարող յստեղծանելն, բայց ո՛չ կամեցաւ յաւիտենից ստեղծանել զարարածս, զի ոչ վայել էր յեղականիս սեփականն[7] անեղին: Իսկ Բանն Աստուծոյ ելեալ ի Հօրէ՝ է՛ ճանաչումն և գիտութիւն Հօրն, և ո՛չ ոք կարէ ասել, թէ է՛ր երբեմն, զի Աստուած Աստուած էր և անիմաստ կամ տգէտ: Յաղագս[8] այնորիկ[9] ի հարկէ պարտ է[10] խոստովանել և ասել, թէ ընդ[11] էութեանն ունի Հայր գճանաչումն իւր[12], վասն որոյ առաքեալն զմիածին Որդին նկարագիր էութեանն Հօր ասէ[13] [Եբր. Ա. 3]:

Ի սոյն բանի մեկնութիւն վեց իրս հարցաքննելի է մեզ: Նախ, թէ վա՞սն էր ասէ, թէ ի սկզբանէ «է՛ր» Բանն, և ոչ ասէ թէ՝ «է՛» կամ «եկա՛ց»:

Գիտելի է, զի ի յանցեալ իրին առաւել դնելի է «էր» բառն[14], քան թէ «եկաց». իբր թէ ոմն հարցանէ, թէ զի՞նչ էր ի սկզբանէ աշխարհի կամ ժամանակի, պատասխանէ աւետարանիչս, թէ՝ յայնժամն է՛ր Բանն: Երկրորդ, զի այսպէս ասելով առաւել ցուցանէ զգոլ Բանին նախքան[15] զաշխարհս: Երրորդ, զի թէ ասէր թէ՝ «եկա՛ց», անցաւոր ցուցանէ, և թէ ասէր թէ[16] «է՛», ոչ ցուցանէր զգոլ Բանին նախքան զաշխարհս: Բայց այս, որ ասէ, թէ «է՛ր»՝ զյարատեւութիւն Աստուծոյ Բանին և զգոլն նորա նախքան զաշխարհս յայտնապէս նշանակէ՝ ասելս՝ «է՛ր»:

Երկրորդ, խնդրի, թէ ընդէ՞ր ոչ ասաց՝ նախքան զսկիզբն աշխարհիս, կա՛մ յաւիտենից, կա՛մ յառաջ քան զամենայն:

Եւ գիտելի է, զի վասն կրկին պատճառի ոչ ասաց: Առաջինն է, առ ի նմանապէս խօսել ի[17] Սուրբ գրոց, որ զստեղծումն աշխարհիս ճառէ, և առ ի յիշեցուցանել[18]

---

[1] A երկակի
[2] EF և որքան երկարի շարժումն՝ առաջինն նախ է, քան զյետինն՝
[3] C ըստ
[4] BF վասն
[5] BDEF > և
[6] F յԱստուծոյ
[7] EF սեպիականն
[8] BF վասն
[9] F այսորիկ
[10] BF > պարտ է
[11] C ըստ, F ընդէր
[12] B > իւր
[13] B > ասէ
[14] E բանն
[15] E նախ
[16] BF > թէ
[17] BCDF > ի
[18] ACE յեցուցանել

զԲանն, որով ամենայն ինչ եղև, և՝ առ ի ցուցանել, թէ վասն նոյն Բանին գրէ, զոր և Մովսէս գրեաց: Երկրորդ, զի Բանն նորա առաւել հաճոյ և ընդունելի լինէր, և զմեզ, ըստ կարգի Բանին, ի յաւիտենականութիւնն ածէ[1]:

Երրորդ, խնդրի, թէ ասելն «ի սկզբանէ», վա՞սն էր ոչ ասաց՝ ի սկզբանէ աշխարհի կամ ժամանակի:

Առ որս պատասխանէ Ոսկիբանն, թէ զոր օրինակ լինիցի ոք յեզը ծովու ի մէջ նաւին և տեսանիցէ զքաղաքն և զնաւահանգիստն, իսկ յորժամ նաւաստին ի մէջ ծովուն զնա տանիցի նաւովն, ի նախկին տեսութենէն զնա հեռացուցանէ[2]: Այսպէս աւետարանիչս[3] վերագոյն քան զամենայն ստեղծուածս՝ զմեզ էած առ Աստուած ի խորագոյնն և ոչ ետ թոյլ կալ մնալ ի յեզեր, այլ ասելովն՝ «ի սկզբանէ էր»՝ զյաւիտենականութիւնն[4] եցոյց և ոչ զեզերեալ ինչ ծանոյց:

Չորրորդ, խնդրի, թէ վա՞սն էր զսկիզբն ի Բանն եդ և ոչ ի Հայր:

Եւ այս յաղագս այսորիկ ի Բանէն սկսանի՝ առ ի ցուցանել, թէ վասն Բանին է ճառելոց: Եւս և առ ի վերայ բերել զմեզ Բանիւն՝ առ ի ճանաչումն Հօր, քանզի ըստ իմաստասիրացն կանոնի ի պատճառելեացն[5] ելանեմք ի ծանութիւն պատճառին: Սոյն գունակի[6] ի ծանութենէ Որդոյ ելանեմք ի ճանաչումն Հօր:

Հինգերորդ, խնդրի, թէ ընդէ՞ր ասէ «Բանն» և ոչ «Բան»:

Պատասխանէ Ոսկիբանն և ասէ՝ «Բանն» առ ի նշանակել զմեծագոյն և զյատկացեալ բանն: Երկրորդ, զի թէ «Բան» ասէր՝ զհասարակ բանէ նշանակ էր, իսկ «Բանն» ասելով՝ զյատկացեալ ծանութէ տայ ցոյց: Ըստ այնմ, յորժամ ասեմք՝ «մարդ էր եկ[7]»՝ անորոշակի եցոյց, իսկ յորժամ ասեմք՝ «մարդն էր եկ[8]»՝ զծանութ[9] յատկացելոյ տայ ցոյցս[10]: Այսպէս իմա և «զԲանն» ասել՝ առ ի յատկացուցանելոյ[11] զԱստուծոյ Բանն:

Վեցերորդ, խնդրի, թէ ընդէ՞ր զանուն Որդոյ ոչ ասաց, որ դաւանեաց Պետրոս, թէ՝ «Դու ես Որդի Աստուծոյ կենդանոյ» [Յովհ. Զ. 28] և երանեցաւ[12], իսկ աւետարանիչս ի պատճառէ երանութեանն ընդէ՞ր խոյս տայ՝ ասել «Բան» և ոչ «Որդի»:

Եւ այս վասն չորս պատճառի: Առաջին[13], վասն հանգիտութեան[14] բանին Մովսէսի, որ ասէր, թէ՝ «Ասաց Աստուած եղիցի լոյս, և եղև[15]» [Ծնն. Ա. 3], նաև մարգարէն Դաւիթ սաղմոսէ, թէ՝ «Բանիւ Տեառն երկինք հաստատեցան» [Սաղ. ԼԲ. 6]: Եւ ի բազում տեղիս[16] ասի ի մարգարէսն, թէ՝ «խո-

[1] C Աստուած է] ածէ
[2] B հեռացնէ, C հեռացուցէ
[3] F ասէ աւետարանիչս
[4] F զյաւիտենականն
[5] F պատճառելոցն
[6] B սոյնպէս, F սապէս] սոյն գունակի
[7] BDF երեկ, E եկն] էր եկ
[8] BC երեկ, E եկն] էր եկ
[9] E զծանօթութիւն
[10] F > իսկ յորժամ ասեմք՝ «մարդն էր եկ»՝ զծանօթ յատկացելոյ տայ ցոյցս
[11] BF յատկացելոյ
[12] E երևեցաւ
[13] B նախ
[14] B հաստատութեան
[15] F > և եղև, B և եղև լոյս
[16] E > տեղիս

սեցաւ» կամ «ասաց», «խօսել» և «ասել» և «բան»՝ մի՛ է: Եւ երբեմն ըստ անուան «բանի» գրեալ է յԵսայի և յԵրեմիայ ի բազում տեղիս. «Եւ եղև Բան Տեառն առ Երեմիայ», նաև՝ յԵզեկիէլն [Եսայ. ԼԸ. 4; Երեմ. ԺԴ. 1; Եզեկ. Ա. 3 և այլուր]: Երկրորդ պատճառ, զի արտաքինքն մին մեծագոյն բան ասէին կազմող գոյիցս, բայց Որդի ո՛չ ասէին և ո՛չ համագոյակից: Յորմէ սխալեալ Արիոս, Եվնոմիոս և Այէտիոս արարած ասացին զՈրդի, վասն այսորիկ «Բան» ասաց և «զէրն» ընդ նմա կարգեաց, զի ծանիցէս, թէ ի բնութենէ նորա է և յաւէտակից նմին: Երրորդ, զի «Բան» ասելով առաւել եցոյց իմացական գոլ զծնունդ Որդւոյն, աննիւթ և անապական, ևս առաւել զյաւէտակցութիւն առ Հայր և զնախկին գոլն[1] Որդւոյ, քան զարարածս: Չորրորդ, զի առաւել ցուցանեմք յանուանէ «Բանին»՝ զի Որդի է, քան «յՈրդւոյ» անուանէն՝ զի Բան է: Նմին իրի նախ դնէ զանուն «Բանին» և ապա ընթացեալ[2] յառաջ՝ կոչէ «Որդի», զի թէ նախ «Որդի» էր ասացեալ՝ մարմնական և ախտական տայր կարծիս: Յաղագս որոյ նախ «Բան» ասաց, զի բանն անախտաբար ծնանի ի մտաց, իսկ յետոյ «Որդի» կոչէ, զի ցուցանէ, թէ Բանն, որպէս ամենայն որդի՝ զբնութիւն հօրն իւր[3] ունի, այսպէս[4] Բանն Աստուծոյ զբնութիւն Աստուծոյ ունի[5]:

Դարձեալ առցուք զբան աւետարանչիս[6], որ ասէ, թէ՝ «Ի սկզբանէ էր Բանն», և քննեսցուք, թէ զի՞նչ էր հարկ սորա յաղագս շարադրութեան բանից և կամ՝ վասն զի՞նչ պատճառի:

Բե՛ր ասասցուք, քանզի ետես աւետարանիչս զերից աւետարանչացն գրեալսն, զի ի մարմնական ծննդենէն Քրիստոսի[7] էին սկսեալ զաւետարանութիւնն իւրեանց: Յաղագս այսորիկ հարկ եղև սմա զյաւիտենական ծննդենէն[8] բուռն հարկանել, վասն զի Աստուած էր, որ մարդացաւ՝ յաղագս այսր պատճառի զհայրական ծննդենէն պատմէ: Եւ տե՛ս, թէ որպէս զգուշութեամբ, զի ո՛չ ասաց «Հայր» կամ «Որդի», զի մի՛ դարձեալ մարմնական կարծեսցի, այլ «Աստուած» և «Բան» ասաց, զի միտք քո զանկարեկանն ծնունդ իմասցի, զի որպէս բանն ի մտացն ծնանի, և հայր բանին՝ միտքն է, և բանն, որ ի մտացն գայ յառաջ, անախտ[9] և անժամանակ և անհատապէս է[10] ի մտացն: Վասն այսորիկ զծնունդն Աստուծոյ Բան կոչէ, որ ի ձեռն Բանին նկարագրութեան զաստուածային ծնունդն թարգմանէ քեզ, զի անախտ և անժամանակ և անհատապէս է միածինն առ Հօր, այսինքն՝ Բանն, վասն այսորիկ «Բան» ասէ:

Իսկ ի յասելս «Բան»՝ տեսաւ Հոգովն Սրբով, զի տասն ազգ

[1] B > գոլն
[2] F ընթերցեալ
[3] E իւրոյ
[4] B > այսպէս
[5] E ցուցանէ
[6] CD Աւետարանիս
[7] AC Քրիստոս
[8] D ծննդեան
[9] D անախտաբար
[10] BCF > է

հերձուածօք կամէր լլկել[1] բանսարկուն զեկեղեցի ի վերայ միոյ Բանիս, վասն այնորիկ տասն բան չարադրէ ընդդէմ տասն հերձուածոյն՝ առ ի հերքել զնոսա: Քանզի առաջինն, որ ասաց «Բան», եղեն ոմանք հերձուածողք, որ փոտինոսք անուանին, որք ասացին, թէ Բանն և մարմինն ի միասին գոյացան, և ո՛չ էր Բանն յառաջ, քան զմարմինն, վասն այսորիկ դնէ զբանս զայս՝ առ[2] ի հերքել զմոլորութիւնս նոցա, թէ ընդ[3] սկզբա՛նն Հօր էր Բանն[4] և ոչ ի վերջո՛յ սկսեալ, որպէս ասեն մոլորեալքն: Երկրորդ, զի Սաբէլ ասաց զբնութիւնն և զանձինքն մի՛, վասն այսորիկ դնէ զբանս զայս[5], ասելով, թէ՝ «Բանն էր առ Աստուած», Աստուծոյ կատարեալ անձն Բանին էր առ Աստուած Հայր: Երրորդ, զի ասաց Արիոս, Այէտիոս[6], Եւնոմիոս[7], թէ ոչ էր ստեղծող, այլ ստեղծուած, վասն այսորիկ դնէ զբանս զայս, թէ՝ Աստուած էր Բանն և ոչ ստեղծուած, որպէս ասեն մոլորեալքն: Չորրորդ, զի ոմանք ասացին, թէ ամենայն աներևոյթք և իմանալին[8] արարածք[9] յԱստուծոյ եղեն, իսկ երևելիքս և զգալիքս՝ ի սատանայէ, վասն այնորիկ դնէ զբանս զայս, ասելով, թէ՝ «ամենայն ինչ նովաւ եղև», այսինքն՝ երևելիք և աներևոյթք: Հինգերորդ, զի ոմանք ասացին, թէ յորժամ ամենայն ինչ նովաւ եղեն[10], յայտ է, թէ չարն ևս ի նմանէ գոյացաւ, վասն որոյ պատասխանէ, թէ՝ «առանց նորա եղև և ոչինչ», որ յայտնապէս ցուցանէ զմեղքն և զչարն, որ[11] ո՛չ ինչ են, զի չարն ոչ ունի էութիւն, այլ պակասութիւն[12] է բարւոյն: Վեցերորդ, զի ոմանք ասացին, թէ Ստեղծիչն անկարգ և անյարմար է ստեղծ զարարածս, վասն այնորիկ դնէ զաղբիւրն կարգի և յարմարութեան զկեանքն, ասելով, որ «ինչ եղևն նովաւ՝ կեանք էր» [Յովհ. Ա. 3, 4]: Եւթներորդ, զի ասացին ոմանք, թէ ոչ հասարակաբար խնամէ Արարիչն զարարածս, զոր ոչ ունէր կարիս պատասխանոյ, զի թէ զգալի արեգակն այս հասարակաբար խնամէ, որչափ ևս առաւել իմանալին Աստուած, վասն այնորիկ ասէ աւետարանիչս, թէ «Կեանքն էր լոյս մարդկան» [Յովհ. Ա. 4]: Ութերորդ, զի ասացին ոմանք, թէ Աստուած արար զարարածս, բայց է ինքն ի մասն աշխարհի, այսինքն՝ յերկինս՝ ըստ այնմ, թէ՝ «նստի յերկինս երկնից[13]» [Սաղ. ԿԷ. 34] և թէ՝ «զերկիրս ետ որդւոց մարդկան» [Սաղ. ՃԺԳ. 16] և ոչինչ ունի խնամ ի վերայ սորա, վասն այնորիկ յոլով են[14] խռովութիւնք, վրդովմունք և[15] պատերազմունք[16] ի սմա, յաղագս[17] որոյ դնէ

[1] C լըլել, D լընել
[2] B ասելով առ, F ասելով թէ բանս այս առ] առ
[3] B ըստ
[4] CD > Բանն
[5] D > զայս
[6] BF Աւետիոս
[7] A Եւնէմիոս
[8] BF իմանալիքն
[9] F > արարածք
[10] F եղև
[11] D > որ
[12] F ի պակասութենէ
[13] F երկնից ընդ արևելս] երկնից
[14] CD > են
[15] AC > և
[16] E պաշարմունք
[17] BF վասն

զբանս զայս, թէ «յաշխարհի էր» [Յովհ. Ա. 10]: Իններորդ, զի ասացին ոմանք, թէ ոչ է[1] առ Բանն Աստուած[2] թանձր մարմին, որ է ոսկր և ջիլ, այլ անօսր և թափանցիկ բնութիւն՝ անցանելով ընդ կոյսն, որպէս լոյս արեգականն ընդ ապակի, յաղագս այսորիկ դնէ զբանն զայն, թէ՝ «Բանն մարմին եղև»: Տասներորդ, զի ի բանէս այսմանէ[3] սխալեցան[4] ոմանք և կարծեցին, թէ անօսր Բանն Աստուծոյ փոխեցաւ ի բնութենէ իւրմէ և թանձրացաւ մարմին, վասն որոյ պատասխանէ աւետարանիչս, թէ՝ «Լոյսն ի խաւարի անդ լուսաւոր էր» [Յովհ. Ա. 5], այսինքն՝ թէ անդ ի մարմնանալն լոյսն անփոփոխ բնութեամբ՝ անդ լոյս էր և ոչ որպէս խաւարեալ միտք նոցա կարծեն:

Դարձեալ, խնդրի, թէ ի սկզբան արարածոցս զի՞նչ էր: Երիս է խնդիր աստանօր յաղագս Աստուծոյ Բանին. թէ ե՞րբ էր՝ պատասխանէ, թէ[5] «յսկիզբն[6] էր», իսկ թէ ու՞ր էր՝ պատասխանէ, թէ «առ Աստուած էր[7]», իսկ թէ զի՞նչ էր՝ պատասխանէ, թէ «Աստուած էր Բանն»:

Իսկ թէ ընդէ՞ր ասաց, թէ «Աստուած էր Բանն» և ոչ ասաց, թէ «Բանն էր Աստուած»: Եւ այս յիրաւի, զի երից անձանցն բոլոր ճշմարտութեան էութիւն աստուածութիւն է, յաղագս այնորիկ զԱստուածն եդ ի տեղի ենթակայի, իսկ Բանն՝ ստորոգեալ ի վերայ նորա[8]:

Եւ այս յաղագս մեծասան[9] գլխոյն այսքան:

Բե՛ր տեսցուք զերկոտասաներորդ գլուխն, թէ ի՞ւ զանազանի Բանն Աստուծոյ ի բանէն մարդոյ:

Բայց գիտելի է, զի ասացաք, թէ Բան Աստուծոյ և բան մարդոյ հասարակապէս բան կոչի: Տեսցուք, թէ ըստ միոյ կոչմանս՝ որ է բան, միա՞յն են հասարակ: Ասեմք՝ թէ ոչ: Բեր նախ ասասցուք[10] զորքանութիւն հասարակութեան բանին Աստուծոյ և մարդոյ, և ապա յետ այնորիկ արտադրեսցուք զզանազանութիւն նոցին: Եւ գիտելի է, զի հասարակութիւնք են[11] սոցա քսան և մեկ և զանազանութիւնք են հնգէտասան:

Բե՛ր նախ ասասցուք յաղագս հասարակութեան սոցա, որոց առաջինն[12] արտաբերի[13] այսպէս. նախ, զի որպէս ներտրամադրական[14] բանս մեր ծնանի ի մտաց թարց մարմնոյ, նոյնպէս Բանն Աստուած ծնաւ ի Հօրէ՝ առանց մօր: Երկրորդ հասարակութիւն, զի որպէս ներտրամադրեալ բանս մեր յորժամ ծնանի ի մէնջ, ո՛չ հատանի ի մտաց մերոց և ո՛չ նուազի, զի[15] որպէս լոյս արեգականն թէպէտ զաշխարհս լուսաւորէ, ո՛չ հատանի յարեգակնէն և ո՛չ նուազի, այսպէս[16] Բանն Աստուած ծնա-

[1] BCD > է
[2] A > Աստուած
[3] ABE այս, F այսինքն
[4] C սխալանեցան, F սխալացան մարդիկ
[5] E > թէ
[6] F յսկզբանէ
[7] C > էր
[8] ABCDE > նորա
[9] D մետասաներորդ
[10] B տեսցուք
[11] F > են
[12] AE > առաջինն
[13] E տարբերի
[14] F ներտրամական
[15] BCDF > զի
[16] C նոյնպէս

նելով ի Հօրէ՝ ո՛չ հատանի և ո՛չ նուազի[1]: Երրորդ հասարակութիւն, զի որպէս բանն մեր յորժամ ծնանի ի մէնջ՝ գիտեմք զնա և ոչ անգիտանամք, նոյնպէս Բանն Աստուած յորժամ ծնաւ անժամանակ ի Հօրէ՝ գիտէ զնա Հայրն, որպէս ասէ աւետարանիչս, թէ «զՈրդին ոչ ոք գիտէ, բայց միայն Հայր» [Մատ. ԺԱ. 27]: Չորրորդ հասարակութիւն[2], զի մինչ տակաւին բան մեր է ի ծածուկ՝ ոչ ոք գիտէ զնա, բայց միայն միտքն, իսկ յորժամ յայտնեմք զնա ի ձեռն լեզուի և մակալեզուի՝ յայնժամն[3] յայտնի լիցի[4] լսողացն, այսպէս Բանն Աստուած, յորժամ էր ի ծածուկ ի ծոց Հօր՝ ոչ ոք գիտաց զնա, բայց միայն Հայր[5], իսկ յորժամ ծնաւ ի կուսէն Մարիամայ՝ ապա յայտնեցաւ ամենեցուն: Հինգերորդ, զի մինչ տակաւին ևս բանն ոչ է ծնեալ ի մտաց մերոց՝ ոչ ներգործէ, այլ է անգործ առ արտաքոյսն, այսպէս Բանն Աստուած ոչ ինչ ներգործէր վասն փրկութեան աշխարհի՝ թէ ոչ էր ծնեալ ի կուսէն: Վեցերորդ, զի որպէս բանս մեր է երկակի, այսպէս Բանն Աստուած է կրկին տեսութիւն՝ մին անկերպ ի Հօրէ, երկրորդ՝ կերպանալն ի մօրէ: Եւթներորդ, զի որպէս[6] ներտրամադրեալ բանս մեր[7] է անչափ և անքանակ, նոյնպէս[8] Բանն Աստուած է ի ծոց Հօր[9] անչափ և անքանակ: Ութերորդ, զի որպէս բանս[10] ծածկի և զգենու զբայ[11] և զփաղառութիւն՝ բայց ոչ փոփոխի ի բնութենէ իւրմէ, այսպէս Բանն Աստուած թէպէտ միացաւ ի մարմնի՝ ո՛չ փոխեցաւ ի բնութենէ իւրմէ: Իններորդ, զի որպէս յանմարմին բանն մեր[12] ոչ հասանեն[13] զգայութիւնք, նոյնպէս յանմարմին Բանն Աստուած[14] ոչ հասանեն[15] միտք: Տասներորդ, զի որպէս բանն մեր ծնանի ի մտաց և ոչ ծնանի զմիտքն[16], այսպէս Բանն Աստուած ծնանի ի Հօրէ և ոչ ծնանի զՀայր: Մետասաներորդ, զի որպէս բանս մեր ոչ է անսկիզբն և անպատճառ, այլ ունի սկիզբն և պատճառ զմիտքն, նոյնպէս[17] Բանն Աստուած ունի սկիզբն և պատճառ զՀայր: Երկոտասաներորդ, զի որպէս բանս մեր ոչ թողու երբէք զբնական[18] յատկութիւնս իւր՝ լինելով երբեմն բան և երբեմն միտք, նոյնպէս Բանն Աստուած ոչ թողու երբէք[19] զբնական[20] յատկութիւնս իւր՝ լինելով երբեմն Բան և երբեմն Հայր: Երեքտասաներորդ, զի որպէս բանս մեր անախտ ծնանի ի մտաց[21]՝ որպէս լոյս յարեգակնէն, նոյնպէս[22] Բանն Աստուած անախտաբար ասի

[1] AE > այսպէս Բանն Աստուած ծնանելով ի Հօրէ՝ ո՛չ հատանի և ո՛չ նուազի
[2] ACDE > հասարակութիւն
[3] F > յայնժամն
[4] F լինի
[5] D > Հայր
[6] F > զի որպէս
[7] F > բանս մեր
[8] B այսպէս
[9] B > Հօր
[10] F բանն մեր] բանս
[11] E զբառ
[12] E > մեր
[13] E հասեն, F հասանին
[14] C մեր] Աստուած
[15] E հասեն, F հասանին
[16] B զմիտս, F ի միտս
[17] BF այսպէս
[18] F զբանական
[19] B > երբէք
[20] F բանական
[21] D > ի մտաց
[22] B այսպէս

ծնունդ Հօր: Զորեքտասաներորդ, զի որպէս բանս մեր զամենայն, զոր ինչ տեսանէ միտքն՝ զայն ցուցանէ, նոյնպէս Բանն Աստուած զոր լուաւ ի Հօրէ՝ ծանոյց[1] մեզ: Հնգետասաներորդ, զի որպէս միանան միտք մեր և բան՝ բնութեամբ և էութեամբ, բայց զանազանին յատկութեամբ, նոյնպէս Բանն Աստուած և Հայր՝ մի են բնութեամբ, բայց տարբերին ըստ անճնաւորութեանց: Վեշտասաներորդ, զի որպէս բանս մեր կարելի է առանց բարբառելոյ[2] գծագրել ի քարտիսի, նոյնպէս Բանն Աստուած առանց[3] բարբառելոյ գծագրեցաւ ի կոյսն[4] Մարիամ: Եւթնևտասներորդ, զի որպէս գրեմք զբանս մեր ի քարտիսի և ապա ուսուցանեմք զոք, նոյնպէս Բանն Աստուած նախ մարմին էառ ի կուսէն և ապա բնակեցաւ ի մեզ: Ութևտասներորդ, զի որպէս բանս մեր ի ձեռն զգայական շնչոյս լսելի լինի յականջս լսողացն, նոյնպես Բանն Աստուած ի ձեռն Հոգւոյն Սրբոյ լսելի եղև յականջ կուսին: Իններևտասներորդ, զի որպէս բանս մեր ի ձեռն զգայական շնչոյս իմաստունս և գիտակս[5] առնէ զմարդիկ, նոյնպէս Բանն Աստուած ի ձեռն Հոգւոյն Սրբոյ խորագէտս և իմաստունս արար զառաքեալսն: Քսաներորդ, զի որպէս բանս մեր է միջնորդ ընդ միտս և ընդ մարդ[6], նոյնպէս Բանն Աստուած[7] է միջնորդ ընդ Աստուած Հայր և ընդ մարդկան: Քսաներորդ և առաջին, զի որպէս բանս մեր երբեմն միջնորդօք խօսի ընդ մարդկան և երբեմն առանց միջնորդաց, այսպէս Բանն Աստուած երբեմն ի ձեռն միջնորդաց մարգարէից խօսեցաւ ընդ մարդկան, և երբեմն դէմ յանդիման մարմնով իւրով: Արդ՝ այս են[8] հասարակութիւնք բանին Աստուծոյ և մերոյ:

Իսկ զանազանութիւնքն ա՛յս են: Նախ, զի Բանն Աստուծոյ գոյացութեամբ է[9], և մերս՝ պատահմամբ: Երկրորդ, զի Բանն Աստուծոյ՝ է՛ Աստուած, իսկ բան մարդոյ՝ ո՛չ է մարդ: Երրորդ, զի Բանն Աստուծոյ անփոփոխելի է, իսկ մերս՝ փոփոխական: Չորրորդ, զի Բանն Աստուծոյ դատարկ ուրեք ոչ իջանէ, իսկ մարդոյ[10] բանք դատարկ բազում ուրեք իջանեն[11]: Հինգերորդ, զի Բանն Աստուծոյ անսկիզբն է և անժամանակ, և բան մարդոյ ունի սկիզբն և ժամանակ: Վեցերորդ, զի Աստուծոյ Բանն մի է և ոչ բազում, իսկ բան մարդոյ բազում է և ոչ մի: Եւթներորդ, զի Բանն Աստուծոյ կատարեալ է և կատարող, իսկ մարդոյս՝ ո՛չ կատարեալ, և ո՛չ կատարող. ըստ այսմ սարասի ասի՝ զի առաջին իմաստասէրքն սուղ ինչ գիտէին, և վերջինքս՝ բազում և օրըստօրէ առաւելուին[12] յարուեստս գիտու-

[1] B զայն ծանոյց
[2] B բարբառոյ
[3] B թարց
[4] E սուրբ կոյսն
[5] F գիտունս
[6] E մարդիկ
[7] E > Աստուած
[8] C այսկ] այս են
[9] ACDEF > է
[10] F մարդկան
[11] ACD իջանէ
[12] C առաւելութիւն, F առաւելաւ

թիւն[1] և ի հնարս պայծառացուցանելով զարուեստս: Ութերորդ, զի Բանն Աստուծոյ միշտ ճշմարիտ է, իսկ մարդոյս՝ երբեմն ճշմարիտ և երբեմն՝ սուտ: Իններորդ, զի Բանն Աստուծոյ միշտ կարող է, վասն զի[2] զինչ կամի՝ կարէ, իսկ մարդոյս է անկարելի, վասն զի զինչ կամի՝ ոչ կարէ: Տասներորդ, զի Բանն Աստուծոյ անցնդելի և անայլայլելի է, իսկ բան մարդոյս՝ ցնդելի և փոփոխելի: Մեթասաներորդ, զի բան մարդոյս խառնակ է և բաղադրեալ, իսկ[3] Բանն Աստուծոյ՝ պարզ և անբաղադրելի: Երկոտասաներորդ, զի Բանն Աստուծոյ՝ ո՛չ ունի տեսակ, և ո՛չ բաժանի յարտաբերականս և ո՛չ ի ներտրամադրականս, իսկ մարդոյս՝ ունի տեսակս և բաժանի ի ներտրամադրականս և յարտաբերականս[4]: Երեքտասաներորդ, զի Բանն Աստուծոյ՝ է՛ Որդի Աստուծոյ, իսկ բան մարդոյ՝ ո՛չ է որդի մարդոյ: Չորեքտասաներորդ, զի Բանն Աստուծոյ ոչ անկանի ընդ սահմանաւ, քանզի ոչ[5] ունի սեռ և ոչ բաղկացուցիչ զանազանութիւնք[6], իսկ բան մարդոյ չափի սահմանաւ: Հնգետասաներորդ, զի Բանն Աստուծոյ պարբարձեալ կրէ զամենայն արարածս Բանիւ զօրութեան իւրոյ, իսկ բան մարդոյ՝ և ոչ չնչին մասն մի կարէ կրել զօրութեամբ իւրով:

Ե՛ն և այլ բազում զանազանութիւնք, բայց վասն աւուրս պատշաճի այսքան բաւական լիցի[7]:

[1] ABCD յարուեստագիտութիւն] յարուեստս գիտութիւն
[2] D > զի
[3] BF և
[4] F > ի ներտրամադրականս և յարտաբերականս
[5] F > ոչ
[6] BCDF զանազանութիւն
[7] B + Աստանօր բանս իրաւապէս առցէ զկայ

ԵՌԱՄԵԾԻ ԵՒ ԵՐԻՑՍ ԵՐԱՆԵԱԼ[1] ԲԱԶՄԵՐՋԱՆԻԿ ԵՎ ՏԻԵԶԵՐԱԼՈՅՍ ՄԵԾ ՀՌԵՏՈՐԻ ԵՎ ԱՆՅԱՂԹ ՓԻԼԻՍՈՓԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԵԾԱՑ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՐՈՏՆԵՑԻՈՅ ԱՐԱՐԵԱԼ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԲԱՆԻՆ, ՈՐ ԱՍԷ.[2] «Ո ՍՏԵՂԾ ԱՌԱՆՁԻՆ ՁՍԻՐՏՍ ՆՈՑԱ[3]» [ՍԱՂ. ԼԲ. 15]

Բնագիրը կազմված է հետևյալ վեց ձեռագրով.
A - Ձեռ. 1980, 380բ-409բ, B - Ձեռ. 10051, 108ա-138ա, C - Ձեռ. 1410, 166ա-178բ,
D - Ձեռ. 1771, 211ա-234ա, E - Ձեռ. 1760, 44ա-90բ, F - Ձեռ. 6573, 229ա-263ա:

Ներգործական իմն անխափան բնաւորեալ են միտք՝ սակս մշտաշարժ գոլոյն: Եւ զի Արիստոտէլ ի վեց տրամատէ զշարժումն՝ ի լինելութիւն ծննդեան և յապականութիւն նմին, յաճելութիւն և ի զարգացումն, ի նուազութիւն՝ որ է թարշամութիւն, տրամադրութիւն[4] որ է ըստ որակացն[5] այլայլութիւն և ըստ տեղւոյ փոփոխութիւն: Իսկ շարժումն հոգւոյն՝ ոչ զայս[6] վեց յեղանակացս, զի այսոքիկ մարմնոյ են, և նա՝ ոչ մարմին[7]: Դարձեալ, է՛ շարժութիւն ուղղական, անուաձև և խոտորնակ. նաև այսպիսի[8] շարժութիւնքս ոչ յարմարին հոգւոյն: Դարձեալ, է՛ շարժութիւն բնութեամբ, բռնութեամբ[9] և կամօք. նաև ոչ ըստ այսմ եղանակի յարմարի շարժումն հոգւոյն: Դարձեալ[10], է՛ և այլ իմն շարժումն վեցեկի՝ յետ և յառաջ, յաջ և յահեակ, ի վեր և ի վայր. նաև այսոքիկ մարմնոյ են և ոչ յարմարին հոգւոյ:

Բե՛ր տեսցուք, թէ ըստ որու՞մ է շարժութիւն հոգւոյ, քանզի ասի՝ հոգի մշտաշարժ, ինքնաշարժ, իսկ աստուածային բնութիւնն ամենևին անշարժ է[11]: Յայսմանէ երևի, թէ ամենայն, որ շարժի՝ առ կատարումն ինչ բնաւորեցան շարժիլ: Իսկ հոգի և իմացական բնութիւնքն ի պատկեր Աստուծոյ ստեղծան, և ունիմք վկայութիւն ի մարգարէէն, թէ՝ «Արար Աստուած զմարդն ի պատկեր իւր՝ ըստ պատկերի իւրոյ արար զնա[12]» [Ծնն. Ա. 27]: Արդ, որպէս տարրն ամենայն՝ եթէ հուր և եթէ ջուր, իւրաքանչիւր առ նմանն իւր ցանկայ, և մինչ ոչ գտանէ զնմանն իւր՝ ոչ հանգչի: Ըստ սմին[13] օրինակի հոգի և հրեշ-

[1] A երիցս երանեալ եռամեծին] եռամեծի և երիցս երանեալ
[2] C դարձեալ նորին Յովհաննու երիցս երջանկի և քաջ հռետորի արարեալ ի բան Սաղմոսին] եռամեծի և երիցս երանեալ բազմերջանիկ և տիեզերալոյս մեծ հռետորի և անյաղթ փիլիսոփայի հայոց մեծաց Յովհաննու Որոտնեցւոյ արարեալ մեկնութիւն բանին
[3] A նոցա ի միտ առնու, CE նոցա ի միտ առնու զամենայն գործս նոցա] նոցա
[4] EF և տրամադրութիւն
[5] ABCDF ստորակացն] ըստ որակացն
[6] C է զայս, E ըստ այս, BF յայս
[7] E է մարմին
[8] CD այսպէս
[9] E բռնութեամբ, բնութեամբ] բնութեամբ, բռնութեամբ
[10] A դարձեալ և, F և դարձեալ
[11] D > է:
[12] DF > իւրոյ արար զնա, E Աստուծոյ] իւրոյ արար զնա
[13] E նմին

*տակ[1] պատկեր[2] Աստուծոյ ստեղ-
ծան՝ ո՛չ դադարին ի շարժմանէ,
մինչև[3] փարեալ միաւորին ընդ
նախատիպն իւրեանց և ըստ չա-
փու շարժման[4] մերձաւորութեամբ
յԱստուծոյ ընդունին զմխիթա-
րութիւն՝ վասն որոյ անդադար
շարժին և ե՛ն մշտաշարժ: Իսկ
թէև այլք[5] բազումք ասին մշտա-
շարժք՝ որպէս երկինք[6], արեգակն
և այլք[7] սոյնպիսիք[8], ի բռնութենէ
հրամանին Աստուծոյ շարժին, իսկ
հոգիք և հրեշտակք յինքեանց[9]
ի բնութեանց տարփմանց շար-
ժին՝ յաղագս այսորիկ ասի հոգի
մշտաշարժ: Իսկ ապա բնութեամբ
բնաւորեալ է ի մեզ ներգործական
շարժումն յամենայն խրթինս և ի[10]
խորինս զհետազօտութիւն խնդրել[11]
մինչև[12] հասցէ ի յաւարտ գիտու-
թեան ըստ օրինակի սերմանական[13]
բնութեանս՝ որ են ի յարմատս
տնկոց և ի բուսական սերմանս:
Ներգործական իմն զօրութիւն, որ
է ի նոսա, շարժէ և ոչ տայ ժուժել
թանձրութեան երկրի՝ որ թաղեալ
ունի զնոսա ընդ ինքեամբ[14], վաղ-
վաղակի հերկէ զերկիր և ի լոյս
ժամանէ, առեալ զազդումն յարե-
գակնէն՝ աճէ զաճումն ընտանի[15]:
Այսպէս և մեք ի ձեռնտուութենէ[16]
Հոգւոյն Սրբոյ և ի նպաստութենէ
աղօթից ձերոց[17] շարժական իմն
ներգործութեամբ բուռն հարցուք
զխրթնութենէ բառիցս, որ իբրև
խաւար[18] մթութեան թաղեալ ունի
զմիտս մեր, և տեսցուք, թէ զինչ է
բանս այս[19], որ ասէ, թէ[20] «Ո ստեղծ
առանձին զսիրտս նոցա, և[21] ի միտ
առնուլ[22] զամենայն գործս նոցա»:
Իսկ «ո» բառդ հիացական է,
ըստ այնմ, թէ[23] «Ո որ[24] Արարիչդ ես
ջրոյ» [Յուդիթ. Թ. 17], և թէ[25] «Ո
արար զերկինս և զերկիր[26]» [Սաղ.
ՃԺԳ. 15; ՃԻ. 2 և այլուր]. զԱս-
տուած այսպիսի անուամբ իմն
վերաձայնել, որ նշանակէ զանհա-
սութիւն և զանճառութիւնն[27] Աս-
տուծոյ: Իսկ ասելն թէ[28]՝ «ստեղծ»,
իբր թէ գոյացոյց առանձինն,
իբր թէ[29] իւրաքանչիւր մարմին:
Իսկ «սիրտ» ասելն՝ գիտելի է, զի
սիրտն մարմին է թանձր, ուստի
նմա[30] միտք ուշաբերել զամենայն
գործս մարդոյ: Յայտ է, թէ ստու-
գապէս սիրտ՝ զհոգին ասէ, զի նորա
է ի միտ առնուլ զամենայն գործս
մարդկան, վասն զի այլուր ասէ.*

1 E հրեշտակք
2 D ի պատկեր
3 DEF մինչ
4 E շարժումն
5 E > և այլք
6 E > երկինք
7 E այլ
8 E այսպիսիք
9 E > յինքեանց
10 C > ի
11 BD խնդրեալ
12 DEF մինչ
13 E սերմնական
14 C ըստ ինքեան] ընդ ինքեամբ
15 C ընդունի
16 AC ձեռնտուբենէ
17 E > ձերոց
18 C խաւարաւ, F զխաւար
19 ABDEF > այս
20 E > թէ
21 DE > և
22 F առնու
23 C > թէ
24 E > որ
25 E > և թէ
26 E արարիչ երկնի և երկրի] արար զերկինս և զերկիր
27 F զանճառութիւն և զանհասութիւնն] զանհասութիւն և զանճառութիւնն
28 C > թէ
29 E > իբր թէ
30 CE է նմա

«Սիրտ իմ և մարմին իմ[1] ցնծասցէ առ Աստուած կենդանի» [Սաղ. ՁԳ. 3]: Եւ այսպէս բազում են[2] վկայութիւնք ի գիրս Աստուածաշունչ, զի սիրտ զհոգին կոչէ: Եւ այս սակս տնօրինելոյն ջերմն շնչով կենդանական արեամբ զբոլոր մարմինն և այս ներգործութեամբ հոգւոյն, զի նովաւ կենդանանայ սիրտն և զկառավարութիւն մարմնոյն[3] և ի[4] ձեռն հոգւոյն ներգործութեանց ունի: Եւ յայտնի քեզ, զի[5] յելանել հոգւոյն, թէպէտ և է՛ ինքն սիրտ՝ ոչ կենդանացուցանէ զմարմինն և ոչ կառավարէ:

Եւ կարճ ի կարճոյ լուծումն բառիս, որ եղեալ է[6] աստ. զի ե՛ն ջրհորք՝ որ յերես ունին զջուր, և ե՛ն՝ որ խոր: Իսկ որ[7] երեսք են՝ ի խոր փորել յիմարութիւն է, և որ խոր[8] ունի՝ յերես[9] փորել և դադարել՝ անմտութիւն է: Այսպէս և Գիրք Աստուածաշունչ[10] ե՛ն, որ մօտաւոր[11] ունին զգիտութիւն, և ե՛ն, որ ի[12] խոր. զիւրաքանչիւր խնդիր ըստ իւրում պատշաճի պարտ է խնդրել՝ ըստ այնմ, թէ՝ «Կթեա կաթն և եղիցի կոգի, և թէ առաւել ճմլեսցես[13] եղիցի[14] արիւն» [Առակ. Լ. 33]:

Բե՛ր աստանօր որով[15] հանդերձեցաք ի գործառնութիւն Աստուածաշունչ մատենիս՝ նախ պարտիմք Աստուծոյ սկսանել[16] և յԱստուած աւարտել, վասն զի նա է սկիզբն և կատարած ամենայնի:

Եւ արդ, սկսցուք յԱստուծոյ և զայս[17] իմանալի նկատմամբ հաւատոյ տեսութեամբ: Եւ է՛ հաւատն կատարեալ[18] տեսութիւն[19] իմացման[20], օժանդակեալ աստուածային լուսոյ ծագմանէ: Ըստ օրինակի աչաց՝ յինքենէ ունելով զլոյս բնական՝ օժանդակեալ ի լուսոյ արեգական[21], և նովաւ հանդերձ առնէ[22] զընտրողութիւն[23] գունոց: Այսպէս և միտք՝ բնական հայեցմամբ լուսոյ՝ օժանդակեալ ի ծագմանէ լուսոյն Աստուծոյ, սովաւ դատէ և ընտրէ զամենայն իմանալի գոյութիւնս: Զի սկիզբն շարժման բնական լուսոյն խառնեալ լոյս[24] աստուածային՝ առնէ զսկզբնաշարժ լոյսն, որ է յոյս, խառնեալ՝ առնէ հաւատս. և նովին յուսով և հաւատով հաստատի ի սէրն Աստուծոյ:

Իսկ մեք, ըստ առաքելական բանին, որ ասէ, թէ[25] «Հաւատալ պարտ է, թէ է՛ Աստուած» [Եբր. ԺԱ. 6], նովին հաւատով հաւատամք, թէ է՛ Աստուած և մի՛ է Աս-

---

1 F > իմ
2 D > են
3 E մարմին
4 F > ի
5 E ի
6 ABDE > է
7 C որք
8 C ի խոր
9 C յերեսք
10 CF Աստուածաշունչք
11 F մտաւոր
12 EF > ի
13 D ճմլես
14 D եղի
15 C որովհետև
16 A սկսանիլ
17 EF > և զայս
18 ABDF կատարումն, C նկատումն
19 F տեսութեան
20 C իմացական, D իմացմամբ
21 ABDEF > օժանդակեալ ի լուսոյ արեգական
22 E > առնէ
23 E զընտրութիւն
24 C ի լոյս
25 C > թէ

տուած՝ անհաս, անորակ, անքանակ, անուր, աներբ, անեղ՝ զի ո՛չ է յումեքէ եղեալ, այլ նոյն ինքն ինքնագոյ գոյութիւն, ի վեր[1] քան զամենայն գերագրական գոյութիւն, նախակատար[2], ինքնակատար, մի և միակ՝ էութեամբ, բնութեամբ, իշխանութեամբ, զօրութեամբ, աստուածական ներգործութեամբ. ըստ այնմ. «Լուր, Իսրայէլ, տէր Աստուած քո Տէր մի է» [Բ. Օրէնք. Զ. 4; Մար. ԺԲ. 29], և թէ[3] «Ծաներուք, թէ ես եմ և ոչ գոյ այլ Աստուած՝ բաց յինէն» [Եսայ. ԽԳ. 10], և Եսայի, թէ՝ «Ես առաջին և ես՝ առ յապայ» [Եսայ. ԽԴ. 6], և ի տեսիլն Յովհաննու, թէ[4] «Ես եմ ալֆա և օմեգա» [Յայտ. ԻԲ. 13], այսինքն՝ առաջին և վերջին:

Երկրորդ, հաւատամք ի մի էութիւն և ի մի բնութիւն աստուածութեան երիս անձինս՝ զՀայր և զՈրդի և զՀոգին Սուրբ. զՀայր՝ անծին, անեղ, անսկիզբն, զի ոչ է յումեքէ եղեալ, և ոչ յումեքէ ծնեալ[5], և ոչ յումեքէ սկսեալ, այլ ինքն է սկիզբն և պատճառ ամենայնի՝ պատճառ անպատճառից և որոց պատճառաւ. պատճառ անպատճառից, այսինքն՝ Որդւոյ ծննդեան և Հոգւոյ բղխման, զի ընդ ինքեան և ընդաբոյս պատկեր և նկարագիր էութեան նորա՝ վասն որոյ[6] անպատճառաւ, իսկ պատճառաւորաց, այսինքն՝ իմանալեաց և զգալեաց, գոյից յանգոյից: Եւ օրինակաւ արտադրեսցուք՝ որպէս[7] լոյս և ջերմութիւն արեգական և կամ թէ լոյս և ջերմութիւն հրոյ, զի որպէս սոքա[8] առանց լուսոյ և ջերմութեան անհնար է լինել արեգական և[9] կամ հրոյ[10]: Այսպէս և Հայր Աստուած առանց Որդւոյ և առանց Հոգւոյն Սրբոյ, զի նոքա են նորա լոյս փառաց և նկարագիր[11] էութեան նորա[12]: Եւ ոչ է ժամանակ ընդ մէջ ծնիցելոյն և ծնողին, զի որպէս անհնար է արեգական և հրոյ առանց լուսոյ և ջերմութեան գոլ, այլ որքան հուրն հուր է[13] լոյս և[14] ջերմութիւն ընդ նմա է[15]: Այսպէս և որքան Հայրն Հայր է[16] Որդի և Հոգի ընդ նմա է[17] և[18] ոչ է ժամանակ ընդ մէջ ծնօղին և ծնիցելոյն. այլ որքան Հայրն Հայր և ծնեալն ծնունդ և բղխեալն բղխումն՝ երեքեանքն անեղ, երեքեանքն ինքնակատարք[19] և նախակատարք[20], զոյգ և հաւասար Աստուած[21] ի մի էութիւն և ի մի բնութիւն:

Երրորդ, հաւատամք զմիածին Որդին ծնեալ անախտաբար ի Հօրէ՝ որպէս բան ի մտաց, զոյգ և հաւա-

[1] EF նախակատար ի վեր
[2] EF > նախակատար
[3] C > թէ
[4] ABCDE > Ես առաջին և ես՝ առ յապայ, և ի տեսիլն Յովհաննու, թէ
[5] D > և ոչ յումեքէ ծնեալ
[6] E այն
[7] E > որպես
[8] C սոցա
[9] C > և
[10] C հուր
[11] C նկար
[12] BE > նորա
[13] C > է
[14] E > լոյս և
[15] C > է
[16] C > է
[17] C > է
[18] DE > և
[19] C ինքնակատար
[20] ABCD նախակատար, E > և բղխեալն բղխումն՝ երեքեանքն անեղ, երեքեանքն ինքնակատարք և նախակատարք
[21] ABCDF աստուածք

սար ծնողին՝ անեղ, անժամանակ, անքանակ, անուր, աներբ, ամենակարող, ամենակալ Աստուած:

Զորրորդ, հաւատամք[1] զՀոգին բղխումն ի Հօրէ՝ ըստ այնմ, թէ «Հոգին, որ ի Հօրէ ելանէ» [Յովհ. ԺԵ. 26], զոյգ և հաւասար բղխողին՝ անեղ, անորակ, անքանակ, անժամանակ, անուր, աներբ, ամենակարող Աստուած, ամենակալ, զոյգ և հաւասար բղխողին և էակից միածին[2] փառակցին[3]:

Հինգերորդ, հաւատամք զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին զոյգ և հաւասար ստեղծող արարածոցս, ո՛չ ըստ մասանց արարիչ և բաժան կամք և նախախնամութիւն իւրաքանչիւրոցն, այլ երիցն՝ մի՛ բնութիւն, մի՛ կամք, մի՛ ներգործութիւն: Զոյգ[4] և հաւասար Աստուած[5] Հայր և Որդի և Սուրբ Հոգին՝ ո՛չ ոմն առաւել և[6] նուազ ըստ[7] անեղութեան և ըստ զօրութեան, այլ ամենայնի զոյգ և հաւասար Աստուած:

Վեցերորդ, հաւատամք ամենայն մարդկային բնութեանս, որոց հետևի զղջումն և ատելութիւն առ մեղս, յամենախնամ Արարչէն թողութիւն անյապաղ, ըստ այնմ, թէ՝ «Ասա դու նախ զանօրէնութիւնս քո և արդարասցիս» [Եսայ. ԽԳ. 26], և թէ՝ «Ինձէն պատմեցիր զմեղս իմ և դու թողցես զամենայն ամբարշտութիւնս մեղաց իմոց» [Սաղ. ԼԱ. 5]:

Եւթներորդ, հաւատամք զյարութիւն ամենայն ադամային[8] ծննդոցս, ըստ այնմ, թէ՝ «Յարիցեն մեռեալք, կենդանասցին[9] ամենեքեան[10], որ եդեալ են ի գերեզմանի[11]» [Ա. Կորն. ԺԵ. 52], և թէ՝ «Ամենեքեան[12], որ ի գերեզմանս կայցեն, լուիցեն ձայն ի Որդւոյն Աստուծոյ և եկեսցեն[13] արտաքս» [Յովհ. Ե. 28-29]:

Ութերորդ, հաւատամք զմարդեղութիւն բանին Աստուծոյ, որպէս[14] ասէ Յովհաննէս աւետարանիչն, թէ՝ «Բանն մարմին եղև» [Յովհ. Ա. 1], և ըստ առաքելոյն, թէ՝ «Առաքեաց Աստուած զՈրդին իւր, որ եղև ի կնոջէ և եմուտ ընդ օրինօք» [Գաղ. Դ. 4]: Եւ զեղանակն որպիսութեան պատմէ Գաբրիէլ հրեշտակապետն, թէ՝ «Հոգին Սուրբ եկեսցէ ի քեզ և զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո. ահա յղասցիս և ծնցիս Որդի» [Ղուկ. Ա. 35], քանզի, որ ի նմայն ծնեալն է՝ ի Հոգւոյն Սրբոյ է, զի ընդ աւետել հրեշտակապետին և ընդ պատրաստել Հոգւոյն[15] Սրբոյ[16] զարգանդ կուսին՝ եմուտ Բանն Աստուած և ըստ մեզ կատարեալ մարդ եղև[17], ըստ որում ասէ առա-

[1] DF հաւատամ
[2] ABDEF միածնին
[3] E էակից Հօր և փառակից Որդւոյ] զոյգ և հաւասար բղխողին և էակից միածնին փառակցին
[4] C վասն որոյ զոյգ
[5] CDF աստուածք
[6] E կամ] և
[7] AB ընդ
[8] Dմարդկան [Ադամային], E մարդկային] Ադամային
[9] E և կենդանասցին
[10] F ամենայնքն
[11] D > են ի գերեզմանի
[12] B ամենքն, DF ամենայնքն
[13] C > Աստուծոյ և եկեսցեն արտաքս
[14] DEF որ
[15] F > Հոգւոյն
[16] ABCDF > Սրբոյ
[17] EFմարդ եղև կատարեալ] կատարեալ

քեալն՝ «մարդն Յիսուս Քրիստոս» [Ա. Տիմ. Բ. 5]:

Իններորդ, հաւատամք ի մարդեղութիւն Բանին Աստուծոյ[1] յղացեալ, մարդացեալ ի յարգանդ կուսին, ի Հոգւոյն Սրբոյ ծնեալ յաշխարհ կուսական բերմամբ, զկուսութիւն ծնողին անխախտ[2] պահեալ, զի էր համանգամայն Աստուած և մարդ, վասն որոյ՝ յղութիւնն՝ մարդկաբար[3], իսկ առանց սերման՝ աստուածաբար[4], այսպէս ծնանելն[5] մարդկաբար, զկուսութիւնն անխախտ պահեալ՝ աստուածաբար[6]:

Տասներորդ, հաւատամք զԲանն Աստուած ըստ մերում տեսակի աճեալ և զարգացեալ ի չափ կատարման հասակի մարդկութեանս, իսկ յերեսնամեայ ժամանակին հրաշագործեալ զաստուածաբարն մարդկութեամբ ի կաղս, ի կոյրս, յայսահարս և ի մեռեալս: Հրաշագործեալ[7] ոչ սոսկ աստուածութեամբ, այլ խառն՝ մարդկութեամբն միաւորեալ աստուածութեամբն, զի միևնոյն ներգործող[8]. հաւատամք աստուածայնոյն և մարդկայնոյն[9] զմարդն Յիսուս Քրիստոս, և ոչ այլ և այլ և մի իւիք լիցի կարծել:

Մետասաներորդ, հաւատամք զՏէրն փառաց ըստ մերում տեսակիս մարդ եղեալ, այսինքն՝ չարչարեալ, խաչեալ, զմահ ճաշակեալ՝ ոչ ըստ բնութեան[10] աստուածութեանն, այլ ըստ միաւորութեանն տնօրէնութեան մերով բնութեամբ, վասն որոյ ասէ Գրիգոր Աստուածաբանն. «Աստուած վասն իմ խաչեալ, վասն որոյ արեգակն խաւարեալ»:

Երկոտասաներորդ, հաւատամք զԱստուած Բանն ի մահուանն[11] անբաժանելի ի հոգւոյն և ի մարմնոյն՝ ընդ մարմինն[12] անբաժանելի խառնմամբ ի գերեզմանին և հոգին անբաժանելի խառնմամբ[13], վասն որոյ՝ երթեալ ի դժոխս, քակեաց զդրունս դժոխոցն և զարգելեալսն ի բանտէն[14] եհան, որպէս հովիւ քաջ զհօտն իւր յափշտակէ[15] ի գողոց, գերեաց զգերեալսն և եհան ի բանտէ խաւարին: Եւ եկեալ աստուածախառն հոգին յաստուածախառն մարմինն յարուցեալ ի գերեզմանէն, ըստ այնմ, թէ՝ «Քրիստոս[16] յարուցեալ է ի մեռելոց, առաջին պտուղ ննջեցելոցն» [Ա. Կորն. ԺԵ. 20]:

Երեքտասաներորդ, հաւատամք զՏէր մեր Յիսուս Քրիստոս յետ յարութեանն համբարձեալ յերկինս, նստեալ ընդ աջմէ Հօր, որպէս ասեն[17] Մարկոս և Ստեփանոս, թէ[18] «Տեսանեմ զՈրդին Աստու-

մարդ եղև
[1] C > Աստուծոյ
[2] E անախտ
[3] AB մարդաբար
[4] E ծնանելն աստուածաբար
[5] E > այսպէս ծնանելն
[6] ABDEF > մարդկաբար, զկուսութիւնն անխախտ պահեալ աստուածաբար
[7] E > հրաշագործեալ
[8] BDEF ներգործեալ
[9] EF > և մարդկայնոյն
[10] E ինքեան] բնութեան
[11] E մահուն
[12] ABDEF նմին
[13] ABDEF > ի գերեզմանին և հոգին անբաժանելի խառնմամբ
[14] ACE բանտին
[15] C յափշտակեալ
[16] E Յիսուս Քրիստոս
[17] ABDEF ասէ
[18] ABCDF > թէ

ծոյ՝ նստեալ ընդ աջմէ Հօր» [Մար. ԺԶ. 19], անբաժանաբար նովին մարմնով: Եւ ոչ որպէս երկաբնակքն թողեալ զհաւատոյ տեսութիւն բնական քննութեամբ տեղի խնդրեն մարմնոյն՝ ըստ աղանդոյ սարիկիինոսացն[1], որ և զայնպիսիսն[2] նզովէ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի:

Զորեքտասաներորդ, հաւատամք զՏէր մեր Յիսուս Քրիստոս գալ նովին մարմնով և փառօք Հօր հրեշտակօք սրբովք. որպէս ասէ Աւետարանն, թէ՝ «Գայցէ Որդի մարդոյ փառօք Հօր իւրոյ և հրեշտակօք սրբովք[3]. յայնժամ բաժանեսցէ զօդիսն յայծեացն, և ցօդիսն ասասցէ՝ եկայք աւրհնեալք Հօր իմոյ, և ցայծիսն ասասցէ՝ գնացէք անիծեալք Հօր իմոյ[4]» [Մատ. Իե. 31-32], և առաքեալն ասէ. «Մեզ յանդիման լինել կայ առաջի ատեանին Քրիստոսի, զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնովն, զոր ինչ գործեաց՝ եթէ բարի և եթէ չար» [Բ. Կորն. Ե. 10]:

Եւ արդ, որովհետև յառեցաք ի լոյսն ճշմարիտ և ի նմանէ լուսաւորեալ բե՛ր ձեռնարկեսցուք ձեռնտուութեամբ[5] Հոգւոյն Սրբոյ ի մեկնութիւն բանիցս: Եւ նախքան զամենայն յիմաստասիրութիւն քննութեան հոգւոյն պարտիմք զկարծիս տարբեր[6], որ յաղագս հոգւոց մարդկան՝ եթէ յարտաքնոցն է և եթէ ի ներքնոց, արտադրել թուով տասն և զեղծմունս նոցա ընդ նմին և զկնի զճշմարտութիւնն հաւատալ[7] որով յայտնի լիցի նախակատար, ինքնակատար սկիզբն ի ձեռն վայելչական պատկերի արտադրութեան:

Բե՛ր սկսցուք[8], քանզի նախ, ոմանք յարտաքին իմաստասիրաց զհոգին մարմին գոլ ասացին: Երկրորդ, ոմանք ասացին էութիւն անմարմին գոլ, բայց ոչ գոյութիւն, այլ պատահումն: Երրորդ, ոմանք ասացին էութիւն անմարմին գոլ և գոյութիւն՝ ըստ բազմազան տեսակաց բազմազան հոգի: Զորրորդ, ոմանք ասացին էութիւն անմարմին, գոյութիւն եռամասնեայ: Հինգերորդ, ասացին ոմանք նախ ստեղծեալ Աստուծոյ զհոգիք[9] և եդեալ յերկինս և օրէնս նոցա, և այժմ ըստ անցման[10] օրինաց և ըստ ժամանակի բերէ արկանէ ի մարմին մարդոյ: Վեցերորդ, ասացին ոմանք ի գոյութենէն Աստուծոյ լինել զհոգի մարդոյ: Եւթներորդ, ասացին ոմանք ի ծնողացն գոյանալ: Ութերորդ, ոմանք[11] ասացին ոչ[12] ի ծնողացն, այլ էութիւն անմարմին, բայց ի մարմնի ստացեալ: Իններորդ, ասեն ոմանք՝ նախախնամութեամբ գոյանալ: Տասներորդ, թէ Արարիչն նո՛ր ստեղծանէ ըստ իւրաքանչիւր գոյութեան[13]

[1] E որ ի կինիկոսացն] սարիկինոսացն
[2] C զայնպիսի ասացօղսն] զայնպիսիսն
[3] ABDEF > որպէս ասէ Աւետարանն, թէ գայցէ Որդի մարդոյ փառօք Հօր իւրոյ և հրեշտակօք սրբովք
[4] ABDEF > Հօր իմոյ
[5] ABC ձեռնտուութեամբ
[6] ABDEF տարբերութեան
[7] C հաստատել
[8] BCD տեսցուք
[9] E զհոգիս
[10] CD յանցման
[11] ABCDF > ոմանք
[12] D ոմանք ոչ
[13] E գոյացութեան

մարմնոյ[1]: Մետասաներորդ, զկնի սոցա զճշմարիտն արտադրեսցուք, որ[2] ուղղափառաց[3] է կարծիս[4]:

Բե՛ր ձեռնարկեսցուք ի կարծիսն առաջին, որք ասացին մարմին գոլ զՀոգին, և զեղծմունս նմին ըստ տասն կերպի արտադրեսցուք: Իսկ որք մարմին ասացին զՀոգին, ըստ այսմ օրինակի. իբր թէ բոյսք և տունկք ջրով[5] կենդանանան, և մարմինք[6] զգայական շնչով կենդանանան[7]: Ապա ուրեմն յայսմանէ երևի, թէ մարմին է Հոգին, զի և շունչ և ջուր մարմին գոլով՝ կենդանացուցանեն զմարմինս. անօսր մարմին՝ զթանձր մարմինն՝ այս կերպացուցիչք բանի նոցա:

Բե՛ր տեսցուք[8] և զեղծմունս նոցա: Նախ, ըստ Ամոնայ վարդապետի և Նումենայ Պիթագորականի, զի նոքա ասացին, թէ ամենայն մարմին ցրական և լուծական և փոփոխական գոյ՝ կարօտ է շարունակողի և շաղկապողի, իսկ մարմին զի՞արդ կարէ ի միում ամանակի ցրական և շաղկապող գոլ՝ որ է անհնար: Երկրորդ, զի[9] հոգւոյ պարտի[10] պարզ և անօսր գոլ, զի յորս լինի՝ ընդ ամենայն թափանցանի և զամենայն մասունս մարմնոյն հոգևորէ, իսկ մարմնոյ այս ոչ պատշաճի, զի թանձր գոլով՝ ոչ կարէ թափանցանել: Երրորդ, զի հոգի կենդանի պարտի գոլ և ընդ որս հաղորդի՝ կենդացուցանէ, իսկ մարմին է՛ անկենդան, զի մարմին յիմաստասիրաց «ընդյարմ» կոչի՝ որ է անկենդան: Չորրորդ, զի ամենայն մարմին նիւթ է, և ամենայն նիւթ կարօտ է տեսակի և ապա կատարեալ լիցի, իսկ կատարեցուցիչ նիւթոյ ոչ այլ ինչ է, եթէ ոչ տեսակ նմին: Եւ թէպէտ յանզգայսն և յանկենդանսն այլ իմն են տեսակ, այսինքն՝ որակք, իսկ ի[11] տնկականն՝ տնկական կենդանութիւնն է տեսակ, և ի[12] զգայականն՝ զգայականն, և ի[13] բանականն՝ բանականն: Հինգերորդ, զի մարմին ինքն ըստ ինքեան ոչ է ներգործական, այլ կարօտ է ներգործական զօրութեանն, զի նովաւ եղիցի լրումն բոլորին: Իսկ թէ ներգործականն ոչ է նիւթ, այլ տնկականն և զգայականն և բանականն են ներգործական[14], յայտ ուրեմն է, որ ոչ է մարմին հոգի: Վեցերորդ, զի մարմին ինքն ըստ ինքեան ոչ ունի շարժութիւն, իսկ հոգին պարտ է[15] շարժող գոլ, զի է՛ ինքնաշարժ, մշտաշարժ: Եւ այս յայտնի է յանասուն կենդանիքն, յորժամ ելանէ շունչն ի մարմնոյն՝ անշարժ ընկեցեալ գոլ[16] մարմինք նոցա: Յայտ է, թէ ոչ է մարմին հոգի, զի յորժամ էր տնկականն կամ զգայականն ի մարմինն, յայնժամ շարժին. տնկականն՝ ըստ կերակրականին և ըստ աճմանն, և ըստ զգայակա-

[1] E մարմնոց
[2] A > որ
[3] D կարծիս ուղղափառաց
[4] AD > կարծիս
[5] C ի ջրոյ
[6] BDEF մարմին
[7] BDEF կենդանանայ
[8] ABCD դիցուք
[9] ABDEF > զի
[10] ABDEF պատկերի
[11] E > ի
[12] ABDE > ի
[13] ABDE > ի
[14] C ներգործական նիւթ
[15] C պարտի] պարտ է
[16] BF գոն

նին՝ զտեղւոյ փոփոխումն: Եւթներորդ, զի նիւթ զմի և զնոյն ունի գոլ ըստ ինքեան նիւթ գոլ և ոչ այլ ինչ ձևակերպիլ[1] ըստ ինքեան, իսկ յորժամ հաղորդի հոգւոյ՝ կարէ զանազան[2] տեսակս և ձևս երևիլ. ապա ուրեմն՝ ոչ է հոգին մարմին: Ութերորդ, զի մարմինն ի չորից տարերց[3] բաղկանայ, իսկ չորս[4] տարերքն իւրաքանչիւր ըստ ինքեան[5] ոչ կարեն հոգի լինել՝ զորս ցուցանեմ մի ըստ միոջէ: Քանզի, եթէ զջուր ասեն հոգի գոլ, վասն զի յորս մերձենայ՝ կենդանացուցանէ, և յորմէ հրաժարի՝ չորանան[6] և խամրին[7]: Առ որս ասեմք. բազում են կենդանիք, որ ջուր ոչ ըմպեն և է՛ն կենդանիք, որպէս ասէ Գրիգոր Նիւսեայ[8], զկաքաւէ և զոմանց[9] արծուեաց[10] թէ ջուր ոչ ըմպեն՝ և է՛ն կենդանիք: Իսկ եթէ զօդ ասեն հոգի գոլ՝ յաղագս տուրևառութեան օդոյս, զի[11] սովաւ գոն կենդանիք: Եւ այս ևս երևի սուտ գոլ, զի բազումք[12] գոն կենդանիք առանց տուրևառութեան օդոյ՝ որպէս մեղուք, պիծակք, մրջիւնք, և ամենայն անարիւնք ի ջրայնոց, քանզի նա, որ ունի տուրևառութիւն չնչոյ՝ թոք ունի, և ամենայն, որ թոք ունի՝ տուրևառութիւն օդոյ ունի: Իսկ որք[13] զարիւնն ասեն հոգի՝ սուտ երևին գոլ, զի բազում են անարիւն կենդանիք, որպէս սիպէքն և տևտիդէսքն[14] և ամենայն խեցէմորթքն, որպէս կարպինոսքն[15] և աստրիակոսքն և գաղտակունքն[16] և նմանք սոցին: Յայտ է՝ թէ ո՛չ է մարմին հոգի: Իններորդ, զի ամենայն մարմին շօշափական և ըմբռնելի գոյ, իսկ թէ ըմբռնելի էր հոգի՝ նիւթն ըմբռնէր զնա և ոչ երբէք թողոյր ի բաց գնալ զնա[17]: Բայց ոչ է այսպէս, այլ ի ժամու յորում ոչ ակն ունիցի՝ ի բաց գնայ, և ոչ թէ նիւթն ոչ կարէ ըմբռնել զնա, այլև ամենայն արուեստաւորք հնարիւք իւրեանց ի թուէն ի մի ոչ[18] կարեն արգելուլ զնա: Տասներորդ, զի մարմին յորժամ հպի ի մարմին՝ յարադրութեամբ հպի, և յոր կողմն յարադրի՝ զազդումն ի յայն կողմն միայն ներգործէ, իսկ այլ ամենայն մասունք բոլորին թափուր մնան յազդմանէ[19] նորա: Իսկ հոգի ոչ այսպէս, այլ յորս մերձենայ՝ զբոլորս[20] հոգևորէ, յորս դիւրին է քեզ տեսանել ի տունկս, յանասուն կենդանիք և ի մարդ: Ապա ուրեմն՝ ոչ է մարմին հոգի: Մետասաներորդ, զի ասեն թէ մարմին է անձն նրբագոյն: Առ որս պատասխանեմք, թէ կարի նրբագոյն լիցէ, սակայն մարմին զի՞նչ[21] դարձեալ որ շարունակէ զնա,

[1] E ձևակերպեալ
[2] E ի զանազան
[3] ABDEF > տարերց
[4] ABF չորք
[5] ABDEF > ըստ ինքեան
[6] E չորանայ
[7] A համբրին, BDF համրին, E համարին
[8] F Նիւսացի
[9] E զոմանք
[10] A արծուաց, E յարծուեաց
[11] E վասն զի
[12] E բազում
[13] AC որ
[14] C տևտիեդէսքն
[15] C կարկինոսքն
[16] C գաղտակուքն
[17] C > զնա
[18] E էն ի մէջ] ի թուէն ի մի ոչ
[19] C յազդմանց
[20] CE զբոլորն
[21] EF > զինչ

քանզի ցուցաւ՝ ամենայն մարմին[1] կարօտ շարունակողի և շաղկապողի, և այս յանհունս մինչև հանդիպեսցի անմարմնոց: Երկոտասաներորդ, զի ասեն ստոյիկեանքն տեւողական իմն գոլ շարժութիւն[2] յար ի մարմին ի ներքս համանգամայն և արտաքս շարժեալ. է՛ ինչ, որ արտաքս[3] մեծութեան և որակութեան կատարողական գոլ, և է՛ ինչ, որ ի ներքս միաւորութեան և էութեան[4]: Հարցանելի է[5] ցնոսա. վասն զի ամենայն շարժութիւն ի զօրութենէ իմեքէ է՝ զի՞նչ է զօրութիւնն այն և յումէ[6] գոյացեալ: Արդ, եթէ զօրութիւնն այն՝ նիւթ, ինչ իցէ՝ կարօտ է շաղկապողի, իսկ թէ ոչ նիւթ, այլ նիւթաւոր, քանզի այլ է նիւթն, և այլ է[7] նիւթաւորն, զի նիւթաւորն հաղորդ[8] նիւթոյ ասի: Զի՞նչ արդեօք[9] իցէ հաղորդ նիւթոյ՝ թերևս նիւթ է նա, թէ՞ աննիւթ: Արդ, եթէ նիւթ է[10] զի՞արդ նիւթաւոր և ոչ նիւթ, իսկ թէ ոչ նիւթ, այլ աննիւթ ուրեմն է, և թէ[11] աննիւթ՝ ոչ է մարմին, քանզի ամենայն մարմին նիւթ է: Երեքտասաներորդ, ասեն[12], թէ ամենայն մարմին եռակի տարորոշ է, իսկ անձն ընդ ամենայն մարմինն թափանց գոլով՝ և նա եռակի տարորոշ է, յայտ է, թէ մարմին է: Առ որս ասեմք, թէ ամենայն մարմին եռակի տարորոշ է, բայց ոչ ամենայն եռակի տարորոշ մարմին է: Զի տեղի և որակ ըստինքեանց անմարմին գոն, սակայն եռակի տարորոշ մարմոյ պատահեալ[13], և[14] նոքա եռակի տարորոշ յորջորջին սակս գոլոյն յեռակի տարորոշումն: Այսպէս և անձն յեռակի տարորոշումն գոյ՝ եռակի տարորոշ է, բայց մարմին ոչ է[15]: Զորեքտասաներորդ, ամենայն մարմին կամ արտաքուստ շարժի կամ ի ներքուստ: Իսկ թէ արտաքուստ՝ անանձն է, իսկ թէ ի ներքուստ՝ անձնաւոր: Իսկ թէ մարմին է անձն և արտաքուստ և ի ներքուստ շարժի՝ լինի միևնոյնն ի ներքուստ անձնաւոր և արտաքուստ անանձն. անտեղի է զմի իր անձնաւոր և անանձն ասել՝ ո՛չ ուրեմն է մարմին անձն: Հնգետասաներորդ, զի անձն եթէ կերակրի՝ յանմարմնոց կերակրի, քանզի ուսմունք[16] կերակրեն զնա և ոչ ինչ մարմին յանմարմնոյ[17] կերակրին՝ ո՛չ ուրեմն է մարմին անձն: Վեշտասաներորդ, զի կլէանթեանքն[18] և քռիսիպեանքն ասեն՝ ոչ երբէք անմարմին անմարմնոյ նմանի, և տեսանեմք, զի ծնունդք բարոյից ախտից նմանին ծնողաց, և մարմնոյ է նմանութիւն և աննմանութիւն՝ մարմին ուրեմն է անձն: Առ որս պատասխանեմք և ասեմք՝ թէև զթիւ անմարմին գոլ, խոստովա-

[1] F > մարմին
[2] C շարադրութիւն
[3] C արտաքոյ
[4] C > և էութեան
[5] E > է
[6] DEF յումմէ
[7] CEF > է
[8] ABDEF հաղորդի
[9] C երբէք արդեօք
[10] C նիւթ է նա
[11] E > է և թէ
[12] E զի ասեն
[13] F պահեալ
[14] C > և
[15] C > է
[16] E ուսումք
[17] F մարմնոյ
[18] BD կլէունթեանքն

նիմք և թի՛ւք նմանին միմեանց[1], քանզի որոց կողմունքն համեմատին[2] որպէս վեցն և քսան և չորս: Քանզի կողմունք վեցին երկուքն[3] և երեքն, իսկ քսան և չորիցն՝ չորքն[4] և վեցն. և նմանութիւն ունին չորսն առ երկուքն[5], և վեցն առ երեքն, քանզի կրկնապատիկ է չորսն երկուցն, և վեցն՝ երիցն[6] և է՛ն անմարմին թիւք: Այսպէս ձևք անմարմին գոլով՝ նմանին միմեանց, որք[7] զանկիւնսն[8] հաւասար ունին՝ ըստ կողմանց և ըստ[9] քանակի, իւր է հաւասարն և անհաւասարն, այսպէս որակին՝ նմանն և աննմանն: Իսկ որ ասացին, թէ ոչ երբէք անմարմին անմարմնոյ նմանի, ցուցաք[10] չորիւք ձեռնարկութեամբ, զի անմարմին անմարմնոյ նմանի: Եւս զի ասէին, թէ ոչինչ անմարմին ախտակից լինի մարմնոյ, իսկ ախտակից լինի անձն մարմնոյ ի հիւանդանալն և ի հատանելն, և մարմինն՝ անձինն[11], քանզի յամաչելն իւրում[12] չառագունի և յերկնչելն՝ դեղնի: Յայտ ուրեմն է, թէ ոչ է[13] մարմին անձն: Եւթնևատասներորդ, ասէ Քռիսիպոս[14] մահ է որոշումն հոգւոյ ի մարմնոյ, և ոչինչ անմարմին ի մարմնոյ որոշի, իսկ անձն հպի և որոշի՝ ո՛չ ուրեմն է անմարմին անձն: Առ որս ասեմք, թէ[15] որոշումն հոգւոյ ի մարմնոյ ճշմարիտ է, բայց ոչ հպել անմարմնոյ ի մարմին[16], սուտ է ամենևին, քանզի գիծ քանակ գոլով[17] անմարմին՝ հպի ի մարմինն և որոշի, այսպէս սպիտակութիւն անմարմին գոլով՝ հպի ի մարմինն և որոշի[18]: Բայց հպումն ասել հոգւոյ առ մարմինն[19] ոչ է ճշմարիտ, զի ոչ[20] հպի հոգի ի մարմին[21], քանզի թէ հպի՝ ոչ կարէ բոլորն անձնաւոր գոլ, այլ այն կողմն միայն[22], յորս հպի: Բայց այժմ տեսանեմք, զի ամենայն անհատ բոլորն է անձնաւոր: Յայսմ ամենայնէ յայտ եղև՝ թէ ո՛չ է մարմին հոգի, որպէս ասացին ստոյիկեանքն ամենայն:

Բե՛ր տեսցուք և[23] զերկրորդ գլուխն, որ ասացին, թէ էութիւն անմարմին է հոգին, բայց ոչ գոյութիւն, այլ պատահումն, և որք զայս ասացին, էին՝ Դինարքոս, Գալիանոս, Արիստոտէլէս, Պիթագորաս:

Բե՛ր նախ, պատասխանեսցուք Դինարքոսի, քանզի նա յօդումն ասէ գոլ զանձն, իբր թէ մարմին նմանի քնարի, իսկ անձն՝ յօդման[24] աղեաց: Առ որս ասեմք, թէ ամենայն յօդումն զկնի էութեան է,

---

1 E մարմնոց, F մարմնոյ
2 ABC համեմատեն
3 E երկու
4 C չորսն
5 C երկուն
6 BDF առ երեքն, E երեքին
7 DEF որ, C որքան
8 E վեց զանկիւնսն
9 ABCDF ևս] և ըստ
10 A ցուցուք
11 ABCD անձնինն
12 C ումեք
13 C ինչ է
14 C Քռիւսիպոս, E Քռիսպոս

15 F > թէ
16 BDF մարմնոյ
17 BDEF գոլ
18 EF > այսպէս սպիտակութիւն անմարմին գոլով՝ հպի ի մարմինն և որոշի
19 F անմարմինն] առ մարմինն
20 F > ոչ
21 F մարմնոյ
22 EF մարմնոյ
23 F > և
24 E յօդումն

զի նախ պարտ է[1] գոլ յօդելին և ապա հետևի նմա յօդումն, քանզի ամենայն շարադրութիւն զկնի հետևի որոց շարակային, և ոչինչ արգելու զհամարիլն նոցա շարադրութիւն որոց շարադրեցաւ: Այլ հետևել[2] նոցա, արդ, պատերազմի այժմ յօդումն գոլ զանձն ըստ Պղատոնի՝ ըստ ուսմանն վերստին յիշեցմանց. իսկ ճշմարիտ է. զի ուսմունքն[3] վերստին յիշեցմունք են, սուտ ուրեմն է՝ զանձն յօդումն գոլ ասել: Երկրորդ, անձն ներհակն է մարմնոյ և զիշխանական ունի բան, իսկ յօդումն յօդեցելոց ոչ իշխէ և ոչ ներհակի՝ ոչ ուրեմն է անձն յօդումն: Երրորդ, յօդումն յաւետ կամ նուազ ասի ըստ պնդելոյն և կամ թուլացուցանելոյն, իսկ անձն ոչ ասի յաւետ կամ[4] նուազ, քանզի անհնար է ըստ բնական[5] էութեան և ըստ սահմանի զանձն իւրաքանչիւր յաւետ և նուազ[6] ասել: Զորրորդ[7], զի անձն առաքինութիւն և չարութիւն մակընդունի, իսկ յօդումն յօդումն և անյօդումն ոչ ընդունի՝ ո՛չ ուրեմն է յօդումն անձն: Հինգերորդ, անձն մակընդունելով զներհական պակաս ի մասնէ էութիւն է և ենթակայ, իսկ յօդումն որակութիւն է. ապա ուրեմն, այլ է ենթակայն և այլ է որակութիւնն՝ ո՛չ ուրեմն է[8] անձն յօդումն:

Բե՛ր տեսցուք[9] զասացեալսն Գալիանոսի, քանզի ասէ, թէ ոչինչ ոք ասաց ճշմարտիւ յաղագս անձին: Բայց նմանէ որոց ասեն փորձել յաւետ զխառնուած բնութեանն ասել անձն, քանզի այսմիկ հետևեալ[10] բարոյից զանազանութեան ասէ խառնուած գոլ անձն՝ ի Հիպոկրատայ կազմէ զբանն[11]: Իսկ թէ այս յայտ է, թէ մահկանացու գոլ զնա վարկանին, բայց ոչ զամենայն, այլ միայն զանբանն[12], իսկ վասն անձին[13] երկբայի ասելով, թէ ոչ կարէ[14] մարմնոյ խառնուած ի անձն լինել, և յայտ է յայսմանէ, թէ ամենայն մարմին խառնուած ունի զչորից տարերց, յորմէ գոյանան ամենայն[15] մարմինք: Առ որս ասեմք, եթէ խառնուած է անձն, ոչ ինչ է մարմին, որ ոչ ունի խառնուած, ապա ուրեմն՝ ամենայն մարմին անձն ունի՝ քար և երկաթ և այլ սոյնպիսիք: Բայց գիտելի է, զի նոքա ինն ասեն զխառնուած՝ ութ զվատախառնից և մի զբարէխառնից, ի յութից բաղկանալ զանբանիցն հանդերձ յաւէտիւն և նուազիւն, իսկ ի բարէխառնիցն՝ զհոգի մարդոյ[16]: Իսկ թէ այս այսպէս էր՝ պարտ էր ի քարինս և յերկաթս ըստ նուազիցն երևել[17] հոգի՝ որ և ոչ ունի և ոչ ասի[18]: Երկրորդ, թէ անձն խառնուած է՝ ըստ

---

1 C պարտի] պարտ է
2 E հետևիլ, F հետևեալ
3 F զինքն] զի ուսմունքն
4 C և] կամ
5 E բանական
6 E կամ նուազ
7 A երրորդ
8 C > է

9 F ասասցուք
10 CE հետևել
11 C զբանն կազմէ] կազմէ զբանն
12 EF զամենայն բանն
13 C բանականին
14 C ոչ է կար] ոչ կարէ
15 ABCD > ամենայն
16 AB ի մարդոյ
17 C հետևիլ
18 ABF ասուի

փոփոխման հասակին փոփոխի խառնուածն, իսկ հոգի ոչ փոփոխի. ապա ուրեմն՝ ոչ է խառնուած հոգի: Երրորդ, խառնուածն ոչ երբէք ներհականայ ցանկութեան, այլ ևս պատճառ լինի չարժութեան, իսկ հոգի հակառակի: Չորրորդ, թէ անձն խառնուած է, խառնուածն որակութիւն է, իսկ սահմանն որակութեան լինի և բացալինի առանց ենթակային ապականութեան: Իսկ անձն եթէ խառնուած էր՝ որոշէր առանց ենթակային ապականութեան՝ որ է անհնար: Հինգերորդ, ամենայն որակութիւն զգալի է, իսկ անձն իմանալի, ապա[1] ուրեմն՝ ոչ է որակութիւն անձն: Վեցերորդ, մարմնոյ[2] յարադրութիւնք, որ են խառնուածոց դիրք, եթէ ջիլք և մարմինք առոյգ են՝ զօրաւոր է մարդ, իսկ եթէ չորս տարերք ի խառնուածն որակօք հաւասար են[3] առողջութիւն բերէ, իսկ բարեչափութիւն շինուածոց՝ գեղեցկութիւն, և այսոքիկ են ի խառնուածոց բերմանց: Իսկ թէ խառնուած էր անձն, պարտ էր որքան կենդանի էր՝ ոչ տկարանալ ի զօրութենէ, և ոչ տգեղ լինել ի գեղեցկութենէ[4], և ոչ հիւանդանալ և պակասիլ յառողջութենէ: Բայց բազում անգամ պատահի կենդանի գոլ և զերեսինս զայս կորուսանել, ապա ուրեմն՝ ոչ է անձն խառնուած:

Բե՛ր տեսցուք զարտադրութիւն բանիցն Արիստոտէլի, որ զանձն կատարօնութիւն[5] ասէ, որ երևի յիւրոց բանից, թէ ոչինչ պակաս յայնցանէ[6], որք որակութիւնս ասեն և չորս օրինակաւ տարրացուցանէ զբանն: Նախ, զնիւթ և զտեսակ ասէ, ապա՝ զտեսակացեալ դէմն անձն, իբր թէ՞[7] նիւթն զօրութիւն, իսկ տեսակն՝ կատարօնութիւն[8]: Երկրորդ, դնէ զմակացութիւն և ներգործութիւն՝ որպէս քուն և արթնութիւն, իսկ համեմատ քնոյ՝ տեսանել և ոչ ներգործել, իսկ արթնութեան՝ տեսանել և գործել: Երրորդ, որպէս ենթակայական[9] նիւթ ջրոյն՝ որ ի բիբ աչաց, իսկ կատարօնութիւն[10] նորին՝ լուսոյ երակն, որ ի խելապատակէն գայ ի նիւթ ջրոյն և կատարէ զնա տեսող, և երկրորդ կատարօնութիւն յետ այնորիկ տեսանել և զանազանել[11] զամենայն գոյնս: Չորրորդ, ասէ թէ որպէս[12] արդ ի ծնեալ կորիւն չան և ոչ մին չունի[13] կատարօնութիւն, բայց զօրութիւն ունի ընդունելոյ զկատարօնութիւն, այսպէս պարտ է առնուլ և զանձին: Քանզի որպէս անձն ծնեալ յերեսք[14] կատարէ զակն[15], այսպէս աստանօր ծնեալ անձն ի մարմնի կատարէ զկենդա-

[1] BCD իսկ ապա
[2] F > մարմնոյ
[3] F > հաւասար են
[4] ABDEF > և ոչ տգեղ լինել ի գեղեցկութենէ

[5] C կատարունութիւն, D կատարասնութիւն
[6] C բերի յայնցանէ
[7] F > թէ
[8] C կատարունութիւն
[9] E ենթակայն
[10] C կատարունութիւն
[11] EF զննել
[12] ABDEF > ասէ թէ որպէս
[13] BD ոչ մի ինչ ունի, C մի ինչ ունի, E ոչ ինչ ունի] ոչ մին չունի
[14] EF յերեսս
[15] EF > զակն

նին[1]. որպէս զի առանց մարմնոյ ոչ գոլ զանձն, և ոչ է մարմին անձն, բայց ի մարմնոյ է, վասն այսորիկ ի մարմնի է, և ի մարմնի[2] այսպիսումն ինքն ըստ ինքեան ոչ գոյ[3]:

Առ որս պատասխանեմք. նախ, սուտ գոլ, զի զկրական[4] մասն անձինն[5] ասաց անձն և ոչ բանական: Է՞ր վասն՝ յաղագս տկարութեան մտաց, զի ոչ կարաց հաւաստեաւ զանազանել, սակս այնորիկ բացասեաց[6]: Երկրորդ, զի զօրութեամբ կեանս ունել ասէ մարմնոյ՝ նախքան զլինել անձինն, քանզի ասէ մարմին զօրութեամբ կեանս ունի յինքեան: Արդ, պարտ է, զի մարմին ներգործութեամբ լինել, և ապա զօրութեամբ կեանս ունել, իսկ մինչ ոչ է զտեսակն առեալ նիւթ՝ զօրութեամբ է մարմին, իսկ զօրութեամբ մարմինն զի՞արդ զօրութեամբ կեանս ունել ասի յինքեան՝ որ է անհնար: Երրորդ, զի ի վերայ այլոցն կարէ ունել ինչ և ոչ վարիլ նովաւ, որգոն՝ երեսս ունել և ոչ վարել նովաւ, որպէս ի ժամ քնոյն և ի խփել աչաց: Իսկ ի վերայ անձինն անհնար է, քանզի թէպէտ ի քուն գոլով անձն զիւր ներգործութիւնն անխափան կատարէ. զի տայ և առնու չունչ, կերակրի և աճէ, զի[7] երազս ածէ ընդ ամենայն, որ նշանակէ հաւաստի կելոյն: Յայսմանէ յայտ է, զի զօրութեամբ կեալ[8] հոգւոյ անհնար է, այլ միշտ ներգործութեամբ, զի որ տեսակագործէ զանձն, ոչ այլ ինչ է, քան զկեանս, և զի անձին տնկակից է կեանք, մանաւանդ թէ նոյն ինքն կեանքն է նկարագիր էութեան անձին, բայց մարմնոյ ըստ հաղորդութեան: Զորրորդ, զի մարմնական էութիւն պակաս մասն[9] է ներհակացն[10] է ընդունական ողջութեան[11] և հիւանդութեան, իսկ որ ըստ[12] տեսակին՝ և ոչ բնաւ, զի թէ տեսակն փոխի՝ ոչ է նոյն տեսակն, սակս այն[13] ոչ ասի տեսակն ներհակաց ընդունական[14]: Եւ թէ վա՞սն էր ոչ ընդունի տեսակն զներհակսն, զի ոչ է ենթակայ, որպէս մարմին որակաց և հոգի ուսմանց, զի[15] ոչ է գոյացութիւն, այլ պատահումն, այսինքն՝ որակացն[16] առաւելութենէ կամ նուազութենէ կազմեալ: Հինգերորդ, զի անշարժ գոլ ասէ զանձն ըստ ինքեան և պատահմամբ շարժի: Եւ օրինակաւ հաստատէ[17], թէ գեղ[18] կնոջ և արծաթ և ոսկի անշարժ գոլով շարժեն զմեզ: Եւ այս օրինակ կարի օտար իմն է ի բանէս և սուտ, զի գեղն անշարժ, զշարժուն մարդն շարժէ, իսկ ըստ նմա[19] ասացուածոցն՝ հոգի անշարժ և մարմին անշարժ՝ զի՞արդ շարժէ անշարժն զանշարժն, քանզի թէ մարմին ըստ

1 E զկենդանութիւն
2 F > և ի մարմնի
3 ABDEF գայ
4 E զկրկին
5 A անձնինն
6 DF բացասաց
7 AD քանզի, C և
8 E կալ
9 ABCDE ի մասն
10 BD ներհականացն
11 C առողջութեան
12 E > ըստ, F ընդ
13 F սակայն] սակս այն
14 F ընդունակն
15 C և զի
16 BD որ ասաց] որակացն
17 A հաստատի
18 D զգեղ
19 C այնմ, E նորա

ինքեան շարժութիւն ունէր՝ կարէր անշարժ հոգին շարժել զնա: Արդ, ուստի՞ է մարմնոյ շարժել, եթէ ոչ յանձնէ, զի ըստ ինքեան անշարժ է մարմին, և զի սխալեաց Արիստոտէլ՝ կամելով առաջին շարժութիւն ցուցանել՝ երկրորդ շարժութիւն եցոյց: Իսկ թէ առաջին շարժութիւն զտարերցն զծանրն և զթեթևն ասասցես, քանզի եթէ ծանր և թեթևն յիւր վայր ժամանեալ՝ ոչ դադարէին, արժան էր ասել զծանրն և զթեթևն շարժութիւն: Իսկ արդ[1], յորժամ իւրաքանչիւր յիւր վայրն հասեալ[2] անշարժ մնայ, յայտ է՝ թէ մարմին ոչ ունի[3] շարժութիւն, իսկ ծանրն և թեթևն ոչ են[4] շարժութիւն, այլ որակութիւն: Վեցերորդ, թէ[5] ըստ պատահման շարժի անձն, իսկ մարմին ըստ ինքեան[6], և առանց անձին մարմին յինքենէ շարժեսցի՝ կենդանի եղիցի մարմին[7] ըստ ինքեան՝ աւելորդ եղիցի հոգի: Եւթներորդ, ասելն ամենայն, որ բնութեամբ շարժուն[8] է՝ և բռնի[9] շարժի, և որ բռնի շարժի՝ և բնութեամբ շարժուն է: Եւ այս ևս սուտ է. քանզի աշխարհ՝ և բնութեամբ շարժուն[10] բռնի ոչ շարժի, այլ ոչ, որ[11] ըստ[12] բնութեան[13] շարժի՝ և բռնութեամբ դադարէ[14], քանզի արեգակն և լուսին և երկին բնութեամբ շարժին՝ բռնութեամբ և դադարել[15] ոչ կարեն: Ըստ նմին օրինակի և անձն՝ ըստ բնութեան շարժուն[16] ըստ բռնութեան[17] և դադարել[18] ոչ կարէ, քանզի դադարումն բնութեամբ շարժականի՝ ապականութիւն է[19] նմին: Եւ այսքան յաղագս[20] Արիստոտէլի՝ բաւական է յեղծմունս նորա բանից:

Բե՛ր հանդիսասցուք[21] յաղագս Պիթագորի և պատասխանեսցուք նմա, քանզի Պիթագորաս թիւ ասէ զանձն նշանակաբար նկատեալ, միշտ զԱստուած և զամենայն ընդ թուով սահմանեաց և զանձն թիւ ինքնաշարժ: Յորում և Քսինոկրատէս հետևեաց՝ ոչ զի թիւ է անձն, այլ զի ընդ թուեցելովքն և ընդ բազմացելովքն[22] է[23], և թէ անձն է, որ տարորոշէ զիրս՝ կերպս և տիպս[24] իւրաքանչիւր ուրուք ի վերայ արկանելով: Քանզի նա է, ասէ, որ զտեսակս ի տեսակացն որոշէ և տարբերութիւն ի նոսա ցուցանէ՝ այլայլութեամբ տեսակաց և բազմութեամբ[25] թուոց, և վասն այսորիկ թուելիս արար զանձն, ուստի ոչ ամենայնիւ ի բաց վճարի ի թուոց կցորդութենէ[26]:

---

1 C > արդ
2 F հասանիլ
3 BD ունին
4 C >ոչ են
5 C թէպէտ
6 A ինքեան
7 F կենդանի եղիցի մարմին
8 A շարժիւն
9 A բռին
10 ABDF շարժիւն
11 F > որ
12 E > որ ըստ
13 EF բնութեամբ
14 F դրդէ
15 F դադարիլ
16 ABF շարժիւն
17 C բռնութեամբ, ABDF բնութեան
18 C դադարիլ
19 ABDEF > է
20 F զի յաղագս
21 F հանդիպեսցուք
22 BDE բազմեցելովքն
23 F > և ընդ բազմացելովքն է
24 E ի տիպս
25 CDEF բազմութեամբք
26 F > և վասն այսորիկ թուելիս արար

Առ որս պատասխանեմ[1] և ասեմ[2], թէ անձն ո՛չ է թիւ և յայտ յայսմանէ է, զի թիւ քանակ է, իսկ անձն ոչ է քանակ, այլ էութիւն: Երկրորդ, զի անձն չարակալեալ է, իսկ թիւ ոչ է չարակալեալ: Երրորդ, զի թիւ կամ[3] դար է, կամ կոճատ, իսկ անձն ոչ դար է, և[4] ոչ կոճատ: Չորրորդ, զի[5] թիւ[6] ըստ յաւելմանն աճէ, իսկ անձն յաւելմանն ոչ աճէ: Հինգերորդ, զի անձն ինքնաշարժ է, իսկ թիւն սահմանեալ՝ անշարժ: Վեցերորդ, զի թիւ մնալով միևնոյն բնութեամբ, և ոչ մի որակութիւն, որ ընդ թուով անկանի, յեղել[7] կամ փոխել[8] կարէ զթիւ, բայց անձն միևնոյն մնալով ըստ էութեան, ըստ յաւելուածոյ[9] որակութեան կարէ յանուսումնութենէ ի մակացութիւն փոխել[10] և ի չարութենէ՝ յառաքինութիւն, ապա ուրեմն՝ ոչ է թիւ անձն: Եւ այսքան բաւական լիցի պատասխանի կարծեացն Պիթագորի:

Բե՛ր տեսցուք և[11] զերրորդ գլուխն, որ ասացին էութիւն գոլ անմարմին[12], բայց ըստ[13] իւրաքանչիւր զանազանեալ տեսակի՝ զանազան հոգի. և է այս կարծիս Կռինոսի, և Պորփիւրոսի և Թէոդորի պղատոնականի, քանզի ասէին, թէ ըստ իւրաքանչիւր տեսակի է անձն բանական[14]: Ուստի Ամղիքոս հակառակի սոցա և մերձ ի ճշմարտութիւնն, զի ասէ՝ ըստ տեսակի զանազանութեան ոչ գոլ անձն բանական[15], զի յանբան կենդանիսն յոչինչ հասակ երևի խորհուրդ կամ արուեստ առաքինութեան[16]. այսպէս և ի[17] բանականն, որքան տղայ է և մատղաշ մանուկ[18]՝ կատարեալ ունի զբանականն, թէպէտ ըստ աճմանն և ըստ հասակի կազմութեան կատարելութեան յետոյ ներգործէ զխորհուրդ և զարուեստ և զգործս առաքինութեան: Երկրորդ, զի բնութիւնս վկայէ՝ ոչ գոլ ըստ իւրաքանչիւր տեսակի զանազան անձն: Եւ յայտնի առնեմք զայս[19] ի տնկականս և ի զգայական էութիւնս, զի բիւր ազգ տեսակ տնկականաց զմի ունի հոգի[20] և զմի գործ, այսինքն[21]՝ կերակրիլ, աճիլ[22] և ծնանիլ[23]. և անհնար է այսքան բազմութեան տեսակացս, որ են ի տունկս, յայս երիցս առաւելուլ կամ պակասիլ: Սապէս և ի զգայականսն բիւր են տեսակք[24] զանազան, սակայն ամենայնքն[25] զմի և զնոյն ունին զգայութիւնս[26]. յայտ

զանձն, ուստի ոչ ամենայնիւ ի բաց վճարի ի թուոց կցորդութենէ

1 BDEF պատասխանեմք
2 E ասեմք
3 E > կամ
4 E > և
5 DEF > զի
6 C > թիւ
7 A յեղեալ
8 A փոխեալ
9 BD յաւելուածս
10 CEF փոխիլ
11 DF > և
12 ABCE անմարմնին
13 C > ըստ
14 E բաւական
15 E բաւական
16 A առաքինութիւն
17 D > ի
18 C ի մանուկ
19 C առնեմ քեզ զայս] առնեմք զայս
20 ABCD ոգի
21 C > այսինքն
22 BD աճել
23 AE ծնանին
24 F տեսակ
25 ABDEF > ամենայնքն
26 E զգոյութիւնս

է, թէ զանազանութիւն[1] տեսակացն յորակաց է և ոչ ի հոգւոց: Երրորդ, երևի սուտ[2] գոլ, զի ասացողքն[3] սոցա[4] ոչ էին ի կատարելագունիցն, այլ առաւել ի համբակագունիցն, ապա ուրեմն, ոչ պարտիմք տարբացուցանել[5] զպատասխանիս նոցա[6], զի յայտնապէս են սուտ:

Եւ մեք եկեսցուք յիմաստասիրութիւն[7] չորրորդն գլխոյ, որում հանդիսանայ Պղատոն ասելով՝ գոլ զհոգի էութիւն[8] անմարմին, եռամասնեայ՝ բան, ցասումն և ցանկութիւն: Եւ զայս ի ընութիւն էիցս նկատեաց, զի երիս[9] տեսակք են[10] կենդանեաց՝ տնկական, զգայական և բանական[11], և այսքան բաւական գոլ ի շարժութիւն գոյիցս և ոչ առաւել և ոչ[12] նուազ: Եւ յամենայն է[13] ի գործոց նոցին[14] և յառաջ եղելոց նոցին, զի գործ բանականին[15] է, զի լինի[16] առանց մարմնական գործոց[17] միայն տեսութեան նկատմամբ, և յառաջ եղեալ նորա է ընդհանուր էակն: Եւ գործ զգայականին լինի մարմնական գործեօք, և յառաջ եղեալ նորա է զգայական էակն: Իսկ գործ տնկականին է մարմնական գործեօք և առնողական և կրողական որակութեամբ՝ որ է ջերմ և ցուրտ, չոր և գէջ: Եւ զի տնկականն ունի երեք զօրութիւն՝ զսննդականն՝ որ է կերակրականն, և[18] զաճողականն[19] և զծննդականն, և յառաջ եղեալ սննդականին է կերակուրն, և աճականին[20] յառաջ[21] եղեալ է այսքան մարմին՝ որ է չափ[22] քանակութեան մարմնոյ, և ծննդականին են՝ սերմն և մէջ որով ներգործեն[23] սոքա են առնողական և կրողական զօրութիւնն: Եւ զի երեքին[24] զօրութիւնքս այս բաւական են տնկականին՝ յայտ[25] յայտմանէ է. զի տնկականն երիս[26] խնդրէ իրս ի ներգործելն իւրում՝ առաջին՝ զգոլն, երկրորդ[27] պահելն զգոլն և զքանակն. զգոլն՝ ստացեալ ծննդական զօրութեամբ, և քանակն՝ աճականաւ, և զպահել զգոլն և զքանակն[28] սննդական զօրութեամբ: Եւ սննդականն և աճականն սպասաւորեն ծննդականին, զի ծննդականն ոչ կարէ ծնանիլ[29], եթէ ոչ կերակրի[30] և աճմամբ կատարի և ի կատարմանն զնմանն ծնանի: Բայց ծանիր, զի ներքին[31]

[1] A զանազան
[2] AB ի սուտ
[3] F ասացեալքն
[4] D նոցա
[5] DEF տարացուցնել
[6] F սոցա
[7] EF յիմաստութիւն
[8] C > էութիւն
[9] E երեք
[10] ABDF էին
[11] E բնական
[12] E > ոչ
[13] C յայտ է
[14] C > նոցին
[15] F բանական
[16] C լինիցի
[17] A գործեաց, CE գործոյ
[18] C > որ է կերակրականն և
[19] C զաճականն
[20] F աճողականին
[21] C յառաջի
[22] F որչափ] որ է չափ
[23] F նորագործեն
[24] ABDEF երեք են
[25] E > յայտ
[26] E երեք
[27] E երկու
[28] F > զգոլն՝ ստացեալ ծննդական զօրութեամբ, և քանակն՝ աճականաւ, և զպահել զգոլն և զքանակն
[29] EF ծնանել
[30] F նախ կերակրի
[31] A ի ներքին

մասն տնկականին համեմատութիւն ունի ընդ անշունչսն և տարբերութիւն: Համեմատութիւն, զի որպէս սննդականն պահէ զգոլն և զքանակն՝ այսպէս անշունչն պահէ զգոլն, զքանակն[1]: Եւ տարբերին այսու, զի անշունչքն շարժին և լինին արտաքին զօրութեամբ՝ իբր[2] քար ի հրոյ, և կամ ի բռնութեանց շարժումն[3] ամենայն անշնչից[4], իսկ սննդականն՝ ներքին զօրութեամբ[5]: Եւ երկրորդ, այսու տարբերին. զի անշունչքն ունին առժամայն զբոլոր քանակն, վասն զի արտաքին պատճառն պատրաստ գտանէ զնիւթն, իսկ շնչաւորքն[6] յսկիզբն սակաւ ունին զքանակն, յետոյ աճմամբ սննդականին, ի սննդականէն ի կատարելութիւն հասուցանէ զբոլոր քանակն: Եւ զի[7] սննդականն չորս ունի զօրութիւն. նախ՝ զքարշողականն[8], երկրորդ[9] զունակականն[10] նորին կերակրով[11], երրորդ[12] զհալողականն նմին և, չորրորդ[13] զվտարողականն և զբաշխականն[14], յորմէ բոլորի քանակն ներգործութեամբ չորիւք զօրութեամբ: Իսկ ծննդականն զօրութիւն՝ որ է վերին զօրութիւն[15] տնկականին, հաղորդի ներքին մասին զգայականին՝ որ է շօշափականն, այսու՝ զի երկոքինն սկսանին[16] զներգործութիւնս ի ներքուստ, և կատարեն արտաքուստ[17]: Այս յաղագս տնկականին այսքան:

Բե՛ր ասասցուք յաղագս զգայականին: Զգայականն ունի երկոտասան զօրութիւն՝ հինգ՝ արտաքին, հինգ[18] ներքին, և երկու՝ զի ոչ են զգայութիւնք, բայց զօրութիւնք են զգայական կենդանութեան: Եւ զի հինգ արտաքին զգայութիւնքն[19] ունին[20] հինգ գործիս և հինգ յառաջ եղեալս. հինգ գործիս՝ աչս, ականջս, ռընգունս[21], ճաշակելիս և շօշափելիս, և հինգ յատուկ յառաջ եղեալս ունին՝ զգոյնս, զձայնս, զհոտս, զհամս, զշօշափական մարմինս, յորում է[22] ներգործական և կրական մարմին, այսինքն[23] ջերմ և ցուրտ, գէջ և չոր: Եւ դարձեալ ունին հինգ զգայութիւնքս հինգ հասարակ յառաջ եղեալ՝ զմեծութիւն[24], զձև, զշարժութիւն, զհանգիստ՝ որ է դադարումն, և զթիւ: Իսկ յատուկ յառաջ[25] եղեալն նախ ինքեամբ զգացեալ[26] լինի իւրաքանչիւր յիւրմէ

[1] EF > այսպէս անշունչն պահէ զգոլն, զքանակն
[2] EF իբրև
[3] ACF շարժուն, E շարժութիւն
[4] E շնչից
[5] C ներգործութեամբ] ներքին զօրութեամբ
[6] E շնչաւորն
[7] C քանզի
[8] A զքաղողականն
[9] E երկու
[10] EF զունականն
[11] E կերակրելով
[12] E երեք
[13] E չորս
[14] F բաշխողականն
[15] EF > որ է վերին զօրութիւն
[16] E սկսանեն
[17] E > և կատարեն արտաքուստ
[18] F և հինգ
[19] C զգայութիւն
[20] C ունի
[21] C ռընգունք
[22] E յորմէ] յորում է
[23] A այս այսինքն
[24] E զմածութիւն
[25] A և յառաջ
[26] A զգայացեալ, E զգեցեալ

զգայութենէ՝ որպէս գոյնն յաչաց և ձայնն յունկանէ: Իսկ հասարակ յառաջ եղեալն՝ որ է մեծութիւնն և այլն, ինքեամբ ո՛չ նախ զգացեալ[1] լինի յումեմնէ զգայութենէ, քանզի[2] մեծութիւնն միջնորդութեամբ գունոյն[3] զգացեալ[4] լինի, սակայն ինքեամբ, բայց նախ ո՛չ, այլ[5] միջնորդութեամբ գունոյն, իսկ ինքեամբ՝ զի փոփոխէ զտեսանելիս, զի այլ կերպիւ[6] փոփոխի տեսանելիքն ի մեծէն, և այլ կերպիւ՝ ի փոքուէն: Դարձեալ և երրորդ[7] յառաջ եղեալն տեսանելեացն[8], զի ո՛չ նախ և ո՛չ ըստ ինքեան[9] զգացեալ[10] լինի տեսանելեացն, որպէս գոյացութիւնն, որ պատահմամբ իմն զգացեալ[11] լինի յզգայութեացն, քանզի գոյացութիւնն ինքեամբ ոչ փոխէ զգայութիւնն[12] վասն այնորիկ ոչ զգացեալ[13] լինի ինքեամբ և ոչ նախ, այլ միջնորդութեամբ պատահմանն զգացեալ[14] լինի: Դարձեալ գիտելի է, զի երկու են միջնորդք՝ երեք՝ արտաքին և երկու՝ ներքին. արտաքին՝ որպէս օդ է միջոց աչաց, ականջաց[15] և ըռնգաց, իսկ ներքին՝ որ է որակական պատահումն մարմնոյ, որ միջնորդ են ճաշակելեաց և շօշափելեաց: Բայց զայս ևս գիտել պարտ է, զի չորս[16] են տարերք[17] ընդէ՞ր հինգ են զգայարանք: Եւ այս յայն սակս, զի յերկուց[18] տարրէ՝ ի ջրոյ և յօդոյ, խառնեալ զգալի իրս կազմեցին, քանզի ջրոյ[19] անօսրագոյնն և օդոյ թանձրագոյնն[20] խառնեալ կազմեցին զհոտ՝ յայն սակս եղև հինգ[21] զգայարան, քանզի աչք զգոյնս զգայ՝ որ զհրոյ ունի յատկութիւն երևելի գոլով, իսկ ականջ՝ զօդս, ճաշակելիք՝ զջուրս, իսկ հոտոտելիքն՝ զհոտս՝ որ է ջրոյ անօսրագոյնն և օդոյ թանձրագոյնն[22], զի ոչինչ մնասցէ ի գոյիցս արտաքոյ մարդկան գիտութեան[23]: Դարձեալ, հարկաւոր է գիտել, թէ ուստի է զգալ հնգից զգայարանացս: Եւ գիտելի է, զի գրեալ են իմաստասիրացն հոյլք, թէ ի խելապատակէն արձակին[24] երակք մաքուր[25] յարենէ, ոչ այլ ինչ ունելով, բայց միայն զլոյս անձնական, և նա տրամատի ըստ իւրաքանչիւր գործոց[26] և յորս հասանի՝ նա տայ զգալ: Եւ իւրաքանչիւր զգայարանք յերից կատարի. մին[27] ի տեսողական զօրութենէն, որ ի խելապատակէն[28]

---

1 E զգեցեալ
2 ABC քան
3 A գոյ նոյն
4 E զգեցեալ
5 AD > այլ
6 C կերպիւք
7 C է երրորդ, D երկրորդ
8 EF տեսանելոյն
9 E ինքեամբ
10 E զգեցեալ
11 E զգեցեալ
12 BDE զգոյութիւնն
13 C զգայացեալ, E զգեցեալ
14 E զգեցեալ
15 F ականջոց
16 E չորք
17 F արարք
18 E յերկու
19 E ի ջրոյ
20 F > և օդոյ թանձրագոյնն
21 ABDEF > հինգ
22 ABD թանձրոյ
23 D գիտութեան մարդկան] մարդկան գիտութեան
24 C արձակի
25 ABCF մաքուրք
26 AC գործեաց
27 C մի
28 E խելապատկէն

գայ, և մին[1] տեսականն, որ է ենթակայ նորին, և երրորդ՝ գործն՝ տեսանելով զգալին[2], որով տեսանէ և զգայ: Իսկ վասն աչաց ոմանք ասացին, թէ[3] զօրութիւն լուսոյ տեսողականին որքան յարձակի յականէն լոյսն այն և շօշափէ, և զորս շօշափէ՝ ճանաչէ: Իսկ[4] ոմանք կոնոն[5] իմն ասացին ի ծայրս լուսոյն՝ որ յականէն, և յորոյ վերայ անկանի՝ տեսանէ: Իսկ այլք ասացին՝ զկերպ իրին որպէս պատկեր ի հայելւոջ[6] լուսով անկեալ[7] յաչս և այսպէս տեսանէ: Իսկ[8] ոմանք ասացին, թէ լոյս աչացն և լոյս արեգականն միաւորեալ յայտնեն զնիւթն գունեալ լուսով: Եւ այս հիրաւի՝ զի ի գիշերի լոյս աչաց՝ առանց արեգական[9], ոչ կարէ ինչ տեսանել: Իսկ աչք՝ ըստ նախկին բանի, զամենայն առաջ եղեալս իւր նախ՝ ընտրէ զգոյնս, երկրորդ՝ զստացող գունոյն, երրորդ՝ զսեռն, չորրորդ՝ զմեծութիւնն, հինգերորդ՝ զհատուածն, վեցերորդ՝ զտեղին, ուր գոյ, եւթներորդ՝ զորպէսն[10], ութերորդ՝ զորքանն, իններորդ՝ զորքն[11], տասներորդ՝ զթիւն[12], մեռասաներորդ՝ զշարժականութիւնն[13], երկոտասաներորդ՝ զկայունն, երեքտասաներորդ՝ զողորկն, չորեքտասաներորդ՝ զխոշորն, հնգետասաներորդ՝ զհարթն, վեշտասաներորդ՝ զսուրն, եւթնեւտասներորդ՝ զբութն, ութեւտասներորդ՝ զորակութիւն տեղեացն[14]՝ զխոնաւ և զչոր, զջերմ և զգէջ:

Երկրորդ զգայարանք լսելիքն և յառաջ եղեալ զգալի[15] սորա՝ լուր, որ զգայ. նախ՝ զգոչմունք, երկրորդ՝ զձայն, երրորդ՝ որոշէ[16] զփոյթն, չորրորդ՝ զյամրն[17], հինգերորդ՝ զխոշորն, վեցերորդ՝ զողորկն, եւթներորդ՝ զմեծութիւնն, ութերորդ՝ զփոքրն, իններորդ՝ զմիջակ չափաւորն, տասներորդ՝ զբնականն[18], մեռասաներորդ՝ զանշանն, որ է ճշդումն և ճեղքումն օդոյ:

Երրորդ զգայարանքն հոտոտելիքն, որ և նա յառաջ եղեալ իւր ընտրութիւն երիս՝ զանուշահոտութիւն և զգարշահոտութիւն և զմիջակն:

Իսկ քառորդ զգայարանք ճաշակելիք, և գործ է[19] նորա զգալ[20] զառաջ եղեալն իւր, նախ՝ զհամս կերակրոց և ըմպելեաց[21]: Եւ է զգացող համոյն ծայր լեզուին և առաստաղ բերանին, և բերան քաղցրթին[22], որ մինչև[23] ի բերան ձգտեալ, զոր կոկորդ անուանեմք: Եւ ճանաչեալ ի սոցանէ համք հիւթոց. նախ՝ զքաղցրն, երկրորդ՝

[1] C մի
[2] C զզգալին
[3] E է
[4] C > իսկ
[5] BF կանոն
[6] D հայելով
[7] ACEF տնկեալ
[8] C և
[9] E > առանց արեգական
[10] F զիրն
[11] E զթիւն, F > զորքն
[12] E > տասներորդ զթիւն
[13] A > զշարժականութիւնն
[14] C տեղացն
[15] E > զգալի
[16] F որ ոչ է] որոշէ
[17] EF զյարմն
[18] E զբնականն
[19] F > է
[20] E > զգալ
[21] F զըմպելւոց
[22] CEF քաղրթին
[23] C մինչ

զդառն, երրորդ՝ զքացախուտն[1], չորրորդ՝ զթթուն, հինգերորդ՝ զփոթոթն, վեցերորդ՝ զդժուարն, եւթներորդ՝ զկծուն, ութերորդ՝ զաղին, իններորդ՝ զդէրն, տասներորդ՝ զնիհարն: Ի սոցանէ ոմանք ջերմ են և ոմանք՝ ջերմ և չոր, ոմանք՝ զով[2] կամ զով[3] և չոր, ոմանք՝ զչորեսիսն ունին: Իսկ ջուրն անորակ է[4] զի մի ի նիւթոց ինքն առանձինն է սա[5], իսկ փոթոթն յաւելուած[6] ցրտութեանն է[7], իսկ կծուն՝ յաւելուած հրոյ:

Հինգերորդ զգայարանք[8] շոշափելիք, որ հասարակ է ամենայն կենդանեաց[9] և ամենայն բոլոր մարմինն է[10] զգացող, զի եկեալ յուղեղէն տեսողական[11] զօրութիւնն և տարածեալ՝ յամենայն մարմինն տայ զգալ: Եւ է յատուկ շոշափելեաց զգալ զառաջի եղեալն իւր. նախ՝ զջերմն, երկրորդ՝ զցուրտն, երրորդ՝ զկակուղն, չորրորդ՝ զխոշորն, հինգերորդ՝ զծանրն, վեցերորդ՝ զթեթեւն, եւթներորդ՝ զկարծրն: Իսկ հասարակ շոշափելեաց և աչաց՝ խոշորն և ողորկն, խոնաւն և չորն, թանձրն և մանրն, վերոյ և ներքոյ, մեծ և փոքրն, տեղին, թաւն, լերկն, բոլորն: Այս հնգէտասանքս[12] աչացն և շոշափելեացն հասարակ են զգալի, իսկ եւթն առաջինքն որ ասացաք՝ միայն առանձին շօշափելեաց:

Այլև[13] զայս ևս գիտել պարտ է, զի Արարիչն երկուս[14] շինեաց զգայարանս, և թէ ընդէ՞ր. զի թէ միոն սխալէր՝ միւսն լնոյր զպէտսն: Այլ տեսութիւնք սոցա. աչքն ուղղակի տեսանէ, իսկ ականջն[15] և ռնգունքն՝ ոչ[16] ուղղակի[17], այլ յամենայն կողմանց[18], իսկ շօշափելիքն և ճաշակելիքն՝ ոչ ուղղակի և ոչ յամենայն կողմանց, այլ յորժամ հպի և մերձենայ յառաջ եղեալ մարմինն: Այս յաղագս արտաքին զգայարանացս այսքան բաւական լիցի[19]:

Բե՛ր ասասցուք յաղագս հինգ ներքնոյն, որ է նախ՝ հասարակ զգայութիւնն, երկրորդ՝ երևակայութիւնն, երրորդ՝ կարծիսն[20], չորրորդ՝ տրամախոհութիւնն, հինգերորդ՝ միտքն: Եւ է հասարակ զգայութիւնն յառաջին փորուած գլխոյն, յորս իւրաքանչիւր զգայարան զվաստակս իւր յանդ[21] բերէ և դնէ առաջի տեսողական[22] զօրութեանն: Եւ նա՝ իբրև գրչաւ առն ճարտարի զամենայն գրէ զկերպ իւրաքանչիւր ներգործութեանցն իւրաքանչիւր զգայարանաց՝ տրամադրէ յերևակայութիւն՝ ըստ ցեղից և ըստ տոհմից տպացուցանէ[23]

[1] ADEF խացախուտն
[2] F հով
[3] F հով
[4] F > է
[5] F > սա
[6] ABD յալելուած
[7] F ցրտութենէ] ցրտութեանն է
[8] C զգայարան
[9] F կենդանութեան
[10] F մարմնոյ] մարմինն է
[11] F տեսական
[12] C հնգէսանքս
[13] F այլ
[14] C երկուս երկուս
[15] F ականջքն
[16] F > ոչ
[17] F ուղղակի տեսանէ
[18] A կողմաց
[19] F բաւականասցի] բաւական լիցի
[20] E կարծիքն
[21] F յանդիման
[22] E տնողական
[23] BD ապացուցանէ

զիւրաքանչիւրս, և է երևակայութիւնն յեզեր հասարակ զգայականին ի վերոյ: Իսկ ի վերոյ երևակայութեանն է կարծիսն, և նա տեսանէ յերևակայութիւնն[1] տպացեալ զիւրաքանչիւր ցեղսն՝ սկսանի դատել և ընտրել զճշմարիտն ի ստէն. զյայտնին կարէ ընտրել, իսկ զայն[2], որ խրթնածածուկ է՝ ոչ կարէ ընտրել: Տայ ի տրամախոհութիւնն, քանզի նա պայծառ ունի զխոկումն յաղագս մերձ գոլոյն ի միտքն, դատէ և ընտրէ զճշմարիտն ի ստէն. զսուտն դարձուցանէ յետս՝ իբր անարժան մտելոյ ի գահոյս մտաց, իբրև զհաւատարիմ բարեկամ թագաւորի և[3] զճշմարիտն տանի յանդիման կացուցանէ իշխանական մասին, որ միտք կոչեն հոմանունակի:

Իսկ թէ ընդէ՞ր[4] ներքին կազմեցան զգայարանք[5]. վասն զի արտաքին զգայարանք[6] զմասնաւոր և զանհատ իմն[7] իմանան[8], իսկ ընդհանուրն անգիտելի մնայ: Եւ մասնականքն և անհատքն անցաւորք են, իսկ ընդհանուրն մնացական և յաւիտենական, իսկ իմացութիւնն ի մնացականսն ներգործէ[9] և ոչ յանցաւորս և յապականացուս[10]: Վասն այնորիկ կազմեցան ներքին զգայարանք՝ առ ի ճանաչել զընդհանուրսն[11], զի մի՛ ընդհանուր աշխարհի գիտութիւն[12] ճողոպրեսցի յիմաստից մարդկան, այլ ի ձեռն նոցա ամենայն ընդհանրիցն լինիմք գիտողք. զի որպէս աչքն յզգալի նիւթոյն[13] առնու գունովն զկերպ իրին՝ այսպէս միտքն յերևակայութենէն առնու զգիտութիւն ընդհանուր բոլորին: Եւ այս յաղագս այսորիկ այսքան:

Բե՛ր ասասցուք յաղագս երկուց զօրութեանց. նախ՝ յաղագս ցանկականին և ապա յաղագս[14] ցասմնականին:

Եւ գիտելի է, զի ցանկականն հանդերձ ինքեամբ տարորոշի ի չորս, զի յէիցս որում ցանկամք՝ ե՛ն ինչ, որ բարի են, և ե՛ն ինչ, որ չար, և ե՛ն ինչ, որ աստէն մերձ են, և ե՛ն ինչ, որ ակնկալլիք[15] են[16]: Ակնկալլի[17] բարի[18]՝ ցանկութիւն[19], իսկ անդէն մերձ է հեշտութիւն, ակնկալլի չար՝ երկիւղ, իսկ անդէն մերձ է[20] տրտմութիւն: Եւ սոքա չորեքեան ախտք են հոգւոյ, վասն որոյ զախտ ի չորս բաժանեն իմաստասէրքն՝ ի ցանկութիւն, ի հեշտութիւն, յերկիւղ[21] և[22] ի տրտմութիւն: Եւ սոքա յերից պատճառաց գոյանան՝ ի չար

---

1 C յերևակայութիւնսն
2 F զայլն
3 BCDEF > և
4 F > ընդէր
5 F կազմեցան զգայարանք ներքին] ներքին կազմեցան զգայարանք
6 F զգայարան
7 F > իմն
8 F իմանամք
9 D և ներգործէ
10 F > և յապականացուս
11 C զընդհանուրն
12 E գիտութիւն աշխարհի] աշխարհի գիտութիւն
13 E նիւթոցն
14 C վասն
15 E ակնկալելիք, F ակնկալիք
16 D > են
17 E ակնկալելի, F ակնկալի
18 F > բարի
19 F ցանկութեան
20 F > հեշտութիւն, ակնկալլի չար՝ երկիւղ, իսկ անդէն մերձ է
21 ABDF ի յերկիւղ
22 F > և

խառնուածոց[1], ի չար հրահանգից և յանուսումնութենէ: Եւ զի ի չար խառնուածոց[2] որպէս այնք, որ[3] ջերմ են և խոնաւուտ խառնուածով[4] վայրաբերք են[5] և գիջասէրք: Իսկ ի չար հրահանգից՝ զի ի[6] մանկութենէ չարաց յարակցեալ[7] ուսեալ զչար գործն, ոչ կարեն յաղթկու լինել չար[8] սովորութեանց: Իսկ յանուսումնութենէ՝ չար դատումն բուսեալ ի խոհեցողականն անձին, կարծել, զչարն պիտանիս[9] գոլ[10]: Որոյ բժշկելի է զխառնուածն՝ դեղօք[11], իսկ զչար սովորութիւնն՝ սովորութեամբ բարեաւ, իսկ զանուսումնութիւնն՝ ուսմամբ և[12] մակացութեամբ[13]: Իսկ հեշտութիւնքն՝ ե՛ն ինչ, որ անձնականք են, և ե՛ն ինչ, որ մարմնական: Իսկ անձնական՝ որպէս տեսութիւնք և ուսմունք, զի այսոքիկ միայն անձինն են: Իսկ հեշտութիւնք մարմնական[14] առանց զգայական անձին անհնար է, որպէս յայտ է ի ննջեցեալսն[15]: Քանզի ամենայն հեշտութիւն[16] զգայութեամբ է և զգայութիւն անձնական ասացաք, և յայտ է, անձնական գոլ ի բազմապատիկ փոփոխմանց[17]՝ երբե՛մն փութալիք և չար հեշտութիւնք, ոմա՛նք սուտք[18] և ոմա՛նք ճշմարիտք[19], և ոմա՛նք ըստ մտաց կամակցութեան[20] միայն, իսկ ոմա՛նք մարմնոյն ըստ զգայութեան: Նաև, որ ըստ զգայութեան են[21]՝ ե՛ն ինչ, որ բնաւորական և հարկաւոր[22], և ե՛ն ինչ[23], որ բնաւորական են[24] և ոչ հարկաւոր[25], ե՛ն, որ ոչ բնական են և ոչ հարկաւոր[26]: Բնական և[27] հարկաւոր՝ հանդերձ[28] և կերակուր, զի առանց սոցա անհնար է կեալ[29] կենդանւոյն: Բնական և ոչ հարկաւոր[30]՝ որպէս ըստ բնութեան օրինաց[31] խառնումն առ ի փոխանորդութիւն, քանզի ոչ է հարկաւոր, զի կարէ կուսութեամբ կեալ[32]: Իսկ ոչ բնական և ոչ հարկաւոր՝ որպէս արբեցութիւն և վաւաշոտութիւն, և ամենայն առաւելութիւն որքան զչափսն և զպէտսն են[33] գերազանցեալ, զի ոչ ի[34] հաստատումն կե-

---

1 F խառնուածոյ
2 F խառնուածոյ, E > և զի ի չար խառնուածոց
3 AB որք
4 F խառնուածովք
5 E > և խոնաւուտ խառնուածով վայրաբերք են
6 AB > ի
7 F յարակցեալք
8 F վասն
9 F պիտոյ
10 AB գոյ, F > գոլ
11 C դեղով
12 AB > և
13 E > իսկ զանուսումնութիւնն ուսմամբ և մակացութեամբ
14 CE մարմնականք
15 CD ննջեալսն
16 E հեշտութիւնք
17 C փոփոխմանք
18 C սուտ
19 C ճշմարիտ
20 F մակացութեան
21 E զգայութեանք] զգայութեան են
22 E ոչ հարկաւոր
23 F > ինչ
24 F բնական] բնաւորական են
25 E > և են ինչ որ բնաւորական են և ոչ հարկաւոր
26 ABDEF > ե՛ն որ ոչ բնական են և ոչ հարկաւոր
27 F > բնական և
28 F որպէս հանդերձ
29 F կենալ
30 ABDE հարկաւորութիւն
31 F > օրինաց
32 ABE կալ
33 D զպէտսէն] զպէտսն են
34 F > ի

նաց են՝ որպէս[1] կերակուր, և ոչ ի փոխանորդութիւն որդէծնութեան: Արդ, որք[2] ըստ Աստուծոյ կեան՝ զհետ ընթանալ ի[3] միայն[4] բնականացն և հարկաւորացն պարկեշտաբար[5]: Եւ զերկրորդն՝ որ բնական է[6] և ոչ հարկաւոր, առաքինութեամբ փոխադրել հինգ գլխով. նախ՝ վայելուչ երկիւղիւ, երկրորդ՝ զեղանակ ամօթխածութեամբ[7], զերրորդ՝ ըստ չափու[8] որդէծնութեան, չորրորդ՝ զգուշանալ ի պահք՝ ի[9] ժամանակս և յաւուրս տէրունականս, հինգերորդ՝ զի մի ի սրբութեան տեղոջ[10] և մի ի հրապարակս, և յայլոցն յամենայնէ ի բաց փախչել[11]:

Եւ պարզաբար հեշտութիւն գոլ համարելի է զայնոսիկ, որ վեց իրօք պարապեալ[12] լինին: Նախ, որ ոչ ունենայ յառաջմէ պակասութիւն կամ զկնի տրտմութիւն՝ որ է պակասութիւն ախորժակաց: Երկրորդ, զի ոչ ունի զղջումն զկնի: Երրորդ, որ ոչ լինի այլ ինչ վնասու արարիչ՝ որպէս վաւաշոտութիւն: Չորրորդ, զի ոչ լինի անցեալ զչափաւորովն: Հինգերորդ, զի փութալեացն գործոյ[13] ոչ լինի զանձն ի բաց քարշեալ[14]: Վեցերորդ, զի ոչ արկանէ ընդ ծառայութեամբ զգործողս իւր: Եւ են տիրապէս հեշտութիւնք աստուածայինք առաքինութիւն և մակացութիւն:

Իսկ հեշտութիւնն հասարակ սահմանեն, թէ՝ հեշտութիւն է եղելութիւն ի բնութիւն զգայական, քանզի այս սահման մարմնականին[15] միայն է, որ կարօտութեան[16] է բժշկութեան[17], զոր յետ ծարաւոյն և ցրտութեան՝ ըմպելով և ջեռնելով հեշտանամք: Իսկ այս սահման ոչ պարունակէ զտեսութեան հեշտութիւն, որ ըստ ինքեան է բարի և բնութեամբ է բարի[18] և ոչ լինի ի վերայ կարօտութեան. յայտ եղև, թէ է՛ ինչ հեշտութիւն, որ ոչ է ի վերայ կարօտութեան[19]: Իսկ Եպիկուրոս սահմանէ զհեշտութիւն[20]. հեշտութիւն է[21] զերծումն ի տրտմութենէ՝ և այս այլ[22] զնոյն նշանակէ: Եւ քանզի ոչ մի եղելութիւն, զորս ինքն կատարէ, է[23] հոմասեռ կամ փաղասեռ, վասն զի եղելութիւն ոչ է հեշտութիւն, այլ ա՛յլ ինչ, քանզի ոչինչ յեղելոցն համանգամայն լինի և եղև, զի լինելն է ի[24] ճանապարհ և անկատար[25], իսկ եղեալն դադարեալ և կատարեալ՝ վասն որոյ եղելութիւն ըստ մասին լինի, իսկ հեշտութիւն

1 F է նորա] կենաց են
2 F որքան
3 C երթալի է] ընթանալ ի
4 E միոյն
5 C պարկեշտութեամբ
6 C > է
7 E ամօթխածութեան
8 F չափաւոր
9 C > է
10 C տեղիս
11 E փախչիլ
12 C պարսպեալ
13 E գործոց
14 E քարշեցեալ

15 E մարմնական
16 E կարօտութիւն
17 BCEF բժշկութիւն
18 F > բարի
19 F > յայտ եղև, թէ է՛ ինչ հեշտութիւն, որ ոչ է ի վերայ կարօտութեան
20 BDE թէ] զհեշտութիւն
21 C > հեշտութիւն է
22 E ևս] այլ
23 F > է
24 F > ի
25 BD անկարօտ

յանկարծակի հեշտանայ: Երկրորդ, ամենայն եղելութիւն յոչ էից է, իսկ հեշտութիւնն՝ արդարև յէիցն: Երրորդ, եղելութիւն[1] վաղ և անագան, իսկ հեշտութիւնն՝ ոչ ևս:

Այլև ի բարեացն՝ ե՛ն ինչ, որ ունակութիւն են և ե՛ն ինչ, որ ներգործութիւնք, և ե՛ն ինչ, որ գործարան. իսկ ունակութիւն՝ որպէս տեսողական զօրութիւն, ներգործութիւն[2] որպէս տեսանել, գործարան[3] որպէս բիբ աչաց: Տեսցուք[4] եթէ հեշտութիւնն է՞ ունակութիւն. ասեմ[5] թէ[6] ոչ, քանզի ունակութիւնն և պակասութիւնն անհնար[7] է ի միասին գոլ, իսկ ոմանք հեշտանան համանգամայն և տրտմին, որպէս որք քորինն, յայտ է, թէ հեշտութիւնն ոչ է ունակութիւն: Տեսցուք՝ թէ գործարա՞ն է. քանզի ամենայն գործարանք վասն այլոց եղանին և ոչ վասն ինքեանց, իսկ հեշտութիւնն՝ ոչ վասն այլոց, այլ վասն ինքեան[8] ո՛չ ուրեմն է[9] գործարան և ո՛չ ունակութիւն: Արդ[10], պարտ է զնա ներգործութիւն ասել, քանզի Արիստոտէլ սահմանէ զհեշտութիւնն ներգործութիւն անխափան, որ և զերջանիկ հեշտութիւնն պարունակէ և ոչ զգայական, վասն որոյ պարտիմք սահմանել զգայական հեշտութիւնն՝ ներգործութիւն բնութեան խափանելի, զի երբեմն հեշտանայ և երբեմն՝ ոչ: Եւ զանազանի ըստ ներգործութեան տեսակք հեշտութեան, քանզի ա՛յլ է հեշտութիւն տեսութեան[11] մտաց, և ա՛յլ է[12] հեշտութիւն գործոց[13] առաքինութեան, այսպէս՝ ա՛յլ է տեսակ հեշտութեան[14] աչաց, ականջաց[15], ռնգաց, և ա՛յլ՝ ճաշակելեաց[16] և շօշափելեաց:

Իսկ տրտմութեան[17] տեսակ[18] չորս են[19] խօշիւն, տագնապ, նախանձ, ողորմ: Եւ է խօշիւն տրտմութիւն անբարբառութեան արարող: Իսկ տագնապ է տրտմութիւն ծանրացուցիչ: Իսկ նախանձ է տրտմութիւն ի վերայ այլոց բարեաց: Իսկ ողորմ է տրտմութիւն ի վերայ այլոց չարեաց՝ որպէս արք բարիք յատակել քաղաքաց, և ի կորուստ[20] զաւակաց բարեկամաց[21] տրտմին, բայց ոչ յառաջագոյն, այլ վասն[22] վտանգի՝ վասն այն[23] ամենայն տրտմութիւն իւրովի չար է: Իսկ երկիւղ բաժանի ի[24] վեց՝ ի պակումն, ի խօշումն[25], յամօթ, ի հիացումն, ի զարհուրումն, ի տագնապ: Եւ է պակումն մածումն արեան և ընդարմացումն

[1] A եղևութիւն
[2] F ներգործել
[3] F գործաւորն
[4] F բեր տեսցուք
[5] DE ասեմք
[6] C > ասեմ թէ, F > թէ
[7] F անհնարին
[8] CF ինքեանց
[9] F > է
[10] F այլ
[11] F տեսութիւն
[12] ABDE > է
[13] E գործոյ
[14] F > հեշտութեան
[15] F և ականջաց
[16] C է ճաշակելեաց
[17] F սրտութեան
[18] F տեսակք
[19] F > են
[20] F կարօտ
[21] ABCDF բարեաց
[22] BEF ըստ
[23] E որոյ
[24] F > ի
[25] F խարշումն

ոգւոյ, երկիւղ՝ ապառնոյ ներգործութեան[1], հիացումն՝ երկիւղ մեծ[2] ինչ տեսութենէ, զարհուրումն է երկիւղ յանսովոր ինչ տեսութենէ[3], տագնապ է երկիւղ ի կործանմանէ, խոշումն[4] է[5] երկիւղ յակնկալութենէ պարսաւանաց՝ և է՛ գեղեցկագոյն այս ախտ, իսկ ամօթ է[6] երկիւղ ի վատթար ինչ գործոյ, և ոչ է այս անյոյս ի փրկութենէ: Այս յաղագս ցանկականին այսքան:

Բե՛ր տեսցուք[7] և զերկրորդ զորութիւն[8] զգայականին, որ է ցասումն, զոր բարկութիւն կոչեմք: Եւ սահմանեն իմաստասէրքն զբարկութիւն այսպէս, թէ բարկութիւն է եռանդն շուրջ զսրտիւն արեան առ ի տրտմեցուցանելոյ փոխարէն[9] այնմ[10], որ տրտմեցոյցն զինքն: Եւ են տեսակք[11] ցասմնականին երեք՝ բարկութիւն, դառնութիւն, սրտմտութիւն[12]: Իսկ քէնք և ոխք ասին՝ հնացեալ[13] դառնութեանն վերստին մտածել՝ քէնք կոչին, իսկ սպասել[14] ժամանակի, զի պատժեսցէ՝ ասի ոխ: Եւ է սրտմտութիւն սպասաւորական խորհեցողականին: Իսկ սոքա ամենեքեան[15] ախտք[16] ասին, և ախտն հոմանուն է: Նախ, պարտ է գիտել, թէ քանի նշանակութիւն ունի: Եւ զի երեք են ախտ. նախ՝ մարմնական, որպէս հիւանդութիւնք[17] և վէրք, երկրորդ՝ ախտ զգայական, որպէս ցանկութիւն և ցասումն մասամբք իւրեանց, երրորդ՝ ախտ անձնական, որպէս տեսութիւն բարւոյ և չարի: Եւ սահման մարմնականին, որ է անձնական[18] ախտ անզգայ՝ որպէս հիւանդութիւն և վէրք տնկական մարմնոյ: Իսկ զգայականին՝ ներգործութիւն շարժող յայլմէ յայլ՝ հանդերձ զգայութեամբ, և կամ ախտ է անբան շարժութիւն զգայականին: Դարձեալ, ըստ այլ յեղանակի ներգործութիւնն ախտ ասի, յորժամ արտաքոյ բնութեան շարժիցի, զի յորժամ ըստ բնութեան շարժիցի՝ ներգործութիւն է, իսկ յորժամ[19] արտաքոյ բնութեան՝ ախտ կոչի:

Բե՛ր տեսցուք և զհինգերորդ գլուխն, որ է կարծիս Պղատոնի[20], որ ասաց զհոգի մարդոյն յառաջագոյն ստեղծեալ յԱստուծոյ և եդեալ յերկինս ի ժողով մի՝ իբր ի քաղաք մի[21] և օրէնս եդ նոցա. որքան կան ի յօրէնսն այն՝ մնան ի[22] յերկինս ի ժողովս իւրեանց, իսկ յորժամ անցանեն ի[23] յօրինացն այն՝ բերէ արկանէ ի մարմին մարդկային տեսա-

[1] A ներգործութիւն
[2] E ինչ] մեծ
[3] F > զարհուրումն է երկիւղ յանսովոր ինչ տեսութենէ
[4] ACF խորշումն
[5] F > է
[6] E > է
[7] F ասասցուք
[8] F գլխաւորութիւն
[9] F փոխանակ
[10] C փոխարէն առ ի տրտմեցուցանելոյ այն] առ ի տրտմեցուցանելոյ փոխարէն այնմ
[11] F տեսակ
[12] F տրտմութիւն
[13] BD հիացեալ
[14] E սպասեալ
[15] DF ամենայնքն
[16] F անախտք
[17] ABDF հիւանդութիւն
[18] C տնկականն
[19] C > յորժամ
[20] BDEF ըստ Պղատոնի
[21] E > մի
[22] EF > ի
[23] C > ի

կիս, որ և ի[1] նորս հետևեալ ամենաթշուառեանն[2] Որոգինէս զնոյն ասէ: Իսկ քաջ ախոյեանն եկեղեցւոց Գրիգոր Նիւսեայ ի գիրս Կազմութեան պարսաւէ[3] զայս կարծիս: Նախ, ասելով, թէ այս[4] այսպէս է՝ մարդն ոչ է գոյութեամբ մարդ, այլ պատահմամբ է մարդ[5], քանզի մեղանչել[6] հոգւոյն պատահմամբ և բանաւորիլ[7] ի մարմինն՝ պատահմամբ, յայնժամ ոչ լինի մարդն գոյութեանը գոլ[8] մարդ, այլ պատահմամբ: Երկրորդ, զի ասէ Գիրն՝ «Արար Աստուած զմարդն ի պատկեր իւր» [Ծնն. Ա. 27], և կոչի մարդ ի հոգւոյ իմանալւոյ և ի մարմնոյ զգալւոյ, և ոչ հոգի առանց մարմնոյ[9] կոչի մարդ, և ոչ մարմինն առանց հոգւոյ[10], այլ յերկուցն միաւորութենէ ասի[11] մարդ: Եւ նոքա պատճառ լինելութեան մարդոյն ասեն զմեղքն. յայտ լինի, թէ պատկերն Աստուծոյ մեղօք գոյանայ, որ է անտեղի և մեծ հերձուած: Երրորդ, զի ասեն[12], թէ յորժամ մեղանչեն հոգիքն յերկինս՝ արկանեն ի մարմինս այս, իսկ յորժամ աստ մեղանչեն՝ արկանին յԼս անարգագոյն մարմին, այսինքն՝ յանասնոց, և այսպէս փոփոխմամբ մինչև ի վերջին անզգայսն ըստ[13] մեղացն հետևման, իսկ յանզգայիցն՝ կա՛մ դառնալ յոչինչ, կա՛մ դարձեալ ելանել յերկինս: Իսկ թէ[14] դառնան յոչինչ՝ հակառակ խօսին խոկմանց իւրեանց, որ ասեն զհոգի[15] փոփոխմամբ անմահ լինել: Իսկ թէ անմահ գոլով յանզգայիցն վերստին դառնան յերկինս, պատուականագոյն լինին անզգայքն[16] որ լինին[17] պատճառ բարձրանալոյ, քան զերկինս՝ որ լինի[18] պատճառ գլորման և ի ստորևս[19] իջանելոյ[20]: Զորրորդ, զի նախ ստեղծուածն[21] անզգայք և անասուն կենդանիք, իսկ մարդն զկնի նոցին ստեղծուածն[22]: Իսկ յորժամ մարդն ոչ էր ստեղծեալ և ոչ հոգիք բանտեալ[23] ի[24] մարդ և ոչ մեղանչեալ ի նմա՝ զիա՞րդ անկանիւր ի մարմին անասնոց հոգիք և զիա՞րդ նովաւ կենդանանային, յորժամ յառաջ են կենդանիք՝ որ երևին[25] ամենևին[26] սուտ ասացեալքն նոցա[27]: Հինգերորդ, զի ոչ երբէք գործ բանականի յայտնի գոլ ի մարմին[28] անբանում և յայսմանէ գայ[29] հայհոյութիւն յԱրարիչն, զի աւելորդ և անօգուտ արկանէր անձն բա-

[1] A > ի
[2] F ամենաթշուառն այն
[3] F լուծանէ
[4] F > այս
[5] F > մարդ
[6] E ի մեղանչել
[7] EF բնաւորիլ, C բանտաւորիլ
[8] CF > գոլ
[9] E > զգալւոյ և ոչ հոգի առանց մարմնոյ
[10] ABDEF > և ոչ մարմինն առանց հոգւոյ
[11] C ապա ասի, F կոչի
[12] ABDEF > ասեն
[13] ABDEF > ըստ
[14] F > թէ
[15] BCDEF > զոգի
[16] F լինի անզգայք] լինին անզգայքն
[17] D լինի
[18] ABDF լինին, C > որ լինի
[19] F ստորինս
[20] A իջանելուլ, BDF իջանելով
[21] C ստեղծանան, E ստեղծ
[22] C ստեղծաւ, E ստեղծ
[23] E > բանտեալ
[24] F բանս զի] բանտեալ ի
[25] C երևի
[26] ABDEF > ամենևին
[27] F նոցին
[28] EF մարմնի
[29] C գոյ

նական ի մարմին անբանի[1], և թէ երևի[2] հնարք և խորամանկութիւն յանբանս՝ բնութեամբ է և ոչ բանականութեամբ, զի ամենայն տեսակ[3] զնոյն գործեն: Վեցերորդ, զի երևի ոչ մշտնջենաւոր[4] գոլ պատկեր, այլ առ ժամանակ մի, և զայն ի հարկէ ի սակաւ վայրկեան, որքան է կապակցեալ[5] ընդ մարմինս[6] պատճառանօք մեղաց: Եւթներորդ, հետևի սիրել հոգւոյն առաւել զանզգայ մարմինն, քան զիւրն, զի նա[7] փառաց և պատուոյ լինի[8] պատճառ, իսկ սա՝ անարգութեան, զորս յանդիմանէ առաքեալն Պօղոս. «Ոչ կամիմ զայս մերկանալ, այլ զայն ի վերայ այսր զգենուլ» [Բ. Կորն. Ե. 4]: Ութերորդ, զի թէ էր այս՝ պատուական լինէին հոգիք անասնոց, որ[9] ընդ[10] մի և ընդ նոյն մարմին շաղկապին, քան[11] զհոգի մարդոյն, որ այնքան տարբերին տաժանմամբ: Իններորդ, զի հոգի մարդոյն ոչ լինէր տեսակ մարմնոյ իւրոյ {և ոչ բնաւ թուէր տեսակս[12] մարդոյ ի թիւս տեսակաց՝ որ է բնաւ սուտ, զի ամենայն իմաստասէրքն ասեն գոլ զհոգի զտեսակ[13] մարմնոյ և զտեսակ մարդոյ պատուականագոյն յամենայն թիւս տեսակաց}[14]: Տասներորդ, զի անվայելուչ էր Աստուծոյ զայլ իւրաքանչիւր տեսակ սահմանիւ և կարգաւ ստեղծանել և զիւր պատկերն՝ անսահման և անկարգ, այսքան[15] թշուառութեանց[16] մատնել[17], որ և ծաղր առնէ[18] Գրիգոր Նիւսեայ[19] զպղատոնական կարծեօքն ասելով, թէ այսպիսեացն[20] հոգիք համեմատին գորտեաց և ճայից, որ այսպիսի խոկումն ստանան վասն[21] հոգւոց[22] մարդկան: Ապա ուրեմն, պարտ է մեզ[23] յայսմանէ խոյս տալ և փախչել զհեռագոյն փախուստն, զի մի ի պղատոնական կարծիսն կործանեսցուք:

Բե՛ր տեսցուք և զվեցերորդ գլուխն, որ ասացին զհոգի մարդոյն լինել յէութենէն Աստուծոյ, զի[24] Եվնոմիոս[25] ասաց, թէ այն, որ ասաց Գիրն, թէ «Փչեաց յերեսս նորա շունչ կենդանի և եղև մարդն հոգի կենդանի» [Ծն. Բ. 7]՝ զայն ծանուցանէ, թէ փչումն այն, որ եղև ի մարդն առաջին՝ էր յէութենէն Աստուծոյ: Նախ, առաջին, ցուցանեմք անտեղի գոլ զայս կարծիս, քանզի որ փչէ՝ յարտաքուստ առնու և փչէ, որպէս յայտնի է ի մարդս, քանզի զարտաքուստ

---

1 F անմարմին բանի] անբանի
2 C երևին
3 E տեսակք
4 ACEF մշտնջաւոր
5 A պարակցեալ
6 E միմեանս
7 ABDEF > նա
8 F լինին
9 C > որ
10 E > ընդ
11 ABEF քանզի
12 ADF ի տեսակս
13 ABDE > զտեսակ
14 F > {և ոչ բնաւ թուէր տեսակս... թիւս տեսակաց}
15 F > այսքան
16 F թշուառաց
17 F մտանել
18 F կառնէ
19 F Նիւսացին
20 C այնպիսեացն
21 E ի վերայ
22 BCD ոգոյ
23 F > մեզ
24 C քանզի
25 ABCD Եվնոմէոս

առեալ օդ[1] փչէ և ոչ յէութենէն իւրմէ. այսպէս և Աստուած զարտաքոյ[2] ստեղծեալ զհոգի փչեալ ի նա ասէ, այսինքն՝ եդեալ ի նա և կամ թէ շնորհաց հոգին՝ որ էր քահանայութեան, մարգարէութեան և թագաւորութեան: Երկրորդ, զի միակ և նախակատար, ինքնակատարն գերակատար բնութիւն[3] աստուածութեանն անհնար է հատուածս ընդունել, զի է սերտ և անփոփոխ և անայլայլ[4] բնութիւն աստուածութեանն[5], զի ոչ հատանի յիւրմէ և ընդ յայլս[6] յարմարի[7], և կամ այլք[8] ընդ նա կարեն յարմարիլ սակս անեղ գոլոյն՝ և զիա՞րդ կարէ անեղն եղական լինել[9] կամ եղականն՝ անեղ: Երրորդ, զի թէև էր իսկ, որ և չեն և չիք հնար ոչ ընաւ կարէաք[10] մեղանչել, զի աստուածային բնութիւնն անփոփոխելի է, որպէս ասէ Մաղաքիայ մարգարէիւն, թէ՝ «Ես նոյն եմ և ոչ փոփոխիմ» [Մաղ. Գ. 6]՝ իսկ որ բնութեամբ բարի է՝ զիա՞րդ փոփոխի ի չարն: Չորրորդ, զի թէ էր յափշութիւն[11] և մոլեգնութիւն՝ ոչ բնաւորական և ոչ պատահմամբ կարէր լինել ի մարդն, զի ուր լոյս՝ զիա՞րդ[12] մերձենայ անդր[13] խաւար: Հինգերորդ, զի թէ[14] հոգի մարդոյն էր ի գոյացութենէն Աստուծոյ և լինէր Աստուծոյ[15] յայնժամ զինչ կամէր՝ կարէր, ըստ այնմ, թէ[16] «Զամենայն[17], զոր ինչ կամեցաւ՝ և արար Տէր» [Սաղ. ՃԼԴ. 6]՝ որ է այս անկարելի հոգւոյն մարդոյ: Վեցերորդ, զի թէ էր ի բնութենէ Աստուծոյ հոգի մարդոյ՝ է՛ր ամենագէտ՝ իբրև[18] զԱստուած և ոչ կարօտանայր ուսման կամ շնորհաց հոգւոյն, յայնժամ ընդ վայր լինէին օրէնք և մարգարէք և առաքեալք: Եւթներորդ, զի թէ է՛ր ի գոյացութենէն Աստուծոյ՝ զիա՞րդ պատրէր[19] և խաբէր[20] ի բանսարկուէն ի մէջ դրախտին: Ութերորդ, զի թէ է՛ր ի բնութենէն Աստուծոյ՝ ի գիտութիւն էակացս ոչ լինէր սնիկ միջնորդ ի հինգ զգայարանացս, այլ զամենայն ինչ անընդմիջաբար ճանաչէր, ըստ այնմ, թէ՝ «Ամենայն ինչ մերկապարանոց կայ առաջի նորա» [Եբր. Դ. 13], յայնժամ զի՞ պիտոյ էր կազմած[21] զգայարանացն, և մեղադրելի լինէր Արարիչն, զի ընդ վայր արար զնա և կազմեաց[22]: Իններորդ, զի թէ հոգի մարդոյ էր ի գոյացութենէն Աստուծոյ՝ ոչ լինէր կրական[23] տրամութեան և ուրախութեան,

[1] A առեալսդ] առեալ օդ
[2] E զարտաքուստ
[3] D բնութեան
[4] A այլ այլ] անայլայլ
[5] C > աստուածութեանն
[6] A ըստ յայլոյ, C յայլս] ընդ յայլս
[7] C > ընդ յայլս յարմարի
[8] F կամ այլ] և կամ այլք
[9] F գոլ
[10] CF կարէաք բնաւ] բնաւ կարէաք
[11] E յափշտակութիւն
[12] AB զի անդ
[13] CEF անդ
[14] AD > թէ
[15] C Աստուած
[16] F > թէ
[17] C > զամենայն
[18] E որպէս
[19] F պատրիւր
[20] F խաբիւր, C խաբէր և պատրէր] պատրէր և խաբէր
[21] CF կազմուած
[22] C կազմեաց զսա] արար զնա և կազմեաց
[23] E կրկին

նաև ոչ ունէր զղջումն և ապաշաւանք[1] զկնի գործոց: Տասներորդ, զի ոչ պարունակէր ի ներքոյ պատժոց, զի աստուածային բնութիւնն անեղ է, և իր, որ ոչ ունի եղելութիւն՝ զիա՞րդ կարէ մերձենալ ի նա պատիժ կամ պատուհաս: Ապա ուրեմն, յայսմ ամենայնէ[2] յայտ եղև՝ սուտ գոլ այնոցիկ[3], որ ասացին զհոգի մարդոյն լինել յէութենէն Աստուծոյ՝ պատճառելով զփչումն Աստուծոյ ի մարդն առաջին՝ ի[4] նախահայրն Ադամ, թէ՝ «Փչեաց յերեսս նորա շունչ կենդանի, և եղև մարդն հոգի կենդանի» [Ծնն. Բ. 7]: Եւ այս յաղագս այսորիկ[5] այսքան[6] բաւական լիցի:

Բե՛ր տեսցուք[7] զեւթներորդ գլուխն, որ է կարծիս Արիստոտէլի և ստոյիկեանցն և ի նորս Ապողինարի հերձուածողի, թէ որպէս մարմին ի մարմնոյ ծնանի, այսպէս հոգի ի հոգւոյ ծնանի[8] որ է այս հերձուած չար: Նախ, զի[9] զանմարմին և զանշարադիր էութիւնն հոգւոյն՝ շարադրեալ և հատուածեալ զանմարմին հոգին, մասնական մարմին կերպացուցանեն: Երկրորդ, զի ոչ ի միոյ, այլ յառնէ և ի կնոջէ շարադրեալ ասեն, ի խառնուածոց ծնողացն՝ զպարզ և զանշարադիր էութիւն հոգւոյ: Երրորդ, զի որք զայս ասեն՝ ապականացու գոլ խոստովանին զէութիւն հոգւոյ, քանզի թէ խառնեալ[10] է՝ ոչ է պարզ, այլ է շփոթեալ, և որ շփոթեալ է և խառնեալ՝ դարձեալ լուծանի, որպէս մարմին[11] ի չորս տարերս[12]: Չորրորդ, զի թէ ոչ շփոթեալ՝ հարկ է լինել ի[13] մարմին[14] զաւակին երկուս բանական հոգի՝ հատեալն ի հօրէ և հատեալն ի մօրէ, որ է անտեղի և բնաւ սուտ: Հինգերորդ, զի ի հարկէ հետևի[15] ըստ այսմ[16] նուազեալ[17] և պակասեալ[18] զհոգի ծնողացն ի կատարելութենէ՝ ըստ նուազութեան որքանութեան զաւակաց, քանզի[19] հատեալն[20] և պակասեալն[21] ի նմանամասնեացն թափեալն և մնացեալն, որպէս ջրոյ և գինոյ մի գոլ: Վեցերորդ, զի ի[22] հարկէ հետևի անբան գոլ[23] զհոգի մարդոյ, որպէս[24] զանասնոցն, քանզի, որ ընդ մարմնոյ ծնանի և[25] ընդ մարմնոյ լուծանի, ոչ այլ ինչ է, եթէ ոչ անբան: Եւթներորդ, զի այսմ ասացուածոց եղծանի գիրն Աստուածաշունչ, որ ասաց[26], թէ՝ «Արար Աստուած զմարդն ի պատկեր իւր» [Ծնն. Ա. 27], իսկ որ[27] լինի

[1] F ապաշխարանք
[2] A յայսմանէ] յայսմ ամենայնէ
[3] F այնորիկ
[4] ABCD > ի
[5] C այս գլխոյս] այսորիկ
[6] ABDE > այսքան
[7] F ասասցուք
[8] F > այսպէս հոգի ի հոգւոյ ծնանի
[9] F > զի
[10] F դարձեալ խառնեալ
[11] F ընդունի] դարձեալ լուծանի որպէս մարմին
[12] C չորից տարերց] չորս տարերս
[13] ABDEF > ի
[14] F մին
[15] F հարկ է հետևիլ] ի հարկէ հետևի
[16] C այնմ
[17] F նուազիլ
[18] F պակասիլ
[19] E զի
[20] E հասեալն, F հետևիլն
[21] F պակասիլն
[22] F > ի
[23] F անգոլ] անբան գոլ
[24] F > որպէս
[25] F > և
[26] C ասէ
[27] F ընդ որ

անբան և մահկանացու՝ զիա՞րդ լի-նի պատկեր Աստուծոյ: Ութերորդ, զի թէ եղծանին[1] հոգիք՝ զիա՞րդ ճշմարտի բանն Տեառն, որ ասէ, թէ[2] ՝ «Մի երկնչիք յայնցանէ[3], որ զմարմինն սպանանեն, բայց զհոգին ոչ կարեն սպանանել» [Մատ. Ժ. 28], և դարձեալ միւս բանն, որ առակօք ասէ Տէրն, թէ[4] «Ուր գէշք մարմնոյն իցեն[5], անդր ժողովեսցին արծուիք հոգւոց» [Մատ. ԻԴ. 28], և դարձեալ բանն Սողոմոնի, որ ասէ[6], թէ՝ «Մարմինն դառնայ ի հող ուստի ստեղծաւ[7], և[8] հոգին երթայ առ Աստուած, որ ետ զնայ» [Ժող. ԺԲ. 7]: Իններորդ, զի ըստ[9] այսմ բանի ի հարկէ բառնի ամենայն գործք արդարութեան, զի որ ոչ մնայ յաւիտեան՝ զիա՞րդ չարչարէ զմարմինն և տանջի, յորժամ ակնկալութիւն յուսոյն նորա միայն[10] յայս կեանքս է, որ է[11] սուտ ամենևին[12], քանզի բազումք յարտաքոցն և ի ներքոց եդին զմարմինս[13] իւրեանց ի ներքոյ չարչարանաց, մանաւանդ թէ մահու՝ վասն հանդերձեալ փառաց և պատուոյ[14]: Տասներորդ, զի որք զայս ասեն, ուրանան և եղծանեն զբանք աւետարանական վարդապետութեանն Քրիստոսի, որ ասէ, թէ[15] «Յորժամ գայցէ փառօք Հօր իւրոյ և հրեշտակօք սրբովք[16], յայնժամ բաժանեսցէ զօդիսն յայծեաց: Եւ ցօդիսն ասէ[17] եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զկեանս ի հանդերձեալ երկրին: Եւ ցայծիսն ասասցէ[18] ի բաց գնացեք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենից» [Մատ. ԻԵ. 31-41]: Եւ առաքեալ ասէ. «Մեզ ամենեցուն յանդիման լինել կայ առաջի ատենին Քրիստոսի, զի ընկալցի իւրաքանչիւր ոք իւրով մարմնով, զոր ինչ գործեաց՝ եթէ բարի և եթէ չար» [Բ. Կորն. Ե. 10]: Եւ այս յաղագս այսորիկ այսքան[19]:

Բե՛ր տեսցուք[20] և զութերորդ գլուխն, որ է կարծիս Եվնոմիոսի[21] հերձուածողի, որ[22] ասաց՝ զհոգի էութիւն անմարմին՝ ի մարմնի ստացեալ: Զորս յանդիմանէ Գրիգորիոս, թէ՝ զէութիւնն անմարմին՝ ի ճշմարտութենէն էառ, բայց զի[23] ի մարմնի ստացեալ զհոգի՝ յԱրիստոտէլէ[24] և ի ստոյիկեանց վարդապետութենէն էառ: Եւ ոչ իմացաւ, որ սուտն էր[25], թէ ի մարմնի ստացեալն՝ ի նոյն դարձեալ ժողովի, այսինքն, որ ի մարմնոյ լինի՝ ի նորին կիրսն ժողովեալ փորձի մահ-

[1] AF ստեղծանին
[2] ABDEF > թէ
[3] ABEF յայնմանէ
[4] F > թէ
[5] E իցէ, F են
[6] CF > որ ասէ
[7] E ստեղծն, CF > ուստի ստեղծաւ
[8] C իսկ] և
[9] F > ըստ
[10] C > միայն
[11] F > որ է
[12] AB ամենև
[13] E զանձինս] զմարմինս
[14] F պատժոց
[15] C > թէ
[16] BDEF հրեշտակաց սրբոց] հրեշտակօք սրբովք
[17] CD ասասցէ
[18] F ասէ
[19] ABDEF > եւ այս յաղագս այսորիկ այսքան
[20] F ասասցուք
[21] ABCD Եվնոմիանոսի
[22] C > որ
[23] E > զի
[24] ABCDF ի յԱրիստոտէլի] յԱրիստոտէլէ
[25] BCD որս ուրն էր] որ սուտն էր

կանացու և ապականացու գոլ: Եւ նա թիւր նկատմամբ զՄովսէսին առեալ ապացոյց, որ նա[1] նախ զմարմնոյ ասէ լինելութիւն, և ապա զհոգւոյ: Զոր պատասխանէ Գրիգորիոս, թէ՝ ո՛չ Մովսէս ի նոյն միտս[2] ասէ զայն, և ո՛չ ընութիւնն զնոյն ունի սահման՝ վասն բազում պատճառի: Նախ, զի թէ ասեմք զայս՝ նախ զմարմինն կազմեալ և երկրորդաբար զհոգին, երևի տկարութիւն յԱրարիչն. ոչ գոլ կարող համանգամայն ստեղծանել զհոգի և զմարմին: Երկրորդ, զի պատուականագոյն գոլ[3] մարմինն՝ նախապատուղ[4] արարչութեամբ, իսկ հոգի անարդ՝ զի հետևեցաւ արարչութեան մարմնոյն: Երրորդ, զի միևնոյն իրն[5] որ է մարդն, լինէր իւր[6] առաջին և վերջին, որ է անտեղի: Չորրորդ, զի թէ[7] ի մարմնոյ ստացանի հոգի, յայնժամ ո՛չ լինի արարիչ հոգւոյ[8] Աստուած, այլ ընութիւն մարմնոյն, որպէս և[9] իւրաքանչիւր մասանց: Հինգերորդ, զի ի հարկէ, որ ընդ մարմնոյ գոյանայ՝ և ընդ մարմնոյն լուծանի: Վեցերորդ, զի թէ այս այսպէս էր, լինէր աշխարհս դեռևս անկատար, որպէս ասէ Գրիգորիոս, թէ կարծեմ յամենայն օր հինգ[10] բիւր սուղ ինչ պակաս կամ աւելի ծնանի մարդ՝ միթէ լցու՞մն է[11] թերութեան կամ անկատարութեան աշխարհի: Քանզի ըստ այդմ[12] կարծեաց, որ առաջն եղև և ընդ[13] մարմնոյ լուծաւ, և որ լինի՝ նոյնպէս լուծանի և ի յաւարտ ստեղծմանն երևի և ոչինչ, որ կարի անմտագոյն ճանաչի այնպիսի արուեստաւորն[14] ձրի գործել և ունայն մնալ, որ և քաւ լիցի[15] զայս կարծել առ Աստուած: Եւթներորդ, զի հակառակ ինքեան խօսի՝ էութիւն անմարմին ասել և ի մարմնին ապականացու իջուցանել, քանզի որ ի մարմնի[16] ստացանի[17] ապականացու և եղծանելի[18] գոյ: Ութերորդ, զի ոչ երբէք յօդումն հակառակի ընդ պատճառ իւր, բայց հոգի հակառակի ընդ մարմինն և յաղթկու եղեալ[19] նմին ծառայացուցանէ կամաց իւրոց: Իններորդ, զի ոչ զերկբայ ի խոստովանելոյ հաստատէ, այլ զերկբայ յերկբայէ կազմէ՝ եթէ անմարմին ի մարմնոյ կազմի: Տասներորդ, զի յանդիմանեալ[20] թշնամի անի[21] ի զանազան խոկմանց[22] արուեստից և իմաստից, մակացութեանց և[23] առաքինութեանց, որ

[1] F > նա
[2] C > միտս
[3] BDEF գոյ
[4] ABDF նախ պտուղ, C նախապատուեալ
[5] ABDEF > իրն
[6] F լինել] լինէր իւր
[7] BDEF > թէ
[8] ABDEF > հոգւոյ
[9] C > և
[10] E եւթն] հինգ
[11] F ինչ է
[12] CE այսմ
[13] F եղևն ըստ] եղև և ընդ
[14] F այսպէս ի յԱւետարանն] այնպիսի արուեստաւորն
[15] C մի լիցի
[16] C մարմնոյ
[17] F մարմին ի ստացականի] մարմնի ստացանի, E > ապականացու իջուցանել, քանզի որ ի մարմնի ստացանի
[18] D եղծանի
[19] ABC ելեալ
[20] F յանդիմանի
[21] CEF > անի
[22] C իսկ մարմնոյ] խոկմանց
[23] ABC > և

են նշան[1] և ցոյցք բանական էութեանց հոգւոյ[2], որ ոչ կարէ լինել յանբան հոգիսն, որ ի մարմնոյ[3] ստացանի[4]: Իսկ թէպէտ և չարն Եվնոմիոս[5] կերպարանեցաւ[6] զկերպարան[7] ճշմարտութեան[8] ասելով՝ զհոգի էութիւն անմարմին, բայց ի ներքոյ յարդի ծածկեալ ունէր զհուր չարութեան ի մարմնի ստացեալ զկարծիս ստոյիկեանց և զԱպողինարի հերձուածողի, որ և յանդիմանեալ ի ճշմարտութեանց բացայայտեցաւ սուտ գոլ, վասն որոյ հարկաւորիմք փախչել ի չար կարծեաց յայսցանէ՝ իբր ի կատաղի գազանէ:

Կայ ևս առաջի մեզ ասել զիններորդ գլուխն՝ եթէ նախախնամութեամբ գոյանան հոգիք: Եւ քանզի է՛ աստ իմն խնդիր տարակուսանաց, քանզի ոմանք նախախնամութեամբ ասեն: Եւ այնոքիկ, որ նախախնամութեամբ՝ իբր[9] որդի ի ծննդէնէ հօր, քանզի ամենայն նախախնամութիւն գծննդեամբ յառաջ եկեալն նշանակէ՝ և այսպիսի իմն զկերպարան նոյն Արիստոտէլի և ստոյիկեանցն ունի: Իսկ եթէ նոր ասեմք ստեղծանել, հակառակի բանն Մովսէսի, որ ասէ, թէ՝ «Հանգեաւ յԱստուած յաւուրն յեւթներորդի յամենայն գործոց իւրոց» [Ծնն. Բ. 1]: Իսկ եթէ ոչ նախախնամութեամբ և ոչ ստեղծմամբ՝ ի հարկէ բռնադատիմք ասել ոչ գոլ[10] հոգի, և քանզի ոչ կարեմք ասել ոչ գոլ հոգի[11]՝ վասն բազում պատճառի: Նախ, զի յամօթ առնէ[12] զայնոսիկ գիրն Աստուածաշունչ, որ ասեն ոչ գոլ հոգի. մարգարէական բանն, որ ասէ, թէ՝ «Հոգի յինէն ելցէ, և զամենայն շունչ ես արարի» [Եսայ. ԾԷ. 16], և Սողոմոն ասէ, թէ՝ «Մարմինն դառնայ ի հող և հոգին երթայ[13] առ Աստուած, որ ետ զնայ» [Ժող. ԺԲ. 7]: Երկրորդ, աւետարանական հրամանն, որ ասէ, թէ[14]՝ «Հոգիս յօժար է, բայց մարմինս տկար է» [Մատ. ԻԶ. 41], և թէ՝ «Մի երկնչիք յայնցանէ[15], որ զմարմինն սպանանեն և զհոգին ոչ կարեն[16] սպանանել» [Մատ. Ժ. 28]: Երրորդ, առաքելական բանն, որ ասէ թէ՝ «Մարմինս ցանկայ հակառակ հոգւոյս և հոգիս ցանկայ հակառակ[17] մարմնոյս» [Գաղ. Ե. 17] և թէ՝ «Որքան արտաքին մարդս մեր զօրանայ՝ այնքան ներքին մարդս մեր տկարանայ. և որքան ներքինս[18] մեր զօրանայ՝ այնքան[19] արտաքինս մեր[20] տկրանայ» [Բ. Կորն. Դ. 16], զհոգին ասելով[21] և[22] արտաքին զմարմինն: Զորրորդ, իմաստասէրքն արտա-

[1] E նշանակ
[2] ABD հոգւոց
[3] E մարմնի
[4] F ստացականի
[5] ABCD Եվնոմէոս
[6] ABCDF կերպարանացու
[7] E զպարանն
[8] E ճշմարիտ
[9] C ասեն իբր

[10] F գոյ
[11] E > և քանզի ոչ կարեմք ասել ոչ գոլ հոգի
[12] F արասցէ
[13] F դառնայ
[14] ABDE յայնմանէ
[15] C > թէ
[16] E չկարեն] ոչ կարեն
[17] E > հոգւոյս և հոգիս ցանկայ հակառակ
[18] F ներքին մարդս] ներքինս
[19] C > այնքան
[20] C > մեր
[21] E ասէ
[22] ABC > և

քին[1] զամենայն մարմին յանմարմնոյ ասեն[2] շարժել[3] յայտ է ուրեմն, թէ է՛ հոգի շարժող մարմնոյն, նաև Պղատոն ասելով՝ զմարմնափոխութիւն[4], ոչ այլ ինչ նշանակէ ասելով, եթէ ոչ զհոգի էութիւն իսկապէս և[5] անմահ: Հինգերորդ, հնարք և հանճարք, առաքինութիւնք և արուեստք, նաև բանք իմաստունք վկայեն զմարդոյ, թէ ունի հոգի բանական, անձնիշխան, ծնօղ այսպիսի իմն իմաստից և արուեստից: Վեցերորդ, գովութիւնք առաքինութեանց և յորդորմունք վկայեն գոլ[6] զհոգի[7], քանզի ոչ է թէ բարիք միայն գովեն զառաքինութիւն, այլ քանի ևս կարի չարք իցեն. գովելի ասեն զգեղեցիկն յառաքինութիւն և պարսաւեն զգարշելիքն ի չարութիւն: Եւթներորդ, նախագիտութիւնք և տեսիլք[8] երազոց վկայեն, թէ է՛ հոգի, որ իմանայ և ճանաչէ զառաջիկայսն և զտեսիլս հրաշալիս տեսանէ, զոր անկար է մարմնոյ[9] զգայարանօք տեսանել, քանզի ի դադարել զգայարանացս ի գործոյ և ի ննջել զհանգիստ գիշերոյ, միտք մեր յածեալ շրջին անդադարապէս. եթէ ոչ է հոգի, մարմին և զգայարանք մեր ննջին[10], ո՞վ է, որ խոկայ երազս և քննէ զամենայն անմարմին գոյացութիւնս, որ արտաքոյ է ի գիտութենէ զգայարանացս: Ութերորդ, զի ի[11] մեռանել[12] մարմնոյն ոչ այլ ինչ է, եթէ ոչ[13] բաժանումն հոգւոյ ի մարմնոյ, վասն զի այսպէս սահմանեցին իմաստասէրքն զմահն՝ անջատումն հոգւոյ ի մարմնոյ. քանզի թէ ո՛չ է հոգի՝ զիա՞րդ է մահ մարմնոյ անջատումն հոգւոյ: Իններորդ, զի Մովսէս սահմանէ զկենդանութիւնն ի մարմինն՝ զդիրք հոգւոյ ի նմա, ասելով, թէ՝ «Փչեաց յերեսս նորա շունչ կենդանի» [Ծնն. Բ. 7], իբր թէ եղ անդ հոգի կենդանի և կենդանարար, ապա ուրեմն՝ յայտ է, թէ է՛ հոգի: Տասներորդ, զի վկայէ գիրն Աստածաշունչ՝ զմարդն պատկեր Աստուծոյ [Ծնն. Ա. 27], իսկ մարմին ոչ կարէ լինել պատկեր Աստուծոյ, զի Աստուած ոչ է մարմին՝ յայտ է, թէ հոգին է պատկեր Աստուծոյ: Եւ թէ ոչ է էութեամբ և գոյութեամբ հոգի՝ զիա՞րդ ասէ Մովսէս, թէ «Արար Աստուած զմարդն ի պատկեր իւր՝ ըստ պատկերի իւրոյ[14] արար զնա» [Ծնն. Ա. 27], յայտ է, թէ է՛ ճշմարտապէս հոգի:

Այժմ բե՛ր ըստ խոստմանն մերում քննել իմաստասիրաբար[15], թէ զի՞նչ է նախախնամութիւն[16], և ապա զայն ևս, թէ նախախնամութեա՞մբ գոյանայ հոգի:

Գիտելի է, զի նախախնամելն է զեղեալն ըստ բնութեան[17] սահմա-

---

1 F ասացին
2 F > ասեն
3 F շարժիլ
4 ABD զմարմնափոփոխութիւն,E զմարմին անփոփոխութիւն] զմարմնափոխութիւն
5 E > և
6 F > գոլ
7 ABD զոգի
8 F տեսիւք
9 F մարդոյ
10 C ննջեն
11 C > ի
12 F մեռանիլ
13 C > ոչ
14 ABDEF Աստուծոյ
15 ABCDF իմաստասիրեսցուք
16 A ի նախախնամութիւնն
17 F բնութեամբ

նի ծննդեամբ զորդի ի հօրէ յառաջ բերել: Այսպէս և զիւրաքանչիւր տեսակ կենդանեաց[1] և զսերմանս բուսոց[2] փթթելութեամբ[3], ի միմեանց փոխանորդութեամբ, խնամօք, զիւրաքանչիւր ըստ[4] իւրում կարգի յառաջ ընծիւղել, զբոլորն անսխալ[5], անվնաս[6] և անեղծ պահելով[7] մինչև ի կատարած[8] աշխարհի: Եւ օրինակ քեզ, որպէս հիւսունք[9] և նկարագործք[10] անդրէաստեղծք, զի միայն ստեղծանեն և զկնի ստեղծանելոյն անհոգ են վասն նոցա: Իսկ օրինակ խնամելոյն, որպէս հովիւ, անդէորդ, այգէգործ, զոր թէ անխնամ թողուն՝ կորնչին, այլ ի հարկէ պարտին խնամել՝ զի կարասցեն տևել և մնալ: Իսկ նախախնամութիւնն Աստուծոյ ի վերայ արարածոցս երևի նախ, ի շրջագայութենէ աստեղաց[11], զի անդադար շրջագայելով զնոսա[12] զտիւ և զգիշեր կատարելով, զչորս եղանակս ժամանակաց և ի ձեռն այսու զարարածս[13] ի լինելութեան և ի հաստատութեան պահել: Երկրորդ, եղելութիւն և պակասութիւն անհատիցն զբոլոր տեսակն անվրէպ պահէ ըստ Արիստոտէլի, քանզի ասէ՝ զեղելութիւնն վասն մասնաւորին պակասութեան և զպակասութիւն մասնաւորին, զի տեղի տացէ եղելոյն: Երրորդ, գործ նախախնամութեան, զի մարդ՝ ի մարդոյ և արջառ՝ յառջառոյ և իւրաքանչիւր տեսակ յիւրմէ տեսակէ ծնանի, և ոչ այլ յայլմէ սերմանէ կարէ զնոյն զնմանն ծնանիլ[14] իւրում տեսակի: Չորրորդ, իւրաքանչիւր բուսոց[15] որակս, գեղեցկութիւնս, զօրութիւնս ինչ առ ի բուժումն հիւանդութեան[16] մարդկան և անասնոց, մանաւանդ թէ և քարանց պատուական[17] գոյնս[18] և զորութիւնս ի սոյն սակս՝ յայտնագոյն գոչեն[19] զնախախնամութիւնն Աստուծոյ: Հինգերորդ, զի ի մի և ի նոյն տեսակ[20] այսքան թիւ[21] բազմութիւն[22] անհատից[23] ծնանին և ոչ նմանին[24] միմեանց կերպարանօք կամ ձայնիւ. զոր թէ ոչ էր այսպէս կազմեալ նախախնամութիւնն Աստուծոյ՝ բազում և անթիւ չարիս սերմանեալ լինէր, ընդ մայրս և ընդ[25] քերցս[26] անկանել, և ոչ կարէին ճանաչել զհայր կամ զմայր, և ոչ լինէր ընտրութիւն չարի[27] և բարւոյ, և այլ բազում ոճիրս գործեցեալ լինէր առանց ընտրութեան: Վեցերորդ, նախախնամութեան Աստուծոյ ցոյցք պատրաստել զպէտս

[1] F կենդանւոյ
[2] C > բուսոց
[3] ABCDE փտելութեամբ
[4] E > ըստ
[5] A անսխալական
[6] A վնաս
[7] C պահել
[8] C կէտ կատարածի
[9] AD հիւսիւնք
[10] F նկարագիրք
[11] C երկնի և աստեղաց
[12] E նոցա
[13] F զամենայն զարարածս
[14] EF ծնանել
[15] C բուսոյ, F բուսուց
[16] CD հիւանդութեանց
[17] C պատուականաց
[18] ABDE պատուականագոյնս] պատուական գոյնս
[19] E գոչելոյ
[20] C տեսակէ
[21] CF անթիւ
[22] E բազմութեան
[23] E անհասից
[24] ABC ի նմանին
[25] ABE > ընդ
[26] E քորս
[27] A չարոյ

և զկարիս իւրաքանչիւրոցն, ըստ այնմ, թէ՝[1] «Աչք ամենեցուն ի քեզ յուսան[2], և դու տաս կերակուր նոցա ի ժամու» [Սաղ. ՃԳ. 27]: Եւթներորդ, ցուցանէ զնախախնամութիւնն Աստուծոյ[3] զծածկեալ[4] յայտնութիւն[5], որպէս շուշանային, որպէս աքարայն և այլոց բազմաց: Ութերորդ, յայտնի[6] նախախնամութիւնն Աստուծոյ պատիժք յանցանաց, որպէս ջրհեղեղին, Սոդոմայն և փարաւոնին: Իններորդ, պահպանութիւնք[7], որպէս Իսրայէլին յԵգիպտոս և յանապատին և զկնի Բաբիլոնին: Տասներորդ, ցոյցք[8] նախախնամութեանն Աստուծոյ վանումն թշնամեաց, որպէս Ամաղեկայ և[9] Սենեքերիմայն, և Հողէփեռնայն[10], և զկնի Գոգայն և Մագոգայն: Մետասաներորդ, մարգարէութիւնք վասն հանդերձելոցն[11] զգուշանալ ի մեղաց, զի մի անկցին վարմս պատժոց, որպէս յայտնի է քեզ յերկոտասան մարգարէսն և յայլսն ամենայն: Երկոտասան, ծածուկ երազոց յայտնութիւնք, որպէս Յովսեփայն, Դանիէլին և այլոց բազմաց: Երեքտասաներորդ, որպէս փրկութիւնք ի մէջ մահու երից մանկանցն ի մէջ հրոյն, Դանիէլին[12] ի մէջ գազանաց, Եղիային ի ձեռաց[13] Աքայաբու և Եզաբելի: Զորեքտասաներորդ, գթալ[14] մարդ[15] ի մարդ և մարդ[16] յանասունս և անասնոց[17] յիրեարս, զի ի ձեռն այսպիսի գթութեանց խնամեսցին[18] մնասցեն և մի՛ վնասեսցեն[19]: Հնգետասաներորդ, ի մէջ տագնապ նեղութեանց փութալ առ Աստուած աղօթիւք, զի յորժամ յամենայն ուստէք վճարեալ իցեն[20] փրկութիւն, հրաւիրէ բնութիւնս դիմել առ Աստուած, զի նովաւ է փրկութիւն: Վեշտասաներորդ, կատարումն ամենայն նախախնամութեանց[21] գալուստ միածնի Որդւոյն Աստուծոյ՝ ի փրկութիւն մարդկան զանազան խնամօք և պարգևօք և անթիւ բարերարութեամբ: Եւ այս՝ թէ քանի են յեղանակք[22] նախախնամութեան:

Բե՛ր տեսցուք[23], թէ ըստ նախախնամութեա՞ն գոյացաւ հոգի:

Եւ գիտելի է, զի նախախնամութիւնն ի յէէ է[24] և ի յէն ներգործէ[25], իսկ գոյացուցանելն[26] ի յոչէէ է[27] և ի յոչէսն[28] ներգործէ[29]: Քանզի արտաքին իմաստասէրքն յոյժ հե-

[1] F > թէ
[2] F հային
[3] F > Աստուծոյ
[4] E ծածկելոյն
[5] F յայտնութիւնն նշանակէ] յայտնութիւն
[6] C յայտնութիւն
[7] F պահպանութիւն
[8] A ցոյց
[9] ABCDE > Ամաղեկայ և
[10] C հողոյ փեռնայն
[11] E հանդերձելոյն
[12] E Դանիէլ
[13] BDE ձեռն
[14] A գթայր
[15] C մարդոյ, F որպէս մարդ գթայ] գթալ մարդ
[16] F > մարդ
[17] F անասուն
[18] AE նախամեսցին
[19] A վնասցեսցեն, B վնասեսցին
[20] CF իցէ
[21] BCDE նախախնամութեան
[22] D նշանակ
[23] F ասասցուք
[24] E յէ ի է, F յէ է] յէէ է
[25] A ներգործեալ
[26] E գոյացականն
[27] EF յոչընչէ է] ի յոչէէ է
[28] E յոչէ
[29] A ներգործեալ

ռաւորութիւն եդին ի մէջ ստեղծանելոյն[1] և նախախնամելոյն, քանզի նախախնամելն ի յէէ՛ն է և ըստ բնութեան կարգի լինի նախախնամութիւն, իսկ գոյացուցանելն ոչ լինի ըստ կարգի բնութեան, այլ պիտոյ է[2] նմա անհուն և անբաւ կարողութիւն[3], զի յոչէէն է՛ գոյացուցանէ: Ապա ուրեմն, գոյութիւն հոգւոյն ոչ է ըստ նախախնամութեան, այլ ըստ անհուն և անբաւ զօրութեան, վասն այնորիկ զոր[4] ինչ կամի կարէ[5] ստեղծանել, ըստ այնմ, թէ՝ «Զոր ինչ[6] կամեցաւ՝ և արար Տէր» [Սաղ. ճԼԴ. 6]:

Իսկ իմաստասիրելի է մեզ, թէ քանի ինչ իրս պիտոյ է ի զօրութիւն ստեղծագործութեան[7]: Եւ երևի տասն ինչ. նախ՝ զի Բանիւ[8] կարողանայ, երկրորդ՝ առանց[9] ժամանակի, երրորդ՝ առանց նիւթոյ, չորրորդ՝ առանց աշխատութեան[10], հինգերորդ՝ ինքնագոյ և ինքնուսումն գիտութեամբ, վեցերորդ՝ անսխալ[11] և բաւանդակ բարի[12], եւթներորդ՝ զի ի սկիզբն[13] զկատարածն տեսանէ, ութերորդ՝ դասիւ և կարգիւ[14], իններորդ՝ զի յետ ստեղծանելոյն միշտ է ընդ ստեղծուածն, տասներորդ՝ զի զոր ստեղծ՝ պարունակեալ ունի, ըստ այնմ[15], թէ[16] «Կրէ զամենայն Բանիւ զօրութեան իւրոյ» [Եբր. Ա. 3]: Այս թէ քանի իրս պիտոյ է ի զօրութիւն ստեղծագործութեանն[17]:

Տեսցուք և զայն ևս, թէ քանի իրս ներգործի ի[18] ստեղծանելն: Նախ, ներգործի[19] գոյութիւն, երկրորդ՝ յօդումն, երրորդ՝ դիրք, չորրորդ՝ կարգ[20], հինգերորդ՝ պիտանութիւն, վեցերորդ՝ բարին, եւթներորդ՝ զի իմաստութեամբ, ութերորդ՝ զի ոչ կարօտանայ[21] յաւելուածոյ, իններորդ՝ զշրջանն, տասներորդ՝ զժամանակն:

Որովհետև ասացաք յաղագս ստեղծանելոյ որպիսութեան[22], զօրութեան[23] և ներգործութեան նորին՝ բե՛ր այժմ ցուցցուք զտասներորդ գլուխն, թէ նո՞ր գոյացուցանէ Աստուած զհոգի մարդոյ՝ ոչ զմեր կարծիս, այլ զնախնի սրբոցն ասասցուք, յորս հակառակի Գրիգոր Նիւսեայ ընդդէմ այնոցիկ, որ ասէին նախախնամութեամբ գոյանալ զհոգի[24]: Եթէ նախախնամութեամբ[25] գործէ՝ ի միմեանց փոխանորդութեամբ անսխալ պահել զտեսակն, ապա ուրեմն, որք[26] նախախնամութեամբ գոյանալ ասեն[27]

[1] ABC ստեղծելոյն
[2] A են
[3] C կարող զօրութիւն
[4] F զիր
[5] F > կարէ
[6] A զի] զոր ինչ
[7] F ստեղծագործ
[8] ABDEF բանի
[9] A զի առանց
[10] F աշխատանաց
[11] D անոխակալ
[12] F անբաւանդակ] բաւանդակ բարի
[13] C զսկզբանն և] ի սկիզբն
[14] F կարգաւ
[15] F > ըստ այնմ
[16] C > թէ
[17] E > Այս թէ քանի իրս պիտոյ է ի զօրութիւն ստեղծագործութեանն
[18] BCDE > ի
[19] F ներգործութիւն ի
[20] F կարգաւոր
[21] C զոչ կարօտն] զի ոչ կարօտանայ
[22] C որպէս
[23] AE > զօրութեան
[24] BCDF զոգի
[25] ABC նախախնամութեան, E > գոյանալ զհոգի: Եթէ նախախնամութեամբ
[26] F որքան
[27] F > ասեն

զհոգի[1], ապականացու և մահկանացու ասեն, որպէս Ապողինար: Իսկ որք ասեն, թէ նոր ստեղծանէ, դնէ և այսմ զներհակն ասելով, թէ[2] նոր ստեղծանել ըստ իւր[3] մարմնոց[4] հոգի՝ երեք ազգ պակասութիւն երևի: Նախ, զի յայտնի տկարութիւն յԱրարիչն անկատար ստեղծանել զաշխարհս: Երկրորդ, զի թէ նոր[5] ստեղծանէ հոգի, գործակից լինի Աստուած չնացողաց: Երրորդ, սուտ գոլ ցուցանեն զՄովսէս, որ ասէ, թէ[6] «Հանգեաւ Աստուած յաւուրն եւթներորդի» [Ծնն. Բ. 1]: Եւ թէ ոյք բերցէ ընդդէմ[7] զբանն, որ ասէ Քրիստոս, թէ՝ «Հայր իմ մինչև ցայժմ գործէ և ես գործեմ» [Յովհ. Ե. 17], պատասխանէ Գրիգոր, թէ զայն յաղագս նախախնամութեան սակս[8] ասէ: Իսկ թէ ո՛չ նախախնամութեամբ և ո՛չ ստեղծմամբ գոյանայ հոգի՝ ի հարկէ հետևի ասել ոչ գոլ[9] հոգի, իսկ ոչ ոք[10] կարաց ի նորոց[11] կամ յարտաքնոց ասել ոչ գոլ հոգի, այլ[12] ամենեքեան խոստովանին զհոգի էութիւն ճշմարիտ, որպէս ցուցաք յառաջագոյն[13]:

Այժմ արտադրեսցուք զդիտաւորութիւն սրբոյն Գրիգորի[14], քանզի ասէ ի գիրս Կազմութեան, քսան և չորս ճառս, թէ արարիչն Աստուած մինչդեռ չէր կազմեալ զաշխարհս, ծանեաւ զհեստել մարդոյն ի պատուիրանացն, վասն այնորիկ զբազմանալն և զաճելն[15] ըստ օրինակի անասնոց կամեցաւ ընդ[16] պատկերին շարաւծել[17]: Նաև ծանեաւ ի նախագաղափարն զթիւ որքանութեան մարդկան, նաև զժամանակ որքանութեան կատարելոյն թուոյն նախադիտեաց[18] և ապա սկսաւ ստեղծանել, զի ոչ էր հնար լինել մեզ ըստ որքանութեան կարողութեանն Աստուծոյ, այլ ըստ որքանութեան տարողութեան մերոյ: Իսկ զի ասէ՝ ո՛չ ըստ նախախնամութեան գոյանալ զհոգի[19], զի մի՛ ապականութեան տացէ ցոյց յիրաւի: Իսկ զի ասէ՝ ոչ նոր ստեղծանել, վասն նախատեսութեանն[20] Աստուծոյ և կամեցեալ հրամանին յիւրումն[21] ժամանակի ըստ մարմնոյ գոյաւորութեան, զոր նախատեսութեամբն նախքան[22] զլինելն աշխարհի տեսաւ: Եւ տեսութիւնն այն սահման եղև, զի իւրաքանչիւր[23] հոգի ընդ լինելութիւն իւրաքանչիւր մարմնոյն[24] գոյանայ, որով և զաճել հրամանն եդ ի վերայ, իբր առ յապայսն, թէ՝ «Աճեցէք և բազմացարուք և լցէք

---

1 BCDEF զոգի
2 F > նոր ստեղծանէ, դնէ և այսմ զներհակն ասելով, թէ
3 C իւրաքանչիւր, E իւրոյ
4 D մարմնոյ
5 F > նոր
6 F > թէ
7 E ի դէմ, F > ընդդէմ
8 F > սակս
9 ABDE > գոլ, F գոյ
10 D > ոք
11 E ներքնոց
12 A > այլ
13 AC յառաջ գոյն
14 F > սրբոյն Գրիգորի

15 E զաճիլն
16 D ըստ
17 E շարժել
18 C նախագիտեաց
19 BCDF զոգի
20 E նախատես խնամութեան] նախատեսութեանն
21 F յիւրաքանչիւրում
22 F նախ
23 F զիւրաքանչիւր] զի իւրաքանչիւր
24 C մարմնոցն

զերկիր» [Ծնն. Թ. 1]: Եւ զայս կարծիս հաստատէ առաքեալն Պօ-ղոս ասելով[1], թէ՝ «Նախքան զլինելն աշխարհի ընտրեաց զմեզ Աստուած ի սահմանեալ նախատես-սութիւն իւր, զանթիւ բազմութիւն մարդկան և զժամանակ կատա-րելոյ որքանութեան մարդկան» [Եփես. Ա. 4-6]: Յաղագս որոյ ասէ Մովսէս, թէ «Արար Աստուած զմարդն ի պատկեր իւր[2]» [Ծնն. Ա. 27], և ոչ ասաց թէ՝ զմարդն[3]: Իսկ բնութիւն մեր զի տկար է, ըստ իւ-րում[4] անկարութեանն ոչ կարաց ի միում բոպէի զամենայն յառաջ բերել[5], այլ ի ձեռն ժամանակաց ըստ սահմանեալ նախատեսու-թեանն Աստուծոյ կարողանայ և ծնանի և բերէ զմի մի մարմին, զիւրաքանչիւր[6] անհատ դասիւ և կարգաւ: Նոյնպէս Բանն Աստու-ծոյ և սահման նախատեսութեան[7] ըստ իւրաքանչիւր մարմնոյ զգո-յաւորութիւն հոգւոյ ստանայ ոչ թէ հրաման նոր, այլ սահման նա-խատեսութեանն Աստուծոյ՝ ըստ կարգի բնութեան և ըստ տնկա-ւորիլ մարմնոյն, շնորհէ և զհոգ-ւոյն ծագումն զյառաջ նկատեալն յԱստուծոյ նախքան[8] զլինելն աշ-խարհի, լինել յիւրում ժամանակի, բայց ոչ յառաջագոյն ստեղծեալ, այլ սահմանեալ գոյանալ ըստ իւ-րաքանչիւր մարմնոյ ի նկատմա-նէն, որ ի վեցերորդ աւուրն հրա-մայեցաւ: Յորմէ լուծանին երկու տարակուսանք: Նախ, որ ասէին[9] զաշխարհս անկատար յաղագս դեռևս ստեղծանելոյն[10], և այս կա-րի յօգուտ, զի ըստ նախատեսու-թեանն Աստուծոյ իւրաքանչիւրքն յիւրաքանչիւր ժամանակս զաշ-խարհս լի և կատարեալ երևեցուս-ցեն մինչև ի վերջին մարդն և ոչ անկատար: Երկրորդ, զի իմաստա-սէրքն զկատարելութիւն աշխարհի զընդհանուրն ասացին, որ է տե-սակն, զի միշտ մնայ, և ոչ զիւրա-քանչիւրսն՝ որ[11] լինին և եղծանին: Իսկ երկրորդն, որ ասեն գործա-կից առնել զԱստուած շնացողաց՝ ոգի պարգևելով ի պոռնկութենէ ծնեալք[12] մարմնոց, գիտասցէ, զի որ պոռնկեցաւն և որ շնացաւն[13] կամք նորա էր չար, և ոչ թէ գործ ամուս-նութեանն, զի ընտրութիւն բարւոյ և չարի՝ կամքն է: Եւ զայս ծանիր յօրինակէ մարգարէին Ամովսայ[14], զի առ[15] կին պոռնիկ և ամուսնա-ցաւ ընդ նմա, և զի[16] կամքն նորա ի բարին էր, առ զհրամանս[17] Աստու-ծոյ կատարելոյ, ոչ համարեցաւ նմա ի մեղս, այլ յարդարութիւն, վասն զի գործ ամուսնութեան զօրհնութիւնն Աստուծոյ սեփհա-

---

[1] F > ասելով
[2] C > իւր
[3] ABCE > զմարդն ի պատկեր իւր] զմարդն, F > և ոչ ասաց թէ զմարդն
[4] F իւրոյ
[5] C յառաջաբերել] յառաջ բերել
[6] F զի իւրաքանչիւր] զիւրաքանչիւր
[7] ABEF նախ տեսութեան, C նախ տես] նախատեսութեան:
[8] A նախ
[9] A ասէ
[10] F ստեղծանել
[11] E որք
[12] CEF ծնեալ
[13] ABCDE շնացն
[14] C Յովսեայ, E Ովսեայ, F Ովսէէ մարգարէին] մարգարէին Ամովսայ
[15] F էառ
[16] F > զի
[17] E ի զիրամանս

կան ունի սկզբնաւորեալ ի[1] Բանէն Աստուծոյ, թէ օրհնեաց զնոսա և ասէ՝ «Աճեցէք», և ո՛չ կարօտանայ[2] Բանն Աստուծոյ վասն կամաց չնացողին, այլ կատարի աստ սքանչելի իմն իր, զի կամք գործողին պատժի և գործն ըստ օրհնութեան զիւրն՝ առնու պարգև: Երրորդ[3], զի ասէ Գրիգորիոս[4], թէ գիտէ նախախնամութիւնն Աստուծոյ զծնեալն[5] ի պոռնկութենէ կա՛մ իւր լինել օգուտ, կա՛մ աշխարհի. վասն այսորիկ տեղի տայ սահմանեալ[6] հրամանին կատարել[7] զիւրն՝ ընդ[8] մարմնոյն[9] գոյաւորութեան չնորհել զհոգի[10], և զօրինակն ունիս ուսանել[11] ի Սողոմոնէ, որ ծնաւ[12] ի կնոջէն Ուրիայ[13]: Իսկ երրորդ տարակուսանքն, որ ասէ Մովսէս, թէ՝ «Հանգեաւ Աստուած յաւուրն եւթներորդի» [Ծնն. Բ. 1], ճշմարիտ է, զի ոչ նոր նկատումն և ոչ սահման նոր, այլ մի և նոյն[14] նկատումն և սահմանն, որ ի վեցերորդումն աւուրն սահմանեցաւ՝ ըստ իւրաքանչիւրոց մարմնոյն լինելութեան[15] և ծագումն հոգւոյ, և յետ այնորիկ հանգեաւ, քանզի որպէս մարմինն ըստ իւրաքանչիւր կարգի աճման բերէ զիւրաքանչիւր անհատ, այսպէս նկատեալ սահման հրամանին[16] ըստ իւրաքանչիւրոց չնորհէ զհոգի[17], ըստ այնմ, թէ՝ «Հոգին երթայ առ Աստուած, որ ետ զնա» [Ժող. ԺԲ. 7], և թէ՝ «Հոգի յինէն ելցէ և զամենայն չունչ ես արարի» [Եսայ. ԾԷ. 16]: Իսկ Գրիգորիոս ոչ թէ ի ծածուկ, այլ յայտնապէս հրատարակէ[18] և գոչէ ի գիրս Կազմութեան երեսուն և մի ճառն, թէ՝ մի՛ յառաջագոյն դնել[19] զայլ այլոց, քանզի ոչ յառաջ քան զմարմինն ասէ գոյանալ զհոգիսն[20], և ոչ յառաջ քան[21] զհոգիսն՝ զմարմինսն[22]: Նախ, զի մի խեռիցի առ ինքն մարդն ըստ ժամանակին զանազանութեանն բաժանեալ ի մի և ի նոյն գոյութիւն՝ առաջին և յետին ասելով[23]: Երկրորդ, տայ օրինակ զբոյսս՝ սերման[24], զխոտն, զցողունն, զծրունքն[25], զպտուղն, զքիստն, և ոչ ոք ի սոցանէ ըստ բանի առաջին և երկրորդ գոյ, այլ համանգամայն, բայց ըստ կարգի և ըստ սահմանի իւրաքանչիւր յիւրում ժամանակին երևի՝ ըստ սահմանելոյն Աստուծոյ: Երրորդ, տայ օրինակ զայրապատկերն հատեալ[26] ի նիւթոյ և ըստ արուեստին կարգաւ զհետ գայ նկատեալ տե-

[1] F իսկ զբնաւորեալ] սկզբնաւորեալ ի
[2] C տկարանայ
[3] CD երկրորդ, E երկու
[4] E Գրիգոր
[5] F զի ծնեալն
[6] F սահմանել
[7] A կատարեալ
[8] F ըստ
[9] E մերոյն
[10] BCDEF զոգի
[11] F ուսանիլ
[12] F > որ ծնաւ
[13] A Ուրիայի
[14] F > նոյն
[15] F լինելութեանց

[16] AB > հրամանին
[17] BDEF զոգի
[18] E հրապարակէ
[19] F դնէ
[20] BCD զոգիսն
[21] E > զմարմինն ասէ գոյանալ զհոգիսն, և ոչ յառաջ քան
[22] F հոգին քան զմարմինս] քան զմարմինն ասէ գոյանալ զհոգիսն և ոչ յառաջ քան զհոգիսն՝ զմարմինսն
[23] ABCDE ասել
[24] F զբոյս՝ սերմանն] զբոյսս՝ սերման
[25] F զծունկն
[26] F հոտեալ

սակն յարարչագործ արուեստաւորէն եթէ մարդոյ, եթէ առիւծոյ[1], այսպէս իմայ և յաղագս մարդոյ և գոյաւորութեան հոգւոյ: Այս յաղագս հոգւոյ՝ թէ որպէս գոյանայ:

Եւ զի նախ տրամատեցաք զտեսակ հոգւոց երիս գոլ՝ տնկական, զգայական և բանական, իսկ յաղագս տնկականին և զգայականին իմաստասիրեցաւ ի մէնջ բաւականապէս, այժմ պարտիմք ասել յաղագս բանականին: Եւ նախ զայն քննեսցուք, թէ տնկականն և զգայականն ե՞ն ի բանականն[2], և թէ որիշ[3] որիշ էութիւնք են[4]:

Եւ գիտելի է, զի սոքա ոչ են որիշ էութիւնք ի բանական հոգին, այլ Պղատոն մասն ասէ, իսկ Արիստոտէլէս[5] զօրութիւն, քանզի ունի հոգի բանական ի յէութիւնն իւր զօրութիւն իմացական, զգալ զառաջի[6] եղեալսն և կենդանացուցանել[7] զմարմինն յորս հպի կերակրականաւն և աճեցականաւն[8] և ծննդական ներգործութեամբ: Եւ զայս ի յէութիւնն իւր բանական հոգին ունի[9] իբր զօրութիւն իմն ներգործական բնաւորեալ ընդ էութեանն իւրում, որպէս ունի քահանայապէտն զլուսաւորական և զմաքրողական զօրութիւն: Եւ այս յաղագս այսր[10] խնդրոյ[11] բաւական լիցի:

Բէ՛ր տեսցուք զմետասաներորդ գլուխն՝ եթէ զի՞նչ է հոգի ըստ սահմանի:

Հոգի է էութիւն անմարմին, անմահ, անձնիշխան, մշտաշարժ, բանական: Իսկ թէպէտ յառաջագոյն քննեցաք կատարելապէս, թէ էութիւն է և ոչ[12] պատահումն, բէ՛ր առ տեղեաւս ասասցուք[13] սուղ ինչ պատճառս վասն բանիս այս[14], որ եղաւ[15] ի սահման հոգւոյ՝ թէ էութիւն է:

Եւ գիտելի է, զի յիրաւի եղաւ աստ էութիւն: Նախ, զի բոլոր մարդն բաղկանայ ի հոգւոյ և ի մարմնոյ, իսկ միևնոյն էութիւն զիա՞րդ լինի մի մասն գոյացութիւն և մի մասն պատահումն՝ որ է անհնար: Յայտ ուրեմն է, թէ ո՛չ է պատահումն, այլ էութիւն: Երկրորդ, զի հոգի է ենթակայ իմաստից և գիտութեանց՝ յայտ է, թէ գոյացութիւն է և ոչ պատահումն, զի պատահումն ոչ կարէ ենթակայ լինել պատահմանն: Երրորդ, զի իր, որ ըստ ինքեան կարէ մնալ և տևել առանց ապականութեան՝ ոչ ասի պատահումն, իսկ հոգի ըստ ինքեան կարէ կալ[16] և[17] տևել և մնալ: Եւ այս յայտ է յետ բաժանման մարմնոյն:

Բէ՛ր այժմ տեսցուք զերկրորդ բառն, որ եղաւ ի սահմանն, թէ՝ անմարմին:

Եւ գիտելի է, զի մարմին, իր ի միում ժամանակի[18] և ի միում

1 E առիւծու
2 C բանականէն
3 ABC են որիշ
4 C > են
5 E Արիստոտէլ
6 E զառաջ
7 F կենդանացուցեալ
8 EF աճականաւն
9 A ունին
10 E այս, CF այսորիկ
11 C > խնդրոյ
12 F > ոչ
13 CDEF տացուք
14 F > այս
15 ABCF եռաւ
16 F կեալ
17 ABD > և
18 BCDEF ամանակի

մասին ոչ կարէ ընդունել զերկու ներհակս՝ որպէս զսեաւն և զսպի-տակն, իսկ հոգի զերկու ներհա-կաց գիտութիւն ի միում մասին և ի միում ժամանակի կարէ ընդու-նել զսահման նոցին՝ եթէ[1] սպի-տակն գոյն է արտադատող աչաց, և սեաւն գոյն է բաղդատող աչաց: Երկրորդ, զի ոչ է կար մարմնոյ յա-ղագս թանձրութեան[2] ընդ[3] յառաջ եղեալն իւր թափանցել[4], իսկ հոգի կարողանայ թափանցել[5] ընդ բո-լոր յառաջ եղեալն իւր և ոչ թողու մասն թափուր[6] յինքենէ: Երրորդ, զի մարմինն ոչ կարէ կալ և շրջել ի միում ամանակի, իսկ հոգի կարէ կալ ի մարմնի և շրջել իմացմամբ յերկինս և յերկրի և յամենայն ու-րեք: Չորրորդ, զի ամենայն մար-մին արտաքուստ շարժի, իսկ հոգի յինքենէ շարժի: Հինգերորդ, զի ոչ կարէ մարմին[7] միևնոյն ի բազում մասունս բոլորապէս լինել, ի հո-գի բոլորն է ի բոլոր մարմինն և բոլորն է յիւրաքանչիւր մասունս մարմնոյն: Վեցերորդ, զի ամենայն մարմին իւր[8] պարունակութիւն ու-նի, իսկ հոգի ոչ պարունակի, այլ պարունակէ զմարմինն, որպէս ասէ Գրիգորիոս ի ճառս միաւորու-թեան հոգւոյ և մարմնոյ, թէ[9] ոչ է որպէս[10] արեգակն և հուր և ճրագ՝ ի միում տեղւոջ կալով և զայլս լուսաւորէ[11], իսկ անձն[12] ոչ այսպէս, այլ անմարմին գոլով ոչ է պարագ-րեալ[13] ընդ տեղեաւ, այլ յամենե-սեան[14] տարեալ լինի, և ոչ է մասն լուսաւորեալ ի նմանէ, որում ոչ բոլորն մերձ է, քանզի ոչ է կալեալ ի մարմնոյ[15], այլ ինքն ունի զմար-մինն, և ոչ ի մարմնի է, որպէս[16] յա-մանի ինչ կամ ի տկի, այլ յաւէտ մարմինն ի նմա՝ այս ըստ Գրիգո-րի: Եւթներորդ, զի ամենայն մար-մին ի մի և ի նոյն տեսակէ մեծ և փոքր, իսկ հոգի[17] մարդոյ ոչ կարէ ասիլ մեծ և փոքր[18], քանզի ոչ ոք[19] կարէ ասել զբազմամեայ ծերոյ՝ հոգի մեծ և զմի օրեայ մանկանն՝ փոքր[20], այլ միևնոյն հաւասարու-թեամբ: Ութերորդ, զի ամենայն մարմին ըմբռնի տեղեաւ, իսկ հո-գի ոչ ըմբռնի տեղեաւ[21], քանզի ոչ է ի մարմին իբր ընդ տեղւոջ, այլ կալմամբ սիրոյ տռփմամբ՝ որ-պէս Աստուած ի[22] մեզ, և սոյն միտս ըստ Գրիգորի: Իններորդ, զի ամե-նայն մարմին եռակի տարորոշ է, իսկ հոգի ոչ է եռակի տարորոշ, զի ոչ ունի երկայնութիւն, լայնու-թիւն կամ[23] թանձրութիւն: Տասներորդ, զի ամենայն մարմին տեսու-

[1] F > եթէ
[2] F մարմնոյ թանձրութեան
[3] E ըստ
[4] F թափանցանել
[5] CDEF թափանցանել
[6] F ի] թափուր
[7] F > մարմին
[8] F > իւր
[9] ABD և] թէ
[10] CD > որպէս
[11] C լուսաւորեն
[12] E հոգի
[13] E պարտ գրել] պարագրեալ
[14] ABCDF յամենայնս
[15] F մարմին
[16] F ինչ է ըստ] է որպէս
[17] ABD ի հոգի
[18] E > իսկ հոգի մարդոյ ոչ կարէ ասիլ մեծ և փոքր
[19] B > ոչ ոք, DEF > ոք
[20] F կամ փոքր զմի օրեայ մանկանն] և զմի օրեայ մանկանն փոքր
[21] F > իսկ հոգի ոչ ըմբռնի տեղեաւ
[22] E ընդ
[23] ACEF և

թեամբ աչաց ըմբռնի, իսկ հոգի անտեսանելի է: Մետասաներորդ, զի մարմին[1] իր անհնար է առանց միջնորդի ինքն զինքն տեսանել, իսկ հոգի ինքն զինքն տեսանէ և[2] քննէ: Երկոտասաներորդ, զի ամենայն մարմնոյ ծնունդ հատանի յինքենէ, իսկ ծնունդ հոգւոյ՝ որ է բանն, ծնանի և անբաժանելի[3] մնայ յինքենէ, յայտ է, թէ անմարմին է[4]: Երեքտասաներորդ, {զի ամենայն մարմին, որ շարժի[5] երբեմն շարժի և երբեմն դադարի, իսկ հոգի մշտաշարժ գոլով՝ ոչ երբէք դադարի, յայտ է, թէ անմարմին է, վասն զի մշտաշարժ է:

Բե՛ր[6] տեսցուք և զերրորդ բառն, որ եդաւ ի սահմանն՝ անձնիշխան գոլ զհոգի[7], զի ոչ է ընդ հարկիւ[8], այլ ազատ ի կամս իւր, զոր կամի՝ կարող է առնել՝ եթէ բարի և եթէ չար: Առաջիկայ մեզ քննել՝ թէ վա՞ն էր[9] եղաք անձնիշխան:

Գիտելի է, զի ի[10] հարկէ ընդ բանականութեան մտանէ[11] անձնիշխանութիւնն, քանզի բանականին է՛ ինչ, որ տեսական է, և է՛ ինչ, որ գործնական: Տեսական է ընդ մտաց իմանալ, թէ որպիսի ունին[12] էքս, իսկ գործնական՝ խորհեցողականն սահմանել գործելեացն զուղիղ բանն: Եւ կոչեն զտեսականն՝ միտս, իսկ զգործնականն՝ բան, զոմն՝ իմաստութիւն[13], և զոմն՝ խոհականութիւն: Եւ ամենայն, որ խորհի, ի վերայ նորին գոլով յօժարութեանց խորհի, զի զնախադատեալն ի խորհրդոյն առցէ և զառեալն գործեսցէ: Արդ[14], հարկ է ամենայնիւ, որ ունի զխորհելն՝ և տէր գործոցն գոլ, քանզի թէ տէր[15] ոչ իցէ գործոյն[16] աւելորդ ունի զխորհելն: Եւ եթէ այս ի հարկէ առ ընաւորեցաւ բանականին՝ տէր գոլ[17] գործոց, այսինքն՝ անձնիշխան, քանզի կա՛մ ոչ եղիցի բանական, և կա՛մ թէ բանական եղիցի՝ տէր եղիցի գործոց, և տէր գոլով գործոց՝ ամենայն իրաւք անձնիշխան եղիցի: Յերկոցունց ուրեմն ժողովի ի մարդոյն՝ ի հարկէ անձնիշխան գոլ և փոփոխելի, վասն զի եղական[18] է անձնիշխան, վասն զի բանական է: Արդ, որք մեղադրեն զԱստուած, զի ոչ արար անընդունակ չարութեան զմարդն, այլ անձնիշխան, զի զոր կամի՝ կարէ առնել, այնպիսիքն զանխլանան ինքեանց՝ մեղադրելով Աստուծոյ, զի բանական արար զմարդն և ոչ անբան. քանզի ի[19] հարկէ միոն յերկոցունց՝ կա՛մ լինել անբան և ոչ գոլ անձնիշխան, և կա՛մ գոլ բանական և լինել անձնիշխան: Արդ, ի հարկէ ամենայն ընութիւն բա-

[1] F զմարմին] զի մարմին
[2] AC > և
[3] F անհատանելի
[4] E > է
[5] F > որ շարժի
[6] BDEF > բեր
[7] F > զհոգի
[8] E հարկաւ
[9] F > էր
[10] BDF > ի
[11] F մտանել
[12] F ունի
[13] EF իմաստասիրութիւն
[14] F երկրորդ
[15] ABCD > թէ
[16] E գործոց
[17] F գոլով
[18] F յեղանակ
[19] F > ի

նական անձնիշխան է և փոփոխելի ըստ իւրում բնութեան, այլ որ ի ստորակայէս նիւթեղեն՝ ըստ երկոցունց եղանակաց ունին զփոփոխումն, այսինքն՝[1] ըստ նիւթոյն և ըստ լինելոյն, իսկ որք ոչ եղեն[2] ի ստորակայէ[3] նիւթոյ՝ ըստ միոյն ունին[4] զփոփոխումն, այսինքն՝ ըստ[5] լինելոյն:

Դարձեալ գիտելի է, զի ի[6] լինել տէր գործոյ՝ որ է անձնիշխանութիւն, բազումք հակառակին և ընդդիմանան, վասն որոյ ի հարկէ խնդրի, թէ ե՞ն ի մեզ գործք անձնիշխան, երկրորդ, թէ ո՞յք են ի մեզ գործք անձնիշխան, երրորդ, թէ ո՞յ յիշեմք յատկապէս արտադրել:

Եկեսցուք յառաջին գլուխն, որք ընդդիմանան բառնալ զանձնիշխանութիւն. եթէ եղելոցս ամենեցուն կա՛մ Աստուած է պատճառ, կա՛մ հարկն, կա՛մ ճակատագիրն, կա՛մ բնութիւնն, կա՛մ բախտն, կա՛մ ինքնամատոյցն: Այլ Աստուծոյ գործ է էութիւն կամ նախախնամութիւն: Իսկ հարկի՝ միշտ զնոյն օրինակ ունողաց, որպէս ձեան ցրտացուցանել և հրոյ ջեռուցանել, երկնի և արեգական ընթացք և այլ սոյնպիսեաց միշտ զնոյն օրինակք[7] չարժի ունողաց: Իսկ ճակատագրի՝ ի հարկէ ի ձեռն նորին կատարիլ[8]: Իսկ բնութեան՝ լինելութիւն և աճելութիւն, ապականութիւն՝ որպէս տունկք և կենդանիք: Բախտի՝ պակասն և անակնկալիք[9], քանզի սահմանեն[10] զբախտ դիպումն և ընթացակցութիւն[11] երկուց պատճառաց, զյօժարութիւն երկուցն այլ և այլ սկսմամբ, իսկ զկատարումն նոցունց հակառակ սկզբանց, որպէս գերեզման փորելով՝ գանձ գտանել[12], քանզի[13] որ եդն անդ՝ վասն այն[14] եդ, զի ինքն առցէ, իսկ որ եգիտն ոչ վասն[15] գանձ[16] գտանելոյ փորեաց, այլ վասն գերեզման փորելոյ՝ երկոցունցն յօժարութեանց հակառակն դիպեցաւ: Իսկ ինքնամատոյցն՝ անշնչիցն դիպմունք առանց բնութեան և արուեստի: Արդ, եթէ[17] որպէս հակառակողքն ասեն՝ ոչ գոլ անձնիշխան և տէր գործոց զմարդ, հնգիցս այսոցիկ ու՞մ տացուք զգործեալս[18] ի մարդկանէ: Իսկ թէ Աստուծոյ տացուք[19] զգործեալսն՝ է՛ դժոխային բարբառք զգործ ամօթալիս և զչար անօրէն[20] վարս ի մարդիկք[21] յԱստուած վերաբերել և պատճառ[22] չարեաց ասել՝ որ միշտ բնութեամբ է՛ բարի: Իսկ եթէ տացուք հարկի՝ նաև այս ևս երևի սուտ, զի

1 ABCDF > այսինքն
2 F են
3 ABCD > ստորակէ
4 F ունի
5 E > ըստ
6 BDE > ի
7 E օրինակ
8 F կատարել
9 F անակնկալին
10 F սահման
11 E ընթերցակուցութիւն
12 EF գտանեն
13 F քան
14 F իւր
15 E եթէ վասն
16 EF > գանձ
17 Fչորրորդ թէ] արդ եթէ
18 F զգործս
19 AD տացուց
20 E անօրէնութիւն ի
21 D մարդիկքս, E մարդիկ
22 F պատճառք

ոչ միշտ գնոյն և զմի գործ գործէ մարդ՝ զչար[1] կամ զբարի[2], այլ երբեմն զբարի և երբեմն զչար: Այլև ո՛չ ըստ ճակատագրի, զի և նա հարկին է: Այլև ո՛չ բնութեան, քանզի բնութեան գործ է կենդանիք[3] և տունկք: Այլև ո՛չ բախտի, քանզի ոչ պակաս և անակնկալիք են մարդկան գործք: Այլև ո՛չ ինքնամատուցին, զի անշնչից և անբանից են դիպմունք: Արդ, յայսմ ամենայնէ յայտնի[4] եղև՝ թէ մարդն է սկիզբն և տէր գործոց իւրոց անձնիշխան կամօք: Երկրորդ, պատասխանի, զի թէ[5] որպէս ասեն հակառակողքն ոչ է մարդ տէր գործոց իւրոց՝ աւելորդ ունի զխորհելն[6], քանզի զի՞նչ պետք է նմա խորհուրդ, եթէ ոչ է տէր գործոց իւրոց, իսկ զպատուական և զգեղեցիկն ի մարդ աւելորդ ասել՝ յոյժ անտեղի է: Արդ, եթէ խորհի մարդ՝ գործոյ սակս խորհի, քանզի[7] ամենայն խորհուրդ՝ գործոյ աղագաւ և[8] վասն գործոյ: Երրորդ, որոց ներգործութիւնքն ի մեզ են, այսոցիկ և գործքն ըստ ներգործութեան ի մեզ են[9], գործքն՝ որ ըստ առաքինութեան, քանզի ի մեզ ուրեմն են և առաքինութիւնք, վասն այնորիկ ի մեզ են, որ ըստ առաքինութեան ներգործութիւնք: Յայտնէ Արիստոտէլ ի վերայ բարոյական[10] առաքինութեան, քանզի ասէ՝ զոր ինչ գործելովն ուսանիմք՝ զայսոսիկ[11] ուսանելովն և գործեմք. յաղթկու լինել հեշտութեանց՝ ուսեալ զգաստ լինիմք, և եղեալք զգաստք՝ յաղթկու լինիմք[12] հեշտութեանց: Չորրորդ, զի ի մեզ են խոկալ և կրթիլ՝ և այս յամենեցունց խոստովանի[13] ի մեզ գոլ, և խոկմունք ունակութեանց են տեարք, քանզի սովորութիւն ի բազում ժամանակս բնութիւն[14] մակստացական լինի, իսկ թէ տէր ունակութեանց[15] է խոկումն[16] և ի մեզ է խոկալն, ի մեզ է և ունակութիւնն, և որոց ի մեզ է ունակութիւնն՝ ի մեզ է և սոցունց գործքն, որ ըստ ունակութեանց՝ արդարացիս[17] կամ անիրաւս: Հինգերորդ, զի ե՛ն ինչ, որ ի մեզ է առնելն, յայտնեն յորդորմունք և խրատք, քանզի ոչ ոք յորդորէ զմարդ ոչ քաղցնուլ կամ ոչ ծարաւել[18] և ոչ[19] թռչել[20], զի յայսմ չունիմք կարողութիւն, զի ոչ է ի մեզ առնելն զայս: Վեցերորդ, զի[21] թէ ոչ էր ի կամս գործք մեր՝ աւելորդ[22] են օրէնք, քանզի բնաւորապէս ամենայն ազգ[23] օրինօք վարի՝ գիտենալով, թէ իշխանութիւն ունին գործել զորս ինչ օրինադրեն,

[1] F կամ զչար
[2] E > զչար և զբարի
[3] F կենդանականք] է կենդանիք
[4] EF յայտ
[5] F > թէ
[6] E զխորհիլն
[7] F մարդ քանզի
[8] E է և
[9] F > են
[10] A բարուական
[11] F զայսպիսի
[12] E > լինիմք և եղեալք զգաստք յաղթկու լինիմք
[13] F խոստովանելի
[14] F > բնութիւն
[15] F տերութեանց] տէր ունակութեանց
[16] E և խոկման] է խոկումն
[17] D արդար
[18] ACDEF ծարաւիլ
[19] A > ոչ
[20] EF թռչիլ
[21] F > զի
[22] F աւելորդք
[23] E ազգք, F > ամենայն ազգ

քանզի բնաւորապէս է յամենայն մարդկան գիտութիւնս, զի ի մեզ է առնելն, վասն որոյ[1] իւրաքանչիւր գործոցն գով[2] կամ պարսաւ զկնի առաքեն[3]: Այլ զի բազումք են, որոյ ոչ իշխեմք, որպէս հարստանալ կամ ողջն գոլ կամ շինուածք մարմնոյ ուժգին լինել ըստ բնութեան կամ իշխան, նաև նախախնամութեան վախճան առելոց, այլև ոչ ի դիպուածոց բարութեանց[4] և ոչ հարկի: Այս ութիցս ոչ եմք տեարք, այլ որ զհաւասարն ունի զլինելն ի մեզ՝ եթէ՛ զինքն և եթէ՛ զդիմակն իւր, այսպիսեացս իշխեմք և անձնիշխան գոլ ասեմք:

Բե՛ր յաղագս բանականին ասասցուք, որ եդաւ ի սահմանն: Բանականութիւն է իմացողական և դատողական[5] գոլ: Դարձեալ, բանական[6] ասի, որ առ ի խուզողութիւն իրի բան բան[7] խուզէ և զորս գտանէ՝ ժողովեալ շարագուգէ բան, վասն որոյ ստուգաբանելով ժողովեալ գիտութիւն ի ներս[8] ի միտքն բան[9] ներ}[10]տրամադրեալ կոչի, և զարտաքս բերեալն բան՝ բան շարադրեալ և ի լսելիս արկեալ, որ և նա բան կոչի՝ կա՛մ վասն մասն մասն ժողովելոյ, կա՛մ[11] վասն աշխատութեան բան կոչի, և[12] կա՛մ վասն բանիւ թարգմանելոյն:

Բայց զկատարեալ գիտութիւն սորա ի[13] սահմանս հրեշտակաց բացայայտեսցուք, այլ քանզի[14] վասն անմահութեան բառին[15] ոչինչ իմաստասիրեցաք, քանզի յառաջագոյն ասացեալք բաւականապէս, իսկ բե՛ր տեսցուք[16] զսահման հրեշտակաց, որպէս խոստացաք:

Հրեշտակ է գոյացութիւն անմարմին, իմացական, անձնիշխան[17], մշտաշարժ, անմահ և սպասաւոր Աստուծոյ: Ի սահմանս այս՝ գոյացութիւնն եդաւ ի տեղի սեռի, իսկ այլ բառքն՝ ի տեղի[18] բաղկացուցիչ զանազանութեան[19]. քանզի ասելով «գոյացութիւն»՝ զհաստատ էութիւն նոցա նշանակէ, իսկ «անմարմին» ասելով՝ յատկացուցանէ յամենայն տարրական կարծեաց՝ միայն ունելով զէն[20] և որով է պարզ և վճիտ էութիւն, իսկ «իմացական» ասելով՝ տարբերէ ի բանականէ, զի բանականն է[21] զօրութիւն ներխուզական[22] պատճառին և պատճառելոյն. նմին իրի[23] բան կոչի յաղագս բաղադրելոյ[24] անուան և բայի և այլոց վեցից մասանց բանի: Իսկ իմացականն ոչ այսպէս, այլ միահաղոյն տեսութեամբ նկատմամբ զկատարեալ գիտութիւն իրին

[1] F զի որպէս] որոյ
[2] F կամ գով
[3] A առաքեմ
[4] F բարեաց
[5] E > և դատողական
[6] F բան
[7] F > բան
[8] BF ներքս
[9] F > բան
[10] C > {զի ամենայն մարմին... ի միտքն բան ներ}, (ձեռագրի թերթը պոկված է)
[11] ABDEF > կամ
[12] ABDE > և
[13] ABDEF > գիտութիւն սորա ի
[14] F > քանզի
[15] F > բառին
[16] BDE բերցուք] բեր տեսցուք
[17] F անձնիշխան է
[18] F տեղ
[19] F զանազանութեանց
[20] AC > զէն
[21] F բանական] բանականն է
[22] A ներեսուզական
[23] F > իրի
[24] F բացատրելոյ

*ճանաչէ՝ վասն որոյ իմացական կո-
չի, և զի իմացականս զպարզ էու-
թիւնս հրեշտակին բացայայտէ, և
բանականն՝ զնուազ պարզութիւնն
հոգւոյ առ հրեշտակս բաղդատէ:
Իսկ սահման շարժութեան է փոփո-
խումն ի սահմանէ ի սահման: Իսկ
աստ[1] «մշտաշարժ» ասելովն ոչ
վասն տեղաց ի տեղի շարժելոյն՝
ըստ նմանութեան երկնից և արե-
գական, այլ ըստ ներշրջականու-
թեան[2], քանզի եռակի է շարժու-
թիւն[3] հրեշտակի[4]: Նախ՝ բնական,
զի որպէս յոչնչէ ի յէ, այսպէս[5] յէէ՝
յոչինչ, եթէ ոչ ձեռն ամենակալին
պահէր, զի բնական է, որ ամենայն
եղեալ՝ դարձեալ լուծանի, իսկ որ[6]
մնայ յաւիտեան՝ պահպանի կա-
մօքն Աստուծոյ[7]: Իսկ երկրորդ՝
շարժումն իմացմամբ, քանզի միշտ
իմացմամբ[8] շարժին[9] առ Աստուած՝
առաւօտեան և երեկոյեան[10] ճանաչ-
մամբ, յանհուն իմաստիցն Աստու-
ծոյ ճանաչմամբ իրողութեան ի
բնութիւնս իւրեանց մի զկնի միոյ:
Իսկ աստուածային գիտութիւնն
արտաքոյ է այսմ եղանակացս[11],
քանզի ոչ է մի զկնի միոյ, որպէս
ասէ Դիոնէսիոս, թէ ճանաչումն
իրողութեանց ի բանն Աստուծոյ
ոչ է հետևումն մի զկնի միոյ[12], այլ
համանգամայն՝ վասն ունելոյն
աստուածատեսակ[13] իմացումն: Իսկ
երրորդն՝ ներշրջականութիւն[14], զի
միշտ ջերմ սիրով շարժին[15] առ Աս-
տուած և ոչ երբէք ունին[16] զդադա-
րումն և իւրաքանչիւր եռացմամբ
առ Աստուած զմայլի և բերկրի,
ըստ այնմ՝ «Յիշեցի[17] զԱստուած
և ուրախ եղէ» [Սաղ. ՀԶ. 4]: Իսկ
«անձնիշխան» ասէ ոչ վասն զա-
նազան միտելոյն ըստ օրինակի
հոգւոյ մարդոյ ի չարն և ի բարին,
այլ ըստ[18] ազատ ընտրողութեանց[19],
զոր կամին բարին. ուստի և բարի
հրեշտակն միշտ ազատապէս զբա-
րին ընտրէ, և չար հրեշտակն միշտ
ազատապէս զչարն ընտրէ: Իսկ
«անմարմին» ասի, զի ոչ ունի շա-
րազուգեալ[20] ըստինքեան[21] մարմին՝
որպէս հոգի մարդոյ[22], և երկրորդ,
զի պարզ է ամենևիմբ[23] ի նիւթական
ընութեանց, թէպէտ ունի զնիւթա-
կան յատկութիւն ի տեղւոջ[24] գոլ և
պարագրիլ սահմանաւ՝ այս վասն
եղականութեանն առ գոյ ի նմա, և
ոչ վասն նիւթականութեան: Իսկ
«Աստուծոյ սպասաւոր» դնի և այս
վասն իւրաքանչիւր ազգ պաշտա-*

[1] E > աստ
[2] ABD ներշրջանակութեան
[3] E շարժումն
[4] C ի հրեշտակն
[5] F > այսպէս
[6] C > որ
[7] E > զի բնական է, որ ամենայն եղեալ՝ դարձեալ լուծանի, իսկ որ մնայ յաւիտեան՝ պահպանի կամօքն Աստուծոյ
[8] F եռացմամբ
[9] C շարժի
[10] E երեկոյի
[11] F մեղանացս
[12] ABDEF > որպէս ասէ Դիոնէսիոս, թէ ճանաչումն իրողութեանց ի բանն Աստուծոյ ոչ է հետևումն մի զկնի միոյ
[13] E առ աստուածատեսակ
[14] ABD ներշրջանակութիւն
[15] B շրջին, C շարժի
[16] C ունի
[17] A յիշիցի
[18] ABDEF > ըստ
[19] E ընտրութեանց
[20] F շարադրեալ
[21] C ինքն
[22] C մարմնոյ
[23] F ամենևիմք
[24] C տեղի

ման. նախ, զի զառեալ[1] լուսափայլ գիտութիւնն Աստուծոյ՝ անցուցանեն ի յերկրորդս՝ աննախանձ սպասաւորելով կամացն Աստուծոյ: Երկրորդ, ի շարժութիւն երկնից և աստեղաց: Երրորդ, ի պահապան[2] մարդկան, ըստ այնմ, թէ՝ «Կացոյց սահմանս ըստ թուոյ[3] հրեշտակաց Աստուծոյ[4]» [Բ. Օրէնք. ԼԲ. 8]: Չորրորդ, ի յօրինաց տվչութիւն[5], ըստ այնմ, թէ[6] «Ոյք առէք զօրէնս ի հրամանս հրեշտակաց» [Գործք. Է. 53]: Հինգերորդ, վասն աւետաբեր լինելոյն, որպէս առ Զաքարիաս և առ կոյսն Մարիամ աստուածածինն: Վեցերորդ, ի պատիժ և[7] ի պատուհաս մարդկան՝ կամ ընդհանրից, կամ մասնականաց. ընդհանրից՝ որպէս Սոդոմայն, իսկ մասնաւորաց՝ որպէս անհատից յիւրում[8] ժամանակի: Եւթներորդ, վասն միշտ պաշտաման բարեբանութեանն Աստուծոյ: Ութերորդ, վասն միշտ[9] ջերմեռանդ շարժմանն յանդիմանակաց[10] գոլոյն Աստուծոյ: Նաև դևք պաշտօնայք կոչին. նախ՝ զչարսն տանջելով, երկրորդ՝ զկեղծաւորսն իբրև ի բով փորձելով, երրորդ՝ զբարեաց վարձսն աճեցուցանեն մաքառմամբ ընդ[11] սուրբս ի գերագոյն փառս նահատակութեան վերացուցանեն: Իսկ որ ասէ «անմահ», զի ի բնութենէ իւրմէ ոչ ունի զապականութիւն, քանզի կամք արարչին զնա[12] տեսակ առանց նիւթոյ կազմեաց, զի առանց ներհակի մնասցէ յաւիտեան՝ արտաքոյ գոլով նիւթական[13] ներհակաց[14]:

Այլ գիտելի է, զի չորս ինչ[15] վերաբերին առ հրեշտակս՝ պարզութիւն էութեան, յատկութիւն իմացման[16], կարողութիւն անձնիշխան և տարորոշումն անձնական: Առաջին երկոքումքն[17] կցորդի հրեշտակն[18] ընդ հոգի մարդոյ՝ ըստ պարզութեան էութեան և ըստ անձնիշխանութեան[19] գոլոյն, իմացմամբ՝ իրօք ինչ[20] զանազանի, իսկ չորրորդիւն ոչ միաբանի, զի հոգին մարմնով կատարի անձնաւոր:

Դարձեալ, չորս[21] իրօք[22] զանազանի հրեշտակն ի հոգւոյ[23]. նախ, զի հոգիք մասն գոլով բոլորին, իսկ հրեշտակն ոչ է մասն բոլորին, երկրորդ, ըստ բանական գոլոյն, իսկ հրեշտակ՝ իմացական, երրորդ, զի ըստ կրականութեան հոգի ախտա-

---

1 BD զառաւել
2 CEF պահպանութիւն
3 D > ըստ թուոյ
4 E հեթանոսաց] ըստ թուոց հրեշտակաց Աստուծոյ
5 CEF տուչութիւն
6 C > թէ
7 ABDEF > ի պատիժ և
8 A յիւր
9 F > միշտ
10 F յանդիմանակից
11 C առ
12 F զնոսա
13 F նիւթականաց
14 C ներհականաց
15 ABC > ինչ, F իրս
16 F իմացումն
17 C երկոքումքքն
18 D հրեշտակին
19 E անձնիշխան
20 F իրովք] իրօք ինչ
21 ABDEF > չորս
22 F > ոչ միաբանի, զի հոգին մարմնով կատարի անձնաւոր: Դարձեալ, չորս իրօք, E կոչի կենդանի և] կատարի անձնաւոր դարձեալ չորս իրօք
23 C հոգւոց

կից[1] լինի մարմնոյ, իսկ հրեշտակք[2] արտաքոյ են այսմ ախտի, բայց միայն նկատմամբ զգիտութիւն ի վերնոց և ներքնոց ընդունին, չորրորդ, զի ըստ գերազատ անձնիշխանութեանն, զի յորս շրջէ՝ զինքն այլ ոչ փոխի[3], իսկ հոգի ոչ այսպէս, և զի[4] յայտնի է գիտել քեզ և տեսանել, զի բարի հրեշտակն յետ ընտրութեան այնպէս ի նոյնն[5] անշարժաբար հաստատեցան՝ վասն որոյ[6] երանեցան, իսկ չարքն[7] ի չարութիւն հաստատեցան առանց զղջման և անփոփոխ՝ վասն որոյ սատանայ անուանեցան, այսինքն՝ հակառակ բարեաց: Ամենայն հրեշտակք են նման[8] միմեանց այնու, որ ուր են և[9] անմահ, անտեսանելի, պարզ, տարորոշ անձամբ, անհաղորդելի այլոց[10] ընութեան: Դարձեալ, են աննման պարգևօք և փառօք ըստ իննեկի զանազանութեան: Դարձեալ, են նման միմեանց, որպէս ասէ Դիոնէսիոս, եթէ հրեշտակք ունին[11] էութիւն, զօրութիւն և ներգործութիւն՝ էութեամբ մի, զօրութեամբ մի և ներգործութեամբ մի, զի ամենայն երկնային գոյութիւնքն էութիւն ունին և զօրութիւն, այսպէս[12] ըստ զօրութեան և ներգործութիւն[13]: Ահա աստանօր ի սահման հրեշտակի բացայայտեալ[14] ճանաչի համեմատութիւն և զանազանութիւն հոգւոյ և հրեշտակի:

Եւ այս յաղագս հոգւոյ[15] այսքան բաւական լիցի[16]:

---

1 BD հոգի ախտակից
2 CF հրեշտակ
3 EF փոփոխի
4 F զմի
5 C > ի նոյնն, F այնպիսի նոյն] այնպէս ի նոյնն
6 E որ
7 F դևքն] չարքն
8 F նմանք
9 E են] ուր են և
10 BD այլոյ
11 F ունէին
12 F > այսպէս
13 ABDF ներգործութեան
14 D բացայայտել
15 E այսորիկ] հոգւոյ
16 C աւրհնեալ է Աստուած, ամեն եղիցի] բաւական լիցի, F + եւ Քրիստոսի փառք յաւիտեանս, ամեն

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՐՈՏՆԵՑԻՈՅ ԱՍԱՑԵԱԼ[1] Ի ԲԱՆ ՄԱՐԳԱՐԷԻՆ ԴԱՒԹԻ[2], ՈՐ ԱՍԷ. «Ի ՍԿԶԲԱՆԷ ՏԷՐ ՁԵՐԿԻՐ ՀԱՍՏԱՏԵՑԵՐ ԵՎ ԳՈՐԾՔ ՁԵՌԱՑ ՔՈՑ ԵՐԿԻՆՔ ԵՆ[3]»[4] [ՍԱՂ. ՃԱ. 26]

Բնագիրը կազմված է հետևյալ վեց ձեռագրով.
A - Ձեռ. 1410, 130ա-149բ, B - Ձեռ. 1771, 24ա-62բ, C - Ձեռ. 3961, 12ա-38բ,
D - Ձեռ. 2281, 43բ-88ա, E - Ձեռ. 3979, 1ա-24բ, F - Ձեռ. 6573, 101ա-149ա:

Ով Տէր Աստուած իմ Յիսուս Քրիստոս՝ Բան Հօր և Որդի կուսին[5], տուր ինձ անկատարիս զկատարեալ բանից քոց թարգմանութիւն, զի թէ եղիցի ինձ այս[6] շնորհ, յայտնի լիցի ամենազօր կարողութիւն քո հրաշագործեալ[7] ի տկարութեանս իմում: Քանզի յոյժ խոր են խորհուրդք քո, և ես՝ մասնաւոր ծովագնաց[8], ոչ ևս[9] զօրեն միտք իմ անդնդային խորոց քոց լողորդութեան, վասն որոյ հայցեմ յամէնառատ քո[10] գթութեանցդ, զի ձեռն տացես ինձ ի լողորդութեանս իմում, որպէս[11] երբեմն Պետրոսի, զի և ես գինք արեան քո եմ, ծառայ և որդի աղախնոյ քո: Քաղցր ես դու, Տէր, քաղցրութեամբդ քո ուսոյ ինձ: Աղաչեմ, լոյս տուր, Տէր, աչաց իմ տեսութեան[12] և կար յիշողականիս իմ[13] հաւաքման ի բուրաստանաց[14] քոց հոգէյարմար: Նաև զգայական մասինս իմ արտաբերական տուր զաննիազ թարգմանութիւն աստուածային բանիցս՝ առ ի ճաշակ[15] եղբարցս իմ, որ նստին յակճիռս իսկ երախան: Եւ զի է՛ ինձ խրախոյս ի սոյն[16] գործառնութեան սքանչելի քո[17] հրաշագործութիւն[18], որ զչնչին և զյիմարսն բնաւին աշխարհայնոցս գերագոյն իսկ կազմեցեր: Նաև ի ձկնորսաց և ի մաքսաւորաց առաքեալս և հովիւս իսկ յօրինեցեր: Եւ ես հաւատամ և յուսամ, զի դու նոյն իսկ Աստուած և Տէր[19] ըստ անսուտ քո[20] խոստմանն աներկբայ եմ, զի ի[21] հայցելս իմ բաշխես, և ի բախելս իմ բանաս, և ի խնդրելս իմ տաս, և առաքես զՀոգի[22] քո Սուրբ՝ ստանաս և նորոգես զիս: Ապա

[1] D տիեզերալոյս վարդապետի ռաբունապետի ասացեալ
[2] B > Դաւթի, D > մարգարէին Դաւթի
[3] CEF > ի բան մարգարէին Դաւթի, որ ասէ. «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր և գործք ձեռաց քոց երկինք են»
[4] Հեղինակի կողմից հղվող՝ Դավիթ մարգարեի Սաղմոսներում առկա հիմնադրույթն այսպիսին է. «Ի սկզբանէ Տէր զհիմունս երկրի հաստատեցեր, և գործք ձեռաց քոց երկինք են», իսկ քարոզի բնաբանը բառացի համընկնում է Պողոս առաքյալի Եբրայեցիներին ուղղված թղթի Ա. 10-ին:
[5] BDF կուսի
[6] A > այս
[7] B հրաշագործել
[8] ABD ծովընթաց
[9] B > և
[10] B քոց
[11] D Տէր
[12] ABD տեսողութեան
[13] D միտ իմ
[14] B բուրաստանից
[15] D ճաշակել
[16] C գոյն
[17] D է քո
[18] B հրաշագործութեան
[19] BCDEF կար
[20] C > քո
[21] E > ի
[22] CDF հոգիդ

ուրեմն, ապաւինեալ եմ[1] ի ձեռնտուութիւն Հոգւոյն Սրբոյ, ըստ այնմ, թէ՝ «Մի հոգայք, եթէ զինչ ասիցէք կամ զինչ խօսիցիք, այլ զոր Հոգին Հօր ձերոյ տացէ ձեզ ի ժամուն յայնմիկ, զայն խօսեսցիք» [Մատ. Ժ. 19]: Ըստ այսմ հրամանի յուսադրեալ եմ[2] ի Հոգին Սուրբ, և ի յոժանդակութիւն[3] ներգործական աղօթից հրաշալի եղբարցս իմ, որ շուրջառեալ ակամբ հային և խնդրեն յամէնառատ խնամոցն Աստուծոյ զիմն ձեռնտուութիւն: Եւ ես զօրավիգն առեալ զաղօթս սրբոցս, զմեծիդ ասեմ զԱհարոնի և զծերակոյտ Իսրայէլ արանցդ, ապաւինելով ի Հայր, և յՈրդի և ի Հոգին Սուրբ՝ բուռն հարկանեմ զթարգմանութենէ առաջի եդեալ մարգարէական բանիս, որ ասէ. «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր և գործք ձեռաց քոց երկինք են» [Սաղ. ՃԱ. 26]:

Բայց նախքան ի մտանել ի մեկնութիւն[4] բանիս նախերգաբար հարդարեսցուք գլուխս երկոտասան:

Բայց զի ասէ մարգարէն՝ «սքանչելի է գիտութիւն» աստուածային արարչագործ կամացն, յորս գոյացան յոչ էից եղեալքս ամենայն [Սաղ. ՃԼԸ. 6]: Քանզի ոչ մի կարծիս, այլ թուելութիւնս[5] յոլովս յաղագս էիցս ստացան[6] մարդիկ: Քանզի ոմանք ի խաւարէ ասացին զլինելութիւն աշխարհիս, և զնոյն ինքն զխաւարն՝ էութիւն գոլ ասացին, որ երևի սուտ վասն հինգ պատճառի: Նախ, զի խաւարն ոչ է էութիւն, այլ պակասութիւն լուսոյ: Քանզի երեքն են բաղկացուցիչք խաւարի՝ լոյս, տարր և վայր, որպէս ասէ սուրբն[7] Բասիլիոս և տայ օրինակ զտաղաւար ի մէջօրէի: Երկրորդ, զի ի մերձենալ լուսոյ կորնչի խաւարն: Երրորդ, զի ոչ է հնար[8] երբէք ի չարէ՝ բարի, և ոչ[9] ի հիւանդութենէ առողջութիւն, այլ ապականութիւն[10]. այսպէս ոչ կարէ ի խաւարէ լինել գոյութիւն: Չորրորդ, անպատշաճ է լուսոյն ճշմարտի զսկիզբն գործոյն իւրոյ ի խաւարէ առնել: Հինգերորդ, զի ոչ ունի միաբանութիւն լոյս ընդ խաւար, քանզի անմիջակ ներհակք են, որպէս ասէ Ստագիրացին: Ի[11] սոյն միտս ասէ և առաքեալն Պօղոս՝ «Զինչ բաժին[12] կայ լուսոյ ընդ խաւարի» [Բ. Կորն. Զ. 14]:

Իսկ ոմանք զմանրամաղ փոշին ասացին պատճառ արարածոցս, իբր թէ էառ Արարիչն զփոշիս զայս՝ յօդեաց առ միմեանս և[13] էարկ ձև և չափ ի վերայ սորայ: Նաև այս ևս երևի գոլ սուտ ըստ երից պատճառաց[14]: Նախ, զի Արարիչն ըստ այսմ բանի արուեստաւոր գոյ և ոչ ստեղծող: Երկրորդ, զի փոշիս[15] մանրամաղ՝ ոչ ինչ է, թէ

[1] ACD իմ
[2] ACDEF իմ
[3] C ի յոժարութիւն
[4] ABCEF > ի մեկնութիւն
[5] CF թուլութիւնս
[6] F ասացին
[7] ABCEF > սուրբն
[8] ACDEF >է հնար
[9] F > ոչ
[10] A պակասութիւն
[11] D > ի
[12] ABCEF զի] Պօղոս զինչ բաժին
[13] CF > և
[14] F > ըստ երից պատճառաց
[15] F > փոշիս

ոչ[1] նուազ մասն հատեալ յերկրէ և վերացեալ յօդս. իսկ յորժամ ոչ էր երկիր, ուստի՞ լինէին մասունքս այս: Երրորդ, զի թէ կայր[2] սա՝ յայտ լինի, ի հարկէ միշտ լինել զերկիր, յայնժամ սուտ գոյ ասելն՝ լինել զերկիր[3] ի սմանէ:

Ոմանք[4] զանդունդք և զանբաւ ասացին նիւթ լինելութեան[5] աշխարհի: Եւ այս կարի իմն երևի սուտ վասն երեք պատճառի: Նախ, զի որ անբաւ և անեզր է, զիա՞րդ եզերի կամ քանականայ: Երկրորդ, զի անունս այս, ըստ կարծեացն Ապօղինարի, ստեղծուած ասէ գոլ յԱրարչէն և յայնմանէ կազմեալ զէակքս, զոր և յանդիմանէ Մովսէս ասելով[6], թէ ի սկզբանէ արար զերկինս և զերկիր: Երրորդ, զի անբաւութիւն և անեզրութիւն[7] Աստուծոյ միայն է սեփհական. և որ յատուկ է նմա՝ ոչ այլ ումեք պատշաճի:

Իսկ ոմանք զհիւլէ[8], այսինքն՝ զնիւթ ասացին, և զնոյն ինքն յաւէտակից Աստուծոյ: Նաև այսոքիկ բազում կերպիւ սխալեցան: Նախ, զի զհիւլէն[9] յաւէտակից Աստուծոյ ասացին, որ է չար հերձուած: Երկրորդ, զի զԱստուած անգործ և անզօր ցուցին առանց հիւլէին[10]: Երրորդ, զի արուեստաւոր, և ոչ ստեղծող[11] ցուցանեն զԱստուած՝ որպէս զհիւսն կամ զոստայնանկ, զի է հիւսան ճարտարութիւն[12] իմաստիցն[13] յինքենէ, իսկ փայտն՝ արտաքուստ, սապէս ոստայնանկ՝ ճարտարութիւն իմաստիցն յինքենէ, իսկ ասրն՝ արտաքուստ: Չորրորդ, զի զխորս անբաւութեան իմաստիցն[14] Աստուծոյ ի հիւղէ[15] ասեն բովանդակեալ:

Իսկ ոմանք[16] յրստուերէ Աստուծոյ ասեն զեղեալքս ի հարկէ և ոչ ի կամաց: Նաև այս ևս երևի գոլ սուտ: Նախ, զի ստուերն ի մարմնոյ, ի վայրէ և ի լուսոյ ծնանի, որպէս ասացաք, իսկ Աստուած ոչ ունի մարմին և ոչ արտաքոյ քան զինքն լոյս, և ոչ արտաքոյ յիւրմէ՝ վայր: Ապա ուրեմն, երևին սուտ գոլ, որ զայս բաջաղէն: Նաև ոչ է հնար արտաքոյ կամացն Աստուծոյ լինել ինչ, քանզի ասէ մարգարէն, թէ՝ «Զամենայն, զոր ինչ կամեցաւ՝ և արար Տէր» [Սաղ. ՃԼԴ. 6]:

Իսկ որք ասացին ի բնութենէ գոլ զարարչութիւնն յԱստուած ի հարկէ[17]՝ որպէս մրջիւն կամ մեղու: Գիտասցեն, զի մրջիւն զգործիականութիւնն այն՝ դրութեամբ նախախնամողին ունի ի բնութիւնն, վասն ոչ ունելոյ անձնիշխան կամս՝ իմաստութեամբ տնօրինել զկեանս իւր, հարկ եդ ի բնութիւնն զպիտոյսն իւր հայթայթել և պատրաս-

---

[1] A > թէ ոչ
[2] B գոյր
[3] D > զերկիր
[4] D իսկ ոմանք
[5] D լինել
[6] CEF > ասելով
[7] B անբաւ բարէգործ զօրութիւն] անբաւութիւն և անեզրութիւն
[8] AD զհուլէ, CEF զհիւղէ
[9] A հուլէն, CEF հիւղէն
[10] ACEF հիւղային, B հիւլային
[11] E ստեղծուած
[12] C ճշմարտութիւն
[13] B ճարտարութիւնն] ճարտարութիւն իմաստիցն
[14] E իմաստնոցն
[15] B հիւլէ:
[16] B > ոմանք
[17] E > ի հարկէ

տել: Ապա ուրեմն, որք[1] զայս ասեն, բառնան զիմաստութիւն և զանձ-նիշխանութիւն Աստուծոյ: Նաև ոչ խոստովանին զնա տէր կամաց իւ-րոց, զոր քաւ և մի լիցի խօսել զայս հերձուած, զի աստուածութիւնն ոչ է պատահումն ի բնութիւնն, այլ որ ինչ է յԱստուած՝ բնութեամբ է, և ոչ պատահմամբ, բայց՝ անձնիշ-խան կամօք և իմաստութեամբ[2] և ոչ ի հարկէ:

Իսկ ոմանք՝ զերկիր: Եւ ոմանք՝ զջուր: Եւ ոմանք՝ զօդ: Իսկ[3] ոմանք՝ զհուր ասացին: Իսկ Մովսէս մար-գարէն[4] բառնայ զայս զանազան կարծիս յաղագս տարերց[5], ասելով՝ «Ի սկզբանէ արար Աստուած զեր-կին և զերկիր» [Ծնն. Ա. 1], զերկիր ասելով զայլ[6] տարերս ընդ նմին եցոյց, զոր կամիմք զառաջիկայսդ ուսանել[7]:

Բայց բե՛ր աստանօր սկիզբն արասցուք ըստ խոստմանն մերոյ նախերգաբար յարդարել[8] գլուխս երկոտասան ըստ ուղղափառ վար-դապետութեան գլխնելութիւն արարածոցս: Եւ ապա զկնի նորին[9] զդաւանութիւն ուղղափառ[10] հա-ւատոյ արտադրեսցուք: Եւ զկնի[11] այնորիկ ի մեկնութիւն բանիս ձեռնարկեսցուք զօրութեամբ[12] Հոգւոյն Սրբոյ:

Նախ տեսցուք, թէ զինչ է ստեղծանելն: Ստեղծանելն է առ-նել ինչ ի[13] յոչընչէ: Եւ աստ երկու ինչ գիտելի է: Նախ, զի ա՛յլ կեր-պիւ ստեղծանէ արհեստն, իսկ ա՛յլ կերպիւ բնութիւնն, և ա՛յլ կեր-պիւ կարողութիւնն Աստուծոյ: Զի արուեստն ոչ կարէ առնել ինչ առանց հիման, այսինքն՝ է նիւթ: Զի հիւսն, ոստայնանկ խնդրէ փայտ և ասր, և արկանէ[14] ի վերայ նորա ձև և չափ, եռանկիւնի կամ քառանկիւնի, և այլ սոյնպիսի՝ տալով նմա տեսակ պատահական: Զի արուեստն[15] իւր յատուկ զօրու-թեամբն ոչ կարէ տալ առնելեացն ձև գոյացական, այլ[16] ձև պատա-հական, վասն այն վարդապետք ասեն՝ ամենայն ձևք արուեստա-կան՝ պատահականք են: Իսկ բնու-թիւն առաւել ունի զօրութիւն, քան զարհեստն[17], զի հիմն փոքր բաւական է նմա և բազում յա-ւելու ի վերայ փոքր հիման[18]: Զի հիմն բնութեան է պարզ նիւթն ի յԱստուծոյ ստեղծեալ, զի առանց նորա ոչ ինչ կարէ առնել, իսկ զնիւթ պարզ առեալ բնութեանն յաւելու ի վերայ ոչ միայն ձև պա-տահական, այլև զտեսակ գոյացա-կան: Իսկ աստուածային զօրու-թիւնն հրաշագործ կարողութեամբ գերազանց, քան զարուեստ[19] և զբնութիւն հրաշագործէ, քանզի ոչ միայն զձև պատահական տայ

[1] CEF որ
[2] D > և իմաստութեամբ
[3] D և] իսկ
[4] ABCEF > մարգարէն
[5] ACEF տարերաց, D տարերցս
[6] F զասացեալ
[7] BE ուսուցանել
[8] A > նախերգաբար հարդարել
[9] B զկնին] զկնի նորին
[10] ABCEF > ուղղափառ
[11] D ապայ յետ] զկնի
[12] D առաջնորդութեամբ

[13] D > ի
[14] B արկանէն
[15] B արհեստն
[16] D այլև
[17] D զարհեստսն
[18] CEF փոքր հիմանն վերայ] ի վերայ փոքր հիման
[19] B զարհեստ

ստեղծուածոյն[1] որպէս արհեստաւոր[2], և կամ զտեսակ գոյացական՝ որպէս բնութիւն, այլև զնիւթն ստեղծագործէ, զի ոչինչ կարոտանայ հիման, որպէս արհեստն և բնութիւնն, այլ ինքն[3] ստեղծանէ զհիմն և տայ նմա զձև արհեստական և զտեսակ գոյացական: Այս է ստեղծանելն՝ առնել ինչ ի[4] յոչընչէ:

Իսկ նախադրութիւնս այս, որ ասեմ՝ ի յոչընչէ առնել ինչ, երեք յեղանակաւ իմասցի: Նախ, նշանակէ զնիւթ ստորասական, որպէս թէ առնել զդանակն ի[5] յերկաթոյ: Երկրորդ, նշանակէ զնիւթ բացասական՝ ի յոչընչէ, այսինքն՝ յոչինչ իրաց, և այս իմացումս[6] ճշմարիտ է, զի ստեղծանելն[7] է առնել ինչ ի յոչընչէ: Երրորդ, նախդիր գիրս այս՝ ո՛չ նշանակէ զնիւթ, այլ զկարգն, որպէս ասեմք[8], թէ լինի ի յառաւօտէն օր հասարակն. այս[9] է՝ յետ առաւՕտուն[10] լինի կէսօրն: Նաև այս ևս յարմարի, իբր թէ զկնի ոչընչին՝ լինի ինչ, քանզի այս է ստեղծանելն՝ յետ ոչնչին՝ առնել ի՛նչ: Ապա ուրեմն, յայտ եղև, թէ զինչ է[11] ստեղծանելն:

Երկրորդ հարցումն, թէ կարէ ստեղծողն[12] առնել ինչ յետ ոչընչին:

Գիտելի է, զի արտաքին փիլիսոփայքն բնաւ ուրացան զստեղծումն և ասացին գոլ անկարելի: Զի գրէ[13] Արիստոտէլ ի Բնաբանական գիրս[14] իւր, թէ ամենայն առաջին փիլիսոփայքն ասացին, թէ յոչ երբէք էն, յոչ ուրէք էն[15], ոչինչ լինի. իբր թէ ստեղծանելն, որ է ի յոչընչէ առնել ինչ[16] է անկարելի: Իսկ առաջին փիլիսոփայքն մոլորեցան ի գիտութիւն այսմ իրի: Զի երկու կերպիւ է յառաջագայութիւն. մին՝ ի մասնաւոր էակէ, որպէս հուրս այս՝ ծնանի յայլ իմն մասնաւոր պատճառէ, և ոմն մարդ ծնանի ի մասնաւոր պատճառէ[17], դարձեալ, է՛ յառաջագայութիւն ընդհանուր, զի ընդհանուր էակն յառաջ գայ յայլ[18] ընդհանուր պատճառէ: Եւ այս երկու յառաջագայութիւնս[19] իրօք[20] ինչ համաձայնին և իրօք[21] ինչ զանազանին: Համաձայնին, զի որպէս հուրն ծնանի յոչ հրոյն, և մարդն ծնանի յոչ մարդոյն, այսպէս և ընդհանուր էակքս ծնանին յոչ էակէն: Բայց այսու զանազանին, զի հուրն, որ ծնանի յոչ հրոյն, ոչ է հարկ, թէ յոչընչէ լինի, այլ է՛ յօդոյ կամ ի ջրոյ: Այսպէս և մարդն ծնանի յոչ մարդոյն, ոչ է հարկ, թէ յոչընչէ լինի, այլ ի սերմանէ: Վասն այսորիկ այսպիսի լինելութիւնք ոչ ասին յոչընչէ,

1 CEF ստեղծուածոց
2 B արուեստաւոր
3 A այսինքն] այլ ինքն
4 D > ի
5 CEF > ի
6 BCDEF իմացումնս
7 C ստեղծեալն
8 B զի ասեմք
9 C այսինքն
10 EF առաւօտին
11 A >է
12 CDEF ստեղծանելն

13 D գրեալ է
14 BCEF ի գիրս
15 CEF > յոչ ուրէք էն
16 AB > ինչ
17 DF > և ոմն մարդ ծնանի ի մասնաւոր պատճառէ
18 C > յայլ
19 D յառաջագայութիւնքս
20 F փոքր
21 F փոքր

այլ յէէ՛ իմեմնէ: Իսկ ընդհանուր էակն լինի յոչընչէ, վասն այն կոչի ստեղծանել: Իսկ արտաքին փիլիսոփայքն զայս մասնաւոր լինելութիւնս[1] միայն կարծեցին, վասն այն ասացին, թէ յոչընչէն ոչինչ[2] լինի, իսկ զայս ոչ կարացին գիտել, թէ ընդհանուր[3] էակն յառաջ գայ[4] ընդհանուր պատճառէն, այսինքն՝ յԱստուծոյ: Եւ ոչ թէ միայն կարէ ստեղծանել Աստուծոյ, այլև[5] հարկ ևս, զի անկատար էութիւն յառաջ գայ ի կատարեալ էութենէ ի նմնէքն[6] սեռէ. որպէս անկատար ջերմութիւն յառաջագայի[7] ի կատարեալ ջերմութենէ հրոյ ի նմնէքն[8] սեռէ[9], և անկատար լոյս յառաջագայի ի կատարեալ լուսոյ[10] արեգակնէ՝ ի նմնէքն[11] սեռէ[12]: Այսպէս հարկ է, զի ընդհանուր էակս[13] անկատար յառաջ գան ի կատարեալ և գերազանց էութենէն Աստուծոյ: Եւ զի նա միայն ունի զգերազանց էութիւն[14] կատարելութեան. զի ոմա՛նք սկզբնաւորք են[15] և վախճանաւորք, և ոմա՛նք՝ սկսեալք և անվախճանք, իսկ ո՛մն՝ անսկիզբն և անվախճան: Ապա ուրեմն, հարկ է, զի ամենայն սկսեալքն ի նմանէ սկսանին՝ յանսկզբնականէն և յանվախճանէն, եթէ՛ վախճանաւորք, և եթէ՛ անվախճանք[16]: Ցայտ ուրեմն եղև, թէ ոչ միայն կարէ ստեղծանել Աստուծոյ, այլև հարկ ևս, զի նա միայն է կատարեալ էութիւն՝ անսկիզբն և անվախճան:

Տեսցուք զերրորդ գլուխն, թէ միայն Աստուած կարէ ստեղծանել, թէ այլ ոք յստեղծուածոցս[17] կարէ ստեղծանել: Ոմանք ասացին, դժուարին է ի հակառակէն առնել ինչ, քան յոչընչէն, զի հակառակն ընդդիմամարտի, իսկ ոչինչն՝ ոչ ընդդիմամարտի[18]: Արդ՝ յայտնապէս տեսանեմք, զի ստեղծուածն կարէ ինչ առնել ի հակառակէն, որպէս արեգակն առնէ սեաւ[19] յոչ սևէն, և հուրն կրակ՝ յոչ[20] կրակէն: Ապա յայտ է, թէ ստեղծուածն կարէ առնել ինչ յոչընչէ: Պատասխանէ Արիստոտէլ, թէ ստեղծանելոյն պիտոյ է անչափ և անսահման կարողութիւն, վասն զի ի մէջ ոչնչին և իրին է՛ անսահման և անվախճան հեռաւորութիւն՝ ապա ուրեմն պիտոյ է անսահման և անվախճան կարողութիւն, որ զմէջ ոչնչին և իրին լնու և զոչինչն ի յիր հասուցանէ[21]: Իսկ ամենայն ստեղծուածս[22] չափով բաղկացան և վասն այն չափաւոր զօրութեան պատշաճեցան, իսկ չափաւորն և վախճա-

[1] B լինելութիւնքս
[2] A ոչ] ոչինչ
[3] F հանուր
[4] F յառաջ գայ էակն] էակն յառաջ գայ
[5] CEF և
[6] AC նիմնէքն, DF նմանէքն
[7] D > յառաջագայի
[8] AC նիմնէքն
[9] F > ի նմնէքն սեռէ
[10] C լոյս
[11] F նմանէքն
[12] D > և անկատար լոյս յառաջագայի ի կատարեալ լուսոյ արեգակնէ՝ ի նմնեքն սեռէ
[13] D էակքս
[14] D զգերազանցութիւն] զգերազանց էութիւն
[15] CEF > են
[16] CF անվախճան
[17] F յարարածոցս
[18] E > իսկ ոչինչն ոչ ընդդիմամարտի
[19] DE սև:
[20] D > կրակ յոչ
[21] C հասուցէ
[22] BD ստեղծուածքն

նաւորն զիա՞րդ լնու զանչափն և զանվախճանն և հասուցանէ զոչինչն ի յիր: Յայտ ուրեմն է, թէ ոչինչ ստեղծուած կարէ ստեղծանել: Իսկ այն, որ կարէ արեգակն ի հակառակէն կազմել՝ է՛ սակաւ ինչ զօրութիւն, զի եթէ կայ ենթակայ յիրն, կարէ արեգակն յաղթահարել[1] զներհակութիւն սպիտակին և առնել սեաւ[2], որ ունէր սակաւ ինչ արգել, իսկ յորժամ ոչ գոյէն՝ անգործ դատարկանայ: Ապա ուրեմն գիտացիր, զի անչափ և անսահման կարողութիւն միայն բաւականանայ առնել ինչ յոչընչէ: Իսկ Ալի Բուսինայն[3] ասաց, թէ ստեղծուածոցս անկար է իւրով զօրութեամբն ստեղծանել, բայց կարողանայ ստեղծանել զօրութեամբն Աստուծոյ: Եւ ասաց, թէ զառաջին հրեշտակն արար Աստուած, և զերկրորդն ետ[4] առնել[5] առաջնոյն, և սոյնպէս զայլսն[6] որ ի կարգի: Վասն որոյ և ամենայն իմաստասէրքն երևեցուցին զնա գոյ սուտ՝ այսպէս և ըստ այսմ օրինակի. թէ է՛ պատճառ կարողական, և է՛ պատճառ խորհրդական, և է՛ պատճառ գործական: Իսկ պատճառ կարողական ներգործէ յոչինչ, և զոր կամի՝ կարողանայ առնել. ըստ այնմ՝ «Զամենայն[7], զոր ինչ կամեցաւ և արար Տէր» [Սաղ. ՃԼԴ. 6]: Իսկ խորհրդական պատճառ[8], որ ներգործէ արհեստաւորն[9] ի յենթակայն[10]: Սապէս և գործին, որպէս ուրագն առնէ ի նիւթն: Իսկ[11] ի ստեղծանելս ոչ է նիւթ, ապա ուրեմն՝ ոչ կարէ ստեղծուածն ներգործել ինչ ասա՝ ո՛չ խորհրդեամբ, և ո՛չ գործիապէս: Յայտ ուրեմն է, թէ ոչինչ[12] ստեղծուած կարէ ստեղծանել: Եւ այս վասն չորս պատճառի: Նախ[13], զի ամենայն ստեղծուածս[14] չափով քանակի և ձևով ստեղծագործեցան, և վասն այն չափաւոր զօրութեան[15] հանդիպեցան, քանզի զանչափն զիա՞րդ տանի՝ որ չափաւորն է: Վասն այն ոչ ետ Աստուած ստեղծուածոյ զստեղծողական[16] զօրութիւն, զի այն զօրութիւն անչափ էր և անվախճան, և սա՝ չափաւոր՝ ոչ կարէր[17] ընդունել[18]: Երկրորդ, զի առաւել զօրութիւն ի չափաւորն վնաս բերէ և ոչ օգուտ՝ որպէս բանսարկուին[19] և նախնի մարդոյն[20]: Երրորդ, թէ է՛ր պարգևեալ այսպիսի զօրութիւն ստեղծուածոյ, զճշմարիտն Աստուած ոչ ոք ճանաչէր[21]: Չորրորդ, զի աշխարհս ոչ երբէք կայր հաստատուն մի զմիոյ եղծանելոյ, առ ի սեփհականել զփառս աստուածութեան: Ապա ուրեմն,

1 B յաղթել
2 D սև
3 D ոմն յարտաքնոց Ալի Բուսինայ անուն] Ալի Բուսինայն
4 A > ետ
5 D > առնել
6 CEF զայլսն սոյնպէս] սոյնպէս զայլսն
7 ACDEF > զամենայն
8 ACDEF խորհուրդն] խորհրդական պատճառ
9 EF արուեստաւորն
10 C յենթակայէ
11 E > իսկ
12 D ոչ
13 BCEF մի
14 B ստեղծուածքս
15 F ձևով
16 F զստեղծական
17 A կարէ:
18 F ընդունիլ
19 CEF բանսարկուն
20 F մարդն
21 D կարէր ճանաչէր

յայտ եղև, թէ Աստուած միայն ունի զստեղծողական զօրութիւն, և ոչ այլ ստեղծուած:

Բե՛ր տեսցուք և զչորրորդ գլուխն՝ թէ ի մի նիւթոյ զոյացոյց Աստուած զերկնայինն և զերկրայինս:

Գիտելի է, զի Պղատոն և ամենայն փիլիսոփայքն առաջին ի մի[1] նիւթոյ՝ ի չորից տարերց ասացին բաղկացեալ զերկնային[2] և զերկրային: Իսկ Արիստոտէլ ընդդիմանայ այսմ, ասելով՝ ա՛յլ գոլ զնիւթ երկնային մարմնոցն[3] և կոչէ հինգերորդ տարր ի վերայ չորից՝ մի՝ զուտ և պարզ, գոլով աններհակ և անապական: Եվ ասէ ընդդէմ Պղատոնի, թէ երկնային մարմինքն էին ի չորից տարերց, մեկ առ[4] մեկ[5] փոխէին և ապականէին[6], որպէս երկրաւորքս: Յորս պատասխանէ Պղատոն ի Տիմէի տրամաբանութեանն[7] այսպէս. թէ Արարիչն հրատարակէր առ երկնայինսն, թէ աստուածք աստուածոց, որոց ես իսկ եմ Հայր և Արարիչ, թէ ըստ բնութեան ձերում էք ապականացու, բայց ըստ կամաց իմոց էք անապական, բայց սակայն կամքս իմ զօրաւոր է, քան զապականութիւն բնութեան ձերոց[8], վասն այն ո՛չ ապականիք: Իսկ Արիստոտէլ չորս կերպիւ հաստատէ, զի այլ է նիւթ երկնային մարմնոցն: Նախ, զի ամենայն, որ զմի նիւթ ունի, հարկ է, զի զմի շարժումն ունիցին, իսկ երկնային մարմինն անուաձև[9] շրջագայի, իսկ երկրաւորքս՝ ուղղակի, ի վեր և ի վայր և ներհակօրէն[10], յորմէ ծնանի ապականութիւն: Երկրորդ, զի տարերքս մէկ առ մէկոյ ծնանի[11] և մի առ մի փոփոխի. իսկ թէ էին նոքա[12] յայսմ տարերց, կարէին և նոքա ի տարրականս փոխարկիլ, և տարերքս՝ ի նոսա՝ բայց ոչ փոփոխին: Երրորդ, զի[13] թէ[14] էին նոքա ի ներհակ որակաց տարրականաց և ի ներհակ շարժմանց՝ կարէին ապականութիւն կրել[15]: Չորրորդ, զի տեսակ երկնային մարմնոյն այնքան յագեցուցանէ[16] զնիւթն իւր, մինչ ոչ ցանկայ մերկանալ զտեսակն իւր: Իսկ տարրական մարմին միշտ ցանկայ մերկանալ զտեսակն իւր և զգենուլ այլ տեսակ, և[17] մինչ առաջին տեսակն ոչ ապականի, զերկրորդն ոչ կարէ զգենուլ՝ յայն սակս ապականի: Իսկ երկնային մարմինն ոչ բնաւ[18] մերկանայ, վասն այն և ոչ ապականի: Յայտ ուրեմն է, թէ ա՛յլ է նիւթ երկնային մարմնոյն:

Բե՛ր տեսցուք զհինգերորդ գլուխն՝ թէ զի՞նչ է նիւթ և[19] ի[20] քանի՞ս բաժանի:

[1] F միոյ
[2] B զերկնային մարմին] զերկնային
[3] E և երկրային մարմնոցն
[4] D > մեկ առ
[5] B մին առ մին] մէկ առ մէկ
[6] D > և ապականէին
[7] E տրամաբանութիւնն
[8] CEF ձերոյ
[9] B անուաձև
[10] E ի ներհակօրէն
[11] B ծնանին
[12] B է՞ր երկինքն] էին նոքա
[13] F > զի
[14] E > թէ
[15] D > կրել
[16] CEF յագեցուցանէ այնքան] այնքան յագեցուցանէ
[17] CEF > և
[18] B բնաւ ոչ] ոչ բնաւ
[19] E > և
[20] C > ի

Բայց նախ բաժանել պարտ է, և ապա սահմանել: Եւ զի բաժանի նիւթ յերկուս՝ ի հասարակական և ի մասնական: Իսկ հասարակական նիւթ մի[1] գոլով ըստ թուոյ առանց տեսակի՝ ի բազմաց ընկալեալ լինի, վասն զի[2] առանց տեսակի միշտ զօրութեամբ լինի: Որպէս ասէ Արիստոտէլ ի Պերի արմէնիաս[3] գիրն[4] ի քսան և ութ ճառն. թէ է՛ ինչ, որ միշտ ներգործութեամբ՝ որպէս Աստուած, և է՛ ինչ, որ միշտ զօրութեամբ՝ որպէս նիւթ հասարակական, և է՛ ինչ, որ երբեմն զօրութեամբ և երբեմն ներգործութեամբ՝ այսոքիկ, որ ի լինելութեան և յապականութեան են[5]: Իսկ զայս նիւթ, որ միշտ զօրութեամբ է[6], փիլիսոփայն Դաւիթ անմարմին կոչէ և հասարակական՝ յինքենէ անտեսակ, ի ներքոյ ամենայն տեսակի: Իսկ մասնական նիւթ կոչի իւրաքանչիւր տարր և իւրաքանչիւր մարմին: Իսկ թէ[7] մասնական[8] վա՞սն էր կոչի: Զի որ ի[9] նոյն ժամն չորութեան տեսակին ենթակայացաւ[10] ո՛չ է գիջութեան ենթակայ, և որ ջերմութեան տեսակին ենթակայացաւ ի նոյն ժամն՝ ո՛չ է ցրտութեան ենթակայ, և որ Սոկրատայ է ենթակայ ներգործութեամբ՝ ո՛չ է ենթակայ[11] Պղատոնի, և որ ձիոյ է ենթակայ՝ ո՛չ է մարդոյ: Սապէս և որ իւրաքանչիւր սեռի է[12] ենթակայ՝ ո՛չ է ենթակայ այլում սեռի: Եւ որ ի նոյն սեռ՝ այս անուն անհատի է[13] ենթակայ[14], ո՛չ է ենթակայ միւս անհատին ի նոյն սեռ, այսպէս և զբոլոր անհատին մասունս[15] իմայ[16]: Այս թէ՝ զինչ է[17] նիւթ հասարակական և զինչ մասնական:

Բե՛ր այժմ[18] տեսցուք զվեցերորդ գլուխն՝ թէ զինչ է տեսակ և ի քանիս բաժանի:

Բաժանի տեսակ յերկուս՝ ի տեսակ գոյացական և ի տեսակ պատահական[19]: Եւ է՛ տեսակ գոյացական, որ ի գոլն բաղարկոցէ[20] զէութիւն իրին և ի բառնալն ապականէ զէութիւն՝ որպէս բանականն զմարդն[21], և անբանն զձին: Իսկ պատահական տեսակ են այնոքիկ[22], որ ի սահման էութեան ոչ արառոցին՝ որպէս կերպարան, զի թէպէտ տարանջատեն զտեսակ ի տեսակէ, սակայն ոչ արառոցին ի սահման: Զոր պատուիրէ Պորփիւր. մի՛ զվայրապար դեպն, թէպէտ տարանջատէ[23], որպէս հիւսնել, և զայլ ամենայն սոյնպիսիս ծանիր, որ ոչ առնու ի սահման՝ ո՛չ է գոյացական: Իսկ

[1] ACDEF > մի
[2] EF > զի
[3] CEF Պերի արմինս] Պերի ամէնիաս
[4] D գիրքն
[5] D լինելութեանն են] ի լինելութեան և յապականութեան են
[6] D >է
[7] EF > թէ
[8] E մարմնական
[9] D > ի
[10] F ենթակացաւ
[11] B > ենթակայ
[12] DE >է
[13] ACDEF >է
[14] D ենթակայանայ
[15] B մասունքն
[16] C անհատն միւս իմայ] անհատին մասունս իմայ
[17] F >է
[18] B > այժմ
[19] A > բաժանի տեսակ յերկուս՝ ի տեսակ գոյացական և ի տեսակ պատահական
[20] CEF բաղարկացոցէ
[21] D զմարդկան
[22] A այնոցիկ
[23] ACDEF տարանջէ

կերպարան իւրաքանչիւր տեսակի ոչ արառոցի ի սահման՝ վասն այն[1] կոչի տեսակ պատահական, վասն զի, թէ բառնաս մտօք զկերպարան ի մարդոյ, ծայրոտեալ[2] յունական[3] ջերմութենէ, սակայն[4] մարդ է, իսկ թէ զբանականն բառնաս՝ ո՛չ է մարդ: Իսկ զայս պատահական տեսակ[5] սահմանեն այսպէս՝ տեսակ արժանի գոռոզութեան, իբր թէ քան զամենայն հինգ ձայնն, զոր ասէ Պորփիւրիոս, այս՝ կերպարան, գոռոզ է, որպէս թէ առաւել ծանօթութիւն տայ: Իբր թէ[6] զոք մի ծածկեալ հարցանեն ի քէն՝ զի՞նչ է[7], պատասխանես՝ զսեռն՝ որ է կենդանին, կամ զտեսակ գոյացական՝ որ է մարդ, կամ զբանական՝ որ է տարբերութիւն, կամ զյատուկն՝ որ է ծիծաղական, կամ զպատահականն[8] որ է սեաւ[9] կամ սպիտակ. է՛ ընդ վարանմամբ[10] թէ որպիսի՞ կենդանի, որպիսի՞ մարդ, որպիսի՞ բանական, որպիսի՞ ծիծաղական, որպիսի՞ սեաւ կամ սպիտակ: Իսկ թէ բարձեալ զծածկոյթն զդէմն երևեցուցանես՝ գոռոզաբար ծանոթութիւն տայ, իսկ թէպէտ[11] այսպէս գոռոզ է, ի սահման ոչ բաղարկոցէ, քանզի պատահական է: Իսկ զտեսակ գոյացական սահմանեն այսպէս՝ տեսակ է, որ ըստ յոլովից և տարբերեցելոց թվով[12] ի ներումն զինչ էին ստորոգեալ՝ որպէս բանականն ի մարդն[13], անբան խըխնջականն[14] ի ձին[15]:

Բե՛ր տեսցուք զեւթներորդ գլուխն, թէ որպէս[16] ի նիւթոյ և ի տեսակէ գոյացոյց Աստուած զարարածս, քանզի ասէ Արիստոտէլ, թէ ամենայն ինչ ի նիւթոյ և ի տեսակէ բաղկանայ:

Գիտելի է, զի նիւթ հասարակական իսկոյն ընդ ստեղծանելն[17] համանգամայն ընդ նմին ստեղծան չորս որակք՝ չոր և գէջ, ցուրտ և ջերմ: Իսկ որ ի ջերմն հպեալ նիւթ՝ հուր եղև, իսկ որ ի ցուրտ՝ ջուր եղև, և որ ի չոր՝ երկիր, և որ[18] ի գէջ՝ օդ: Այսպէս չորս տարերք կազմեցան ի նիւթէ[19] և ի տեսակէ: Եւ զի ունին տարերք տեսակ գոյացական և տեսակ պատահական: Գոյացական ունի երկիր՝ զչոր, իսկ պատահական՝ զցուրտ, իսկ ջուր՝ զցուրտ գոյացական, իսկ զգէջ պատահական, այսպէս[20] օդ՝ զգէջ գոյացական և զջերմն պատահական, իսկ հուր՝ զջերմ գոյացական և զչոր պատահական: Քանզի այս տարր՝ վասն մի գոլոյ նիւթոյն, դիւրաւ ընդունի զմիւս տարերն զորակութիւն՝ վասն յար մերձաւորութեան. և այսր աղագաւ շաղ-

[1] B այնորիկ
[2] B ծայրատեալ
[3] B յունկան, D յունակական
[4] D սկիզբն
[5] D > տեսակ
[6] BCEF > թէ
[7] D >է
[8] A զպատակն, BCE զպատահն, F զպատահումն
[9] D սև
[10] CEF վարմամբ
[11] F թէ
[12] DF թուով
[13] D մարդկան
[14] D անբանն և խըխնջականն] անբան խըխնջականն, Fի [խըխնջականն]
[15] D ձիոյ
[16] D թէպէտ] թէ որպէս
[17] E ստեղծանիլն
[18] CEF > որ
[19] BDE նիւթոյ
[20] F սոյնպէս

կապին և խառնին ի միմեանս: Եւ ի սոցա խառնմանէն՝ լինելութիւն լինի այլ էակաց: Նաև այսր աղագաւ ներհակ թշնամիքս լինին սիրելիք անքակտելիք, որ ըստ գոյացական որակացն են թշնամիք անհաշտելիք[1]:

Եւ որովհետև[2] ծանեաք զորքանութիւն տարերց[3], բե՛ր աստանօր տեսցուք և զութերորդ գլուխն՝ թէ վա՞ն էր հասարակ չորեսին տարր կոչին, և կամ զի՞նչ բացայայտէ տարր անունս, և թէ որպէ՞ս խառնին[4] ի միմեանս:

Եւ զի սահմանօրէն տարրն աշխարհական է մասն նուաստ շարախառնութեանց: Նախ, կոչի տարր, զի սփիւռ և ցիր են ընդ փորուածս երկնից գնդապէս: Երկրորդ, զի տարեալ[5] են ի միմեանս, իբր թէ իւրաքանչիւր տարր՝ զոր և առնուցուս, զերեքն ի մինն խառնեալ գտանես՝ եթէ հուր, և եթէ ջուր, նոյնպէս՝ օդ և երկիր: Երրորդ, զի զամենայն գոյակս մարմնեղէն ի[6] յինքեան տարեալ կրեն: Չորրորդ, զի իւրաքանչիւր տեսակ մարմնեղէն՝ անշունչք[7] և տունկք և զգայականք, ի սոցանէ ի չորից, մասն նուաստ հատեալ ի բոլորէն՝ շարախառնեալ կազմեն[8] տեսակս[9] ազգի ազգի, ըստ չափու հատուածոյն[10] տարերց: Հինգերորդ, զի սոքա չորս որակքս[11] տարրականք միայն կոչին[12], զի սոքա միայն են ազդողական որակք, որ յորս[13] մերձենան՝ ի բոլորն թափանցեալ տարրին, և զբոլորն յինքեանս[14] փոխարկեն, այսինքն՝ ի ջերմն և[15] ի ցուրտ, ի գէջ և ի չոր, զորս ոչ կարեն առնել այլ որակք՝ սեաւ կամ սպիտակ, կարմիր կամ դեղին և որ ի սոցանէ խառնուածք զանազանք՝ կապոյտ, կանաչ, գուլգուն և այլ սոյնպիսիք: Վեցերորդ, զի սոքա իւրաքանչիւր ոք ունի երկուս ծայրս որակութեան, զի մին[16] ծայրիւն են տարազգի, և միւսովն են տարեալք ի միմեանս սիրելիք, զի երկիր ունի չորութիւն և ցրտութիւն, ջուրն ունի ցրտութիւն և գիջութիւն, օդն ունի գիջութիւն և ջերմութիւն, հուրն ունի ջերմութիւն և չորութիւն: Երկիր՝ ցրտութեամբ և չորութեամբ՝ օդոյ ջերմութեանն և գիջութեանն է ներհակ[17]: Այսպէս ջուր՝ ցրտութեամբ և գիջութեամբ՝ հրոյ ջերմութեանն և չորութեանն[18] է ներհակ: Եւ են սոքա այսպէս թշնամիք անհաշտելիք, իսկ հնարիւք աստուածայնովք յստեղծմանէ մինչև ի կատարումն աշխարհի և անդր ևս մնան[19] սիրելիք անքակտելիք, զի «Ազգ գայ և ազգ գնայ և երկիր յաւիտեան կեայ[20]» [Ժող. Ա. 4]:

[1] AD > որ ըստ գոյացական որակացն են թշնամիք անհաշտելիք
[2] BD արդ որովհետև
[3] B տարերսդ
[4] F խառնակին
[5] B տարեալք
[6] D > ի
[7] BCDEF անշունչ
[8] A կազմին, D կազմեաց
[9] D տեսակ
[10] DEF հատուածոցն
[11] E որս որակքս
[12] B միայն կոչին տարր] կոչին
[13] CEF որոյ
[14] B ի յինքեանս
[15] CE > և
[16] ACDEF միւս
[17] B ներհակք
[18] D > և չորութեանն
[19] D մնալ
[20] B կայ

Իսկ թէ որպէ՞ս տարրին ի միմեանս:

Երկիր զվերին ծայրն ունի ցուրտ և ջուր՝ զներքինն: Երկրի վերին ծայրն և ջրոյ ներքին՝ միաւորեալ են ընդ միմեանս: Իսկ ջրոյ վերին ծայրն՝ դէջ և օդոյ ներքին ծայրն՝ դէջ: Ջրոյ[1] վերին, և օդոյ ներքին ծայրքն[2] միաբանեալք[3] են ընդ միմեանս: Մեքենայեաց արուեստն Աստուծոյ ի մէջ երկուց թշնամեաց՝ երկրի և օդոյ՝ զջուրն, զի միջնորդութեամբ իւրով կապեաց սիրով զերկուս թշնամիքն ընդ[4] միմեանս, և զինքն ընդ նոսա: Այսպէս ջրոյ և հրոյ մեքենայեաց[5] զօդ, զի օդ գիջութեամբ ընդ ջուրն է կապեալ, որ նախքան զինքն, և ջերմութեամբն՝ ընդ հուր, և զերկուս հակառակս ինքեամբ սիրով ընդ մի կապեաց: Իսկ հուր՝ ըստ մակբեկութեան[6] և մակդարձութեան[7], չորութեան ծայրիւն ընդ երկիր է կապեալ և ջերմութեամբ ընդ[8] օդ: Եւթներորդ, զի այնպէս առանց յաւելուածոյ[9] և պակասութեան կազմեաց զսոսա, զի թէ ի սոցանէ մասն նուաստ հատանի և առնի էակ՝ հին էակն լուծանի և լնու զպակասութիւն հատեալ տարրին, և հատեալ տարրն լինի էակ[10] և լնու զպակասութիւն անցեալ և չիջեալ էակին. և այսպէս տեսակ և տարր տանին ի միմեանս: Ութերորդ, զի երկիր տղմացեալ լինի ջուր, և ջուր թանձրացեալ և կաւացեալ լինի երկիր, իսկ ջեռեալ[11] և շոգացեալ լինի օդ, օդ ժողովեալ և խտացեալ լինի ջուր, իսկ չորացեալ՝ ի հուր փոխարկի: Այսպէս և հուր չիջեալ և ի բաց եղեալ չորութիւն՝ լինի օդ, {քանզի է օդ չիջումն հրոյ և շոգի ջրոյ ջեռուցելոյ: Արդ, յայտ է յայսմանէ, թէ ի[12] ջերմութենէ է[13] լինելութիւն սորա, քանզի ջեռեալ ջուր և չիջեալ հուր՝ օդ լինի}[14]: Արդ, ըստ ընտանի բնութեան օդ է ջերմ, բայց ցրտանայ մերձաւորութեամբն՝ որ առ ջուր և երկիր, քանզի ներքին կողմն, որ առ ջուր և երկիր՝ ցուրտ գոլ, իսկ վերնոյն, որ առ հուր՝ ջերմ գոլ: Եւ պատահի այս վասն թուլութեան և դիւրակրութեան[15] օդոյ, զի փութանակի կայ ի բաց յընտանի բնութենէն և փոխարկի: Իսկ Արիստոտէլ երկու սեռս ասաց գոլ յօդոյ՝ մին չոր և ծխատեսակ լեալ, որ ի չիջմանէ[16] հրոյ, և միւսն տամկատեսակ, որ ի գոլոշոյ ջրոյ. զոր և յառաջ տարեալ ասասցուք պարագայիւք[17]: Իսկ աստանօր ասասցուք[18] զիններորդն, զի Պղատոնի թուե-

[1] B հրոյ
[2] D ծայրն
[3] DEF միաբանեալ
[4] E ըստ
[5] EF մեքենեաց
[6] B մակբեկութեամբ
[7] C կամ դարձութեան
[8] D ըստ
[9] CEF յաւելուածս
[10] B > և լնու զպակասութիւն հատեալ տարրին, և հատեալ տարրն լինի էակ
[11] B ջեռացեալ
[12] EF > ի
[13] EF > է
[14] D > {քանզի է օդ շիջումն հրոյ և շոգի ջրոյ ջեռուցելոյ: Արդ, յայտ է յայսմանէ, թէ ի ջերմութենէ է լինելութիւն սորա, քանզի ջեռեալ ջուր և շիջեալ հուր օդ լինի}
[15] BD դիւրակրթութեան
[16] AD շրջմանէ
[17] Dպարագայիւքնասասցուք]ասասցուք պարագայիւք
[18] D տեսցուք

ցաւ երիցն փոխարկիլ ի միմեանս, բայց երկրի[1] անփոխարկելի մնալ, քանզի նմանեցուցանէ երկրի զկիբիկոն[2] ձևն, որ է քառակուսի[3], զի անշարժագոյն է քան զայլսն յուղղագծից[4] ձևոց[5], իսկ ջրոյ՝ զկուսայեդռոնն[6], որ է քսանանիստ[7], իսկ զպիռամիդէսն[8] հրոյ: {Լուծումն: Ասի ոմանց, քսան չափ պարզ լինել ջուր, քան զերկիր[9] և ութ չափ օդ, քան զջուր. ըստ այսմ՝ երեքապատիկ նուրբ լինել հուր, քան զօդ, վասն այն ջուրն քսանանիստ, և օդն ութանկիւնի և հուրն եռանկիւնի ասի}[10]: Իսկ զյոգտաեդռոնն օդոյ. որ է դյուրաշարժագոյն[11], քան զջուր և յամրագոյն, քան զպիռամիդէսն: Յայսոսիկ ձևոց առնէ զցուցումն երիցունց այսոցիկ ի միմեանս փոխարկիլ, բայց երկրի ոչ կրել զայս, քանզի[12] զերիսս զայսոսիկ՝ զպիռամիդէսն և զոքտաեդռոնն և զկուսաեդռոնն, յիսկալինեաց[13] եռանկիւնեացն ասէ գոլ հաստատիլ: {Լուծումն: Իսկալինն սանդուխ ասի ըստ հոռոմինզերդ երեքոտնի գրակալ է, երբ պիտի ժողովեն զոտներն, նա ցածնայ[14], երբ պիտի բարձրացնեն. ի հոռոմնու[15] եկեղեցիքն կու լինի}[16]: Բայց զկիբիկոնն ի հաւասարակողից[17] եռանկիւնեաց[18]. արդ, որ ինչ իսկալինեաց եռանկիւնից[19] հաստատեցաւ, այսոցիկ կարէ լուծանիլ և դարձեալ ժողովիլ և ի միմեանս փոխարկիլ[20], իսկ կիբիկոն ոչ լուծեալ և ոչ[21] այլոցն կար գոլ փոխարկիլ: {Լուծումն: Իսկ Պղատոն ի Տիմէի տրամաբանութիւնն[22] ասէ, թէ հանգիտէ և անհանգիտէ[23] յերկուցն մի բաղկացութիւն, որ լինի երեք: Դարձեալ, կիբիկոնն վեց տափարակ ունի, իսկ վեցին կողմունքն երեք են: Դարձեալ յայլմէ, և զի եռակի տարորոշ է ամենայն մարմին}[24]: Իսկ ասէ Պղա-

---

1 E երկիր
2 E քառակուսի բիկոնն
3 DE > որ է քառակուսի, ACF քառակուսի (ծանոթագրության ձևով՝ լուսանցքում կամ տողատակում)
4 E յուղագործից
5 B ձևոց եռանգիւնի
6 Aզի կուսաեդռոնն, E քսանանիստ կուսաեդռոնն] զկուսայեդռոնն
7 DE > որ է քսանանիստ , AF քսանանիստ (ծանոթագրության ձևով՝ լուսանցքում կամ տողատակում), C քառանիստ] քսանանիստ
8 E լուծումն՝ եռանկիւնի (ավելացված է լուսանցքում)
9 F զհուր
10 ACF {Լուծումն: Ասի ոմանց, քսան չափ պարզ լինել ջուր, քան զերկիր և ութ չափ օդ, քան զջուր. ըստ այսմ՝ երեքապատիկ նուրբ լինել հուր, քան զօդ, վասն այն ջուրն քսանանիստ, և օդն ութանկիւնի և հուրն եռանկիւնի ասի}՝ (ծանոթագրության ձևով՝ լուսանցքում կամ տողատակում), DE > {Լուծումն... ասի}
11 A դյուրագոյն
12 D քան
13 B յիսկալի նոցա
14 CF կուցածնու
15 F հոռմաց] ի հոռոմնու
16 ACF {Լուծումն: Իսկալինն սանդուխ ասի ըստ հոռոմինզերդ երեքոտնի գրակալ է, երբ պիտի ժողովեն զոտներն, նա ցածնայ, երբ պիտի բարձրացնեն. ի հոռոմնու եկեղեցիքն կու լինի}՝ (ծանոթագրության ձևով՝ լուսանցքում կամ տողատակում), DE > {Լուծումն: Իսկալինն… լինի}
17 D հաւասարակողմից
18 B եռանգիւնից
19 B > արդ որ ինչ իսկալինեաց եռանկիւնից
20 D > և ի միմեանս փոխարկիլ
21 D > ոչ
22 B տրամաբանութեանն
23 B յանհանգիտութենէ
24 ACF {Լուծումն: Իսկ Պղատոն ի Տիմէի տրամաբանութիւնն ասէ, թէ հանգիտէ և անհանգիտէ յերկուցն մի բաղկացութիւն, որ

տոն. երբեմն ի սրութենէ[1] հրոյ լուծանիլ յերկրի և բռուութեամբ օդոյ և գիջութեամբ ջրոյ, բայց անխառն բերի ի նոսա: {Լուծումն: Զկիբիկոնն եռանկիւնի ասէ՝ կամ վասն զի[2] մին անկիւնն սկիզբն է և ոչ է ընդ թուոյ[3] այլոցն, որպէս միակն ի համարս թուոցն[4], կամ զայլ երեքն ի յինքն ունի}[5]:

Տասներորդ[6], ըստ այլ[7] յեղանակի ասէ Պղատոն, զիւրաքանչիւր ոք[8] ի տարերցս[9] երիս ունելով որակութիւնս՝ հրոյ՝ սրութիւնս, այսինքն[10] երագութիւն, սաստկութիւն[11], անգայտութիւն, շարժութիւն, իսկ երկրի՝ բթութիւն, խտութիւն, կայս. քանզի գոլ հակառակս ըստ երից ծայրից՝ զերկիր և զհուր: Իսկ առեալ իւրաքանչիւրոցն[12] ծայրից լինին միջնատարերք, քանզի առեալ լինի ի[13] հրոյ երկու որակութիւն՝ անգայտութիւն և շարժութիւն, և մի ի[14] յերկրէ՝ բթութիւն, և հաստատի[15] օդ. տեսակարարս ունելով որակութիւն՝ բթութիւն, անգայթութիւն, շարժութիւն: Դարձեալ, առեալ լինի յերկրէ երկու որակութիւն՝ բթութիւն և խտութիւն, և մի ի հրոյ՝ շարժութիւն, և լինի ջուր. տեսակացեալ և սա՝ բթութեամբ, խտութեամբ և շարժութեամբ: Արդ՝ որպէս սրութիւն առ բթութիւն, այսպէս՝ հուր առ օդ: Եւ որպէս անգայտութիւն առ խտութիւն, այսպէս՝ օդ առ ջուր: Եւ որպէս շարժութիւն առ կայս, այսպէս՝ ջուր առ երկիր[16]: Ուրեմն՝ որպէս ջուր առ օդ, այսպէս օդ առ հուր, և որպէս օդ առ ջուր, այսպէս ջուր առ երկիր: Քանզի բնաւորեցան հարթքն ի միոջէ միջնորդութեան շարակայիլ, այսինքն՝ ի համեմատութենէ, իսկ հաստատունք յերկուց միջնորդութեանց: Իսկ մետասաներորդ, զի ըստ այլ յեղանակի ասեն որակութիւնս ունել տարերցս[17]. երկրի և ջրոյ ծանրութիւնս՝ ըստ որում ի վայր[18] բերին բնութեամբ, ի օդոյ և հրոյ թեթևութիւն՝ ըստ որում ի վերինն բերին բնութեամբ[19]: Երկոտասաներորդ, ասեն ստոյիկեանքն զտարերքս զոմանս արարողականս և զոմանս իգականս. արարողս՝ զհուր և զօդ, զի ներգործող են և ազդող, իսկ զջուր և զերկիր՝ իգա-

---

լինի երեք: Դարձեալ, կիբիկոնն վեց տափարակ ունի, իսկ վեցին կողմունքն երեք են: Դարձեալ յայլմէ, և զի եռակի տարորոշ է ամենայն մարմին}՝ ծանոթագրության ձևով՝ լուսանցքում կամ տողատակում, DE > {Լուծումն... մարմին}

[1] DF սրբութենէ

[2] B > զի

[3] AC թվոյ

[4] ACF թուոյ

[5] ACF {Լուծումն: Զկիբիկոնն եռանկիւնի ասէ՝ կամ վասն զի մին անկիւնն սկիզբն է և ոչ է ընդ թվոյ այլոցն, որպէս միակն ի համարս թուոցն, կամ զայլ երեքն ի յինքն ունի}՝ (ծանոթագրության ձևով՝ լուսանցքում կամ տողատակում), DE > {Լուծումն... ունի}

[6] B դարձեալ

[7] C այս

[8] F > ոք

[9] BF տարերացս

[10] A լուծումն

[11] CDF > այսինքն՝ երագութիւն, սաստկութիւն

[12] ABCD յերկաքանչիւրոցն

[13] F > ի

[14] E > ի

[15] ACDEF հաստի

[16] F հուր

[17] B ունել տարերցս որակութիւնս] որակութիւնս ունել տարերցս

[18] CEF ի վերինն

[19] CDEF > ի օդոյ և հրոյ թեթևութիւն, ըստ որում ի վերինն բերին բնութեամբ

կանս, այսինքն[1]՝ կրող և ընդունող ազդմանց սոցա:

Եկեսցուք յառաջին կարգաղրութիւն[2] գլխոցն, որ սա՝ յութերորդն յերկոտասան գլուխս բաժանեցաւ, և ասասցուք[3] յաղագս իններորդին: Բե՛ր տեսցուք, քանզի ամենայն[4] մարմնական[5] էութեանց չորս ինչ պետք են բաղկացութեանց[6]՝ էութիւն, մածումն, երևումն և շարժումն[7], որով լինի մարմին չօշափելի, եռակի տրամակայեալ, վասն որոյ ի հարկէ պիտոյ եղև ի բաղկացութիւն սոցա չորս տարերքս: Քանզի երևին սոքա յամենայն մարմնականքս, որպէս ասէ Պղատոն, զի առանց հրոյ երևումն ոչ լինի, և ոչ առանց օդոյ շարժումն, և ոչ առանց ջրոյ մածումն, և ոչ առանց երկրի հաստատութիւն: Ապա ուրեմն, յայտնի[8] եղև, թէ ի հարկէ պիտոյ էր[9] չորս տարերք, զի լինէր մարմին:

Բե՛ր այսուհետև տեսցուք և[10] տասներորդ գլուխն. զի խնդրի, թէ չորս տարերքս որպիսի՞ իմն յեղանակաւ փոխին ի բնութիւն ամենայն կենդանեաց և բուսոց, նաև անբուսից[11]: Նախ ասասցուք զանբուսիցն, զի յիւրաքանչիւր տարրէ[12] մասն հատեալ՝ հրով, կամ ջրով և կամ[13] հողմով, խառնեալ ի մի երկնային ազդմամբ, ըստ կարգադրութեան[14] Արարչին[15]՝ եռացմամբ հրոյ բաղկանան ի զանազան տեսակս՝ ըստ զանազան հատման աստիճանաց տարերցն և լինին այսքան բազմութիւն զանազան[16] քարանց և հրահալելեաց: Իսկ ի կենդանիս ըստ կերակրական մասին հատեալ մասունք[17] տարերցն ի սրտէ երկրի, ի ձեռն ճաշակման ներգործութեամբ բնութեան[18] իրին փոխին[19] ի գոյութիւն[20] նորին այսպէս և ըստ այսմ օրինակի. քանզի մասն այն, որ ճաշակութիւն ունի զբաղկացութիւն իւր ի չորից տարերց հալմամբ, բնութեան ներգործութեամբն փոխի երկիր ի սեաւ[21] մաղձ՝ ցուրտ և չոր, իսկ ջուր ի պլղամ և ի մաղաս, որ և սփռեալ է ի[22] բոլոր մարմինն՝ ցուրտ և դէջ գոլով, իսկ օդ՝ յարիւն՝ ջերմ և խոնաւ գոլով, իսկ հուր՝ ի խարտեաշ մաղձ՝ ջերմ և չոր գոլով: Նմանապէս փոխի[23] և ի գոյնս՝ հուրն ի դեղին, օդն ի կարմիր, ջուրն ի սպիտակ[24], երկիրն ի սեաւ: Սապէս և ի համս՝ յօդն՝ քաղցր, ի հուրն՝ դառն, ի ջուրն՝ թթու, յերկիրն՝ աղի: Այսպէս և ի ձայնս՝ սուրն ի հուր, ծանրն՝ յերկիր, յերկարն՝

---

1 B > այսինքն
2 F կարգաւորութիւն
3 F եկեսցուք
4 E > ամենայն
5 D մարդկան
6 EF բաղկացութեան
7 CE կայումն, F կացումն
8 CDEF յայտ
9 D եղև:
10 BC > և
11 A անբուսոց
12 C տարէ, E տարր
13 D > կամ
14 B կարգաւորութեան
15 E Արարիչն
16 E > զանազան
17 F հողմունք] հատեալ մասունք
18 D > բնութեան
19 D փոփոխին
20 E բնութիւն
21 C սեռ
22 A ընդ, D ըստ
23 A և փոխի
24 Եթթու

*յօդ, սուղն՝ ի ջուր: Այսպէս է[1] տա-
րեալ և յաւուրն ի բնութիւն՝ որ-
պէս յեղանակս տարւոյ: Զի որպէս
գարունն ունի զբնութիւն օդոյ՝
այսպէս յառաւօտէն[2] մինչև յերիս
ժամս ունի զօդոյ բնութիւն: Եւ որ-
պէս ամառն ունի զբնութիւն հրոյ՝
այսպէս յերից ժամէն մինչև ի վեց
ժամն ունի զբնութիւն հրոյ: Իսկ
որպէս աշունն ունի զբնութիւն
երկրի՝ այսպէս ի վեց ժամէն մինչև
յինն ժամն ունի զբնութիւն երկրի:
Եւ որպէս ձմեռն ունի զբնութիւն
ջրոյ՝ այսպէս և յինն ժամէն մինչև
ի գիշերն, որ է երկոտասան ժամն,
ունի զբնութիւն ջրոյ: Մանաւանդ
թէ բոլոր գիշերն ունի զբնութիւն
ջրոյ և ձմեռան: Իսկ զթիւ ամաց
մարդոյ[3], ասէ մարգարէն, է[4] եւթա-
նասուն ամ: Բայց իմաստասէրքն
ասեն գոլ ութսուն ամ՝ ի ծննդենէն
մինչև ի քսան ամն՝ է ի տղայա-
կան հասակին, վասն որոյ Մովսէս
ի քսանամենից ի վեր առնու զայր
պատերազմող: Իսկ այս հասակ
ունի զբնութիւն գարնան՝ ջերմ և
գէջ: Իսկ ի քսանէն[5] մինչ[6] ի քառա-
սուն ամն ունի զբնութիւն ամա-
ռան՝ ջերմ և չոր: Իսկ ի քառասնէն
մինչ[7] ի վաթսուն ամն ունի զբնու-
թիւն աշնան՝ ցուրտ և չոր: Իսկ ի
վաթսնէն մինչև յութսունն ունի
զբնութիւն ձմերան՝ գէջ և ցուրտ,
վասն այն՝ ցաւօք[8] և հեծութեամբ:*

*Բե՛ր տեսցուք զմեծասան
գլուխն՝ թէ ստոյգ չորս են տա-
րերք: Յայտնի, նախ յայսմանէ,
զի ասէ Հիպոկրատէս՝ եթէ մի էր
տարր, ոչ ոք խօթանայր, վասն
զի թէ մի էր և ոչ գոյր այլ տարր,
յորս փոխարկէր՝ զիա՞րդ խօթա-
նայր: Եւ թոյլ տալով ասէ՝ թէ մի
էր տարր, յորժամ խօթանայր՝ մի
էր, որ բժշկէր: Արդ, բազում են, որ
բժշկեն և ոչ մի, յայտ է, թէ չորս
են[9] տարերք և ոչ մի: Երկրորդ, զի
Թալէս զջուրն միայն ասաց և զայլ
երիսն՝ ի նմանէ. զթանձրագոյն նո-
րա՝ երկիր, իսկ զնրբամասնագոյնն
նորա[10]՝ օդ, իսկ զօդոյն նրբամաս-
նագոյնն[11]՝ հուր: Եւպարքոս[12] և
Մենդապոնտինոս զհուր նովին
ցուցմամբ վարին, որպէս ասաց
Թալէս: Իսկ արդ, եթէ որք[13] զջուրն
ասացին և որք զհուր, չորիւք բա-
ժանմամբ զմիսն ծնօղ երիցն ասա-
ցին[14]՝ ի հարկէ գոլ ցուցանեն զչորս
տարերս: Իսկ զի զանազանին, ոմն
զջուր գոլ[15] ծնօղ երիցն, Անաքսի-
մանէս[16]՝ զօդ, ոմն՝ զհուր, վասն ի
միմեանս փոխարկման պատրեալ
զանազան ասացին: Եւ յայսմանէ
ի հարկէ ասի գոլ չորս տարերք, զի
զոր և[17] առնուցուս զմիսն՝ երեքն ի
նմա գտանին:*

---

[1] D >է
[2] E յառաւօտոյ
[3] B մերոց
[4] ABCF >է , E ասէ:
[5] B քսան ամէն] քսանէն
[6] F մինչև
[7] BF մինչև:
[8] E ասէ ցաւօք

[9] B > են
[10] ACDEF > նորա
[11] E > օդ, իսկ զօդոյն նրբամասնագոյնն
[12] A էպարքոս, B եպարքոս, D եպպարքոս
[13] C որ
[14] F ասաց
[15] B ասաց գոլ
[16] A ոմն զօդ (նշան է դրված և ուղղված՝ Անաքսիմանէս զօդ), B որպէս Անաքսիմանէս
[17] A > և

Խնդրելի է և[1] այս ի կատարմանն[2] գլխոյս երկոտասան[3] թէ վա՞ն էր չորս են տարերք, և ոչ աւելի և[4] կամ նուազ:

Առաջին պատճառ, զի որպէս ասացաք յառաջագոյն՝ ոչ առանց հրոյ երևումն կարէ լինել, և ոչ առանց ջրոյ՝ մածումն, և ոչ առանց օդոյ՝ շարժումն, և ոչ առանց երկրի՝ հաստատութիւն: Երկրորդ, զի չորս թիւն ծննդական է և[5] աղբիւր ամենայն թուոց: Զի չորս թիւդ շարադրեալ զտասն ծնանի և ամենայն թիւք[6] տասամբ կատարին. յայտ է, թէ չորսն է ծնօղ և աղբիւր ամենայն թուոց: Իսկ թէ որպէս[7] չորսն զտասն ծնանի. մի և երկու, որ լինի երեք, երեք[8] և երեք, որ լինի վեց, վեց[9] և չորս, որ լինի տասն: Եւ ամենայն թիւք[10] տասամբ կատարին՝ հարիւրեակն և հազարեակն և բիւրեակն: Վասն որոյ չորսս այսպիսի խորհրդաւոր էր, սահմանեաց Պիթագորաս աշակերտաց իւրոց երդնուլ ի քառեակն՝ ի մշտաբուղխ աղբիւրն: Եւ զայս ասէր կա՛մ վասն չորից տարերց՝ զի ծնօղ են ամենայն գոյից, կա՛մ վասն[11] չորից առաքինութեանց, և կա՛մ վասն չորից կողմանց աշխարհի, և կա՛մ վասն չորս թուոց[12] զի լինին ծնօղ ամենայն թուոց: Որ և ի մերս պատուեցաւ քառաբուղխ վտակօք յԵդեմայ, և քառադէմ[13] կառօքն՝ յոր բազմեալ ետես զՏէր Եզեկիէլ, և վասն քառից աւետարանչացն: Եւ այս յաղագս այսորիկ[14] այսքան:

Իսկ անցանելով մեր[15] ընդ ծով և ընդ յաղիմ, հասեալ ի Քորէբ[16] և ի լեառն Սինայ՝ պատրաստեցի Ահարոն և[17] հարազատօք[18] և ծերակոյտ ժողովրդեամբք նպաստ լինել աղօթիւք, զի ելից ի լեառն իմանալի առ Աստուած և բերից զպատգամս կենդանիս, որ ի կրկին դէմս նկատի՝ նշան հաշտութեան և[19] հոգւոյ և մարմնոյ առիթ փրկութեան:

{Բայց նախքան զմեկնութիւն[20] բանիս, հարկաւորիմք առաջի երկնագումար և աստուածաբնակ[21] խմբիցս, տալով ի վերայ սկուտեղ լեզուիս՝ զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ ի խորանս եկեղեցւոյս՝ պատարագ Աստուծոյ ի հոտ անուշից: Եւ ապա զկնի նորին բուռն հարկանել զառաջի եդեալ բանիցս զմեկնութենէ[22]: Եւ ի յաւարտ նախերգանիս բե՛ր բուռն հարցուք և[23] զհաւատոյ: Եւ գիտելի է, զի մի և բոլոր է հաւատ ընդհանուր ուղղափառ եկեղեցւոյ, վասն որոյ և Տէրն ի հատ մանանխոյ նմանեցուցանէր. նախ, վասն

1 A խնդրեսցուք] խնդրելի է և
2 BF կատարումն
3 D երկոտասաներորդիս
4 BCDEF > և
5 A > և
6 E թիւ
7 CEF երկու] թէ որպէս
8 ACDEF > երեք
9 ACDEF > վեց
10 CEF > թիւք
11 EF > վասն
12 C թուոյ, F թըւոց
13 E քառաբուխ
14 D այսոցիկ
15 CEF > մեր
16 C քորէք
17 BDEF > և
18 F հազարապետօք
19 E > նկատի նշան հաշտութեան և
20 C զմեկնութեան
21 AB աստուածաբանակ
22 F զմեկնութիւն
23 EF > և

բոլորութեանն, երկրորդ, վասն անբեկ գոլոյն: Եւ զի թէպէտ[1] մի է և բոլոր հաւատ, բայց վարդապետք եկեղեցւոյ դնեն աստիճան[2] հաւատոյ չորեքտասան, իսկ մեք դնեմք երկոտասան, որ զչորեքտասան գլուխն պարունակեալ, լի և բովանդակ անթերի, և կատարեալ հաւատ ուղղափառ եկեղեցւոյ: Բե՛ր ձեռնարկեսցուք յաստիճանն առաջին և կարգաւ ելցուք ի լեառն իմանալի առ Աստուած, և ի նմանէ լուսաւորեալ մերձեսցուք ի մեկնութիւն բանիս}[3]:

Նախ, հաւատամ զէութիւն աստուածութեանն, ըստ այնմ, որ ասէ[4] ի Գիրս Մնացորդաց վեցերորդ գլուխն. «Լուր, Իսրայէլ, Տէր Աստուած քո Տէր մի է» [Բ. Օրէնք. Զ. 4][5]: Երկրորդ, հաւատամ, զի երեք են աստուածային անձինքն[6] ի մի էութիւն, ըստ այնմ, որ ասի յառաջին թուղթն Յովհաննու ի[7] կաթուղիկէն[8] ի վերջին գլուխն. «Երեք են, որ վկայեն յերկինս՝ Հայր, Բանն և Հոգին Սուրբ, և սոքա երեքեան մի են» [Ա. Յովհ. Ե. 8]: Երրորդ, հաւատամ զնոյն երրորդութիւնն ստեղծող ամենայն ստեղծուածոց, երևելեաց և աներևութից, ըստ Դաւթի մարգարէին[9], թէ՝ «Նա ասաց և եղեն, հրամայեաց և հաստատեցան» [Սաղ. ՃԽԸ. 5], և դարձեալ Պօղոս ասէ, թէ[10] ՝ «Հաւատով[11] իմանամք հաստատեալ զյաւիտեանս Բանիւն Աստուծոյ, յաներևութից զերևելիսս եղեալ» [Եբր. ԺԱ. 3]: Չորրորդ, հաւատամ ի յեկեղեցի Աստուծոյ զթողութիւն մեղաց հաղորդութեամբ սրբոց առաքելոցն, առանց որոյ ոչ գոյ հնար փրկութեան, որպէս ասէ առաքեալն առ Հռոմայեցիս՝ «Արդարացեալք ձրի նորին շնորհօքն Քրիստոսի» [Հռոմ. Գ. 24]՝ որ է եկեղեցի: Հինգերորդ, հաւատամ[12], զի ամենեքեան յարիցեն, որպէս ասէ Յովհաննէս աւետարանիչն՝ «Ամենեքեան լսիցէն[13] ձայնի Որդւոյն Աստուծոյ և եկեսցեն արտաքս» [Յովհ. Ե. 28]: Վեցերորդ, հաւատամ զկեանսն յաւիտենականս և հատուցումն իւրաքանչիւր[14] գործոց՝ ըստ Աւետարանին՝ «Որոց[15] զբարիս գործեալ իցէ՝ ի յարութիւն կենաց և որոց զչար արարեալ իցէ՝ ի յարութիւն դատաստանաց» [Յովհ. Գ. 29], և ըստ Դաւթի, թէ[16] ՝ «Դու հատուցանես իւրաքանչիւր ըստ գործս[17] նոցա» [Սաղ. ԿԱ. 13], և ըստ առաքելոյ, թէ՝ «Մեզ ամենեցուն յանդիման լինել կայ առա-

[1] BCEF թէ
[2] CEF աստիճանք
[3] D > {Բայց նախքան զմեկնութիւն բանիս… և ի նմանէ լուսաւորեալ մերձեսցուք ի մեկնութիւն բանիս}
[4] B ասի
[5] **Թեև հղվում է Հին Կտակարանի Մնացորդաց գիրքը, սակայն մեջբերումը Երկրորդ Օրինաց գրքից է: Նույն դրությունը տե՛ս նաև Նոր Կտակարանում՝ [Մար. ԺԲ. 29]:**
[6] D անձինք աստուածութեանն] աստուածային անձինքն
[7] C > ի
[8] F կաթուղիկէին
[9] B > մարգարէին
[10] A > թէ
[11] D հաւատովք
[12] E > հաւատամ
[13] EF լսելոց են
[14] E ըստ իւրաքանչիւր
[15] E որոյ
[16] BDEF > թէ
[17] D զգործս] ըստ գործս, Fգործոց

*ջի ատենին Քրիստոսի, զի ընկալ-
ցի իւրաքանչիւր ոք իւրով[1] մարմ-
նովն զոր ինչ գործեաց՝ եթէ բարի
և եթէ չար» [Բ. Կորն. Ե. 10]: Եւթ-
ներորդ, հաւատամ, զի Որդին[2] Աս-
տուծոյ յղացեալ ի Հոգւոյն Սրբոյ
և ծնաւ ի Մարիամայ կուսէն՝ ըստ
այնմ, որ ասէ Եսայի ի[3] վեցերորդ[4]
գլուխն. «Ահա կոյս յղասցի և ծնցի
Որդի և կոչեսցի[5] զանուն նորա Էմ-
մանուէլ» [Եսայ. Է. 14], և Մատ-
թէոս վկայէ[6], թէ՝ «Որ ի նմայն
ծնեալն[7] է՝ ի Հոգւոյն Սրբոյ է»
[Մատ. Ա. 20]: Ութերորդ, հաւա-
տամ զՔրիստոս չարչարեալ ի ներ-
քոյ Պոնտացւոյ Պիղատոսի[8], խա-
չեալ, մեռեալ, թաղեալ, որպէս և
ինքն Տէրն մեր[9] ասէ ի Մատթէոսի
քսաներորդ գլուխն՝ «Ահաւասիկ
ելանեմք յԵրուսաղէմ, և որդի մար-
դոյ մատնեսցի[10] ի քահանայապէ-
տից և ի դպրաց, և մատնեսցեն
զնա[11] ի մահ, այպանել և ի խաչ
հանել և յերրորդ աւուր յարիցէ»
[Մատ. Ի. 18]: Իններորդ, հաւա-
տամ զՀոգին Քրիստոսի իջեալ ի
դժոխս անբաժանելի նովիմբ աս-
տուածութեամբն և միացելոյ ընդ
մարմինն ի գերեզմանին՝ անքակ
միութեամբ յերկուցն: Տասներորդ,
հաւատամ զՔրիստոս յարուցեալ ի
մեռելոց, ըստ այնմ, որ ասէ[12]. «Թէ
զՅիսուս[13] խնդրէք, զխաչ ելեալն
չէ աստ՝ այլ յարեաւ» [Մատ. ԻԸ.
6]: Մեհասաներորդ, հաւատամ,
զի Քրիստոս ել յերկինս նստաւ[14]
ընդ աջմէ Հօր ամենակարողի, ըստ
որում ինքն ասաց. «Ելանեմ առ[15]
Հայր իմ և առ Հայր ձեր» [Յովհ. Ի.
17]: Եւ Մարկոս ի վերջին գլուխն[16]
ասէ՝ «Ել յերկինս և նստաւ ընդ
աջմէ Հօր» [Մար. ԺԶ. 19]: Երկո-
տասաներորդ, հաւատամ, զի Որ-
դին Աստուծոյ անտի[17] գալոց է դա-
տել զկենդանիս և զմեռեալս՝ ըստ
որում ինքն Տէրն ասէ յԱւետա-
րանն Մատթէոսի ի[18] երեքտասանե-
րորդ գլուխն. «Յորժամ եկեսցէ Որ-
դի մարդոյ փառօք իւրովք, և ամե-
նայն հրեշտակք[19] ընդ նմա, յայն-
ժամ նստցի յաթոռ փառաց իւրոց»
[Մատ. ԻԵ. 31][20] դատել զկենդա-
նիս և զմեռեալս: Իսկ աստիճանք
հաւատոյ[21] յայլում վայրի չորեք-
տասանք են կարգեալ[22] ի սրբոց
հայրապետաց, զի յայնմ գլխոջն[23],
որ զյարութիւն մեռելոց դնեմ[24],
միւս գլուխ կարգէ զհատուցումն
արդարոց և մեղաւորաց: Իսկ մեք*

---

[1] E գործոց] ոք իւրով
[2] E զորդին] զի որդին
[3] CEF > ի
[4] **Թեև նշվում է վեցերորդ գլուխը, սակայն հղումը Եսայու մարգարեության յոթերորդ գլխից է:**
[5] B կոչեսցեն, E կոչեսցես
[6] CEF վկա
[7] CEF ծնեալ
[8] D > ի ներքոյ պոնտացւոյ Պիղատոսի
[9] D > մեր
[10] CEF մատնի
[11] A > զնա
[12] D > որ ասէ
[13] CEF զՔրիստոս
[14] D և նովին մարմնովն նստաւ] նստաւ
[15] B ես առ
[16] D ի Մարկոսի վերջքն] Մարկոս ի վերջին գլուխն
[17] A անդի, DE > անտի
[18] CEF > ի
[19] E հրեշտակաւք
[20] **Թեև հղվում է Մատթեոսի Ավետարանի երեսուներորդ գլուխը, սակայն մեջբերումը քսանհինգերորդ գլխից է:**
[21] CF հաւատոց
[22] D կարգեալք, F կատարեալ
[23] CEF գլխոցն, D > գլխոջն
[24] B դնեմք, D դնէ

վասն այնորիկ[1] որիշ[2] գլուխ ոչ կարգեցաք, զի յարութիւն մեռելոցն զհատուցումն արդարոց և մեղաւորաց անդանօր կարգեցաք՝ բաւական[3] համարեցաք զմի գլուխ զերկուց ունելով[4] զօրութիւն: Այսպէս և կարգեցին սուրբքն մի[5] գլուխ զիջումն Բանին յարգանդ սուրբ կուսին, որ և ասէ հրեշտակն, թէ «քանզի և[6] որ ի նմայն ծնեալ է՝ ի Հոգւոյն Սրբոյ է», և միւս[7] զկուսական ծնունդն յարգանդէ: Իսկ մեք զերկուսն մի կարգեցաք՝ յաղագս ունելոյ մինն զմիւսոյն, յայն սակս զչորեքտասանն երկոտասան գրեցաք աստանօր[8]:

Եւ արդ, որովհետև ձեռնտուութեամբ Հոգւոյն[9] և նպաստութեամբ աղօթից ձերոց, բարձրացեալ մեր ի լեառն Սինայ և ի վիմաբնակ ծերպէ մարմնոյ իմանալի հայեցմամբ սակաւ ինչ յառեցաք՝ զդաւանութիւն Երրորդական անձնաւորութեանն և միոյ աստուածութեանն, բե՛ր այժմ տեսցուք յաղագս արարչական ներգործութեանն[10]: Բայց նախքան ի մտանել ի մեկնութիւն մարգարէական բանիս, տեսցուք՝ զի՞նչ է մարգարէութիւն և ի քանի՞ս բաժանի, և այս մարգարէութիւն[11] ըստ որու՞մ յեղանակի է և յորու՞մ ժամանակի ասացաւ: Եւ ապա ձեռնարկեսցուք ի մեկնութիւն բանիս, որ ասէ. «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր, և գործք ձեռաց քոց երկինք են»:

Նախ տեսցուք՝ զի՞նչ է մարգարէութիւնն: Մարգարէութիւն է[12] կանխագիտութիւն[13] ամանակաց՝ անցելոց, ներկայից և ապագայից: Իսկ բաժանի մարգարէութիւնն ի հինգ: Առաջին՝ ի[14] բնական[15], որպէս երէոց, անասնոց, թռչնոց և մրջմանց: Երկրորդ՝ արուեստական, որպէս բժիշկք[16] և նաւավարք. բժիշկք[17] զհիւանդաց զառողջութիւն և զցաւս, և նաւավարք՝ զխռովութիւն ալեաց և զանդորրութիւն: Երրորդ՝ դիւական, որպէս կռոց սուտ մարգարէիցն[18] Սեղեկիայն և այլոց բազմաց, որ այժմ երևին ի պատասխանիս կախարդաց, նաև՝ հաւակռիչք և գարէդիւթք, որք են բնաւ սուտք և ոչինչք: Չորրորդ՝ գռեհիկք[19], զոր սովորութեամբ լուեալ ասեն, ձմեռն գայ և զկնի այնորիկ՝ գարուն, ամառն և աշուն: Եւ ի կարմրանալ երկնից ընդ երեկս և[20] ընդ առաւօտս զերաշտոց[21] և զանձրևաց ի փորձոյ ուսեալք յառաջագուշակ լինին, զոր հրամայէ Տէրն յԱւե-

---

1 BDF այն
2 E այն որ ի] այնորիկ որիշ
3 C երկոտասան] բաւական
4 F ունել, CE զեկուցանել] զերկուց ունելով
5 C ի մի] մի
6 B > քանզի և , CEF > և
7 CE > միւս
8 B կարգեցաք] գրեցաք աստանօր
9 B > Հոգւոյն
10 E ներգործութեամբ
11 F մեկնութիւն
12 E > է
13 DE նախագիտութիւն, CF նախկնից գիտութիւն
14 B > ի
15 C բանական
16 CEF բժիշկ
17 ACEF բժիշկ
18 B մարգարէութիւնքն որպէս] մարգարէիցն
19 B գռեհիկ
20 E է և] և
21 B զերաշտից

տարանն, թէ[1] «Ասեն կեղծաւորք և լինի այնպէս» [Ղուկ. ԺԲ. 54]: Իսկ հինգերորդ, մարգարէութիւն հոգևոր[2] և աստուածային գիտութիւն, զոր յայտնութենէ[3] Հոգւոյն Սրբոյ ուսեալք խօսին առ ի զգուշութիւն մարդկան ի հոգևոր շինուածս: Իսկ այս լինէր[4] ըստ չորից յեղանակաց: Նախ՝ երազօք, որպէս Սողոմոնի: Երկրորդ՝ տեսլեամբ[5], որպէս Եսայեայ: Երրորդ՝ երևակայութեամբ, որպէս այնոցիկ, որ հասին մարգարէութեան շնորհին, որպէս Եղիսէին և այլոց բազմաց մարգարէից, քանզի Եղիսէի էր տեսանել զզօրս[6] հրեշտակացն ի գալ դամասկացւոցն և մանկանն ընդ նմա ոչ տեսանել: Չորրորդ՝ զմիտս լուսաւորելով յայտնապէս թարց երևակայութեան[7] ոգւոյ, միայն միտքն լուսաւորեալ[8] ի շնորհաց Հոգւոյն խօսին զհանդերձելոցն, որպէս Մովսէսին, որ ասէ, թէ՝ «Ես Տէր Աստուած[9] տեսլեամբ և երազովք[10] երևեցայց[11] և խօսեցայց ընդ ձեզ[12], բայց ոչ այնպէս[13] ընդ ծառայն իմ Մովսէս[14], այլ բերան ի բերան խօսեցայց[15] դէմ յանդիման տեսլեամբ» [Թիւք. ԺԲ. 6-8]: Իսկ մարգարէութիւնս Դաւթի է ի միտս լուսաւոր յայտնութեամբ շնորհացն Աստուծոյ եղեալ: Նոյնպէս[16] և այս սաղմոս ի ժամանակին, յորժամ փախեաւ յերեսաց Աբիսողոմայ, յայտնութենէ[17] Հոգւոյն Սրբոյ ընկալաւ զսկզբան[18] և զկատարածի գիտութիւն և խօսեցաւ զայս, թէ՝ «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր, և գործք ձեռաց քոց երկինք են»:

Տեսցուք զառաջին գլուխս, թէ[19] զի՞նչ նշանակէ ասելս՝ «ի սկզբանէ»[20]:

«Ի սկզբանէ»-ս ցուցանէ, թէ յըսկսանել գործոյ՝ յառաջ քան զամենայն ձեռն ի գործ[21], զսա արար սկիզբն ամենայն գործոյ՝ իբր թէ նախքան զամենայն ստեղծուածս առնէ ի[22] սկիզբն զերկիր և զերկին[23]: Իսկ այլք, թէ սկիզբն զվայրկեան ժամանակն սկսուածոյ գործոյ նշանակէ և[24] գուշակէ: Իսկ Բասիլիոս սահմանէ այսպէս՝ սկիզբն է[25] ամենայն ինչ, որ նախագոյ[26] պատճառ է լինելութեան իրիք, որով լինի եղեալն: Արդ՝ առաջին սկիզբն է արարչական, որպէս Աստուած՝ աշխարհի և չինիչ՝ քաղաքի: Երկրորդ՝ է[27] պատճառական, որպէս Հայր՝ Որդւոյ և Հոգւոյ անժամանակ ծննդեան և անժամանակ բղխման:

---

1 B > թէ
2 D է հոգևոր] հոգևոր
3 E յայտնութեան
4 D մարգարէութիւն լինէր] լինէր
5 D > տեսլեամբ
6 CEF զօրս
7 B երևակայութեամբ
8 CEF լուսաւոր
9 ABCDF > Աստուած
10 B երազօք, AD երազով
11 D երևայց
12 CEF քեզ
13 F > այնպէս
14 D Մովսէս այնպէս] Մովսէս
15 D > խօսեցայց
16 BCDEF նոյն
17 E յայտնութեան
18 F զսկիզբն
19 AB > թէ
20 CEF > ի սկզբանէ
21 F > ի գործ
22 CDEF > ի
23 D զերկին և զերկիր] զերկիր և զերկին
24 ABCEF > նշանակէ և
25 CEF ի սկզբանէ] սկիզբն է
26 ABDEF նախագոյն
27 F >է

Երրորդ՝ է նիւթական, որպէս փայտ՝ աթոռոյ[1] և չորս տարերքս՝ աշխարհի: Զորրորդ՝ է[2] գործական, որպէս տապար՝ հիւսան և քնար՝ երաժշտականի: Հինգերորդ,՝ նախագոյական, որպէս հիմն՝ տան[3] և ողնափայտ՝ նաւի և սիրտ՝ կենդանւոյ: Վեցերորդ՝ բանական և օրինաւորական, որպէս սկիզբն իմաստութեան՝ երկիւղ Տեառն և սկիզբն բարւոք[4] կենաց՝ արդարութիւն:

Իսկ մարգարէս, որ ասէ՝ «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր ...», ոմանք ըստ արարչական յեղանակին ծանեան, որպէս Ստեփաննոս Սիւնեցին, զի ասէ, թէ[5] «Իսկ»՝ զՀայր նշանակէ, և «Բան»՝ զՈրդի, իսկ «է»՝ զՀոգին Սուրբ», իբր թէ Հայր և Որդի և Հոգի զոյգ երրորդ անձինք և մի տերութիւն հաստատեցին՝ զերկիր և զերկին: Իսկ Բասիլիոս ըստ հինգերորդ յեղանակին, իբր թէ նախ գոյացոյց զերկիր և զերկին և ապա զայլ ամենայն ստեղծուածս[6], որ են ի մէջ երկրի և երկնի՝ պարառեալ զմիմեանց բնութիւն, որպէս նախ արկանեն[7] զհիմն տան և զողնափայտ նաւի և զսիրտ կենդանւոյ: Իսկ լատինացիք զվայրկեան ասեն սկիզբն գործոյ արարածոցս՝ առ ի ցուցանել զհրաշալի կարող զօրութիւն[8] Արարչին, զի ի[9] վայրկեան[10] միում արար զերկիր և զերկին:

Իսկ խնդրի և այս աստանօր, թէ վա՞ռն էր Մովսէս նախ զերկին դնէ և ապա՝ զերկիր, իսկ Դաւիթ նախ զերկիր դնէ, և ապա զերկին: Ոմանք ասացին, թէ Մովսէս նախ զերկին դնելով՝ զհրեղէն երկնիցն ասէ, իսկ Դաւիթ նախ զերկիր և ապա զերկինս՝ զհաստատութենէն, որ յերկրորդ օրն կազմեցաւ՝ ասէ: Իսկ թէ ոմն զերկին դնէ առաջին և ոմն զերկիր՝ առ ի ցուցանել, թէ համանգամայն գոյացան ի միում վայրկենի և ոչ են ժամանակաւ մի քան զմի յառաջ գոյացեալ, այլ համանգամայն:

Բե՛ր տեսցուք զերկրորդ գլուխն, եթէ զի՞նչ նշանակէ «տէր»-ս աստանօր:

Գիտելի է, զի տէրն անուն է և մի է ի մասանց բանի: Բայց նախ տեսցուք՝ զի՞նչ է բան: Ըստ քերթողացն[11] բան է հետևակ[12] բառի ըստ շարադրութեան[13] զտրամախոհութիւն ինքնակատար յայտնելով: Եւ բանի մասունք են ութ[14] անուն, բայ[15], ընդունելութիւն, յօդ, դերանուն, նախադրութիւն, մակբայ, շաղկապ: Իսկ առասութիւն իբր տեսակ ընդ անուամբ ենթանկեալ, զիւրաքանչիւր սահմանաւ բացայայտեսցուք: Բայ է բառ անհոլով, ընդունական ամանակաց, դիմաց և թուոց[16], որ ներգործութիւն կամ կիր[17] յարկացոցէ: Ընդունելութիւն է բառ ընդունական

[1] D աթոյ, F աթոռով
[2] F >է
[3] D սանն
[4] CE բարուոք, D բարիոք
[5] A > թէ
[6] B ստեղծուածք, D ստեղծուած
[7] B արկանէ
[8] A կարողութիւն] կարող զօրութիւն
[9] E > ի
[10] B վայրկենի

[11] C քերթողական
[12] C հետևական
[13] D շարադրութիւն] ըստ շարադրութեան
[14] C բան իմաստունք են ութ] բանին մասունք են ութ
[15] E բայց
[16] A թվոց
[17] D իր

բայից և անուանց յատկութեանց: Իսկ յօդ և մասն բանի հոլովական՝ նախադասեալ[1] ներխոնարհութեանց և անուանց: Իսկ դերանուն է բառ փոխանակ անուան առեալ: Իսկ նախադրութիւն է բառ նախադրեալ յամենայն մասունս բանի[2] ըստ բարդութեան և բաղդատութեան[3], և են ամենայն յիսուն և[4] մի: Մակբայ է մասն բանի անխաղաց՝ ստոր բայի ասացեալ կամ մակբայի ասացեալ[5]: Շաղկապ է բառ, որ կապէ զտրամախոհութիւն ոճով և զմեկնութեան[6] փեռեկումն յայտնէ: Իսկ մնայ ևս սահմանիւ[7] գիտել և զանուն, որ մի է ի մասանց բանին: Բե՛ր տեսցուք նախ ըստ քերթողացն[8] ոճին: Իսկ ըստ քերթողացն է անուն մասն բանի հոլովական՝ մարմին կամ իր նշանակելով. մարմին՝ որգան քար, և իր՝ որպէս[9] խրատ, հասարակաբար և յատկապէս՝ հասարակաբար՝ որդոն մարդ, և յատկապէս՝ որպակ Պօղոս: Եւ լինի անունն ըստ երից՝ ի ձայնէն, ի գործոյն և յիրէն: Ի[10] ձայնէն՝ որպէս ճնճղուկ կամ[11] կաչեղակ. ի ճչելոյն ասի ճնճղուկ[12] և ի կչկչելոյն՝ կաչեղակ[13]: Իսկ ի գործոյն՝ որպէս սողոց և տարգաղ. զի ի սողալոյն ասի սողոց[14] և ի գաղելոյն՝ տարգաղ[15]: Իսկ յիրէն որպէս սափոր կամ սապատ. ի փորոգ կազմածոյն ասի սափոր և ի պատելոյն ասի սապատ՝ վասն զիր ինչ պարունակելոյն: Իսկ ըստ իմաստասիրին[16] Արիստոտէլի՝ բան է ձայն նշանական[17], որոյ մասունքն զատեալ նշանական[18]: Իսկ մասունք են սորա[19] հաւասարապէս[20] և մանաւանդ թէ իսկապէս՝ անուն և բայ: Իսկ անուն է ձայն նշանական[21] ըստ շարադրութեան առանց ամանակի, որոյ մասունքն ոչինչ[22] զատեալ նշանակեն[23] որոշակի, ուղղակի: Իսկ բայ է, որ առ[24] նշանակէ ամանակ, որոյ մասն ոչինչ նշանակէ զատեալ, և միշտ զայլմեց ասիցելոց: Իսկ թէ ընդէ՞ր միայն զանուն և զբայ ասեն գոլ մասն բանի իսկապէս, իսկ զայլսն միայն հետևանք բայի և անուան: Զի ոմանք ընդ անուամբ են ենթանկեալ[25], իսկ այլքն՝ ընդ բայիւ: Ընդ անուամբ՝ իբր դերանուն և կամ մակբայ, իսկ ընդունելութիւն՝ ընդ բայիւ: Իսկ այլոցն[26] յայլ իմն պիտոյից սակս առեալ լինին՝ որպէս ի նաւի սինձ[27] և վուշ[28] առ ի մածուցանել, իսկ առ

[1] A նախադատեալ
[2] E բաի
[3] C բաղդասութեան
[4] CEF > և
[5] CEF > կամ մակբայի ասացեալ
[6] A զմեկնութիւն
[7] F սահմանաւ
[8] C քերթողական
[9] B որպակ
[10] CEF > ի
[11] B և ի կաչկչելոյն] կամ
[12] C > ի ճչելոյն ասի ճնճղուկ
[13] B > ի ճչելոյն ասի ճնճղուկ և ի կչկչելոյն կաչեղակ
[14] CEF սղոց, D > և տարգաղ, զի ի սողալոյն ասի սողոց
[15] AD տարգալ
[16] E աւրինակելոյն
[17] E նշանակ
[18] BEF նշանակեն
[19] E նորա
[20] E հաւասարապէս
[21] F > նշանական
[22] E ոչ
[23] C նշակեն
[24] CF առ որ] որ առ
[25] E ենթակայեալ
[26] B այլ ոքն] այլոցն
[27] F սոսինձ
[28] C փուշ

ի յօդսն[1] պնդել, որպէս բևեռք[2], և կամ առ ի գեղեցկութիւն՝ որպէս կարմրադեղն[3]: Եւ ոչ մի ոք ի սոցանէ մասն ոչ ասի[4] նաւին, այլ ի պիտոյից սակս առեալ[5] վերաբերին[6] առ նաւն: Սոյնպէս և բանի՝ ոմանք[7] յար և ի պնդել զմասունս բանի, որպէս շաղկապն, և ոմանք[8] առ ի[9] լրութիւն, որպէս նախդիրն՝ ոչ իբր ի[10] կատարել[11], այլ իբր[12] ի գեղեցկացուցանել: Եւ այլքն[13] զիւրաքանչիւր պէտսն առ բանն[14] ունելով ոչ[15] ևս[16] մասունք ասասցին[17]: Իսկ ապա ուրեմն, ճշմարիտ մասունք են բանի անուն և բայ: Իսկ սահմանիւ[18] ծանեաք՝ թէ զի՞նչ է անուն:

Բե՛ր տեսցուք զերրորդ գլուխն՝ թէ ըստ քանի՞ յեղանակս ասեն իմաստասէրքն[19] զանուն:

Անուն բաժանի ըստ իմաստասիրացն ի չորս՝ ի հոմանուն[20], ի փաղանուն[21], յարանուն և ի բազմանուն[22]: Իսկ թէ[23] վասն զինչ պատճառի տրամատեն իմաստասէրքն[24] զանուն ի չորս: Յաղագս այնորիկ, զի ամենայն ստորոգութիւն կա՛մ յումեքէ ստորոգի, կա՛մ ոչ յումեքէ: Թէ ոչ[25] յումեքէ[26] ՝ ո՛չ անուամբ, և ո՛չ իրօք հաղորդի: Իսկ թէ յումեքէ՝ կա՛մ միով հաղորդի անուամբ և կոչի[27] հոմանուն, և կա՛մ իրօք և անուամբ հաղորդի[28] և լինի փաղանուն, կա՛մ իրօք հաղորդի և ոչ անուամբ[29] և լինի բազմանուն: Իսկ յարանուան[30] չորս ինչ պիտոյ է՝ միաբանիլ առաջին վանգին և զանազանիլ վերջին փաղառութեանն, կցորդութիւն իրին և զանազանութիւն իրին: Իսկ հոմանուն է, որ և մի գոլով ըստ կոչման ձայնի, իսկ նշանակեալքն զանազանին ըստ գոյացութեան՝ կա՛մ ըստ տեսակին, կա՛մ ըստ անհատին, քանզի և անհատն է ի յատկութեանց բաղկացեալ: Եւ է հոմանուն ըստ տեսակի՝ որպէս մարդ կենդանի և գրեալն, իսկ ըստ[31] անհատի՝ որպէս Յովհաննէս Կարապետ և Յովհաննէս որդի որոտման: Եւ հոմանուն ձայն տրամատի ըստ պատահման կամ ըստ մտածութեան: Իսկ մտածութեամբն ըստ յուսոյ, կամ ըստ աղօթից, ըստ պատուոյ, ըստ յիշատակի, ըստ կերպարանի[32], ըստ նմանութեան, ըստ եղանակի: Իսկ

1 B զօդուածսն
2 Fբևեռօք
3 CE կարմրդեղն
4 B ասին
5 ACDEF > առեալ
6 A վերավերին
7 E ասի ոմանք] ոմանք
8 B յար և ի պնդել զմառի] առ ի
9 CEF > ոմանք
10 CEF > ի
11 F կատարեալ
12 B առ
13 F այլ
14 E բանիւ
15 CEF և ոչ] ոչ
16 E > ևս
17 EF ասացին
18 EF սահմանաւ
19 C իմաստունքն
20 C զհոմանուն] ի հոմանուն
21 C զփաղանուն] ի փաղանուն
22 D բազում անուն
23 B > թէ

24 A իմաստասէրքն տրամատեն] տրամատեն իմաստասէրքն
25 C > ստորոգի, կամ ոչ յումեքէ: Թէ ոչ :
26 EF > ստորոգի, կամ ոչ յումեքէ: Թէ ոչ յումեքէ :
27 CF ոչ ի
28 D > հաղորդի
29 B > և ոչ անուամբ
30 CEF հարանուն
31 A ի] իսկ ըստ
32 D > ըստ կերպարանի

միոյն[1]՝ իբրև զարեգակն միանձն, կամ ըստ լծորդին պակասութեան: Եւ թէ վա՞սն էր լինի հոմանունութիւն: Զի էակքս բազումք[2] են, և տառք՝ սակաւ, և բանք[3] տառիւք բաղկանան: Իսկ սակաւն զբազումսն կրկնելով չափէ, որպէս կանգուն զբազմութիւն պարանի[4] և զայլ սոյնպիսեաց: Իսկ փաղանուն է, որ տայ զանուն և ըստ անուանն[5] բան գոյացութեան նոյն՝ որպէս ասի մարդ կենդանի, և ունի զսահման կենդանւոյն[6] գոյացութիւն ներշնչական և[7] զգայական: Իսկ յարանուն է, որ առաջին վանգիւն միաբանի և գոյացութեամբ, իսկ վերջին փաղառութեամբն զանազանի և գոյացութեամբ՝ որպէս ի քերականութենէ քերական և յարիութենէ՝ արի: Իսկ բազմանուն ասի, որ միում[8] իրաց զանազան անուանս կոչեմք՝ որպէս սուսեր, նրան, դալապր, մարտացու, վաղակաւոր, կամ թէ միոյ տեսակի ի[9] զանազան ազգս՝ զանազան անուն[10]՝ որպէս մարդոյ կամ ձիոյ[11]:

Բե՛ր աստանօր զսահման անուան[12] բացայայտեսցուք[13], քանզի ասէ[14]՝ «Անուն է ձայն նշանական ըստ շարադրութեան առանց ամանակի, որոյ մասն ոչինչ զատեալ նշանական[15]՝ որոշակի, ուղղակի[16]»: «Ձայնն» եդաւ ի տեղի սեռի, զի ըստ յոլովից բերվի[17]: Ըստ նշանականի[18] և աննշանի[19]՝ վասն այն «նշանական» եդաւ, զի զատուսցէ յաննշան ձայնից անասնոց[20] և ի ճայթմանց անշնչից: Իսկ «ըստ շարադրութեան»՝ այսինքն՝ կամաւոր խոկմամբ և բառ ընդ բառի կարգեալ, վասն զի և նշանական ձայն է հեծումն հիւանդին[21] և հաջիւն շան, բայց ոչ ըստ շարադրութեան: Իսկ «առանց ամանակաւ»-ն՝ զատուսցէ ի բայէ[22], որ զէրն և զեղիցին նշանակէ, իսկ անունն ոչ նշանակէ ամանակ, վասն որոյ ասէ՝ առանց ամանակի: Իսկ «որոյ մասն ոչինչ նշանական[23]»՝ զատուսցէ ի բանէն, զի նորա մասունքն զատեալ նշանակեն: Իսկ «որոշակի»-ն զատուսցէ յանորոշ անուանէն, որ է ոչ մարդն: Իսկ «ուղղակի»-ն տարբերեսցէ ի հոլով անուանէն[24], որպէս Փիլոնի[25], Փիլոնայ և այլն:

Բե՛ր տեսցուք[26] զչորրորդ գլուխն, թէ զի՞նչ աղագաւ ամենայն իրի անուն կոչեցաւ: Որպէս վկայէ Գիրն Աստուածային, թէ[27]՝

---

1 BDEF միայն
2 E բազում
3 B բառք
4 E պարի
5 E > անուանն
6 C > և ունի զսահման կենդանւոյն
7 ABD > և
8 B մի
9 CEF > ի
10 E > անուն
11 A > որպէս մարդոյ կամ ձիոյ
12 C անուն
13 A որպէս մարդոյ կամ ձիոյ բացայայտեսցուք] բացայայտեսցուք
14 ABD ասի
15 B նշանակեն
16 D և ուղղակի] ուղղակի
17 CEF բերուի, D բերի
18 EF նշանակի
19 E աննշանականի
20 C անուանոց
21 ACDEF > հիւանդին
22 C բացէ
23 B նշանակեն
24 E հոլովմանէն] հոլով անուանէն
25 CEF > Փիլոնի
26 B ասացուք
27 ABCEF > թէ

«Զամենայն, զոր ստեղծ Տէր Աստուած շունչ կենդանի, ած առ Ադամ՝ եթէ զինչ կոչեսցէ անուն: Եւ իւրաքանչիւր ումեք զինչ և կոչեաց Ադամ անուն՝ այն անուն է նոցա» [Ծնն. Բ. 19]: Եւ զի հարկաւոր է անուն առ ի յատկութիւն բնութեան իւրաքանչիւր տեսակաց և անհատից, զի որպէս[1] սահմանն յայտնի առնէ զբնութիւն էին, այսպէս և անունն, վասն որոյ ասացեալ եղև յիմաստասիրացն, թէ անուն է սահման կարճառօտ, և սահման է անուն ծաւալեալ, քանզի զոր սահմանն յերկար բառիւք յայտնէ՝ մարդ կենդանի և այլն, անունն միով բառիւ՝ ասելով «մարդ»՝ զնոյն յայտնէ: Եւ քանզի դրութեամբ է անուն և ոչ բնութեամբ, որպէս ասէ Օմէլախսօն[2], թէ վասն զի[3] դրութեամբ է անուն, բացայայտի չորիւք յեղանակօք. նախ՝ ի հոմանունութենէ, երկրորդ՝ ի բազմանունութենէ, երրորդ[4] ի փոխադրութենէ, չորրորդ՝ ի զանազան ազգաց մի տեսակի[5] զանազան անունս[6]: Եւ է հաւաստի դրութեամբ[7], քանզի թէ բնութեամբ էր անուն, ոչ կարէր լինել հոմանունութիւն, որպէս թէ՝ շուն երկնային և շուն երկրային: Սապէս և ոչ կարէր լինել բազմանունութիւն, իբր թէ միոյ իրի բազում անունս[8] դնել՝ որպէս դալապր, մարտացու, վաղակաւոր[9]: Նաև ոչ փոխադրական կարէր բաղկանալ՝ որպէս Պղատոն ի Սոկրատ փոխադրեցաւ[10]: Այլև ոչ միոյ տեսակի[11] ի[12] զանազան ազգաց զանազան[13] անուանակոչութիւն՝ որպէս մեք հայքս մերում տեսակիս մարդ կոչեմք, իսկ յոյնք՝ օթրօպօս, այսպէս և զայլոցն իմա: Ապա ուրեմն, թէպէտ ի սահման անուան[14] յայտնիչ ասէ բնութեան, յաղագս այսր[15], զի յիմացումն յատկացուցանէ[16] յայլմէ տեսակէ և յանհատէ ըստ կոչման[17] սովորութեան, և ոչ եթէ բնութեամբ է անուն, այլ դրութեամբ:

Արդ, որովհետև ծանեաք, զի դրութեամբ է անուն[18], բե՛ր տեսցուք զհինգերորդ գլուխն, թէ այս անուն տիրական՝ ըստ որու՞մ յեղանակի եդաւ, և յորմէ՞[19] նախ եդաւ, և այժմ զի՞նչ պատճառաւ[20] առեալ[21] ասէ մարգարէս:

Գիտելի է, զի Աստուած ոչ ունի անուն յայտնիչ բնութեան, զի ոչ ոք գիտէ զԱստուած՝ ոչ հրեշտակք[22] և ոչ մարդիկ[23], որպէս[24] վկայէ աւետարանիչն. «ԶԱստուած՝ ոչ ոք ետես երբէք[25]» [Յովհ. Ա. 18], այ-

1 A > որպէս
2 B Նաւմէլախսօն, D Ամէլախաւսն
3 D > զի
4 D > բազմանունութենէ, երրորդ
5 F տեսակէ
6 ABD անուանս
7 ACDEF նշանակ] դրութեամբ
8 BD անուանս
9 ACDEF > վաղակաւոր
10 CD փոխեցաւ
11 B ազգի
12 E > ի
13 E ի զանազան] զանազան
14 F անուն
15 D > այսր
16 AB յատուկ ցուցանէ
17 CEF > կոչման
18 D > անուն
19 ABD յումէ
20 CDE պատճառ
21 F առաւել
22 CE հրեշտակ
23 BE մարդիկք
24 CEF > որպէս , D որ
25 D > երբէք

սինքն՝ ոչ գիտաց[1]: Նա[2] ինքն իսկ[3] որ գիտէ զինքն. ի հարցանելն նահապետին[4] «Զի՞նչ զանուն է քո», պատասխանէ՝ «Զի՞ հարցանէս զանուն իմ, թէ է՞ր վասն[5], զի սքանչելի է» [Դատ. ԺԳ. 17, 18], որպէս ասէ մարգարէն, թէ[6] «Սքանչելի է անուն քո ի վերայ[7] ամենայն երկրի» [Սաղ. Ը. 2. 10]: Իսկ թէ ոք ասիցէ, ի հարցանելն Մովսէսի, թէ՝ «Յերթալս իմ զի՞նչ[8] ասացից, թէ ո՞վ առաքեաց զիս», և ասէ՝ «Երթ և ասայ, որ է՛ն առաքեաց զիս» [Ելք. Գ. 13, 14]: Գիտասցէ, զի այն անուն՝ ոչ զբնութիւն էութեանն[9] բացայայտէ, այլ զմշտնջենաւոր գոլն Աստուծոյ, ասելովն՝ «Ես եմ, որ է՛ն» [Ելք. Գ. 14], այսինքն՝ ես եմ մի՛շտ էն՝ ո՛չ սկսեալ և ո՛չ դադարեալ: Ապա ուրեմն, յայսմ ամենայնէ յայտ եղև[10], թէ ըստ սահմանի անուանց ոչ ասի անուն Աստուծոյ՝ ո՛չ յիրէն, և ո՛չ ի ձայնէն, վասն զի ոչ ունի մարմին և ոչ[11] ձայնական գործի՝ յաղագս այնորիկ ոչ ասի անուն նմա ի ձայնէն, նաև՝ ոչ յիրէն, զի բնութիւն նորա անհաս է:

Իսկ անուանքս այս՝ «Աստուած», «Տէր» և «Դատաւոր» և այլ սոյնպիսիք, ըստ որու՞մ յեղանակի են կոչեցեալք: Յայտ է, զի ըստ քերթողացն ի գործոյ[12] ասին, և ըստ իմաստասիրացն՝ յարանուանէն[13], որպէս ի քերթելոյն[14] քերթող, և յստեղծանելոյն՝ ստեղծող, և ի տիրելոյն՝ տէր:

Եւ գիտելի է, զի ասէ Դիոնէսիոս, թէ ի[15] բարէխնամ կամացն ներգործութեանց կոչեցան ամենայն անուանք աստուածայինք, և տրամատին ի[16] գլուխս երկոտասան: Թէպէտ[17] բազումք են անուանք նախախնամութեան Աստուծոյ առ էսս և անթիւ, բայց ի գլուխս երկոտասանս պարունակին ամենայնքն[18]. նախ՝ էական, երկրորդ՝ անձնական, երրորդ՝ առընչական, չորրորդ՝ իբր առընչական, հինգերորդ՝ դրական, վեցերորդ՝ գերադրական, եւթներորդ՝ փոխաբերական, ութերորդ՝ բազձական, իններորդ՝ արարչական, տասներորդ՝ արքունական, մեթասաներորդ՝ հիացական, երկոտասներորդ՝ բացբարձական: Եւ են ըստ այսմ տեսութեան[19] էական՝ ըստ այնմ՝ «Ես եմ, որ էն», անձնական՝ որպէս ծնող, ծնեալ, բղխումն, առընչական՝ որպէս Հայր, Որդի, բղխող, բղխեալ, իբր առընչական՝ որպէս ստեղծող, ապաւէն, դրական՝ որպէս իմաստուն, բարի, գերադրական՝ որպէս արդար արդարոց, իմաստուն իմաստնոց, բարի բարեաց, թագաւոր թագաւո-

[1] D ոք գիտաց] գիտաց
[2] B նախ
[3] ABC > իսկ
[4] CEF հայրապետին
[5] CEF > վասն
[6] AB > թէ
[7] B > ի վերայ
[8] B յեգպտոս զինչ] զինչ
[9] ACDEF > էութեանն
[10] E > յայտ եղև
[11] ABCED > ոչ , D կամ

[12] F գործոց
[13] D յարանուէն
[14] BCDEF քերելոյն
[15] CDEF > ի
[16] CEF > ի
[17] D թէ
[18] D ամենեքեան
[19] ABCEF > Եւ են ըստ այսմ տեսութեան

բաց, փոխաբերական՝ որպէս թէ առիւծ, գառն, եզն, վէմն և այլ սոյնպիսիք, բագձական՝ որպէս Երրորդութիւն {երրեակ, արարչական՝ որպէս Աստուած, Արարիչ, գոյացուցիչ, արքունական՝ որպէս Տէր, դատաւոր, թագաւոր և իշխան, հիացական՝ «Ո որ[1] հովուեսդ Իսրայէլի նայեաց...» [Եզեկ. ԼԴ. 2], «Ո արար[2] զերկինս և զերկիր» [Սաղ. ՃԺԳ. 15], «Ո խորք մեծութեան Աստուծոյ...» [Հռոմ. ԺԱ. 33], «Ո որ ի կին մարդ հայել ինձ[3] ծանր գրեցեր» [Մատ. Ե. 28], բացբարձական՝ որպէս անհաս, անորակ, անքանակ, անուր, անելք: Բայց զայս ևս գիտել պարտ է, զի յերկոտասան եղանակացս հիացական և բացբարձական անուանքս առաւել մերձեցուցանեն ի խորքն աստուածային, քանզի այլ ամենայն անուանք ի յեղականս և յարարածկանս հպեալ կարծեցուցանեն զԱստուած, իսկ հիացականն և բացբարձականն հեռացուցանեն յարարածոցս և արժանաւոր աստուածային խոկմանցն կացուցանէն:

Դարձեալ, ըստ այլ իմն յեղանակի բաժանի անուն. քանզի է՛ն անուանք, որ ասին և ոչ են՝ որպէս եղջերուաքաղն և արալեզն, զի անուանին և ոչ են, և է՛ն, որ անուանին և են[4] որպէս մարդ, ձի, արծուի, և է՛ն, որ ոչ են և ոչ անուանին՝ որպէս ոչ[5] էքն և կամ որպէս՝ մարդ ոչ է ձի և ոչ ասի ձի, և է՛ն, զի գոն և ոչ անուանին՝ որպէս այնք, որ ի խորս ծովու և յանկոխ լերինս և կամ որպէս[6] գոյ[7] մարդոյն սլանալ յերկինս և ոչ ասի թռչուն երկնային: Այսպէս ծանիր և յաղագս Աստուծոյ, զի է՛ն անուանք, որ ասին ի վերայ Աստուծոյ և ոչ են՝ որպէս քուն և արթնութիւն, բարկութիւն և այլ սոյնպիսիք՝ «Արի, որ ննջէս», կամ թէ՝ «Զարթիր, ընդէ՞ր ննջես» [Սաղ. ԽԳ. 23], և «Բարկացաւ սրտմտութեամբ Տէր», որ ընաւ ոչ է և ոչ պատշաճի ի վերայ նորա, բայց թէ վասն ոչ այց առնելոյն[8] ննջել ասէ մարգարէն և վասն վրէժ խնդրելոյն՝ բարկանալ ասի[9] նմա: Իսկ որ է և ասի՝ Աստուած, Արարիչ և Տէր, զի է ստուգապէս և ասի՝ վասն ստեղծանելոյն՝ Արարիչ, և վասն ամենակալ գոլոյն՝ Տէր: Իսկ[10] որ ոչ է, ոչ ասի[11] ոչ[12] է Աստուած մահկանացու և ոչ ասի մահկանացու, ոչ է անբան և ոչ ասի անբան: Իսկ չորրորդն՝ որ է և ոչ ասի, քանզի ունի էութիւն և բնութիւն Աստուած, բայց ոչ ոք[13] ոչ հրեշտակք և ոչ[14] ազգ մարդկան[15], կարացին կոչել նմա անուն յայտնիչ բնութեանն, քանզի անուն է[16] սահման կարճառօտ[17]

[1] ABCDE > որ
[2] EFարարեր
[3] B զհայիլն ինձ ի կին մարդ] ի կին մարդ հայել ինձ
[4] E ոչ են] են
[5] EF > ոչ
[6] F > որպէս
[7] D ոչ գոյ] գոյ
[8] D այցելոյն] այց առնելոյն
[9] F բարկանաս ի] բարկանալ ասի
[10] B > իսկ
[11] EF > ոչ է, ոչ ասի
[12] B իսկ ոչ] ոչ
[13] F > ոչ ոք
[14] E > ոք՝ ոչ հրեշտակք և ոչ
[15] D ի մարդկան] մարդկան
[16] D > է
[17] E մարդկան] նմա անուն յայտնիչ բնութեանն, քանզի անուն է սահման

յայտնիչ բնութեանն ենթակայ իրին: Իսկ զի բնութիւնն Աստուծոյ[1] անհաս է յամենայն եղական բնութեանց, վասն այն ոչ անուանակոչի, յաղագս որոյ է և ոչ ասի անուն նմա[2] ըստ էութեանն, այլ միայն որ կոչին[3] ներգործութեան նորա են[4] անուանք:

Իսկ թէ յումէ՞[5] եդաւ անունս՝ «Տէր»: Նախ կոչեաց Ենովս զՏէրն և զԱստուծոյն Ադամ կոչեաց Աստուած[6] և Արարիչ, իսկ Աբրահամ կոչեաց դատաւոր և յաւիտենական: Իսկ մարգարէս այժմ, թէ ընդէր էառ[7] ի կիր զանունս զայս՝ և այս ոչ առանց խորհրդոյ: Զի ասելս աստանօր «Տէր», նախ, ցուցանէ, զի մի՛ գոյ Տէր երկնի և երկրի: Երկրորդ, զի մի՛շտ տիրէ և նախախնամէ: Երրորդ, զի ոչ է այլ ստեղծողն և այլ տիրողն և իշխան, այլ նո՛յն Տէրն, որ միշտ տիրէ և նախախնամէ, նո՛յն[8] է ստեղծողն՝ տիրելոցս և նախախնամելոցս: Չորրորդ, զի միշտ անդադա՛ր տիրէ երկնից և երկրի: Հինգերորդ, զի[9] զնորոգութեամբ մնալն էիցս մինչև ի կատարած ցուցանէ, զի որպէս ընդ[10] սեփհական տերութեամբ է՝ կայ և մնա՛յ: Այս յաղագս տիրական անուան՝ այսքան:

Տեսցուք զվեցերորդ գլուխն, թէ զինչ նշանակէ ասելն՝ «զերկիր[11]»:

Նախ, ցուցանէ[12] ըստ ոմանց, երկիր՝ իբր թէ երկու՛ իր՝ ջուր և հող: Դարձեալ, երկիր, թէ[13] յորժամ տեսանես[14] Բանիւ Տեառն հաստատեալ զսա՝ երկիր ի նմանէ: Դարձեալ, սահմանօրէն տեսցուք, թէ[15] զի՞նչ է երկիր. երկիր է մարմին ցամաք և ծանր: Իսկ աստանօր թէ՛ Դաւիթ, և թէ՛ Մովսէս երկիր[16] ոչ առանձին զմի տարր հողոյն ասեն, այլ զբնութիւնս[17] աշխարհի՝ եռացմամբ ի չորից տարերց ի մի բաղկացեալ: Իսկ սա կոչի մարմին ցամաք և ծանր, ըստ աստուածային հրամանին, որ ասէ, թէ՝ «Ասաց Աստուած՝ ժողովեսցին ջուրքն ի ժողով մի և երևեսցի ցամաքն... Եւ կոչեաց Աստուած զցամաքն երկիր և զժողովս ջուրցն՝ ծով» [Ծնն. Ա. 9-10]: Յայտ է, թէ զբնութիւնս[18] աշխարհի երկիր կոչեաց, յորս հետևին Դաւիթ և Մովսէս երկիր կոչելով: Իսկ սա բաժանի յերիս՝ յԵւրոպիա, յԱսիա և ի Լիբիա: Իսկ Եւրոպիէ[19] է[20], որոյ սահմանքն այս են՝ արձանքն Հերակլեա և խորքն Պոնտոսի և ծովն Իւրկանեա[21], որ նեղագոյն պարանոց ինչ ի Պոնտոս անցանի, զոր ոմանք Տօնաւիս գետ

կարճառօտ

[1] E > Աստուծոյ

[2] ACDEF > նմա

[3] D > որ կոչին

[4] B ներգործութեանն] ներգործութեան նորա են

[5] DEF յորմէ, B յումմէ

[6] E Տէր

[7] D էարկ

[8] F այն

[9] E > Fզի

[10] BD ըստ

[11] F ի սկզբանէ Տէր զերկիր] զերկիր

[12] D ցուցանի

[13] B զի

[14] A տեսանէն

[15] D > թէ

[16] E > երկիր է մարմին ցամաք և ծանր: Իսկ աստանօր թէ Դաւիթ, և թէ Մովսէս երկիր

[17] ABCD զբնակութիւնս

[18] ABCD զբնակութիւնս

[19] A Եւրոպէ

[20] EF >է

[21] A Իւրկեանեա

ասացին: Իսկ Ասիա է՝ յասացեալ պարանոցէդ Պոնտոսի և Իւրկանեա ծովուն մինչև[1] ցմիւս[2] պարանոցն[3], որ ի մէջ է[4] տրամակայեալ՝ Արաբական ծոցոյն և ներքին ծովուն, պարունակեալ առ ի սմանէ և յովկիանոս ծովուն[5], որ շուրջ եղև զամենայնիւ, բայց ոմանք ի Տօնաւիս գետոյ մինչև ցելսն Նեղոսի դնեն զսահմանս Ասիոյ[6]: Իսկ Լիբիա[7] է առեալ յԱրաբական պարանոցէն մինչև ցՀերակլեան արձանքն, և այլք ասէն՝ ի Նեղոսէ մինչև ցնոյն արձանսն: Եւ զԵգիպտոս առ ի յելից[8] Նեղոսի շրջահոսեալ[9] ոմանք յԱսիա, և ոմանք ի Լիբիայ դասէն: Եւ զկղզիսն ոմանք առանձին առնեն[10], և ոմանք մերձաւոր մասանցն բաշխեն: Իսկ երկայնութիւն սորա[11]՝ ի հիւսիսոյ[12] ի հարաւ, և լայնութիւնն յարևելից[13] մինչև}[14] ի մուտս արևու. աջ սորա՝ արևելք, և ձախ սորա՝ արևմուտք: Այլ[15] զտիեզերաց զորս կղզի և ցամաք ասացաք[16] ի մէջ ի[17] խորութեան[18] ծովուն. լայնութիւն սորա՝ չորս բիւրս ստադիոն[19], և երկայնութիւնն՝ բիւրս եւթն: Իսկ ժողովն ջուրց՝ եղև հրամանաւն Աստուծոյ՝ ի խորչս[20] և յանկիւնս և ի[21] բոլորս[22] երկրի, զոր պատրաստեալ էր յառաջագոյն, զոր և առանց հրամանի ոչ իշխէին[23] գնալ ի տեղի իւրեանց մինչև առին հրաման՝ իսկոյն զետեղեցան ի տեղիս իւրեանց: Իսկ այն, որ զբոլորիւս[24] զետեղեցան, Անդլնդական[25] կոչի: Եւ որ ի նմանէն ի մէջ երկրայս հոսի և առնէ զկղզիքն՝ ովկիանոս կոչի: Իսկ ի մուտս արևու՝ նեղ պարանոց ինչ բացեալ, ուր Հերակլ զարձանքն երկոտասան կանգնեաց և յառաջ[26] խաղացեալ, առնէ զԳաղատական, և զՍարդոնական, և զՍիկիլէական, և զԿրետական, և զԱսորեստանեան, և զԵգիպտական[27], զԿիպրոս, զԼեսբոս, և զԻւրկանիական, և զԿասպիական, զՊոնտոս, և զՊրօպոնտոս[28]: Իսկ առ ելս արևու դարձեալ ծփեալ ովկիանոս՝ զՀնդկականն, և զՊարսկականն[29] բացեալ լինի ծոց, շարունակեալ ըմբռնեալ լինի[30] զծովն Կարմիր: Աստանօր՝ ի սմա եղեն կղզիք՝ Բրիտեանք, և Աղբիոն[31], և Վեռնիա, և փոքրագոյն՝ Պրովանէ և Փոբեա կոչեցեալ, Բասր և Արա-

1 E որ մինչև] մինչև
2 E ի միւս
3 F միապարանոցն] ցմիւս պարանոցն
4 > է
5 Eծովէն
6 EF Ասիայ
7 D Լիբա
8 D յիցն
9 F շարադասեալ
10 E > առնեն
11 E նորա
12 AB հիւսւսոյ, D հիւսուսու
13 E նորա յարևելից] յարևելից
14 > {երրեակ, արարչական՝ որպէս Աստուած... և լայնութիւնն յարևելից մինչև} (մոտ հինգ սյունակ)
15 CEF այլև
16 EF ասաց
17 BD > ի
18 A խռովութեան
19 CF զդադիոն
20 E խորս
21 CEF > ի
22 B բլուրս
23 B կարէին
24 E զբոլոր իւր
25 AB Անդընդական, C Անդլընդական, E Անդընդլական
26 B անտի յառաջ] յառաջ
27 D զեգիական
28 C > զՊրօպոնտոս
29 CEF զՊարզ
30 E > լինի
31 B Ալբիոն

բիա և Կարմիր ծով: Արդ, զերկրի[1] և զծովու դրութիւնք, զորս տիեզերս սովոր եմք կոչել՝ ընդ այսպիսով եդաք պատմութեամբ:

Բե՛ր և որ ի սմա ասացուածի[2] է արժանի յաղագս գլխաւորագունից[3] փոքր ի շատէ ասասցուք: Քանզի երկու ոմանք գոլոշիք[4] ի սմանէ վերածխեալ: Գեր ի վերոյ մեր օդն անօսրագոյն է և ամենևին անտես՝ եթէ ոչ ի սաստկութենէ ումեմնէ երևեալ լինի[5]: Ի սոցանէ ոմն չոր է և ծխատեսակ՝ յերկրէ ի վեր հոսեալ, իսկ միւսն խոնաւ՝ ի գէջ ընութեանց վերածխեալ: Եւ ի սմանէ լեալ[6] լինի մառախուղ և սառնամանեաց տեսակ[7] ամպք՝ և[8] ձիւնաբերք և կարկուտք: Իսկ ի[9] չորոյն՝ հողմունք և հնչմունք զանազանք՝ որոտմունք և փայլատակմունք, կիզմունք և ամպահարութիւնք[10]: Իսկ որ է գէջ գոլորշի[11], յորժամ վերանայ՝ եթէ ի գետոց, և եթէ յայլ ջրածուծ[12] տեղաց, սակս գիջութեան[13] թանձրութեանն ի տեսութեան գայ: Սա յորժամ վերանայ, զանտես օդդ ծանրացուցեալ[14] սեղմէ ի միմեանս և առնէ զմառախուղ, որ է խոնաւ գոլորշի[15], անծննդական ջրոյ՝ քան զօդ թանձրագոյն և քան զամպ անօսրագոյն: Իսկ դիմամարտ սորա[16] պարզութիւն, ոչ այլ ինչ[17] գոլ, բայց միայն օդ առանց ամպոյ և մառախղի[18]: Եւ ցՕղ է գիջութիւն ի պարզոյ բերեալ: Եւ եղեամն է ցօղ թերասառոյց: Իսկ ամպ է թանձր[19] գոլորշատեսակ թաղկեալ[20] ծննդական ջրոյ: Իսկ անձրև լեալ լինի ի թօթափմանէ ամպոյ քաջ թանձրացելոյ ի խոնաւութեանց: Իսկ ձիւն լինի ի խոնաւ գոլոշեաց[21] վերացեալ և պատահեալ[22] ի մէջ երկուց ներհակաց[23] հողմոց, գործեալ[24] լինի փրփրատեսակ և սպիտակագոյն, և կառուցեալ ի ցրտութենէն գիջագոյն՝ առ ի յոչ հեղուլ, այլ անգայտացեալ, վասն որոյ այնպիսին յաճախ ի վայր բերեալ՝ ձիւն կոչի: Իսկ կարկուտ ըստ ձիւնաբերին ի թաղկմանէ անգայտութեան ի սերտութիւն փոխարկեալ և ըստ չափոյ թանձրութեան պատառեալ բեկանի ի բռնութենէ հիւսիսային հողմոյն և ի վայր բերմամբ գնտի՝ որ և կոչի կարկուտ: Այսոքիկ ի գէջ գոլոշոյն բնաւորեալ են արտաքս գոլ[25]: Իսկ չորն ի ցրումն վանելով յարտաքս հոսմանէն՝ հողմ եղև[26], քանզի սա ոչ այլ ինչ է, բայց

[1] D զերկիր
[2] F ասացուած
[3] Ագլխաւորագոյնիցն
[4] D գոլորշիք
[5] EF լիցի
[6] AC լիեալ
[7] B տեսակք
[8] B > ի
[9] C > ի
[10] B ամպարարութիւնք
[11] EF գոլոշի
[12] D ջրածածուկ
[13] D գէջ
[14] C ծանրացեալ
[15] EF գոլոշի
[16] D որպէս
[17] ACEF այլ ոչինչ] ոչ այլ ինչ
[18] C մաղխի
[19] E > թանձր
[20] CF թաղծեալ
[21] B գոլոշոց
[22] F դարձեալ
[23] BD ներհակ
[24] A գծեալ, B որ գործեալ] գործեալ
[25] D գալ
[26] D եղեն

բազում օդ ուժգին և յոլովակի հոսեալ, որ և համանգամայն շունչ լինի անուանեալ: Ե՛ն և այլ շունչ, որ ի տունկս և ի կենդանիս և ամենայն, որ շնչաւոր է և ծննդական թափանցանելով: Իսկ որ չորն է և ծխատեսակն՝ ի չորս դէմս երկատի: Եւ իւրաքանչիւրն ի չորիցն յերիս բաժանի: Առաջինն, որ յարևելից կողմանէն հնչեն՝ հասարակ Արոսք կոչին, և վոռէք՝ որ ի հիւսիսոյ, զեփիւռք՝ որ ի մտիցն արևու, նօտոսք՝ որ ի հարաւոյ: Իսկ Արոսացն՝ որ ասացաք գոլ արևելից, որ ի հիւսիսայինն մերձ հնչէ յամառային եղանակն յելէն արևու՝ կեկիաս[1] կոչի, իսկ միջինն՝ ապելի օդ, որ ի հասարակօրէն յարևելեան, և, որ ի ձմեռն յարևելեան մերձ ի հարաւ հնչէ[2] Արոս կոչի: Եւ դիմակ սոցա՝ որ յարևմտեան կողմանէն հնչէ[3] հասարակ զեփիւռ[4] կոչի, իսկ որ ի մտիցն արևու ելանէ մերձ ի հիւսիսակողմ՝ արգեստէս կոչի և այլք ապիգեա ասեն, և որ ի միջէն հնչէ՝ զեփիւռ կոչի, և որ ի հարաւակողմն[5] յարևմտեան[6] ձմեռան հնչէ՝ լիփս կոչի: Իսկ հիւսիսակողմանն[7] որ հասարակ վոռէք կոչի, բայց այն, որ մերձ կեկիասայ հնչէ[8] յատուկ վոռէաս կոչի, և ապարքտիաս, որ ի միջէն, այսինքն՝ ի սայլէն, իսկ հնչեցեալ ի հիւսիսային միջօրէին[9], և թրասկիաս լինի ասացեալ՝ որ ընթեր է արգեստէսի[10]: Իսկ ընդդիմամարտ սոցա, որ ի հարաւոյ կողմանէն հնչէ՝ հասարակ նօտոս կոչի, իսկ որ մերձ արևելեան[11] Արոսի հնչէ ի հարաւոյ կողմանէն[12] Արոնօտոս կոչի, իսկ որ յարևելեան[13] բոլորէն բերի համամարտ է ապարքտիա և նօտոս լինի անուանեալ, իսկ որ մերձ յարևմտեան ի հարաւոյ կողմանէն հնչէ[14] լիֆօֆոնի[15] կոչի:

Այլ ի հողմոցն ոմանք ուղղաշունչք են՝ յառաջ շնչելով[16] ուղղակի, և ոմանք՝ թիւրաշունչք: Եւ ոմանք ի ձմերայնի գօրեղք լինին՝ որպէս նօտոսք, և ոմանք յամարայնի՝ խառնուրդ ունելով յապարքտիականաց և ի[17] զեփիւռիցն: Եւ այլք[18] հարաւային և գարնանային հողմունք գոլով և ինքեանք վոռէք են:

Այլ ի բռնագոյն հողմոցն կատէգիս լինի ասացեալ, որ է մրրիկ, այն, որ ի վերուստ բախէ յանկարծակի: Եւ թևիլա[19] որ է դղրդիչ[20], այն, որ բախէ յանկարծակի: Էլատս և ստօռաբիլոս՝ հողմ է պտուտեալ ի ներքուստ ի վեր փչումն յերկրէ վերաբերեալ ի խորոց ոմանց հողմ կամ ի պատառմանէ երկրի ուժգ-

1 CD կէկիաս, F կիկիաս
2 ACDEF > հնչէ
3 E հնչէն
4 D զեփիւռք
5 B հարաւոյ կողմն
6 AD յարևմտէն
7 B հիւսիսոյ կողմանէն
8 D > հնչէ
9 AD միջօրէէն
10 E արգեստի
11 C արևեան
12 D > հնչէ՝ հասարակ նօտոս կոչի, իսկ որ մերձ արևելեան Արոսի հնչէ ի հարաւոյ կողմանէն
13 AD յաներևան, E յարերևան, B ի հարաւային
14 D > հնչէ
15 A լիֆօֆոնիկ
16 EF հնչելով
17 EF > ի
18 ABD այլ
19 CEF թևլիայ
20 D դղորդիչ

նակի վերաբերեալ լինի: Այլ պռեստէր, որ կիզիչ ասի՝ հողմ է ջերմ, չարամանեալ ընդ խոնաւ ամպոյ թանձրագունի[1] և խնդրէ իւր ելս և պատառէ զծալմունս ամպոց և առնէ ճայթիւն, զոր որոտ կոչեմք: Իսկ ի[2] բեկբեկել[3] ամպոյ, ջերմանայ մասն թանձրագոյն տարերն և փոխի ի հուր ներգործութեամբ, և ի պատառել ամպոյն հոսեալ լինի հուրն և վասն թանձրութեան և ծանրութեան[4] ի վայր բերի[5], զոր և կայծ[6] անուանեմք: Եւ վասն առաւել և նուազ ջերմութեան՝ է՛, որ ի դուրն[7] պատառման[8] շիջանի, է՛, որ ի մէջ օդոյդ գայ և շիջանի, և է՛, որ յերկիր հասանի[9] և պատառէ, զոր սկիպտոս անուանեն: Բայց յառաջ պատառումն է[10] և ապա՝ հեղումն հրոյ, բայց[11] զի աչքն ի հեռաստանէ տեսանէ, իսկ զձայնն մինչ ճանապարհորդեալ գայ ի լսելիս՝ ապա լսէ[12], վասն այն յառաջ զփայլումն տեսանեմք և ապա՛ լսեմք զձայն որոտման, բայց նա՛խ է պատառումն ամպոց, քան զհեղումն հրոյ: Այլև սելք[13] և ներիս[14], որ[15] շուրջ զարեգակամբ և զլուսնիւ և զաստեղօք, և այլ երևոյթք զանազան[16], որ թռիչ աստեղ[17] անուանեն և ագևոր աստեղ[18] անուանէն[19]: Սոքա ամենեքեան[20] ի չոր հողմոցն կազմին՝ և[21] է՛, որ ի խոնաւուտ ժամանակի[22] և է՛, որ ի պարզ:

Բե՛ր ասասցուք[23] զեւթներորդ գլուխն՝ թէ ի սկզբանէ էին լերինք և բլուրք, թէ՞ յետոյ եղեն:

Գիտելի է, զի ասէ Արիստոտէլ[24], թէ ամենայն տարր ունի զձև բոլորակ, որպէս երկինքն է գնդաձև, այսպէս և երկիր՝ ի ջրոյ, և ջուր՝ յօդոյ, օդ՝ ի հրոյ, և հուր յեթերէ է պարունակեալ: Ապա ուրեմն, երկիրս ոչ ունէր լերինս և բլուրս[25] յստեղծմանէն իւրոյ[26], զի լերինք և բլուրք ոչ յարմարին բոլորակ ձևոյն: Դարձեալ, զի բնութիւն երկրիս ի հարկէ խնդրէ զձև բոլորակ, զի իւրաքանչիւր մասն երկրի ծանր է և բնականապէս կամի իջանել մինչև ի միջին կէտն երկրի: Վասն այնորիկ ամենայն արտաքին մասունք երկրի հասարակապէս մերձենան ի միջին կետն երկրի և այսպէս առնեն զձև բոլորակ: Զի եթէ երկիրս լինէր եռանգիւնի կամ քառանգիւնի՝ մին[27] մասն լինէր հեռի ի միջին կիտէն[28], քան զմիւսն, իսկ բոլորակ ձևոյն ոչ յարմարի ունել լերինս և բլուրս: Իսկ Արիստոտէլ

[1] A թանձրագոյնի
[2] ABD > ի
[3] B բեկբեկեալ, F բեկանել
[4] CF > ծանրութեան
[5] A վայրաբերի] ի վայր բերի
[6] D կայծակ
[7] B դուռն, D դուրսն
[8] C պատառումն
[9] B հասանէ
[10] ACD > է
[11] D այս է] բայց
[12] C լսի
[13] D սել
[14] BD նիրիս, C նիրսս, EF նիրոս
[15] B հողմ են] որ
[16] D զանազանք
[17] BF աստղ
[18] BD աստղ
[19] F > և ագևոր աստեղ անուանէն
[20] A ամենէքին
[21] BDEF > և
[22] CEF ժամանակ
[23] C տեսցուք
[24] F Արիստոտէլ գրէ] ասէ Արիստոտէլ
[25] C ոչ բլուրս] բլուրս
[26] B իւրմէ
[27] B մի
[28] D կէտէն

երիս պատճառս ասէ լինելութեան[1] լերանց և բլրոց: Նախ, զահագին գետնաշարժն, այսպէս ասելով, թէ բռնաւոր հողմ վտարեալ ի վայրէ իւրմէ և անցեալ ի ներքոյ երկրի դողացուցանէ զերկիր, խնդրելով իւր ելս, մինչև բրեալ զերկիր պատառէ, և ի պատառելն՝ զոմանս վերացուցանէ զբլուրս և զոմանս ցածուցանէ: Այսպէս առնէ և ի ծովու, երբեմն հուր վերաբերելով, երբեմն աւազ, երբեմն[2] ծառ, որպէս պատմի յԵւռիպոս և ի Պարթմոս լեալ[3] և յայլ[4] բազում[5] տեղիս՝ ըստ առաւելութեան և պակասութեան հողմոց զանազան գործեն ներգործութիւնս[6]: Երկրորդ պատճառ լինելութեան լերանց և բլրոց[7] ասէ զյորդութիւն ջուրց, զի յելանելն իւրում գերծէ[8] զթանձրութիւն հողոց և ժողովեալ ի տեղիս[9] տեղիս առնէ լերինս և բլուրս, որպէս եղև առ ջրհեղեղաւն, զի ի ծածկել ջրոյն զամենայն երկիր[10] յայնժամ տաշեալ եհատ[11] ջուրն, զկակղագոյն մասն երկրի բաժանեալ ի պինդ[12] և ի տրամ մասնէ, իսկ կակղագոյն մասն յետ ցամաքելոյ ջրոյն ժողովեալ խիճն և հողն կարծրացան և եղեն[13] լերինք և բլուրք: Երրորդ պատճառ ասէ[14] զհողմ լերանց, զի հողմով և ջրով լինին խանդակք և խոռոչք՝ սակաւ-սակաւ մաշելով և մերձ խանդակին և վհին երևի երկիրն բարձր՝ իբրև լեառն համեմատելով ընդ վիհն: Իսկ վարդապետք եկեղեցւոյ չորրորդ պատճառ ասեն ի վերայ երիցս՝ և գեղեցիկ, զի մարդս ասի փոքր աշխարհ, զի որպէս փոքր աշխարհս յըստեղծմանէ իւրմէ ունի ի շինուածս իւր իբրև լերինք՝ զբարձրագոյն մասունս իւր և խորաձոր տեղիս անյայտ[15] վտառից[16]: Այսպէս և ի մեծ աշխարհի ծանիր, զի ստեղծան լերինք և բլուրք յի սկզբանէ վասն շինութեան և օգտութեան աշխարհի, մարդկան և անասնոց, զի թէ միատարր դիւր էր երկիր, ոչ մնային ի սմա կենդանիք ի ջերմութենէ տապոյ, այսպէս և թէ[17] միակերպ բարձրութիւն լերանց էր՝ ոչ ապրէր ի ցրտութենէ օդոյն կենդանի՝ վասն որոյ ստեղծան ըստ պիտոյից բնակչաց՝ բարձր և ցած, զի փոփոխելով զանձինս իւրեանց ի նոսա՝ ստասցին զկենդանութիւն: Ապա ուրեմն, յայտ է, զի ի սկզբանէ էին լերինք և բլուրք: Նաև[18] Գիրն Աստուածաշունչ[19] վկայէ՝ յաւուրս ջրհեղեղին բարձրանալ ջրոյն քան զբարձրագոյն լերինս հնգետասան կանգուն. յայտ է, թէ ի սկզբանէ էին լերինք, զորով ասի բարձրանալ ջուրն հնգետասան կանգուն[20]:

---

1 C լինել
2 E ներբեմն] երբեմն
3 C Փարթմուղիալ] Պարթմոս լեալ
4 D յայտ
5 CF ի բազում] բազում
6 C > և պակասութեան հողմոց զանազան գործեն ներգործութիւնս
7 ACDEF > և բլրոց
8 A զերծէ
9 D տեղ
10 B երեսս երկրի] երկիր
11 C եհաս
12 DE պինտ
13 A եղև
14 B առէ
15 C յայտ
16 A վտակից
17 CEF ի
18 ABCDF նա զի և] նաև
19 CEF աստուածային
20 F > յայտ է, թէ ի սկզբանէ էին լերինք,

Բե՛ր տեսցուք զուԹերորդ գլուխն, Թէ բոյսք և տունկք յինչ սակս[1] ստեղծան:

Գիտելի է, զի յաղագս չորից պատճառաց: Նախ, վասն զարդարման երկրի, զի երկիր էր անպատրաստ զարդուք՝ ասէ Մովսէս. նախ, զի ջրով էր ծածկեալ երեսս երկրի և երկրորդ, զի ոչ ունէր[2] պատրաստ զզարդարումն առ ի հայեցուածս աչաց: Իսկ երկրորդ, ստեղծան բոյսք վասն կերակրելոյ զկենդանիս: Երրորդ[3], վասն[4] բժշկուԹեան սակս մարդկան[5] և անասնոց, որպէս ասէ Պիսիդոն, զի իւրաքանչիւր ոք[6] ի սմանէ գտանէ զդեղ վիրաց և ցաւոց, որպէս ուղտ, զի ուտէ[7] զտերև կաղնւոյ և մաղձ փսխէ, և կրիա՝ յորժամ զիժ ուտէ, ուտէ զվիրակ[8], որ է ԹորԹն[9] և բժշկի, և այծ ի նետէ հարեալ, գտանէ ողկուզ[10] և կերեալ բուժի[11], և բազէ, զեղէգն եղեալ ի վերայ աչացն՝ բուժի, ուտէ առիւծն զկապիկ և բուժի, և կապիկ՝ զգորտն և բժշկի, և եղջերու, հարեալ յիժէ, ուտէ զխեցէմորԹ և բժշկի: Չորրորդ պատճառ ասէ Գրիգոր Նեւսեայ[12] ԹէպէՀ և ոմանք ասեն, Թէ բոյսք վասն անասնոց եղեն, իսկ անասունք վասն մարդոյ, բայց ես կարծեմ, զի սովաւ բացայայտի երեք ազգ տեսակ հոգւոց, քանզի բուսովք վարդապետէ զտնկական հոգւոցն[13] լինելուԹիւն, և անասնովքն՝ զգայական, և մարդովն՝ զբանական:

Բե՛ր տեսցուք զիններորդ գլուխն, այսինքն՝ զանազանուԹիւն բուսոց[14] և անասնոց:

Բոյսքն, որպէս ասեն մանԹեղիքն, բաժանի յերիս: Նախ, ի յինքնեակն[15] որպէս խոտն: Երկրորդ, զոր սերմամբ բուսանին՝ որպէս ցորեան և գարի և այլ[16] նմանք սոցին, զոր ունին զսերմանիս ի գագաԹն և ոչ յարմատն՝ որպէս զխոտ: Երրորդ, որպէս[17] ծառք բարձրաբերձք[18]: Եւ սոքա բաժանին յերկոտասան. ե՛ն, որ հովանաւորք[19] են՝ որպէս ուռիք, ե՛ն, որ պատսպարանք են՝ որպէս դժնիկք, ե՛ն, որ յանուշահոտուԹիւն են՝ որպէս վարդ և մուրտ, ե՛ն, որ մահացուցիչք[20] են՝ որպէս յիկոնիոն արմատն, ե՛ն, որ կենացուցիչ[21] են՝ որպէս ծառն կենաց ի մէջ դրախտին. գուցե ասէ ձգեսցէ զձեռն իւր առցէ ի պտղոյն, կերիցէ[22] և կեցցէ յաւիտեան, ե՛ն, որ ի գիտուԹիւն բարւոյ և չարի, զոր և Գրիգոր Նիւսեայ ասէ, Թէ այժմ երևին ի պտուղս ծառոց զանազան

զորով ասի բարձրանալ ջուրն հնգետասան կանգուն

[1] D պէտ սակս] սակս
[2] E զչունէր] զի ոչ ունէր
[3] D իսկ երրորդ] երրորդ
[4] CEF ի
[5] ACDEFմարդոյ
[6] CEF > ոք
[7] C > զի ուտէ
[8] C զվրիժաթորթէն
[9] AD > որ է թորթն
[10] CD ողկուզուկ
[11] E > և այծ ի նետէ հարեալ, գտանէ ողկուզ և կերեալ բուժի
[12] F Նիւսեայ
[13] CDEF հոգւոյն
[14] ABC բուսից
[15] CDEF յինքն էակն
[16] CEF այլք
[17] D > որպէս
[18] E բարձրացեալք
[19] D միայն հովանաւորք] հովանաւորք
[20] D մահացուցիչ
[21] BDEF կենսացուցիչք
[22] ACEF > կերիցէ

օգտութիւնս՝ ոչ ինչ է[1] օտար, թէ լինէր և այնժամ այսպիսի ծառ ի դրախտին, որ և այսպիսի ազդումն առնէր ի խելապատակսն մարդոյն[2], է՛ն, որ ի նարօտ գունոց[3] են՝ որպէս փայտն բաղամ[4], է՛ն, որ ի բժշկութիւնս ցաւոց՝ որպէս[5] նուռն և այլ սոյնպիսիք, է՛ն, որ ի շինուածս[6] են՝ որպէս[7] մայրք[8], սօսիք և նոճիք, է՛ն, որ ի քանդակս[9] որպէս տօսախք, սանդալք և օպնիազք, է՛ն, որ ի կերակուրս են[10] որպէս խնծորիք և տանծիք[11], խաղողք, և[12] թուզք[13] և ամբրաւ[14], է՛ն, որ կուսութիւն և ողջախոհութիւն տան՝ որպէս[15] ծառն անգիսքաթիս, որ ասի ծառ ողջախոհ, քանզի զտերև[16] նորա և կամ զկեղև նորա և եթէ զպտուղ նորա, ցանեալ ի տուն, պահէ զմարդն ողջախոհ[17]: Եւ լինի թէ են այլ[18] ևս ծառք[19] բազումք՝ զարմանագործք[20] ստեղծեալք յԱրարչէն՝ առ ի պէտս[21] պիտոյից զանազան և ազգի ազգի ազդողական[22] ներգործութեամբ, իսկ մեզ քան զայս, որ ասացաք, առաւելն ամպով անգիտութեան ծածկեցաւ: Իսկ յայսպիսի պտղոցս[23] է՛ն, որ կեղևն և մէջն ուտի[24] որպէս թուզն, և է՛ն, որ կեղևն ուտի և ոչ մէջն՝ որպէս ամբրաւն, է՛ն, որ մէջն ուտի և ոչ կեղևն՝ որպէս ընկոյզն և[25] այլ սոյնպիսիք, է՛ն, որ ոչ մէջն ուտի և ոչ կեղևն՝ որպէս գխթորն: Իսկ այս կարճ ի կարճոյ յաղագս բուսականաց այսքան:

Բե՛ր և[26] յաղագս կենդանեաց ասասցուք սակաւ ինչ: Զկենդանեաց տեսակ[27] մանթեղիքն յերիս բաժանէն. է՛ն, որ ի[28] նեխածէ ծնանին՝ որպէս մժեխք[29] և որդունք և ճանճք, և է՛ն, որ ի կթէ յառաջ գան՝ որպէս հաւք, և է՛ն, որ յորովայնէ յառաջ գան՝ որպէս ոչխարք, արջառք և այլ սոյնպիսիք[30]: Իսկ ի սոցանէ է՛ն ոմանք, որ ընդակերք են միայն՝ որպէս տատրակք[31] և աղաւնիք, ճիք և ուղտք և այլ սոյնպիսիք[32], իսկ այլք գիշակերք միայն են՝ որպէս արծիւ և առիւծ, գայլք և այլ[33] սոյնպիսիք, որք մսակերք միայն են[34], և է՛ն բազումք, որ խառնակերք են, զի ուտեն ունդս և ուտեն միս՝ որպէս ագռաւք, արջք

[1] CF > է
[2] F մարդկան
[3] E գունից
[4] A բազամ
[5] B են որպէս] որպէս
[6] D շինուածք
[7] D պիտոյից որպէս] որպէս
[8] B մայրիք
[9] B քանդուածս են, Dքանդուածս կարիս] քանդակս
[10] ACEF > են
[11] D > և տանծիք
[12] ABD > և
[13] ABD թուզ
[14] D ամբրաւիք
[15] B մարդոյն որպէս] որպէս
[16] B թէ զտերև] զտերև
[17] C > քանզի զտերև նորա և կամ զկեղև նորա և եթէ զպտուղ նորա, ցանեալ ի տուն, պահէ զմարդն ողջախոհ
[18] D և այլ] այլ
[19] EF ծառ
[20] CF զարմանագործ
[21] D պէս
[22] E > ազդողական
[23] A պտղոյս
[24] D ուտին
[25] D նուշն և
[26] C > ի
[27] B տեսակք
[28] AB > ի
[29] D մժեխ
[30] C այնպիսիք
[31] BD տատրակ
[32] C այնպիսիք
[33] C այլք
[34] E > որք մսակերք միայն են

և այլ սոյնպիսիք: Իսկ ի սոցանէ ոմա՛նք ի[1] պէտս մշակութեան՝ որպէս եզինք ի հերկս, ոմա՛նք ի բեռնակրութիւն՝ որպէս ձիք, էշք և ուղտք, ոմա՛նք ի[2] զբօսանք[3] որպէս բազէք, վարուժանք և շահենք, ոմա՛նք ի պատերազմունք՝ որպէս փիղք, ոմա՛նք յերկիւղ մեղուցելոց՝ որպէս գազանք, առիւծք և վագերք և այլքն: Բազում և այլ ևս[4] են կենդանիք վասն պիտոյից մարդկան ստեղծեալք յԱրարչէն, բայց մեք զփոքր ի շատէն ասացաք[5]:

Դարձեալ, բաժանէ Օլիմբիադորոս[6] զկենդանիս ի ցամաքային և ի ջրային: Իսկ զցամաքայինն՝ յարիւնաւոր[7] և յանարիւն. արիւնաւոր՝ որպէս մարդ, ձի, ոչխար և այլ սոյնպիսիք, իսկ անարիւն՝ որպէս մարախ, մրջիւն և մեղու: Այսպէս զջրայինն բաժանէ[8] յարիւնաւոր և յանարիւն. յարիւնաւոր՝ ի ղափրաքս[9], ի թիւնոս, և ի[10] յորփոս, իսկ յանարիւն՝ ի միպրիկ, ի թիսիր և ի կարապոս[11]: Այլև դարձեալ բաժանէ Օմելախսոն[12] զցամաքային կենդանիս ի հագագասփիւռ և[13] յոչ հագագասփիւռ. ի[14] հագագասփիւռ՝ որպէս մարդ, եզն, ուղտ և յոչ հագագասփիւռ՝ որպէս ճանճ, մժեխ[15], մրջիւն, այսպէս զջրայինն՝ հագագասփիւռ՝ որպէս դլբին[16], իսկ[17] ոչ հագագասփիւռ՝ որպէս այլ ամենայն դասք ձկանց:

Իսկ Պղատոն երբեմն բաժանէ զէակքս[18] ի չորս. այսինքն[19] ե՛ն, որ բնութեամբ եզերեալք են և գիտութեամբ եզերեալք՝ որպէս տասն սեռականագոյն սեռք, և ե՛ն, որ[20] բնութեամբ անեզր և գիտութեամբ անեզր՝ որպէս[21] անհատքն, քանզի բնութեամբ ոչ են եզերեալք, զի[22] դեռևս ծնանին, իսկ ուր և[23] բնութեամբ ոչ է եզերեալ՝ և ոչ գիտութեամբ է եզերեալ, և ե՛ն, որ[24] բնութեամբ եզերեալք են, և գիտութեամբ անեզր՝ որպէս տեսակք ամենայն, որ ի ծով և ի ցամաք. բնութեամբ եզերեալք են, զի ոչ[25] ստեղծանի նոր տեսակ, բայց գիտութեամբ անեզր են, զի ի խորս ծովու են և յանկոխ[26] լերինս և[27] անտես ի մարդկանէ՝ անգիտելիք են: Թէպէտ ոմանք տգետք ընդ թուով արկանեն՝ չորեքհարիւր՝ ի ցամաքի և վեցհարիւր՝ ի ծովու[28], բայց անգիտելի է[29] թիւ տեսակաց կենդանեաց ի[30] մարդկանէ վասն ասա-

[1] F են ի
[2] CEF > ի
[3] D զբօսանս
[4] D այլս] այլ ևս
[5] F ասացուք
[6] C օլոմբիադոց
[7] B բաժանէ յարիւնաւոր] յարիւնաւոր
[8] F բաժանի
[9] D ղափրասքն
[10] CDEF > ի
[11] EF կարպոս
[12] B Նոմէլախսոն
[13] D ի
[14] D > ի
[15] D > մժեխ
[16] B զդլփիւն
[17] ABCEF > իսկ
[18] D էակս
[19] A > այսինքն
[20] CF > որ
[21] D > անեզր որպէս
[22] ACEF > զի
[23] B > և
[24] E > որ
[25] D այլ ոչ] ոչ
[26] D կամ յանկոխ] յանկոխ
[27] BCDEF > և
[28] B > չորեքհարիւր՝ ի ցամաքի և վեցհարիւր՝ ի ծովու
[29] B > անգիտելի է
[30] B անգիտելի է ի] ի

ցեալ պատճառիդ: Իսկ զչորրորդն ասէ գիտութեամբ եզերեալ և բնութեամբ անեզր, զոր սուտ առնէ Արիստոտէլ, ասելով՝ զիա՞րդ հասանի գիտութիւն, ուր ոչ հասանի բնութիւն:

Դարձեալ, բաժանի Պղատոն զգալի էակքս[1] ի հինգ. ի գոյն[2] զոր[3] աչօք ըմբռնի, և ձայն[4] զոր ականջօք ընդունի[5], և համ՝ զոր բերանովն ճաշակէ[6], և հոտ՝ զոր ռնգամբ[7] ընդունի[8], և մարմին[9] զոր ձեռօք շօշափէ[10]:

Իսկ Պորփիւր[11] ևս բաժանէ ի հինգ. ի սեռ[12] որպէս կենդանին, ի[13] տեսակ՝ որպէս մարդ, ձի, տարբերութիւն[14] որպէս բանական, անբան, յատուկ՝ որպէս ծիծաղական, խրխնջական, պատահումն[15] որպէս սեաւ կամ[16] սպիտակ:

Իսկ Արիստոտէլ զամենայն էակս[17] ի տասն սեռականագոյն սեռս բաժանէ. ի գոյացութիւն[18], ի քանակ[19], յորակ[20], յառինչ[21], յուր[22], յերբ[23], կալ[24], ունել, առնել, կրել: Իսկ Արիստոտէլ ի ձեռն տասն յարացուցի բացայայտէ զթիւ տասն ստորոգութեանն: Բե՛ր մեք ի վերայ[25] միոյ յարացուցի հաւաստեցուք[26] զվարդապետութիւն նորա՝ ի վերայ Պղատոնի: Քանզի է՛ Պղատոն գոյացութիւն՝ որպէս մարդ, և քանակ՝ որպէս երկկանգուն[27] կամ եռականգուն[28], և որակ՝ որպէս սպիտակ կամ երաժշտական, և առինչ՝ որպէս հայր կամ որդի, և յուր՝ որպէս ի Հռոմ կամ յԱթէնս, իսկ երբ՝ որպէս ի ժամանակս Դիոնէսիոսի[29] Կրետացւոյ[30] բռնաւորի, և կալ[31] որպէս նստեալ[32] կամ յոտն կացեալ, և ունի[33] որպէս զգեցեալ կամ զինեալ, իսկ առնէ՝ որպէս կատարելով[34], և կրէ՝ որպէս[35] թէ[36] կտրի ինքն և[37] կամ հատանի: Իսկ թէ վա՞սն էր տասն են, բե՛ր զպատճառն առաղրեսցուք[38] ի բաժանմանէ: Քանզի էակն կա՛մ նենթակայում է, կա՛մ ոչ նենթակայում: Եթէ ոչ նենթակայում՝ առնէ զգոյացութիւն, իսկ թէ նենթակայում[39] կա՛մ ըստ ինքեան է, կա՛մ ոչ ըստ ինքեան:

---

1 DEF էակս
2 D զգոյն] ի գոյն
3 C զոյն զոր] զոր
4 D ի ձայն
5 D լսի
6 D ճաշակեմք
7 D ռնգամբք
8 D ըմբռնի
9 D ի մարմին
10 D շօշափի
11 F Պորփիւրոս
12 D ձայնս ի սեռ] ի սեռ
13 A իսկ
14 D ի տարբերութիւն
15 D և ի պատահումն] պատահումն
16 F > կամ
17 ABD էակքս
18 C զգոյացութիւն] ի գոյացութիւն
19 C զքանակ] ի քանակ
20 C զորակ
21 C զառինչ
22 C զուր
23 C զերբ
24 C զալ
25 AB > վերայ
26 Dh աստատեսցուք
27 B երկանգիւն
28 B եռանգիւն, CEF եռկանգուն
29 AB Դիոնիսի
30 CEF Կրետացւոց
31 ACDF կայ
32 ABC նստել
33 B ունել, D > և ունի
34 A կրելով, DF կտրելով
35 CE > որպէս
36 F > թէ
37 AD > և
38 BD արտադրեսցուք
39 B > եթէ ոչ նենթակայում՝ առնէ զգոյացութիւն, իսկ թէ նենթակայում

Եւ թէ ըստ ինքեան՝ կա՛մ բաժանելի է, կա՛մ անբաժանելի[1]: Իսկ թէ բաժանելի է[2], առնէ զքանակն, իսկ թէ անբաժանելի՝ առնէ զորակն, զի թէպէտ և կարծի բաժանելի գոլ որակն, այլ սակայն վասն[3] նիւթոյն է բաժանելի: Իսկ թէ ոչ ըստ ինքեան՝ կա՛մ կալումն միայն է և առնէ զառինչս, և կա՛մ[4] ըստ կալման այլոցն իմանի: Եւ լինի վեց ստորոգութիւն այսպէս, քանզի չորիցելոց պարզ ստորոգութեանց՝ գոյացութեան, քանակի, առընչի, որակի, ի շարամանութենէ սոցա[5] այլ ստորոգութիւնքն ծնանին. յէութենէ և ի քանակէ՝ ուրն և երբն, յէութենէ և յորակութենէ[6] առնելն և կրելն, յէութենէ և յառընչէ՝ ունելն և կալն: Վասն որոյ տարակուսեն[7] ոմանք, թէ զիա՞րդ ասէք[8], թէ պարզ են տասն ստորոգութիւնքն, որովհետև չորքն միայն են պարզք[9], իսկ վեցն՝ շարադրեալք: Եւ ասեմք, թէ[10] շարադրեալս զնոսա կոչեմք, զի երևմունս ոմանս շարադրութեան ներածեն[11] մեզ, այլ ինքեանք պարզք են, քանզի ոչ եթէ ստորոգութիւն[12] է[13], որ ի տեղւոջն, և ոչ ստորոգութիւն է այն[14], որ ի ժամանակումն, այլ գոլն ի տեղւոջ՝ ստորոգութիւն է և գոլն ի ժամանակում[15]: Վասն այսորիկ անորիշ անուամբք անուանեաց զոմանս ի նոցանէ, քանզի մի ի քարշելն յինքեանս դէմս ինչ շարադրութեան ի ներքս ածիցէ՝ որպէս առնելն և կրելն և կալն և ունելն[16] անորիշք են: Եւ այս յաղագս էակացն տրամատութեան այսքան բաւական լիցի:

Բե՛ր տեսցուք և զտասներորդ գլուխն, թէ ծովք ի սկզբանէ՞ էին աղտաղտուկ և դառն, որպէս այժմ[17]:

Գիտելի է, զի ասէ Արիստոտէլ, թէ ջուրն անորակ մարմին է և ոչ իսկ բնաւ ունի որակ, բայց զինչ ազգ որակ որ երևի ի ջուր՝ յարտաքուստ է և ոչ ի բնութենէ: Իսկ աղութեան և դառնութեան պատճառ ասեն ոմանք, թէ ի ջերմութենէ արեգականն հոսի քիրտն յերկրէ աղտաղտուկ, որ կոչի շոր, և զայն լուանայ անձրև և[18] տանի հեղու ի ծով և յայնմանէ ծովն[19] ի[20] դառն և յաղի փոխարկի: Իսկ այլք ասեն, թէ ի ջուրս կան բազմազան կենդանիք, ի նոցա յաղտոյ և ի գարշութեանցն[21] դառնանայ ծով: Իսկ Արիստոտէլ ասէ, թէ ի ծովու վերանայ ջերմութեամբ արեգականն անօսր գոլոշիքն և մնայ թանձրն: Եւ ջերմութիւնն խառնեալ ի թանձրն՝ առնէ զնա դառն և աղտաղտուկ: Եւ տայ օրինակ

[1] D > է կամ անբաժանելի
[2] B > է
[3] D > վասն
[4] B > կամ
[5] B նոցա
[6] B որակէ
[7] F տարակոյս են
[8] F ասէր
[9] D պարզ
[10] D > թէ
[11] CEF ներգործեն
[12] CEF ստորոգութենէ
[13] E > է
[14] E > այն
[15] B ժամանակն
[16] D > և ունելն
[17] Dայժմ թէ ոչ] այժմ
[18] ABCF > և
[19] ABCD > ծովն
[20] F > ի
[21] D դառնութեանց

զկերակուրն, որ ի ստամոքսն, զի անօսրն վերանայ ի գլուխն, և միջակն՝ ի լեարդն, մնացեալ թանձրն է՛ աղի և դառն, վասն այն բնութիւնն արտաքս վարէ զնա: Եւ[1] ևս տայ զաճիւն կրակին օրինակ զգործելին, զի է դառն և աղի: Այլև ասէ, թէ զջուր ընդ երկար[2] եռացուցեալ, անօսր գոլորշիքն վերանայ, և մնացեալն լինի դառն և աղի:

Իսկ վարդապետք եկեղեցւոյ ասեն, թէ Արարիչն զաշխարհս կազմեաց ի չորից տարերց և յիւրաքանչիւր տարրէ համբար եդ ի սիրտ երկրի՝ որպէս հողոյ և ջրոյ, այսպէս՝ օդոյ[3] և հրոյ: Եւ այսմ վկայէ Արիստոտէլ ի գիրս Աշխարհաց, թէ է՛ն ի սիրտ երկրի համբար հողմոյ, զոր վտարեալ[4] ի վայրէ իւրմէ խնդրէ իւր ելս և շարժէ զերկիր: Իսկ թէ բռնաւոր է հողմն՝ պատառէ զերկիր, իսկ այլք աղբիւրօրէն բղխեն: Եւ յելանելն[5] արտաքս՝ է՛ն, որ դիւթացեալս առնեն զհպեալսն, և այլք անկերակրութիւն տան, և ոմանք հրամանատուութիւն[6] որպէս այնք, որ ի Դելփքն[7] են և ի Լիբիա[8], և այլք[9] ամենևին[10] սպանեն[11] որպէս[12] այն, որ ի Փռիգիայ: Իսկ զհրոյ երակն երևեցուցանէ[13] ծծումբն, որ է քուքուրդն[14], զի է հուր զօրութեամբ. է՛ն, որ յերեսս երկրի են, և է՛ն, որ ի սիրտ երկրի թաքուցեալ են, որ[15] և հողմով հուրն աղբիւրօրէն արտաքս գայ և հոսի որպէս ջուր յերկրէ, որպէս Լիպարքն և յետն է լեառն ի Սիկիլիայ[16] կղզւոջն, զոր գետօրէն արտաքս[17] բղխեն զհուր: Եւ յէօլոսն կղզի սոյնպէս[18] գետօրէն արտաքս բղխեն[19] զհուր[20] և խանծողս[21] հանդերձ հրովն վերաբերեն[22]: Եւ յեզերս Կասբիական ծովուն է ինչ տեղի, որ կոչի բաքու, աղբիւր բոցեղէն բղխեն՝ հինգ ի միում տեղւոջ և եւթն ի միում տեղւոջ: Եւ կան ոմանք անտես ընդ երկրաւ թաքուցեալ, զոր և աղբիւրք[23] ջրոյ[24] յերակս[25] երկրի ընթանալով՝ է՛, զի ընդ մէջ տարեր հրոյն անցանի, եռացուցանէ և այսպէս արտաքս բերեալ լինի, և է՛, որ ի միջակ ջերմացուցանէ, և է՛, որ սակաւ ջերմացուցանէ, ըստ որքանութեան հպաւորութեան հրոյն եղկանայ ջուրն, զոր և ջերմուկ կոչեմք: Այսպէս և է[26] ի սիրտ երկրի համբար աղտոյ՝ որպէս տեսանեմք ի վերայ երկրի: Ասեն վարդապետք եկեղեցւոյ, թէ յերկիրն, որ

[1] ABD > Եւս
[2] B երկիր
[3] D և օդոյ
[4] F վարեալ
[5] E յելանեն
[6] A հրամատուութիւն, CDE հրամանատուութիւն
[7] A Դելփիքն, BCE Դելբքն
[8] ABL Իբալիա
[9] F այլ
[10] B որ ամենևին] ամենևին
[11] BD սպանանեն
[12] E քան
[13] D ցուցանէ
[14] A քորքուրդն, B քոքուրդն
[15] D որպէս
[16] A Սիլիլիա
[17] B > արտաքս
[18] F որպէս
[19] CF > բղխեն
[20] D > զհուր
[21] BCF խանձողս
[22] B վերաբերին
[23] CEF աղբիւր
[24] B ջրոց
[25] E յերեսս
[26] CEF այպէս է և] այսպէս և է

զետեղեալ են ջուրք ծովուն, կայ համբար աղտի, և այն խառնեալ ի ջուրս ծովուն՝ փոխէ յաղտաղտուկ, և կամ աղբերք[1] ջրոյ բազում[2] են, որ ընթանան ընդ երկիր և հոսին ի ծով և առնեն աղի: Այսպէս և դառինք աղբերք հոսին ի ծով և առնեն դառն՝ որպէս աղբիւր Մեռային, զոր քաղցրացոյց Մովսէս յանապատին[3]: Այս յաղագս ծովու և աղբեր, թէ որպէս եղեն աղի և դառն և ջերմ:

Բե՛ր տեսցուք զմետասան[4] գլուխն, թէ զերկիրս յե՞ր[5] վերայ հաստատեաց Աստուած:

Իսկ ոմանք վարդապետք և փիլիսոփայք[6] ասացին ի վերայ ջուրց հաստատեալ: Ի[7] փիլիսոփայից Արիստոտէլ, որ ասաց զերկիր ի ջրոյ պարունակեալ, և ջուր՝ յօդոյ, այսպէս օդ ի հրոյ և հուր՝ յեթերէ, իսկ[8] եթերն սրընթաց շրջագայութեամբն իւր պահէ հաստատուն[9] ի մէջ իւր զերկիր: Իսկ ի վարդապետաց[10] ոմանք, որ ասացին հաստատել[11] երկրի ի վերայ ջուրց՝ ըստ վկայութեան սաղմոսին, թէ «Հաստատեաց զերկիր[12] ի վերայ ջուրց»[13] [Սաղ. ՃԼԵ. 6]: Իսկ զայս՝ թէ որպէ՞ս է հաստատեալ երկիր ի վերայ ջուրց, երեք ազգ մեկնեն վարդապետք: Նախ, ասեն, թէ թարց ջուրց ոչ ունի երկիր մածումն և հաստատութիւն, վասն այնորիկ ասի ի վերայ ջուրց հաստատեալ, զի երկիր մածի, պնդի և հաստատի ջրոյն կապակցութեամբ: Երկրորդ, ասի ի վերայ ջուրց, զի որպէս[14] յորժամ շուրջ զաշտարակիւն լինի ջուր, ասի աշտարակն ի վերայ ջուրց հաստատեալ, այսպէս Անդլնդական[15] ծովն շրջապատեալ ունի զերկիր՝ վասն այն ասի երկիր[16] ի վերայ ջուրց: Երրորդ, ասեն՝ ի ներքոյ երկրի գոլ ջուր, և զերկիր ի վերայ երեսաց ջրոյն հաստատեալ: Եւ ասեն, թէ[17] ստեղծ Աստուած գլխաթան ձուկն մեծ, փական և արգելք ջուրց անդնդոց, զի եղեալ է զգլուխն մէրձ[18] տրտան իւրոյ, և այսչափ ջուրք ծովու ընդ միջոց պարունակի տրտան և գլխոյն հոսին արտաքս: Եւ բերեն վկայութիւն Յոբայ, թէ զամենայն ջուրս ծովու յակնակապիճս իւր ընդունի, իսկ[19] նա առակ օրինակի դնէ ընդդէմ բանսարկուին, բայց ոմանք վարդապետք ըստ ճառին հասկանան:

Բայց զայս գիտել պարտ է, զի մեկնութիւնք ոչ կարեն ընդ ներքոյ սահմանի արկանել զգիրս Աստուածաշունչս: Զի թէպէտ մեկնողն մեծ վարդապետ գոլով[20] ոչ կարէ ասիլ[21], թէ մարգարէն յայս

[1] A աղբեր
[2] CEF բազումք
[3] ACDEF > յանապատին
[4] CDEF զերկոտասան
[5] C յո՞յր
[6] ACDF փիլիսոփոսք
[7] D իսկ ի] ի
[8] D > իսկ
[9] A ի հաստատուն
[10] F վարդապետք
[11] AB հաստատիլ
[12] C > զերկիր
[13] F > ըստ վկայութեան սաղմոսին, թէ հաստատեաց զերկիր ի վերայ ջուրց
[14] E > որպէս
[15] CEF Անդընդական
[16] ACDEF > երկիր
[17] E > թէ
[18] B ի վերայ] մերձ
[19] CEF ի
[20] B գոլ
[21] B ասել

միտս մեկնութեան ասաց զայս բան, և թէ այս հարկաւ[1] լինի, այնժամ Գիրք Աստուածաշունչ[2] աղարտեալ լինէր ի հեթանոսաց: Բայց Գիրք Աստուածաշունչ ընդարձակ ունի զիմաստ և ի բազումս տարածանի, և մեկնութիւն վարդապետի չիջանի, իսկ Գիրք և բանք[3] Աստուածաշունչ[4] անչիջանելի մնան: Եւ քանզի իմացուածք վարդապետաց չիջանելիք են և սխալականք՝ յայտ է[5] յայսցանէ: Զի Արիստոտէլ ի Վերլուծականումն ի հինգ բաժանէ զամենայն հաւաքաբանութիւն՝ յապացուցական, ի տրամաբանական[6], ի ճարտասանական[7], ի մասնական[8] և ի քերթողական. զի թէ ամենևին ճշմարիտ է՝ լինի ապացուցական հաւաքաբանութիւն[9], իսկ թէ ամենևին ստէ՝ լինի քերթողական և առասպելական, իսկ թէ[10] հաւասար լինի սուտն և ճշմարիտն՝ լինի ճարտասանական, իսկ թէ առաւելու ճշմարիտն քան զսուտն՝ լինի տրամաբանական[11], իսկ թէ առաւելու[12] սուտն քան զճշմարիտն՝ լինի մասնական: Ըստ այսմ սարասի ծանիր և զեկեղեցւոյ[13] վարդապետութիւնս բաժանել ի հինգ: Քանզի է՛ն, որ ամենևին[14] ճշմարիտ են և առանց երկբայութեան, որպէս Գիրք Աստուածաշունչ[15] առաքելականք և մարգարէականք, քանզի ի Հոգւոյն Սրբոյ խօսեցեալ եղեն՝ որպէս ասէ Պետրոս, թէ՝ «Ոչ ըստ կամաց մարդկան տուան մարգարէութիւնք, այլ ի Հոգւոյն Սրբոյ կրեալք խօսեցան մարդիկ յԱստուծոյ» [Բ. Պետր. Ա. 21]: Իսկ երկրորդն, որ[16] ամենևիմբ սուտ, որպէս առասպելական գիրք, ըստ պատմութեան Արամազդայ[17] և Հերմեայ, այսպէս ի նորս՝ Պղնձի[18] քաղաք և Շերան շահ և այլ սոյնպիսիք, զի ամենևին[19] սուտ են: Իսկ երրորդն, որ ճշմարիտն շատ է, քան զսուտն, որպէս բանք[20] սրբոց հայրապետացն՝ Աթանասի, Բարսղի և աստուածաբանին և այլ սոյնպիսեացն. ճշմարիտն վասն այն շատ է[21], զի հոգելիցք էին և հոգովն Աստուծոյ խօսէին, իսկ թէ երբեմն մարդկային խառնէին ի հոգևորն՝ և այն սուտ, որպէս ասէ մարգարէն, թէ[22] «Ես ասացի ի զարմանալ իմում, թէ ամենայն մարդ սուտ է» [Սաղ. ՃԺԵ. 11]: Իսկ չորրորդն, որ սուտն շատ է, քան զճշմարիտն՝ որպէս պատմութիւն[23] թագաւորաց և գովեստ նոցա. ճշմարիտն սակաւ, որ իսկապէս կեանք և գործք, իսկ սուտն շատ, զի ի վեր քան զճշմա-

[1] B հարկիւ
[2] AB Աստուածաշունչք
[3] F > և բանք
[4] ABD Աստուածաշունչք
[5] CEF > է
[6] C զտրամաբանական] ի տրամաբանական
[7] C զճարտասանական] ի ճարտասանական
[8] C զմասնական] ի մասնական
[9] CE հաւաքաբանութեան
[10] E > թէ
[11] CF > իսկ թէ առաւելու ճշմարիտն քան զսուտն՝ լինի տրամաբանական
[12] C > առաւելու
[13] B զեկեղեցւոց

[14] A ամենևիմք, BD ամենևիմբ
[15] B Աստուածաշունչք
[16] CDEF > որ
[17] C Արմաստայ
[18] BD Պղնծի, C Պղնձէ
[19] BD ամենևիմբ
[20] ACDEF > բանք
[21] ABC > է
[22] AB > թէ
[23] D պատմութիւնք

ըիտ եղեալսն բարդեալ է զանազան գովեստ և ներբողեան, որ ընաւ չէ եղեալ: Իսկ հինգերորդն[1], որ ճշմարիտն և սուտն հաւասար է, այժմու ներհմտացեալ վարդապետաց բանս[2], զի ի բանս բեմասացութեան, եթէ յառաքելոց և ի մարգարէից և ի հոգէնուագ վարդապետաց յիշեն՝ ճշմարիտ է, իսկ թէ յանհմտութեանց[3] և ի մարդկային ճարտարութեանց[4] հանդերձ ի աւարտել զվճիռ բանին՝ է՛ սուտ: Ապա ուրեմն, հարկ է մեզ ընտրողութիւն[5] առնել և որ ըստ շաւղաց Աստուածաշունչ գրոց ընթանայ՝ ընդունել, իսկ որ արտաքոյ է ի[6] շաւղաց Աստուածաշունչ գրոց՝ ոչ ընդունել, թէպէտ ասողն[7] մեծ ոք իցէ, զի ասէ Արիստոտէլ, թէ սիրելի է այր և սիրելի է ճշմարտութիւն՝ երկուց ելոց սիրելեաց՝ մանաւանդ սիրելի է ճշմարտութիւն: Իսկ յաղագս այսմ բանի ի ձեռն սոյն մարդարէի, յայլում վայրի յայտնապէս վարդապետէ, թէ՝ «Հաստատեաց զերկիր ի վերայ հաստատութեան իւրոյ». ոմանք այսպէս մեկնեն, թէ երկինքն է բոլորակ շրջապատեալ զերկիր[8], երկու կիսաբոլորիս մէջն է՝ խոնարհ և ցած, մինչ զի յամենայն կողմանց ծանրութիւնք[9] առ մէջն իջանեն, և չկայ հնար ծանրութեանց ի միջի կիտէն արտաքս շեղիլ[10], զի յոր կողմ և շեղի[11] զառիվեր է, և արտաքոյ է ընութեան ծանրին զառիվեր[12] ընթանալ: Ապա ուրեմն[13], ի հարկէ խնդրէ ծանրութիւն զմէջն, և այսպէս ի վերայ ծանրութեան ընութեան իւրոյ հաստատեաց Արարիչն զնա[14]: Եւ հաւանի այսմ կարծեաց սուրբն Բարսեղ ի գիրս Վեցօրեայ: Իսկ այլ վարդապետք ասեն հաստատեալ զերկիր ի վերայ իւր անշարժ կամացն, զի անփոփոխ հաստատութեամբ կամեցաւ զգոլն և զմնալն հաստատ զերկիր: Եւ այս յաղագս հաստատութեան երկրի, որ ասէ մարգարէս. «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր, և գործք ձեռաց քոց երկինք են»:

Տեսցուք այժմ[15] զերեքտասաներորդ[16] գլուխն, այսինքն՝ «զև» բառն: Նախ, թէ «և»-ն զինչ յայտնէ և ապա, թէ[17] վա՞սն էր աստանօր եղաւ:

Գիտելի է, զի ասացաք յառաջագոյն, թէ բանին ութ են մասունք[18] ըստ քերթողացն և սահմանաւ[19] զիւրաքանչիւրսն արտադրեցաք: Իսկ շաղկապն մի էր յութ մասանց բանին: Եւ սա[20] դարձեալ բաժանի յութ, քանզի ի շաղկապացն է՛ն, որ ջոկամանք[21] են[22],

[1] E հինգն
[2] ACDEF > բանս
[3] C յանհամութեանց
[4] E ճշտութեանց
[5] D ընտրութիւն
[6] E > ի
[7] C > ասողն
[8] F > զերկիր
[9] BDF ծանրութիւն

[10] D շեղուլ
[11] A շիղի
[12] CE զի ի վեր
[13] E սակաւ] ապա ուրեմն
[14] CDF զսա
[15] F > այժմ
[16] B զերկոտասաներորդ
[17] CEF > թէ
[18] B մասուն ութ են] ութ են մասունք
[19] B սահմանիւ
[20] E աստ
[21] ABCD ջոկամանակք
[22] F ասին

ոմա՛նք՝ անջատականք[1], ոմա՛նք՝ բաղմատք, ոմա՛նք՝ տարբաղմատք, ոմա՛նք՝ փաստբանականք, ոմա՛նք՝ թարմատք, ոմա՛նք՝ տարակուսանք, ոմա՛նք՝ բաղբանականք: Թողեալ զայլսն՝ խնդրեսցուք[2] զորինակ ջոկամանիցն՝ ի պէտս մերձակայ բանիս[3]: Իսկ ջոկամանք ասին՝ «և»[4], «զի», «թէպէտ», «օն», «քեցիկ», որ զմեկնութիւնն ի յանհունս արտաբերեալ ջոկամանէն: Եւ շաղկապ ասի առ ի շաղելոյ և ի կապելոյ զբառ ընդ[5] բառ, և զմիտս ընդ միտս, որպէս զի զմեկնութիւն բանին պատշաճապէս[6] արտաբերէ՝ ոչ զխորին[7] վերլուծութեան մեկնութիւն, որ են մեծապէս լուծմանց խնդիրք, այլ զսովորական խօսից: Իսկ ջոկման ասի[8], իբր թէ զջոկ բանս մանել, այսինքն՝ միաւորել, կամ թէ ի սկզբանէ աշխարհի լեալ էին իրք մինչև ցայժմ՝ ի մէջ[9] առնուցուս և պատմէս, և կամ ի քէն[10] ինչ մտածելով՝ խորին պատմէս: Իսկ «և» ջոկման իբրև զմիաբանութիւն երկուց դիմաց և ասացմամբ յօդի՝ իբր թէ՝ եկ ես և դու երթանք[11] յայս անուն ճանապարհ, «և»-դ ահա շաղկապեաց զերկու դէմս ի մի:

Բայց գիտելի է, զի «և» բառս յերիս տեղիս նստի. երբե՛մն յառաջք բանի, երբե՛մն ի մէջ բանի, երբե՛մն՝ ի վերջք բանի: Ի յերիս տեղիս, ուր «և» դնի[12], երկուս դէմս յայտնէ: Քանզի յորժամ յառաջադիր լինի, երկուս դէմս ցուցանէ՝ որպէս այն, որ ասէ. «Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս» [Մատ. Ա. 18], «Եւ մարդ է և ո՞ ծանիցէ» [Երեմ. ԺԷ. 9]: Աստանօր «և Յիսուսի Քրիստոսի ծնունդ» ասելովն երկու ծնունդս յայտնէ. առաջին՝ ի Հօրէ նախքան զյաւիտեանս, երկրորդ՝ ի կուսէ ժամանակաւ: Սապէս ասելն՝ «և մարդ է և ո՞ ծանիցէ», ցուցանէ երկուս երես՝ զԱստուած և զմարդ: Իսկ ի մէջ բանի, որպէս ասէ. «Բարի առնէ Տէր բարեաց և այնոցիկ, որ ուղիղ են սրտիւք» [Սաղ. ՃԻԴ. 4], «և»-դ աստանօր ցուցանէ, թէ բարի առնէ Տէր բարեգործացն և այնոցիկ, որ ի մէջ չարեաց գոլով դառնան ի չարեաց[13] և ուղղեն զսիրտս ի բարիս: Իսկ ի[14] վերջք բանի, որպէս թէ՝ «Տէր թագաւոր[16] յաւիտեանս յաւիտենից և» [Ելից. ԺԵ. 18], «և»-ս երկուս դէմս նշանակէ՝ իբր թէ թագաւոր է[17] ա՛յս յաւիտենիս[18], որ և մեք ճանաչեմք և իմանամք, և ա՛յն յաւիտենին, որ անհաս է ի մէնջ:

Բե՛ր թէ աստանօր վա՞սն էր[19] եղաւ:

Գիտելի է, զի ոմանք ի հեր-

[1] B անջատականք են] անջատականք
[2] D և խնդրեսցուք
[3] A բանից
[4] B էն
[5] D առ
[6] B պատշաճաբար
[7] E զվերին
[8] B ասին
[9] F մէնջ
[10] B թէ ի քէն] ի քէն
[11] BF երթամք
[12] B նստի
[13] ACDEF > ի չարեաց
[14] D > ի
[15] EF > թէ
[16] B թագաւոր է] թագաւոր
[17] D > է
[18] F յաւիտեանս
[19] B վա՞սն էր աստանօր] աստանօր վա՞սն էր

ձուածողացն, որ Մանիքոսն ասեն, երկուս արարիչս ասէ[1]՝ զա՛յլ ոմն՝ զգալի և ապականացու երկրիս, և զա՛յլ ոմն՝ իմանալի և անապական աշխարհին, որոյ[2] ծայրքն երկինքն է[3]: Իսկ մարգարէս «զև»-ս դնելով՝ բառնայ զկարծիս հերձուածոյս[4] այս, թէ ոչ է ա՛յլ արարիչ երկրի և ա՛յլ՝ երկնի, այլ միևնոյն Տէր՝ ստեղծող երկնի և երկրի: Վասն այնորիկ «զև»-ն դնելով մարգարէս[5] զերկու[6] անկիւնագիծսն՝ զերկիր և զերկին, ի մի դէմ Արարչին կապեաց՝ ասելով. «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր և գործք ձեռաց քոց երկինք են»:

Բայց[7] բե՛ր աստանօր[8] հետազօտեսցուք զչորեքտասաներորդ[9] գլուխն, այսինքն՝ «զգործ» բառս, որ ասէ մարգարէս, թէ[10]՝ «... և գործք ձեռաց քոց երկինք են»: Եւ զի տարբեր է գործք Աստուծոյ ի գործոց մարդկան և յայլ ամենայն ստեղծականաց: Նախ, քննեսցուք զմարդկային գործ և սովաւ ճանապարհորդեալ հասցուք[11] յիմացութիւն գործոց[12] Աստուծոյ և այնժամ ծանիցուք, թէ ի՞ւ զանազանի գործ Աստուծոյ յայլս գործոյ և ի մարդկայնոց:

Քանզի գրէ Արիստոտէլ, թէ ներձայնոջքն ներանձինց[13] ախտից նշանակք են և գրեցեալքն[14]՝ ներձայնոջացն, այսինքն՝ անձն մշտաշարժ գոլով, ծնանի իմաստս ի վերայ էին: Եթէ իրն և իմացումն համեմատին առ իրեարս՝ լինի իմացումն ճշմարիտ, զի ոչ այլ ինչ է ճշմարտութիւն, եթէ ոչ հաւասարութիւն իրին և իմացմանն: Իսկ թէ ոչ հաւասարին իրն և իմացումն՝ կոչի սուտ, քանզի ոչ վկայեաց իրն իմացմանցն[15]: Իսկ զայս իմացումն արտաբերեալ[16] բանն, որպէս է ի ներքս, այսպէս արտաբերէ[17] արտաքս՝ եթէ ճշմարիտ և եթէ սուտ: Եւ բան բացերևական զերկուսս պարունակեալ ունի յինքեան: Իսկ[18] բանս, որպէս[19] ասացաք, ի վերայ գոյիցս ստորոգի: Եւ Արիստոտէլ բաժանէ զգոյսս ի չորս հակասութիւն այսպէս՝ հարկաւոր գոյ[20], կարելի գոյ, ներընդունական գոյ, անկարելի գոյ: Եւ խրատէ ի վերայ գոյի զչորս հակասութիւնս ուղղել այսպէս. եթէ զառաջին մասն՝ որ է ստորասութիւն, ասես ի վերայ ներգործութեամբ գոյի՝ զբացասութիւնն ի վերայ նորին ասասցես, և եթէ զստորասութիւն ի վերայ զօրութեամբ գոյի ասասցես[21]՝ զբացասութիւնն ի վերայ[22] նորին ասասցես[23]: Եթէ ոչ այսպէս

[1] D ասեն, EF ասաց
[2] A որոց
[3] D > է
[4] E հերձուածողացն
[5] B մարգարէս «զև»-ն դնելով] «զև»-ն դնելով մարգարէս
[6] CEF > զերկու
[7] B > բայց
[8] CEF աստանօր բե՛ր] բե՛ր աստանօր
[9] B զերեքտասաներորդ
[10] B > թէ
[11] E > հասցուք
[12] F գործոյ
[13] D ներանձիցն
[14] BD գրիցեալքն
[15] F իմանցն] իրն իմացմանցն
[16] AD տարբերեալ
[17] A տարբերէ
[18] EF ի
[19] EF որ
[20] D > գոյ
[21] ACDEF > ասասցես
[22] D > զօրութեամբ գոյի ասասցես՝ զբացասութիւնն ի վերայ
[23] F > և եթէ զստորասութիւն ի վերայ

զգուշասցիս, յոյժ սխալականս[1] բերէ, զի խառնին առ[2] միմեանս և ի ճշմարիտ գիտութենէ վրիպէ զմակացուն:

Իսկ յեղանակ ստորասութեան և բացասութեան է այսպէս, քանզի[3] տրամատի բանն յերկուս՝ ի ներտրամադրեալ և յառաջ բերեալ: Իսկ զյառաջ բերեալ բանն Պղատոն բնութեամբ ասէ, իսկ Արիստոտէլ եղծանէ զկարծիս նորա ասելով, թէ բանն ի սկիզբն լինելութեան զօրութեամբ է, և ոչ թէ որոյ գործիքն բնութեամբ է, և նոյնն բնութեամբ կարէ լինել, քանզի ձեռք բնութեամբ ստեղծան գործիք տուր և առութեան, այլ սակայն ի թիւս համարոյ յետոյ պատահեաց, այսպէս, շունչ բնութեամբ կազմեցաւ ի զովացումն ջերմութեան սրտին, իսկ առ ի սպասաւորութիւն[4] բանին յետոյ պատահեաց[5]: Ապա ուրեմն բանն շարադրութեամբ է, և ոչ բնութեամբ[6]:

Իսկ բաժանէ բանն ի հինգ. ի հարցական՝ որպէս թէ՞[7] «Ու՞ր ես, Ադամ» [Ծնն. Գ. 9] և թէ՝ «Ու՞ր է, Աբել, եղբայրն քո»[8] [Ծնն. Դ. 9], յըղձական՝ որպէս[9] «Օշ[10] թէ յաջողեալ էին» [Սաղ. ՃԺԸ. 5] և կամ թէ՝ «Ո՞յ տայր զամենայն Իսրայէլ ինձ ի մարգարէս»[11] [Թիւք. ԺԱ. 29], ի հոշական[12], որ է հիացական կամ կոչնական՝ հիացական, որպէս այն[13] «Ո, որ Արարիչդ ես[14] ջրոյ» [Յուդիթ. Թ. 17], կամ թէ՝ «Ո խորք մեծութեանն Աստուծոյ» [Հռոմ. ԺԱ. 33], իսկ կոչնական, որպէս այն, թէ՝ «Աբրաամ, Աբրաամ, մի մխեր զձեռն քո ի պատանեակդ»[15] [Ծնն. ԻԲ. 12], ի[16] հրամայական, որպէս թէ՞[17] «Մի շնար» [Ելից. Ի. 14] և թէ՝ «Պատուեայ զհայր» [Բ. Օրէնք. Ե. 16] և կամ թէ՝ «Երթ այսօր գործեա յայգոջն»[18] [Մատ. ԻԱ. 28], ի[19] բացերևական՝ որպէս ստորասութիւն և բացասութիւն, զոր կամիմք յառաջիկայսդ ուսանել: Թողեալ զայլսն՝ հետևի քննութեան բացերևական բանի:

Եւ զբացերևական բանն բաժանէ ի պարզ մի, իբր թէ՝ «Նստի Սոկրատէս», զի ձայնն պարզ է[20] և իմացումն պարզ[21]: Իսկ շաղկապաւ[22] մի, իբր՝ «Արեգակն ի վերնումն կիսագնդին՝ օր է», քանզի

զօրութեամբ գոյի ասասցես՝ զբացասութիւնն ի վերայ նորին ասասցես

[1] A սխալումն

[2] B ի, EF ընդ

[3] D զի

[4] F սպասաւորութեան

[5] B > այսպէս, շունչ բնութեամբ կազմեցաւ ի զովացումն ջերմութեան սրտին, իսկ առ ի սպասաւորութիւն բանին յետոյ պատահեաց

[6] D > և ոչ բնութեամբ

[7] D այն թէ] թէ

[8] ABCEF > և թէ ու՞ր է Աբել եղբայրն քո

[9] D որպէս այն] որպէս

[10] F > օշ

[11] ABCEF > և կամ թէ՝ ոյ տայր զամենայն Իսրայէլ ինձ ի մարգարէս

[12] CF հոշական որպէս] որպէս

[13] ABCEF > որ է հիացական կամ կոչնական՝ հիացական, որպէս այն

[14] D > ես

[15] ABCEF > կամ թէ՝ ո խորք մեծութեանն Աստուծոյ, իսկ կոչնական, որպէս այն, թէ՝ Աբրաամ, Աբրաամ, մի մխեր զձեռն քո ի պատանեակդ

[16] D իսկ

[17] D այն թէ] թէ

[18] ABCEF > և թէ՝ պատուեայ զհայր և կամ թէ՝ երթ այսօր գործեա յայգոջն

[19] D իսկ

[20] B > է

[21] ACDEF իմացմունքն] իմացումն պարզ

[22] ABD ի շաղկապաւ

բան մի ասի սա, այլ ոչ իսկապէս մի, քանզի բռնադատէ շաղկապն առ միոյն գոյացութիւն: Իսկ զբազումն բան բաժանէ յերկուս. կա՛մ որ[1] հոմանուն ձայն լինի և բազում նշանակէ, կա՛մ որ բազում լինի, որպէս թէ՝ «Սոկրատէս ընթանայ, Պղատոն իմաստասիրէ»: Իսկ սահմանի պարզ բացերևութիւն՝ է ձայն նշանական յաղագս գոլոյ ինչ կամ ոչ գոլոյ, որպէս ամանակքն բաժանեալք: Իսկ ստորասութիւն՝ բացերևութիւն[2] որումն[3] զումեմնէ, իսկ բացասութիւն՝ բացերևութիւն[4] որումն[5] ապումեքէ: Եւ վասն զի է՛ զիքն[6] երևեցուցանէ[7] իբրև զիք, և զչիքն՝ իբրև զչիք[8], և զչիքն՝ իբրև զիք, և զիքն՝ իբրև զչիք: Եւ շուրջ զարտաքոյ այժմու ամանակիս էր իւն[9] և եղիցին[10]: Սոյնպէս զամենայն, զոր ինչ ստորասեաց ոք ապուսել[11] և զոր ապուսեացն ոք՝ ստորասել, զի ամենայն ստորասութեան[12] բացասութիւն է հակակայ, և ամենայն բացասութեան ստորասութիւն և ասեմ[13] զնմանէ[14] զմիոյ հակակայիլ: Նաև ծանիր, զի ոչ իբր սեռ[15] ի տեսակս բաժանի բացերևականն բան, զի սմա[16] առաջին է ստորասութիւն և երկրորդ բացասութիւն, այլև[17] ոչ իբր[18] հոմանուն ձայն, այլ որպէս[19] բոլոր ի մասունս, քանզի[20] ոչ այլ ինչ գտցես զորոյ և բացերևական ստորոգեսցի բան: Իսկ որ ասեն՝ ամանակն[21] բաժանեալք՝ նշանակէ[22] զզանազանութիւն երից ամանակաց՝ անցելոյն, ներկային[23] և ապառնոյն[24]: Եւ զի ասացաք, թէ ամենայն ստորասութեան բացասութիւն է հակակայ և ամենայն բացասութեան ստորասութիւն, բայց զի ասացաք զնորին զնմանէ[25] զդիմասացութիւն առնել[26], այսինքն՝ զհակակայն: Իսկ ասելն ոչ հոմանունակի, զի ըստ հինգ յեղանակի լինի խտրութիւն տեղւոյս[27]. ըստ հոմանունութեան, ըստ փաղանունութեան, ըստ առ այլ և առ[28] այլ ասման, ըստ այլում և այլում[29], ըստ այլպէս և այլպէս: Ըստ հոմանունութեան՝ որպէս երկու Աղէքսանդր[30], ըստ փաղանունութեան՝ որպէս մարդ իմաստասիրէ, մարդ ոչ իմաստասիրէ[31], ըստ այլ և այլ[32] որպէս թէ[33] տասն կրկնապա-

---

1 CEF > որ
2 AB բացասութեան
3 D է որումն
4 AB բացասութեան
5 A ուրումն
6 DEF զինքն
7 ABD երևեցուցանել
8 D > իբրև զչիք
9 E է որպէս իւն] էր իւն
10 ABCE եղիցիւն, F եղիցի իւն
11 ABCF ապոսել
12 D ստորասութեամբ
13 D և երկրորդ բացասութիւն և ասեմ] և ասեմ
14 AE զնմնէ, B զնորին զնմանէ] զնմանէ
15 C ի սեռ
16 D ամենայն
17 EF այլ
18 A իբրև
19 B իբրև
20 D զի
21 B ամանակքն
22 CE նշանակ, F նշանակք
23 A և ներկային
24 CEF ապառնին
25 D զնիմնէ, F զնմանէ
26 F առնուլ
27 D > ասելն ոչ հոմանունակի, զի ըստ հինգ յեղանակի լինի խտրութիւն տեղւոյս
28 F > առ
29 B նայլում և նայլում] այլում և այլում
30 B Աղեքսանդրոս
31 F > մարդ ոչ իմաստասիրէ
32 B առ այլ
33 CEF > թէ

տիկ և կամ ոչ կրկնապատիկ, իսկ նայլ[1] և այլում[2] որպէս[3] նմանակի[4] և կամ ի տեղւոջ, իսկ այլպէս և այլպէս՝ ըստ[5] ներգործութեան և զօրութեան: Արդ, լինի սխալումն ըստ այսքան յեղանակս:

Արդ, որովհետև ծանեաք զբան, և[6] զբան բացերևական, և զմասունք իւր, որով ասութիւնք ճշմարիտ[7] և սուտ տրոհին ի ձեռն չորից հակասութեանց, որ և[8] ի ներգործութիւնս և ի կիրս երևին. կարելի գոլ[9], մարթելի գոլ, անկարելի գոլ, հարկաւոր գոլ՝ և ի սոցանէ լինին պարզ ստորասութիւնք և բացասութիւնք[10], և փոխադրական ստորասութիւնք և բացասութիւնք: Իսկ պարզ ստորասութիւնք և բացասութիւնք[11] լինին ըստ այսմ օրինակի. կարելի գոլ, ոչ կարելի գոլ, մարթելի գոլ[12], ոչ մարթելի գոլ, անկարելի գոլ, ոչ անկարելի գոլ, հարկաւոր գոլ, ոչ հարկաւոր գոլ: Իսկ փոխադրականք ասին, որ ասի՝ կարելի ոչ գոլ, ոչ կարելի ոչ գոլ[13], մարթելի ոչ գոլ, ոչ մարթելի ոչ գոլ, անկարելի ոչ գոլ, ոչ անկարելի ոչ գոլ, հարկաւոր ոչ գոլ, ոչ հարկաւոր ոչ գոլ: Եւ սոցա յարմարութիւն ընդ միմեանս այսպիսի իմն օրինակաւ լինի. պարզ ստորասութիւն կարելոյն և մարթելոյն, որ է պարզ[14] կարելի գոլ, մարթելի գոլ և պարզ[15] բացասութիւն անկարին և հարկաւորին, որ է՝ ոչ[16] անկարելի գոլ, ոչ հարկաւոր[17] գոլ: Դարձեալ, կարելոյն ի փոխադրութենէ ստորասութիւն և մարթելոյն ի փոխադրութենէ ստորասութիւն[18], որ ասի՝ կարելի ոչ գոլ, մարթելի ոչ գոլ: Եւ ի փոխադրութենէ բացասութիւն անկարին և հարկաւորին, որ ասի՝ ոչ անկարելի ոչ գոլ, ոչ հարկաւոր ոչ գոլ: Դարձեալ, պարզ բացասութիւն կարելոյն և մարթելոյն[19], որ ասէ՝ ոչ կարելի գոլ, ոչ մարթելի գոլ: Եւ պարզ ստորասութիւն անկարին, որ ասէ[20] անկարելի գոլ: Եւ փոխադրական ստորասութիւն հարկաւորին, որ ասէ՝ հարկաւոր ոչ գոլ: Դարձեալ, փոխադրական բացասութիւն կարևորին, որ ասէ՝ ոչ կարելի ոչ[21] գոլ: Եւ մարթելոյն բացասութիւն[22] փոխադրական, որ ասէ՝ ոչ մարթելի ոչ գոլ: Եւ անկարին փոխադրական ստորասութիւն, որ ասէ՝ անկարելի ոչ գոլ և հարկաւորին պարզ ստորասութիւն, որ ասէ՝ հարկաւոր գոլ՝ յարմարին ի վերայ միոյ իրի[23]: Իսկ աստանօր խնդիր իմն է ի մէջ հարկաւորին և կարելոյն, քանզի հարկաւոր գոլն և ներկայ կարելին և

[1] B նայլում
[2] B նայլում
[3] D > որպէս
[4] C նմանակի
[5] F ընդ
[6] B > զբան և
[7] D ճշմարիտք
[8] B > և
[9] D է գոլ
[10] D > և բացասութիւն
[11] D > և բացասութիւն
[12] E > մարթելի գոլ
[13] C > ոչ կարելի ոչ գոլ
[14] A > պարզ
[15] BCDEF > պարզ
[16] D > ոչ
[17] C անկարելի, EF ոչ կարելի
[18] F > և մարթելոյն ի փոխադրութենէ ստորասութիւն
[19] A կարելոյն
[20] A > ասէ
[21] C > ոչ
[22] E > բացասութիւն
[23] A իրի միոյ] միոյ իրի

ապագայ կարելին իւրաքանչիւր ոք ի սոցանէ[1] կար և[2] գործ նշանակեն: Տեսանելի է աստանօր, թէ հետևին միմեանց կարելին և հարկաւորն: Գիտելի է, զի ասացաք, թէ հարկ է ի վերայ միոյ և նոյն իրի կա՛մ ստորասել, կա՛մ բացասել: Իսկ արդ, հարկաւորն և կարելին ի վերայ միոյ[3] և նոյն իրի ստորոգել՝ ոչ կարծի ճշմարիտ գոլ, զի հարկաւորն անփոփոխ է, իսկ կարելին փոփոխական՝ որպէս յառաջիկայսդ կամիմք ուսանել: Արդ, հարկաւորին գոլ ոչ հետևի կարելին գոլ: Տեսցուք, թէ իւր բացասութիւնն հետևի՞, որ է՝ ոչ կարելի գոլ: Իսկ ուր[4] ոչ կարելին է, հետևի անկարելին, յայնժամ հարկաւորն լինի անկարելի՝ որ է սուտ: Եւ թէ զկարելին հարկաւորին ըստ ասութեան առաջնոյն[5] հետևեցնես, լինէր[6] կարելին յայսմ հետևութեանս ոչ կարելի՝ որ է անտեղի: Իսկ կարելիս ըստ առաջին համեմատութեանն հետևեցաւ ոչ հարկաւոր գոլոյն, և այժմ՞[7] կարելին գոլ՝ հարկաւոր գոլոյն: Յայնժամ հակասութիւնքն ի միասին ճշմարիտ են. հարկաւոր գոլ, ոչ հարկաւոր գոլ՝ որ է սուտ: Սապէս և ոչ փոխադրական ստորասութիւնն, որ ասէ՝ կարելի ոչ գոլ, հարկաւոր գոլ[8]՝ որ է սուտ: Յայտ եղև, թէ երեք նախադասութիւնք կարելոյն ոչ հետևանն հարկաւորին՝ կարելի գոլ, ոչ կարելի գոլ[9], կարելի ոչ գոլ[10]: Իսկ ոչ[11] կարելի ոչ գոլն հետևի հարկաւոր գոլոյն: Սապէս՝ հարկաւոր գոլ, ոչ հարկաւոր գոլ, հարկաւոր ոչ գոլ, ոչ հետևանան կարելումն: Բայց փոխադրական բացասութիւն հարկաւորին, որ ասէ՝ ոչ հարկաւոր ոչ գոլ, հետևանայ պարզ ստորասութեան կարելոյն: Քանզի կարելին ըստ ինքեան ներընդունի զգոլն և զոչ գոլն, որպէս ասել[12]՝ կարելի է[13] մարդոյ երաժիշտ գոլ կամ ոչ գոլ: Իսկ հարկաւոր է մարդոյ բանական գոլ, այլ ոչ ներընդունի ոչ գոլ զմարդն բանաւոր: Իսկ սոքա հոմանունք են՝ հարկաւորն և կարելին: Եւ իւրաքանչիւր ոք ի սոցանէ երկակի է. անբան հարկաւոր, բանական հարկաւոր, սապէս՝ անբան կարելի, բանական կարելի: Անբան հարկաւորն՝ որպէս հրոյ ջեռուցանել և ձեան ցրտացուցանել: Իսկ բանական հարկաւորն՝ որպէս Աստուծոյ միշտ ներգործել: Իսկ անբան կարելին՝ որպէս հանդերձի ունել կարութիւն զպատառիլ և զոչ պատառիլ, քանզի ոչ[14] պատառեալ[15] զողջութիւն ներգործութեամբ ունի, իսկ զպատառիլն[16] զօրութեամբ, իսկ եթէ պատառիլն ներգործութեամբ, այնժամ ողջութիւնն զօրութեամբ[17] եղիցի: Իսկ բանաւոր կարելին՝ որպէս գործք

1 ABCE Fungա] ի սոցանէ
2 CEF կարևոր] կար և
3 BCD մի
4 D > ոչ կարելի գոլ: Իսկ որ
5 A առաջնոցն
6 D թէ լինէր
7 CEF այժմն
8 EF ոչ գոլ] գոլ
9 E > ոչ կարելի գոլ
10 BCF > կարելի ոչ գոլ
11 D > ոչ
12 B ասէ
13 AC >է , D էր
14 D > ոչ
15 F պատառիլ
16 C զպատառելն
17 C ներգործութեամբ

*մարդոյս, քանզի է՛ ինչ, որ երբեմն զօրութեամբ է և է՛ ինչ, որ երբեմն ներգործութեամբ: Քանզի այն-պիսի բանաւոր, որ[1] խորհրդոյ և ամանակի կարօտանայ ի ներգոր-ծութիւն, է՛ երբեմն, զի խորհրդոյն յաղթահարեալ[2] զայն, որ զօրու-թեամբ գոյր առ լինելութիւն[3] արար ներգործութեամբ, իսկ թէ խորհրդոյն յաղթահարեալ ի միւս կողմն՝ զներգործութեամբն արար զօրութեամբ, որ են մարդկայինքս[4] ներգործութիւն[5]: Իսկ բանաւոր և միշտ ներգործութեամբ է աս-տուածային ներգործութիւն, քան-զի ոչ երբէք լինի զօրութեամբ, քանզի յաստուածայինսն ոչ ունի երկբայութիւն խորհրդոյ, քան-զի յսկիզբն զկատարածն տեսանէ, և ոչինչ է անկատար ի[6] նմա, այլ ամենայն ինչ մերկապարանոց կայ առաջի նորա՝ և Տէր հզօր զօրու-թեամբ, և Տէր կարող յամենայնի: Իսկ ներգործութիւն աստուածա-յինն միշտ է. ո՛չ է անբան՝ որպէս հրոյ, և ո՛չ երկբայութեամբ, որ խորհրդեան կարօտանայ՝ որպէս մարդոյ, որ երբեմն զօրութեամբ է և երբեմն ներգործութեամբ, և ոչ միշտ զօրութեամբ՝ որպէս նիւթ և[7] ամանակ, զի[8] ոչ երբեք լինին[9] ներգործութեամբ[10], այլ միշտ զօ-րութեամբ: Իսկ Աստուած ներ-գործէ բանիւ և կամօք և միշտ, զի արարչագործ կարողութիւնն ոչ է պատահումն ի նմա, այլ զոր ինչ և[11] իմանաս ի նա[12] թէ՛ կարո-ղութիւն, թէ՛ իմաստութիւն՝ էու-թեամբ[13] և բնութեամբ է նմա: Զի է պարզ էութիւն[14] և անբաղադիր, ոչ է հնար արտաքոյ էութեան կար-ծիս ինչ ստանալ ի նմա պատահա-կան՝ կարողութիւն, կամ իմաստու-թիւն, կամ այլ սոյնպիսիս, զի նա միշտ ներգործութեամբ էութիւն է: Եւ վասն զի բանիւ՝ յատկանայ յանբան ներգործութենէ[15] հրոյ, իսկ զի առանց խորհրդոյ և ամանակի՝ յատկանայ ի մարդկային ներգոր-ծութեանց, իսկ զի միշտ ներգոր-ծութեամբ՝ տարորոշի ի նիւթոյ և յամանակէ[16]: Իսկ յայսմ ամենայնէ յայտ եղև, թէ ամենայնքս, որ զլի-նելութիւն ստացան, բնութեամբ առաջինք էին և ամանակաւ վեր-ջինք, այսինքն՝ բնութիւն[17] սոցա զօրութեամբ ունէր զլինելութիւն, վասն որոյ և այժմու ժամանակս[18] ներգործութեամբ գոլ զսա երևե-ցոյց, վասն որոյ ասի բնութեամբ առաջին[19] և ամանակաւ վերջին[20], քանզի թէ ոչ զօրութեամբ ու-նէր զլինելն[21], և ոչ[22] այժմս կարիւր եղանիլ ներգործութեամբ: Իսկ

1 B > որ
2 C յախտահարեալ
3 CEF ի լինելութիւն
4 B մարդկային, F մարդկայինս
5 D ներգործութիւնք
6 D > ի
7 C > և
8 CEF և
9 B լինի
10 B ներգործութիւն
11 AC > և
12 D նմա
13 E թէ
14 E էութենէ, CF > էութիւն
15 D ներգործութեան
16 B յամանակի
17 A բնութեամբ
18 BC ժամանակիս
19 B առաջինք
20 B վերջինք
21 B զլինելութիւն
22 D > ոչ

աստուածայինն միշտ ներգործութեամբ առաջին և ոչ ունի բնաւ զօրութեամբ ինչ[1] յինքեան, այլ ամենայն ինչ ներգործութեամբ: Իսկ նիւթ և ամանակ միշտ զօրութեամբ և ոչ երբէք ներգործութեամբ: Այս յաղագս զանազանութեան[2] էութեանց և ներգործութեանց այսքան՝ ըստ արիստոտէլական բաղդատութեան[3]:

Բե՛ր տեսցուք, թէ ի՞ւ զանազանի գործք մարդոյ ի գործոց Աստուծոյ:

Գիտելի է, զի գործք Աստուծոյ զանազանի ի գործոց մարդկան ըստ հնգետասան յեղանակաց: Նախ, զի գործ[4] մարդոյս շօշափմամբ և ըմբռնելով է, իսկ Աստուծոյն՝ առանց շօշափման: Երկրորդ, զի մարդն կարօտ է նիւթոյ[5], իսկ Աստուած անկարօտ է նիւթոյ[6]: Երրորդ, զի կայ ի մարդս, որ ի հարկէ առնէ, իսկ Աստուած՝ առանց ամենայն հարկի: Չորրորդ, զի մարդս պակասութիւն ունի, իսկ Աստուած առանց ամենայն պակասութեան[7]: Հինգերորդ, զի մարդս թէ՛ բնութեամբ, և[8] թէ՛ կամօք, և թէ՛ արուեստիւ ստեղծանէ՝ կարօտ է օգնականի, իսկ Աստուած անկարօտ է օգնականի: Վեցերորդ, զի մարդս կարօտ է ուսման և իմաստից, իսկ Աստուած անկարօտ է ուսման իմաստութեան[9], զի ինքն է աղբիւր իմաստութեան: Եւթներորդ, զի մարդս կարօտ է ժամանակի, իսկ Աստուած՝ ոչ կարօտ ժամանակի, այլ զյաւիտեանս արար: Ութերորդ, զի մարդկան գործ աշխատութեամբ և վաստականօք[10] լինի, իսկ Աստուծոյն՝ առանց աշխատութեան և վաստականաց: Իններորդ, զի մարդս սխալական է[11] ի յարուեստ և ի գործ, իսկ Աստուած՝ առանց սխալման: Տասներորդ, զի գործ մարդոյս, որպէս յառաջ ասացաք, նախ զօրութեամբ և յետոյ ներգործութեամբ եղանի, իսկ Աստուծոյն միշտ ներգործութեամբ: Մետասաներորդ, զի մարդոյս գործ մասնաւոր, մի զկնի միոյ, իսկ Աստուծոյն՝ համանգամայն և ոչ մի զկնի միոյ: Երկոտասաներորդ, կատարած գործոյ մարդոյ՝ յի սկիզբն[12] անգիտելի է, իսկ Աստուծոյն՝ յսկիզբն կատարածն[13] գիտելի է նմա[14]: Երեքտասաներորդ, զի մարդ զինչ և կամի՝ ո՛չ կարէ, իսկ Աստուած զոր ինչ և կամի՝ կարէ՛, զի ասէ մարգարէն, թէ[15] «Զամենայն զոր ինչ կամեցաւ և արար Տէր» [Սաղ. ճԼԴ. 6]: Չորեքտասաներորդ, զի մարդն ոչ կարէ արարչագործ լինել[16], իսկ Աստուած արարչագործ է: Հնգետասաներորդ, զի մարդ յետ ստեղծանելոյն ոչ է ընդ[17] ստեղծուածս իւր, իսկ Աստուած յետ ստեղծանելոյն

[1] D > ինչ
[2] B զանազան
[3] B բաղդատութեանց
[4] ACDEF > գործ
[5] E ի նիւթոյ
[6] E ի նիւթոյ
[7] D պակասութեան է] պակասութեան
[8] B > և
[9] E իմաստից
[10] DF վաստակօք
[11] B սխալէ
[12] B յըսկզբանն
[13] F և կատարածն
[14] D > նմա
[15] A > թէ
[16] B արարչագործել ինչ] արարչագործ լինել
[17] E > ընդ

միշտ է ընդ ստեղծուածս իւր, որ-պէս ասէ մարգարէն, թէ[1] «Ընդ[2] ամենայն տեղիս է տէրութիւն նո-ցա» [Սաղ. ՃԲ. 22], և ինքն Տէրն ասէ[3], թէ[4] «Ընդ ձեզ եմ զամենայն աւուրս կենաց[5] մինչև[6] ի կատա-րած աշխարհի» [Մատ. ԻԸ. 20]: Այս յաղագս գործոյ[7], որ ասէ մա-գարէս, թէ՝ «Եւ գործք ձեռաց քոց երկինք են»:

Բե՛ր աստանօր ձեռնարկես-ցուք զհնգետասաներորդ[8] գլուխն, այսինքն՝ ի քննութիւն երկնից:

Եւ նախ եղիցի մեզ ի տե-սութիւն բանն այն, որ ասէ, թէ «գործք ձեռաց քոց երկինք են»: Ծանեաք փոքր ի շատէ վասն գոր-ծոց: Այժմ առաջիկայ ի[9] տեսու-թիւն «ձեռքն», թէ առ[10] Աստուած ձեռքն զի՞նչ նշանակէ[11]:

Նախ, ձեռքն զկարողութիւն և զզօրութիւն[12] նշանակէ, ըստ այնմ, թէ[13] «Զեռք քո արարին և ստեղծին զիս» [Սաղ. ՃԺԸ. 73]: Երկրորդ, զարարչական և[14] զնախախնամա-կան էն նշանակէ, որպէս ասէ Փի-լոն: Երրորդ, զԲանն և զՀոգին իւր[15] նշանակէ, ըստ այնմ[16], թէ[17] «Բանիւ Տեառն երկինք հաստատեցան և հոգով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա» [Սաղ. ԼԲ. 6]: Եւ յայտնի[18] է, զի ձեռն է առիթ գործոյ[19], զի զամենայն ինչ նովաւ առնեմք[20]: Այսպէս, Հայր Աստուած զամենայն ինչ Որդւով և Հոգւով արար և առնէ[21], որպէս ասէ աւե-տարանիչն Յովհաննէս, թէ՝ «Ամե-նայն ինչ նովաւ եղև, և առանց նորա եղև և ոչինչ» [Յովհ. Ա. 3]: Այս յաղագս ձեռին կարճ ի կարճոյ տեսութիւն:

Բե՛ր յաղագս երկնի տրա-մախոհական իմն տեսութեամբ[22] կահաւորեսցուք: Եւ նախ զայս ասասցուք, զի միակն եռակի ասի: Նախ, մի՝ վասն անբաժանութեան, որպէս անյայտ նիշն: Նաև միակն և գերազանց միակն անբաժանելի գոլով ոչ հատանի՝ ոչ զօրութեամբ և ոչ ներգործութեամբ: Երկրորդ կերպիւ կոչի մի ըստ շարունակու-թեան և ըստ[23] այսմ ասի գիծն մի, զի թէպէտ ներգործութեամբ մի է, զօրութեամբ բազում է: Երրորդ յեղանակաւ ասի մի ըստ կատար-ման, որոյ ի յէութեան կատարումն բազումք խնդրին. որպէս տուն ասի մի՝ ի բազմաց կայացեալ, և կամ մարդ ասի մի[24] ի կենդանւոյ և ի բանաւորէ, ի մահկանացուէ, ի մտաց և ի մակացութեանց[25] բաղ-կացեալ, և կամ[26] ի բազում մասանց

[1] A > մարգարէն թէ
[2] CF > ընդ
[3] ABD > ասէ
[4] BCEF > թէ
[5] ABD > կենաց , E կենաց իմոց
[6] ABD մինչ
[7] A գործոց
[8] B զհնգետասան
[9] B > ի
[10] B > առ
[11] C չէն նշանակէ , E նշանակեն
[12] B > և զզօրութիւն
[13] A > թէ
[14] B էն և
[15] D > իւր
[16] B > ըստ այնմ
[17] A > թէ
[18] Bյայտ
[19] F գործոց
[20] CEF առնեն
[21] D այլսն
[22] E էութեամբ
[23] F > ըստ
[24] D > մի
[25] CF իմացութեանց
[26] F > կամ

ասի մի բոլոր: Իսկ բաժանումն ընդդէմ այսմ կա՛յ, որ էութեամբ բաժանի, և կա՛յ, որ տեսակաւ բաժանի, և կա՛յ, որ ներգործութեամբ բաժանի. էութեամբ՝ որպէս հրեշտակք և մարդիկ[1] ոմն իմանալի և ոմն զգալի, իսկ տեսակաւ՝ որպէս մարդ և ոչխար, թէպէտ և[2] զմի նիւթ ունին, այլ տեսակաւ զանազանեալք գոն, իսկ գործով՝ որպէս Սոկրատէս իմաստասիրէ, Հոմերոս քերթողաբանէ, թէպէտ[3] և զմի տեսակ ունին, սակայն գործով զանազանին՝ ոմն զչար և ոմն զբարի: Իսկ ըստ իմաստասիրացն ի սոսա բովանդակին[4] բաժանմունք ութ. իբր ի[5] սեռէ ի տեսակս, իբր ի տեսակէ յանհատս, իբր ի բոլորէ ի մասունս՝ կա՛մ ի նմանամասնեայս[6], կա՛մ յաննմանամասնեայս[7], իբր ի հոմանուն ձայնէ ի զանազան նշանակեցեալս[8], իբր յէութենէ ի պատահումն, իբր ի պատահմանէ յէութիւն, իբր ի[9] պատահմանէ ի պատահումն, իբր ի միոջէ և[10] առ մի:

Իսկ երկինքս հոմանուն է: Եւ ի վերայ հոմանուանց զերիսս զայսոսիկ պարտ է խնդրել. նախ՝ թէ քանի նշանակութիւն ունի, երկրորդ՝ թէ[11] յաղագս[12] որոյ նշանակութեան է հանդէս, և ապա զերրորդն՝ սահմանել կամ ստորագրել[13]:

Եկեսցուք յառաջին գլուխն և նախ զայս ինչ հետազօտեսցուք, թէ արտաքին իմաստասէրքն[14] յաղագս սորա զմի՞ ունէին դիտաւորութիւն, թէ այլ և այլ: Եւ ապա եկեսցուք յեկեղեցական կարծիս և զճշմարիտն արտաքրեսցուք:

Արտաքին իմաստասէրքն յաղագս երկնի այլ և այլ ստացան կարծիս, քանզի ոմն ի ջրոյ ասաց գոլ զերկին, և ոմն՝ յօդոյ, և այլ ոմն՝ ի հրոյ, իսկ ոմն՝ ի չորից տարերց, որպէս ասէր Եմփէդոկլէս[15] հնագոյն փիլիսոփոսն[16], թէ երկինքն բաղկացեալ է ի չորից տարերց: Եւ ըստ կարծեաց նորա երկինքն երևի[17] ապականելի, զոր և ասէ ըստ այսմ օրինակի, թէ ամենայն ինչ ի չորից ունի զլինելութիւն, և[18] ի սիրելութենէ և ի թշնամութենէ: Իսկ որ ի չորից և ի սիրելութեանց՝ է՛ն անապականք, իսկ որ ի չորից և ի թշնամութեանց[19] է՛ն ապականացուք: Այսպէս եղ և զԱստուած՝ ի չորից և ի սիրելութեանց: Իսկ Արիստոտէլ ընդդիմաբանէ Եմփէդոկլեա[20] և ասէ, թէ երկինն ոչ է եղեալ[21] ի չորից տարերց, այլ ի հինգերորդ էութենէ: Երկրորդ, սուտ առնէ ի սիրելութենէ և ի թշնամութենէ ասելն, քանզի ասաց Եմփէդոկլէս, թէ նոքօք ունիմք զգիտու-

[1] B մարդիկք
[2] B > և
[3] D թէ
[4] ABD բաւանդակին
[5] ACEF > ի
[6] AB նմանամասն այս
[7] AB յաննմանամասն այս, C > յաննմանամասնեայս
[8] B նշանակեալս
[9] D > ի
[10] D > և
[11] E > թէ
[12] A > յաղագս

[13] ABD ստորոգել
[14] C իմաստունքն
[15] CEF Եփէդոկլէս
[16] B փիլիսոփայ
[17] A երևելի
[18] BD > և
[19] F թշնամեաց
[20] CEF Եմփէդոկլէսի, D Եմպէդոկլէ
[21] C եղեալ

թիւն, զոր ունիմք առ մեզ. որպէս իւրաքանչիւր տարրօք զնմանն ճանաչեմք, զոր վկայեն իւրաքանչիւր զգայարանքս, այսպէս և սիրելութեամբ, զոր ունիմք առ մեզ՝ զսիրելութիւն ճանաչեմք, և թշնամութեամբ՝ զթշնամութիւն: Իսկ ապա ուրեմն, կարողանայ մարդ գիտել, զոր անկարանայ Աստուած գիտել, զի ոչ ունի թշնամութիւն Աստուած՝ ոչ գիտէ զթշնամիս, որ կարի իմն երևի սուտ և անիմաստ ձեռնարկութիւն[1]: Իսկ Պղատոն ասէ զերկին ի չորից տարերց՝ ի պարզ տարրէ հրոյ: Իսկ ի վարդապետաց եկեղեցւոյ ոմանք հետևացան Պղատոնի, ասելով, թէ առաջին երկինն, որ ասաց Մովսէս, թէ[2] «Ի սկզբանէ արար Աստուած զերկինս և զերկիր», երկին՝ զտարր հրոյն ասաց, և յերկրորդում աւուրն, որ արար զհաստատութիւն, զօդեղէն երկինքդ ասէ[3], յորում եդան աստեղք: Իսկ հրամանաւն Աստուծոյ օդեղէն հողմ պրկեալ զվերին և զներքին[4] կամարն. զներքին կամարն ի վայր պրկեալ պահէ հաստատուն և[5] զջուր և զերկիր ի վեր ի յաստուածադիր սահմանէն անշարժ և անդրդելի ի կայանս իւրեանց, իսկ նոյն հողմ այսպէս[6] զվերին կամարն հաստատեաց անջրպետ ջուրցն[7] վերին, կալ[8] մնալ զովացուցիչ հրեղէն կամարին: Իսկ հաստատութիւնն առ ի ներքնոցս մշտաշարժ ներգործութեամբ հաստատէ զլինելութիւն ծննդական կենդանեաց: Իսկ ոմանք ի վարդապետաց եկեղեցւոյ, որոյ գլուխ Բասիլիոս[9] Կեսարեան, ասէ զառաջին երկինն հրեղէն, այլ ոչ ի չորից տարերցս, այլ իմանալի և լուսաւոր էութիւն[10], բնակարան ամենայն դասուց հրեշտակաց և սրբոց երանելեաց և արդարոց: Իսկ ի ներքոյ նորա երկրորդ երկին ասէ զջրեղէն կամարն: Եւ երրորդ երկին ասէ զաստղալից երկինս: Եւ զսա[11] թաղկուն և թոյլ՝ իբրև զծուխ հաստատեալ, այլ իմն էութիւն անօսր՝ զատ ի չորից տարերց: Եւ կարծեցուցանէ հաւանեալ հինգերորդ էութեան[12] Արիստոտէլի: Եւ ապա ի ներքոյ նորա զչորս տարերս գնդաձև իմն պարունակեալ. հուր՝ յեթերէ՝ ի հինգերորդ էութենէն, օդ՝ ի հրոյ, ջուր՝ յօդոյ, երկիր՝ ի ջրոյ: Եւ սոքա ըստ բարձրութեան իւրաքանչիւր երկին կոչին:

Եւ զի հոմանուն ասացաք զերկին և բաժանեցաք, զի երեք[13] են այլ և այլ բնութիւն՝ ոմն հրեղէն, ոմն ջրեղէն, և ոմն օդեղէն կամ ի հինգերորդ էութենէն: Բե՛ր յաղագս որոյ մեր բանս[14] է արտադրեսցուք: Եւ նախ սկսցուք ի հրեղէն երկնէն[15]:

Իսկ առաջին երկինն, որ կոչի հրեղէն, որ է բնակարան հրեշտա-

[1] B ձեռնտուութիւն
[2] AB > թէ
[3] B ասեն
[4] B պարունակեալ զներքին և զվերին] զվերին և զներքին
[5] B > և
[6] F սոյնպէս
[7] B ջրով
[8] CE կամ

[9] C Բասիլիս
[10] B է
[11] F > զսա
[12] F էութիւն, B ըստ
[13] F չորք
[14] F բանքս
[15] D երկնիցն

կաց, սահմանի այսպէս. երկին է[1] հրեղէն էութիւն բարձր, լուսաւորեալ ներգործութեամբ, անկենդան գոլով՝ բնակարան հրեշտակաց: Իսկ երկրորդ երկինն ջրեղէն մարմին է բարձր, լուսաւոր[2] զօրութեամբ, անբնակ և անկենդան: Իսկ զերրորդ[3] երկինս աստղալից՝ ոմա՛նք ի չորից տարերց ասացին, իսկ ոմա՛նք ի չորից՝ միայն ի հրոյ տարրէ[4] ասացին, և[5] կէսք ոմա՛նք՝ ի ջրոյ, և ոմա՛նք՝ օդեղէն, և ոմա՛նք հինգերորդ էութիւն ասացին զատեալ ի չորիցս՝ անապական էութիւն:

Իսկ աստանօր նախ պարտիմք սահմանել և ապա բաժանել, զի սահմանն նմանի միակի և բաժանումն՝ բազմութեան: Բե՛ր սահմանեսցուք՝ երկին է մարմին բարձր, լուսաւորեալ՝ մասամբ ինչ զօրութեամբ և մասանբ ինչ ներգործութեամբ: Բե՛ր բաժանեսցուք ստոր բաժանմամբ, իսկ սա[6] բաժանի յութերորդ կամարս: Առաջին և վերնագոյն կամարն, որ[7] ունի զեւթանէսին[8] կամարսն ի ծոց իւր՝ որպէս պնակ մի, որ ստացեալ լինի ի[9] ծոց իւր եւթն պնակ՝ մի քան զմի փոքր: Իսկ յութերորդ կամարն եդ Արարիչն[10] զերկոտասան կենդանակերպսն և զայլ անթիւ բազմութիւն աստեղաց, զոր յօրինակ առնու առաքեալն Պօղոս յարութեան աւուրն. «Որպէս աննմանք աստեղք լուսափայլութեամբ, այսպէս և արդարքն՝ անհաւասար փառօք» [Ա. Կորն. ԺԵ. 41]: Իսկ այս կամարիս եդ չափ շարժման ի կետէ յարևելից մինչև ի նոյն կէտ հոլով մի, քսան և չորս ժամօք: Եւ եդ ազդմունք[11] յիւրաքանչիւր բնութիւնս աստեղաց և կենդանակերպից ազդել յստորինս, որպէս ունիս[12] ճանաչել յաստղն, որ ի կողմն բուլղարաց կազմէ[13] զգեղեցկայարմար[14] հուր, և որպէս աստղն, որ կազմէ զմանգնիտն[15] քար: Եւ յիւրաքանչիւրսն այսպէս ծանիր, զի ոչ երբէք ձրի և վայրապար իրս ներգործէ բնութիւն և[16] կամ արհեստ, իսկ եթէ ո՛չ բնութիւն, և ո՛չ արհեստ, քանի՞ ևս առաւել[17] օտար է Աստուծոյ առնել ձրի և վայրապար իրս: Նաև Գիրն Աստուածային[18] վկայէ, թէ եղիցին նշանս[19] և ի ժամանակս և յաւուրս և ի տարիս, յաղագս որոյ եղեն կազմեալ եւթն մոլորական աստեղքն՝ ի յեւթն կամարս՝ յիւրաքանչիւր կամար[20] աստղ մի: Իսկ վերին կամարն, որ ասացաք յարևելից յարևմուտս շրջի, և յարևմտից յարևելս[21] ըստ նմանութեան անուոյ[22]: Եւ կամ

[1] CEF > է
[2] D լուսաւորեալ
[3] E > զերրորդ
[4] CE տարր
[5] F գոլ և
[6] E > սա
[7] A > որ
[8] F զեօթնեսին
[9] CEF > ի
[10] E արարչական
[11] F առմունք
[12] D ունի
[13] D > կազմէ
[14] D զգեղեցկայար
[15] F մագնիտն
[16] A > և
[17] B > առաւել
[18] D Աստուածաշունչ
[19] ABCDF ի նշանս
[20] E > կամար
[21] EF յարևելից յարևմուտս] յարևմտից յարևելս
[22] BE անուոյ, D անվոյ

ըստ Սողոմոնի[1], ելանէ յարևելից ի յարևմուտս, պատի ընդ հիւսիսի և ձգի[2] ի տեղի իւր: Եւ այս կարծիս յաղագս երկնի և մոլորակացն իմանի ըստ օրինակի երկանաքարի: Իսկ զկնի ութերորդ կամարին է երկրորդ կամարն Զօհալին, որ կոչի Երևակ. երկու[3] ամ և կէս կենայ ի մէկ[4] կենդանակերպն, և ամենայն կենդանակերպ երեսուն աստիճան է, և յամենայն[5] աստիճան երեսուն օր կենայ և յերեսուն տարին պատէ զկենդանակերպն: Երրորդ[6] գօտին Մուշթարին է, որ կոչի Լուսնթագ. մի ամ կենայ ի կենդանակերպն[7] և երկոտասան օր յաստիճանն, և ի երկոտասան տարին պատէ զկենդանակերպն: Զորրորդ[8] գոտին Մառեխն[9] է, զոր Հրատ կոչեմք՝ քառասուն և հինգ օր կենայ ի կենդանակերպն և օր և կէս յաստիճանն[10], և տարի և[11] կէս պատէ[12] զկենդանակերպն: Շամս, որ է[13] Արեգակն՝ երեսուն օր կենայ ի կենդանակերպն, և մի օր յաստիճանն, և ի տարի մի պատէ[14] զամենայն կենդանակերպն: Զոհրայն, որ է Լուսաբերն՝ հնգետասան օր կենայ ի կենդանակերպն, և վեց ժամ՝ յաստիճանն[15], և ի վեց ամիսն պատէ[16] զկենդանակերպն: Օտարիտն, որ է Փայլածուն՝ եւթն օր և կէս կենայ ի կենդանակերպն և երեք[17] ժամ յաստիճանն, և յերեք ամիսս պատէ զամենայն կենդանակերպն: Ղամար[18], որ է Լուսինն՝ երկու օր և կէս կենայ ի կենդանակերպն և մի ժամ՝ յաստիճանն, և քսան և ինն օր և կէս պատէ զամենայն կենդանակերպն:

Դարձեալ, կոչին երկինք կերպիւ ինչ այնոքիկ, որ հաղորդին ի հատկութիւնն երկնից, որ է բարձրութիւն և լուսաւորութիւն: Եւ այսպէս ամենայն բոլորակութիւն ի ջրոյն մինչև յերկինս լուսնին կոչին երկին: Վասն այն Յովհան Դամասկացին զբովանդակ բոլորակ[19] մարմինս[20] կոչէ երկին մի օդային, զի ըստ նմա երեք են երկինք. նախ՝ օդեղէն, երկրորդ՝ աստղաւոր, երրորդ՝ վերին երկինն, ուր ասի[21] յափշտակիլ[22] Պօղոսի: Այլ զի բոլորակ մարմինս, որ ի ջրոյս՝ մինչ ի լուսնային երկինն[23] ունի երկու տարրս, և իւրաքանչիւր ոք ի սոցանէ երկուս ծայրս: Զորմէ[24] ասէ Ռաբանոս[25] իմաստասէրն, թէ վերին ծայր հրոյն կոչի հրեղէն երկին՝ հոմանուն այնմ[26] իմանալի երկնին: Իսկ սա կոչի հրեղէն, զի է ի տարրէ հրոյն: Իսկ ներքին մասն

[1] ABCD Սաղոմոնի
[2] E ձգէ
[3] E > երկու
[4] B մին
[5] B յամէն
[6] B երկրորդ
[7] D մին կենդանակերպն
[8] B երրորդ
[9] A Մասեխն
[10] A յաստիճանսն
[11] E մի և
[12] B վճարէ
[13] AB > է
[14] B վճարէ պատէ] պատէ
[15] E կենա յաստիճանն
[16] B վճարէ
[17] E չորս
[18] ACD Ղամբար
[19] E > բոլորակ
[20] F միմեանս
[21] C ասէ
[22] F յափշտակեալ
[23] E երկին երկինն
[24] E զոր
[25] CEF Ռափանոս
[26] C այն

հրոյն կոչի օլոմբային երկին՝ վասն մերձաւոր գոլոյն Օլոմբիոս լերինն: Իսկ զվերին ծայր օդոյն կոչեաց եթերային երկին՝ վասն բոցեղէնութեանն[1], զի հպի ի բոլորակս հրոյն և բորբոքի ի նմանէ: Այլև զստորին մասն օդոյդ կոչեաց օդեղէն երկին, վասն որոյ և թռչունք, որ պարեն յօդս՝ թռչունք երկնից կոչին: Այլև զգայական տեսութիւն կոչի երկին և երևակայական տեսութիւն կոչի երկրորդ[2] երկին, և երրորդ երկին կոչի իմացական տեսութիւն: Այլև Սուրբ Երրորդութիւնն կոչի[3] առաջին, երկրորդ և երրորդ երկին: Այլև հոգևոր բարութիւնն կոչի երկին, ըստ այնմ՝ «Ցնծասցէք և ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս» [Մատ. Ե. 12]: Եւ այս[4] յաղագս այսորիկ այսքան բաւական լիցի[5]:

Բե՛ր տեսցուք զվեշտասանեւորդ գլուխն, այսինքն, թէ[6] վա՞սն էր զերկիրն նախադասեաց մարգարէս քան զերկինս, զի երկին յամենայն ուրեք յառաջ դասի քան զերկիր:

Գիտելի է, զի նախադասի իր իրի ըստ հինգ[7] յեղանակի. նախ՝ ժամանակաւ, որպէս Մովսէս նախ է, քան զԴաւիթ, երկրորդ՝ ըստ բնութեան, որպէս շնչաւորն նախ է, քան զգայականն, և զգայականն նախ է, քան զբանականն, երրորդ՝ փառօք, որպէս արեգակն յառաջ է, քան զլուսինն փառօք լուսոյ[8], չորրորդ՝ կարգիւ աստիճանաց, որպէս հինգն յառաջ է, քան զվեցն, հինգերորդ՝ պատճառանօք, քանզի ամենայն պատճառ յառաջ է, քան զպատճառելին: Իսկ երկիրս աստանօր նախադասի երկնի ժամանակաւ ըստ կարծեաց ոմանց, քանզի երկիր ընդ սկզբանն երկնի ստեղծեալ ասի ի Մովսիսէ, իսկ հաստատութիւնն ասի[9] եղեալ յերկրորդ օրն: Ապա ուրեմն նախադասի[10] երկիր երկնի յայսմ տեղւոջ: Իսկ այն, որ յի սկզբանն լինելութեան նախադասի[11] երկին և ապա երկիր՝ նախադասութիւնն անդանօր յաղագս բնութեան և կամ թէ ըստ փառաց: Եւ կամ թէ երբեմն զերկին և երբեմն զերկիր՝ յաղագս նշանակելոյ, թէ համանգամայն ստեղծան, որպէս յառաջ ասացաք:

Իսկ այժմ, զի[12] զհամանգամայնս յիշեցաք, տեսցուք, թէ ըստ[13] քանի՞ յեղանակս ասի համանգամայն: Երևի, թէ ըստ նոյն քանակութեան նախկնի ասին և համանգամայնքն. նախ՝ ժամանակաւ, որպէս թէ երկուք ոմանք ի միում բոպէի ծնեալք՝ ասին համանգամայն[14], երկրորդ՝ բնութեամբ[15], որպէս ի մի սեռէ յառաջ եկեալ[16] տեսակք՝ ասին համանգամայն[17], երրորդ՝ ասի դասիւ, այլ ոչ

[1] CEF բոցեղինութեանն
[2] B > երկրորդ
[3] CEF > կոչի
[4] ACDEF > այս
[5] ACDEF > բաւական լիցի
[6] B > թէ
[7] D > հինգ
[8] B լուսովն
[9] B > ասի
[10] D դասի
[11] A > երկիր երկնի յայսմ տեղւոջ: Իսկ այն որ յի սկզբանն լինելութեան նախադասի
[12] B > զի
[13] B > ըստ
[14] AC համանգամայնք
[15] E > բնութեամբ
[16] B եկեալք
[17] B համանգամայնք

դասիւ, այլ ի տեղի դասի, որպէս ըստ լաւի՝ իբր թէ[1] երկուք ոմանք ի մի բարի ախորժակ և կամ ի[2] մի[3] յուսումն ասին[4] համանգամայն[5], չորրորդ՝ ըստ պատուոյ, որպէս թէ երկուք ոմանք ի մի պատիւ զոյգ ընկալեալք ի ժողովրդենէն[6] ասին[7] համանգամայնք[8], հինգերորդ՝ ըստ պատճառի և[9] պատճառելոյ՝ որպէս իրն և սահմանն իւր ե՛ն համանգամայն:

Իսկ այս, թէ վասն էր նախադասեցաւ երկիր երկնի՝ այսքան բաւականասցի:

Բե՛ր այժմ տեսցուք զեւթնեւտասներորդ գլուխն, թէ զորպիսի ձև ունի երկինքն:

Եւ[10] գիտելի է, զի ամենայն երկին ի հարկէ պարտի ունել զձև բոլորակ: Առաջին պատճառ, զի այն, որ է առաւել[11] պարզ մարմին, պարտ է ունել զառաւել պարզագոյն ձև: Իսկ երկինքն է առաւել պարզ, զի ոչ է ի չորից տարերց, այլ մի պարզագոյն տարր, այսինքն՝ հինգերորդ էութիւն: Իսկ ի մէջ ամենայն ձևոց առաւել պարզ է բոլորակ ձևն, զի եռանկիւնին յերից գծից[12] բաղկանայ, և քառանկիւնին ի քառից, սապէս և այլքն[13], իսկ բոլորակ ձևն ի միոյ գծոյ[14] բաղկանայ: Ապա ուրեմն, պարզ էութեան երկնից պարտ է ունել զբոլորակ ձևն, որ է պարզ, քան զամենայն ձև:

Երկրորդ, զի առաւել պարունակող էութեան[15] պարտ է ունել զառաւել պարունակող ձև: Իսկ երկինքն զամենայն պարունակեալ ունի ի ծոց իւր: Ապա ուրեմն, պարտ է նմա ունել[16] զբոլորակ ձև, որ առաւել պարունակող է, քան զամենայն ձև:

Երրորդ, զի մարմնոյն[17], որ առաւել սրագոյն է, պարտ է[18] ունել զայն ձև, որ առաւել պատշաճ է ի շարժումն: Իսկ երկին սրագոյն ունի շարժումն, և բոլորակ ձևն առաւել պատրաստ է ի շարժումն, որ ի շրջելն իւր շօշափէ զերկիր ի մի[19] կէտ: Ապա ուրեմն, բոլորակ ձևն առաւել[20] պատշաճ է երկնից:

Չորրորդ, զի կատարելագոյն մարմնոյն պատշաճի կատարեալ ձև: Իսկ երկինքն է կատարեալ մարմին, զի ազդէ յամենայն մարմինս ստորին, որ ի ներքոյ իւր՝ խնամելով զնոսա: Իսկ բոլորակ ձևն ի մէջ ամենայն[21] ձևոց[22] է կատարեալ: Նախ, զի ոչ կարէ[23] յաւելուլ ի նմա և ոչ պակասիլ: Երկրորդ, զի ոչ երևի սկիզբն և ոչ կատարած: Երրորդ, զի վեցեակ[24] թիւն ի մէջ ամենայն թուոց առաջին կատարեալ է,

[1] F > թէ
[2] CDEF > ի
[3] B > մի
[4] E > ասին
[5] B համանգամայնք
[6] D ժողովրդէն
[7] E ասի
[8] B համանգամայն
[9] D > պատճառի և
[10] A > և
[11] F > առաւել
[12] E ծագից
[13] CEF այլք
[14] CE գործոց
[15] CEF էութիւն
[16] B ունել նմա] նմա ունել
[17] D մարմին
[18] E քան զամենայն պարտ է] պարտ է
[19] F միտ
[20] B > առաւել
[21] A > ամենայն
[22] C ձևոյ
[23] E կարէր
[24] B վեցեալ

և վեցերորդ թիւն է ի բոլորակ ձևն, զի որքան է ի միջի[1] կիտէն ի բոլոր ծիրն, վեց այն չափ է իւր[2] բոլորակ ծիրն: Ապա ուրեմն, բոլորակ ձևն, զի կատարեալ է, պատշաճի կատարեալ մարմնոյ երկնից:

Հինգերորդ, թէ երկինքն ոչ ունէր բոլորակ ձև, այլ եռանկիւնի, կամ քառանկիւնի[3], յորժամ շարժէր, անկիւնքն այն յորմէ տեղոջէ վերանային, մնային անկիւնքն[4] այն[5] առանց տեղւոյ և տեղի անկեանցն՝ առանց մարմնոյ:

Վեցերորդ, զի թէ երկինքն ոչ լինէր բոլորակ, այլ քառանկիւնի, այնժամ արեգակն և այլ աստեղք յորժամ գային ի մէջ երկնից՝ այլ մեծագոյն երևէին, քանզի ի միջի[6] կիտէն երկնից առ մեզ է ուղղական գիծ, իսկ յարևելից առ մեզ՝ է խոտորնակ գիծ[7]: Եւ ուղղական գիծն կարճ է, քան զխոտորնակ գիծն, այլ ոչ երբէք մեծագոյն երևի աստղ, յորժամ է ի միջին կէտն, քան յորժամ է յարևելս կամ յարևմուտս:

Այլ ոմանք առարկեն ընդդէմ այսմ երեք կերպիւ: Նախ, զի ասէ Դաւիթ. «Ձգեցեր[8] զերկինս որպէս խորան» [Սաղ. ճԳ. 2], իսկ խորանն կիսակամար է, և ոչ[9] ի ձև բոլորի[10]: Երկրորդ, զի թէ ասեմք զերկինքն բոլոր, այնժամ երևի ներքին մասն անօգուտ և ձրի կազմեալ, զի ոչ ինչ սպասաւորէ մեզ, այլ մնայ ընդունայն: Երրորդ, թէ երկինքն լինէր[11] բոլորաձև, այնժամ մասն ինչ[12] նորա լինէր թափուր ի սրբոց, և կամ թէ ոչ լինէր թափուր, այլ ի վեր և ի վայր էին սուրբքն, այնժամ հեռի լինէր Քրիստոս յայնմ[13] սրբոց, որ ի ներքևի[14] մասինն լինէին:

Առաջնոյն պատասխանեմ, թէ Դաւիթ[15] պարզաբարոյ և խառնիճաղանչ մարդկան ըստ երևելոյ զգայութեանցս խօսի, որ[16] միայն տեսանէին զկիսաբոլորն երկնից, այլ իմաստունք բանականութեամբ քննեն, թէ երկինքն է բոլորակ: Երկրորդին պատասխանեմ, թէ երկինքն լինի բոլորակ՝ ոչ հետևի, թէ[17] ներքին մասն լինի ընդունայն և անօգուտ, այլ սպասաւորեն մեզ՝ առնելով[18] զգիշերն հանգիստ, որպէս վերինն զտիւն գործոյ[19]: Իսկ երրորդին պատասխանեմ, թէ սուրբքն թէպէտ ի[20] վեր և ի վայր ասին կարգաւորիլ[21]՝ ոչ այնր աղագաւ առաւել և նուազ ասի տեսանել զՔրիստոս: Նախ, զի ունին սուրբքն սուր և պարզ տեսութիւն: Երկրորդ, զի թէ արեգակն ի չորից կողմանց տիեզերաց հաւասար տեսանի զգալի աչաց, քանի ևս առաւել հաւասար երևի

[1] A միջին
[2] B ի
[3] E > կամ քառանկիւնի
[4] B > յորմէ տեղոջէ վերանային, մնային անկիւնքն
[5] AB > այն
[6] E միջին
[7] E > իսկ յարևելից առ մեզ է խոտորնակ գիծ
[8] ABD ձգեաց
[9] F > ոչ
[10] B բոլորակի
[11] B լինէր երկինքն] երկինքն լինէր
[12] AC > ինչ
[13] AF յայն
[14] CDF ներքի, E ներքին
[15] B նիւթ
[16] A > որ
[17] F թէ հետևի թէ] թէ
[18] D առնել
[19] DF գործոց
[20] ACEF > ի
[21] A կարգաւորիչ

իմանալի արեգակն իմանալի հայեցուածոց: Եւ երրորդ, զի թէպէտ ոչ լինի ի[1] սրբոցն ի ներքին կամարն՝ ոչ ասի թափուր, որպէս յորժամ լինի թագաւորն բազմեալ[2] ի գահոյս՝ ոչ ասի տունն թափուր: Այս[3] յաղագս այսորիկ, թէ զորպիսի ձև ունի երկինքն:

Ութեւտասներորդ գլուխն[4] խնդրի, թէ քանի՞ են յեղանակք[5] շարժմանց, և թէ երկինքն որպիսի՞ իմն յեղանակաւ շարժի:

Նախ, ըստ Արիստոտէլի, վեց են շարժութիւնք՝ լինելութիւն[6], ապականութիւն, աճելութիւն, նուազութիւն, ըստ տեղւոյ փոփոխութիւն և[7] այլայլութիւն: Իսկ ըստ այլ իմն յեղանակի ասի յոմանց չորս գոլ շարժութիւն. նախ՝ անուաձև, երկրորդ՝ իբր[8] զերկան յաջ կամ[9] ի ձախ շրջեալ, երրորդ՝ ուղղակի ի դիմաց ընթացք՝ որպէս զփայտ քարշեալ, չորրորդ՝ ծուռ և գալար՝ որպէս զօձ սողեալ: Դարձեալ, ըստ այլ իմն յեղանակի ասին շարժեալ[10] ամենայն ոք ի վեց, այսինքն[11]՝ ի վեր և ի վայր, յետ և յառաջ, յաջ և յահեակ: Դարձեալ, ըստ այլ իմն յեղանակի շարժին[12] էութիւնք, այսինքն՝ բնութեամբ՝ որպէս հուր զառ ի վեր[13], բռնութեամբ՝ որպէս քար զառ ի[14] վայր, իսկ կամօք՝ որպէս զգայականք և բանականք, զի իւրաքանչիւր ըստ հաճոյից կամաց ընթանան:

Բե՛ր տեսցուք, թէ ըստ[15] այսքան յեղանակացս ըստ որու՞մ յեղանակի շարժի աստղալից երկինն:

Նախ, գիտելի է, զի ըստ արիստոտէլական բաժանմանց շարժի[16] երկին ըստ մասին[17] ի տեղոջէ ի տեղի և ոչ ըստ բոլորին ի տեղոջէ ի տեղի, զի ի[18] նոյն տեղոջ շարժի: Իսկ զառ ի չորիցն շարժի անուաձև[19] կամ ըստ Սողոմոնի՝ երկանաձև շարժմամբ, զի երկուցն հաւանութիւն[20] է ի դասս սրբոց և ոչ ոքն է ի սոցանէ ամենևին մերժեալ յեկեղեցւոյ[21]: Իսկ զառ ի միւս վեցիցն՝ ի վեր և ի վայր ունի զշարժումն, զի կիսագունդն, որ ի ներքոյ է ի գիշերային ժամանակի, լինի ի վերոյ ի տուընջենային[22] ժամանակին: Եւ յայտ է, թէ մասամբ է ի վեր և ի վայր՝ և ոչ բոլորիւն: Իսկ ըստ չորրորդին՝ բնութեամբ[23] և ոչ բռնութեամբ[24], զի թէպէտ ի հրամանէ Աստուծոյ շարժի անդադարապէս և ոչ իշխէ առնուլ զդադարումն: Այլ քանզի ասեն վարդապետք, թէ զօրք հրեշտակաց են վարիչք կարգեալ երկնից և մոլորական աստեղաց ի հրամանէն Աստուծոյ,

1 BDEF > ի
2 A > բազմեալ
3 CF այսպէս
4 BCEF > գլուխն
5 BD յեղանակ
6 EF լինելութիւնք
7 ACDEF > և
8 A իբրև
9 E և
10 F շարժիլ
11 B > այսինքն
12 E շարժութիւն
13 E վայր
14 B > վեր, բռնութեամբ՝ որպէս քար զառ ի:
15 D > ըստ
16 F շարժին
17 B այնմ ասին] մասին
18 E > ի
19 D անուանաձև
20 E հաւասարութիւն
21 F է յեկեղեցւոյ
22 AF տունջենային, E տրւընջենային
23 CEF բնութիւն
24 CF բնութեամբ

և զնոսա կոչէ Տէրն յԱւետարանին, թէ զօրութիւնք երկնից շարժեսցին: Եւ հաստատեն զայս ըստ բնական[1] հետևողութեան:

Նախ, զի թէ երկինքն շարժէր յատուկ տեսակէն իւրմէ, յայտ լինէր, թէ վասն լրութեան կարօտութեան իւրոյ շարժի, քանզի ամենայն, որ շարժի, վասն կատարման բնութեան իւր շարժի[2] որպէս հուր զառ ի վեր շարժի, և քար զառ ի վայր, զի կարօտ է ըստ բնութեան զտեղին իւր խնդրել: Իսկ շարժումն երկնից ոչ է վասն կարօտութեան իւրոյ, այլ յաղագս ստորնայնոցս՝ որպէս բոլոր մարմինն կարօտ է շարժման սրտին, այսպէս ստորնայինքս[3] շարժման երկնի: Երկրորդ, զի թէ էր շարժումն երկնից յատուկ տեսակէն իւրմէ, յորժամ գտանէր զտեղին իւր, դադարումն առնոյր[4] ի շարժմանցն՝ որպէս քար, յորժամ գտանէ զտեղի իւր՝ դադարումն առնու[5], այսպէս և հուրն, հասեալ ի տեղի իւր՝ դադարումն առնու: Իսկ երկինքն ոչ ունի դադարումն՝ յայտ է, թէ ոչ շարժի ի տեսակէն իւրմէ: Երրորդ, զի յորժամ շարժեալն ի տեսակէն իւրմէ գտանէ զտեղի իւր՝ բռնութեամբ շարժի դարձեալ յայնմանէ[6], որպէս քար, յորժամ հասանի[7] ի ներքին վայրս[8] դժուարաւ շարժի ի տեղոջէ իւրմէ: Իսկ թէ երկին շարժէր յատուկ տեսակէն, յորժամ հասանէր յարևմուտս՝ դժուարաւ շարժէր յարևելս, բայց որպէս յարևելից յարևմուտս՝ նոյնպէս շարժի յարևմտից[9] յարևելս: Ցայտ ուրեմն[10] է, թէ ոչ շարժի ի տեսակէն[11] իւրմէ: Զորրորդ, զի ամենայն, որ[12] շարժէ, ներգործութեամբ է, իսկ որ շարժի՝ զօրութեամբ: Իսկ թէ շարժէր երկին յատուկ տեսակէն, լինէր միևնոյն իրն ներգործութեամբ և զօրութեամբ՝ որ է անհնարին: Ապա ուրեմն, երկինքն[13] յարտաքուստ ունի զշարժողն[14], որ են զօրութիւնք երկնից: Եւ են հրեշտակք արարողական պատճառ, իսկ Աստուած՝ վախճանական. իբր թէ ոք մի[15] շարժէ զանիւ վասն սիրոյն Աստուծոյ՝ է՛[16] արարողական պատճառ, իսկ Աստուած՝ վախճանական[17], զի վասն սիրոյ նորա շարժէ շարժողն: Այսպէս հրեշտակք շարժեն զերկին վասն սիրոյն և հրամանաց նորա և են արարողական պատճառ շարժմանն երկնից, իսկ Աստուած է[18] վախճանական պատճառ[19], զի վասն սիրոյ նորա շարժեն[20]: Իսկ շարժումն երկնից է բնութեամբ, զի Արարիչն եդ

[1] B բանական
[2] CEF ներգործէ, D ներշարժի գործէ
[3] BC ստորայինքս
[4] E առնուր
[5] F > ի շարժմանցն որպէս քար, յորժամ գտանէ զտեղի իւր դադարումն առնու
[6] A յայլմանէ
[7] A հասանէ
[8] D ի վայրս
[9] A ուրումն
[10] ABCEF > յարևմտից
[11] BDF > տեսակէն , C տեղոջէ] տեսակէն
[12] AB > որ
[13] BCDEF երկին
[14] BD զշարժումն
[15] C մի ոք] ոք մի
[16] B > է
[17] F > իբր թէ ոք մի շարժէ զանիւ վասն սիրոյն Աստուծոյ՝ է՛ արարողական պատճառ, իսկ Աստուած վախճանական
[18] D > է
[19] D > պատճառ
[20] D շարժէ շարժողն] շարժեն

ի բնութիւն նորա[1] պատշաճաւոր պատրաստութիւն առ յընդունակութիւն շարժման՝ կամ ըստ թեթև և բոլորաձև գոլոյն: Իսկ ի հրեշտակէն որ շարժէ՝ ասի կամաւոր, զի զոր Աստուած կամի, և զնոյն կամի հրեշտակն: Իսկ զի անդադար շարժէ, յաղագս անփոփոխ գոլոյ կամաց հրեշտակին, զի երանեցան զկնի անկման բանսարկուին և անշարժ ունին զկամս իւրեանց ի կամացն[2] Աստուծոյ՝ յաղագս այսորիկ անդադարապէս շարժեն: Ե՛ն[3] ոմանք, որ կարծեն, զի թէ[4] յարտաքուստ է պատճառ երկնից շարժման՝ յայտ է, թէ բռնութեամբ[5] շարժի երկին, զոր պատասխանեն վարդապետք, թէ յաղագս պատրաստութեանն, զոր եդ Աստուած ի բնութիւն նորա առ յընդունակութիւն շարժման՝ ոչ է բռնութեամբ, այլ բնութեամբ: Եւ այս այսքան[6]:

Եկեսցուք յիններևասներորդ գլուխն և ասասցուք, թէ վա՞ռն էր ի հաստատութիւնն կան բազում աստեղք, քան յայլ ստորնային երկինս, որ կոչին գոտիք[7]:

Գիտելի է, զի Արիստոտէլ դնէ[8] երիս պատճառս: Առաջին, զի ութերորդ երկինն, որ կոչի հաստատութիւն, առաւել պատճառ է կենաց ստորնայնոց, քան զայլ երկինս, վասն այն են անդ կենդանակերպքն, որ կոչին յոյնն օդիակուս, որ թարգմանի բոլորակ երկնից, զի արեգակն և այլ աստեղքն շրջելով յերկոտասան կենդանակերպսն[9], կեանս տան ստորնայնոցս. վասն այն, զի հաստատութիւնն առաւել պատճառ է կենաց՝ կարօտանայ բազում աստեղաց: Երկրորդ, զի այլ ստորնային երկինքս[10] ունին բազում ազգ շարժումն, իսկ հաստատութիւնն ունի զմի և զնոյն շարժումն արևելից յարևմուտս՝ որ է առաջին շարժումն: Վասն այն պատշաճ է հաստատութեանն ունել բազում աստեղս, քանզի[11] այլ երկնիցս իւրաքանչիւր աստղ մի է, որ կոչին մոլորականք, զի երբեմն յարևմտից յարևելս շարժին[12], և երբեմն յետս՝ յարևելից յարևմուտս: Նաև ունին զատեալ ի շարժմանէ բոլորակին իւրեանց զանազան շարժմունս՝ վասն այն կոչին մոլորեցուցիչք, և ոչ թէ ինքեանք[13] մոլորականք: Բայց թէ[14] աստեղքն, որ են ի հաստատութիւնն[15], ոչ ունին այլ շարժմունք, բայց միայն զշարժումն հաստատութեան, զի են հաստատեալք ի նմա: {Ապա ուրեմն, որպէս այլ երկինքն անցանեն բազմագոյն շարժմամբն զհաստատութեամբ, պարտ էր անցանել հաստատութեանն զնոքօք բազում աստեղօք, որ ունին բազում ներգործութիւնս: Երրորդ, վասն զի վերին

[1] B > նորա
[2] B կամսն
[3] D > են
[4] C > թէ
[5] B բնութեամբ
[6] ACDEF > և այս այսքան
[7] B գոտիկք
[8] D դնէ
[9] AD կերպսն
[10] A երկինս
[11] B զի
[12] E շարժի
[13] C ինքեան
[14] ABCDF > թէ
[15] B հաստատութեանն

երկինն[1] ազդէ շարժմամբ[2] իւրով յամենայն ստորին երկինսս, պարտ է ունել առաւել զօրութիւն[3] ազդողին, քան զազդընկալցն: Վասն այնորիկ[4] պարտ էր, զի[5] հաստատութիւնն, որ ազդէ յայլ երկինս՝ բազում ունիցի աստեղս ազդողականս:

Բայց արդ, գիտելի է, զի Պտղոմէոս[6] ներհակի Արիստոտէլի երկակի իմն յեղանակաւ: Նախ, զի ասէ, թէ հաստատութիւնն ոչ է առաջին շարժումն[7], այլ է առաջին շարժումն[8] իններորդ երկինն, որ կոչի ջրեղէն՝ որ ի ժամանակս Արիստոտէլի ոչ էր ծանուցեալ արտաքնոցն: Վասն այնորիկ իններորդ երկինն ոչ ունի այլ շարժումն, բայց միայն մի, այսինքն՝ յարևելից յարևմուտս: Այլ հաստատութեանն, ասէ Պտղոմէոս[9], ունել կրկին շարժումն՝ յարևելից յարևմուտս հասարակական[10] շարժումն, իսկ յարևմտից յարևելս յատկական շարժումն: Իսկ երկրորդ, ներհակի Պտղոմէոս[11] Արիստոտէլի, թէ ոչ են աստեղքն ի հաստատութիւնն պնդեալք իբրև զակն ի մատանւոջ, այլև ունին առանձնական շարժումն, բացի[12] հաստատութենէն, զի շարժին ի հարիւր ամն մի աստիճան, բայց ամենայն աստեղք հաստատութեանն միաչափ[13] շարժին, վասն այն մնան միշտ ի նոյն[14] կարգ, որ ոչ հեռանան ի միմեանց և կամ մօտին յիրեարս՝ վասն այնորիկ կարծին[15] անշարժք գոլ և հաստատք: Իսկ մոլորականք ոչ այսպէս, այլ վասն երագ և յամր շարժման մօտին առ իրեարս և հեռանան[16] ի միմեանց և վասն այնորիկ դիւրաւ իմացուին[17] և շարժականք[18] կոչին}[19]:

---

1 B երկինքն
2 E շարժէ ազդմամբ] ազդէ շարժմամբ
3 CEF զօր
4 F այն որ] այնորիկ
5 B ի
6 ABF Պտլօմէոս
7 ACF շարժուն
8 ACEF շարժուն
9 AB Պտլօմէոս
10 C հասարական
11 AB Պտլօմէոս
12 BE բայց
13 E մի չափ
14 B մի և նոյն] միշտ ի նոյն
15 E կարծեն
16 A հետևանան
17 C իմացութիւնն
18 B շարժական
19 B + Եւ Քրիստոսի փառք յաւիտեանս, ամեն, D > {Ապա ուրեմն, որպէս այլ երկինքն անցանեն բազմագոյն շարժմամբն զհաստատութեամբ.... վասն այնորիկ դիւրաւ իմացուին և շարժականք կոչին}

ՄԵԾ ՐԱԲՈՒՆԱՊԵՏԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՐՈՏՆԵՑԻՈՅ ԱՍԱՑԵԱԼ Ի ԲԱՆՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ, ՈՐ ԱՍԷ՝ «ՆԱՅԵՑԱՐՈՒՔ[1] ԸՆԴ ԱՌԱՔԵԱԼՆ ԵՎ ԸՆԴ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ՍԵՐՈՅ ԸՆԴ ՅԻՍՈՒՍ, ՈՐ ՀԱՒԱՏԱՐԻՄ Է ԱՐԱՐՉԻՆ ԻՒՐՈՅ» [ԵԲՐ. Գ. 1]

Բնագիրը կազմված է հետևյալ հինգ ձեռագրով.
A - Ձեռ. 3979, 38բ-46բ, B - Ձեռ. 9801, 118ա-128ա, C - Ձեռ. 1844 , 197ա-205բ,
D - Ձեռ. 1850, 154ա-163բ, E - Ձեռ. 6573, 173ա-187ա:

Այլ նախքան զբանս հետևեսցուք բնական քննութեանց և ապա, յետ այնորիկ, ձեռնարկեսցուք ի մեկնութիւն բանին[2]:

Մշտաշարժ իմն էութիւն ըստ անձնիշխանական[3] պերճութեան ներգոյական ունի[4] զօրութիւն՝ քննել[5] զիրսն, որ պատահի՝ զեթէ[6] «է՞»-ն և զեթե «զի՞նչ է»-ն, և «զորպիսի՞ ինչ է»-ն[7], և «զվա՞ռն էր»-ն:

Եւ զի[8] ամենայն ճանաչմունք երիս կերպիւ բաղկանայ՝ կա՛մ իմացմամբ պարագրի, կա՛մ տեղեաւ, կա՛մ սահմանաւ:

Իսկ իմացմամբ պարագրի[9] անպարագրապէս Աստուած այնքան, որպէս ասէ առաքեալ՝ հաւատալ պարտ է, եթէ է՛ Աստուած [Եբր. ԺԱ. 6], զի իմացական ներգործութիւն լուսով հաւատոյն իմանայ զԱստուած և[10] կամօք հաւանի, թէ է՛[11] ստոյգ, քանզի ասէ ոմն ի վեհիցն՝ իմանալ զԱստուած ըստ էութեան՝ է անհնարին և ճառելն՝ բնաւ է[12] անկարելի:

Իսկ տեղեաւ պարագրի ամենայն մարմնական էութիւն ըստ եռակի[13] տարորոշութեան[14], զի ամենայն մարմին ի տեղւոջ է և անհնարին[15] է մարմին լինել՝ և ոչ ի տեղւոջ:

Իսկ պարագրութիւն ըստ սահմանի, զի ամենայն էակք՝ թէ՛ մարմին, և թէ՛ անմարմին, ի ներքոյ սահմանի պարունակի՝ բաց[16] յԱստուծոյ, զի Աստուած է անսահման և անպարագրելի բնութիւն: Իսկ հրեշտակք և հոգիք սահման ընդունին և սահմանիւ պարագրին, այլ ոչ տեղեաւ՝ զի ոչ են մարմին: Իսկ մարմին տեղեաւ պարագրի և սահմանիւ պարագրի[17]: Իսկ Աստուած արտաքոյ է իմանալեաց

---

1 BCDE հայեցարուք
2 B բանիս
3 BDE անձնիշխանականի
4 B ներգործական ունի, CDE ներգակ անուն ի] ներգոյական ունի
5 ACDE քննի
6 C և զեթէ
7 B զեթէ պէտ ի մինչ էն]զորպիսի ինչ էն
8 B ոչ
9 D > կա՛մ տեղեաւ, կա՛մ սահմանաւ: Իսկ իմացմամբ պարագրի
10 B > և
11 A եթէ] թէ է
12 B անհնարին] բնաւ է
13 AC սեռակի
14 ACD տարորոշութիւն
15 D անհնար
16 A բայց
17 D > այլ ոչ տեղեաւ՝ զի ոչ են մարմին: Իսկ մարմին տեղեաւ պարագրի և սահմանիւ պարագրի

մարդոյ, բայց միայն լուսով հաւատոյ:

Տեսցուք՝ զի՞նչ է սահման հրեշտակի, այսինքն՝ էութիւն անմարմին, մշտաշարժ, իմացական, անմահ, Աստուծոյ սպասաւոր[1]: Իսկ հոգի է էութիւն[2] անմարմին, բանական, մշտաշարժութեամբ կապակցեալ ընդ մարմնոյ: Յաղագս գտանելոյ հոգւոյն զքաւութիւն յետ մեղանաց[3] և մարմնոյ գտանել զյարութիւն յետ մահուանն, որպէս ասէ Գրիգոր Նիւսեայ[4], թէ հոգեկանին՝ վասն մարմնոյ, և մարմնականին՝ վասն հոգւոյ:

Իսկ թէ զի՞նչ զանազանութիւն է ի մէջ իմացականին և ի մէջ բանականին. զի իմացականն միահաղոյն իմանայ, իսկ բանականն բան բան[5] գտանելով[6] շարադրէ զբոլոր բանն: Երկրորդ, զի իմացականն միայն իմացմամբ կատարէ զգիտութիւն, իսկ մերս թէպէտ իմացմամբ ներտրամադրականին[7], թէ ոչ արտաբերէ արտաբերականն շարադրական բանիւ՝ ոչ լուսաւորեալ յայտնի իմացումն:

Եւ յերիս տեղիս իմացականս մեր առանձնանայ, և ի չորրորդն խառնի ընդ[8] զգայականս[9]. նախ, յորժամ հաւատով իմացականին հայի յԱստուած՝ ճանաչել զԱստուած և հաւատալ ի նա, և երկրորդ՝ յաղօթսն, յորժամ մերկանայ յամենայն գոյականաց և առանձնապէս ընդ Աստուած խօսի, և երրորդ[10] յորժամ թողու զպատահումն արտաքոյ և մտօքն հայի ի ներս ի գոյացութիւն և զգոյացութիւն իրին քննէ, իսկ չորրորդն՝ յորժամ զգայականօք հայի ի պատահումն և պատահմամբն յենթակայ նորին:

Բայց աստանօր է ինչ տարակուսանք, թէ առաքեալս[11] զբանս զայս, որ ասէ թէ՝ «Հայեցարուք ընդ առաքեալն...»՝ ընդ ո՞վ խօսի՝ առ հրեշտա՞կս, թէ՞ առ[12] անասուն կենդանիս, թէ՞ առ մարդկային սեռս:

Գիտելի է աստանօր, զի ընդ մարդկային սեռս խօսի, զոր յաջորդ բանն հաւաստի առնէ, թէ՝ «քահանայապետ խոստովանութեան մերոյ», զի քահանայապետ մե՛ր եղև, և խոստովանութիւն՝ ի մէնջ ընկալաւ[13], զի այլ ումեք ո՛չ քարոզեաց, քան թէ միայն մարդկային սեռիս:

Արդ՝ պարտիմ[14] նախ գիտել զմարդն՝ եթէ զի՞նչ է մարդն: Իսկ եթէ սահմանիւ ծանիցուք՝ մարդն է կենդանի բանաւոր, մահկանացու և մտաց և հանճարոյ[15] ընդունակ: Իսկ եթէ զբոլորն ի մասանց ծանիցուք, ասէ Գրիգոր Նիւսեայ, թէ մարդն ի մարմնոյ և ի հոգւոյ իմանալւոյ[16] գեղեցիկ կազմեաց[17]:

---

1 B սպասաւորի
2 ACDE և] էութիւն
3 A մեղացն
4 ACDE Նիւսացի
5 D > բան
6 C գիտանելով
7 A մեր տրամադրականին
8 AD սգայականս, B սգաական
9 AC ըստ
10 ACDE >երրորդ
11 A առաքեալք, C առ առաքեալս
12 A ընդ առ
13 CD > ընկալաւ, E պահանջէ] ընկալաւ
14 A նախ պարտիմ
15 B մակացութեան] մտաց և հանճարոյ
16 A իմանալի
17 A ստեղծեաց

Այժմ քննելի է, թէ[1] իմանալի հոգին յզգալի մարմինն զիա՞րդ միաւորի: Եթէ[2] ի մարմին՝ որպէս ջուր ի տիկս, քանզի[3] զիա՞րդ պարունակի անմարմինն ի մարմնի: Իսկ եթէ[4] արտաքոյ՝ որպէս հանդերձ պարունակէ, զիա՞րդ սահմանի հանդերձ ընդ մարմնի: Իսկ եթէ ազդմամբ, այսինքն՝ զօրութեամբ, որպէս ջերմութիւն արեգական, այս ոչ կարէ լինել մի էութիւն ընդ մարմնի, զի[5] ոչ կարէ ջերմութիւն մասն լինել ընդ մարմնոյն, իսկ հոգին է մարդկութեան մասն[6]: Իսկ եթէ նախախնամութեամբ՝ այս ոչ կարէ լինել, զի այն միայն յատուկ Աստուծոյ է: Այլ կալմամբ իմն ասի[7] հոգին ընդ մարմինն, և օրինակ՝ որպէս հուր ընդ երկաթ, յեռեալ ամենայն մասամբ՝ արտաշիկանայ բոլորն ի բոլորն, և բոլորն՝ յիւրաքանչիւրսն: Եւ է սա կառավար խեցեղէն մարմնոյս, և ունի շինուած մարմնոյս զառաւել ներգործական իմաստն ի գլխաւորական մասն, յորում են հինգ զգայարանք՝ առ ի նոքօք ճանաչել զհինգ եղականքս[8], յորում են գոյնք, ձայնք, համք, հոտք և շօշափականք: Եւ սա յիւրաքանչիւր զգայարանս[9] ի խելապատակէն[10] առաքէ երակօք զանձնական զօրութիւն և նոքօք ճանաչէ զամենայն գոյակս: Եւ սոքա՝ իբրև զմտերիմ արբանեակք, զընկալեալսն[11] յարտաքուստ[12] հասուցանեն[13] անսխալ ի հասարակ զգայարանս: Եւ է սա[14] իբրև զթագաւորական դիւանատուն[15]՝ կարգեալ ի հոգւոյն, ընդ նմին երևակայութիւն՝ իբրև[16] զքաջ դպիր, զորպիսութիւնն[17] նոցին նկարէ ի յերևմունս իւր: Իսկ կարծիսն կապեալ ընդ յուղիղ խորհրդոյ[18] ընդ նմին կարգեալ՝ դատէ զյայտնի[19] բանիսն[20], իսկ զխրթնածածուկսն և զդժուարահասն աւանդէ տրամախոհութեանն[21]: Իսկ նա կատարելապէս դատէ և ստուգապէս[22] տրոհէ զարժանին[23] և հատուցանէ ի յիմացումն: Իսկ իմացումն լուսափայլ ճանաչմամբն ի յերևակայութենէն զհնգից տեսակաց զընդհանուր գիտութիւնն իւրաքանչիւր տեսակի կատարելապէս ունակացուցանէ ի միտս իւր, յաղագս որոյ պատուիրէ առաքեալս, թէ՝ «հայեցարուք», այսինքն՝ ճշմարիտ գիտութեամբ որոնեցէք և իմացէք զներգործութիւն առաքելոյն, որ առաքեցաւ մեզ ի փրկութիւն:

Բե՛ր տեսցուք զերկրորդ գլուխն, որ ասէ, թէ՝ «առաքեալ»:

---

1 ACDE > թէ
2 E և թէ] եթէ
3 A քան
4 B > եթէ
5 B զոր
6 B > իսկ հոգին է մարդկութեան մասն
7 E ասին
8 C եղանակս
9 A սգայարանք
10 E խելապատակն

11 C զընկալեալքս
12 A յարտաքուս
13 BE հատուցանեն
14 D Եսայի] է սա
15 B դիւանտուն
16 B իբր, A > զթագաւորական դիւանատուն կարգեալ ի հոգւոյն, ընդ նմին երևակայութիւն իբրև
17 E զգիտութիւնն
18 B խորհրդոց
19 B զյայտնին
20 BCDE բարիսն
21 B տրամախոհութենէն
22 B > դատէ և ստուգապէս
23 B զանարժանին

Գիտելի է, զի[1] առաքեալն նուաստ է, քան զառաքօղն, և առաքեալն ի վերայ հրեշտակի և մարդոյ կարէ ասիլ[2], իսկ ի վերայ Աստուծոյ անկար է ասել[3], զի ոչ ոք է գեր[4] ի վերոյ, քան զնա, իսկ նա առաքէ և ոչ յումեքէ առաքի:

Բայց այս զի՞նչ է, որ ասէ առաքեալս վասն տէր մերոյ Յիսուսի Քրիստոսի, թէ «Հայեցարուք ընդ առաքեալն»: Ծանի՛ր, ով վսեմական, զի[5] առաքելութեան[6] անունս բազմադիմի է և բազում եղանակաւ ասի: Նախ, ասի առաքեալ հրեշտակ՝ ըստ այնմ՝ «Եւ յամսեանն վեցերորդի առաքեցաւ Գաբրիէլ» [Ղուկ. Ա. 26]: Երկրորդ եղանակաւ ասէ առաքեալ մարգարէքն՝ ըստ այնմ, թէ՝ «Առաքեաց զՄովսէս ծառայ իւր և զԱհարոն ընտրեալ իւր» [Սաղ. ՃԴ. 26]: Երրորդ եղանակ առաքելութեան աշակերտքն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ըստ այնմ, թէ՝ «Առաքեաց զնոսա երկուս երկուս» [Մար. Զ. 7; Ղուկ. Ժ. 1], և Պօղոս՝ ծառայ Յիսուսի Քրիստոսի, կոչեցեալ առաքեալ: Չորրորդ, իշխան յիշխանութիւն, ըստ այնմ՝ առաքեաց զնոսա իշխանս [Գ. Թագ. ԺԵ. 20]: Հինգերորդ՝ առաքեաց զինուոր ի զինուորութիւն: Վեցերորդ՝ վարդապետք ի քարոզութիւն: Եւթներորդ՝ առաքեալ[7] զմշակս ի գործս, որպէս ասէ յԱւետարանն, թէ՝ առաքեաց զմշակս յայգիս [Մատ. Ի. 2]: Ութերորդ եղանակ առաքելութեան Բանին Աստուծոյ գալն և մարմնանալն ի կուսական յարգանդէ սակս փրկութեան մերոյ, բժշկել զհիւանդութիւն մարդկային սեռիս, ըստ որում ասէ աւետարանիչն, թէ՝ «Բանն մարմին եղև» [Յովհ. Ա. 14], և մարգարէն նախատես ակամբ վասն մարմնանալոյ Բանին ասէ, թէ՝ «Առաքեաց զբանն իւր և բժշկեաց զնոսա և փրկեաց զնոսա յապականութենէ իւրեանց[8]» [Սաղ. ՃԶ. 20], և ինքն Քրիստոս ի սոյն միտս[9] վկայէ, թէ՝ «Հայր առաքեաց զիս և որ առաքեացն զիս, որպէս պատուիրեաց՝ այնպէս առնեմ» [Յովհ. Ե. 36]: Իսկ առաքեալս, որ ասէ, թէ «Հայեցարուք ընդ առաքեալն», գիտելի է, զի յաղագս Բանին Աստուծոյ առաքեալ ի մարմնանալ՝ ի նա ասէ «հայեցարուք»: Իսկ թէ որպէս Աստուած[10] Բանն առաքեալ ի Հօրէ՝ ոչ յաղագս նուաստութեան կամ փոքրկութեան, քաւ լիցի զայս խորհել կամ ասել, այլ[11] յաղագս վասն բղխմանն ի հայրական էութենէն, զի որպէս աղբիւրն ի յականէ առաքի, այսպէս Բանն ի Հօրէ. ըստ այնմ, թէ՝ բղխեսցէ[12] սիրտ իմ զբան բարի [Սաղ. ԽԴ. 2], և դարձեալ թէ[13] յու՞ր է և յու՞ր առաքի, քանզի ընդ ամենայն տեղիս է տէրութիւն նորա և ոչ ինչ է տեղի,

[1] D > առաքեալ: Գիտելի է, զի
[2] AC ասել
[3] B > իսկ ի վերայ Աստուծոյ անկար է ասել
[4] B կարէ ասել գեր
[5] B քանզի
[6] D առաքելական
[7] D առաքելեաց
[8] ABCD յապականութենէ] զնոսա յապականութենէ իւրեանց
[9] B > միտս
[10] A > Աստուած
[11] ABCE այլև
[12] BCDE բղխեաց
[13] B > թէ

որ թափուր է ի նմանէ, ըստ այնմ, թէ՝ «Զերկինք և զերկիր ես լնում ասէ Տէր ամենակալ» [Երեմ. ԻԳ. 24]՝ գրեալ է ի մարգարէութիւն Մաղաքիայ[1]: Քանզի որպէս բանն մեր ներտրամադրեալ արտաքս առաքի անբաժանաբար և մարմնանայ մելանաւ և նստի ի քարտիսին և ի մտաց մերոց ոչ պակասի[2], այսպէս Բանն Աստուած ի կամելն մարմնանալ ըստ մեզ, ասի[3] առաքեալ, բայց ի հայրական ծոցոյն ոչ էր պակաս՝ է՛ր առ Հայր, և է՛ր ի կուսական արգանդն, մարմնացեալ էր յաշխարհի և է՛ր առ Հայր: Քանզի և ասէ ոմն յիմաստնոցն, թէ Աստուած է՛ յամենայն ուրեք՝ զի ոչ է տեղի թափուր ի նմանէ, և ո՛չ ուրեք է՝ զի տեղի զնա ոչ կարէ ընդունել, ո՛չ ի բացեայ տեղւոջէ իմիք և ո՛չ ի տեղւոջ ումեք, ի մէջ սորա և արտաքոյ սորա[4], ի վերայ սորա և ի ներքոյ սորա: Իսկ առաքիլ Բանին՝ զմարմնանալ Բանին ասէ, որպէս ասէ աւետարանիչն, թէ՝ «Բանն մարմին եղև», զի որպէս Մովսէսն՝ որ առաքեցաւ և որպէս[5] առաքեալն Պօղոս՝ որ առաքեցաւ, ոչ թէ էութիւն նոցին յայնժամն եղև[6], այլ վասն գործոցն, որ յայնժամ պատշաճեցաւ՝ ասին առաքեալ, նոյնպէս իմա յաղագս Որդոյն Աստուծոյ:

Բե՛ր ասասցուք և յաղագս երրորդ գլխոյն, որ ասէ, թէ՝ «քահանայապետ խոստովանութեան մերոյ»: Եւ այժմ ի քննութիւն քահանայութեանս է ինչ խնդիր՝ եթէ բաժանմամբ ծանիցուք զքահանայութիւնս, եթէ սահմանիւ[7]:

Գիտել պարտ է, զի սահմանն նմանի[8] միակի, իսկ բաժանումն՝ բազմութեան, և նախ է միակն, քան զբազումն, ապա ուրեմն՝ նախ պարտ է սահմանել և ապա բաժանել: Իսկ Դիոնէսիոս Արիսպագացին սահմանէ զքահանայութիւնն[9] այսպէս՝ քահանայութիւն է ըստ իս կարգ սրբազան[10], հանճար և ներգործութիւն և աստուածատեսակ[11] նմանութիւն: Եւ բարձրութիւն քահանայութեան երևի ի տասն իրս. նախ, յընտրութենէն՝ յորում հարցաքննի, ի սրբութենէն՝ որ պահանջի, յիշխանութենէն՝ որ պարգևի, ի շնորհացն՝ որ հեղեալ լինի, ի գիտութենէն՝ որով լուսաւորի, ի դրոշմէն՝ որ տպաւորի, ի պահպանութենէն՝ որ կարգի, յառաջադայութենէն՝ որ յառաջադրի, յարդարութենէն՝ որ յանձնեալ լինի, յարհեստէն՝ որով վարժի[12]: Իսկ բաժանումն սորա[13] տրամատի յերիս դասս և յինն կարգս: Իսկ թէ է՞ր վասն՝ բե՛ր ասասցուք, քանզի եկեղեցիք քրիստոնէից հրաւիրեալք առաքելական[14] աւե-

---

[1] C Միքիայ **(Թեև հղվում է Մաղաքիայի մարգարեությունը, սակայն մեջբերումը Երեմիայի մարգարեությունից է)**

[2] B > և ի մտաց մերոց ոչ պակասի

[3] E > ասի

[4] D > սորա

[5] ACD n] որպէս

[6] B > զի որպէս Մովսէսն որ առաքեցաւ և որպէս առաքեալն Պօղոս որ առաքեցաւ, ոչ թէ էութիւն նոցին յայնժամն եղև

[7] C սահմանաւ

[8] A մնան

[9] CDE քահանայապետութիւնն

[10] C կարգազան] կարգ սրբազան

[11] E աստուածատես

[12] A վարժեալ լինի] վարժի

[13] C > սորա

[14] A քանզի առաքելական

տարանութեամբ ի հարսնութիւն փեսային Քրիստոսի և յօրինեցին զանազան և պէս-պէս կարգօք և պատմուճանօք ի տիպ և ի[1] գեղեցկութիւն իմանալի խորանին՝ համեմատեալ երկնային դասուց հրեշտակացն, իբր թէ որքան է ի նոսա կարգ և փառաբանութիւն՝ այսպէս եղիցի[2] և ստորինս եկեղեցի[3]: Քանզի նոքա[4], որ խորհրդազգածքն են, այսպէս պատմեցին, թէ ի նոցանէ ոմանք անընդմիջաբար շուրջ են զԱստուծով, այսինքն՝ աթոռք անուանեալ և քերովբէից և սերովբեից դասակարգութիւնքն[5]: Բայց[6] համեմատեալք են արքեպիսկոպոսք, եպիսկոպոսք և քահանայք, իսկ յետոյ՞ տէրութիւնք, զօրութիւնք և իշխանութիւնք, զորս գաղափարեն սարկաւագունք, կէս սարկաւագունք[8], սաղմոսերգուք: Եւ երեք դասք ի նոսա՝ պետութիւնք, հրեշտակապէտք, հրեշտակք[9], որոց ապացոյց են՝ կրօնաւորք, ժողովուրդք[10] և երախայք, որպէս զի լինիցի աստ հանդոյն հրեշտակաց երեք դասք և ինն կարգաւորութիւնք պաշտօնէից Աստուծոյ՝ զանազան կարգօք և պատուով և իշխանութեամբ: Բայց տե՛ս և այլ իմաստ, զի որպէս[11] նոքա յառաջ քան զերեք կարգն և նախապատիւ դասն թէպէտ և ունին զանազանութիւն անուանց, սակայն հաւասարապատիւ գոլով՝ անընդմիջաբար են շուրջ զԱստուծով[12] և ի նորա լուսափայլութիւնն վայելեն և երկատեսակ բնութեամբ[13] յերկրորդն մատակարարեն զնոյն: Այսպէս և այս երեք կարգ է արքեպիսկոպոսաց, եպիսկոպոսաց և քահանայից, թէպէտ և անուամբ զանազանին[14] ի միմեանց, բայց սակայն ի մի դաս և իշխանութիւն պատուութեանն[15] շուրջ զԱստուծով անընդմիջաբար, այսինքն՝ զսուրբ սեղանովն, որով տարրանայ զօրութիւնն Աստուծոյ և վայելեն համարձակութեամբ խորհրդածութիւն սրբոյ[16] պատարագին կարողութեամբ և ի[17] մտաւորական գիտութիւնն Աստուծոյ, մատակարարեն զնոյնսն յերկրորդսն[18], որ զկնի իւրեանց ի դասս պաշտօնէից: Իսկ նոքա, ունելով միջնորմն[19] աստուածատեսականութեան[20] բեմբին[21], ոչ ունին համարձակութիւն կամ պատիւ հայել[22] անընդմիջաբար յԱստուած, այլ[23] ի նախադասակարգէն ընկալեալ զնոյն լուսափայլութիւն բարետրապէս անցուցանել յերկրորդսն, ոչ աղաչել[24] պահել զնոյն

1 AC > ի
2 D և եղիցի
3 C եղիցի
4 ACDE > նոքա
5 A դասակարգութիւնն
6 B որոց
7 B յետ նոցա] յետոյ
8 A > կէս սարկաւագունք
9 C և հրեշտակք
10 A > ժողովուրդք
11 A և

12 B ընդ զԱստուծով
13 D բնութիւն
14 E > զանազանին
15 AB պատուութեանն, DE պատուութեանն
16 A սրբոց
17 B > ի
18 C յերկրորդ դասն] յերկրորդսն
19 B միջնորդսն
20 C աստուածատեսակ
21 B բեմին
22 D հայելով
23 A հայել
24 B աչաղել, D աղաղակել

առ իւրեանս[1], այլ հեղուն[2] զսրբազան գիտութիւնն յերկրորդ դասն, որ ընդ ինքեամբ է դասակարգութիւն ժողովրդոցն: Սարկաւագն[3] զքարոզութիւնն հռչակէ՝ ցուցանելով[4] և խրատելով զնա, կէս սարկաւագն[5] զԱստուածաշունչ գրոց ընթերցումն, երգեցողն՝ զքաղցրաձայն սաղմոսերգութիւնն: Իսկ նոցա ընկալեալ՝ որ մի են[6] դասիւ և զանազան պատուով[7], բարեվայելչապէս[8] ի նոյն վայելեն և յառ ինքեանս քանակեալ սահմանեն, ոչ ունել պատիւ կամ իշխանութիւն, այլ յայլ ոք իջուցանել զնոյնս, բայց թէ յինքեանս նովաւ պայծառանալ՝ զի նոքա են վերջինք ամենեին:

Արդ, առաջին աստիճան յեկեղեցիս՝ դաս պատրիարգաց, որ թարգմանի առաջին հարք[9], այսինքն՝ հայրապետք: Եւ նստին ընդ տիեզերս ի չորս մայրաքաղաքաց ի չորս Աթոռս, ուր աւետարանիչքն գրեցին զԱւետարանն: Եւ վասն զի նախ Մատթէոս գրեաց յԱնտիոք՝ պատրիարգն Անտիոքու նախապատուութիւն[10] ունի, քան զայլսն: Իսկ յետ նորա Աղէքսանդրիայ՝ յաջորդ նորա պատրիարգացն[11] յետ սորա դասակարգեցաւ: Եւ Ղուկաս ի Հռոմ գրեաց և Հռոմայն[12] ըստ պատուոյ[13] երրորդի[14] ի կարգի, թէպէտ[15] զօրութեամբ[16] առաջին է: Այլ Յովհաննէս հուսկ յետոյ գրեաց յԵփեսոս, որ նորայն եղև փոխան[17] պատրիարգ՝ վերջին էր աթոռովն, քան զերիսն: Այսու կարգաւորութեամբ վարեցաւ եկեղեցի մինչև ի ժամանակս Յուստիանոսի[18] թագաւորի: Իսկ Յուստիանոսի կամ եղև փոխել զաթոռ սրբոյն Յովհաննու՝ յԵփեսոսէի Կոստանդիանուպոլիս[19], և զաթոռն Մարկոսի՝ յԱղէքսանդրիէ յԵրուսաղէմ, զի Երուսաղէմի եպիսկոպոսքն[20] նախինքնագլուխք միայն էին, այսինքն՝ ոչ ինքեանք[21] ընդ այլոց իշխանութեամբ և ոչ այլ ընդ իւրեանց. Կոստանդնուպոլսին[22] վասն թագաւորական քաղաքին և Երուսաղէմին՝ վասն զի քաղաք էր երկնաւոր թագաւորին: Արդ՝ ահա ասացաք զառաջին դաս եկեղեցւոյ: Սոքա ունին զգեստ զառաքելական և եմիփորոն՝ հինգ կրկին հինգ[23] խաչիւք զարդարեալ, իսկ նափորտ բազմախաչ, ի վերայ սորա[24] արկանէ զպատուական[25] եմիփորոնն: Եւ գործ է պատրիարգին ձեռնադրել զարքեպիսկոպոսն, որք

[1] A իւրեանց
[2] C հեղուլ
[3] A սարկաւագուքն
[4] A ասելով
[5] A կէս սարկաւագուքն
[6] B է
[7] C պատուով
[8] B իր է վայելչապէս
[9] A հայրք
[10] A նախապատմութիւն, B նախապատութիւն
[11] B պատրիարգն
[12] A Հռոմեան, D Հռովմայն
[13] ACD պատվու, E պատուու
[14] B երրորդ է
[15] B նորա թէպէտ
[16] C և զօրութեամբ
[17] C փոխնակ, DE փոխայն
[18] ACD ուստիանոսի
[19] D Կոստանդինուպոլիս
[20] ACDE եպիսկոպոսն
[21] B իւրեանք
[22] A Կոստանդինուպոլսին, B Կոստանդինպոլսին
[23] C > հինգ
[24] B որոյ, D սորա
[25] A պատմուճան, DE սարկաւագն] պատուական

են ընդ իւր վիճակաւն, նոքա տան հրաման վասն ժողով լինելոյ:

Երկրորդ աստիճան յեկեղեցի՝ արքեպիսկոպոսք, որ թարգմանին[1] եպիսկոպոսապետք[2]: Եւ զգեստ է[3] նոցա նոյն նափորտն բազմախաչ և ի վերայ եմիփորոն[4]: Եւ գործ նոցա[5] ձեռնադրել զմետրապոլիտս և օրհնել զմեռոնն սուրբ[6]: Եւ երեք արքեպիսկոպոսք ունին իշխանութիւն ձեռնադրել զիւրեանց պատրիարգն: Ի սոյն աստիճան են[7] կաթուղիկոսք, որ[8] թարգմանին ընդհանրականք, բայց ունին առաւելութիւնք պատուոյ քան զարքեպիսկոպոսք[9], զայս ոչ միայն յիւր վիճակն[10], այլև յամենայն տեղիս, ուր ազգն իւր և համացեղքն[11] իւր. ունի իշխանութիւն ձեռնադրել եպիսկոպոսք նոցա և զմեռոնն օրհնել և տալ՝ վասն այնորիկ և անուանի կաթուղիկոս:

Երրորդ աստիճան եկեղեցւոյ մետրապոլիտք, որ թարգմանին մայրաքաղաքացիք, և զգենուն նափորտ առանց խաչի և ի վերայ եմիփորոն երեքկին[12]: Եւ գործ է նոցա ձեռնադրել եպիսկոպոս և մեռոն օրհնել, արկանելով ի նա զպատրիարգական մեռոնն, զոր պահէ եկեղեցի յաւելուածով: Եւ երեք մետրապոլիտն ունին իշխանութիւն ձեռնադրել զարքեպիսկոպոսն իւրեանց[13], սակայն ի նախապատիւ պատրիարգէն պարտ է առնուլ զօրհնութիւն սոցա հաճութեամբ և վկայութեամբ:

Չորրորդ դաս պաշտօնէից[14] եպիսկոպոսք, որ թարգմանին[15] այցելուք և զգենուն զնափորտն և ի վերայ եմիփորոն կրկին միայն[16]: Եւ գործ է նոցա ձեռնադրել զամենայն վիճակաւորս, և զսեղան, և խաչ, և զիւղն օծութեան:

Հինգերորդ՝ երիցունք և պապասք, որ թարգմանին[17] երիցունք և քահանայք. քահանայք[18] ի քաղաքս, և երիցունք՝ ի գիւղս և յագարակս՝ մի են երկոքին, բայց յաղագս պատուոյն զանազանին անուամբ: Եւ զգեստ է նոցա նափորտ միայն, զի սոքա արկանեն ուրար միայն[19] զերկու ուսօք[20]: Եւ գործ է նոցա[21] պատարագ մատուցանել և բաշխել ժողովրդեանն և մկրտութիւն առնել[22] և աղօթս մատուցանել և խաղաղութիւն տալ ժողովրդեանն և զմեղս թողուլ:

Վեցերորդ՝ դիակունք, որ թարգմանին սարկաւագունք. զգեստ է պատմուճան հոլանի և առանց գօտւոյ[23] և ուրար արկանեն զահեակ ուսովքն[24] միայն: Եւ գործ է

[1] C թարգմանի
[2] A > որ թարգմանին եպիսկոպոսապետք
[3] A պետք և զգեստ
[4] ACD եմիփորոնին, B եմիփորոն չորեք կրկին] եմիփորոն
[5] C նորա
[6] ACDE > սուրբ
[7] C աստիճանէն] աստիճան են
[8] BCE որք
[9] C զայլք եպիսկոպոսք
[10] C վիճակին
[11] ABC հոմացեղքն
[12] B երեք կրկին
[13] B իւր
[14] D պաշտօնից
[15] A թարքմանի
[16] B կրկնոց այն] կրկին միայն
[17] A թարգմանի
[18] B > քահանայք
[19] E > ուրար միայն
[20] B զերկուսօք] զերկու ուսօք
[21] BD սոցա
[22] B ուսնել
[23] B թևոյ
[24] A ուսօքն

նոցա հրամանաւ քահանային Աւետարան կարդալ և քարոզել, զհաց պատարագին[1] պատրաստել, և զմաղազմայն[2], և զսկիհն, և զքշոցն բերել ի սենեկէն ի սեղանն և ի սեղանէն տանին ի բաշխումն: Նոցին իշխանութիւն և խունկ ծխելն և որ ինչ[3] մի անգամ սպասաւորութիւն է՝ սպասաւորեն մինչև[4] ի[5] կատարիլ[6] կարգ ժամուցն ամենայնի:

Եւթներորդ՝ իւպոդիակունք[7], որք են կէս սարկաւագաց[8]: Եւ ունին[9] զգեստ սարկաւագի[10] անգօտի և հոլանի, բայց զուրարն սոքա զահեակ բազկաւն ածեալ՝ կապեն ի վերայ արմնկանն, ի կախ ունելով կրկին: Եւ գործ է նոցա[11] առաքեալ կարդալ և զխաչագլուխ գաւազանն կրել, և զմոմեղէնսն և զեկեղեցին զարդարել, և զդրունսն պահեն, և սոքա բերեն ջուր քահանային՝ առ ի լուանալ յառաջ քան[12] զխորհուրդ պատարագին, և յորժամ զսարկաւագն օրհնէ քահանայապետն[13] նոքա կոչեն և ածեն զնուիրեալսն ի ձեռն նորա[14]:

Ութերորդ[15] անագանոսք, որ են ընթերցողք, և ունին զնոյն զգեստ պատմուճանին, որ արտաքոյ եկեղեցւոյն ելեալ[16]: Եւ գործ է նոցա ընթեռնուլ զբնագիրս, և զմարգարէսն, և զվարդապետականս:

Իններորդ դաս՝ փլաստք[17], որ թարգմանին երգեցողք, և զգենուն որպէս զընթերցողն: Եւ գործ է նոցա[18] միայն երգել զմեսեդին և զալէլուն: Այս այսպէս:

Բայց բե՛ր տեսցուք զանազանութիւն[19] հանդերձիցն՝ թէ զինչ գուշակեն[20]: Իսկ որ շապիկք[21] ագանի հոլանի կալով[22] առանց գոտոյ՝ ցուցանէ զիշխանութիւն և զհրամանատար գոլն յեկեղեցի: Իսկ ուրարն ի ձախոյ ձեռն նշանակէ զանկարութիւն, զի թէպէտ լուծ Տեառն քաղցր է, բայց նա մանուկ գոլով ոչ զօրեաց յուս[23] իւր բառնալ, այլ ձախ ձեռամբ հպաւորիլ, այսինքն՝ կալ ի կրթութիւն, պահել զդրունս, զատուցանել զերախայսն ի ժողովրդոցն և ընթեռնուլ զայլոց բանս ի լսելիս ժողովրդեանն՝ վարդապետաց, մարգարէից, առաքելոց:

Իսկ սարկաւագն ոչ միայն բուռն եհար, այլև կարողացաւ յուս իւր առնուլ[24], բայց ոչ տիրապէս գործիական, այլ ի ձախն միայն, այսինքն՝ զարդարեալ զներքին մարդն բանիւ գիտութեան և քարոզել ժողովրդեանն, և սպասաւորել քահանային ի հաշտարար պատարագն:

---

1 E քահանային
2 B զմաղզմայն
3 D որին] որ ինչ
4 CE մինչ
5 B > ի
6 A > կատարիլ
7 A իւդիպակունք
8 A սարկաւագանք
9 E ունի
10 B սարկաւագք
11 ABD սոցա
12 ABDE > քան
13 E քահանայն
14 C նոցա
15 A եւթներորդ
16 B եղեալ
17 A փլասք, B փղաստք, D փլասոք
18 ABDE > նոցա
19 D զանազան
20 A է գուշակեն
21 D շապիքն
22 A առանց կոլով] կալով
23 A յոյս
24 A առնիւր

Բայց քահանայն բարձեալ յերկու ուսն[1] տայ նշանակս՝ առ ի կարող գոլ կատարել զպատուիրանս ներքին և արտաքին մարդովն, վասն որոյ ոչ միայն տուաւ[2] իշխանութիւն խօսել ընդ[3] ժողովուրդն, այլև ընդ Աստուած[4] նուիրիլ և նուիրել զմարդիկ[5] միջնորդելով ապաշխարութեան աստիճանօք և խորհրդեամբ եկեղեցւոյ, որոց կատարումն նուիրական[6] պատարագն:

Իսկ եպիսկոպոսք, զի ի վերայ ուրարին ունին զպատուական եմիփորոնն խաչիւք շուրջանակի պաճուճեալ՝ զայն յայտ առնեն, թէ մեք յետ զքաղցր լուծն բառնալոյ՝ զօրացաք և զխաչն բառնալ և գնալ զկնի Քրիստոսի, զամենայն թողլով որ յաշխարհի, միայն պարծիմք ի խաչն, ըստ առաքելոյ՝ «Քաւ լիցի յայլ ինչ պարծել, բայց միայն ի խաչն Քրիստոսի[7]» [Գաղատ. Զ. 14], ունիմ իշխանութիւն տալ զհոգին, որպէս Քրիստոս էառ զհոգին խաչիւն իւրով և ետ յիս, ես խաչելութեամբս իմով կարողացայ ընդունել ի Քրիստոսէ և տալ ժողովրդեանն:

Իսկ հինգ խաչն նշանակէ զհինգ զգայարանս խաչեալ յաշխարհի և ցանկութեանց սորա, զի այս զգեստս[8] հարկաւորք են և ոչ վայելչականք:

Նաև ծանիր և զմեծախորհրդութիւն[9] հանդերձիս, զի զորդին[10] Ահարոնի այրեաց հուրն և ի[11] հանդերձ քահանայութեանն ոչ ժպրհեացաւ մերձենալ, թերևս աւելորդ կարես ասել զայս հանդերձ, քանզի յորմէ բերանէ օրինադրեցաւ քահանայութիւնն՝ ի նոյն բերանէ օրինադրեացաւ[12] և հանդերձ[13] քահանայական:

Իսկ որովհետև բացայայտեցաւ քահանայութիւնն և բաժանմունք աստիճանաց սորա՝ տեսցու՛ք, թէ յորու՞մ ժամու Քրիստոս եղև քահանայապետ խոստովանութեան մերոյ. յորժամ Բանն մարմին եղև և միջնորդեաց մեզ ընդ Աստուած հպաւորութեամբ և մատոյց զանձն իւր պատարագ Հօր՝ վասն հաշտութեան մերոյ, և զխոստովանութիւն մեր[14] յԱստուած կենդանի՝ զոր և[15] յառաջն ի գլուխն չորեքտասան բովանդակեցաք:

Եկեսցուք ի չորրորդ[16] գլուխն, որ ասէ՝ «Հաւատարիմ»: Քննելի է զայս՝ թէ ի գիրս Աստուածաշունչս քանի՞ յեղանակաւ ասի հաւատարիմ: Նախ, ասի հաւատարիմ այնոցիկ, որ սերտ են[17] և կատարեալ ի հաւատս, որ[18] առ Աստուած՝ որպէս առաքեալք և մարտիրոսք: Երկրորդ, ասի հաւատարիմ վասն սպասաւորութեանն, որոց ի նա

---

1 A յերկուսն] երկու ուսն
2 B սովաւ
3 B առ
4 B մարդ
5 B զմարդ
6 B նուիրակութեան
7 B Յիսուսի
8 BCD զգեստք

9 C զմեծ խորհրդութիւն
10 B զորդիքն
11 C > ի
12 D > քահանայութիւնն ի նոյն բերանէ օրինադրեցաւ
13 A ի հանդերձ
14 B հաւատոյ մեր
15 B > և
16 B չորս
17 B սերտէն] սերտ են
18 C > որ

հաւատացեալ է Տէր նորա զամենայն սպասաւորութիւն տան իւրոյ, որպէս ասէ[1] Մովսէս՝ հաւատարիմ տան նորա: Երրորդ, ասի[2] հաւատարիմ այնոցիկ, որք բնականապէս ընդ ամենեսեան զուխտադրութիւնս և զխորհուրդս անվեհեր և անսխալ պահեն: Չորրորդ, ասի հաւատարիմ ի վերայ ճշմարտութեանն՝ որ զխոստումն իւր անսուտ և անփոփոխ պահէ:

Բե՛ր աստանօր տեսցուք, թէ ի չորիցս յայսցանէ ո՞րն յարմարի ի վերայ Քրիստոսի՝ յասելն առաքելոյն Պօղոսի, թէ՝ «Հայեցարուք ընդ առաքեալ և ընդ քահանայապետ խոստովանութեան մերոյ ընդ Յիսուս՝ հաւատարիմ[3] գոլով[4] Արարչին»: Նախ և առաջին, յարմարի[5] Քրիստոսի ըստ սպասաւորութեան քահանայութեան հաւատարմութիւն[6]. որպէս ինքն[7] ասէ յԱւետարանին, թէ՝ «Որդի մարդոյ ոչ եկն պաշտօն առնուլ[8], այլ պաշտել և տալ զանձն իւր» [Մատ. Ի. 28.]: Երկրորդ, յարմարի ճշմարտութեան հաւատարմութիւն ասել ի վերայ Քրիստոսի և ի վերայ Հօր՝ յաղագս[9] միշտ ապրեցուցանելոյն և փրկելոյն, որ անսուտ են ի խոստմունս իւրեանց: Ըստ[10] երրորդ եղանակաւ ասի հաւատարիմ յաղագս ուխտոյն[11], ըստ այնմ, թէ՝ «Ուխտն զոր ուխտեաց Աբրահամու[12] Հօր[13] մերում, տալ մեզ առանց երկիւղի[14] զփրկութիւն ի թշնամեաց մերոց» [Ղուկ. Ա. 71-74]: Եւ յայն սակս ասի հաւատարիմ, ըստ այնմ, թէ «Հաւատարիմ է Աստուած Հայր, որ ոչ ածցէ զմեզ[15] ի փորձութիւն» [Ա. Կորն. Ժ. 13]:

Այսքան յաղագս այսորիկ:

Բե՛ր տեսցուք և զհինգերորդ գլուխն, որ ասէ՝ «հաւատարիմ է Արարչին իւրոյ»: Քանզի ասէ աւետարանիչն, թէ՝ «Զնա Հայր կնքեաց[16] Աստուած» [Յովհ. Զ. 27], իսկ սա ասէ, թէ՝ «հաւատարիմ է[17] Արարչին իւրոյ[18]». իսկ արդ, բնական բանականութեամբ յայտնի առնեմք մեք, զի որ Որդի է՝ ո՛չ է արարած, վասն զի թէ արարած ասես զՈրդի, հարկ է, զի մի ինչ խոստովանեսցիս զնա ամենեցունց յայսց արարածոց՝ ոչ ունելով զաստուածութեան բարձրութիւնն, զոր միշտ գոլն ասեմք: Եւ Յովհաննէս աւետարանիչն ասէ, թէ՝ ամենայն ինչ որդւովն եղև, և առանց նորա եղև և ոչինչ [Յովհ. Ա. 3]: Եւ սա արարած է[19] ասէ, յայտ է, թէ ինքն զինքն արարչագործէ Բանն զինքն ածեալ ի գոյութիւն՝ որ է անկարելի: Ո՛չ ուրեմն է մի յամենեցունց Որդի, զի մի[20] յամենեցունց թուակից եղեալ՝ իւր երևեսցի Արարիչ:

1 B ասէ
2 B > ասի
3 C ի հաւատարիմ
4 D գոլ
5 B յարմարին
6 A հաւատարմութեան
7 C > ինքն
8 A առնել
9 D յազգս
10 B > ըստ
11 E ուխտին
12 A Աբրահամաւ
13 B > Հօր
14 A երկիւղիւ
15 C ի մեզ
16 B > է
17 A > իւրոյ
18 A կոչեաց
19 E > է
20 A > մի

Երկրորդ, եթէ արարած է Որդի, և Գիրք Սուրբ կոչեն զնա իմաստութիւն Հօր, ըստ այնմ, թէ՝ «Քրիստոս Աստուծոյ իմաստութիւն[1]» [Ա. Կորն. Ա. 24] և՝ «Զամենայն ինչ իմաստութեամբ արար» [Սաղ. ՃԳ. 24], յայտ է, թէ զինքն առնէ իմաստութիւն՝ որ է անտեղի: Յայտ է, թէ ո՛չ է արարած Որդի՝ իմաստութիւնն Հօր, զի մի ինքն զինքն գործեսցէ:

Երրորդ, եթէ արարած է Որդի և կոչի Աստուծոյ զօրութիւն և Աստուծոյ իմաստութիւն՝ յայտ լինի, թէ է՛ր երբեմն ժամանակ, յորժամ անզօր և անիմաստ էր Աստուած՝ ոչ գոլով Որդւոյ, քանզի արարածք ամենայն յետոյ յոչ էից Արարչէն լինին: Յայսմանէ յայտ է, թէ միշտ իմաստուն և[2] միշտ հզօր է Հայր՝ ո՛չ ուրեմն է Որդի արարած, այլ միշտ իմաստութիւն և զօրութիւն Հօր:

Չորրորդ, եթէ արարած է Որդի և[3] ճշմարիտ է բանն, թէ որ «Ետեսն զիս՝ ետես զՀայր» [Յովհ. ԺԴ. 9] և յստացուածոցս երևի պատկեր Հօրն՝ ունելով զնմանութիւն առ նախատիպն: Իսկ եթէ է՛ այս՝ ոչ ուրեմն է[4] զանազանութիւն յԱստուած և յստացուածս, յայնժամն եղիցի և նա արարած: Իսկ եթէ ոչ է նա արարած[5], և երևի բոլորն յՈրդւոջ, ոչ ուրեմն է արարած Որդի պատկեր Հօր:

Հինգերորդ, եթէ արարած է Որդի՝ ոչ արարելոյն Հօր. զի արդ[6], ասէ յաղագս իւր, թէ որ «Ետեսն զիս՝ ետես զՀայր իմ», քանզի զիա՞րդ[7] յարարելումն ոչ արարն անվրէպ նմանութեամբ երևեսցի: Եւ եթէ արարած գոլով ասէ, որ «Ետեսն զիս՝ ետես զՀայր»՝ զի՞նչ արգելու զմեզ այսպիսով վարիլ ձայնիւ, եթէ ոչ ինչ է, այլ քան զմեզ Որդի՝ ըստ որում արարած է և[8] նա, որպէս և[9] մեք: Այլ այս անտեղի է, քանզի ոչ է յարարածի արարողին[10] նմանութիւն. ո՛չ ուրեմն արարած է Որդի՝ Հօր անվրէպ նմանութեամբ պատկերն:

Վեցերորդ, թէ արարած է Որդի և ճշմարիտ է բանն այն, թէ՝ «Զամենայն, զոր ինչ ունի Հայր՝ իմ է» [Յովհ. ԺԶ. 15], ապա ուրեմն, ոչ ինչ աւելի ունի Արարիչն, քան զարարածս, եթէ ամենայն ինչ է արարածոյն[11]՝ որպէս և Հօր: Իսկ այս անտեղի[12] է, քանզի բազում մեկնութիւն է յարարածս և յԱրարիչն. ո՛չ ուրեմն է արարած Որդի, որում զամենայն ինչ ունի ընաւորապէս զՀօր իւրութեան հրաշալիքն:

Եւթներորդ, եթէ արարած էր[13] Որդի՝ մի կոչեսցուք Հայր նորա, այլ յաւետ Արարիչ և արարչագործ, քանզի Որդի ցուցանէ զՀայրն, և արարած՝ զարարչագործն: Իսկ թէ Հայր կոչի և է՛ Աստուած՝ ո՛չ ուրեմն է արարած Որդի, այլ ծնունդ՝

[1] C զօրութիւն, D > Հօր, ըստ այնմ, թէ՝ Քրիստոս Աստուծոյ իմաստութիւն
[2] B > միշտ իմաստուն և
[3] B > և
[4] AE > է
[5] A > իսկ եթէ ոչ է նա արարած
[6] E > արդ
[7] A զի
[8] AE > և
[9] AE > և
[10] BE արարչին
[11] A և քան զարարածոյն
[12] A այնտեղի
[13] B է

ոչ որպէս Արարիչ զԱստուած, այլ որպէս Հայր յայտնելով:

Ութերորդ, թէ արարած է Որդի՝ մի՛ կոչեսցի Բան, և մի՛ իմաստութիւն, և մի՛ զօրութիւն, մի՛ ճառագայթ, և կամ այսոքիւք հասարակացն և այլոցն եղիցի արարածս[1], եթէ բնաւին տարաւ զայնոսիկ զգենուլ արարած գոլով Որդի, քանզի թէ ասիցէ առաւել ինչ ունել, քան զայլսն արարած, այլ եղիցի դարձեալ ոչ ինչ տրուպ արարած: Իսկ եթէ ի վերայ այլոցն և ոչ միոյ ումեք այսպիսիքս ասին, այլ միայն Որդւոյ վայելէ, և ճշմարիտ է[2]: Ո՛չ[3] ուրեմն է մի յամենեցունց Որդի, այլ պտուղ է էութեանն Հօր:

Իններորդ, եթէ զամենայն ի ձեռն Որդւոյ լինել՝ ասէ Աստուածային գիրն, և արարած ոք և ոչ Որդի խոստովանի զԲանն՝ Որդի ոչ գոյ Աստուծոյ: Իսկ եթէ այս ճշմարիտ է՝ զիա՞րդ եղիցի Արարիչ՝ ոչ ունելով որով զամենայն գործէ, այլ առնէ և արարչագործէ զամենայն Աստուած: Է՛ ուրեմն Որդի, որով ամենայն գոլոյ յարարած իրաց փախուցեալ՝ որպէս զԱստուած:

Տասներորդ, զի ասէ Դաւիթ, թէ[4] ՝ «Զամենայն, զոր ինչ կամեցաւ և արար Տէր» [Սաղ. ՃԼԴ. 6]: Եւ կամելով, ասէ, Հայր[5] գոյացոյց զՈրդի՝ այսպէս արար զնա և արարչագործ. յէութենէ Հօր ոչ ասեն արիանոսք[6], զի մի գուցէ հատումն ինչ և հոսումն իմասցի[7] յանապական յէութիւնն Աստուծոյ[8]: Պատասխանեմ և ասեմ, թէ այսոքիկ են զառանցանք և լեզուագարութիւն[9] բազում, քանզի հոսումն և հատումն և որքան այսպիսի ինչ կրել իմասցիս ի վերայ մարմնոյ՝ որոյ և կտրելն ընտանի է: Իսկ որ ի գոլոյն մարմինն՝ ի բաց փախիցէ և ի մարմնոյ ախտից՝ ի բաց փախիցէ, այլ ծնանի անբաժանաբար և անախտապէս անմարմինն. քանզի ո՞ր ախտ երևի եղեալ յարեգակն՝ յորժամ ծնանի զլոյսն, ո՞ր բաժանումն պատահի ի հրոյ՝ յորժամ արտաքս առաքէ յինքենէ զլուսաւորութիւն: Եթէ այսոքիկ[10] ծնանին[11] անբաժանաբար և յինքեանց արտաքս առաքեն անախտապէս, որչափ ևս առաւել այսոցիկ Արարիչն յիւրմէ բնութենէ առաքեսցէ զճառագայթն, երբ որոշի նկարագիր ի պատկերէն, քանզի միշտ ընդ նմա[12] է բնաւորեալ և է: Իսկ եթէ ըստ նոցա ցամաք և անպտուղ է Աստուծոյ բնութիւնն, զի՞նչ է ի նոցանէ յառաջ եկեալ ներգործող՝ որ և զՈրդի ըստ նոցա գոյացոյց արարչագործական ոմն գոլով և ոչ էիցն արարողական, քանզի փախուցեալք յէութենէ Հօր՝ ծնեալ ասեն զարարչագործս նորա Բան, ի ճշմարտութենէն ի նոյն վարին, քանզի Որդի կենդանի և գոյաւոր կամք Հօր և Բանն նորա՝ որով զամենայն ինչ գործէ:

---

1 B արարածոցս
2 A ճշմարտէ] ճշմարիտ է
3 E > ոչ
4 E > թէ
5 ACDE արար] ասէ Հայր
6 B զնա արիանոսք
7 D ի մասից] իմասցի
8 B այն
9 A լեզուագրութիւն
10 ACD այսոք
11 A ծնանի
12 B նման

Մետասաներորդ, պահպանութիւն Աստուածային գրոց[1], թէ ի վերայ բնութեամբ[2] Որդւոյ եղեն կամարարաւն կայ անտարբերապես, և ոչ ինչ վնասէ բառ, յորժամ այլ ազգ ինչ ունիցի իրն, քանզի ի վերայ բնութեամբ Որդւոյն թէև ծառայութեան անուն դասի՝ ոչ հրաժարի ի բնաւորական բարէտոհմութենէն[3] պատիւն, թէև ծնեալն արարեալ ասի՝ մինչ ամբողջ պահեալ է նորա ճշմարտութիւնն, ոչ ինչ կրեսցէ վնաս ի բառէն, քանզի բնութիւն ոչ ամենայն իրօք ի[4] բառն քննի: Արդ՝ յորժամ ի վերայ ծնանիցելոյն Աստուծոյ Բանին բերեալ լինի հաւատարիմն գոլով արարողին իւրոյ, մի՛ զրպարտեսցես զբնութիւն էութեան նորա, այլ կա՛մ իմասցի մարդանալոյն նորա Բանն, կա՛մ մի ինչ վնասեսցէ զճշմարտութիւն բառին զանազանութիւն: Բերսաբէէ զՍողոմոն ծառայ կոչէր Դաւթի, ասելով՝ «Զծառայ քո Սողոմոն» [Գ. Թագ. Ա. 19], և հարք յոլովակի[5] զոր[6] ինքեանցն են ծնեալ՝ ծառայս կոչեն և զծառայսն՝ որդիս, այլ ո՛չ բառքն փոխեն զբնութիւնսն, այլ առաւել, զի իշխանութիւնն այսպէս[7] կամեցեալ ցուցանեն: Իսկ զի ի վերայ ծնիցելոյն գտանի արարեալն՝ յայտ[8] է[9] յայսմանէ, քանզի Եղեկիայ ասէ՝ յայսմ հետէ մանկունս արարից [Եսայ. ԼԸ. 19], իսկ յաղագս Յոբայ է գրեալ[10], եթէ «Եղեն նորա ուստերք եւթն և դստերք երեք» [Յովբ. Ա. 2]: Իսկ եթէ ի վերայ մարդկան ոչ ի ճշմարտութիւն բառիցն, այլ ի բնութիւն իրացն հայեցեալք ընդունիմք զխօսեցեալսն՝ զիա՞րդ ոչ կարևորապէս ըստ նորին օրինակի կացցուք ի վերայ աստուածայնոց ծննդեան:

Երկոտասաներորդ, Որդիդ անուն ի Հօրէ ծնունդ նշանակէ: Արդ, եթէ Որդի է՝ մի՛ կոչեսցի[11] արարած, իսկ եթէ արարած է՝ մի՛ կոչեսցի[12] Որդի սուտ անուն, այլ Որդի կոչեսցի և է՛, ապա՝ ո՛չ է արարած:

Երեքտասաներորդ, ասաց ուրեմն իմաստունն[13] Սողոմոն, թէ «Զամենայն արարածս ածցէ Աստուած[14] ի դատաստան» [Ժող. ԺԲ. 14], և զիա՞րդ ճշմարտեսցէ զասելն յաղագս իւր՝ «Եթէ Հայր դատէ[15] և ոչ զոք, այլ զամենայն դատաստան ետ Որդւոյ» [Յովհ. Ե. 22], և կամ զիա՞րդ ոչ ստեսցէ Դանիէլ զասելն, թէ՝ նմա տուաւ դատաստան, բայց ճշմարիտ, զի նա է, «որ դատելոցն է[16] զկենդանիս և զմեռեալս» [Բ. Տիմ. Դ. 1], ապա՝ ո՛չ է արարած և ո՛չ մի յամենեցունց, մի և նա ածցի ի դատաստան:

Չորեքտասաներորդ, զի ասէ սուրբն Կիւրեղ ի սոյն բանի միտս

[1] E գրոյ
[2] D բնութեան
[3] D բարութենէն, E բարերարութենէն, AC (բառի տեղը բաց է թողնված)
[4] D բանք ի, E բնականք] բնութիւն ոչ ամենայն իրօք ի, AC (արտահայտության տեղը բաց է թողնված)
[5] A յովովակի, C յովակի
[6] C զեր
[7] A այնպէս
[8] A յոյս
[9] ABCE > է
[10] B երգեալ] է գրեալ
[11] E կոչեսցէ
[12] E կոչեսցէ
[13] A մասունն
[14] ACDE > Աստուած
[15] ACD դատի
[16] BCDE գալոց է դատել] դատելոցն է

ի գիրս Գանձուց, թէ առաքեալն Պօղոս ասելով զբանս զայս՝ «Հայեցարուք ընդ առաքեալ և ընդ քահանայապետ խոստովանութեան մերոյ, որ հաւատարիմ եղև Արարչին իւրոյ»՝ ո՛չ զբնութիւն Բանին ասէ, այլ զմարմնով տնօրէնութիւնն, քանզի էր և ե՛ղև քահանայապետ և առաքեալ, երբ հաւատարիմ Արարչին իւրոյ՝ բայց յորժամ վասն մեր և յաղագս մեր եղև մարդ, ըստ Յովհաննու ձայնին՝ «Բանն մարմին եղև», յայնժամ[1] արարողին իւրոյ որպէս մարդ հաւատարիմ լցեալ զգործս նորա, յայնժամն եղև առաքեալ՝ որ[2] վասն մեր առաքեցաւ, յայնժամն եղև[3] խոստովանութեան մերոյ քահանայապետ, այսինքն՝ խոստովանութիւն հաւատոյս մերոյ և զիւր[4] մարմինն որպէս զենումն ինչ մատուցանելով Հօր անարատ՝ զի զամենեսեան զմեզ մաքրեսցէ նովաւ: Արդ, թէ ասասցի Որդւոյ առաքեալ և քահանայապետ և հաւատարիմ Արարչին՝ մի՛ ըստ էութեան բանին բերցի ասացեալ, այլ ըստ որակութեան իրացն, վասն զի Պօղոս մարդ գոլով եղև առաքեալ՝ ոչ յայնժամն զգոլն սկսեալ յորժամ կոչեցաւ յառաքելութիւն, քանզի էր և եղև առաքեալ: Նոյնպէս և Մովսէս էր և եղև[5] հաւատարիմ տան նորա, սոյնպէս Ահարոն էր և եղև քահանայապետ՝ յորժամ զպճղնաւորն զգեցաւ, այսպէս և Բանն Աստուած եղև առաքեալ և քահանայապետ և հաւատարիմ՝ յորժամ մարդ եղև:

Հնգետասաներորդ, հաւատարիմ կոչի փրկիչն, և յիրաւի. մի անգամ[6] և յաղագս[7] ամենեցուն մատուցեալ պատարագ զնոյն միշտ և ոչ փոփոխեալ, քանզի մի անգամ մեռեալ յաղագս մեր՝ ոչ տեսցէ երկրորդ անգամ, և դարձեալ, գրելով ոմանց[8] ասէ. «Հաւատարիմ է Աստուած, որով կոչեցարուք ի հաղորդութիւն Որդւոյ նորա» [Ա. Կորն. Ա. 9], նոյնպէս և Պետրոս՝ «Որպէս զի[9] որք չարչարիցին՝ հաւատարիմ արարողին յանձն արասցեն զանձինս» [Ա. Պետ. Դ. 19], առաքեալն առ Թեսաղոնիկեցիսն՝ «Հաւատարիմ, որ[10] կոչեացն[11] զմեզ» [Ա. Թես. Ե. 24], որ և արասցէ նոյնպէս և առ այլս, թէ՝ «Անհաւատ լիցուք՝ նա հաւատարիմ է, զանձն իւր ուրանալ ոչ կամի» [Բ. Տիմ. Բ. 13]: Հաւատարիմ ուրեմն է Քրիստոս, զի և մարդ եղեալ՝ մնաց նոյն ինքն երէկ և այսօր, նոյն և յաւիտեան: Հաւատարիմ այսպէս և Հայր գոլ ասի՝ հաւատարիմ առ յաստուածայնոց գրոց[12]:

Վեշտասաներորդ, զի ասէ առաքեալն[13].«Ճշմարտիւ[14]գիտասցէ

[1] B յայն կամ] յայնժամ
[2] B որով
[3] A > առաքեալ, որ վասն մեր առաքեցաւ յայնժամն եղև
[4] B զի ի
[5] D > առաքեալ նոյնպէս և Մովսէս էր և եղև
[6] B միանգամայն] մի անգամ
[7] B > և յաղագս
[8] D ոմանս
[9] ACDE քանզի] որպէս զի
[10] B է որ
[11] ACE կոչեցան
[12] ACDE > Հաւատարիմ այսպէս և Հայր գոլ ասի՝ հաւատարիմ առ յաստուածայնոց գրոց
[13] B > ասէ առաքեալն
[14] ACDE ճշգրտիւ

ամենայն տունդ Իսրայելի, թէ Տէր և զնա օծեալ[1]՝ Աստուած արար, զայն Յիսուս՝ զոր դուք խաչեցէք» [Գործ. Բ. 36]: Գիտելի է, զի որպէս ասացաք յառաջագոյն, ոչ ի վերայ բանին գոյութեան Որդւոյ ասի յանդգնաբար զառնելն, այլ ի վերայ[2] տնօրէնութեան ներգործութեան: Բե՛ր ասացից. տնանկ ոք նախ հանդիպեալ ընչից՝ եղև տէր, կամ մարգարէ, ոչ գոլով ի ընէ մարգարէ, օծաւ յԱստուծոյ. այլ այսոցիկ եղևն ոչ զսկիզբն նշանակէ, այլ որ ինչ էր յայլմէ՝ իմեքէ փոխեալ նշանակէ: Արդ, զիա՞րդ Տէր արար զՅիսուս Աստուած և զիա՞րդ օծեալ՝ հարկ է խնդրել բարեպաշտապէս. վասն զի Աստուած գոլով Բանն և ամենեցուն Տէր՝ մարդացեալ եղև ի[3] ծառայի կերպարան: Եւ օծանիլ ասի վասն մարդոյս վայելչականի, իսկ ելանէ ի[4] տէրութիւն և իշխանութիւն՝ որպէս զմարդ, որ և Տէր գոլով՝ որպէս զԱստուած, քանզի եկն Բանն Աստուծոյ, զի զազատ ընութիւնն Աստուծոյ ի ծառային տեսցէ[5] կերպարանս, և ոչ զիւրն թողեալ ի մարդկայնոցն[6] իւրութեան ըմբռնեսցի, այլ զի զծառայութիւնն ի տէրութիւնն յափշտակեսցէ ի պատիւ և յիւր բարետոհմութիւնն փոխեալ կազմեսցէ զանպատիւն: Ապա թէ ոչ՝ զիա՞րդ կոչիմք եղբարք Քրիստոսի և զիա՞րդ որդիք Աստուծոյ երևիմք, եթէ ոչ ինչ օգտեցոյց զմեզ մարդն եղեալ Բանն Աստուծոյ: Իսկ եթէ զասելն լուիցես աստուածայնոց գրոց, եթէ՝ «Տէր զնա և օծեալ արար Աստուած» [Գործ. Բ. 36], և զԱստուծոյ անուանակոչութիւնն ի դէմս Հօր[7] ի վերայ բերես, խոստովանիս, և այսպէս կամացն Որդւոյ հաճոյակից է և Հայր, և Տէր գիտէ զնա: Եւ յորժամ եղևն ի[8] ծառայի կերպարանս՝ ոչ արտաքոյ բնաւին և ոչ զայս առնելոցն գտցի Որդի, քանզի զոր ինչ գործէ Հայր՝ և[9] նոյն ամենայն իրօք է գործ Որդւոյ, և զոր ինչ և[10] Որդի կատարէ՝ զնոյն և Հոգի[11] և Հայր գործէ. վասն այնորիկ ասէ փրկիչն. «Յանձնէ առնեմ և ոչինչ, իսկ Հայր ընդ իս է և յիս մնալովն՝ առնէ զգործսն» [Յովհ. Ը. 28-29]: Ինքն զիարդ[12] լինի Տէր և օծեալ՝ յորժամ մարդ եղեալ և վասն Աստուծոյ նորիկ երևեալ ծառայ: Կոչեցաւ և Յիսուս, քանզի ոչ անխտրաբար ասաց սուրբ աշակերտն, թէ՝ «Տէր զնա և օծեալ արար Աստուած» [Գործ. Բ. 36], այլ առաւել եթէ՝ «Զայս Յիսուս զոր դուքն[13] խաչեցէք[14]» [Գործ. Բ. 36]: Պիտոյ է դարձեալ ի գրեցելոցն[15] ստուգութեամբ ի վերայ հայել, քանզի ոչ ասաց, թէ արար զնա Բան կամ Որդի, այլ թէ՝ Տէր և օծեալ, որ ոչ սկիզբն գոյոյ նշանակէ, այլ յայլմէ իմեքէ[16] յայլ փոխադրութիւն:

[1] AE ածեալ
[2] B այլ իսկ] այլ ի վերայ
[3] B > ի
[4] A ելանի] ելանէ ի
[5] B տեսցի
[6] ABD մարդկայնոցս
[7] B ի Հօր դէմս] ի դէմս Հօր
[8] B >ի
[9] B > և
[10] B > և
[11] B և ամենայն իրօք] և Հոգի
[12] ABC արդ
[13] ACDE դուքդ
[14] ACE խաչեցիք
[15] B գերեցելոցն
[16] C իմիքէ

Եօթնեւտասներորդ, է՛ր Բանն նախքան զօծումն թագաւոր ընդ Հօր. արդ՝ զիա՞րդ թագաւոր օծանի և սրբի, որ միշտ թագաւոր և սուրբն էր: Արդարև[1] մի՛շտ թագաւոր և սուրբ էր[2], յետին ժամանակս թագաւորեալ[3] ասի, այսպէս և բարձրեալ գոլով՝ բարձրանալ ասի, վասն մարմնով տնօրէնութեանն բարձրանայ՝ օծանի և սրբի վասն մեր, զի նովաւ ընթասցի ապա շնորհ ընդ ամենայնսն, որպէս արդար և առեալ[4] բնութեանս և բոլորովիմբ ապրել[5] ազգիս, վասն որոյ ասէ փրկիչն. «Ես յաղագս սոցա[6] սրբեմ զանձն իմ, զի եղիցին և սոքա սրբեալք» [Յովհ. ԺԷ. 19], քանզի որ ինչ Քրիստոս՝ այսոքիկ և ի[7] մեզ:

Ութեւտասներորդ, ասէ փրկիչն առ Հայր. «Յաղագս սոցա ես սրբեմ զանձն իմ», իսկ որ զինքն սրբել կարէ՝ ոչ յայլ ումեքէ խնդրէ զայս, յայտ է, թէ Տէր սրբելոյն[8] է: Արդ, եթէ զինքն սրբէ Որդի՝ զիա՞րդ ի պէտս սրբողի է:

Իններեւտասներորդ, Տէր զնա և օծեալ արար Աստուած, այլ ոչ եթէ յէութիւն օծեալ, քանզի էր և նախքան զմարմնանալ[9] Բանն Աստուծոյ: Ոչ ոք ի բարւոք[10] իմացողաց զարարն աստանօր ի վերայ էութեանն առցէ[11], զի մի հարկաւորեսցէ[12] ամբարշտել[13] յայնժամ առեալ[14] գոլ Բանն Աստուծոյ յորժամ[15] եղև մարդ, այլ զարարն փոխանակ եթէ երևեցաւն[16] է իմանալի: Այսպէս[17] և Պետրոս ինքն[18] առ հրէայսն խօսելով ասէր. «զՅիսուս Նազովրացի[19] այր ցուցեալ[20] յԱստուծոյ ի ձեզ՝ զօրութեամբ, արուեստիւք[21] և նշանօք, որպէս և դուք իսկ գիտէք» [Գործ. Բ. 22]: Յայտ է, թէ ի ձեռն գործոցն կամի ցուցանել զնա գոլ Տէր հաւատացելոցն և օծեալ, քանզի յոչ հաւատալն հրէիցն ասէր թէ՝ «Ինձ ոչ հաւատայք, սակայն գործոցն իմոց[22] հաւատացէք» [Յովհ. Ժ. 38], և թէ՝ «Ոչ գործեմ զգործս Հօր իմոյ՝ մի հաւատայք ինձ» [Յովհ. Ժ. 37]: Իսկ եթէ վասն[23] կարող գոլոյ գործել զգործս Հօր՝ ասէր թէ՝ «Գիտասջիք թէ ես ի Հայր, և Հայր ի յիս» [Յովհ. Ժ. 38]. ունել ինքեան[24] զՀայր, և լինել նմանապէս ի Հայր, և գործել զգործս Հօր՝ Աստուած գոլ ճշմարիտ վկայի, ըստ այսմիկ եղև հաւատացելոցն[25] Տէր: Երևեցաւ և ինքն գոլով օծեալ, քանզի ի Հօր բարետոհմութենէն վկայեալ գոլ որպէս Աս-

[1] B արդ որպէս] արդարև
[2] C > արդարև միշտ թագաւոր և սուրբ էր
[3] C թագաւորել
[4] BCD տուեալ
[5] B պարել, E ապրեալ
[6] B > սոցա
[7] B > ի
[8] D սրբելոցն
[9] B զմարմնանալն, A զմարմնացեալ
[10] ABCD բարիոք
[11] B և են առցել] էութեանն առցէ
[12] E հարկաւորեսցի
[13] B անբարշտեալն, E ամպարշտիլ
[14] ABD տուեալ
[15] B յորում
[16] B երևեցոյց
[17] A այս
[18] B > ինքն
[19] A Նազովրացի, B Նազօրացի, E Նազորեցի
[20] C յարուցեալ
[21] A արուեստաւք, E արուեստեօք
[22] A > իմոց
[23] C > վասն
[24] B յինքեան
[25] B նայ հաւատացելոցն

տուած և բոլորին[1] ծանուցեալ եղև գոլով Աստուծոյ Որդի, եղև Տէր՝ ոչ յայնժամ սկսեալ զգոլն Տէր, քանզի էր միշտ Աստուած և Տէր, այլ յորժամ ի[2] հաւատացելոցն ծանուցաւ՝ յայնժամն եղև ի վերայ նոցա Տէր:

Քանեերորդ, զի ասէ Կիւրեղ ի գիրս Պարապմանցն վասն այնոցիկ[3], որ ա՛յլ ասեն զօծանողն և ա՛յլ զօծեալն, թէ զիա՞րդ տացեն պատասխանի Պօղոսի իմաստնաբար ասացելոցն, եթէ «Եւ[4] իցեն անուանեալ աստուածք և տեարք բազումք յերկինս և յերկրի, այլ մեզ մի է Աստուած, Հայր՝ յորմէ ամենայն, և մի Տէր Յիսուս Քրիստոս՝ որով ամենայն» [Ա. Կորն. Ը. 5-6]: Արդ, նա Յիսուսիւ Քրիստոսիւ ասէ զգոլն ի լինելութիւն արարածոցս: Զի՞նչ ասասցուք, ով քաջդ, զորոշելդ ձեր զբանն յառեցելոյն մարդոյ. զո՞ր ասէք արարիչ գոլ բոլորիցս՝ յԱստուծոյ Հօր[5] զբնութեան Որդին, այսինքն՝ զմիածին Որդին անմահին Աստուծոյ, եթէ զնա ասէք արարչագործ: Իսկ աստուածայնոց խորհրդոցն[6] քահանայագործողն Յիսուսիւ Քրիստոսիւ ասէ եկեալ զամենայն ի գոյութիւն: Եւ Քրիստոս անունն քննեալ[7] օծման բերէ մեզ ի ներքս յայտնումն, քանզի վասն օծման ոք անուանի[8] Քրիստոս: Արդ, կամ ասացէք, զոր յԱստուծոյ Հօրէ Բանն յիւր բնութիւնն օծանել և ի ներքս լինել ի ձեռն մաքրութեան և ի նմանէն հաղորդութեան: Եւ եթէ զայս ոչ կարասցեն ասել, ուսուսցեն մեզ, եթէ զիա՞րդ իմասցի Բանն Քրիստոս՝ որ ոչն է օծեալ, կամ զիա՞րդ առանձնապէս կոչեսցի Յիսուս՝ միածինն Աստուծոյ Բանն, որ և երանելին[9] Գաբրիէլ առ սուրբ կոյսն ասացեալ. «Մի երկնչիր, Մարիամ, զի ահա յղասցիս և ծնցիս Որդի, և կոչեսցեն զանուն նորա Յիսուս» [Յովհ. Ա. 30], քանզի նա փրկեսցէ զժողովուրդ իւր՝ ի մեղաց իւրեանց[10]: Արդ, եթէ զԲանն զմիածին Որդին ոչ կարես ասել ի յիւր բնութիւնն օծեալ, կամ ի յայլոց է հաղորդեալ մաքրութեամբ, իսկ եթէ զսոսկ մարդն ասես արարիչ երկնի և երկրի, ոչ[11] ի յետին ժամանակս ի կնոջէ ծնեալ, զիարդ ընդ սկզբանն Հօր լինէր արարիչ երկնի և երկրի: Եւ գիտելի է, զի թէ ոչ էր եղեալ Բանն մարմին, և թէ ոչ էր եղեալ Որդի մարդոյ, և թէ ոչ էր առեալ զծառայի կերպարանս և ձևով գտեալ որպէս զմարդ՝ է՛ր տարակոյս ինչ, բայց այժմ՝ ո՛չ, քանզի ասէ Յովհաննէս, թէ՝ «Բանն մարմին եղև...», և Պօղոս ասէ. «Զանձն ունայնացոյց, զկերպարան ծառայի էառ[12], և ձևով գտեալ որպէս զմարդ» [Փիլիպ. Բ. 7]: Եւ նոյն մարդն միածին Բանիւն[13] խառնեալ նոր խառնմամբ

[1] B բոլորովին
[2] B առ ի
[3] A այնորիկ
[4] A > և
[5] B Հօրէ
[6] B խորհրդոցնոց խորհրդոցն
[7] E քննել
[8] ACDE > վասն օծման ոք անուանի
[9] AD երանեալն
[10] A իւրոյ
[11] AC որ
[12] D առ
[13] B բան իմն

եղև միևնոյն Աստուած և մարդ՝ Աստուածն մարդացեալ, յայն սակս մարդն աստուածացեալ: Եւ թէ ոք ուրանայ զմարդեղութիւն տնօրէնութեանն ընդդէմ յարուցեալ աստուածային աշակերտքն[1] ասեն թէ. «Եւ մեք տեսաք և վկայեմք, և եթէ Հայր առաքեաց զՈրդի իւր փրկիչ աշխարհի: Եւ եթէ որ[2] ոք խոստովանեսցի[3] եթէ Յիսուս է Որդի Աստուծոյ, Աստուած ի նմա բնակէ, և նա[4] յԱստուած» [Ա. Յովհ. Դ. 14-15]: Եւ դարձեալ այսու ճանաչի հոգին Աստուծոյ, թէ[5] ամենայն հոգի, որ խոստովանի[6] զՅիսուս[7] մարմնով եկեալ՝ յԱստուծոյ է նա, ապա եթէ ոք[8] ոչ խոստովանի[9] զՅիսուս մարմնով եկեալ՝ չէ՛ նա յԱստուծոյ: Եւ ապա զոր բան ունիցի ի վերայ Որդւոյ մարդոյ իմանալ զեկն մարմնով, այլ վայելուչ է յաւետ որում արտաքոյ մարմնոյ[10] և բնութեամբ ոչ գոյ[11]՝ ընդ մեզ մարմնով լինելն և նովիմբ գալ յաշխարհս յայս՝ մնալով որ ինչ էրն: Արդ, եթէ եղև[12] մարդ Բանն՝ զի՞նչ է, զոր արգելու իմանալ նովաւ գոլ ամենայնի ի լինելութիւն, ըստ որում իմանին Աստուած և մշտնջենաւորակիցն Հօր, քանզի ոչ այլայլի Աստուած գոլով Բանն, եթէ եղև յառման մարմնոյ անձնաւորի[13] իմանալւոյ, և ոչ մարդ յարակցեալ յինքն[14], որպէս ասեն Ֆռանկք[15], որք նորաձևեն զհաւատս մեր ըստ Նեստորի, այլ ինքն Բանն եղեալ մարմին, որպէս ասացի, այսինքն՝ մարդ[16]: Քանզի եղիցի նմա և այսպէս օծանելն վայելուչ և առանց բանսարկութեան կոչեսցի և Յիսուս, որպէս և ինքն գոլով ըստ ճշմարտութեան փրկիչ, որ ըստ մարմնոյ ի կնոջէ զծնունդն կրեաց, քանզի այսպէս ապրեցոյց զժողովուրդ իւր, քանզի Աստուած եղեալ ի նմանութիւն մարդոյ, զի նովաւ և նախկին մարդկայինս ազգ վերաստեղծեսցի առ որ ի սկզբանն, քանզի ամենայն ինչ նովաւ եղև և[17] որ[18] ինչ[19] եղևն: Ընդ որում վայելէ փառք, պատիւ և զօրութիւն Հօր և Որդւոյ և[20] Հոգւոյն Սրբոյ՝ այժմ և յաւիտեանս յաւիտենից[21], ամէն:

Արդ[22], իրաւապէս բանս զկա[23] առցէ:

---

1 BE աշակերտօքն
2 A > որ
3 B խոստովեսցի
4 ACDE ինքն
5 B > թէ
6 A խոստովանեսցի
7 E զՔրիստոս Յիսուս] զՅիսուս
8 B և ամենայն հոգի որ] ապա եթէ ոք
9 A խոստովանեսցի
10 A > մարմնոյ
11 B գոյին
12 ACDE > եղև
13 E անձնաւոր
14 E յիքն
15 D ֆռանգք
16 B > մարդ
17 AE > և
18 C > որ
19 E > նովաւ եղև և որ ինչ
20 B > Որդւոյ և
21 B > յաւիտենից
22 B աստանօր
23 D վկայ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՐՈՏՆԵՑԻՈՅ՝ ՔԱՋ ՀՌԵՏՈՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԱՆ[1] ՐԱԲՈՒՆԱՊԵՏԻ[2], ԱՐԱՐԵԱԼ Ի ԲԱՆ ՍԱՐԳԱՐԷԻՆ, ՈՐ ԱՍԷ. «ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ՈՒՂԻՂ Է ԵՒ ՈՒՐԱԽ ԱՌՆԷ ԶՍԻՐՏՍ, ՊԱՏՈՒԻՐԱՆՔ ՏԵԱՌՆ ԼՈՅՍ ԵՆ ԵՒ ԼՈՅՍ ՏԱՆ ԱՉԱՑ, ԵՐԿԻՒՂ ՏԵԱՌՆ ՍՈՒՐԲ Է ԵՒ ՄՆԱՅ ՅԱՒԻՏԵԱՆ[3]»[ՍԱՂ. ԺԸ. 9]

Բնագիրը կազմված է հետևյալ վեց ձեռագրով.
A - Ձեռ. 2178, 49բ-64բ, B - Ձեռ. 1760 , 288ա-314բ, C - Ձեռ. 1850, 122ա-135ա,
D - Ձեռ. 1862, 233ա-244բ, E - Ձեռ. 8444, 162բ-181ա, F - Ձեռ. 9801, 99ա-117բ:

Բեր յետ ելանելոյ ի գագաթս լերանցս աստուածաբնակ Սինէի և Քորէբի[4], ի ճառագայթից աստուածային զեղմանէ լուսաւորեալ[5] դարձցուք աստուածառաք և աստուածուսոյց պատուիրանօք և վարդապետութեամբ առ մեծդ Ահարոն և առ աստուածընդիր[6] ծերակոյտսդ և առ նոր Իսրայէլդ ժողովուրդսդ աստուածատես:

Բայց զի ասէ ոմն ի հանճարեղաց, թէ ամենայն իրողութիւնս զչորս զայսոսիկ խնդրել պարտ է՝ «եթէ է՞», և[7] «զի՞նչ է», և[8] «որպիսի՞ ինչ է», և «վա՞ռն էր է»: «Զեթէ[9] է»-ն վասն այն խնդրի, զի են բազում անուանք, որք[10] ոչ են ենթակայացեալք[11], և ասին[12] որպէս եղջերուաքաղն[13] և արալեզն, վասն այսորիկ հարկ է յամենայն ասութիւն անուան խնդրել՝ եթէ որպէս է անուանեալ, նոյնպէս և է ենթակայացեալ: Իսկ յորժամ գիտեմք, եթէ ստուգիւ է ենթակայացեալ[14] և է՝ հարկ է ապա «զի՞նչ է»-ն խնդրել, թէ յորմէ՞ տեսակէ է՝ մարդ է, թէ՞ ձի[15]: Իսկ յորժամ զտեսակն ծանիցուք՝ թէ յորմէ է, վասն զի հոմանունք[16] բազում են, հարկ է ապաև «զորպիսի՞ ինչ է»-ն խնդրել՝ իբր թէ մարդ անունս[17] այս[18] քարէ[19] մարդ է, թէ՞ գրեալ և թէ իսկապէս մարդ: Իսկ «որպիսի ինչ է»-ն սահմանաւ ճանաչի կամ ենթագրութեամբ. սահմանաւ, որպէս՝ մարդ՝ կենդանի, բանաւոր, մտաց և մակացու-

[1] BC արդիւնական, E արդիւնաւոր
[2] BC վարդապետի, E վարդապետի հայոց] ռաբունապետի
[3] BC > և ուրախ առնէ զսիրտս, պատուիրանք Տեառն լոյս են և լոյս տան աչաց, երկիւղ Տեառն սուրբ է և մնայ յաւիտեան, EF և այլն] և ուրախ առնէ զսիրտս, պատուիրանք Տեառն լոյս են և լոյս տան աչաց, երկիւղ Տեառն սուրբ է և մնայ յաւիտեան, D > Տեառն լոյս են և լոյս տան աչաց, երկիւղ Տեառն սուրբ է և մնայ յաւիտեան
[4] D Քերոբի, E Քորեբայ
[5] F լուսաւորեալք
[6] E աստուածընտիր
[7] E > և
[8] E > և
[9] EF զի եթէ] զեթէ
[10] ABDF որ
[11] F ենթակայ ասացեալք] ենթակայացեալք
[12] ABCEF > և ասին
[13] D եղջերաքաղն
[14] D > իսկ յորժամ գիտեմք եթէ ստուգիւ է ենթակայացեալ
[15] D ձի է] ձի
[16] F հոմանուն
[17] C անունքս
[18] ABCDF > այս
[19] E քարեայ

թեան[1] ընդունակ, իսկ ենթագրու-
թեամբ, որպէս[2] մարդ[3] կենդանի
երկոտանի, լայնեղունկն, ծիծա-
ղական: Իսկ «վասն էր»-ն խնդրի,
թէ ի զի՞նչ պէտս ստեղծաւ մարդս՝
վասն զարդարելոյ զգալիսս, որպէս
թէ յի՞նչ պէտս են մահիճք՝ վասն
հանգստեան մարդկան: Այսպէս
ամենայն ինչ գոյացեալք յարար-
չէն վասն պիտոյից սակս[4] ստեղ-
ծան: Եւ ոչ երբէք ո՛չ Աստուած,
ո՛չ բնութիւնն, և ո՛չ արհեստն[5]
վայրապար և ձրի իրս երբէք ոչ[6]
է ստեղծ, այլ ամենայն ինչ սակս
պիտոյից ինչ ստեղծան, որպէս
յայտ արարից ի մի օրինակս և ի
միոջէն ծանիր և զայլսն ամենայն:
Դիցի մեզ ցորենոյ[7] բնութիւն[8]
գործ առաջի, քանզի ի բուսանելն
բնութիւնն ցորենոյն ոչ տայ թոյլ
մնալ ի գետնին, զի մի նեխեսցի[9]
ի գիջութենէ[10] երկրին, այլ վեր ըն-
ծիւղեալ[11] բարձրացուցանէ ծղօտս
արձակելով: Եւ զի ծղօտն ոչ կարէ
բառնալ զծանրութիւն ցորենալիր
հասկին, վասն որոյ[12] հանգոյցա-
կապ[13] կազմէ զծղօտն, զի տևել կա-
րասցէ ծանրութեան ցորենոյն: Իսկ
ի գոյաւորութեան ցորենոյն վասն
ցրտոյ և տՕթոյ զգեստաւորէ զնա[14]
պատճէնիւ: Իսկ վասն պահպանու-
թեան սերմնաքաղ թռչնոց փուշս
ի ծայրս պատճէնին կազմէ[15] առ
ի հերքել զթշնամին: Այսպէս և[16]
արուեստաւորն զինչ և կազմէ, յա-
ղագս պիտոյից ինչ կազմէ՝ վասն
այսց[17] պատճառաց «վա՞սն էր»-ն
խնդրի:

Բե՛ր այժմ[18] հետևեսցուք[19] բնա-
կան իմաստասիրացն ոճոյ. ի վերայ
արդարութեան[20] նախ խնդրեսցուք՝
թէ է՞ արդարութիւն, և զի՞նչ է, և
որպիսի՞ ինչ է, և վա՞սն էր է:

Գիտելի է, զի «եթէ՞ է»-ն ոչ
խնդրի վասն արդարութեան, զի[21]
իր[22], որ հոգի Աստուծոյ անուանա-
կոչէ զնա՝ ոչ է երկբայելի «զեթէ՞[23]
է»-ն վասն նորա, զի է՛ ստուգապէս՝
որպէս մարգարէս հոգովն ասէ, թէ՝
«Արդարութիւն Տեառն ուղիղ է[24] և
այլն[25]»:

Այլ խնդրել պարտ է՝ եթէ զի՞նչ
է: Իսկ «զի՞նչ է»-ն կա՛մ անուամբ
ճանաչի, կա՛մ սահմանաւ:
Անուամբ կոչի արդարութիւն: Իսկ
արդարութիւնն սահմանաւ բացա-
յայտի այսպէս[26]. արդարութիւն է
հաւասարաբաշխութիւն կամ չափ
միջոցի, դարձեալ՝ արդարութիւն է
ունակութիւն անձին կամ մակա-
ցութիւն հանդիպելեաց միջակօ-

1 CE մեկնութեան
2 ABCDF > որպես
3 F > մարդ
4 E > սակս
5 E արուեստն
6 E > ոչ
7 A ցորենու
8 ADEF բնութեան
9 D նեխիսցի, F նեխսեսցի
10 D գէջութիւնն
11 A ընծուղեալ
12 ABCDF > վասն որոյ
13 BC հակոյակապ, D հանկոյցապակ
14 F > զնա
15 D կազմէն
16 A > և
17 F այսոց
18 ABCDF > այժմ
19 D տեսցուք ընդ] հետևեսցուք
20 ABCEF > ի վերայ արդարութեան
21 E քանզի
22 B > իր
23 F զի եթէ] զեթէ
24 ABCDF են
25 BCE > և այլն
26 ABCDF > այսպէս

բեն, դարձեալ՝ արդարութիւն է համախոհութիւն անձին կամ բարէկարգութիւն անձին մասանց առ իրեարս և զիրերօք: Եւ բաժանի սա յերիս՝ նախ՝ ի բնական, որ է անբան, երկրորդ՝ ի բանական, որ և մակստացական[1], երրորդ՝ յաստուածաբանական:

Բնական կոչի[2] որպէս անբան անասնոցն[3], զի ըստ խառնուածոյ տարերցն յաւելուածոյ ունին[4] զազդումն գործոյ, որպէս երևի ի չորս անասունս[5], քանզի ասի՝ ուղտ՝ խոհեմ, առիւծ՝ արի, տատրակ՝ ողջախոհ և[6] արագիլ՝ արդար, վասն զի գծերացեալ հայրն[7] կերակրէ: Եւ զի անբանքն ունին բնութեամբ ի խառնուածն[8] իւրեանց[9] վասն այն[10] բնական կոչին[11]:

Իսկ բանական կոչի, ըստ որում և[12] իմաստութեամբն Աստուծոյ զեղեալ կարգ և զսահման անեղծ պահէ: Քանզի յամենայնումս՝ է՛ն[13], որ միայն իշխան են[14] որպէս Աստուած, և է՛ն[15], որ ընդ իշխանութեամբ են[16], բայց իշխեն[17] այլոց՝ որպէս մարդս, որ[18] ընդ[19] իշխանութեամբն Աստուծոյ է, բայց իշխէ անասուն կենդանեաց, իսկ անասունքն միայն իշխին և է՛ն ընդ իշխանութեամբ: Այսպէս ի փոքր աշխարհումս՝ որ է մարդ, ի հոգւոյն մասունս[20], քանզի եռամասնեայ գոլով ըստ Պղատոնի՝ բան, ցասումն և ցանկութիւն. իսկ[21] բանն միայն իշխան[22] և ոչ ընդ իշխանութեամբ, իսկ ցասումն ընդ իշխանութեամբ բանին, բայց իշխէ ցանկականին, իսկ ցանկութիւնն միշտ ընդ իշխանութեամբ: Իսկ արդարութիւն է պահել զսոսայ ի կարգ և ի չափ եղեալ սահմանին[23]. ի սոյն պատճառ Գիրք Սուրբ յորժամ հարկաւորի[24] յաղագս մասանց հոգւոյն արտաճառել, բաւական համարի[25] զարդարութենէ միայն ճառել[26], զի նա զամենայն պարունակեալ ունի մասունս: Երկրորդ պատճառ կոչի բանական, զի իմաստութեամբ չափէ զիւրաքանչիւր մասն հոգւոյ՝ վասն որոյ արդար կոչի: Քանզի խոհեմութեան վերի ծայրն խորամանկութիւնն է, և ներքինն՝ անզգամութիւնն, որ է տգիտութիւնն, բայց[27] արդարութիւնն չափ գոլով ոչ թողու գերազանցիլ կամ պակաս մնալ, այսինքն՝ խորամանկ գոլ կամ անզգամիլ[28]: Նոյն գունակ՝ ի ցասումն

---

[1] AB մակացական, F մացական, D մակացական (լուսանցքում ուղղված է՝ ստացական)
[2] ABDEF > կոչի
[3] E կենդանեացն
[4] ABDF ունի
[5] ABCEF > որպէս երևի ի չորս անասունս
[6] ABCDF > և
[7] E ծնօղսն
[8] D խառնուածքն, E խառնուածսն
[9] ABCDF > իւրեանց
[10] ADF այնր, E այնորիկ
[11] E կոչին
[12] E > և
[13] E է
[14] E է
[15] E է
[16] D Աստուծոյ են, E է
[17] E իշխէ
[18] ABCD > որ
[19] A > ընդ
[20] C մասունքս, E մասունսն
[21] E > իսկ
[22] E է իշխան
[23] A սահման
[24] CE հարկաւորին
[25] CE համարին
[26] D > բաւական համարի զարդարութենէ միայն ճառել
[27] ABCDF > բայց
[28] F անզգամ

է գերազանց[1]՝ յանդգնութիւն և նուազն՝ երկչոտութիւն, իսկ արդարութիւնն չափ եղ զարիութիւնն[2]: Սոյնպէս[3] ցանկականն վերին ծայրն ունի զվավաշոտ բղջախոհութիւնն[4], իսկ ներքին՝ զժլատութիւնն և անշարժութիւնն[5], իսկ արդարութիւնն սահման դնէ[6] ի միջոցին զողջախոհութիւնն[7]:

Իսկ մակստացական արդարութիւն կոչին[8], այսինքն՝ չափ, որ[9] և առաքինութիւն ասի, զի հանդերձ պատճառաւ միմէանց հետևին, քանզի որ պատճառաւ[10] է ողջախոհ՝ գիտէ, զի ի ժլատութենէ և յանառակութենէ անիրաւութիւնք լինին, այնպիսին և ի հարկէ արի գոյ՝ զախտն ստորադասելով, և[11] այնպիսին և[12] խոհեմ գոյ և արդար՝ վասն զի ի մարմնական հեշտութեանց լինին անիրաւութիւնք:

Իսկ մակստացական ասացաք վասն բնականաց՝ որ[13] անբանք[14] կոչին: Նախ, զի իմաստութեամբ ոչ ունի զառաքինութիւնն, այլ ի բնական խառնուածոցն[15], վասն որոյ բնական[16] կոչի[17] և անբան[18], զի անբանքն ունին և ոչ ի հարկէ հետևին միմէանց՝ որպէս մակստացականքս, որ[19] վերոյ ասացաք[20]: Քանզի ուղտ խոհեմ գոլով՝ ոչ է[21] արդար, իսկ արագիլ արդար գոլով՝ ոչ է ողջախոհ, իսկ տատրակ ողջախոհ գոլով՝ ոչ է արի, նաև առիւծ արի գոլով[22]՝ ոչ է խոհեմ, վասն զի ոչ կարէ զմիւսն ի վերայ միոյն[23] ստանալ, վասն այն ոչ[24] կոչի մակստացական, այլ բնական և անբան. բնական՝ վասն խառնուածոյն, և անբան՝ վասն[25] զի անբան[26] անասունքն[27] ունին զնա: Իսկ սա մակստացական կոչի, զի կարէ յետ անիրաւութեանն մակստանալ զարդարութիւնն և յետ բղջախոհութեանն ստանալ[28] զողջախոհութիւնն, սապէս[29] և զայլսն իմայ՝ վասն այնորիկ մակստացական կոչի:

Դարձեալ գիտելի է, զի զանազանութիւնն այսչափ է ի մէջ բանականին[30] և մակստացականին. զի բանականն[31] յորս կարգեալ է՝ ի նոյնն[32] մնայ անփոփոխ, որպէս ի[33] հրեշտակս, իսկ մակստացականն՝ որ յետ մեղանացն ստանայ, որպէս[34] մարդս:

---

1 CE ցասմանէ գերազանցն F ցասումն է գերազանց] ի ցասումն է գերազանց
2 BC զարդարութիւնն
3 D սոյն գունակ] սոյնպէս
4 BC խոհութիւնն
5 D անվարժութիւնն
6 E եդ
7 E զխոհեմութիւնն
8 E կոչի
9 D չափաւոր] չափ որ
10 F պատճառ
11 ADF > և
12 DE > և
13 E որք
14 F անբան
15 D խառնուածքն
16 E բնականք
17 E կոչին
18 E անբանք
19 E որք ի] որ
20 ADEF ասացան, B ասացին
21 BC որ չէ] ոչ է
22 ABCDF > գոլով
23 D միւսոյն
24 E > ոչ
25 ABCEF > վասն
26 A անբանք
27 E անբանքն] անբան անասունքն
28 AE > զարդարութիւնն և յետ բղջախոհութեանն ստանալ
29 C սոյնպէս
30 D բնականին
31 D բնականն
32 E նոյնսն
33 F > ի
34 BC նա որպէս] նա

*Այլև կոչի ըստ Արիստոտէ-
լի արդարութիւնն գործ բաշխո-
ղական գոլ այնմ՝ ինչ որ[1] ար-
ժանն է. ողջ պահել զհայրենի
սովորութիւնն ճշմարտապէս, առ
իրս ստուգաբար[2] բերեալս պահել
զխոստմունս: Այլև առաջին իրա-
ւունս առ Աստուածն, և առ դիսն,
և ապա առ հայրենիսն և ծնօղսն,
ապա առ անձն իւրսն[3], որովք[4] լի-
նի և բարէպաշտութիւնն մասն
արդարութեան և հետևին արդա-
րութեանն և՛ աստուածայնութիւն,
և՛ ճշմարտութիւն, հաւատ և չա-
րատեցութիւն:*

*Եկեսցուք յերրորդ[5] գլուխն և
ասասցուք վասն աստուածային
արդարութեան՝ որքան զօրէ միտք
մեր առ խորսն Աստուծոյ:*

*Արդ, զի հանդերձեալ եմք
վասն արդարութեանն Աստուծոյ
ճառել, նախ պարտիմք բանական
արուեստիւ[6] ներածիլ[7] ի մակացու-
թիւն աստուածաբանական իմաս-
տից: Եւ զի թէպէտ Արիստոտէլ
զամենայն գոյս ի[8] տասն բաժանէ[9],
ստորոգութիւնս մակագրէ, բայց
Օլոմպիադորոս փիլիսոփայն
զչորսն[10] միայն դնէ պարզ ստորո-
գութիւն, իսկ զայլ վեցն դնէ չա-
րամանութեամբ գոյանալ[11]՝ այսպէս
և ըստ[12] այսմ օրինակի. յէութենէ և
ի քանակէ, ասէ, գոյանալ զուրն և
զերբն, յէութենէ և յորակութենէ
գոյանայ առնելն և կրելն, յէու-
թենէ և յառընչէ գոյանայ[13] ունելն
և կալն: Իսկ պարզ ստորոգութիւն
միայն գոյացութիւն, քանակ,
որակ, առինչ: Իսկ ի սոցանէ գոյա-
ցութիւնն միայն ասի ի վերայ Աս-
տուծոյ, իսկ այլքն՝ որակն և քա-
նակն՝ ո՛չ, զի Աստուած անորակ և
անքանակ է: Բայց ըստ կերպի ինչ,
որպէս ի վերայ ստորնայնոցս,
ասի[14]: Որպէս գոյացութիւն պատ-
ճառէ զնոյնութիւն, որակութիւն՝
զնմանութիւն, իսկ քանակութիւն՝
զհաւասարութիւնն՝ այսպէս աս-
տուածային անձինքն ըստ գոյա-
ցութեան ունին զնոյնութիւն[15]
բնութեան յաւիտենական, զզօրու-
թիւն ամենակատար՝ ըստ նմանու-
թեան, զմեծութիւն՝ ըստ հաւասա-
րութեան[16]: Դարձեալ, է հաւասա-
րութիւն քանակութեանն, թէպէտ
ոչ յատկապէս յաստուածային ան-
ձինս, սակայն ասի քանակութիւն
ըստ եռակի. նախ, ըստ քանակու-
թեան զօրութեանն, որ հաւասար է
յերեսեանն՝ տէրութիւն, զօրու-
թիւն, իշխանութիւն, իմաստու-
թիւն և այլ սոյնպիսիքն, իսկ երկ-
րորդ, ըստ քանակութեան տևո-
ղութեան՝ որ է յաւիտենականու-
թիւն, երրորդ, ըստ քանակութեան
մեծութեան, յորս Աստուած է ի*

[1] BC որ ինչ] ինչ որ
[2] ADEF ստաբար
[3] ABCDF առանցն իւրսն] առ անձն իւրսն
[4] D որով
[5] D յերկրորդ
[6] CDF արհեստիւ
[7] B ձեր ածիլ, C ձեզ ածել, F ներգործել] ներածիլ
[8] D > ի
[9] ADEF > բաժանէ
[10] BCF զերեքն
[11] F գոյանայ
[12] C > ըստ
[13] ABEF > գոյանայ
[14] ABCEF > ասի
[15] D > որակութիւն՝ զնմանութիւն, իսկ քանակութիւն՝ զհաւասարութիւնն՝ այսպէս աստուածային անձինքն ըստ գոյացութեան ունին զնոյնութիւն
[16] C հարստութեան

ներս յամենեսեան և արտաքոյ ամենեցուն՝ որով պարագրէ և զետեղէ զամենեսեան[1]: Դարձեալ, յստեղծուածս գտանի երիս յեղանակ մեծութեան՝ ըստ ժամանակի[2], ըստ չափոյ, ըստ զօրութեան: Արդ, առաջին մեծութիւն է ի փոփոխական իրս, երկրորդ՝ է ի մարմնական իրս, երրորդն՝ յստեղծեալ հոգիսն[3]: Իսկ են ի[4] յաստուածային[5] յանձինսն[6] երիս հաւասարութիւն, որ պատասխանեն երիցս այսոցիկ. ի յաւիտենականութիւն՝ ի գոլն անփոփոխ, մեծութիւն՝ ի յանչափութիւն, զօրութիւն՝ ի կատարելութիւն: Արդ, է՛ այնքան հաւասարութիւն ի յԵրրորդութիւնն, մինչ զի երկուսն չեն ինչ մեծագոյն, քան զմինն, և ոչ մինն նուազ ինչ գոլ, քան զերկուսն: Իսկ առինչն ասի յԵրրորդութիւնն[7] որպէս Հայր և Որդի, բղխող և բղխեալ: Իսկ յատուկ է առընչին համանգամայն գոլ: Իսկ ըստ առինչ կերպի ցուցանի ի[8] նոյն Երրորդութիւնն համանգամայն գոլ ըստ էութեան, ըստ մեծութեան, ըստ զօրութեան՝ որպէս և յառաջ իսկ ասացեալ[9] ծանուցաւ: Արդ, եթէ ըստ բնական բանականութեան այսպէս հաւասարութիւն է ի մէջ Երրորդութեանն՝ յիրաւի ասէ մարգարէս, թէ՝ «Արդարութիւն Տեառն ուղիղ է...»:

Իսկ երկրորդ յեղանակ աստուածային արդարութեան՝ նախ ստեղծանել զգոյսս՝ զիմանալի գոյացութիւն, զիմանալի տեսակ, զգալի գոյացութիւն, զգալի տեսակ: Եւ զիւրաքանչիւր ոք ի նոցանէ ըստ յատկական պատահումից՝ ի գեղ և ի զարդս, նաև ի զօրութիւնս արժանապէս վայելչացուցանէ, տալ զիւրաքանչիւր զպէտս և զկարիս, նաև՝ զժամանակս և զյաւիտեանս, այսինքն՝ իւրաքանչիւր էութեան[10] զօգուտ իւր և զբարիոք կեալն, որպէս ասէ Գրիգոր Նիւսեայ ի գիրս Ժողովող՝ թէ Արարիչն ամէնիմաստ գիտութեամբ չափ եղ բարիոք կելոյ զմիջին ժամանակ ի խառնուածոց, և ոչինչ էութիւն[11] յստորինս գոլ թարց չափոյ և ժամանակի: Նախ, զի չափաւոր խառնուած տարերց՝ որ ունի զչափ հաւասարութեան ի տեսակ մարմնական, պատճառէ[12] զբարիոք գոլ, իսկ նուազ գոլն և անհաւասար ի չափ և ի ժամանակ՝ պատճառէ զտկարութիւն և զապականութիւն: Եթէ նախքան՝ զոր ի մէջն նուազութիւն և պակասութիւն՝ է անկատարութիւն, իսկ եթէ զկնի գոլոյն ի մէջն նուազութիւն և պակասութիւն[13] է պատճառ լուծման և ապականութեան, վասն որոյ ի սոյն միտս Սողոմոն ասաց՝ «Ժամ է և ժամանակ» [Ժողո. Գ. 1], այսինքն՝ չափ է[14] և ժամանակ ամենայն իրաց զմիջին

[1] B զամենայնսն
[2] D ժամանակոյ, F ժամանակին
[3] AE յոգիսն
[4] C > ի
[5] D աստուածայինսն
[6] BC յանձինքն, D > յանձինսն
[7] D > յերրորդութիւնն
[8] E և
[9] A ասացաւ, D > ասացեալ
[10] C էութիւն
[11] D > էութիւն
[12] A պատճառի
[13] D > է անկատարութիւն, իսկ եթէ զկնի գոլոյն ի մէջն նուազութիւն և պակասութիւն
[14] ABCEF > է

հաւասարութիւն գոլ բարիոք[1]: Եւ ոչ միայն ի նիւթականս, այլև յանն-նիւթսն. ըստ էութեան[2] ոչ թանձ-րագոյն՝ քան զգալիս[3], և ոչ ամե-նևին պարզ՝ որպէս զԱստուած, և ոչ ամենևին տկար՝ որպէս զգալիս, այլ ի մէջն բարիոք ունելով զօրու-թիւն, սապէս[4] և ըստ իմաստից և այլ սոյնպիսեաց: Ամենայն զմէջն չնորհեաց բարիոք պողոտայ տե-սութեան[5] փառաց Աստուծոյ[6] և այլն[7] ամենայն, այսպէս իմայ առ մարդիկ, յզգայականս, ի տնկա-կանս և յամենայն արուեստս զմի-ջինն գոլ բարիոք՝ որպէս և զօրի-նակ սոցին առաքինութիւնս յա-ռաջագոյն ծանուցի: Այս յաղագս զպիտոյսն բարիոք կելոյ այսչափ փոքր ի շատէ ծանուցաք[8] վասն զի ընդարձակ է խնդիրն սորա[9]:

Եկեսցուք և յերրորդ գլուխն վասն արդարութեանն Աստուծոյ, զոր գթածօրէն առ մերս ներգոր-ծեաց բնութիւն, զի պատրանօք զրկեալ[10] եղաք ի բարեաց, վերս-տին ժառանգեցոյց, յորմէ հա-նեալ եղաք, քանզի[11] բանսարկուն օձիւ պճնեալ բանապատիր թա-կարդմամբ մերկ կողոպուտ արար զմեզ: Ընդդէմ այսմ Բանն Աստու-ծոյ մարմնազգեստեալ արուես-տակեաց ծառայանկեալ[12] մարմինս հինգ[13] գալարմամբ զգայարանօքս՝ ի տիպ սողման օձին, թակարդեալ զվիշապն ահագին յայտ[14] յանդի-ման խայտառակեալ[15] նշաւակեաց[16] բևեռեալ ի խաչափայտն, զի որով մահ՝ նովիմբ և կեանք. եթէ մարմ-նով, եթէ զգայարանօք, եթէ փայ-տիւ՝ նովիմբ զբժշկութիւն[17] վերս-տին արուեստակեաց: Եւ թէպէտ այսպէս է[18], սակայն այլ իմն խորա-գոյն ունի տեսութիւն բանս, վասն զի ասէ Յովհան աւետարանիչն ի յԸնթհանրական թղթին, թէ՝ «Որ առնէ զարդարութիւն, արդար է՝ որպէս նայն արդար» [Ա. Յովհ. Գ. 7]:

Բե՛ր տեսցուք, որո՞յ արդարու-թեան նորա զմերս համեմատէ:

Արդ՝ գիտելի է, զի ե՛ն ի մեզ բնական[19] կիրք, ե՛ն և արտաքին ախտք: Բնական[20] է ի[21] մեզ մտացն ցանկալ և հետաքրքիր լինել յամե-նայն իրս: Ախտ է մեղկիլ և թու-լանալ մարմնոյն ի խոկմունս բաղ-ձալի, իրացն հեշտալեաց, քանզի հոգի մշտաշարժ գոլով անդա-դար է ի խոկմանց: Իսկ հանդիպիլ մտաց[22] հեշտալեաց՝ գայ բանսար-կուն և զհնարս չարեաց հեշտա-լեացն գործոց ծանուցանէ, խառ-նեալ[23] ընդ պարզին զախտ հեշտու-թեանն և այսու տոռամբ մեղկեալ[24]

1 D բարիոք ասաց
2 AE էութենէ
3 D անզգալիս
4 C սոյնպէս
5 AE տեսութեամբ
6 ABCEF > Աստուծոյ
7 A այն
8 BC ծանուցի
9 D > սորա
10 AD զրկել
11 BC > քանզի
12 BC զծառայական
13 E եւթն
14 BC > յայտ
15 D խայտառակեաց
16 A նշաւակեց, D > նշաւակեաց
17 F զբժշկանութիւն
18 F >է
19 C բանական
20 C բանական
21 ADE > ի
22 BC > մտաց
23 BC խառնել
24 D մեղկացուցանէ

թուլացուցանէ մինչ հանգչել ի նոյն մեղկի, այսինքն՝ թուլանայ ի չարեացն գործ՝ աւարտեալ[1] զմեղկութիւնն յանօրէնութիւն, քանզի[2] ասէ աւետարանիչն, թէ քանզի «Եւ մեղքն իսկ[3] անօրէնութիւն է» [Ա. Յովհ. Գ. 4]: Եւ դիցի օրինակ ի մէջ[4] ոսկի կամ գեղ կնոջ, արդ, որոք ի սոցանէ խոկայ միտք՝ իբր մտօքն խոկմամբ ստացեալ անեղ կատարմամբ մեղկի մարմինն՝ յուսով հեշտութեանն: Իսկ թէպէտ Գիրք Աստուածաշունչք արկանեն ի յիմանալի խոկմունս զհանդերձեալ փառս, հեշտանայ միտքն, բայց մարմինն ոչ մեղկի, զի ոչ ունի հեշտանալ անդ մարմնոյն, այլ[5] առաւել ևս պնդի, մինչ զի արտօսր հեղուլ ի ճնշմանէն: Իսկ ի տեսանել[6] ոսկի[7] և ի գեղ կնոջ՝ մեղկի մարմինն անեղ կատարմամբ, յուսով փառաց կամ պոռնկութեան[8], վասն այն սոքա մեղք կոչին և անօրէնութիւն: Իսկ արդարութիւն է հաւասարաբաշխութիւն: Իսկ հաւասարութիւն[9] ոչ միայն յարտաքին[10] իրս, այլև ի ներս ի մեզ՝ ի մէջ[11] խորհրդոյ և մարմնոյ, զի մարմին է ի ներքոյ քաղցի և ծարաւի և ննջման և այլ սոյնպիսեաց հարկաւոր կրից, իսկ հոգւոյն քաղց և ծարաւ՝ խոկմանց իմաստից գիտութեան[12] և ամենայն[13] առաքինութեան: Իսկ Բանն Աստուած իջեալ յարգանդ կուսին, առեալ զմարդկային բնութիւնս, եղև մեզ սահման արդարութեան՝ զհարկաւոր կիրսն կրելով՝ զքաղց[14], զծարաւ և զայլ ամենայն զանանդոսնելի հարկաւոր[15] կիրս: Իսկ ի[16] մեղկութենէ է[17] բնաւ արտաքոյ[18] գտեալ, որպէս ինքն հրամայէ, թէ՝ «Ո՞վ յանդիմանեսցէ զիս վասն[19] մեղաց» [Յովհ. Ը. 46], և թէ՝ «Գայ[20] իշխան աշխարհիս այսորիկ և յիւրոցն յիս ինչ ոչ գտանէ» [Յովհ. ԺԴ. 30]: Եւ այսպիսի արդարութեամբ ազատեաց զբնութիւնս ի հարկէ սատանայի, որ և ամենայն առաջինքն տկարացան ի սմայ[21]՝ յաղագս որոյ սատանայ[22] զրպարտէր զբնութիւնս մեղանացն պատճառաւ: Տէր մեր զստութիւն նորա խայտառակեաց՝ զնա գոլ պատճառ և ոչ զբնութիւնս, զորոյ զչափ բնութեանս եցոյց ի ներգործական իրսն[23] իւր արդարութեան զհարկաւորսն ընդունել՝ որ բնութեանս էր սեփհական արդարութիւն և ոչ մեղք: Իսկ զաւելորդսն, որ արկած էր սատանայի և էր մեղք, ոչ ընկալաւ: Յայսմանէ յայտ եղև՝ բնութիւնս արդար և սատանայ մեղանչական:

---

1 AD աւարտել
2 D զի
3 BC > իսկ
4 D միջի
5 D > այլ
6 ADEF ստանալ] ի տեսանել
7 ADEF ոսկոյ
8 ACE պոռնկութեամբ
9 BC հաւասարաբաշխութիւն
10 E է յարտաքին
11 E է ի մէջ] ի մէջ
12 C գիտութեանց
13 D > ամենայն
14 F քաղցր
15 BC > հարկաւոր
16 F > ի
17 DF > է
18 D որ արտաքոյ
19 BC > վասն
20 D գան
21 D սմանէ
22 D սատանայի
23 BCDF կիրսն

Բե՛ր ասասցուք[1] զչորրորդ գլուխն արդարութեան՝ որ է վճիռ հատուցման, վասն որոյ[2] ասէ մարգարէն, թէ[3] «Բարի առնէ Տէր բարեաց, և այնոցիկ, ոյք ուղիղ են սրտիւք, իսկ զթիւրեալսն յափշտակութեամբ տանի ընդ այնոսիկ, որ գործեն զանօրէնութիւն» [Սաղ. ՃԻԴ. 4], և Տէրն հրամայէ[4], թէ՝ «Որոց[5] զբարիս գործեալ՝ յարութիւն կենաց և որ զչար արարեալ՝ յարութիւն դատաստանաց» [Յովհ. Ե. 29], և առաքեալն, թէ[6] «Մեզ ամենեցուն յանդիման լինել կայ առաջի ատենին Քրիստոսի, զի ընկալցի իւրաքանչիւր մարմնով զոր ինչ գործեաց՝ եթէ բարի և եթէ չար» [Բ. Կորն. Ե. 10]:

Բայց գիտելի է, զի յամենայն գործս Աստուծոյ գտանի արդարութիւն և ողորմութիւն, այլ արդարութիւնն երբեմն է ծածկեալ և ողորմութիւնն յայտնի, որպէս ի ժամանակս[7] դարձին հեթանոսաց՝ ի միում բոպէ[8] արդարացուցանել ամբարշտին: Երբեմն արդարութիւնն է յայտնի և ողորմութիւնն ի ծածուկ՝ որպէս ի պատիժ[9] մանկանց մեռելոց առանց մկրտութեան յերկրորդ գալուստն Քրիստոսի խաւարաւ տանջել[10]: Եւ երբեմն երկոքինն ի[11] ծածուկ իւրաքանչիւր նեղութիւն արդարոց և անմեղաց՝ որպէս Յոբայն և մանկանց անմեղաց[12] հաշմութիւն[13] և հիւանդութիւն: Երբեմն երկոքինն յայտնի՝ որպէս իւրաքանչիւր արդարոց և մեղաւորաց, զի զոմանս առաւել փառաւորէ, քան զարժանն, և զոմանս առաւել[14] պատժէ, քան զարժանն:

Բայց է[15] իմն խնդիր աստանօր, թէ վա՞ն էր ի միում բոպէի հեշտացեալս ի մեղս[16], անվճար յաւիտենիւ տանջէ[17] զի՞նչ արդարութիւն ուղիղ է այն:

Ասեն վարդապետք եկեղեցւոյ, թէ արդար դատաստանաւ պատժին մեղաւորք յաւիտեանս՝ վասն չորս պատճառի: Նախ, զի մեղանչեաց յիւրում յաւիտենին՝ յիրաւի պատժի Աստուծոյ յաւիտենին: Երկրորդ, զի յանհուն և յանվախճան պատուիրանն[18] մեղանչեաց՝ պարտ է, զի անհուն յաւիտենիւ տանջեսցի: Երրորդ, զի ոչ միայն անցաւորաւս և ապականացուաւս[19], այլ յաւիտենականաւն մեղանչեաց[20] հոգովն՝ վասն այն յաւիտեան տանջի: Չորրորդ, զի ընդ յաւիտենական չարին կամօք միացաւ ընդ նմա՝ յաւիտեան[21] պարտ է տանջիլ: Իսկ թէպէտ և այս ստուգի ըստ եղանակի երկրաւոր դատաստանի, զի ի միում բոպէի վաճառեալն՝

1 BC տեսցուք
2 BC այսորիկ, F զի] որոյ
3 BC > թէ
4 E հրամայէր
5 B որ] թէ որոց
6 ABE > թէ
7 E > ժամանակս
8 E բոպէի
9 C ժամանակ
10 F > ի
11 ABCEF > խաւարաւ տանջել
12 D անմեղաց և մեղաւորաց
13 BCDF խաշմութիւն
14 ADEF սակաւ
15 C > է
16 ABCEF > ի մեղս
17 BC > տանջէ
18 ABCEF > պատուիրանն
19 BCE > և ապականացուաւս
20 C մեղանաց
21 BC > յաւիտեան

յաւիտեան ժառանգէ[1], և ի միում բոպէի խոցուած՝ յաւիտեան ունի սպի[2], և ի միում բոպէի փորեալ աչք՝ յաւիտեան ունի կուրութիւն: Իսկ ինձ թուի, թէ[3] վճիռ յԱստուծոյ ի վերայ մեղուցելոցն[4] արդար դատաստանն եղեալ՝ ի միում բոպէի մեղուցեալ, ի միում բոպէի զղջումն[5] ամօթոյ խոստովանութեամբ ընդունել՝ և թողութիւն գտանել[6]: Իսկ յորժամ զԱստուծոյ վճիռն ոչ հաւանի ընդունել, այլ[7] իւրով անիրաւ վճռաւն յաւիտեան խոտորելով՝ յաւիտեան տանջի: Իսկ Աստուած չար ոչ կարէ առնել[8], վասն զի ամէնևիմբ բարի է, այլ իւրաքանչիւր ոք[9] ազատ կամօք զորս ընտրէ՝ ժառանգէ, եթէ զբարի գործս՝ զարքայութիւնն յաւիտենական[10] և եթէ զչար գործս՝ զյաւիտենական տանջանսն. ոչ թէ Աստուած է պատճառ տանջանացն, քա՛ւ լիցի, այլ իւր ազատ կամքն[11] և[12] չարաչար ընտրութիւնն:

Իսկ ե՛ն ոմանք, որ ասեն, թէ յորժամ Աստուած չար ոչ առնէ, այլ ամենայն ի նմանէ տուրք՝ բարիք են և պարգևք կատարեալք են[13], է՞ր վասն տեսանեմք զբազումս, որ կրեն պատիժ յայսմ աշխարհի:

Առ որս ասեմ, թէ կրեն մարդիկ պատիժ վասն վեց պատճառի, և իւրաքանչիւր ոք[14] աւարտ ունի զբարին: Նախ, տանջին մարդիկ հիւանդութեամբ, խաշմութեամբ, կաղութեամբ, կուրութեամբ և այլ սոյնպիսօք, զի զգործեցեալ մեղսն քաւեսցեն, ըստ այնմ, որ հրամայէ Տէրն, թէ[15] «Ողջացար, այլ մի[16] ևս մեղանչէր» [Յովհ. Ե. 14]: Երկրորդ, ասեն տանջին զառհաւատչէայ յաւիտենական տանջանացն, առ ի նշանակել զստուգութիւն դատաստանին Աստուծոյ[17], որպէս Հերովդէին՝ զի աստ և անդ տանջին այնպիսիքն: Երրորդ, զի տանջանք մարմնոյն խոտորեցուցանէ ի չարէ, որպէս Պօղոսին խայթ մարմնոյն տուան[18] սատանայ կռուփ[19] փքացման, զոր ինքն խոստովանէր[20]: Չորրորդ, ասի թոյլ տա կրել տանջանս, զի անդ դերաբնապէս փառաւորեսցէ՝ ըստ այնմ, թէ՝ «Բազում նեղութեամբ պարտ է մեզ մտանել յայն հանգիստն[21]» [Գործ. ԺԴ. 21]: Հինգերորդ, զի փառաւորեսցի որդի մարդոյ՝ ըստ այնմ, թէ՝ «Ո՛չ սորայ[22] է վնաս[23] և ո՛չ հօր և մօր[24]» [Յովհ. Թ. 3], զի կոյր ծնաւ, այլ զի փառաւորեսցի որդի մարդոյ: Վեցերորդ, զի օրինակ համբերութեան լիցի բազմաց՝

[1] BCDF ժառանգութիւն
[2] C > և ի միում բոպէի խոցուած յաւիտեան ունի սպի
[3] D > թէ
[4] E մեղուցելոյն
[5] E զղջման
[6] ABCEF > և թողութիւն գտանել
[7] ABCEF > այլ
[8] C առնուլ
[9] F > ոք
[10] D > յաւիտենական
[11] E կամօքն
[12] ABC > և
[13] C > են
[14] ADEF > ոք
[15] D > թէ
[16] D մի այլ] այլ մի
[17] ADEF > Աստուծոյ
[18] DE տուաւ
[19] D կռուք
[20] C խնդրէր
[21] F հանգստեան
[22] B սիրէ
[23] ABCEF մեղ
[24] AE ոչ մօր

որպէս Աբրահամ և Յոբ[1]: Ապա ուրեմն, յայտ եղև[2] մեզ յասեցելոցս արդարութեան, որ ըստ աշխարհի և ըստ[3] Աստուծոյ: Բայց ծանի՛ր, զի որպէս ընդհանուր է որակութիւն, քան զորակ, այսպէս արդարութիւն պարունակական է, քան զարդար: Եւ այս յաղագս այսորիկ այսքան:

Բե՛ր տեսցուք և զերկրորդ գլուխն՝ զՏեառն անունն: Եւ նախ ասասցուք՝ զի՞նչ է անուն, և ապա թէ՝ վա՞ռն էր եդաւ աստանօր տերունական անուն:

Ըստ քերթողացն անուն է մասն[4] բանի հոլովական՝ մարմին կամ իր նշանակելով. մարմին՝ որզան՝ քար, իր, որպէս՝ խրատ, հասարակական կամ յատկական. հասարակ՝ որպէս՝ մարդ, հատկական[5] որպէս՝ Պօղոս: Իսկ ըստ[6] իմաստասիրացն անուն է ձայն նշանական ըստ շարադրութեան առանց ամանակի, որոյ մասն զատեալ ոչինչ նշանական՝ որոշակի, ուղղակի: Աստանօր ձայնն եդաւ ի տեղի սեռի, իսկ այլ[7] բառքն ի տեղի բաղկացուցիչ զանազանութեանց: Ձայն ըստ յոլովից բերի՝ ըստ նշանականի[8] և աննշանի[9]. վասն այն եդաւ նշանական, զի զատուսցէ յաննշան[10] ձայնից անասնոց: Իսկ ըստ շարադրութեան, այսինքն՝ կամաւոր խոկմամբ և բառի կարգեալ, որ զատուսցէ ի նուագաւոր և յարուեստական ձայնից: Իսկ առանց ամանակի, զի զատուսցէ ի բայէ[11], որ զէրն և զեղիցին նշանակէ: Իսկ որոյ մասն ոչինչ զատեալ նշանական՝ զի տարբերեսցէ[12] ի բանէն, որոյ[13] մասունքն զատեալ նշանակեն: Իսկ որոշակին՝ զի զատուսցէ յանորոշ[14] անուանէն, որ է ոչ մարդն, ոչ ողջէն: Իսկ ուղղակի՝ զի տարբերեսցէ ի հոլով անուանէն, իբր Փիլոնի, Փիլոնայ: Այս[15] եթէ զինչ է[16] անուն ըստ[17] սահմանի:

Բե՛ր տեսցուք՝ զի՞նչ աղագաւ ամենայն իրի անուն կոչեցեալ եղև:

Որպէս վկայէ Գիրն Աստուածային, թէ զամենայն, զոր ստեղծ Տէր[18] Աստուած, առեալ ած առ Ադամ՝ տեսանել զի՞նչ կոչեսցէ[19] անուն, և իւրաքանչիւր ումեք՝ զինչ և կոչեց Ադամ, այն անուն է նոցա [Ծնն. Բ. 19]: Ապա և[20] ոչ ինչ է յեղելոցս, որ ոչ ունի անուն:

Բե՛ր ըստ խոստմանն մերում տեսցուք: Գիտելի՛ է, զի հարկաւոր է անուն[21] առ[22] ի գիտութիւն յատկութեան էին՝ յիւրաքանչիւր տեսակաց և անհատից, զի որպէս

1 F Յակոբ
2 F յայտնել և] յայտ եղև
3 BC > ըստ
4 D մարմին] մասն
5 ADEF հատկապէս
6 C > ըստ
7 F > այլ
8 ADE նշանակի
9 ADE աննշանակի
10 D յաննշանական

11 BCDF բառէ
12 F տարբերութիւն է
13 ADEF որ
14 BC յանորիշ
15 BC այսքան
16 B իցէ
17 BC > ըստ
18 D > Տէր
19 AD կոչեսցի
20 AEF > և
21 D > անուն
22 C > առ

սահմանն յայտնի առնէ զբնութիւն էին՝ այսպէս և անուն: Վասն որոյ ասացեալ եղև յիմաստասիրացն, թէ անունն է սահման կարճառօտ, և սահման է անուն ծաւալեալ, վասն զի զոր[1] սահմանն ընդ երկար բանիւ յայտնէ զբնութիւն, որպէս՝ մարդ՝ կենդանի բանական[2], մահկանացու, մտաց և մակացութեան ընդունակ՝ յատկացուցանելով զբնութիւն մարդոյ յամենայն տեսակաց. այսպէս միով կարճ բառիւ անունն յատկացուցանէ յայլոց տեսակաց՝ ասելով մարդ՝ յատկացոյց յամենայն[3] տեսակաց, վասն այսորիկ ամենայն իրի հարկաւոր է անուն:

Բայց գիտելի՛ է, զի ըստ երից եղանակաց կոչի անուն ըստ իմաստասիրացն՝ հոմանուն, փաղանուն, յարանուն: Իսկ ըստ քերթողացն դարձեալ ըստ երից ասի անունն՝ յիրէն, ի ձայնէն և ի գործոյն. յիրէն՝ որպէս սափոր, ի[4] ձայնէն՝ որպէս ճնճղուկ, ի գործոյն՝ որպէս սողոց:

Բե՛ր տեսցուք, եթէ այն անուն՝ տիրական, ըստ որու՞մ եղանակի եդաւ, և կամ ո՞վ եդ, և այժմ զի՞նչ պատճառաւ առեալ ասէ մարգարէս[5]:

Գիտելի՛ է, զի Աստուած ոչ ունի անուն յայտնիչ բնութեան, զի ոչ ոք գիտէ զԱստուած՝ ո՛չ հրեշտակք և ո՛չ մարդիկ[6], որպէս աւետարանիչն վկայէ, թէ՝ «զԱստուած ոչ ոք ետես» [Յովհ. Ա. 18], այսինքն՝ ոչ գիտաց, իսկ որ յամենայն բանականաց անհաս է, զի՞արդ կոչէ ոք անուն նորա յայտնիչ բնութեան: Յայտ է[7], թէ ի մարդկանէ և ի հրեշտակաց անկար է անունակոչել[8] զնա: Իսկ ինքն որպէս գիտէ զինքն ի հարցանել նահապետին Յակոբայ՝ «Զի՞նչ է անուն քո», պատասխանէ՝ «Զի՞ հարցանես զանուն իմ» [Ծնն. ԼԲ. 29], թէ է՞ր վասն՝ զի սքանչելի է. որպէս ասէ մարգարէն, թէ՝ «Սքանչելի է անուն քո ի վերայ ամենայն[9] երկրի» [Սաղ. Ը. 2, 10]: Եւ ամենայն առաքեալք և մարգարէք սքանչացմամբ առնչանակէն զԱստուած, որպէս Դաւիթ՝ «Ո արար[10] զերկինս և զերկիր» [Սաղ. ՃԺԳ. 15, ՃԻ. 2 և այլն], և առաքեալ, թէ՝ «Ո խորք մեծութեան» [Հռոմ. ԺԱ. 33], այսպէս և Յուդիթ՝ «Ո որ[11] արարիչդ ես ջրոյ» [Յուդիթ. Թ. 17] և բազումս գտանէս ի Գիրս Աստուածաշունչս:

Արդ, եթէ ոք ասիցէ, եթէ Աստուած զի՞արդ ոչ ունի անուն, իսկ այն զի՞նչ է, զոր ինքն Մովսէսի ասաց, թէ՝ «Ես եմ, որ էն» [Ելք. Գ. 14]: Գիտասցէ, զի այն ոչ է յայտնիչ բնութեան, այլ յայտնիչ ժամանակի և ցուցանէ զմշտնջենաւորութիւնն՝ թէ մի՛շտ եմ, իսկ զբնութիւնն՝ թէ զի՞նչ է՝ ոչ յայտնէ: Ապա ուրեմն յայսմ ամե-

[1] BC > զոր
[2] AEF բանաւոր, D բանաւոր կենդանի] կենդանի բանական
[3] BC յամենայնոց
[4] C > ի
[5] BC մարգարէն
[6] ACDE մարդիկք
[7] ABCDE յայտնէ] յայտ է
[8] F անուն կոչել] անունակոչել
[9] AE > ամենայն
[10] D արար զհրեշտակս ո արար
[11] D > որ

նայնէ[1] յայտ եղև, թէ Աստուած ոչ ունի անուն յիրէն, այլև ոչ ի ձայնէն, զի ոչ ունի մարմին, լեզու և մակալեզու, յորմէ ձայն բացակատարի՝ վասն այն ոչ կոչի նմա անուն[2] ի ձայնէն: Իսկ ապա այս անուանքս՝ «Աստուած», «Արարիչ», «Տէր[3]», «Դատաւոր» և այլ սոյնպիսիք ըստ որու՞մ եղանակի են կոչեցեալ: Յայտ է[4], թէ ըստ երրորդ յեղանակին, այսինքն՝ ըստ ներգործութեան բարեխնամ կամաց, զի միշտ ներգործէ առ իւր արարածս՝ յայնմանէ անուն կոչեցեալ եղև. որպէս թէ յառնելոյն[5] «Արարող», ստեղծանելոյն յոչընչէ՝ «Ստեղծող», ի տիրելոյն՝ «Տէր», ի դատելոյն՝ «Դատաւոր», և այլ սոյնպիսիք անուանք[6] ի բարերար ներգործութեանց կոչեցեալ[7] եղեն:

Բայց է իմն զանազանութիւն ի մէջ այսպիսի անուանց աստուածային ըստ երկոտասան յեղանակի: Եւ է՛ն այսոքիկ. նախ՝ էական, երկրորդ՝ անձնական, երրորդ՝ առնչական, չորրորդ՝ իբր առնչական, հինգերորդ՝ դրական, վեցերորդ՝ գերադրական, եւթներորդ՝ փոխաբերական, ութներորդ՝ բագձածական, իններորդ՝ արարչական, տասներորդ՝ արքունական, մետասաներորդ՝ հիացական, երկոտասներորդ՝ բացբարձական: Էական՝ ըստ այնմ[8], որ առ Մովսէս, թէ՝ «Ես եմ՝ որ էն» [Ելք. Գ. 14]. անձնական՝ ծնող, ծնունդ, բղխումն. առնչական՝ որպէս հայր, որդի, բղխող, բղխեալ. իբր առնչական՝ ստեղծող, ապաւէն. դրական՝ որպէս արդար, իմաստուն, բարի. գերադրական՝ որպէս թէ արդար արդարոց և սուրբ սրբոց, իմաստուն իմաստնոց, բարի բարեաց, թագաւոր թագաւորաց. փոխաբերական՝ որպէս թէ առիւծ, գառն, եզն, վէմ և այլ սոյնպիսիք. բագձածական՝ երրորդութիւն, երրեակ. արարչական՝ որպէս աստուած[9], արարիչ[10]. արքունական՝ որպէս դատաւոր, թագաւոր և իշխան. հիացական՝ որպէս թէ՝ «Ո հովեսդ Իսրայէլի» [Եզեկ. Լ Դ. 2], «Ո, որ[11] արարիչդ ես ջրոյ» [Յուդիթ. Թ. 17], «Ո որ և[12] զհայելն ինձ ի կին մարդ ծանր[13] գրեցեր» [Մատ. Ե. 28]. բացբարձական՝ որպէս թէ՝ անհաս, անորակ, անքանակ, անուր, աներբ: Իսկ բացբարձականքս և հիացականքն պատուականք են, քան զդրականն[14], զի ի գիտութիւնն Աստուծոյ առաւել մերձեցուցանեն բացբարձականքն, քան զդրականքն, զի ասելն, թէ Աստուած ոչ է[15] յէիցս՝ յաւէտ հպեցուցանէ[16] ի խորս աստուածային, քան թէ ասել գեղեցիկ կամ[17] արդար և այլ սոյնպիսիս[18], զի սոքա արա-

---

1 BC յայսմանէ] յայսմ ամենայնէ
2 BC անուն նմա] նմա անուն
3 D > Տէր
4 D > յայտ է
5 E յառելոյն
6 C անունք
7 DF կոչեցեալք
8 AE այն

9 F > Աստուած
10 C արարիչ, աստուած] աստուած, արարիչ
11 CD > որ
12 BCD > և
13 D առ ի ծանր
14 E զդրականքն
15 C >է
16 F հաւէտ հասուցանէ] հպեցուցանէ
17 BCև
18 EF սոյնպիսիք

բածական և եղական կարծեցուցանեն: Իսկ հիացականն և բացբարձականն հեռացուցանեն յարարածոց և արժանաւոր աստուածային խոկմանցն կացուցանեն զմիտս:

Եւ այս[1] յաղագս աստուածային անուանցս այսքան[2]:

Բե՛ր տեսցուք, եթէ անունս այս՝ «Տէրն», յումէ[3]՞ եղեալ եղև:

Գիտելի է, զի Աստուած անուն և արարիչ՝ Ադամ կոչեաց, իսկ տեառն և աստուծոյ՝ Ենովս, դատաւոր և յաւիտենական՝ Աբրահամ: Իսկ թէ ընդէ՞ր աստանօր մարգարէս ի կիր էառ զտիրական անունս՝ առ ի յերկիւղ դատման անարդարոց, զի ծանուսցէ[4], թէ տէր և դատիչ է անիրաւաց և վրէժխնդիր անուղղայ ընթացողաց՝ յայս սակս ասէ մարգարէս, թէ՝ «Արդարութիւնք Տեառն ուղիղ է[5]... » և այլն[6]:

Բե՛ր տեսցուք զերրորդ գլուխն՝ զուղղութիւն արդարութեան Տեառն, որ ասէ, թէ՝ «Արդարութիւնք Տեառն ուղիղ են[7]...»:

Նախ տեսցուք[8], թէ զի՞նչ է[9] ուղղութիւն. ուղղութիւն է անխոտոր ճշմարտութիւն: Բե՛ր տեսցուք յայսմ վայրի, թէ ըստ քանի եղանակի թիւրի ուղղութիւն արդար իրաւանց. նախ՝ ըստ տգիտութեան[10], երկրորդ՝ ըստ ակնառութեան, երրորդ՝ ըստ ագահութեան, չորրորդ՝ ըստ երկիւղի, հինգերորդ՝ ըստ ոխակալութեան, վեցերորդ՝ ըստ անհոգութեան, այսինքն՝ վասն անփոյթ առնելոյ: Եւ արդ գիտելի՛ է, զի ըստ տգիտութեան թիւրի ուղղութիւն իրաւանց, նախ, յորժամ ոչ լինի կրթեալ և վարժեալ աստուածային իրաւամբք՝ չգիտելով զընտրութիւն զբնական և զգրաւորական և զաւետարանական օրէնս: Եւ դարձեալ, ի բնականսն[11] զբարոյականսն՝ որ է առանձնական և զտնօրինականն՝ որ է միոյ տան և զքաղաքականն՝ որ է հասարակականն: Իսկ ի[12] գրաւորական օրէնսն գիտել զգանազանութիւն[13] օրինացն զմիշտ[14] պահելին և զոչ միշտ սոյնպիսին, զի ե՛ն ի նոցանէ, որ ստուերական ունին տիպ և ե՛ն, որ միշտ[15] ճշմարտութեան: Իսկ յաւետարանականս՝ ե՛ն, որ խրատական են և ե՛ն, որ պատուէրք են, ե՛ն, որ յանձնառական են, ե՛ն՝ որ հրաժարական են, և ե՛ն ի նոցանէ, որոց յանցանքն[16] ներելի է[17], և է՛, որ մահու չափ է. վասն որոյ հարկ է զայս ամենայն գիտել յառաջին գլուխն՝ որ դատաստան իրաւանց ոչ թիւրի[18]:

Տեսցուք զերկրորդն՝ որ է ըստ ակնառութեան: Եւ սա[19] լինի ըստ վեց կերպի. նախ՝ յորժամ մի կողմն ի դատախազիցն յաղգայնոց և յա-

[1] D > այս
[2] F ասացաք
[3] BC յումեմէ
[4] D ծանիցէ
[5] AE > ուղիղ է
[6] BC > և այլն
[7] BC է
[8] D տեսանեմք
[9] F >է
[10] F տգիտութենէ
[11] F բանականսն
[12] F > ի
[13] C զգանազան
[14] BC զոչ
[15] F վիշտ
[16] ABCEF անցումն
[17] BCD են
[18] BC զչթիւրի] ոչ թիւրի
[19] F նոյն

բեան մերձաւորաց դատաւորին իցէ, երկրորդ՝ ի բարերարաց[1] և ի սիրելեաց իցէ, երրորդ՝ թէ[2] ի[3] հնազանդելոց[4] և ի մտերիմ ծառայից իցէ[5], չորրորդ՝ թէ[6] յիմաստնոց և ի պատուաւոր արուեստագիտաց իցէ, հինգերորդ՝ թէ ըստ[7] հասակին և ըստ ձևին և ի խօսս պատրողական ճարտարից իցէ, վեցերորդ՝ թէ ի մեծամեծաց ոք իցէ՝ ակն առնու դատաւորն և թիւրէ զուղիղ դատաստանն:

Տեսցուք երրորդ գլուխն, որ է[8] ագահութիւն, զի թէպէտ ագահութիւն ըստ իւրում մասին բաժանման[9] ըստ իմաստասիրացն բաժանի ի վեց՝ որ[10] են այսոքիկ: Նախ՝ բռնաւորացն, որ են թագաւորք, կուսակալք և կողմնակալք[11], որ ոչ օրինադրեալ տասանորդօքն շատանան, այլ բռնութեամբ զրկանօք վարին: Երկրորդ՝ աւազակք[12], որ ի կիրճս ճանապարհաց[13] դեգերին և յաւար գեղից[14] և քաղաքաց: Երրորդ՝ գողք, որ միշտ սպասեն ական հատանելոյ և գողանալոյ[15]: Չորրորդ՝ վաճառազրկութիւնն, որ ի փողոցս և ի կրպակս ագահին[16] անողորմապէս: Հինգերորդ՝ որ ի կարգ սրբութեան[17] կրօնից զգէ եղականն խառնեն բորոտութիւն: Վեցերորդ՝ որ յիրաւունս և ի դատաստան արդար յաթոռ[18] ժանդից նստին, կուրութեամբ չլացուցանեն զմիտս կաշառօք ոտնակապին ընթանալ յարքունական պողոտոյն[19], որ հրամայէ՝ «Դատ արարէք որբոյն և տուք իրաւունս այրոյն» [Եսայ. Ա. 17]: Իսկ այն այր՝ ժանդ խաւարեալ և բժոտեալ, կաշառօք արդարացուցանէ զանիրաւ ընչեղսն[20] և զրպարտէ զաղքատն արդար, ոչ երկնչելով ի սոսկալի դատաստանէն, յորմէ զարհուրեալ[21] մարգարէն Դաւիթ ըղձմամբ պաղատի, ասելով. «Մի կորուսաներ ընդ ամբարիշտն զանձն իմ» , այսինքն՝ ընդ անաստուածն, «Եւ մի[22] ընդ արս արիւնահեղս զկեանս իմ», այսինքն՝ ընդ մարդասպանսն, «Որոց ձեռք իւրեանց անօրէնութեան[23] են և աջ նոցա լի են կաշառօք» [Սաղ. Իե. 9-10]: Զկաշառակուրծսն ի դատաստանին ընդ անաստուածսն և ընդ մարդասպանսն է դասելոց[24] Քրիստոս, իսկ զայնոսիկ, որ կաշառ ի վերայ իրաւանց աչ առնու[25], բնակութեան խորանին Աստուծոյ արժանիս կացուցանէ. ի հարցանելն մարգարէին[26]. «Տէր, ո՞վ կացցէ ի խորանի քում[27]»՝ կնիք տասանց

[1] F բարերաց
[2] C > թէ
[3] F > ի
[4] BC հնազանդելոցն իցէ] հնազանդելոց
[5] BC > իցէ
[6] BC > թէ
[7] F > ըստ
[8] F ասէ
[9] C բաժանմամբ
[10] C > որ
[11] BCF կողմակալք
[12] D աւազակին
[13] D ճանապարհին
[14] C գիւղից
[15] BC > և գողանալոյ
[16] E ագահ են
[17] D կարգս] կարգ սրբութեան
[18] E > յաթոռ
[19] BC պողայն, D պողոտեայն, F պողոտացն
[20] BC լնչեղսն
[21] D զարհուրի
[22] F > մի
[23] ABEF անօրէնութեամբ
[24] CF դատելոց
[25] D առնուն
[26] ABCEF > մարգարէին
[27] F քո

առաքինութեանց կացուցանէ[1] զսա և ասէ. «Որ զայս արասցէ, նա մի սասանեսցի յաւիտեան» [Սաղ. ԺԴ. 1, 5]:

Բե՛ր տեսցուք զչորրորդ գլուխն, որ[2] է երկիւղն, և սա լինի ի չորից պատճառաց. նախ՝ ի բռնաւորաց զրկանաց, երկրորդ՝ յեկեղեցական դասուց անիծից, երրորդ՝ յաղքատացն տրտընջանաց, չորրորդ՝ ի սիրելեաց մեղադրանաց: Իսկ ի Գիրն Ղևտականացն եբարձ զայս պատճառ, օրինադրելով Աստուած Մովսիսի՝ «Ո՛չ ակն առնուլ ի դատաստանի հարստին», որ են բռնաւորք և[3] եկեղեցականք և սիրելիք[4] «Եւ ո՛չ աղքատին», որ են չքաւորք [Ղևտ. ԺԹ. 15], այլև Տէրն հրամայէ ի Նորս՝ լնլով[5] զՀինն. «Մի՛ երկնչիք[6] յայնմանէ, որ զմարմինն միայն կարէ[7] սպանանել, այլ առաւել երկերուք դուք[8] յայնմանէ՝ որ կարող է զհոգին և զմարմինն սպանանել՝ արկանալով[9] ի գեհեան» [Մատ. Ժ. 28], զի յարդարութիւն և յիրաւունս հաստատեալ է ամենառ նորա:

Նայ ևս քննել զհինգերորդ գլուխն՝ որ է ոխակալութիւնն, բայց տեսցուք՝ զի՞նչ է ոխակալութիւնն: Ոխ է մնացեալ դառնութիւն[10] ի բազում ամաց վասն ոչ ձեռնհաս գոլոյ[11] հատուցանել անդրէն զվճիռ: Եւ սա լինի ի չորիցպատճառաց[12]պակասութեանց[13]. կա՛մ ի փառաց կրճատեալ[14], կա՛մ ի յընչից յապաւեալ, կա՛մ ի ձաղանս յաճախեալ, կա՛մ ի յստացուածս նենգեալ՝ յորս սակս ի պատահեալ դիպուածս շրջէ զանուր պարանոցին, յորս[15] զգուշացուցանէ հազարապէտն ոճոյս մերոյ Պօղոս, թէ՝ «Յամենայն ոխ և դառնութիւն չարութեամբն հանդերձ բարձցի ի ձէնջ» [Եփես. Դ. 31]:

Բե՛ր տեսցուք զվեցերորդ գլուխն՝ զանհոգութիւնն՝ որ է անփոյթութիւն, զի[16] անփոյթ[17] առնելով[18] զվարժարանէ քաղաքական նոմոսեաց[19] կամ զաստուածադիր օրինացն կրթութեանց, որով ուղղի արդար իրաւունքն Աստուծոյ: Իսկ թէ անփոյթ առնելն լինի կա՛մ[20] ըստ հեշտասիրութեան, կա՛մ ըստ անհաւատութեան՝ զի ոչ հաւատայ, թէ վասն այսր ամենայնի համարս տալոց եմ յաւուրն դատաստանի: Արդ, թէ այս ամենայն յեղանակք[21] ի կողմն չարին դասեցան, որպէս ցուցաք յաստուածամերձ արանց ասացեալ[22] և հոգովն Աստուծոյ արձանացեալ: Յայտ ուրեմն է յայսմ ամենայնէ, զի ընդդէմ այս ամե-

[1] D տա անցկացուցանէ] տասանց առաքինութեանց կացուցանէ
[2] D և ասասցուք որ
[3] C > և
[4] A սիրելի
[5] BC լնելով, D լըլով
[6] BC երկնչիր
[7] D կարեն
[8] ABCEF > դուք
[9] AE հարկանելով, D արկանել
[10] F > ոխ է մնացեալ դառնութիւն
[11] BC լինելոյ, D գոլով
[12] C պատճառի
[13] A ու պակասութեանց
[14] ABEF կարճատեալ
[15] BC յորոյ
[16] E > անփոյթութիւն զի
[17] D > զի անփոյթ
[18] F ունելով
[19] ABCEF նիմոսաց
[20] D > արդար իրաւունքն Աստուծոյ: Իսկ թէ անփոյթ առնելն լինի կա՛մ
[21] D յեղանակք
[22] D ասացաւ

նայն թիւրութեան դատաստանի զճշմարիտն և զուղիղն՝ նա՛ միայն ունի, որ յարդարութիւն և յիրաւունս հաստատեալ է աթոռ նորա: Ապա ուրեմն, յիրաւի ասէ մարգարէս՝ «Արդարութիւն Տեառն ուղիղ է... » և այլն[1]:

Եկեսցուք և[2] տեսցուք զչորրորդ[3] գլուխն, որ ասէ՝ «...և ուրախ առնեն զսիրտս»:

Նախ պարտ է գիտել, թէ հեգս այս, որ ասէ՝ «և», վա՞ռն էր եդաւ աստանօր և զկնի այսորիկ հետազօտել զուրախութիւնս և զսիրտս: Գիտել պարտ է, զի «և» բառդ ի շաղկապիցն մի է յութ մասանց բանի: Եւ սահմանի այսպէս. շաղկապ է բառ, որ շաղկապէ զտրամախոհութիւնս ոճով և զմեկնութեան փեռեկումն յայտնէ, այսինքն[4] թէ զմիտ ընդ միտ և զբառ ընդ բառ խառնել և զանյայտութիւն բանի յայտնեսցէ: Եւ զմեկնութիւն բանի ցուցանէ ոչ[5] զտարակոյս լուծանելով[6], այլ յոճ[7] զրուցաց[8] կարգի[9] զանյայտութիւն բանի ի բառսն կարծեցուցանէ՝ իբր մեկնողօրէն տալով նկատումն: Բայց և ոչ աստանօր զանց առնելի է, թէ ի քանի՞ս բաժանի շաղկապ բառ, իսկ «և»-ս ո՞ր մասն է շաղկապի: Եւ բաժանի[10] շաղկապս յութ. ե՛ն, որ ջոկամանք[11] են, և ոմանք անջատականք[12], և ոմանք բաղմատք, տարբաղմատք, փաստբանական[13], տարակուսականք[14], բաղբանականք, թարմատարք[15]: Իսկ «և»-ս ի յութ մասանց շաղկապից[16] ի ջոկամանիցն է, վասն զի ջոկամանն բաժանի ի՝ և, զի, այլ, թէպէտ, օն, քեաց, իկ: Ջոկաման շաղկապ է, որ զմեկնութիւնն յանհունսն արտաբերէ, և անհունն երկակի է՝ կա՛մ թէ զի սկզբանէ եղեալ իրս[17] ի մէջ առնուցու[18] պատմել, և կա՛մ յինքենէ ինչ մտածել խօսս: Եւ ջոկաման վասն այն[19] ասի, զի զերկուց երեսաց առ իրեարս ածեալ ցուցանէ՝ որպէս «և»-ս, առ որ մեր բանս է, զի «և» բառս յերիս տեղիս նստի՝ երբե՛մն յառաջք բանի, և երբե՛մն ի մէջ, և երբե՛մն ի վերջ[20]: Ի յերիս տեղիսն՝ ուր և դնի, երկու երեսս յայտնէ: Յառաջադիր լինի և երկու երեսս ցուցանէ՝ որպէս այն, որ ասէ, թէ՝ «Եւ[21] Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս» [Մատ. Ա. 18], և թէ՝ «Եւ[22] մարդ է՝ և ո ծանեաւ զնա» [Երեմ. ԺԷ. 10]. «և»-դ աստանօր երկու ծնունդ ցուցանէ՝ մի զհայրականն, որ նախքան զյաւիտեանս, և մի՝ զայս, որ ի կուսէն մարմնով: Սապէս ասելն՝ «Եւ[23] մարդ է և ո ծա-

1 BCF > և այլն
2 ADEF > եկեսցուք և
3 ABC զչորս
4 BC > այսինքն
5 BC և
6 D ցուցանելով
7 D յոճոյ
8 C զրուցած
9 F զրուցակարգի] զրուցաց կարգի
10 D բաժանին

11 AE ջոկք ոմանք] ջոկամանք
12 B անջոտականք, C անջոկատականք
13 E փաստբանականք
14 AE տարակուսանք, D տարալուծականք
15 D > թարմատարք
16 BC բանին շաղկապից
17 D եղեալիս] եղեալ իրս
18 D առնու
19 D > այն
20 B վերջք
21 D > և
22 ABCEF > և
23 E > և

նեաւ[1] զնա», ցուցանէ երկու երես՝ զԱստուած և զմարդ: Իսկ ի մէջ բանի, որպէս այն, որ ասէ՝ «Բարի առնէ Տէր բարեաց և այնոցիկ[2], որ[3] ուղիղ են սրտիւք» ([Սաղ. ՃԻԴ. 4]. «և»-ն աստանօր ցուցանէ, թէ բարի է Տէր բարեաց և այնոցիկ, որ ի չարեաց ի մէջ գոլով[4] դառնան և ուղղեն զսիրտս[5] ի բարիս[6]: Իսկ ի վերջ[7] բանի, որպէս թէ՝ «Տէր թագաւոր յաւիտեանս յաւիտենից և ևս» [Ելք. ԺԵ. 18]. երկու երես յայտնէ՝ իբր թէ թագաւոր է այս[8] յաւիտենիս, որ մեք ճանաչեմք և իմանամք[9] և այն յաւիտենին[10], որ անհաս է ի մէնջ:

{Թողցուք զայլ ևս երկար վարդապետութիւն շաղկապ բառիս և այսու բաւականասցուք առ ի վարդապետութիւն առաջիկայիս, որ ասէ՝ «Ուրախ առնէ զսիրտս»: Յայսմ ամենայնէ[11] յայտ եղև, թէ ոչ հարևանցի եղեալ եղև ի մարգարէէն «և» հեգս, այլ առ ի նշանակել, թէ է՛ երկու դէմ ուրախութեան՝ հոգւոյ և մարմնոյ, վասն որոյ զ«և»-ն դնէ, իբր թէ մի կարծեր[12], թէ զուրախութիւն մարմնոյ միայն ասեմ, այլև զհոգւոյն, մանաւանդ թէ զհոգւոյն}[13]:

Բե՛ր տեսցուք, թէ որպէ՞ս գոյանայ ուրախութիւնն և զիա՞րդ զանազանի ի հոգևոր և ի մարմնաւոր:

Գիտելի է, զի ոմանք յիմաստասիրացն բաժանեն զհոգին ի[14] յերիս՝ ի տնկական, ի[15] զգայական և ի[16] բանական: Եւ սոյնք, որ զայս ասեն, ոմանք իբրև[17] զտեսակ առ[18] անձին դնեն, և ոմանք իբրև[19] զօրութիւն, և[20] ոմանք իբրև[21] մասունք: Իսկ Զենոն ստոյիկեան ընդ մասնեայ[22] ասէ գոլ զանձն՝ տարորոշելով իշխանականն, հինգ զգայութիւն, ձայնականն[23] և սերական[24]: Իսկ Պանէտիոս[25] իմաստասէրն ընդդիմաբանէ նմա քաջապէս և յիրաւի. զձայնականն մասն գոլ ասէ ըստ[26] մարմնական յարձակման[27] շարժութեան, իսկ զսերմականն[28] ոչ անձինն մասն, այլ բնութեան[29]: Իսկ

---

1 D ծանիցէ
2 A այն
3 E որք
4 D > ի մէջ գոլով
5 A զիրս
6 BC > ի բարիս
7 BC վերջք
8 BC այսմ
9 BC > որ մեք ճանաչեմք և իմանամք
10 BC > յաւիտենին
11 ABC ամենայն ի
12 E կարծաներ
13 D > մանաւանդ թէ զհոգւոյն, BC > {Թողցուք զայլ ևս երկար վարդապետութիւն շաղկապ բառիս և այսու բաւականասցուք առ ի վարդապետութիւն առաջիկայիս, որ ասէ՝ «Ուրախ առնէ զսիրտս»: Յայսմ ամենայնէ յայտ եղև, թէ ոչ հարևանցի եղեալ եղև ի մարգարէէն «և» հեգս, այլ առ ի նշանակել, թէ է՛ երկու դէմ ուրախութեան՝ հոգւոյ և մարմնոյ, վասն որոյ «զև»-ն դնէ, իբր թէ մի կարծեր, թէ զուրախութիւն մարմնոյ միայն ասեմ, այլև զհոգւոյն, մանաւանդ թէ զհոգւոյն}
14 BC > զհոգին ի
15 BC և ի
16 D > և
17 F իբր
18 F > առ
19 BC որպես
20 ADEF > և
21 AEF իբր
22 AE ընդ ամանսեայ, D ընդ ամսեա, F ընդամասնեայ] ընդ մասնեայ
23 BCF ի ձայնականն
24 BCF ի սերական
25 D Պատէտիոս
26 BC ըստ այնմ, Fընդ] ըստ
27 BC յարձակումն
28 D զսերականն
29 F բնութիւնն

Արիստոտէլ թէպէտ[1] ի բնաւորա-
կան[2] քննութիւնն[3] հինգ[4] գոլ ասէ
զմասունս անձին՝ զտնկականն, և[5]
զգայականն և[6] զշարժականն[7] ըստ
տեղոյ, զհարկաւոր ցանկականն և
զիմացողականն[8], իսկ ի բարոյա-
կանսն[9] յերկուս բաժանէ՝ ի բանա-
կան և յանբան: Իսկ Պղատոն եռա-
մասնեայ ասէ գոլ զհոգին՝ բան,
ցասումն և ցանկութիւն: Եւ սա
հանգոյն աշակերտին իւրոյ խօսի՝
որպէս յառաջիկայսդ ուսանիմք:
Քանզի Արիստոտէլ, որ բաժանէ
զհոգին ի բանական և յանբան,
և զանբանն ի հաւանական բանի
և յոչ հաւանական բանի, թէպէտ
ոմանք հակառակին ոչ գոլ մասն
բանի զանբանն վասն երկու պատ-
ճառի. նախ՝ զի առանձին յան-
բանսն գտանի ինքն ըստ ինքեան[10]
գոլով, իբր տեսակ իմն առանձին և
ոչ մասն այլոյ. երկրորդ, զի անտե-
ղի է ի մի և ի նոյն իր գոլ բանա-
կան և անբան, բայց Արիստոտէլ և՛
մասն գոլ ասէ, և՛ զօրութիւն զան-
բանն բանականին՝ իբր առիթ յար-
մար հմտութեան զնմանսն, զի ան-
ճողոպրելի գտցէ զամենայն, իբրև[11]
զթագաւոր ամէնունակ: Իսկ զան-
բան մասն, որ ասացաք, ի հաւա-
նական բանի և յոչ հաւանական.
յոչ հաւանական[12] որպէս կերակրա-
կան, շնչերական[13] և սերական, իսկ
հաւանական, որպէս անբան մասն
բանի բաժանի յերկուս՝ ի հարկա-
ւոր ցանկականն և ի ցասմնականն,
որպէս Պղատոն ասաց: Իսկ հար-
կաւոր ցանկականն բաժանի յեր-
կուս՝ ի հեշտութիւն և ի տրտմու-
թիւն, քանզի թէ[14] հանդիպեալ
ցանկութեանն՝ առնէ հեշտութիւն,
և թէ վրիպեալ՝ առնէ տրտմու-
թիւն: Դարձեալ, ցանկութիւն ըստ
այլ յեղանակի տարորոշի ի չորս[15]
հանդերձ ինքեամբ, քանզի յէսն[16]
է՛ն ինչ՝ որ բարի են, և է՛ն ինչ՝ որ
չար են, և է՛ն ինչ՝ որ աստէն մերձ
են, և է՛ն ինչ՝ որ ակնկալլիք: Իսկ
ակնկալլի[17] բարի ցանկութիւն, իսկ
անդէն մերձն՝ հեշտութիւնն, դար-
ձեալ ակնկալլի չար երկիւղ, իսկ
անդէն մերձն՝ տրտմութիւն, վասն
որոյ ախտ ի չորս տրամատի, այ-
սինքն՝ ի[18] ցանկութիւն և ի հեշտու-
թիւն, յերկիւղ և ի տրտմութիւն:
Իսկ բարի և չար ասեմք կա՛մ զար-
դարև էսն, կա՛մ զկարծեցեալսն: Եւ
լինին չար ախտք անձինն յերից՝ ի
չար հրահանգից, յանուսումնու-
թենէ և ի չար ունակութենէ: Ի չար
հրահանգից՝ իբր[19] ոչ բարիոք[20] վար-
ժեալք[21] ի մանկութենէ, որպէս զի
կարող գոլ յաղթող լինել[22] ախտից,

[1] ADE թէ
[2] BC բնական
[3] D քննութեան
[4] AE եւթն
[5] BCF և
[6] C > և
[7] D ըստ շարժական
[8] D զիմացականն
[9] F բարուականսն, C զբարոյականսն] ի բարոյականսն
[10] ABE ինքն ըստեան] ինքն ըստ ինքեան
[11] BC որպէս
[12] ACDE > յոչ հաւանական
[13] ADE շնչերական, C շնչերակն
[14] BC > թէ
[15] BC > ի չորս
[16] C յեսն
[17] BC > աստէն մերձ են, և է՛ն ինչ՝ որ ակնկալլիք: Իսկ ակնկալլի
[18] ADEF > այսինքն ի
[19] ADEF իբրու
[20] AE > բարիոք
[21] BC վարժեալ
[22] C լինի

յանչափութիւն նոցա անկանիմք: Իսկ յանուսումնութենէ չար դատումն բուսեալ ի խոհեցողական[1] անձին, մինչ զի կարծել[2] զչարն պիտանի, և զպիտանին՝ չար: Լինի և ի մարմնոյ չար ունակութեանց խառնուածոց չարն, քանզի բարկացողք են դառնամաղձեայքն[3] և վայրաբերք, որ ջերմ են և խոնաւուտ խառնուածօք[4]: Եւ բժշկելի[5] է զչար սովորութիւնն՝ բարի սովորութեամբ և զանուսումնութիւնն՝ ուսմամբ և մակացութեամբ, իսկ զչար ունակութիւնն՝ ի ձեռն դեղոց փոխադրելի է ի միջին խառնուած:

Իսկ զի ասացաք ուրախութիւն է հանդիպեալ[6] ցանկութեան, գիտելի է, զի կրկին է ուրախութիւնն. ե՛ն ինչ, որ մարմնական են, և ե՛ն ինչ, որ անձնական: Անձնական են, որ ինչ առ անձին իւր ըստ ինքեան միայնոյ՝ որպէս մակացութիւնք և տեսութիւնք, այսինքն՝ կատարումն իմացմանց և տեսութեանց՝ կա՛մ էակաց զգալեաց, կա՛մ աստուածայնոց իմանալեաց, որով հանդիպեալ հոգին զմայլի: Քանզի Պղատոն երկուս[7] դնէ ուրախութիւնս՝ այսինքն՝ հեշտութիւն. նախ՝ զփութալեացն, երկրորդ՝ զմարմնական: Ի սոցանէ զոմն ճշմարիտ ասէ[8] և զոմն՝ սուտ: Քանզի ի զգալեացս ե՛ն ինչ, որ բնաւորականք են և հարկաւորք, առանց որոց անկար է կեալ՝ որպէս կերակուրք, որ կարօտանացն[9] են լցողք, և հանդերձ հարկաւորք, և ե՛ն ինչ, որ բնաւորականք են, բայց[10] ոչ հարկաւորք՝ որպէս ըստ բնութեան խառնումն, զի այսոքիկ[11] ի փոխանորդութիւն ամենայն ազգի կատարի, բայց կարէ առանց այսորիկ[12] կալ կուսութեամբ: Իսկ ոչ հարկաւորք և ոչ բնաւորականք[13] որպէս արբեցութիւնն և վաւաշոտութիւն և այլ ամենայն առաւելութիւն, քանզի ո՛չ ի փոխանորդութիւն[14] ազգի ինչ նպաստ լինի[15] և ո՛չ ի հաստումն կենաց, այլև վնասակարք: Իսկ յայսմ[16] ամենայնէ[17] յայտեղև գլխաւոր և սեռօրէն ըստ մարմնոյ երիս ազգ հեշտութեան[18]. նախ՝ բնական և հարկաւոր, երկրորդ՝ բնական և ոչ հարկաւոր, երրորդ՝ ոչ[19] բնական և ոչ հարկաւոր: Այս են հեշտութիւնք մարմնոյ, և թէպէտ բազմաբեղուն[20] և անթիւք[21] երևին ազգ հեշտութեան, ամենայն պարունակեալ բաւանդակին ի սոսա: Իսկ արդ, զբնականն[22] և զհարկաւորն՝ որ է պարզն[23], ի բարին գոլ[24] ուղ-

1 AE խոհեցողսն
2 C կարծեալ
3 BC դառն մաղձոտքն] դառնամաղձեայքն
4 BCD խառնուածովք
5 C բժշկեալ
6 C հանդիպիլ, D հանդիպել
7 BC > երկուս
8 D > ասէ
9 BC կարոտացն
10 BC այլ
11 AE այսոք, BC այսքան
12 C այսոցիկ
13 BC բանականք
14 D փոխադրութիւն
15 BC > լինի
16 F յայս
17 F ամենայնի
18 ABCDE հեշտութիւն
19 A > ոչ
20 D բազմազեղուն
21 BCD անթիւ
22 C զբանականն
23 BC > որ է պարզն
24 BC > գոլ

ղել է կարելի. նախ՝ զի ոչ չարա-մանի ընդ[1] տրտմութեան, երկրորդ՝ որ ոչ առնէ[2] զղջումն, երրորդ՝ որ ոչ գոլ բնաւ վնասու[3] իմն արարո-ղական, չորրորդ՝ ոչ զկոպարաւ[4] չափու անցեալ[5], հինգերորդ՝ ոչ ի փութալեացն գործոյ զանձն ի բաց քարշեալ[6], վեցերորդ՝ ոչ ընդ ծառայութեամբ արկանել զանձն, այլ բարեպաշտութեամբ աստուա-ծային՝ ի չափ կանոնի[7] անփոփոխ կալ մնալ: Իսկ զերկրորդ՝ ուղղել ասի[8]. նախ[9] ըստ վայելչութեան, երկրորդ՝ ըստ յեղանակի, երրորդ՝ ըստ չափու, չորրորդ՝ ըստ[10] ժամա-նակի, հինգերորդ՝ ըստ տեղոյ, վե-ցերորդ՝ բնաւ սանձել, զի թէ սա-կաւ և շատ շարժի, ընդ[11] առաւելու-թեամբ է և ընդ[12] ստութեամբ, վասն որոյ Պղատոն զամենայն զայսոսիկ ընդ ստութեամբ[13] վերագրէր զե-ղեալս ըստ զգայութեան[14], որով[15] լինի[16] ուղղեալ ըստ վերագոյն[17], որ աստ: Իսկ զչորրորդ տեսակ ուրա-խութեան ճշմարիտ ասէ, որ է տե-սութիւն մտաց և իմացումն Աս-տուծոյ և աստուածայնոց[18] իմանա-լեաց և կոչի ճշմարիտ, զի ոչ ունի տրտմութիւն յառաջագոյն՝ որպէս հարկաւորն և բնականն, զի այնո-քիկ կարօտութեան[19] են լցուցիչք կերակուրն և հանդերձն: Նաև ոչ են հոգևոր ուրախութիւնքն այլ[20] ախտից արարիչք՝ որպէս բնականն և ոչ հարկաւորն, որ է ի փոխա-նորդութիւն: Երրորդ, զի ոչ ունի զղջումն զկնի՝ որպէս ոչ բնականն և ոչ հարկաւորն, որ է ամենայն առաւելութիւնք, որոց ամենայնի ի հարկէ հետևի[21] զղջումն և տրտմու-թիւն, այլ մշտնջենաւոր ուրախու-թիւն՝ անխառն յախտից, յառաջոյ[22] և զկնի մաքուր ի տրտմութեանց և ի զղջմանց, միայնոյ և ըստ ին-քեան հոգոյ, մտօք և մակացու-թեամբ իմանալեօք[23] հեշտացեալ, հետևեալ[24] իմանալի տեսութեանց[25] և բարեաց[26] գործոց՝ վասն որոյ ոմանք[27] ոչ հեշտութիւնս կոչեն, զի մի ախտ[28] կարծեսցի, այլ խնդու-թիւն և ուրախութիւն: Իսկ ոմանք սահմանեն զհեշտութիւն՝ եղելու-թիւն ի բնութիւն զգայական: Իսկ այս սահման երևի բժշկութիւն և լրումն մարմնական կարօտու-թեան՝ իբր ցրտացեալք և կամ ծա-րաւեալք ի ջեռնուլն և յրմպելն հեշտանան: Այս բարիք պատահ-մամբ են, զի ոչ են ըստ ինքեանց,

[1] AE ըստ
[2] BC ունի
[3] BC վնաս
[4] C զկոպարու
[5] C անցանել
[6] D քարշեաց
[7] DFքանոնի, BC չափաքանոնի] չափ կանոնի
[8] F ուղղելի] ուղղել ասի
[9] ADEF > նախ
[10] AE > ըստ
[11] F ըստ
[12] BCDF > ընդ
[13] BC ստութեան
[14] A զգայութեամբ
[15] BCF որ
[16] D կոչին
[17] BC վերայ գրոյն] վերագոյն
[18] A աստուածայնոցիկ

[19] D կատարելութեան
[20] ADEF > այլ
[21] BC հետևիլ
[22] BC յառաջ
[23] DF իմանալովք
[24] D հետևել, F հեշտացեալ
[25] ADEF տեսութեան
[26] BC բարութեանց, D բարի
[27] D > ոմանք
[28] BC զմի] զի մի

այլ պատահմամբ[1], զի[2] որպէս ողջն գոլ բնութեամբ է, իսկ ողջացուցանելն՝ պատահմամբ[3], այսպէս և սոքա պատահմամբ են բարի ի[4] բժշկութիւն գոլ, իսկ տեսութեան հեշտութիւնքն ըստ ինքեանց են բարի և բնութեամբ և ոչ լինին ի վերայ կարօտութեան[5]: Արդ, յայսմանէ յայտ է, թէ ոչ[6] ամենայն հեշտութիւն կարօտութեան է լրումն, և երևի թէ[7] ոչ ողջ գոլ սահմանիս, զի արտաքոյ թողու զըստ[8] տեսութեան հեշտութիւն: Իսկ Էպիկուրոս սահմանէ զհեշտութիւն զերծումն ի տրտմութենէ[9], և այս նոյնս է եղելութիւն ի բնութիւն զգայական, քանզի[10] զբաց վճարիլն ի տրտմութենէ[11] է հեշտութեան[12] գոլ ասէ: Բայց է իմն աստանօր խնդիր ինչ, քանզի ոչ[13] մի եղելութիւն, զորս կատարէ ինքն է համասեռ կամ փաղասեռ, և ոչ զեղելութիւն հեշտութեանն հեշտութիւն համարելի է, այլ ա՛յլ ինչ[14], քան զհեշտութիւն, քանզի լինելովն է եղելութիւն, և ոչինչ համանգամայն լինի և եղև, այլ ըստ մասին լինի, իսկ հեշտացեալն[15] յանկարծակի հեշտացաւ. յայտ ուրեմն է՝ թէ ոչ է եղելութիւն հեշտութիւն[16]: Երկրորդ, զի[17] ամենայն եղելութիւն ոչ էից է, իսկ հեշտութիւն՝ արդարև էից է[18]: Երրորդ, եղելութիւն վաղ և անագան ասի, իսկ հեշտութիւն՝ ոչ: Զորրորդ, զի ի բարեացն է՛ն ինչ, որ ունակութիւնք են[19], և է՛ն ինչ, որ ներգործութիւնք[20], և է՛ն ինչ, որ գործարանք. ունակութիւն՝ որպէս տեսութիւն, ներգործութիւն՝ որպէս տեսանել, իսկ գործարան, որով ներգործեմք՝ որպէս ակն: Եւ ամենայն ինչ[21] բարոյ և չարի անձնական զօրութիւնք, ունակութեանց ոմանց[22] են զօրութիւնք: Արդ, եթէ բարի ինչ հեշտութիւն[23] և եթէ չար՝ յայսոսիկ եղիցի միայն:

Տեսցուք, թէ ունակութիւ՞ն է հեշտութիւն: Արդ, ունակութիւն ոչ է հեշտութիւն, զի թէ ունակութիւն հեշտութիւն[24] էր[25] ոչ[26] այսպէս դիւրաւ փոփոխէր[27] ի հակակայն իւր տրտմութիւն: Եւ[28] երկրորդ, զի ոչ է հնար ունակութեան և պակասութեան ի միասին գոլ, բայց[29] համանգամայն ոմանք հեշտանան և տրտմին, որպէս այնոքիկ, որ[30] քո-

[1] D ըստ պատահմամբ
[2] BC > զի
[3] E > զի որպէս ողջն գոլ բնութեամբ է, իսկ ողջացուցանելն պատահմամբ
[4] ADEF > ի
[5] D են ի կարօտութեան վերայ] լինին ի վերայ կարօտութեան
[6] BCDF > ոչ
[7] BC > թէ
[8] BC զամենայն
[9] BC տրտմալեաց
[10] BC զի
[11] F տրտմութեան
[12] B է հեշտութիւն, CD հեշտութիւն] է հեշտութեան
[13] BC > ոչ
[14] BC իմն
[15] BC հեշտանալն
[16] ADEF հեշտութեան
[17] ADEF > զի
[18] AEF >է
[19] F > են
[20] BC ներգործութիւն
[21] CDF որ ինչ
[22] BC ոմանք
[23] BC հեշտութինք
[24] ABCEF > հեշտութիւն
[25] AEF >էր
[26] BC > ոչ
[27] ADEF փոխիւր
[28] C > և
[29] BC արդ
[30] E որք

րին[1], զի ի միասին կսկիծ[2] և հեշ-տութիւն՝ ո՛չ ուրեմն է ունակու-թիւն հեշտութիւնն: Այլև ո՛չ գոր-ծարան, զի գործարան[3] վասն այլոց և[4] ոչ[5] վասն ինքեանց, իսկ հեշտու-թիւնն ոչ վասն այլոց, այլ վասն[6] ինքեան[7]: Արդարև երևի ներգոր-ծութիւն գոլ, վասն որոյ Արիստո-տէլ սահմանէ զնա ներգործութիւն ըստ բնութեան ունակութեան անխափան, քանզի խափանումն ըստ բնութեան[8] ներգործութեան՝ տրտմութիւն է, այլև երջանկու-թիւն՝ ներգործութիւն[9] անխափան ըստ բնութեան: Եւ պատահի ըստ այսր սահմանիս երջանկութիւն հեշտութիւն[10] և սխալեալ սահմա-նին: Արդ, յուղղութիւն ածեալ սահմանեաց զհեշտութիւն կատա-րումն գոլ կենդանոյն ըստ բնու-թեան[11] անխափան ներգործու-թեանց, որպէս զի շարամանիլ և ի միասին գոլ երջանկութեան և հեշտութեան: Բայց հեշտութիւն գոլ զերջանկութիւն, զի ոչ ամե-նայն ներգործութիւն շարժմամբ է, այլ խափանելին, զի ոչ ամենայն ներգործութիւն շարժութիւն է, այլ է՛ ինչ ներգործութիւն անշար-ժութեամբ, որպէս Աստուծոյն, զի անշարժաբար[12] ներգործէ. այսպէս և տեսութիւն մտաց՝ տեսանելին անշարժ և միտքն անշարժ, յորմէն և ի մի և ի նոյն միշտ հայի: Իսկ տեսութեան հեշտութիւն մեծ գոլով՝ տիրապէս և ճշմարիտ ի ձեռն ան-շարժութեանն լինի, որ և սահմանի այսպէս. ի խնդութիւն կատարումն գոլ հոգոյ ըստ բնութեան ներգոր-ծութեան[13] անշարժապէս և[14] միշտ գոլ: Զայսպիսի ուրախութիւնս հասեալ ի կատարումն աստուա-ծային տեսութեան, զոր առա-քեալն ասէ. «Զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և ի սիրտ մարդոյ ոչ[15] անկաւ» [Ա. Կորն. Բ. 9]՝ շնոր-հօք հոգւոյն հասնին[16] մարդիկ[17] և զմայլին, յորմէ ասէ մարգարէս՝ ուրախ առնել զսիրտս, այսինքն՝ զհոգին, զի սովորութիւն է Գրոց ի տեղի հոգւոյն միշտ զսիրտն ասել, որպէս այն, որ ասէ, թէ[18]՝ «Հաստա-տեցաւ սիրտ իմ ի Տէր» [Ա. Թագ. Բ. 1], իսկ հաստատիլ յԱստուած հաւատով[19] լինի, և այս բանական մասամբ հոգւոյն՝ կատարին ընտ-րել և հաւանիլ և հաստատիլ[20]: Սա-պէս և[21] յայն տեղոջ, որ ասէ, թէ[22]՝ «Ո ստեղծ առանձին զսիրտս նոցա, ի միտ առնուլ զամենայն գործս նոցա» [Սաղ. ԼԲ. 15]՝ ի[23] միտ ու-

[1] D քերին
[2] E է կսկիծ
[3] AE > զի գործարան, BC որպէս գործա-րան
[4] BC լինի և
[5] AE > որ
[6] BC > վասն
[7] C ինքեանց
[8] BC > ունակութեան անխափան, քանզի խափանումն ըստ բնութեան
[9] BC ներգործութեան
[10] BC > հեշտութիւն
[11] C բնութիւն
[12] BC անշարժութեամբ
[13] C ներութեան
[14] BCD > և
[15] F > լուաւ և ի սիրտ մարդոյ ոչ
[16] BC հասնեն
[17] D մարդիկք
[18] BCD > թէ
[19] BC հոգով] յԱստուած հաւատով
[20] ADE հաստատել
[21] BCDEF > և
[22] D > թէ
[23] ADEF > ի

նել[1] զգործս՝ հոգւոյս է և ոչ սակաւ մասին մարմնոյն: Այլև անդանօր, որ ասէ. «Սիրտ իմ և մարմին իմ[2] ցնծասցէ առ Աստուած կենդանի» [Սաղ. ՁԳ. 3], որ կատարելութեամբ գալստեամբ արդարոյն[3] Քրիստոսի և լինի միւս անգամ գալստեանն[4], յորժամ ուղիղ արդարութեամբ հատուցանէ ըստ իւրաքանչիւր գործոցն, որոց զբարիս արարեալ՝ ի[5] յարութիւն կենաց[6], և որոց զչար արարեալ իցէ՞[7] յարութիւն դատաստանաց [Յովհ. Ե. 29]: Յիրաւի ապա ուրեմն[8] ասէ մարգարէս, թէ՝ «Արդարութիւն[9] Տեառն ուղիղ են, և ուրախ առնեն զսիրտ[10]»:

Տեսցուք զեւթներորդ[11] գլուխն, որ ասէ՝ «պատուիրանք Տեառն լոյս են[12]»:

Եւ գիտելի է, զի թէպէտ վարդապետք առնեն[13] ինչ զանազանութիւն ի մէջ պատուիրանին[14] և օրինաց, ասելով, թէ օրէնքն ի հարկաւորացն է և պատուիրանք՝ ի[15] սիրելեաց՝ որպէս հայր որդոյ[16] պատուիրէ, բայց Գիրք Աստուածաշունչ մի և նոյն ասեն[17] զպատուիրանս և զօրէնս՝ որպէս ասէ Տէր ցՄովսէս, թէ՝ «Պահիցէք զպատուիրանս իմ և զօրէնս... ես եկից ընդ ձեզ[18] և տարայց յերկիրն, որ բղխէ զկաթն և զմեղր» [Ղևտ. Ի. 22 և այլուր], և զՏէրն՝ յորժամ եհարց օրինականն վասն օրինացն, հարցանէր[19] և ասէր[20]. «Տէր, ո՞ր պատուիրան մեծ է» [Մատ. ԻԲ. 36]: Յայտ է, թէ մի է օրէն[21] և պատուիրան[22]:

Արդ, բե՛ր տեսցուք, թէ զի՞նչ են[23] օրէնք և յումէ՞ տուան, և երկրորդ, թէ ուստի՞ սկսաւ և ե՞րբ, երրորդ, թէ որո՞ց տուաւ, չորրորդ, թէ վա՞սն էր եղաւ:

Պատուիրանն սահման իմն է {և կէտ, որպէս ծովու ասաց՝ «Ցայդ վայր եկեսցես և այլ մի անցանիցէս» [Յոբ. ԼԸ. 11], և Դաւիթ ասէ՝ «Սահման եդիր՝ որ[24] ոչ անցանեն» [Սաղ. ՃԳ. 9]: Եւ են օրէնք հոգևոր և օրէնք[25] մարմնաւորք. հոգևորք են՝ յԱստուծոյ և մարմնաւորք՝ ի մարդկանէ: Ե՛ն, որ ի ձեռն միջնորդի տուան և ե՛ն, որ[26] ինքեամբ[27] եդան թարց միջնորդի. ի ձեռն միջնորդի՝ որպէս Մովսէսիւ[28] գրաւորական օրէնք երկոտասան ցեղիցն Իսրայէլի, և թարց միջնորդի՝ Ադամա, Նոյի և Աբրահամու, և ի լրման ժամանակիս Բանն

---

1 C առնուլ
2 ADEF > և մարմին իմ
3 BC > արդարոյն
4 BC գալստեամբն Քրիտոսի] գալստեանն
5 BC գործեալ իցէ] արարեալ ի
6 F երկնից] կենաց
7 BC > արարեալ իցէ
8 BC յիրաւիապէս] յիրաւի ապա ուրեմն
9 D արդարութիւնք
10 ABCDE զհոգիս] զսիրտ
11 BC և զեւթներորդ, F զհինգերորդ
12 AEF > լոյս են
13 C ասեն
14 BC պատուիրանաց
15 ACDEF > ի
16 BC որոյ
17 AEF ասէ
18 ADEF քեզ
19 BC > հարցանէր
20 BC ասէ
21 D օրէնք
22 D պատուիրանք
23 D է
24 F եդ և] եդիր որ
25 E են օրէնք
26 D > են
27 AF ինքեամբք
28 D Մովսէսի

*Աստուած մարմնառիկ տնօրէնութեամբն զՆորս պատուիրան: Եւ դարձեալ, որք ի մարդկանէ տուան օրէնք՝ յերիս բաժանի. ե՛ն, որ կենցաղոյս[1] օգուտք[2] են և պիտանիք, և ե՛ն, որ խոտելիք են և վնասակարք, և մյուս ևս՝ որ ոչ[3] չար է և ոչ բարի, քանզի ոչ օգտեցուցանէ զկենցաղս և ոչ վնասէ: Կենցաղոյս[4] օգուտ և պատանիք՝ յարանց բարեաց և յիմաստնոց, որպէս Սողոն[5] Աթենացւոց օրէն[6] դիր[7] և Պղատոն գրէ զքաղաքական օրէնս, թէ զիարդ պարտ է լինել քաղաքին և որպէս բնակիչքն կապին առ միմէանս սիրով, և որպիսի օրինօք պարտ է վարել զսոսա[8] դատաւորաց և որք[9] նախքան[10] զսոսա[11] կարգեցին պատիժ[12] գողոց, զտանջանս շնացողաց, զպատուհաս սպանողաց, զվրէժ առնուլ յանիրաւաց և այլք[13] սոյնպիսիք՝ որք[14] խաղաղութեան և շինութեան են առիթ աշխարհաց: Իսկ վնասակարք և խոտելիք՝ որպէս առ տօրացիս օտարասպանութիւն և առ ելլենացիս ի տօնս աստուածոց զանազան և գարշելի[15] օճրագործութիւն. որպէս զԱփրոդիտէն պոռնկութեամբ կատարէին. զԱրէսին՝ սպանութեամբ, զՀերմէայն՝ գողութեամբ, զԴիոնէսիոսին՝ արբեցութեամբ և անառակութեամբ և այլ այսպիսի[16] գարշ և զազրալիս, որք ի չարափառացն և ի հերձուածողացն եղան օրէնք և աւանդութիւնք մահաշունչք և վնասակարք, զի ոչ է հարկ ի տեղիս յայս բացայայտել զբանս նոցա և զպատուիրանս[17]: Իսկ միւսն՝ որ ի մէջ լաւին և վատթարին, օրինադրեալ եղև ի թագաւորացն, որպէս հռոմայեցոցն և որ յոլոմպիական հասին քաջքն[18] և արիականքն[19]: Ի ճգունս նահատակութեան անցանէին յասպարիսէ ստադիոնին, է՛ր, որ յարշաւանս ձի[20] ընթացիցն և որք ի կառամարտութիւնս, այլք ի յըմբշամարտութիւնս արիացեալք, և կէսք ի նիզակս քաջացեալք, նաև որ ճոխք էին բանիւ բարգաւաճեալք, որով առնուին զյաղթանակ քաջութեան պսակեալ ի թագաւորէն և ի դիւցազանցն վայելէին պատիւս. որք և այսոքիկ ոչ վնասեն և ոչ օգտեցուցանեն զկենցաղս: Եւ որպէս զգալի աշխարհի վայր[21] սահմանադրութեամբ բաժանէ[22] զքաղաքս և զգիւղս և զիշխանութիւն թագաւորաց, և որք են ի ներքոյ թագաւորական սահմանին՝ ընդ թագաւորին իշխանութեամբ են, և որ արտաքոյ են՝ ապստամբ են ի նմանէ. այսպէս և Աստուծոյ և մարդկան, որք ընդ օրինօք են՝

[1] DF կենցաղ
[2] D օգուտութեամբ
[3] A > ոչ
[4] DF կենցաղ
[5] F Սողոմոն
[6] EF օրէնս
[7] DF եդիր
[8] D զնոսա
[9] D որքան
[10] AE նախ
[11] D զնոսա
[12] D ի պատիժ
[13] D այլ
[14] D որ
[15] D > և գարշելի
[16] D զսոյնպիսի
[17] DF զպատրանս
[18] D քաջն
[19] A արիպկանքն
[20] A ի
[21] D վայրս] աշխարհի վայր
[22] D բաժանեն

հնազանդէն օրինադրին, և որք արտաքս՝ ապստամբք[1]:

Երկրորդ, թէ ուստի՞ սկսաւ և ե՞րբ:

Արդ, սկսաւ հոգևոր օրինադրութիւնն յԱստուծոյ ի սկիզբն լինելութեան մերոյ, որպէս վիպէ արարապատումն Մովսէս, թէ ստեղծ զմարդն ի հոգւոյ իմանալոյ և ի մարմնոյ զգալոյ և եդ ի դրախտին գործել զնա և պահել [Ծնն. Բ. 7-9, 15], որով իմանամք, եթէ ընդ լինելութեանն և օրինադրեցաւ յԱստուծոյ, որպէս[2] գրէ աստուածայինն Բասիլիոս[3], թուի ինձ զսկիզբն լինելութեան պահոց օրէնք դնել: Իսկ մարմնականք՝ ի մարդկանէ, թէ ե՞րբ եդան կամ յորու՞մ[4] տեղոջ և կամ թէ ի մարդկանէ նախ օրէնք ո՞վ կարգեաց և զո՞ր յօրինաց եդին նախ՝ զայս մի ըստ միոջէ կարգել և ասել աւելորդ վարկաք, զի որպէս յոլովութիւն կերակրոյ ծանրութիւն է որովայնի, նոյնպէս և երկար բանք՝ լսելեաց: Այլ այսքան և եդ ասասցուք, թէ ի բազմանալ և աճել մարդկային սեռի՝ բաժանեալ ըստ ցեղի և նահապետութեանց, կամք[5] և վարք օրէնք եղև[6] յետնոցն՝ սիրելոցն և իշխեցելոցն ի նոցանէ: Եւ ըստ առաջանալ ժամանակին և ի բազմանալն մարդկային ազգին աճեցուցին և զօրէնս: Բայց թէ ուստի՞ առին օրէն մարդիկ՝ զբարիսն գովել և զչարսն պարսաւել և տանջել, ասեմք՝ զայս ընութեամբ յինքեանս ունել, բացայայտեալ երևեցուցին[7], որպէս և աստուածային առաքեալ վկայէ, թէ՝ «Հեթանոսք որ զօրէնս[8] ոչ ունէին՝ ընութեամբ զօրինացն գործէին, նոքա, որ զօրէնս ոչ ունէին անձանց իւրեանց իսկ են օրէնք» [Հռոմ. Բ. 14], որ ցուցանեն զգործ օրինաց գրեալ ի սիրտս իւրեանց վկայութեամբ մտաց[9] իւրեանց[10]:

Երրորդ՝ թէ որո՞ց տուաւ: Տուաւ[11] առաջին մարդոյն՝ պտղով, և ապա տանն Սէթայ՝ ոչ խառնել[12] ընդ դստերացն Կայենի մինչ ի ջրհեղեղն, և ի ջրհեղեղէն մինչև ցԱբրահամ՝ ոչ հեղուլ զարիւն մարդոյ և ոչ ուտել զարիւն շնչոյ կենդանոյ՝ որ է հեղձուցիկն[13], և ապա տանն Աբրահամու[14] թլփատութիւն մինչև ցՄովսէս: Եւ ապա Մովսէսիւ[15] տասն բանեան[16] օրէնքն և գրաւորական տախտակքն և այլ օրէնքն մինչ ի գալուստն Քրիստոսի: Եւ Քրիստոսիւ[17] նոր պատուիրանս մինչև ի կատարած ամենայն ազգաց, որ հնազանդեցան Աւետարանին:

Չորրորդ՝ թէ վա՞ստն էր եդան. վասն դաստիարակելոյ զբնութիւնս, որպէս ասէ առաքեալ՝ «Ապա օրէնքն դաստիարակ եղէն ի

[1] D ապստամբեցաք
[2] D ըստ որում] որպէս
[3] D Բասիլլիոս
[4] D > յորում
[5] D կացք
[6] D եղին
[7] F երևուցին
[8] D > որ զօրէնս
[9] D սրտից
[10] F իւրոց
[11] D > տուաւ
[12] D խառնակիլ, F խառնիլ
[13] AE հեղցուցիկն
[14] F տասն ամու] տանն Աբրահամու
[15] F Մովսէսի
[16] D բան
[17] D Քրիստոսի

Քրիստոս Յիսուս» [Գաղ. Գ. 24]: Եւ զոր օրինակ դայեակք զտղայս մեղմութեամբ խրատեն և որքան աճէ հասակն՝ առաւելու[1] զսաստն մինչև ի կատարելութիւն: Այսպէս օրինադիրն Աստուած[2] մինչ բնութիւնս տղա էր՝ թեթև ետ զօրէնս, որքան աճեաց՝ յաւել ևս[3] զօրինացն ծանրութիւն: Եւ որպէս մինչ[4] խիստ փոքր է տղայն, որ ոչ կարէ ինչ ի միտ առնուլ՝ ոչ գրէն տախտակ, երբ կարէ առնուլ ի միտ՝ գրեն պնակիտ: Այսպէս բնութիւնս մեր յառաջ քան զՄովսէս տղա էր, յետոյ ի մանկութեան վարժեցաւ պնակտօք Մովսէսի, երիտասարդութեան պատերազմեցաւ Քրիստոսի օրինօքն և[5] պատուիրանօքն, իսկ այր կատարեալ ի չափ հասակի ի հանդերձելումն ըստ առաքելոյ}[6]:

Բե՛ր տեսցուք, թէ որպէս են[7] պատուիրանք լոյս մտաց, որպէս[8] լոյս[9] աչաց[10], վասն որոյ ասէ մարգարէս՝ «պատուիրանք Տեառն լոյս են և լոյս տան աչաց[11]». ըստ այսմ[12] օրինակի՝ որպէս լոյս աչաց, զի «և»-ն, որ եդաւ ի տեղի՝ այլ, իբր թէ ասել՝ ա՛յլ լոյս[13] կա իմանալի, որպէս զգալի լոյս զաչս մարմնոյ լուսաւորէ, այսպէս պատուիրանք[14] Տեառն լոյս[15] գոլով՝ իմանալի լուսաւորէ զաչս հոգւոյ, այսինքն՝ զմիտս, զի Պղատոն և Արիստոտէլ զմիտսն հոգւոյն աչս[16] ասեն:

Նախ ասասցուք զկերպս զգալի լուսաւորութեան աչաց և յայնմանէ[17] դիւրալուր լիցի իմանալի լուսաւորութիւն, որպէս ի վեր[18] անդանօր բաժանեցաք զանձն ի բանական և յանբան: Իսկ անբան զօրութիւն հոգւոյ սպասաւորական և ընծաբեր է[19] տեսականին[20] մասին, այսինքն՝ իմացականին զօրութեան[21]: Եւ կոչի անբան զօրութիւն տեսողական կամ զգայութիւն, իսկ տեսականս, որ ազգական[22] և գործիք են զգայութեան: Երկրորդ[23], զի չորս են տարերք՝ կազմեցաւ չորս զգայարան՝ առ ի ճանաչել զչորս տարերս. հրատեսակաւ աչաց՝ զհուրս, օդատեսակաւ[24] ականջաց՝ զօդ, ջրատեսակաւ[25] բերանին ի ճաշակել[26] զջուր, երկրատեսակաւ շօշափելեացն՝ զերկիր: Մնաց հինգերորդ զգայարան հոտոտելեացն, զի նա ի ջրոյ անօսրագոյն[27] է և յօ-

---

1 D առաւելուն
2 AE > Աստուած
3 D և
4 D > մինչ
5 ADF > և
6 BC > {և կէտ, որպէս ծովու ասաց... ի հանդերձելումն ըստ առաքելոյ} (մոտ հինգ սյունակ)
7 A > են
8 BC > որպէս
9 C լուսոյ
10 D > որպէս լոյս աչաց
11 ADE > աչաց
12 BC > այսմ
13 C լուսոյ
14 C պատուիրան
15 C լուսոյ, D > լոյս
16 BC հոգւոյն աչք զմիտս] զմիտսն հոգւոյն աչս
17 BC յայնմէ
18 E > ի վեր
19 BC > է
20 ABCE պետականին, D կետականին
21 A զօրութիւն
22 BCF տեսական սորայ զգայական] տեսականս որ ազգական
23 ADEF հինգերորդ, B երրորդ] երկրորդ
24 D > աչաց զհուրս օդատեսակաւ
25 BC ջրատեսակ
26 AEF ճաշակ, D > ի ճաշակել
27 E անօսրագուն

դոյ թանձրագոյն[1] է՝ գոյանայ հոտ: Եւ զայն ևս տեսողականն ի ձեռն ունգացն ծանիցէ և ընծայեսցէ իմացականին, զի մի զերծցի[2] ինչ յըզգալեացս, որ ոչ ծանիցի զգայութիւն, որպէս ասէ Պղատոն, թէ հինգ են զգալիք՝ վասն այն հինգ են[3] զգայարանք, զի որպէս[4] Արիստոտէլ ի տասն բաժանէ զգալիս և[5] Պղատոն ի հինգ բաժանէ:

Տեսցուք՝ զի՞նչ են[6] զգայութիւնք[7]: Զգայութիւն է ընդունակ զգալեաց: Բայց թուի[8] այս սահման ոչ է[9] զգայութեան, այլ գործեաց[10] սորա, վասն որոյ ոմանք[11] յիմաստասիրացն այսպէս[12] սահմանեն[13]՝ հոգի իմանալի իշխանականէն ի գործարանս կոյս կարգեալ, և այսպէս՝ զօրութիւն անձին ընդունական[14] զգալեաց, իսկ զգայարանք՝ գործարան ընդունելութեան զգալեաց: Իսկ Պղատոն զգայութիւն սահմանէ անձին և մարմնոյ կցորդութիւն առ[15] արտաքոյսն, քանզի[16] զօրութիւն անձին և գործարան մարմնոյ՝ երկոքին ի ձեռն տեսութեան իմն ընդունական լինին որոց արտաքուստն: Եւ է գործարանքս սորա փորուածք գլխոյ, այսինքն[17] խելացն, և որ[18] ի նոսա՝ անձնական օդ, և որք ի նոցանէ՝ օդք[19] խոնաւուտ, լի անձնական օդով: Եւ կազմութիւն[20] զգայարանաց և է այսպէս, զի անբան զօրութիւն անձին, որ ի[21] խելս ունի, երկու երկու երակս[22] յիւրաքանչիւր զգայարանս թափուր յարենէ և ընդ նոսա առաքէ զանձնական օդ յիւրաքանչիւր զգայարանս և[23] նա տայ զգալ զգայականս: Եւ է[24] կարգեալ ի յաչս՝ զհրատեսակն[25], յականջս՝ օդն, ի ճաշակելիս[26]՝ ջուր, իսկ ի շօշափելիքն՝ զթանձրութիւն երկրի, զի նմանեաւն[27] զնմանն ծանիցէ:

Բե՛ր տեսցուք[28] զկարծիս իմաստասիրաց, որ վասն[29] աչաց լուսաւորութեան, քանզի ասէ Արիստոտէլ, թէ[30] որակութիւն ի ձեռն այլայլման օդոյն լուսով արեգականն, որ շուրջ յերևելեաց մինչև յաչս տայ զազդումն: Իսկ եպիկուրեանքն[31]՝ ուրվական[32] իմն պատկեր երևեցելոյն[33] անկանել յաչսն՝ որպէս պատկեր մարդոյ[34] ի հայելոջ: Իսկ Էպարքոս ասէ՝ ճառա-

1 BEF թանձրագուն
2 F մեզ երծցի] մի զերծցի
3 AEF > են
4 F որպես
5 ADEF > է
6 ADEF է
7 ADEF > զգայութիւնք
8 AE թի
9 ADEF > է
10 C գործոյ, F գործոց
11 D ոմանց
12 BC > այսպէս
13 D սահմանեցին, F սահմանէ
14 D ընդունելութեան
15 BC > առ
16 BC զի
17 ADEF > գլխոյ այսինքն
18 BC զի
19 DE արդարքն, AE նիարդքն] օդք
20 F կազմութեան] և կազմութիւն
21 BC է ի, ADE > ի
22 F երակոյ
23 ADEF > և
24 F > է
25 C զիրատեսական
26 AEF ճաշակս
27 F նմանեն
28 DF ասասցուք
29 BC > վասն
30 F > թէ
31 ABCEF եպիկորեանքն
32 BC ուրուական
33 D երևեցոյն
34 D մարդ

գայթս յաչացն արտաքս ձգեալ[1] որքան հասանէ, որպէս ձեռաց[2] չօշափմամբ մերձեալ[3] յարտաքոյ մարմինս՝ զընդունակութիւն նոցա առ տեսողականն[4] տալ: Իսկ երկրաչափքն կոնոն[5] իմն ի յանկմանէ ճառագայթիցն եղեալս՝ յարտաքս առաքեցելոցն ի ձեռն աչաց աջոյական՝ ի ձախկոյս և ձախոյն՝ ի յաջ, ասելով, թէ աչք զբազում իրօք[6] գիրկս արկանէ, բայց մինչ ոչ դիպի կոնոնն՝ ոչ կարէ գտանել զխնդրելին[7], եթէ դրամ[8] իցէ, եթէ այլ ինչ: Իսկ Պղատոն զտեսութիւն աչաց ճաճանչակցութիւն ասէ. է՛ ինչ, որ յաչաց լուսոյն արտաքս առաքեալ, այսինքն՝ լոյսն[9], որ բնաւորեալ է յաչս, հեղու յինքենէ զճառագայթս ի նմանասեռն լոյս[10], որ յարեգակնէն հեղու յօդս և յայսց[11] երկուց ճաճանչից[12] կցորդութենէ լուսաւորեալ օդոյն առնու զորակ մարմնոյն, որ շուրջ զինքեամբ և արձակէ[13] առ հրատեսակն աչք, և նա առաքէ ընդ երակս զիմացումն նորին ի խելսն: Իսկ Գալիանոս[14] համաձայնի Պղատոնի[15] ասելով, թէ յակն մտանէր[16] մասն ինչ զօրութիւն կամ պատկեր ուրուական՝ որպէս ասեն եպիկուրեանքն, կամ որակութիւն երևեցեալ մարմնոյն՝ որպէս ասէ Արիստոտէլ՝ ոչ կարէաք զլերին մեծութիւնն գիտենալ, նաև ոչ որպէս Էպարքոսն ասէ, զի ոչ կարէ ոգին[17] տեսողական այնքան զօրութիւն առնուլ, որպէսզի հեղանէ[18] յամենայն ուրեք երևեալն: Արդ, ասէ Լիէաս[19], եթէ օդ ունի ներընդունակ բնութիւն, մի ինչ մի[20] զտիպս իւրաքանչիւր որակաց[21] կարէ[22] ընդունել՝ ի չիկէ իմեքէ[23] կամ յարծաթոյ կամ ի կապուտակէ առնու[24] զճաճանչ արեգականն և թափանցիկ լինի մինչև ի բազում իր[25]: Իսկ ի ներքուստ արտաքս հեղեալ[26] լոյս աչաց անձնական իմացմամբ զայլայլումն օդոյն յերևեալ[27] մարմնոցն, որ շուրջ զիւրեաւ զգայ և տայ[28] ի խելս: Եւ որպէս զոր ինչ բան ունի խելքն առ երակս, այսպիսի ինչ ասի[29] ունելականն. առ օդս անձնաւորեալ[30] յարեգականն ճաճանչէ և ըստ այսմ օրինակի անձնաւորի[31] տեսութիւն աչաց: Եւ տեսանէ աչք ըստ ուղիղ[32] գծի, բայց

[1] C ձգելով
[2] BC ձեռամբ
[3] D մերձեցեալ
[4] BC տեսողսն
[5] ADE կոնոս
[6] BC իրաց
[7] BC զխնդիրն
[8] F գրամ
[9] ADE է լոյսն
[10] C լուսոյ
[11] BC յայս, F յայսոն
[12] D ճաճանչաց
[13] BC առաքէ
[14] D Գալենոս
[15] D համաձայնեալ Պղատոն] համաձայնի Պղատոնի
[16] BC ունէր
[17] D հոգին
[18] BC հասանէ
[19] BC Լիաս, E լի է սա] Լիէաս
[20] ABCEF մինչ զի] մի ինչ մի
[21] D > որակաց
[22] BC կատարէ
[23] F իմիքէ
[24] C առնուլ
[25] D իրս
[26] C հեկեալ
[27] E երևեալ
[28] BC տացէ
[29] E ասել
[30] C անձնաւոր
[31] C անձնաւոր
[32] AD ուղեղ

զգայ ըստ առաջնումն զգոյնս[1]՝ ընդ նմին և զգունեալ մարմինն, զձևն, զտեղին, զմեկուսութիւն, զթիւն, զկայս, զշարժութիւն, զխոշորն, զողորկն, զհարթն և զանհաւասարն[2], զսուրն և զբութն[3], զխոնաւուտն[4] և[5] զչորն: Եւ թափանցիկ լինի տեսութիւն[6] աչաց՝ նախ՝ ընդ օդ, երկրորդ՝ ընդ ջուր, երրորդ՝ ընդ ապակի:

Եւ հինգ են պետք[7] աչաց հաւաստի[8] տեսութեան. նախ՝ առողջութիւն զգայարանաց, և փայլումն արտաքին լուսոյ, և չափաւոր շարժութին, և մեկուսութիւն, և օդ՝ մաքուր և պայծառ՝ յայնժամն կատարեալ լինի տեսութիւն աչացն: Իսկ եթէ մի պակասէ[9] ի սոցանէ՝ կա՛մ լոյսն բնական՝ որ է ներսինն, որպէս աչիկայից, կա՛մ լոյս[10] արտաքին՝ որպէս ի խոր գիշերի՝ ոչ կարէ տեսանել: Այսպէս իմա յաղագս շարժութեան, կայի[11] և պայծառ օդոյ, զի[12] թէ մի պակաս[13] է, սխալէ զտեսութիւն աչացն. այս[14] թէ որպէս լոյս[15] աչաց: Այսպէս և ըստ այսմ օրինակի պատուիրանք Տեառն[16] որպէս լոյս[17] յարեգակնէ հեղեալ յօդ, և յանձնէ մտաց մաքրութեան լուսաւոր[18]՝ միաւորեալ տան առնել[19] ընտրութիւն չարի և բարոյ[20]. որպէս ի տիւ լուսաւոր դիւրաւ[21] ընտրի դյուր[22] և խնամ, թշնամի և ընդանի, այսպէս միտք մաքուր պատուիրանաց[23] լուսով լուսաւորեալ[24], դիւրաւ առնէ ընտրողութիւն[25] չարի և բարոյ: Այս է ասելն՝ որպէս լոյս[26] զգալի աչաց է լուսաւորութիւն, այսպէս լոյս պատուիրանաց՝ հոգւոյ[27] աչաց է[28] լուսաւորութիւն:

Բայց որովհետև զլոյս յիշեցաք, տեսցուք, թէ մարմի՞ն է լոյս, որ լուսաւորէ զօդ, թէ՞ անմարմին:

Եւ գիտելի է, զի թէ ըստ ենթակային լուսոյն առնուս[29]՝ մարմին[30] է, իսկ թէ ըստ տեսակի լուսոյն պարզ առնուս՝ թարց ենթակային[31], անմարմին է: Իսկ ենթակայ լուսոյն արեգական[32]՝ հուրն, օդն, որք են լուսաւորք[33], մարմինք[34] են: Այլ պարզ տեսակն՝ որ է լոյս, ոչ է մարմին ամենևին, այլ անմարմին՝ վասն բազում պատճառի: Նախ, զի

1 BC զգոյնն
2 BC > և զանհաւասարն
3 AE զբուդն
4 BC զխոնաւն
5 BC > և
6 E ի տեսութիւն
7 AEF ի պետք
8 BC հաւաստութիւն
9 BC պակաս լինի] պակասէ
10 AE > լոյս, B լուսոյ
11 C կա
12 C որ
13 BC անպակաս
14 D այսպէս
15 BC է տեսութիւն] լոյս
16 D > Տեառն
17 F լոսոյ
18 BC լուսաւորք
19 D առել
20 BC բարոյ և չարի] չարի և բարոյ
21 C դիւրեաւ
22 BCE դիւր
23 C պատուիրան
24 C լուսաւորել
25 BCD ընտրութիւն
26 F > լոյս
27 B է հոգոյ, C հոգոց
28 BCD > է
29 F առնուն
30 AE մարմնի
31 BC > թարց ենթակային
32 BC մարմին է] արեգական
33 BC որ լուսաւոր մարմինք] որք են լուսաւորք
34 D մարմին

որպէս մարմին գոյացական համանգամայն ի միում ժամանակի ոչ կարեն լինել ի միում տեղի, իսկ լոյսն և օդն համանգամայն են ի մի տեղի ի միում ժամանակի՝ ապա ուրեմն լոյսն ոչ է մարմին: Երկրորդ, զի մարմին առ[1] սակաւ սակաւ շարժմամբն ընթանայ[2] ի տեղոջէ ի տեղի[3], և զառաջին տեղին թողու[4] ունայն՝ յորժամ յերկրորդն հասանէ[5], իսկ լոյսն ի միում վայրկենի զամենայն միջոցս երկրի լնու. ապա ուրեմն լոյսն[6] ոչ է մարմին: Երրորդ, զի մարմին ի միում[7] ուղիղ գծի յորում շարժի[8] ոչ կարէ յաջ և յահեակ, ի վեր և ի վայր միանգամայն շարժիլ, իսկ լոյսն յուղիղ և ի[9] թիւր, ի վեր և ի վայր միանգամայն ձգի. ապա ուրեմն լոյսն[10] ոչ է մարմին[11]: Չորրորդ, ի մարմնոյ որչափ առնուս[12] պակասի, որպէս ի սափորոյ[13] գինւոյ որչափ առնուս բաժակաւ[14] պակասի, իսկ լոյսն յայսչափ[15] ժամանակս ըղխէ յարեգակնէն և ամենեքեան առնումք՝ և ոչ երբէք պակասի. ապա ուրեմն լոյսն ոչ է մարմին[16]: Հինգերորդ, զի ամենայն էքս[17] կա՛մ գոյացութիւն են[18] և[19] կա՛մ պատահումն. և որք են գոյացական մարմին՝ ի պատահմանց ոչ են, իսկ լոյս սպիտակ է, որ է սեռ որակին. ապա ուրեմն լոյսն ոչ է մարմին[20]: Վեցերորդ, զի թէ[21] մարմին էր լոյսն, յորժամ ընդ պատուհանս ի տունս մտանէր, ի փակել[22] պատուհանին լոյսն[23] ըմբռնեալ լինէր ի տունն՝ յորս եմուտ, իսկ արդ, յայտնի է, զի ոչ ըմբռնի՝ յայտ է, զի ոչ է մարմին[24]: Եօթներորդ, զի թէ լոյսն մարմին էր, պարտ էր ընդդէմ անկանել և ոչ ցուցանել զմարմին, որ անդր է, քան զինքն՝ որպէս հուր կայծակունք և բոց և անօթ արեգականն, զի թէպէտ լուսաւոր են՝ սակայն[25] մարմին են, ոչ կարեն ցուցանել զմարմին, որ անդր է, քան զինքն[26]: Իսկ լոյս աչաց զատուցեալ ի յուղիղաքամ խոնաւուտ ջրոյն[27] լուսաւոր ջրոյն, անմարմին է[28], վասն այն կարէ[29] ցուցանել տեսողականին զգոյն մարմնոցն, որ անդր է, քան զինքն: Այսպէս[30] լոյս արեգականն ջոկեալ յենթակայէն՝ անմարմին է, վասն որոյ կարէ ցուցանել զմարմինն, որ անդր է, քան զինքն: Ցայտ եղև, թէ ամենայն լոյսք զգալիք՝ ըստ ենթակային ըմբռնեալք՝ մարմին են, իսկ զա-

1 F առնի
2 BC > շարժմամբն ընթանայ
3 BC տեղի ընթանայ
4 D թողուն
5 AEF հասանի, D հասանին
6 BC > լոյսն
7 BC > լոյսն
8 D շարժէ
9 CF > ի
10 C > լոյսն
11 B > լոյսն ոչ է մարմին
12 A առնու
13 D սափոր
14 D բաժակով
15 E որչափ
16 BC անմարմին] լոյսն ոչ է մարմին
17 A էգս
18 F > են
19 D > և
20 BC > լոյսն ոչ է մարմին
21 A > թէ
22 C փակեալ
23 BC > լոյսն
24 BC ապա և] յայտ է զի ոչ է մարմին
25 ADEF > սակայն
26 BC զնոսա
27 BCDF > ջրոյն
28 D >է՝ չի
29 D կարող է] կարէ
30 D այլ

տեալ[1] յենթակայէն՝ անմարմին են: Այս յաղագս լուսոյ՝ այսքան:

*Բե՛ր տեսցուք զերկիւղ. քանզի երկիւղն բաժանի ի[2] վեց՝ ի պակումն, ի հիացումն, ի զարհուրումն, ի տագնապ, ի խորշումն և[3] յամօթ: Եւ է պակումն մածումն արեան և ընդարմացումն ոգոյ[4], երկիւղ ապառնոյ ներգործութեան: Եւ հիացումն է երկիւղ ի մեծ ինչ տեսութենէ: Եւ զարհուրումն[5] է երկիւղ յանսովոր ինչ տեսութենէ: Իսկ տագնապ է երկիւղ ի կործանմանէ, այսինքն[6] ի վրիպանաց, քանզի երկուցեալք ի վրիպանաց[7] գործոյ տագնապիմք: Իսկ խորշումն է երկիւղ յակնկալութենէ[8] պարսաւանաց[9]: Իսկ ամօթ է երկիւղ ի վատթար ինչ գործոյ: Եւ լինին այսոքիկ ըստ սոսկման իմն ջերմութեան ամենայն ի ընթացեալ ի սիրտն առ յիշխանականն կոյս, վասն որոյ լննացեալ[10] որակ գունոյն՝ կա՛մ դեղնեալ, կա՛մ կապուտակեալ, ըստ օրինակի ռամկի՝ յորժամ երկնչին[11], առ իշխանն ապաւինին[12]: Իսկ թէ ընդէ՞ր[13] սոքա վեցեքին անսուրբ[14] երկիւղ կոչին՝ յաղագս[15] պատճառին՝ զի պատճառս ունին զսպառնալիսն: Իբր թէ ոք կշտամբեալ վասն մէղաց սպառնալեօք տանջանաց և յաղագս այնր երկիղի[16] ի բաց կայ ի չարեաց՝ պատճառ ունելով յերկեղին[17] զմեղս, որով յանցեաւ. վասն այսորիկ կոչի անսուրբ: Իսկ սահմանի այսպիսի[18] երկիւղ անբան արտակոչութիւն[19] կամ[20] ակնկալութիւն հանդերձելոյ չարի: Իսկ սուրբ երկիւղ է[21] ակնկալութիւն հանդերձելոյ[22] բարեաց՝ վասն զի հեռու[23] է[24] միշտ յանցանաց, որ ոչ բնաւ նուազի[25], այլ մնայ առ ստացողին, քանզի ընդ էութեան գոյ տրամադրեալ և զամենայն բարութիւնսնովաւաճէ[26]ըստսաղմոսին[27], թէ՝ «Մի պակասեսցէ ի նոցանէ ամենայն բարութիւն» [Սաղ. Լ Գ. 11], և վկայէ մարգարէն վասն[28] յաւիտենականութեան[29] և սրբութեան սորա ասելով՝ «Երկիւղ Տեառն սուրբ է[30] և մնայ յաւիտեան» [Սաղ. ԺԸ. 9]: Աստանօր «զև»-ն դնելով՝ ցուցանէ մնալ զայս երկիւղ՝ ի մէնջ անի բաց դնելի ոչ միայն յայսմ յաւիտենիւ[31], այլև ի հանդերձելումն յաւիտենին, որ[32] օրն է[33]

[1] D զատեալք
[2] F > ի
[3] D > և
[4] CF ոգոց
[5] A զարհումն
[6] F > այսինքն
[7] D > քանզի երկուցեալք ի վրիպանաց
[8] AE յակնկալութեան
[9] F պարսաւորանաց
[10] ADEF լսնացեալ, C լայնացեալ
[11] BC երկնչի
[12] AE ապաւին
[13] BC վասն
[14] F վեցեքինսն սուրբ] վեցեքին անսուրբ
[15] BC վասն
[16] BD երկեղի, F երկեւղի
[17] C յերկիւղին, F յերկեւղին
[18] BC այսպէս
[19] BC արտագոչութիւն, F արտակոչ
[20] F իսկ
[21] AE > է
[22] F հանդերձելոց
[23] BC հեղու
[24] BCF > է
[25] BCD նուազի
[26] ADE նօթճէ, Fորճէ] նովաւ աճէ
[27] BC ըստ այնմ, DFըստ սաղմոսողին] ըստ սաղմոսին
[28] BC > վասն
[29] D յաւիտենական
[30] BC > է
[31] BCE յաւիտենիս
[32] F > որ
[33] BC > օրն է

աներեկ[1] և անվախճան. վասն որոյ ասէ՝ «Երկերուք ի Տեառնէ ամենայն սուրբք նորա» [Սաղ. ԼԳ. 10] և թէ՝ «Երանելիք են, որ միշտ[2] երկնչին ի Տեառնէ» [Սաղ. ՃԺԱ. 1], որպէսզի են ի սէր որդիական, և ոչ ի ծառայական կամ վարձկանական: Այս[3] յաղագս երկիւղին այսքան[4]:

Բե՛ր տեսցուք և[5] վասն[6] յաւիտենին, որ ասէ՝ կայ և մնայ յաւիտեան: Եւ գիտելի է, զի «յաւիտեան» անունս ի բազումս բաժանի: Նախ, ասի յաւիտեան յԱստուծոյ՝ մինչ[7] ի սկիզբն ստեղծման արարածոցս: Երկրորդ, յայնմանէ մինչ ի կատարած աշխարհի: Երրորդ[8], ի կատարածէ աշխարհի յանդրաւ յաւիտեանս: Եւ սոքա երեքեան ընդ Աստուծով և յԱստուծոյ արարեալք ըստ առաքելոյն, որ ասէ՝ «Որով և զյաւիտեանս արար» [Եբր. Ա. 2]: Իսկ Դամասկացին[9] ի բազումս տրամատէ. նախ, զեւթն[10] դարս[11] իւրաքանչիւր ամաց հազարաց յաւիտեան կոչէ զայսր[12] ժամանակի[13] շրջան[14] իսկիսմանէ[15] երկնից և երկրի մինչև նորոգումն[16] եւթն յաւիտեան: Եւ ասէ յաւիտեան զառ յապայն[17] կեանքն անկատարելին[18], որ ոչ է ընդ ժամանակաւ ինչ կամ ընդ մասամբ[19] ժամու և[20] ժամանակաց բերմամբ արեգական, որ յաւուրց և ի[21] գիշերոյ ժողովի: Այլ ընդ նմին յերկարաձգեալ ընդ մշտնջենաւորսն, զի որպէս ընդ ժամանակաւոր[22] շարժումն, որ ընդ ժամանակաւս են ժամն, նոյնպէս և մշտնջենաւորացն յաւիտեան: Կոչէ և յաւիտեան զայն, որ անսկիզբն էր ընդ Աստուծոյ յերկարաձգեալ[23] անիմանալին[24] այն, որ և կատարածն է առ ի ստեղծումն էիցս ասէ և[25] զիւրաքանչիւր էիցս[26] կեանք յաւիտեան: Եւ գիտելի է, զի այս զանազանութիւն վասն աստուածային բանին, որ ասէ մարգարէն, թէ՝ «Յաւիտենից մինչև յաւիտեանս դու ես» [Սաղ. ՁԹ. 3]: Իսկ յաւիտեանքս այսոքիկ[27] են, զոր առաքեալն ասէ՝ «Որ և զյաւիտեանս արար» [Եբր. Ա. 2], որ և սոքա ամէնեքեան պարունակին ի[28] մի և ի նոյն յաւիտեան, որ ընդ[29] էին Աստուծոյ է յարաձգական յաւիտենիւ, որ է անսկիզբն և անկատարած: Արդ, ասէ մարգարէս՝ զարդարութիւն և զպատուիրանն

[1] AE աներկ, Bաներեկ է, C աներկիւղ է
[2] BC երանի ոյք] երանելիք են որ միշտ
[3] BCայսք
[4] BC > այսքան
[5] D որ
[6] BC յաղագս
[7] B մինչև
[8] D > Երկրորդ, յայնմանէ մինչ ի կատարած աշխարհի: Երրորդ
[9] BC Դամասացին
[10] E զի զեւթն
[11] BC դարքս
[12] DF զայս
[13] BC ժամանակէ
[14] BC շիջանի
[15] BC ի սկզբանէ, Dիսկ ոմանք] իսկ ի սմանէ
[16] E ի նորոգումն
[17] F յապէն
[18] E > անկատարելին
[19] AE մասամ
[20] BC ժամանակին և ոչ] ժամու և
[21] F > ի
[22] D մշտնջժամանակաւոր
[23] BC յարաձգեալ] Աստուծոյ յերկարաձգեալ
[24] D այն իմանալիլ
[25] F > և
[26] E կեան] էիցս
[27] BC այս
[28] A > ի
[29] BC > ընդ

և զերկիւղն սուրբ կալ մնալ[1] առ յապա յաւիտեանն անանց[2] և ան-վախճան չքեղազարդեալ[3] փառօք զներգործողս իւր[4]. վասն որոյ ասէ՝ կայ և մնայ յաւիտեան:

Եւ այսոքիկ բաւականասցին[5] ի տեսութիւն բանին, որ ասէ, թէ[6]՝ «Արդարութիւն[7] Տեառն ուղիղ է և ուրախ առնեն զսիրտս[8], պատուի-րան[9]...»:

[1] BC կազմող] կալ մնալ
[2] D արանց
[3] D զքեզազարդեալ
[4] E > իւր
[5] B բաւական ասացին, F բաւակեսցին
[6] BC մարգարէս] թէ, E > թէ
[7] E արդարութիւնք
[8] F զսիրտք
[9] D դատաստան, F պատուիրանք

ԵՌԱՄԵԾԻ ԵՒ ԵՐԻՑՍ ԵՐՋԱՆԿԻ ՎԱՐԺԱՊԵՏԻՆ ԻՄՈՅ[1] ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՐՈՏՆԵՑԻՈՅ ԱՍԱՑԵԱԼ Ի ՅԱՒՐՀՆՈՒԹԻՒՆ ՆՈՐԱԿԵՐՏ ՇԻՆՈՒԱԾՈՅ ՏԱՃԱՐԻՆ[2] ԵՒ ԶԱՆԿԱԿԱՏԱՆՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ[3] ՎԱՆԻՑՆ ՍԹԱՏԷԻ՝ ՈՐ Է ԳԼՈՒԽ ԵՒ ԱԹՈՌ ՍԻՒՆԵԱՑ ՎԻՃԱԿԻՆ, Ի ԲԱՆՆ, ՈՐ ԱՍԷ. «ՏԷՐ Ի ՏԱՃԱՐ ՍՈՒՐԲ ԻՒՐՈՒՄ, ՏԷՐ ՅԵՐԿԻՆՍ ՅԱԹՈՌ ԻՒՐՈՒՄ» [ՍԱՂ. Ժ. 5]

Բնագիրը կազմված է հետևյալ հինգ ձեռագրով.
A - Ձեռ. 2178, 65ա-87ա, B - Ձեռ. 3979, 53բ-70բ, C - Ձեռ. 1844, 213ա-234ա,
D - Ձեռ. 1850, 174ա-199բ, E - Ձեռ. 6573, 199ա-228բ:

Սկիզբն ամենայն գոյացութեանց՝ Աստուած, սկիզբն ամենայն բարեաց՝ սէր, սկիզբն ամենայն շնորհաց[4] խոհականութիւն:

Առաջին, սկիզբն ամենայն գոյացութեանց՝ Աստուած, զի ի նմանէ են սկսեալ և յառաջ եկեալ ամենայն բնութիւնք արարածոց՝ երևելեաց և աներևութից, բաժանեցան ի սեռս և ի տեսակս և տրոհեալ տպաւորեցան ըստ[5] իւրաքանչիւր պատշաճի ի ձևս և ի կերպս:

Երկրորդ գլուխն՝ սէր է սկիզբն բարեաց, զի ի նմանէ ծնանին ամենայն հոյլք զանազան բարութեանց՝ առ Աստուած և առ հրեշտակք և առ մարդիկ[6]: Նախ՝ առ Աստուած, զի ի[7] սիրոյ շարժեալ գոյացոյց զեղեալքս ամենայն, և ի սիրոյ շարժեալ սակս պատկերին Հայրն ոչ խնայեաց յՈրդին, Որդին ոչ խնայեաց յանձն, Հոգին ոչ խնայեաց ի միշտ բաշխելն մարդկան: Երկրորդ՝ առ հրեշտակս, զի խոնարհ[8] կամօք, անխզելի սիրով միշտ միացեալ են ընդ Աստուած և միշտ հոգան վասն մարդկան՝ գոյակից և ծառայակից գոլով մեզ: Երրորդ՝ առ մարդիկ, զի ի սիրոյ յղացեալ ծնանի[9] զամենայն բարութիւնս հոգևոր և մարմնաւոր. հոգևոր այնքան, զի զանձինս սակս սիրոյ արքայութեանն[10] ի մահ մատնեն, ի զանազան տանջանս և ճգունս[11] անհնարինս ամօք և ժամանակօք, և մարմնաւոր, այսինքն՝ ըստ աշխարհիս, այնքան, զի ի խելաց ևս ցնորին և յանհնարինս ձեռնարկեն:

Երրորդ գլուխն՝ խոհականութիւն է[12] սկիզբն ամենայն շնորհաց, զի ամենայն շնորհ[13], որ ի մարդիկ՝ հոգևոր և մարմնական՝ եթէ՛ ի բանս և եթէ՛ յարհեստս, նախ խոհականաւն խորհեալ[14] լինի և յետ

[1] C մերոյ
[2] B շինուածոյն] շինուածոյ տաճարին
[3] C > աթոռոյ
[4] B բարեաց
[5] B ընդ
[6] E մարդիկք
[7] BC > ի
[8] BCDE անխոնարհ
[9] A ծնանին
[10] B հոգևոր և] արքայութեանն
[11] E ճգանս
[12] E > է
[13] BCD շնորհք, A > շնորհ
[14] A խորեալ

բազում որոճմանց և ընտրողու-
թեան լաւին և վատթարին, օգտին
և անօգտին[1], ապա յառաջ եկեալ
լինի իմաստ և բան խորհրդական և
կամ արուեստ[2] կատարեալ՝ ծնունդ
գեղեցիկ յընտիր ծնօղէ խոհակա-
նութեան:

Եւ արդ՝ ստեղծ Աստուած
զմարդն ամենայնիւ նման ինքեան
և եդ զերիսս զայս ի նմա, որով կա-
րօղ գոյ ամենայնիւ նմանել[3] Աս-
տուծոյ՝ այս է[4] նախ՝ զարարչու-
թիւնն, երկրորդ՝ զսէրն, երրորդ՝
զխոհականութիւնն. զարարչու-
թիւնն՝ որով արարչակից լինի
ստեղծողին, զսէրն՝ որով բաղձայ
ցանկալւոյն և հանապազ ջանայ
հասանել[5] և վայելել ի նմա, զխո-
հականութիւնն՝ որով որոշի յան-
բանիցն և կարօղ գոյ խորհել զպի-
տանին և զանպիտանն, և ուսմամբ
և ջանիւ ի կատարեալն հասանել
հասակ:

Եւ դարձեալ, թէ որպէ՞ս լի-
նին[6] արարչակիցք: Վարդապետք
զտհաս հոգիս առնեն այր կատա-
րեալ, քահանայք՝ զախտի ծնունդն՝
անախտ, զմարդիկ՝ Աստուածս,
իսկ արհեստաւորք գոյացուցանեն
յանպատշաճ իրաց պատշաճաւորս
և պիտանիս՝ որպէս հիւսունք[7]
ի մայրից սեղան և աթոռ, կա-
ռուակք[8] յօդեաց կօշիկս և զգեստս,
դարբինք՝ ի քարանց երկաթ և յեր-
կաթոյ սուսեր և այլ ինչ գործի.
ահա այսոքիւք նմանի մարդ Աս-
տուծոյ և արարչակիցք[9] կոչին:
Վասն որոյ սակս այսր պատճառի
ոչ կարէ մարդ զերիսս զայսոսիկ[10]
թաքուցանել ի մարմնի, այլ միշտ
եռայ զեռակայտռալով և ջանայ
զամենայն ի գործ արկանել, զի ի
վերկոյս ունի զձգտումն և զտար-
փումն առ ազգակիցս իւր և գոր-
ծին այս գունակ. յղացեալ մարդն
ի սիրոյն, թէ բարի և թէ[11] չար
սաղմն առեալ յարգանդի մտաց՝
միշտ խորհի խոհականաւ և յօրինէ
զհնարս պիտոյից և ջանայ ծնանել
և ի կատարումն ածել[12] զբաղձալին,
և ապա առ բերեալ գործէ զոր յղա-
ցաւն սիրով և յարմարեաց խոհա-
կանաւն և լինի արարիչ այնմ իրի:
Յորոց և մի ես՝ վատթարագոյնս
քան զամենայն մարդ, վերջինս ի
ծնունդս եկեղեցւոյ, լի անկարգու-
թեամբ և պղերգութեամբ, լքեալ ի
լուսոյն և եղծեալ ի շնորհացն, ոչ
զօրեցի տանիլ այսմ արարչաւանդ
պարգևացս՝ որ ի բնութեանս[13] մեր,
այլ սերմ առեալ ի սիրոյն վա-
ղաւուրքք[14] և յոլով ժամանակօք,
եռայր յիս տարփումն բաղձանաց
և խորհէի, խոկայի, խնդրէի սակաւ
ինչ, գրեթէ ըստ լումային պտղա-
բերիլ ի սուրբ եկեղեցիս երկնա-
հանգէտ և աստուածաբնակ տանս
Սիսական, այսինքն՝ ընծայել[15] գրով
ըստ[16] իմում կարի ի բանն մարգա-

[1] D անօգուտին
[2] A արհեստ
[3] D նմանիլ
[4] C այսինքն] այս է
[5] E հասանիլ
[6] B լինի
[7] D հիւսունկ
[8] B կարուանք
[9] D արարչակեօք
[10] E զայս
[11] A եթէ
[12] B օծել
[13] D բնութիւնս
[14] A վաղաւուրք
[15] A ընձացել
[16] A > ըստ

ըէին, որ ասէ՝ «Տէր ի տաճար սուրբ իւրում, Տէր յերկինս յաթոռ իւրում»:

Բայց նախ առ ձեռն պատրաստ գիտելի է, զի չորք են տունք և տաճար Աստուծոյ, որ յանեղական բանէն հաստատեալ կառուցան. առաջինն՝ աշխարհս, երկրորդն՝ վրան ժամուն և որ ի Սողոմոնէն շինեցաւ և ի Զօրաբաբելէ[1] նորոգեցաւ մինչ ի մարմնանալ Բանին Աստուծոյ, իսկ երրորդն՝ եկեղեցի սուրբ, որ անշարժ կառուցաւ, և չորրորդ՝ մարդն կենդանի՝ որ է[2] աշխարհ երկրորդ ի վերայ երկրի: Եւ թէ սոքա[3] տուն և տաճար Աստուծոյ կոչին՝ որպէս ասացաւ, բեր հաւաստեսցուք զիւրաքանչիւրն աստուածեղէն վկայութեամբ Գրոց: Եւ որպէս ոչ կարէ զբովանդակն բերել ծաղիկ տկարազօր թռչունն այն երկթևիկ, վասն որոյ ի սոցանէ զպիտանին առ[4] այժմուս[5] ի մանուածս վարսից ընդունելով[6] պարաբարձեալ[7] նիւթեսցուք ի ըչիչ սակաւունակ մտաց՝ ընծայելով թերևս զբանս բանասիրաց անձանց:

Եւ զի տուն անուանի աշխարհ, յայտ է[8] յառակաւոր բանէն, յորում տուն կոչէ Տէրն[9] զաշխարհս և մարդս՝ տնտես[10] ի սմա [Ղուկ. ԺԲ. 35-46], և դարձեալ, ինքն ճրագով աստուածութեանն վառեալ զիւր մարմինն և ածեալ[11] աւել տան իւր աշխարհի [Ղուկ. ԺԵ. 8], և փողն տարսոնացի գոչէ՝ «Տուն կազմի յումէ կազմի, իսկ որ զամենայն արար՝ Աստուած է» [Եբր. Գ. 4], և աստուածաբան աւետարանիչն Յովհաննէս՝ «Բացաւ,- ասէ,- տաճարն Աստուծոյ՝ յերկինս» [Յայտ. ԺԱ. 19]: Եւ աշխարհ է ըստ Պղատոնի յերկնէ և յերկրէ՝ ի հրեշտակաց և ի մարդկանէ բաղկացեալ: Արդ՝ զձև կերպարանաց աշխարհիս իբրև զկազմած գեղեցկայարմար[12] եռայարկեան շինուածոյ նմանէցուցանէ աստուածահայր մարգարէն Դաւիթ ասելով՝ «Զգեցեր զերկինս որպէս խորան. և արկար ի վերայ ջուրց զվերնայարկս նորա» [Սաղ. ՃԳ. 2-3]: Վերնայարկ զիմանալեացն կոչէ աշխարհ, զոր իբրև վարագուրաւ[13] երկնային գնդինն[14] առագաստեալ և անջրպետեալ[15] է ի զգայական բնութեանցս, լի և անթերի գոլով անմահ և անմարմին կենդանեօք, յերիս երրեակս[16] որոշեալ դասուք, բարձրագոյն քան զմիմեանս աստիճանաւ և ըստ կարգի, զոր ոմանք սահմանելով ասեն՝ գոյացութիւն իմացական, մշտաշարժ, անձնիշխան, անմարմին, անմահ, Աստուծոյ սպասաւոր, և այլքն ենթադրելով այսպէս՝ լոյս թափանցիկ, հուր անկիզանող, հողմ անվայրափակ: Իսկ դեր ի վերոյ քան զնոսա է աստուածա-

[1] CE Զորաբաբիլէ
[2] BCDE > որ է
[3] B Քրիստոս
[4] A առայ
[5] B այժմոյս
[6] B > ընդունելով
[7] B պարաբար վարսից
[8] A յայտնէ] յայտ է
[9] AB > Տէրն
[10] A > տնտես
[11] ABC ածել, D աւծել
[12] C գեղեցկայարդար
[13] D վարագոյրաւ
[14] A գնդիւն
[15] B անջրպետելի
[16] D երակս

պետականն լոյս, որ[1] է ինքն Սուրբ Երրորդութիւնն՝ անջրպետեալ և գերամբարձեալ յեղականացս բնութեանց, զոր երանելին Պօղոս ներքին կողմ վարագուրին կոչէ, յոր եմուտ յոյսն մեր [Եբր. Զ. 19], և դարձեալ ասէ՝ «Որ ելն ի վերոյ քան զամենայն երկինս, զի լցցէ զամենայն» [Եփես. Դ. 10], որով իմանամք ճշմարտապէս, թէ որպէս զգալի երկինսդ[2] հրեշտակաց խորանն ի մէնջ[3] է անջրպետեալ, այսպէս և յանմարմնոցն իմանալի երկնիւն վերին[4] խորանն, ուր կայ աթոռք աստուածութեանն, որպէս ասէ մարգարէն. «Տէր ի տաճար սուրբ իւրում, Տէր երկինս յաթոռ իւրում»:

Բայց բեր աստանօր նախ յաղագս ստորնայարկ շինուածոյ[5] տաճարիս հարցաքննեսցուք, զի հետազօտելով[6] մարթասցուք վերնայարկ ձեղուանն պարփակութեան[7] երկնի ասեմ և երկրի, ուր մեք ամենայն զգայական[8] կենդանիքս[9] եմք յակաստանեալ: Եւ աստանօր երիս իրս նախ[10] առաջի[11] կայ մեզ գիտել. առաջին՝ թէ ի մի՞ նիւթոյ կազմեաց Աստուած բոլոր գոյացութեան[12] տունս[13], այսինքն՝ զերկինս և զերկիր, երկրորդ՝ թէ զի՞նչ է նիւթ, երրորդ՝ թէ վա՞սն էր նիւթս այս տարր կոչի:

Եկեսցուք յառաջին գլուխն և հարցցուք[14] թէ ի մի՞ոյ[15] նիւթոյ գոյացոյց Աստուած զերկին և զերկիր:

Գիտելի է, զի Պղատոն և ամենայն փիլիսոփայքն առաջին՝ ի մի նիւթոյ՝ ի չորից տարերց, ասացին, բաղկացեալ զերկնային և զերկրայինս: Իսկ Արիստոտէլ ընդդիմանայ այսմ[16] ասելով՝ այլ գոլ զնիւթ երկնային մարմնոց և կոչէ հինգերորդ տարր ի վերայ[17] չորից՝ մի զուտ և պարզ[18] գոլով՝ աններհակ և անապական[19]: Եվ ասէ ընդդէմ Պղատոնի, թէ երկնային մարմինքն էին ի չորից տարերց, մի առ մի փոխէին[20] և ապականէին՝ որպէս երկրաւորքս: Յորս պատասխանէ Պղատոն ի Տիմէի տրամաբանութիւնն[21] այսպէս, թէ արարիչն հրատարակէր առ երկնայինս, թէ աստուածք աստուծոց, որոց ես իսկ եմ հայր և արարիչ, թէ ըստ բնութեան ձերում էք ապականացու, բայց ըստ կամաց իմոց էք անապական, բայց սակայն կամքս իմ զօրաւոր է, քան զապականութիւն բնութեան ձերոց՝ վասն այն ո՛չ ապականիք: Իսկ Արիստոտէլ չորս կերպիւ հաստատէ, զի այլ է նիւթ երկնային մարմնոցն: Նախ, զի ամենայն, որ զմի նիւթ ունին[22]

[1] A ուր
[2] A երկնիւդ
[3] E մէջն
[4] B > վերին
[5] A շինածոյ
[6] ABD հետազօտել
[7] C պարփակութենէ
[8] E > զգայական
[9] A կենդանօքս
[10] E նա
[11] D առաջ
[12] A գոյացութիւն
[13] A տանս

[14] B հարցուք
[15] A մի
[16] BCDE սմա
[17] A > վերայ
[18] A մի պարզ
[19] B > և անապական
[20] A փոփոխէին
[21] A տրամաբանութեանն
[22] BCD նիւթուն, E նիւթոյն] նիւթ ունին

հարկ է[1], զի զմի շարժումն ունի-ցին: Այլ արդ՝ երկնային մարմինն անուաձև շրջագայի, իսկ երկրա-ւորքս՝ ուղղակի՝ ի վեր և ի վայր, և ներհակօրէն, յորմէ ծնանի ապա-կանութիւն: Երկրորդ, զի տարերքս մէկ առ մէկոյ ծնանին[2] և մի առ մի փոփոխին[3], իսկ թէ էին նոքա յայսմ տարերց, կարէին և նոքա ի տար-բականս փոխարկիլ[4], և տարերքս՝ ի նոսա, բայց ոչ փոփոխին: Երրորդ, զի թէ էին նոքա ի ներհակ որակ տարրականաց և ի ներհակ շարժ-մանց՝ կարէին ապականութիւն կրել: Չորրորդ, զի տեսակ երկնա-յին մարմնոյն այնքան յագեցու-ցանէ զնիւթն իւր, մինչ ոչ ցան-կայ մերկանալ[5] զտեսակն իւր: Իսկ տարրական մարմին միշտ ցանկայ մերկանալ զտեսակն իւր և զգե-նուլ այլ տեսակ, և մինչ առաջին տեսակն ոչ ապականի, զերկրորդն ոչ կարէ զգենուլ՝ յայն սակս ապա-կանի: Իսկ երկնային մարմինն ոչ բնաւ մերկանայ, վասն այն և ոչ ապականի:

Եւ որովհետև որոշեցաք զնիւթ, բե՛ր տեսցուք զերկրորդ գլուխն, թէ զի՞նչ է նիւթ և ի քանի՞ս բա-ժանի:

Բայց նախ բաժանել պարտ է, և ապա սահմանել: Եւ զի բաժանի նիւթ յերկու՝ ի հասարակական և ի մասնական: Իսկ հասարակական նիւթ գոլով ըստ թուոյ[6] առանց տե-սակի՝ ի բազմաց[7] ընկալեալ լինի, վասն զի առանց տեսակի միշտ զօ-րութեամբ լինի, որպէս ասէ Արիս-տոտէլ ի Պերի արմէնիաս գիրքն, ի[8] քսան և ութն[9] ճառն, թէ է՛ ինչ, որ միշտ ներգործութեամբ՝ որպէս[10] Աստուած, և է՛ ինչ, որ միշտ զօ-րութեամբ՝ որպէս նիւթ հասարա-կական, և է՛ ինչ, որ երբեմն զօ-րութեամբ և երբեմն ներգործու-թեամբ՝ այսոքիկ, որ ի[11] լինելու-թեան և յապականութեան են: Իսկ զայն նիւթ, որ միշտ զօրութեամբ է, փիլիսոփայն Դաւիթ անմարմին կոչէ և հասարակական՝ յինքենէ անտեսակ, ի ներքոյ ամենայն տե-սակի: Իսկ մասնական նիւթ կոչի իւրաքանչիւր տարր և իւրաքան-չիւր մարմին՝ այսպիսի իմն օրի-նակաւ, զի նիւթ հասարակական իսկոյն ընդ ստեղծանիլն[12] համա-գամայն ընդ նմին ստեղծան չորս որակք՝ չոր և գէջ, ցուրտ և ջերմ: Իսկ որ ի ջերմն[13] հպեալ նիւթ՝ հուր եղև, իսկ որ ի ցուրտն՝ ջուր, և որ ի չոր՝ երկիր, և որ ի գէջ՝ օդ. այսպէս չորս տարերք կազմեցան ի նիւթոյ և ի տեսակէ: Եւ զի ու-նին տարերք տեսակ[14] գոյացական և տեսակ պատահական[15]. գոյացա-կան ունի երկիր՝ զչոր, իսկ պատա-հական՝ զցուրտ, իսկ ջուր՝ զցուրտ գոյացական, իսկ զգէջ պատահա-կան, այսպէս օդ՝ զգէջ գոյացական

[1] D հարկանէ] հարկ է
[2] ABC ծնանի
[3] BCDE փոփոխի
[4] C փոփոխիլ
[5] D մեր մերկանալ
[6] CE թուոց
[7] D բազմանց
[8] A > ի
[9] C չորսն
[10] A > որպէս
[11] B > ի
[12] BCDE ստեղծանելն
[13] C մէջ
[14] A > տեսակ
[15] D պատական

և զջերմ պատահական, իսկ հուր՝ զջերմ գոյացական և զչոր՝ պատահական: Քանզի այս տարր վասն մի գոլոյ[1] նիւթոյն, դիւրաւ ընդունի զմիւս տարերն զորակութիւն՝ վասն յար մերձաւորութեան, և այսր աղագաւ շաղկապին և խառնին ի միմեանս, և ի սոցա խառնմանէն լինելութիւն լինի էակացս[2]: Նաև այսր աղագաւ ներհակ թշնամիքս լինին սիրելիք անքակտելիք՝ որ[3] ըստ գոյացական որակացն են թշնամիք անհաշտելիք:

Եւ որովհետև ծանեաք զորքանութիւն նիւթոյն՝ բե՛ր տեսցուք և զերրորդ գլուխն, թէ վա՞սն էր հասարակ զչորեսինսն[4] տարր կոչեն[5]:

Եւ զի սահմանօրէն տարրն աշխարհական է մասն նուաստ շարախառնութեանց: Նախ, կոչի տարր, զի սփիւռ և ցիր են[6] ընդ փորուածս երկնից գնդապէս: Երկրորդ, զի տարեալ են ընդ միմեանս, իբր թէ իւրաքանչիւր տարր՝ զոր և առնուցուս, զերեքն ի նմին[7] խառնեալ գտանես՝ եթէ հուր, և եթէ ջուր[8], նոյնպէս՝ օդ և երկիր: Երրորդ, զի զամենայն գոյակքս մարմնեղէն ի յինքեան տարեալ կրեն: Չորրորդ[9], զի իւրաքանչիւր տեսակ[10] մարմնեղէն՝ անշունչ և տունկք և զգայականք[11], ի սոցանէ ի չորից, մասն նուաստ հատեալ, ի բոլորէն շարախառնեալ կազմեն տեսակս ազգի ազգի՝ ըստ չափու հատուածոցն տարերց: Հինգերորդ, զի սոքա չորս որակքս տարրականք միայն կոչին[12], զի սոքա միայն են ազդողական որակք, որ յորս մերձենան՝ ի բոլորն թափանցեալ տարրին, և զբոլորն յինքեանս փոխարկեն, այսինքն՝ ի ջերմ և ի ցուրտ, ի դէջ և ի չոր, զորս ոչ կարեն առնել այլ որակք՝ սեաւ կամ սպիտակ, կարմիր կամ դեղին և որ ի սոցանէ խառնուածք զանազանք՝կապոյտ[13], կանաչ և այլ նոյնպիսիք: Վեցերորդ, զի այնպէս առանց յաւելուածոյ[14] և պակասութեան կազմեցան սոքա, զի թէ ի սոցանէ մասն նուաստ հատանի և առնի էակ՝ հին էակն լուծանի և լնու զպակասութիւն հատեալ[15] տարրին, և հատեալ տարրն լինի էակ և լնու զպակասութիւն անցեալ և չիջեալ էակին. և[16] այսպէս տեսակ և տարր տանին ի միմեանս: Եօթներորդ, զի երկիր տղմացեալ՝ լինի ջուր, և ջուր թանձրացեալ և կաւացեալ՝ լինի երկիր, իսկ ջեռեալ և շոգացեալ՝ լինի օդ, օդ ժողովեալ և խտացեալ՝ լինի ջուր, իսկ չորացեալ՝ ի հուր փոխարկի, այսպէս և հուր չիջեալ[17] և ի բաց եղեալ զչորութիւն՝ լինի օդ, քանզի է օդ չիջումն հրոյ և շոգի ջրոյ ջեռուցելոյ[18]: Ութերորդ, զի ըստ այլ յեղանակի ասեն որա-

[1] B գալոյ
[2] BCDE այլ էակացս
[3] B և որ
[4] A > չորեսինսն, BCD չորեսին
[5] ABCE կոչեն
[6] A > են
[7] A մին
[8] D > և եթէ ջուր
[9] B երրորդ] չորրորդ
[10] A տեսակք
[11] D զգոյականք
[12] D կոչեն
[13] A կապուտ
[14] E յաւելուածոց
[15] B հասեալ
[16] A > և
[17] D շինեալ
[18] A ջեռացելոյ

կութիւնս ունել տարերացս[1]. երկրի և ջրոյ ծանրութիւնս՝ ըստ որում ի վայր բերին բնութեամբ, իսկ օդոյ և հրոյ՝ թեթևութիւն՝ ըստ որում ի վերինն բերին բնութեամբ[2]: Իններորդ, ասեն ստոյիկեանքն զտարերս զոմանս արարողականս և զոմանս՝ իգականս. արարողս՝ զհուր և զօդ, զի ներգործող են և ազդող, իսկ զջուր և զերկիր՝ իգականս, այսինքն՝ կրող և ընդունող ազդմանց սոցա[3]: Տասներորդ, զի սոքա իւրաքանչիւր ոք ունին երկուս ծայր որակութեան[4], զի միւսն[5] ծայրիւն են տարազգի, և միւսովն են տարեալք ի[6] միմեանս, զի որպէս ասացաք, երկիր ունի չորութիւն և ցրտութիւն, ջուր ունի ցրտութիւն և գիջութիւն[7], օդ ունի գիջութիւն և ջերմութիւն, հուր ունի[8] ջերմութիւն[9] և չորութիւն[10]: Եւ այսպէս են[11] թշնամիք անհաշտելիք ներհակք միմեանց՝ ջերմ և ցուրտ, չոր և գէջ: Իսկ հնարիւք աստուածայնովք յըստեղծմանէ մինչև ի կատարումն[12] աշխարհի և անդր ևս մնան սիրելիք անքակտելիք, զի «Ազգ գայ և ազգ գնայ և երկիր յաւիտեան կայ» [Ժող. Ա. 4]: Զի երկիր զվերին ծայրն ունի ցուրտ և ջուր՝ զներքին. երկրի վերին ծայրն և ջրոյ ներքին՝ միաւորեալ են ընդ միմեանս: Իսկ ջրոյ վերին ծայրն՝ գէջ և օդոյ ներքին ծայրն՝ գէջ. ջրոյ վերին և օդոյ ներքին ծայրքն միաբանեալ են ընդ միմեանս: Մեքենայեաց արուեստն Աստուծոյ ի մէջ երկուց թշնամեաց՝ երկրի և օդոյ, զջուր, զի միջնորդութեամբ իւրով կապեաց սիրով զերկու թշնամիքն ընդ միմեանս և զինքն ընդ նոսա: Այսպէս ջրոյ և հրոյ մեքենայեաց զօդ, զի օդ գիջութեամբն ընդ ջուրն է կապեալ, որ նախքան զինքն և ջերմութեամբն՝ ընդ հուր, և զերկուս հակառակս ինքեամբ սիրով ընդ մի կապեաց: Իսկ հուր՝ ըստ մակբեկութեան[13] և մակդարձութեան[14] չոր[15] ծայրիւն ընդ երկիր[16] է կապեալ և ջերմութեամբ ընդ օդ: Եւ զի ամենայն մարմնական էութեանց չորս ինչ պետք են բաղկացութեան՝ էութիւն, մածումն, շարժումն և[17] երևումն, վասն որոյ ի հարկէ պիտոյ եղև[18] չորս տարերքս, որպէս ասէ Պղատոն, զի առանց հրոյ երևումն ոչ լինի, և ոչ առանց օդոյ շարժումն, և ոչ առանց ջրոյ մածումն, և ոչ առանց երկրի հաստատութիւն: Ապա ուրեմն, յայտ եղև, թէ ի հարկէ պիտոյ էր չորս տարերքս՝ զի լինէր մարմին:

Այսքան յաղագս ստորնայարկ տանս երկրի[19]:

[1] A լինել տարերցս] ունել տարերացս
[2] C > իսկ օդոյ և հրոյ թեթևութիւն ըստ որում ի վերինն բերին բնութեամբ
[3] B նոցա
[4] A որակութիւն
[5] A միա
[6] B տարեալ են] են տարեալք ի
[7] B գիճութիւն
[8] E > ունի
[9] E ջերմ
[10] E չոր
[11] E սոյնպէս] այսպէս են
[12] B կատարած
[13] C մակբերութեան
[14] C կամ մակդարձութեան
[15] A չորութեան
[16] E երկրի
[17] BCDE > և
[18] A եղեալ
[19] C > Այսքան յաղագս ստորնայարկ տանս երկրի

Իսկ յաղագս վերնայարկ ձեղունանն[1] պարփակութեան երկնից՝ նախ պարտ է քննել և որոշումն առնել[2] ըստ տրամաբանական արուեստի, զի երկինքն հոմանուն է: Եւ ի վերայ հոմանուանց զերիս զայս պարտ է խնդրել. նախ՝ թէ քանի՞ նշանակութիւն ունի, երկրորդ՝ թէ յաղագս որո՞յ նշանակութեան է հանդէս, և ապայ զերրորդն[3] սահմանել կամ ստորագրել:

Բայց նախ զայս ինչ[4] հետազօտեսցուք, թէ արտաքին իմաստասէրքն յաղագս սորա զմի՞ ունէին դիտաւորութիւն, թէ այլ և այլ, և ապա յեկեղեցական կարծեաց զճշմարիտն արտադրեսցուք:

Արտաքին իմաստասէրքն յաղագս[5] երկնի այլ և այլ ստացան[6] կարծիս, քանզի ոմն ի ջրոյ ասաց գոլ զերկին, և ոմն՝ յօդոյ, և այլ ոմն՝ ի հրոյ, իսկ ոմն՝ ի չորից տարերց, որպէս ասէր Եմփէդոկլէս՝ հնագոյն փիլիսոփոս, թէ երկինքն բաղկացեալ է ի չորից տարերց: Եւ ըստ կարծեաց նորա երկինքն երևի ապականելի[7], զոր և ասէ ըստ այսմ օրինակի, թէ ամենայն ինչ ի չորից ունի[8] զլինելութիւն և ի[9] սիրելութենէ և ի թշնամութենէ: Իսկ որ ի[10] չորից և ի սիրելութեանց՝ է՛ն անապականք, իսկ որ ի[11] չորից և ի թշնամութեանց՝ է՛ն ապականացուք, այսպէս եդ և[12] զԱստուած՝ ի չորից և ի սիրելութեանց: Իսկ Արիստոտէլ ընդդիմաբանէ Եմփէդոկլեայ և ասէ, թէ երկինն ոչ է եղեալ ի չորից տարերց, այլ ի հինգերորդ էութենէ: Երկրորդ, սուտ առնէ ի սիրելութենէ և ի թշնամութենէ ասելն, քանզի ասաց Եմփէդոկլէս[13], թէ նոքօք ունիմք զգիտութիւն, զոր ունիմք առ մեզ՝ որպէս իւրաքանչիւր[14] տարեր զնմանն ճանաչեմք, զոր վկայեն իւրաքանչիւր զգայարանքս, այսպէս և սիրելութեամբ, զոր ունիմք առ մեզ՝ զսիրելութիւն ճանաչեմք, և թշնամութեամբ՝ զթշնամութիւն: Իսկ ապա ուրեմն, կարողանայ մարդ գիտել, զոր անկարանայ Աստուած գիտել, զի ոչ ունի թշնամութիւն Աստուած՝ ոչ գիտէ զթշնամիս, որ կարի իմն երևի սուտ և անիմաստ ձեռնարկութիւն: Իսկ Պղատոն ասէ զերկին ի չորից տարերց՝ ի պարզ տարրէ հրոյ:

Իսկ ի[15] վարդապետաց եկեղեցւոյ[16] ոմանք հետևացան Պղատոնի, ասելով, թէ առաջին երկինն, որ ասաց Մովսէս, թէ՝ «Ի սկզբանէ արար Աստուածզերկին»,«երկին»[17] զտարրը հրոյն ասաց, և յերկրորդում աւուրն, որ արար զհաստատութիւն, զօդեղէն երկինքդ ասէ, յորում եդան աստեղք: Իսկ հրամանաւն Աստուծոյ օդեղէն հողմ պրկեալ զվերին և զներքին կա-

1 B ձեղմանն
2 B լինել
3 B զերկրորդն
4 A զայս նախ] նախ զայս ինչ
5 A > յաղագս
6 B ստացական
7 D ապականել
8 D ունին
9 D > ի
10 A > ի
11 A > ի
12 B > և
13 A Եմփենդոկլէս
14 A զիւրաքանչիւր] որպէս իւրաքանչիւր
15 BE > ի
16 D եկեղեցեայ
17 CE երկիր

մարն: Զներքին կամարն ի վայր պրկեալ պահէ հաստատուն և զջուր և զերկիր ի վեր ի յաստուածադիր սահմանէն անշարժ և անդրդելի ի կայանս[1] իւրեանց: Իսկ նոյն հողմ այսպէս զվերին կամարն հաստատեաց անջրպետ[2] ջուրցն վերին, կալ մնալ զովացուցիչ հրեղէն կամարին: Իսկ հաստատութիւնն[3] առ ի ներքնոցս[4] մշտաշարժ ներգործութեամբ հաստատէ զլինելութիւն ծննդոց[5] կենդանեաց: Իսկ ոմանք ի վարդապետաց եկեղեցւոյ, յորոց գլուխ Բասիլիոս[6] Կեսարեան, ասէ զառաջին երկինն հրեղէն, այլ ոչ ի չորից տարերցս, այլ իմանալի և լուսաւոր էութիւն[7], բնակարան ամենայն[8] դասուց հրեշտակաց և սրբոց երանելեաց և արդարոց: Իսկ ի ներքոյ նորա երկրորդ երկին ասէ զջրեղէն կամարն: Եւ երրորդ երկին ասէ զաստղալից երկինս: Եւ զսա թաղկուն և թոյլ՝ իբրև զծուխ հաստատեալ, այլ իմն էութիւն անօսր՝ զատ ի չորից տարերց: Եւ կարծեցուցանէ հաւանել հինգերորդ էութեան[9] Արիստոտէլի[10]: Եւ ապա ի ներքոյ նորա զչորս տարերս գնդաձև իմն պարունակեալ. հուր՝ յեթերէ՝ ի հինգերորդ էութենէն, օդ՝ ի հրոյ, ջուր՝ յօդոյ, երկիր՝ ի ջրոյ: Եւ սոքա ըստ բարձրութեան իւրաքանչիւր երկին կոչին:

[1] BCDE կայեանս] ի կայանս
[2] D անվրէպ
[3] BCDE հաստատութեանն
[4] A ներքոյցս
[5] A ծննդական
[6] A կոչի Բասիլիոս
[7] C լուսաւորութիւն] լուսաւոր էութիւն
[8] A > ամենայն
[9] BCDE էութեանց
[10] BCE Արիստոտիլի

Եւ զի հոմանուն ասացաք զերկին և բաժանեցաք, զի երեք են այլ և այլ բնութիւն՝ ո՛մն հրեղէն[11], ո՛մն ջրեղէն, և ո՛մն օդեղէն կամ ի հինգերորդ էութենէն, բե՛ր յաղագս որոյ մեր բանս է՝ սահմանաւ արտադրեսցուք:

Եւ նախ սկսցուք ի հրեղէն երկնէն: Իսկ առաջին երկինն, որ կոչի հրեղէն, որ է բնակարան հրեշտակաց, սահմանի այսպէս. երկին հրեղէն՝ է էութիւն բարձր, լուսաւորեալ[12] ներգործութեամբ, անկենդան[13] գոլով բնակարան հրեշտակաց: Իսկ երկրորդ երկին ջրեղէն՝ մարմին է բարձր, լուսաւոր զօրութեամբ, անբնակ և անկենդան: Իսկ զերրորդ երկինս՝ աստղալից, զայս, որ ոմանք ի չորից տարերց[14] ասացին, և այլք՝ միայն ի տարրէ հրոյ, կէսք՝ ջրեղէն, և կէսք՝ օդեղէն, և ոմանք հինգերորդ էութիւն ասացին՝ զատեալ ի չորիցս՝ անապական էութիւն:

Իսկ աստանօր նախ պարտիմք սահմանել և ապա բաժանել, զի սահմանն նմանի միակի և բաժանումն՝ բազմութեան: Բե՛ր սահմանեսցուք՝ երկին է մարմին բարձր, լուսաւորեալ՝ մասա՛մբ ինչ զօրութեամբ և մասա՛մբ ինչ ներգործութեամբ: Բե՛ր բաժանեսցուք ստոր բաժանմամբ՝ իսկ սա բաժանի յութերորդ կամարս: Առաջին[15] և վերնագոյն կամարն, որ ունի[16] զեւթ-

[11] B > հրեղէն
[12] C լուսաւոր
[13] D անբան
[14] BCDE > տարերց
[15] D > առաջին
[16] C ունին

նեսին[1] կամարսն ի ծոց իւր՝ որպէս պնակ[2] մի, որ ստացեալ ունի[3] ի ծոց իւր եւթն պնակ՝ մի քան զմի փոքր: Իսկ յուԹերորդ կամարն եդ Արարիչն զերկոտասան կենդանակերպսն և զայլ անԹիւ բազմուԹիւնս աստեղաց, զոր յօրինակ առնու առաքեալն Պօղոս յարուԹեան աւուրն. «Որպէս աննմանք[4] աստեղք լուսափայլուԹեամբ, այսպէս և արդարք՝ անհաւասար փառօք» [Ա. Կորն. ԺԵ. 41]: Իսկ այս կամարիս եդ չափ շարժման ի կիսէ յարևելից մինչև ի նոյն կէտ հոլով մի, քսան և չորս ժամօք: Եւ եդ[5] ազդմունք յիւրաքանչիւր բնուԹիւնս աստեղաց և կենդանակերպից ազդել զըստորինս, որպէս ունիս ճանաչել յաստղն, որ ի կողմն բուլխարաց կազմէ զգեղեցկայարմար հուր, և որպէս աստղն, որ կազմէ զմանգնիտն քար: Եւ յիւրաքանչիւրսն այսպէս ծանիր, զի ոչ երբէք ձրի և վայրապար իրս[6] {ներգործէ բնուԹիւն կամ արհեստ: Իսկ եԹէ ո՛չ բնուԹիւն, և ո՛չ արհեստ, քանի՞ ևս առաւել օտար է Աստուծոյ առնել ձրի և վայրապար իրս}[7]: Նաև Գիրն աստուածային վկայէ, Թէ եղիցին ի նշանս և ի ժամանակս և յաւուրս և ի տարիս, յաղագս որոյ եղեն կազմեալ եւթն մոլորական աստեղն՝ ի յեւթն կամարս՝ յիւրաքանչիւր կամար[8] աստղ մի: Իսկ վերին կամարն, որ ասացաք յարևելից յարևմուտս շրջի, և յարևմտից յարևելս՝ ըստ նմանուԹեան անուոյ[9]: Եւ կամ ըստ Սողոմոնի, ելանէ[10] յարևելից ի յարևմուտս, պատի ընդ հիւսիսի[11] և ձգի ի տեղի իւր [Ժող. Ա. 5-6]: Եւ այս[12] կարծիս յաղագս երկնի և մոլորակացն[13] իմանի ըստ օրինակի երկանաքարի[14]: Իսկ զկնի ուԹերորդ կամարին է երկրորդ կամարն՝ Զօհալին, որ կոչի Երևակ՝ երկու ամ և կէս կենայ[15] ի մին[16] կենդանակերպն, և ամենայն կենդանակերպ երեսուն[17] աստիճան է, և յամենայն աստիճան[18] երեսուն[19] օր կենայ և յերեսուն տարին[20] պատէ զկենդանակերպսն: Երրորդ գոտին ՄուշԹարին է, որ կոչի ԼուսնԹագ՝ մէկ ամ կենայ ի կենդանակերպն և երկոտասան օր՝ յաստիճանն, և ի երկոտասան տարին պատէ զկենդանակերպսն: Չորրորդ գոտին Մառեխն է, զոր Հրատ կոչեմք՝ քառասուն և հինգ[21] օր կենայ ի կենդանակերպն և օր և կէս՝ յաստիճանն, և տարի

[1] C զուբնեսին, D զեօթանեսին
[2] B պնակիտ
[3] A լինի
[4] A աննման
[5] E > եդ
[6] B վայրապարիս] վայրապար իրս
[7] BCDE > {ներգործէ բնութիւն կամ արհեստ: Իսկ եթէ ոչ բնութիւն, և ոչ արհեստ, քանի ևս առաւել օտար է Աստուծոյ առնել ձրի և վայրապար իրս}

[8] C > յիւրաքանչիւր կամար
[9] B անուոյ
[10] BCD ելանել
[11] BE հիւսիսիւ
[12] B > այս
[13] BE մոլորականացն
[14] A > Եւ այս կարծիս յաղագս երկնի և մոլորակացն իմանի ըստ օրինակի երկանաքարի
[15] E մնայ
[16] B նոյն] մին, C կէսն է նա ի նմին] կէս կենայ ի մին
[17] A ութ
[18] D > երեսուն աստիճան է և յամենայն աստիճան
[19] A ութ
[20] A > տարին
[21] E > և հինգ

և կէս պատէ զկենդանակերպսն: Հինգերորդ[1] Շամս, որ է Արեգակն, երեսուն օր կենայ ի կենդանակերպն, և մի օր՝ յաստիճանն, և ի[2] տարի մի պատէ զամենայն կենդանակերպսն: Վեցերորդ[3] Զոհրայն[4], որ է Լուսաբերն՝ հնգետասան օր կենայ ի կենդանակերպն, {և վեց ժամ՝ յաստիճանն, և ի վեց ամիսն պատէ զկենդանակերպսն: Եւթներորդ[5] Օտարիտն, որ է Փայլածուն՝ եւթն օր և կէս կենայ ի կենդանակերպն}[6] և երեք ժամ յաստիճանն, և յերեք ամիսն պատէ կենդանակերպսն: Ութերորդ[7] Ղամար, որ է Լուսին՝ երկու օր և կէս կենայ ի կենդանակերպն և մի ժամ՝ յաստիճանն, և ի[8] քսան և ինն օր և կէսն պատէ զամենայն կենդանակերպսն:

Դարձեալ, կոչին երկինք կերպիւ ինչ այնոքիկ, որ հաղորդին ի հատկութիւնն երկնից, որ է բարձրութիւն և լուսաւորութիւն: Եւ այսպէս ամենայն բոլորակութիւն ի ջրոյն մինչև յերկինս լուսնին[9] կոչին երկին: Վասն այն Յովհան Դամասկացին զբովանդակ բոլորակ մարմինս կոչէ երկին մի օդային, զի ըստ նմա երեք են երկինք. նախ՝ օդեղէն, երկրորդ՝ աստղաւոր, երրորդ՝ վերին երկինն, ուր ասի յափշտակիլ Պողոսի: Այլ զի բոլորակ մարմինս, որ ի ջրոյս մինչ ի լուսնային երկինն ունի երկու տարրս, և իւրաքանչիւր ոք[10] ի սոցանէ երկուս ծայրս: Զորմէ ասէ Ռաբանոս[11] իմաստասէրն, թէ վերին ծայր հրոյն կոչի հրեղէն երկին՝ հոմանուն այնմ իմանալի երկնին[12]: Իսկ սա կոչի հրեղէն, զի է ի տարրէ հրոյն: Իսկ ներքին մասն հրոյն կոչի Օլոմբային երկին՝ վասն մերձաւոր գոլոյն Օլոմբիոս լերին: Իսկ զվերին ծայրն օդոյն կոչեաց եթերային երկին՝ վասն բոցեղէնութեանն, զի հպի ի բոլորակն հրոյն և բորբոքի ի նմանէ: Այլև զստորին մասն օդոյդ կոչեաց օդեղէն երկին, վասն որոյ և թռչունք, որ պարեն յօդս՝ թռչունք երկնից կոչին: Այլև[13] զգայական տեսութիւն[14] կոչի երկին: Եւ երևակայական տեսութիւն կոչի երկրորդ[15] երկին: Եւ երրորդ[16] երկին կոչի իմացական տեսութիւնն: Այլև Սուրբ Երրորդութիւնն կոչի առաջին, երկրորդ և երրորդ երկին: Այլև հոգևոր բարութիւնն կոչի երկին[17], ըստ այնմ՝ «Ցնծասցէք և ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս» [Մատ. Ե. 12]:

Եւ որովհետև յայտնի եղև որքանութիւն երկնից՝ բե՛ր տեսցուք, թէ զորպիսի ձև ունի երկինքն:

---

[1] BCDE > հինգերորդ
[2] A > ի
[3] BCDE > վեցերորդ
[4] B Զոհրան
[5] BCDE > եւթներորդ
[6] D > {և վեց ժամ յաստիճանն և ի վեց ամիսն պատէ զկենդանակերպսն: Եւթներորդ Օտարիտն որ է Փայլածուն եւթն օր և կէս կենայ ի կենդանակերպն}
[7] BCDE > ութերորդ
[8] A > ի
[9] D լուսին
[10] E > ոք
[11] ABCE ռաբան
[12] B երկին
[13] A և] այլև
[14] C > տեսութիւն
[15] A > երկրորդ
[16] B երկրորդ] երրորդ
[17] B > այլև հոգևոր բարութիւնն կոչի երկին

Գիտելի է, զի ամենայն երկին ի հարկէ պարտի ունել զձև բոլորակ: Առաջին պատճառ, զի այն, որ է առաւել[1] պարզ մարմին[2], պարտի[3] ունել[4] զառաւել պարզագոյն ձև: Իսկ երկինքն է առաւել պարզ, զի ոչ է ի չորից տարերց, այլ մի պարզագոյն տարր, այսինքն՝ հինգերորդ էութիւն: Իսկ ի մէջ ամենայն ձևոց առաւել պարզ է բոլորակ ձևն[5], զի եռանկիւնին յերից գծից բաղկանայ, և քառանկիւնին՝ ի քառից, սապէս և այլքն, իսկ բոլորակ ձևն ի միոյ գծոյ բաղկանայ: Ապա ուրեմն, պարզ էութեան[6] երկնից պարտ է ունել զբոլորակ ձևն, որ պարզ[7] է, քան զամենայն ձև:

Երկրորդ, զի առաւել[8] պարունակող էութեան պարտ է ունել զառաւել պարունակող ձև: Իսկ երկինքն զամենայն պարունակեալ ունի ի ծոց իւր: Ապա ուրեմն, պարտ է նմա[9] ունել զբոլորակ ձև, որ առաւել պարունակող է, քան զամենայն ձև:

Երրորդ, զի մարմնոյն, որ առաւել սրագոյն է, պարտ է ունել զայն ձև, որ առաւել պատշաճ է ի շարժումն: Իսկ երկին սրագոյն ունի զշարժումն, և բոլորակ ձևն առաւել պատրաստ է ի շարժումն, որ ի շրջելն[10] իւր շօշափէ զերկիր ի մի կէտ: Ապա ուրեմն, բոլորակ ձևն առաւել պատշաճ է երկնից:

Չորրորդ, զի կատարելագոյն մարմնոյն պատշաճի կատարեալ ձև: Իսկ երկինքն է կատարեալ մարմին, զի ազդէ յամենայն մարմինս ստորին, որ ի ներքոյ իւր՝ խնամելով զսոսա[11]: Իսկ բոլորակ ձևն ի մէջ ամենայն ձևոց է[12] կատարեալ: Նախ, զի ոչ կարէ յաւելուլ ի նմա և ոչ պակասիլ: Երկրորդ, զի ոչ երևի սկիզբն և ոչ կատարած: Երրորդ, զի վեցեակ թիւն ի մէջ ամենայն թուոց առաջին կատարեալ է, և վեցերորդ թիւն է[13] ի բոլորակ ձևն, զի որքան է[14] ի միջին[15] կիտէն ի բոլոր ծիրն, վեց այնչափ է իւր բոլորակ ծիրն: Ապա ուրեմն, բոլորակ ձևն, զի կատարեալ է՝ պատշաճի կատարեալ մարմնոյ երկնից:

Հինգերորդ, թէ երկինքն ոչ ունէր բոլորակ ձև, այլ եռանկիւնի կամ քառանկիւնի, յորժամ շարժէր, անկիւնքն այն, յորմէ տեղւոջէ վերանային՝ մնային անկիւնքն այն առանց տեղւոյ և տեղի անկեանցն՝ առանց մարմնոյ:

Վեցերորդ, զի թէ երկինքն ոչ լինէր բոլորակ, այլ քառանկիւնի, այնժամ արեգակն և այլ աստեղք յորժամ գային ի մէջ երկնից, այլ մեծագոյն երևէին, քանզի ի միջին կիտէն[16] երկնից առ մեզ է ուղղական գիծ, իսկ յարևելից առ մեզ է խոտորնակ գիծ: Եւ ուղղական գիծն կարճ է, քան զխոտորնակ

[1] D աւել
[2] E > պարտի ունել զձև բոլորակ: Առաջին պատճառ, զի այն, որ է առաւել պարզ մարմին
[3] E պարտ է
[4] E ունիլ
[5] D ձեռն
[6] C էութիւն
[7] D առաւել պարզ
[8] B ամենայն
[9] A > նմա
[10] E շրջիլն
[11] A զնոսա
[12] B էր
[13] BCE > է
[14] BCDE > է
[15] A միջի
[16] B կէտէն

գիծն, այլ ոչ երբէք մեծագոյն երևի աստղ յորժամ է ի միջին կէտն, քան յորժամ է[1] յարևելս կամ յարևմուտս:

Այլ ոմանք առարկեն ընդդէմ այսմ երեք կերպիւ: Նախ, զի ասէ[2] Դաւիթ. «Զգեցեր[3] զերկինս որպէս խորան» [Սաղ. ճԳ. 2]: Իսկ[4] խորանն կիսակամար է, և ոչ ի ձև բոլորի[5]: Երկրորդ, զի թէ ասեմք զերկինքն բոլոր, յայնժամ երևի ներքին մասն անօգուտ և ձրի կազմեալ, զի ոչ ինչ սպասաւորէ մեզ, այլ մնայ ընդունայն: Երրորդ, թէ երկինքն լինէր բոլորաձև, յայնժամ մասն ինչ նորա[6] լինէր թափուր ի սրբոց, և կամ թէ ոչ լինէր թափուր[7], այլ ի վեր և ի վայր էին սուրբքն, յայնժամ[8] հեռի լինէր Քրիստոս յայնմ սրբոց, որ ի ներքի[9] մասինն[10] լինէին:

Առաջնոյն պատասխանեմ[11], թէ Դաւիթ պարզաբարոյ և խառնիճաղանճ[12] մարդկան ըստ երևելոյ զգայութեանցս խօսի, որ միայն տեսանէին զկիսաբոլորն երկնից, այլ իմաստունք բանականութեամբ քննեն, թէ երկինքն է[13] բոլորակ: Երկրորդին պատասխանեմ, թէ երկինքն լինի բոլորակ՝ ոչ հետևի, թէ ներքին մասն լինի ընդունայն և անօգուտ, այլ սպասաւորեն մեզ՝ առնելով զգիշերն հանգիստ, որպէս վերինն՝ զտիւն գործոյ: Իսկ երրորդին պատասխանեմ, թէ սուրբքն թէպէտ ի[14] վեր և ի վայր ասին կարգաւորիլ՝ ոչ այնր աղագաւ առաւել և նուազ ասի տեսանել զՔրիստոս: Նախ, զի ունին սուրբքն սուր և պարզ տեսութիւն: Երկրորդ, զի թէ արեգակն ի չորից կողմանց տիեզերաց հաւասար տեսանի զգալի աչաց, քանի ևս առաւել հաւասար[15] երևի արեգակն Քրիստոս՝ իմանալի հայեցուածոց: Եւ[16] երրորդ, զի թէպէտ ոչ լինի սրբոցն ի ներքին կամարն՝ ոչ ասի թափուր, որպէս յորժամ լինի թագաւորն բազմեալ ի գահոյս՝ ոչ ասի տունն[17] թափուր, ըստ այնմ, որ ասէ՝ «Տէր ի տաճար սուրբ իւրում, Տէր յերկինս... »:

Այսքան յաղագս առաջին խնդրոյն[18], թէ զիարդ կոչի աշխարհս տուն:

Իսկ երկրորդ, տուն կոչի վրան ժամուն՝ կանգնեալ խորանն ի Մովսիսէ[19]: Եւ թէ՝ վա՞ն էր վրան ժամու. առաջին[20] պատճառ՝ զի յայնմ ժամու միայն էր պիտանի մինչ յանապատին էին, երկրորդ՝ զի խորանն այն միայն աղօթից էր պիտանի և ոչ այլ իրաց, երրորդ՝ զի յորում ժամու մտանէր Մովսէս աղօթս առնել[21] և խնդրուածս[22],

[1] ABC > է
[2] B ասէր
[3] ABCE ծգեաց
[4] B > զերկինս որպէս խորան: Իսկ
[5] E բոլորկիւ
[6] A > նորա
[7] A > ի սրբոց, և կամ թէ ոչ լինէր թափուր
[8] BCDE և կամ] յայնժամ
[9] BC ներքի
[10] B մասն
[11] D պատասխանեմք
[12] D խառնիճաղանչ
[13] D > է
[14] ACDE > ի
[15] A > տեսանի զգալի աչաց, քանի ևս առաւել հաւասար
[16] A > է
[17] A > տունն
[18] A խնդրելոյն, B գլխոյն
[19] B Մովսէսէ
[20] A մին
[21] C առնէր
[22] A խնդրուածք

ի նոյն ժամն աստուածախօսութիւնք լինէին ի քէրովբէիցն[1], որ կային անդ՝ վասն որոյ և վրան ժամու կոչիւր: Եւ զի նա տուն անուանի Աստուծոյ՝ ասէ մարգարէն Դաւիթ. «Մտից ի տուն քո պատարագօք՝ տաց քեզ զուխտ[2]...» [Սաղ. ԿԵ. 13], և դարձեալ՝ «Թագաւոր զօրութեանց սիրելւոյ, զգեղեցկութիւն տան քոյ...» [Սաղ. ԿԷ. 13], և Տէրն առ փարիսեցիսն ասէր[3] վասն Դաւթի, թէ՝ «Զիարդ եմուտ ի տուն Տեառն և զհացն զառաջաւորութեան եկեր» [Ղուկ. Զ. 4], և չոգաւ[4] Սամուէլ և եբաց զդուռն տան Տեառն: Այսպէս և որ ի Սողոմոնէն[5] կազմեցաւ տաճար՝ տուն անուանի ի Սուրբ Գրոց, ըստ այնմ՝ «Յամի չորեքհարիւրերորդի քառասնորդի ելանելոյ որդւոցն Իսրայէլի յերկրէն եգիպտացւոց, շինեաց Սողոմոն զտուն Տեառն» [Գ. Թագ. Զ. 1], և դարձեալ՝ «Շուրջ շրջանակաւ տան քէրովբէք և արմաւենիք» [Եզեկ. ԽԱ. 17-18], և առ Եզեկիէլ վասն[6] վերջին տանն ասէ Աստուած. «Որդի մարդոյ նկարեսցէ զտունդ» [Եզեկ. ԽԳ. 11], և Դաւիթ ասէ[7] յառաջագոյն. «Երկիրպագից ի տաճար[8] սուրբ քո երկիւղիւ քո» [Սաղ. Ե. 8]:

Եւ արդ, որպէս ուսանիմք եռայարկեան յարդարեցաւ շինուած խորանին[9], այսինքն՝ է սրահն արտաքին, և սրբութիւնն, և սրբութիւն սրբութեանցն, քանզի ի նմանութիւն բոլոր աշխարհիս[10] կանգնեցաւ խորանն, ըստ որում ասէր, որ խօսէրն ի նմա. «Տեսեալ արասցես[11] ըստ օրինակին, որ ցուցաւ քեզ ի լերինն» [Եբր. Ե. 5]: Արդ, առաջին խորանն, որ[12] սրբութիւն սրբութեանց անուանիւր[13], զի գերադրականաւն զգերազանցութիւն նորին նշանակեցից[14], ըստ որում՝ թագաւոր թագաւորաց ասելով՝ զԱստուած նշանակեմք, և իշխան իշխանաց՝ զթագաւորէ յայտ առնեմք, արհեստ արհեստից՝ զիմաստասիրութիւնն[15] ցուցանեմք, գործ գործոց՝ զառաքինութիւնն[16] բացայայտեմք: Այսպէս սուրբ սրբոց՝ զանմատոյցն հասարակաց մարդկան և միայն սրբութեամբ արժանացելոցն մտանելի, որպէս ասէ առաքեալ. «Ի միջին խորանն յամենայն ժամ մտանէին քահանայքն[17] զպաշտամունսն կատարել[18], բայց ի սուրբ սրբոցն տարին մի անգամ քահանայապետն միայն՝ և զայն ոչ առանց արեան, զոր մատուցանէր վասն իւր և վասն ժողովրդեանն անգիտութեան: Ի սմա էր արկղն Կտակարանաց՝ պատեալ ներքոյ և արտաքոյ ոսկւով, յորում կայր սափորն ոսկի լի մանանայիւ և տախտակք պատգամացն և

[1] CE քրովբէիցն
[2] ABDE > տաց քեզ զուխտ
[3] C ասէ
[4] B ջոգաւ
[5] B սաղմոսէն
[6] BDE > վասն
[7] ABCD > ասէ
[8] ABCD ասէ ի տաճար
[9] B տաճարին
[10] B լուսափայլութեանց] բոլոր աշխարհիս
[11] D արասցէ
[12] ABCD > որ
[13] B անուանի
[14] Անշանակից է
[15] BCDE զիմաստութիւնն
[16] E զառ զառաքինութիւնն
[17] A > քահանայքն
[18] B կատարեալ

բուրվառն Ահարոնի և գաւազանն ծաղկեալ» [Եբր. Թ. 1-8]: Եւ[1] արդ՝ յայտնապէս խորանս այս[2] բերէր յինքեան զօրինակ վերին երկնի՝ որ կոչի երկինք երկնից, և ներքին կողմն վարագուրի, ուր վայր փառաց է փառաւորեալ Սուրբ Երրորդութեանն[3]: Իսկ տապանակն յանփուտ[4] փայտից օծեալ ոսկւով, որպէս ասէ երանելին Կիւրեղ, օրինակ է զանապականն մարմին խառնեալ և օծեալ գերագոյ բնութեամբ բանին, և զի ոչ միայն մարմին, այլև գներգոյն բանաւոր իւր արար, որով կատարեալ եղև մարդ, զոր[5] նշանակէ ներքոյ և արտաքոյ օծանելն: Իսկ մանանայն կենացն[6] հացի, ըստ որում՝ «Ես եմ հացն կենաց յերկնից իջեալ և կեանս տամ աշխարհի»,-ասէր[7] [Յովհ. Զ. 35-38, 48-51]: Իսկ տախտակք պատգամացն զնոյն Բանն Հօր եղեալ մարմին հոգևոր. «Ես,- ասէ,- զոր լուայ ի Հօրէ՝ ծանուցի ձեզ» [Յովհ. ԺԵ. 15], զի «Ոչ ոք ետես զՀայր, բայց միածինն պատմեաց» [Յովհ. Ա. 18], իսկ բուրվառն[8] զանուշահոտութիւնն առ Հայր, իսկ գաւազանն՝ զբղխեալն յարմատոյն յեսսեայ ծաղկեալն հոգւով՝ ըստ տնօրէնութեանն խորհրդոյ: Եւ զի այս տապանակ առաջի գնայր իսրայէլացւոցն՝ խնդրելով նոցա հանգիստ, ասէ ուրեմն և ինքն Քրիստոս. «Երթամ և պատրաստեմ ձեզ տեղի» [Յովհ. ԺԴ. 2]:

Եւ յետ յառաջնումն վարագուրին խորանն, որ կոչէր[9] սրբութիւն, յորում կայր[10] աշտանակն և սեղան խնկոցն և սեղան[11] սրբութեան երեսաց հացին և գառին, յորում յամենայն ժամ մտանէին քահանայքն զպաշտամունսն կատարել[12], յայտնապէս տպաւորէր զհաստատութիւնդ, ուր լուսաւորքդ[13] են և ի վերոյ քան զնոսա հրեշտակացն վայր, զի «Հրեշտակք նոցա հանապազ տեսանեն զերեսս Հօր իմոյ» [Մատ. ԺԸ. 10],- ասէ, որպէս անպակաս նուիրօղ բարեգործութեանց: Իսկ հանապազորդեան գառն Հօր, որ եբարձ զմեղս աշխարհի, թէպէտ ըստ մարմնոյ ոչ որպէս առ ի մեզ ի հաց և ի բաժակն, սակայն ասէ առաքեալ՝ «Բուն իսկ երկնաւորացն առաւել պատարագ[14]» [Եբր. Թ. 23], այսինքն՝ զի հայեցմամբ ի գառն Աստուծոյ նոր իմն արծարծի ի[15] նոսա ամենայն աւուրս առաւօտեան և երեկոյի ճանաչումն: Իսկ սեղան խնկոցն այն է, զոր յետ գերութեանց[16] դարձի ի վերայ սորա կատարէր քահանայապետն մի անգամ ի տարւոջն զկատարմունք[17] քաւութեանն, զի յառաջ քան զաւերն Երուսաղէմի ծածկեցաւ տապանակ կտակին ի ձեռն Երեմիայ ի մէջ լերինն Սինայ և Քորեբայ,

[1] A > և
[2] B խորանն այն] խորանս այս
[3] B Երրորդութիւնն
[4] C յանփոյթ
[5] C նոր
[6] B > կենացն
[7] A > ասէր
[8] CD բուրուառն
[9] E կոչիւր
[10] D > կայր
[11] D > խնկոցն և սեղան
[12] B կատարեալ
[13] B լուսաւորէք
[14] A գոլ պատարագ
[15] B առ
[16] A գերութեանն
[17] B զկատարումն

վասն որոյ ի մտանելն քահանայապետին Զաքարիայ ի տաճարն յաւուրս տօնի[1] քաւութեանն՝ ետես զհրեշտակն Գաբրիէլ ընդ աջմէ սեղանոյ խնկոցն, զոր պատմէ աւետարանիչն Ղուկաս [Ղուկ. Ա. 8-20]:

Իսկ արտաքոյ երկրորդ վարագուրին՝ ուր սեղանն ողջակիզաց, էր ցոյցք և օրինակ երկրիս և լուսնոյս ի[2] խոնարհ, քանզի ի վերայ այնմ սեղանոյ անբան կենդանեացն մարմինքն մատուցեալ լինէին[3] յողջակէզս, որպէս և երկիր զգալի կենդանեացս է տեղի և վայր բնակութեան՝ իբրև սեղան ամենակալի յԱստուծոյ կազմեալ: Դարձեալ գիտելի է, զի որպէս[4] խորանս օրինակաւ[5] բերէր զնմանութիւն բոլոր աշխարհիս յինքեան, այսպէս և ստուերագրական տպաւորութեամբ և խորհրդաբար յայտնութեամբ նշանակէր զՆորս եկեղեցի, որ եղև լրումն ստուերին և ճշմարտութիւն օրինակին, որպէս ասէր[6] առաքեալ. «Դեռ առաջին խորանն ունէր զհաստատութիւնն, որ էր առակ ժամանակին, որ առաջի կայր» [Եբր. Թ. 8-9], և դարձեալ ասէ. «Ստուեր հանդերձելոց բարեացն ունէին օրէնքն» [Եբր. Ժ. 1], որպէս և այլ ուրեք[7] նոյն առաքեալ այլասացիկ[8] առակաւ զայլ ինչ[9] այլոց ի խորհուրդ առեալ վարդապետէ, այսինքն՝ զերկու զաւակսն Աբրահամու երկուց Կտակարանացն[10] և զծնօղսն նոցին՝ երկուց օրինացն, յիրաւի ապա զՀինն Նորոյս բերէ նշանակ:

Եւ զայս առցուք կրկին իմն կերպիւ. նախ՝ մարմնապէս տպաւորութեամբ[11], և ապա[12] հոգեպէս փոխաբերութեամբ: Եւ մարմնական այսպէս՝ զի ըստ նոյն եռայարկ ձևոյն կանգնեցաւ և Նորս եկեղեցի: Իսկ ներքին կողմ վարագուրին՝ որ է բարձրացեալ և վերագոյնն բեմ և միջոցն եկեղեցի, և արտաքին գաւիթն, զոր այժմ փոխեալ է և կոչի տուն ժամու: Նմանապէս և այլ կահք գոն մարմնական՝ որպէս վերաբուրումն խնկոց, լուացումն[13] զգալի լուսոյ, ջուր աւազանին, ձևք քահանայական զգեստուն, մարմնական նուէրս. այսոքիկ մարմնական և առ մեզ, որպէս առ նոսա, զի թերևս ի մարմնի գոլով՝ տակաւին մարմնական նիւթով կատարեմք, «մինչ հասցուք ամենեքեան ի միաբանութիւն հաւատոց յայր կատարեալ ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի» [Եփես. Դ. 13]՝ ըստ ասացելումն:

Իսկ խորհրդաբար օրինակեալ ի մեզ այսպիսի իմն կերպիւ, զի խորանին զուգահաւասարութեամբ կազմեցաք ի մարմնոյ, ի հոգւոյ և ի մտաց: Ըստ տախտակացն թուոյ՝ գրեալ ի հոգւոյ՝ ոչ ի տախտակս քարեղէնս, այլ ի սիրտս մարմնե-

[1] A > տօնի
[2] A > ի
[3] A > լինէին
[4] A > որպէս
[5] A այս օրինակաւ
[6] BD ասէ
[7] B նորք
[8] B ասացին
[9] B զայլ ինչ

[10] CDE կտակացն
[11] B տպաւորապէս, D սպասաւորութեամբ
[12] BD > ապա
[13] AE լուցումն] խնկոց լուացումն

ղէնս, ունելով զգաւազան խաչին՝ մշտածաղիկ բերելով յանձին, մանանայիւն՝ «որ ուտեն զիս և նա կեցցէ վասն իմ» [Յովհ. Զ. 58], իսկ բուրվառն, «զի հոտ անոյշ եմք Քրիստոսիւ առ Աստուած» [Բ. Կորն. Բ. 15], և չորեք նիւթեայ խունկ՝ չորից առաքինութեանց ի մի աղացումն զմարմնով նուաճումն, եւթնաճրագեան աշտանակն ընդ հարաւ՝ եօթնարփեան շնորհացն ջերմութեան սիրոյ, երեսացն հաց՝ առ Աստուած դիմեցումն կենցաղական շարժմանս[1] մերոյ, գառամբն՝ զանմեղութիւն, գինեաւն՝ զմայլումն իմաստութեան:

Դարձեալ, զի ամենայն նուէրք մատուցմանց հնոյն[2] տրամատի ի հինգ, զի կա՛մ հեշտականք[3] էին ըղձայք, կա՛մ գոհացողականք, կա՛մ փրկականք[4], կա՛մ մաքրականք, կա՛մ վասն մեղաց: Իսկ ի մեզ հեշտական ընծայք՝ աղերս պաղատանաց, իսկ գոհացողականն՝ օրհնութիւն բարեբանութեանց, իսկ փրկականն՝ խոստովանութիւն շրթանց, իսկ մաքրականն՝ ապաշխարհութիւն գործոցն[5], իսկ վասն մեղացն՝ արիւնն Յիսուսի, որ սրբէ զմեզ յամենայն մեղաց:

Դարձեալ, զի ամենայն կենդանական զոհք յերիս բաժանիւր առ նոսա. ո՞մանք բոլորովիմբ յողջակէզս, ո՞մանք բաշխեալ ըստ իւրաքանչիւր մասին[6], և ո՞մանք կենդանի նուիրեալք[7] որպէս տատրակ և աղաւնիքն: Իսկ ի մեզ՝ զոյգ տատրակ[8] տան[9] զհոգւոյ և զմարմնոյ ողջախոհութեամբ վերընծայումն Աստուծոյ, իսկ ողջակէզն՝ արտաքոյ բանակին, զի բոլորապէս ըստ ամենայնի մեռանել աշխարհի հրամայիմք[10] առնուլ զխաչն և ուրանալ զամենայն, իսկ որ ըստ մասին՝ աստիճանի բաժանիւր թերևս հատուցանել ըստ առաքելոյ՝ որում պարտս՝ զպարտս, ոմանց զպատիւ, ոմանց զերկիւղ և զայլն ամենայն [Հռոմ. ԺԳ. 7]:

Դարձեալ, այլ իմն յեղանակի ունիմք զտօնս տարեկանաց նոցա փոխաբերութեամբ ի մեզ. առաջին՝ տօն շաբաթուն, զոր այժմ տօնեմք ի միաշաբաթոջն, երկրորդ՝ ամսագլուխն, որ ի նորանալ լուսնին տօնէին, զոր այժմ տօնէ եկեղեցի զտօն միշտ կուսին Մարիամու[11], որ լուսաւորութիւն լսի, երրորդ՝ զփողոցն, որ զառաքելոցն ցուցանէ տօնախմբութիւն, զի նոքա են փողք տիեզերաց, չորրորդ՝ պասքայն, իսկ զատիկ մեր զենաւ Քրիստոս, հինգերորդ՝ զտուչութեանն, որ այժմ Հոգւոյն իջման տօնեմք, վեցերորդ՝ քաւութեանն, իսկ առ մեզ քառասնորդացն պահք ապաշխարութիւն քաւութեան, եւթներորդ՝ տաղաւարահարացն, որ զեկեղեցւոյ ունի[12] գուշակութիւն զօրհնելն

[1] B շարժմունս
[2] BCDE հրոյն
[3] ABD հաշտականք, C հաշտակայք
[4] D փրկանք
[5] B խոստովանութիւն] ապաշխարութիւն գործոցն
[6] A > մասին
[7] A նուիրեալ
[8] A տատրակացն
[9] A > տան
[10] CE հրամայեմք
[11] B Մարիամա
[12] C ունին

և զտօնելն: Այսոքիկ առ երկրորդ տունն, որ ի Մովսիսէ[1] կանգնեցաւ[2]:

Իսկ երրորդ տուն Աստուծոյ տպաստեղծեալ բանիւ ինքնահաստեալ հիմամբ և աննեցուկ ձեղուամբ կառուցեալ խորան[3] խորհրդական անուանեալ կոչի նորս եկեղեցի, ըստ մարգարէին, որ ասէ[4] ՝ «Յաւուրս յետինս յայտնի[5] լեառն Տեառն և տուն Աստուծոյ ի վերայ գլխոց լերանց» [Եսայ. Բ. 2], և Դաւիթ ի մէջ Սիոնի երգէ՝[6] «Տան քում վայելէ սրբութիւն Տէր ընդ երկայն աւուրս[7]» [Սաղ. ՂԲ. 5], և թէ՝ «Տնկեալք եղիցին ի տան Տեառն և ի գաւիթս Աստուծոյ մերոյ» [Սաղ. ՂԱ. 14], և դարձեալ՝ «Եկայք ելցուք ի լեառն Տեառն և ի տուն Աստուծոյ Յակոբայ» [Միք. Դ. 2], և տիեզերալուր փողն տարսոնացի գոչէ[8] ՝ «Ոչ է տուն Տեառն ձեզ տեղի հաց[9] ուտելոյ» [Ա. Կորն. ԺԱ. 20]: Իսկ[10] զգերամբարձ առաւելութիւն տանս այսմիկ նշանակէր մարգարէն Դաւիթ յասելն[11]. «Տէր սիրեցի զվայելչութիւն տան քոյ» [Սաղ. ԻԵ. 8]: Եւ գիտելի է, զի վայելչութիւնն ասելով՝ զնորս յաւելու զգեղեցկացեալս ամենայնիւ[12] խառնելով նորն ընդ հնոյն[13], և իմանալին ընդ զգալւոյն, զի յարկն առաջին, որպէս ասացաք[14], մարմնական և զգալի յօրինուածով միայն ընկալաւ զկատարումն, և որ ի նմա մատչեին՝ անասնոցն ջոկք և անբանիցն հեղմունք արեանց, որ ոչ կարէին ընդ միտս կատարել ըստ առաքելոյն [Եբր. Թ. 9-14], այլ միայն ըստ մարմնոյ սրբութիւն և առ ժամանակեայ մաքրութիւն: Իսկ նորս եկեղեցի կատարեալ և լի գոլով ամենայն խորհրդածութեամբ,զի ի[15] սմալցաւ ստուերն ճշմարտութեամբ[16] և մարմինն հոգւով՝ որպէս յառաջիկայսդ կամիմք ուսանիլ բազում վկայութեամբ[17]: Զի զոր օրինակ մարդն՝ ի կերպարանս Աստուծոյ ստեղծաւ և դրախտն աստուածատունկ յոր եդաւ, կրկին ունելով զբաղկացութիւնն՝ յիմանալւոյն ասեմ և ի զգալւոյն կազմեալ, քանզի[18] յԵդեմային վայրն անմահութեան գոլով տեղի և անապական և անծորելի ունելով պտուղ և անստուեր զճառագայթ լուսոյն, սակայն թանձր գոլով և երկրային վայր ի վերայ[19] բարձրագոյն լերին հաստատեալ: Սոյնպէս և մարդոյս կազմութիւն ի հոգւոյ իմանալւոյ և ի մարմնոյ զգալւոյ գեղեցիկ հաստատեցաւ և զարմացման արժանի, զի մարմնով անթերի բերէր[20] զամենայն զգայական արարածս[21], իսկ հոգւով՝ զիմա-

1 AD Մովսէսէ
2 A կանգնեցա
3 AB > խորան
4 BCDE > որ ասէ
5 BCDE յայտնեսցի
6 BCDE և ի] երգէ
7 C երկայաւ] երկայն աւուրս
8 A > գոչէ
9 BCDE > հաց
10 B զգերա
11 A > յասելն
12 A > ամենայիւ
13 B հրոյն
14 B ասաց
15 B > ի
16 A ճշմարտութեան
17 D վկայեայբանութեամբ
18 B զի
19 B գոլով] վայր ի վերայ
20 D բերէ
21 ABD արարածքս

նալի բնութիւնն, որ և՛ միջոց, և՛ շաղկապ եղև երկոցունցն[1] գոյացութեանց՝ ի մի յարմարելով ի միասին: Այսպէս և տես զայս[2] աստուածային տանս յօրինուած, զի բերելով յինքն զաստուածակազմ արարածոցս և զհնոյն յօրինուած[3] խառնեալ աստուածայնոյն[4] հանճարով, զի[5] միջոց է վերնայնոյն եկեղեցի[6] և ստորնայնոյս[7], զերկոսին[8] յինքն բերելով՝ որպէս ուսանելոց եմք յառաջիկայդ:

Եւ թէ վա՞ն էր կոչի սա տուն՝ զորոյ զպատճառն բացատրեսցուք ի շինուածոյ ձեռագործի[9] տանց բնակութեան մարդկան: Զի տուն շինի յաղագս եւթն իմն կենցաղական պիտոյից[10]. նախ՝ վասն[11] կերակրելոյ ի նմա, երկու[12] վասն ցրտոյ, երեք[13] վասն տօթոյ, չորս՝ վասն հանգստեան, հինգ՝ վասն առանձնակի ինչ գործոյ արհեստից, վեց՝ վասն գողոց, եօթն՝ վասն թշնամեաց և գազանաց: Բե՛ր տեսցուք, թէ յաղագս որո՞յ ի սոցանէ կանգնեցաւ տունս այս և կոչի: Գիտելի է, թէ ըստ մարմնականին հայեսցի ոք՝ և ոչ վասն միոյ յասիցելոցս, իսկ հոգէպէս[14] կարի յոյժ: Վասն առաջնոյն՝ ի սմա է, ասէ մարգարէն, սեղան Տեառն զօրութեանց, սեղան խորհրդաւոր և կերակուր[15] հոգևոր բաշխեալ միշտ և կերակրեալ, և կերակրելով անծախելի մնացեալ: Իսկ վասն[16] երկրորդին՝ ի սառնասառոյց ցրտութեանց մեղաց և անհաւատութեան, ի սմա օժանդակեալ արդարանամք հաւատովք[17]: Յաղագս երրորդին՝ յորում ի տօթոյ արկածից սատանայական տապոյ, առ սովաւ զովանամք և բարեխառնիմք: Վասն չորրորդին՝ զի յանհանգիստ աշխատանաց խոնջմանէ մեղաց, առ սովաւ հանգչիմք և զդաղարումն առնումք[18]: Եւ վասն հինգերորդին՝ զի առ անձնականն ներգործութիւնք, որ ի բազմաց են անգիտելիք, եօթնեակ թուով խորհրդապէս ի սմա կատարի գերագոյնապէս և աստուածաբար: Եւ վասն վեցերորդին՝ զի զոր ինչ ի սմա գանձեմք և վասն սորա[19] ծախեմք, յերկինս ամբարեմք, որ անդրժելի է գողոցն լինել: Եւ առ եւթներորդն՝ զի գազանային թշնամին մեր, որ իբրև զառիւծ գոչէ, ի սմանէ փախստական շրջի՝ իբր ի հզօր աշտարակէ և յարքունական գահէ:

Իսկ տաճար կոչի նախ, զի յայտնապէս զբնակութիւն Աստուծոյ ցուցանէ, և ապա՝ զսրբապէս[20] գեղեցկութիւն[21] շինուածոյն նշանակիցէ, որպէս ասէ՝ «Տէր ի տա-

[1] A երկուցն
[2] B տեսցես զլոյս] տես զայս
[3] D > զի բերելով յինքն զաստուածակազմ արարածոցս և զհնոյն յօրինուած
[4] A աստուածային
[5] A > զի
[6] E եկեղեցւոյ
[7] BC ստորնայնոցս
[8] A զի զերկոսին
[9] D ձեռնագործի
[10] C > կենցաղական պիտոյից
[11] C զի
[12] A երկրորդ
[13] A երրորդ
[14] BC հոգիպէս, D հոգէապէս
[15] B կարգաւոր և] կերակուր
[16] A > վասն
[17] A հոգով
[18] B առնունք
[19] A որոյ
[20] A զսրբութիւն
[21] A գեղեցկութեան, B գեղեցկապէս

ճար...»: Իսկ թէ յուրեք[1] յարկ Դաւ-թի անուանի՝ և այնմ պատճառ յա-սացելոցդ վերոյ տեսանի:

Իսկ եկեղեցի կոչի ըստ այնմ՝ «Խոստովան եղէց քեզ Տէր յեկեղե-ցիս մեծս» [Սաղ. ԼԴ. 18]: Նախ, զի ի բազմագան նիւթոց է ժողովեալ ի մի, և ապա, զի ժողովարան է բազմաց, և դարձեալ, կոչէ զամե-նեսեան խնամով[2] և յորդորէ ասե-լով՝ եկ, եղիցի[3] քեզ խնդրուածք քո, ըստ այնմ, թէ՝ «Ամենայն, որ խնդրէ՝ առնու» [Մատ. Է. 8] և այլն:

Իսկ քաղաք կոչի, ըստ այնմ՝ «Փառաւորեալն խաւսեցաւ վասն, ահաւասիկ քաղաքդ Աստուծոյ» [Սաղ. ՁՁ. 3], զի որպէս քաղաքն ի բազում շինուածոց տանց կոչի և անուանի մի քաղաք՝ այսպէս և որ յընդհանուր ոլորտս տիեզե-րաց եկեղեցի[4] կոչի և անուանի[5] մի[6] կաթուղիկէ եկեղեցի: Դար-ձեալ, զչրջելն ի սմա ցուցանէ քա-ղաքաւն, ըստ այմն, թէ՝ «Գնա-ցից ի նոսա» [Բ. Կորն. Զ. 16], և ապա վասն շահաւէտ արդիւնա-ւորութեան, զոր այլ ուրեք «Վա-ճառեցէք,- հրամայէ,- զինչս ձեր» [Ղուկ. ԺԲ. 33]:

Այլև խորան անուանի, ըստ այնմ, թէ՝ «Մի շարժեսցին ցիցք խորանի նորա» [Եսայ. ԼԳ. 20], նախ՝ զի պատրաստ է ամենայն ու-րեք շինելոյ, և ապա, զի հնոյն ի նորս փոխեցաւ:

Այլև նաւ կոչի և կղզի, ուստի «Ինձ ակն ունին կղզիք և նաւք[7] Թարսսի[8]» [Եսայ. Կ. 9]՝ իբր[9] ապ-րեցուցիչ ի հեղեղէ[10] փորձանաց, այսմ ծովածուփ կենաց, և ապա՝ յաշխարհէս յայսմիկ ի հանդեր-ձեալսն ընթանալ[11] սովաւ:

Այլև լեառն կոչի, ըստ այնմ՝ «Եկայք ելցուք ի լեառն Տեառն և ի տուն Աստուծոյ Յակով-բայ» [Եսայ. Բ. 3], նախ՝ զի սո-վաւ ճանապարհորդեմք յիմանալի լեառն, այսինքն՝ յերկինս, և ապա, զի բարձրագոյնքն առաքինու-թեամբ արժանասցին միայն մտա-նել և ելանել ի գլուխ այսմ լերին: Իսկ թէ այլ ուրեք դրունս Սիոնի և դաւիթ[12] նորին անուանի՝ ասացեալ պատճառս թերևս նոցա[13] լիցի:

Այլև[14] անուանեալ կոչի դաշտ մայրեաց և վայր դալարուոջ, վասն որոյ ասէ Դաւիթ. «Գտաք զնա ի դաշտս մայրեաց» [Սաղ. ՃԼԱ. 6], նախ՝ զի ի սմա բուսանին[15] ար-դարքն իբր[16] զարմաւենիս՝ բազմա-ցեալ[17] քան զմայրս Լիբանանու[18], որպէս ասէ՝ «Տնկեալք եղիցին ի տան[19] Տեառն և ի դաւիթս Աստու-ծոյ մերոյ[20] ծաղկեսցին» [Սաղ. ՂԱ. 14], և ապա ըստ զանազան և ազ-

[1] E յումեքէ
[2] B խնամելով
[3] D եկեղեցի] եկ եղիցի
[4] BCD եկեղեցիք
[5] D անուան
[6] BD > մի
[7] A նաւ
[8] C Թարսիս
[9] A իբրև
[10] D հողեղէ
[11] A ընթանալով
[12] D Դաւիթ
[13] A և նոցին
[14] A և այլ
[15] B բնակին
[16] E իբրև
[17] A և [բազմացեալ]
[18] D Լիբանու
[19] B տուն
[20] AB > մերոյ

զի ազգի ծառոց վայելչութեան դրախտին տան և զպտուղ յարմարապէս կամաց[1] տնկողին: Իսկ դալարուոջ վայր՝ զսոյն և մարգարէն կոչէ[2] ասելով. «Ի վայրի դալարուոջ անդ[3] բնակեցոյց զիս և առ ջուրս հանգստեան սնոյց զիս» [Սաղ. ԻԲ. 2], նախ՝ զի ի սմա[4] գտանեմք զճարակն[5] յաւիտենից կենաց[6] և զգնացս գետոց[7] հոգւոյն վտակաց, և ապա առ սովաւ տաղաւարիմք հանգչելով հովուական[8] բանիւք մխիթարութեան, քանզի ի սմա[9] է «Աստուած Աստուած մեր յաւիտեանս յաւիտենից, և սա հովուեսցէ[10] զմեզ մինչև յաւիտեան[11]» [Սաղ. ԽԷ. 15]:

Իսկ թէ ուրեք դրախտ և այգի կոչի՝ այս եղիցի և մեզ տեսութիւն[12]:

Իսկ Երուսաղէմ կոչի, ըստ այնմ՝ «Լուսաւորեալ[13] Երուսաղէմ» [Եսայ. Կ. 1], իբրև[14] տեղի տնօրէնութեան փրկչին և կամ[15] տուն հատուցման: Եւ ապա վասն վերին խաղաղութեանն չնորհելոյ ի սմա, ըստ այնմ՝ «Զխաղաղութիւն զիմ տամ ձեզ» [Յովհ. ԺԴ. 27]:

Իսկ Սիովն[16] կոչի, ուստի «Օրհնեսցէ զձեզ Տէր ի Սիովնէ[17]» [Սաղ. ՃԻԷ. 5], նախ՝ իբր զբարձր պատուար և աշտարակ հզօր յերեսաց թշնամւոյն, և ապա՝ իբր զդիտանոց մեզ ամենեցուն և ակնահայեաց նպատակ, առ որ ուշ եդեալ ընթանամք ըստ առաքելոյ:

Այլև դուստր կոչի և հարսն, ըստ այնմ՝ «Ասացէք դստեր Սիովնի՝ ահա թագաւոր քոյ գայ» [Մատ. ԻԱ. 5], նախ՝ զի ունիցի զփեսայն Քրիստոս[18]՝ որպէս ասէ փեսաւէրն, որ ունիցի հարսն՝ նա է փեսայ, և ապա զմիաւորութիւնն սիրոյ և զբազմածինն լինելոյ:

Այլև մայր մեր կոչի, ըստ այնմ եթէ՝ «Վերինն Երուսաղէմ ազատ է, որ է մայր մեր ամենեցուն» [Գաղ. Դ. 26], նախ՝ զի ընդունելով զՀոգին Սուրբ ծնանի զմեզ յարգանդէ աւազանին, և ապա աճեցուցեալ կաթամբ՝ իբր յերկոքին ստեանց՝ Հին և Նոր Կտակարանաց:

Այսքանառ[19]երրորդ[20]գլուխն[21], ըստ որում տուն կոչի եկեղեցի:

Իսկ տունն չորրորդ՝ որ է մարդս, յայտնապէս ուսանիմք[22] ի մարգարէէն[23] անուանեալ, ասէ՝ «Դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք» [Բ. Կորն. Զ. 16] և «Հոգի Աստուծոյ բնակեալ է ի ձեզ» [Ա. Կորն. Գ. 16], զնոյն և Պողոս ասէ, թէ՝ «Որոյ տունն մեք իսկ եմք» [Եբր.

[1] C կազմաց
[2] D կոչ
[3] B > անդ
[4] E > սմա
[5] CD զճրագն
[6] E > կենաց
[7] C > գետոց
[8] B հովական, C հովւական
[9] C սմայն
[10] A հովսցէ, C հովւեսցէ
[11] C > մինչև յաւիտեան
[12] BCDE > Իսկ թէ ուրեք դրախտ և այգի կոչի այս եղիցի և մեզ տեսութիւն
[13] AC լուսաւորեա
[14] ABD իբր
[15] B > կամ
[16] A Սիոն
[17] A Սիոնէ
[18] A փեսա զՔրիստոս] զփեսայն Քրիստոս
[19] A > առ
[20] B երեք
[21] A գլխին
[22] D սասանիմք
[23] B մարգարէն

Գ. 6], և Տէրն ասէ՝[1] ես և Հայրն «Առ նա եկեսցուք և օթևանս առ նմա արասցուք[2]» [Յովհ. ԺԴ. 24], և դարձեալ, Պողոս առ Տիմոթէոս գրէ[3]. «Թէ որպէս պարտ իցէ[4] քեզ ի տան Աստուծոյ շրջել. որ է[5] եկեղեցի Աստուծոյ կենդանւոյ» [Ա. Տիմ. Գ. 15] և թէ՝ «Զորս եդ Աստուած յեկեղեցւոջ» [Ա. Կորն. ԺԲ. 28] և այլն[6] ևս:

Եւ արդ[7], որովհետև յայտնի եղև բանս, եկեսցուք և ասասցուք, թէ զիարդ տուն Աստուծոյ և եկեղեցի կոչի՝ և՛ մարդս, և՛ շինեալն: Նախ՝ ըստ հոմանունութեան մին կոչի տուն և եկեղեցի, զի է ժողովարան, իսկ միւսն կոչի եկեղեցի, զի է ժողովեալ, ըստ այնմ՝ «Եկեղեցացւոյ[8] զժողովուրդ» [Ելք. Ը. 4], որ է ժողովեա: Երկրորդ, զի զմի և զնոյն հոգի ընկալան ի շնորհացն Աստուծոյ՝ և՛ տունս, և՛ մարդիկս, յաղագս որոյ և միով կոչի[9] անուամբ՝ տուն Աստուծոյ և տաճար: Երրորդ, զի որպէս[10] բազում շինուածք մի ընդհանրական եկեղեցի կոչի, այսպէս և բոլոր բազմութիւն հաւատացելոցս մի մարմին Քրիստոսի և մի եկեղեցի կոչի, զոր և առաքեալ գրէ եկեղեցեացն Գաղատացւոց. «Ամենեքեան դուք մի էք ի Քրիստոս Յիսուս» [Գաղ. Գ. 28], այսինքն՝ մարմին նորա[11] և անդամ: Չորրորդ, զի որպէս ասի[12] զանազան նիւթոց, այսինքն՝ ի քարանց, յաւազոյ[13] և յայլոցն կատարեցաւ ի մի, և կոչի մի եկեղեցի, այսպէս և մարդս ի բազմաց՝ ի նմանամասաց[14] և յաննմանամասանց[15], ի հոգւոյ և ի մարմնոյ կատարեալ՝ անձնաւորեցաւ մի մարդ, և կոչի մի եկեղեցի և խորան Աստուծոյ: Ուստի և Պետրոս յիւրաքանչիւր դիմաց պատրաստէր լինել խորան Աստուծոյ[16], զայս և Տէրն նշանակեաց ասելով. «Մուտ ի սենեակ քո և փակեա զդուրս քո[17]» [Մատ. Զ. 6]: Հինգերորդ, զի թէպէտ և է՛ն բազում տունք յաշխարհի, բայց միայն մինս այս անուանի եկեղեցի, այսպէս և զոն բազմութիւն մարդկան, այլ միայն հաւատացեալք կոչին եկեղեցի, զի որ «զՀոգին Քրիստոսի[18] ոչ ունի, սա՝ չէ նորա» [Հռոմ. Ը. 9]՝ ասէ առաքեալ: Վեցերորդ, զի եկեղեցի է հաստատեալ ի չորից հիմանց և յերկոտասան քարանց, չորիւք լուսանցեօք[19] և հնգիւք դրամբն հարկաւորութեամբ: Սմին հանգոյն և մարդս եկեղեցի է հաստատեալ ի վերայ հաւատոյն[20] վիմի, որ բոլոր աստիճանքն չորիւք պարփակի. այսինքն՝ զի կա՛մ յանմարմին

1 ABDE > ասէ
2 BCE > նմա արասցուք
3 B ասէ առ Տիմոթէոս] առ Տիմոթէոս գրէ
4 BCDE է
5 B > որ է
6 B այլ
7 C > արդ
8 D եկեղեցւոյ
9 A կոչին
10 A > որպէս
11 B քո
12 B ասէ
13 ABD յաւազոց
14 BCDE նմանամասնեանց
15 B յաննմանամասնեաց
16 B > Ուստի և Պետրոս յիւրաքանչիւր դիմաց պատրաստէր լինել խորան Աստուծոյ
17 E > քո
18 BCE > Քրիստոսի, D զհինգ] զՀոգին Քրիստոսի
19 A լուսանցիւք
20 BCDE հաստատնոյ

աստուածութիւնն հայի, և կա՛մ ի ներմարդութիւն բանին, ոմանք առ մեզ՝ որ յայժմուս և այլք՝ ի հանդերձեալն ունի[1] զդիտաւորութիւնն: Եւ դարձեալ, չորիւք առաքինութեամբ մասանց երկոտասան անդամօք և հնգիւք զգայութեամբք[2] զարդարեալ: Եօթներորդ, զի մի ունին գործ և կատարմունք երկոքեանս եկեղեցի, այսինքն՝ զեւթնեանց խորհրդոյն ասեմ հասարակաբար, զի ի մեզ կատարի ենթակայապէս և առ սա իբր ունակապէս[3], առ սա զօրութեամբ և առ մեզ ներգործութեամբ: Ութերորդ, զի հանգիտաբար ունին զշնորհացն անփոփոխութիւն՝ և՛ յետ քակտելոյն, և՛ զկնի մահուան, անբաժանելի ունելով զմիացումն, առ որս մերձենայ Աստուած, որպէս գտանի ի Գիրս, գերագոյնք են քարինք եկեղեցւոյ, քան զնշխարս մարտիրոսաց: Իններորդ, զի են ժողովեալ ի սմա մատեանք աստուածեղէնք և ոգեշունչ նուագք, յորոց ընտրին բարիքն և խոտին չարիք, այսպէս և եկեղեցի հաւատացելոցս միշտ ընթերցմամբ և ուսմամբ ժողովեալ ունիմք, որով խոտորիմք ի չարէ և առնեմք զբարին: Տասներորդ, զի որպէս լոյսն վառեալ յեկեղեցւոջ չիջանի ի հնգից իմն պատճառանացն, այսինքն՝ կա՛մ ի ջրոյ, կա՛մ ի հողոյ ի վերայ արկանելոյ, կա՛մ ի հողմոյ ընդ պատուհանսն[4] մտելոյ, կա՛մ ի[5] ձիթոյ պակասելոյ, կա՛մ ի կազմողի հեղգութենէ: Այսպէս և ի մարդս[6] եկեղեցի՝ լոյս շնորհաց հոգւոյն չիջանի ի հոսանուտ կենցաղոյս՝ որ է ջուր, և ի գետնաքարշ խորհրդոյ՝ որ է հող, և ի հողմոյ փորձութեանց ընդ զգայարանս մտելոյ, և ի ձիթոյ առաքինութեանց պակասելոյ, և ի հեղգութենէ և ի դանդաղանաց, վասն որոյ զգուշացուցանէ մեծն առաքեալ ասելով՝ «զՀոգին Սուրբ մի չիջուցանէք» [Ա. Թես. Ե. 19]: Այս յաղագս այսորիկ, թէ[7] զիարդ կոչի մարդս տուն և եկեղեցի՝ ըստ շինուածոյ տանս ձեռակերտի:

Եւ արդ, որովհետև ցուցեալ եղև դուզնաքեայ[8] ինչ տեսութիւն յաղագս չորից տանս[9] առաջարկութեանս, բե՛ր և որպէս խոստացաք, համառօտաբար արտայայտեսցուք, թէ զինչ է փառազարդ գերամբարձութիւն տանս վերջնոյ, քան զառաջնոյն[10], այսինքն՝ նորոյս, քան զհնոյն: Եւ սկսեսցուք այսպէս[11]. առաջին՝ զի այն տուն կազմեցաւ ի Մովսիսէ, որ «Հաւատարիմ էր ի տան նորա՝ որպէս ծառայ» [Եբր. Գ. 5], ասէ ասաքեալ: Իսկ զերկրորդս տուն[12] շինեաց Քրիստոս, որ է որդի և լոյս փառաց և նկարագիր էութեանն Հօր [Եբր. Ա. 3], և ոչ միայն հիմն արկեաց, այլև ինքն եղև գլուխ անկեան՝ որպէս գրէ[13] առաքեալն առ Եփե-

[1] A ունին
[2] A զգայութեամբ
[3] C > և առ սա իբր ունակապէս
[4] D պատուհասն
[5] BCDE > ի
[6] D մարդոյ
[7] A > թէ
[8] D դուզնաքեալ
[9] C տանց
[10] ABCD զառաջնոցն
[11] E > և սկսեսցուք այսպէս
[12] E > տուն
[13] A ասէ

սացիս [Եփե. Բ. 20]: Արդ, որքան առաւելութիւն է ի մէջ Քրիստոսի և Մովսէսի՝ նոյնքան և զանազանութիւն է ի մէջ[1] շինուածոց նոցին: Երկրորդ, այն խորան բովանդակ ստուերք և օրինակք, իսկ այս խորան բոլորովիմբ էութիւն և ճշմարտութիւն, վասն որոյ ասէ առաքեալ. «Սրբութեանցն պաշտօնեայ և խորանին ճշմարտութեան[2], զոր Տէրն կանգնեաց և ոչ մարդ» [Եբր. Ը. 2]: Երրորդ, անդ մարմնական պատարագաց[3] մատուցմունք, ուստի «Ոչ հաճիմ,- ասէ Տէր,- ընդ զոհս և ընդ պատարագս նոցա» [Սաղ. Լթ. 7; Եբր. Ժ. 8], իսկ աստ պատարագ[4] հոգևոր, սիրտ սուրբ և հոգի խոնարհ՝ զոր Աստուած ոչ արհամարհէ: Չորրորդ, անդ արիւն ցլուցն[5] և նոխազացն, և աստ արիւնն Յիսուսի սրբէ զմեզ յամենայն աղտեղութենէ[6] մեղաց: Հինգերորդ, անդ մատուցեալ պատարագն[7] ծախէին և պակասէին[8], իսկ աստ միշտ պատարագի և միշտ կենդանի մնայ[9] անծախապէս, զի ինքն է[10] պատարագ և պատարագող և ընդունող. «Միշտ կենդանի է և է բարեխօս վասն[11] նոցա» [Եբր. Է. 25]՝ ասէ առաքեալ: Վեցերորդ, այնմ տաճարի «քահանայապետն զգածեալ տկարութեամբ» [Եբր. Է. 28]՝ ասէ առաքեալ, իսկ աստանօր այսպիսի ունիմք քահանայապետ, ասէ՝ «Սուրբ, անմեղ, անարատ, զատեալ ի մեղաւորաց[12] և բարձրացեալ քան զերկինս» [Եբր. Է. 26]: Եւթներորդ, անդ պաշտօն մահու և դատապարտութեան ըստ օրինացն՝ որպէս առաքեալ ասէ [Բ. Կորն. Գ. 7-9], իսկ աստ կենաց և արդարութեան՝ որպէս մկրտութեամբն շնորհաց և զղջմամբ[13] յանցանաց: Ութերորդ, այն՝ անցաւոր և այս՝ մշտնջենաւոր, ըստ այնմ, թէ «Որ խափանելոցն էր՝ այն փառօք էր, որչափ ևս առաւել որ դալոցն[14] է՝ փառօք եղիցի» [Բ. Կորն. Գ. 11]: Իններորդ, անդ ծառայական և սննդական[15] պատշաճեցան օրէնք, ըստ որում՝ «Օրէնքն դաստիարակ եղեն» [Գաղ. Գ. 24] և «Ընդ[16] տարերբ աշխարհիս ի ծառայութեան կային» [Գաղ. Դ. 3]: Իսկ աստանօր որդեգրութեան հոգւովն աղաղակեմք՝ չեմք ծառայ, այլ որդի և ժառանգ Աստուծոյ և ժառանգակից Քրիստոսի [Գաղ. Դ. 5-7]: Տասներորդ, յաղագս այնմ տաճարի ասէ մարգարէն ի դէմ[17] Աստուծոյ[18]. «Զորպիսի տուն շինեցէք ինձ և զինչ իցէ այն տեղի հանգստեան իմոյ» [Գործք. Է. 49] և այլն, իսկ վասն այսմ տաճարի ասէ միւս մարգարէն. «Հաճեցաւ Տէր ընդ Սիօն և ընտրեաց բնակիլ ի նմա[19].

[1] ACD > ի մէջ
[2] B ճշմարտութիւն
[3] CE պատարագ
[4] C պատարագի
[5] B ցըլոցն
[6] ACDE > աղտեղութենէ
[7] D պատարագին
[8] Bպակկէին, E պասքէին
[9] B մնան
[10] B > է
[11] D > վասն
[12] E մեղաց
[13] D ողջմամբ
[14] BCDE կալոցն
[15] D անդական
[16] B ըստ
[17] A դէմ
[18] E > Աստուծոյ
[19] E սմա

ասէ՝ այս է հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից ի սմա բնակեցայ, զի հաճեցայ ընդ սա» [Սաղ. ՃԼԱ. 13-14]: Այս յաղագս առաւելութեան փառաց նորոյ տաճարի առ հնոյն[1]:

Եւ զի ասացաք զեկեղեցի միջոց գոլ վերնայնոյն և ստորնայնոյս[2], այսինքն՝ աստուածակազմ արարածոց և որ ի Մովսիսէն կանգնեցաւ, և զի համեմատեցաւ սակաւուք[3] առ ստորնայինս խորան՝ բե՛ր և ըստ չափոյ առ վերնայինն գումարեսցուք, զի մի յառաջ ասացեալ խոստմանէն մեր ի բաց վրիպեսցուք: Եւ նախ այսպէս. անդ նստի Աստուած «յերկնից երկինս ընդ արևելս» [Սաղ. ԿԷ. 34]՝ որպէս ասէ մարգարէն, և աստ՝ ձև եկեղեցւոյ ի նոյն խորհուրդ[4] կազմեցաւ ընդ արևելս, ուստի և ակն ունիմք փրկչին գալստեան՝ «որպէս փայլակն, որ ելանէ յարևելից» [Մատ. ԻԴ. 27]: Երկրորդ, զի յօրինակ[5] կազմածոյս նոյնպէս երիւք չինեցաւ՝ և՛ անդ, և՛ աստ որպէս ասացաք ընդ[6] խորհրդական թուոյ: Երրորդ, անդ՝ ինը դաս պաշտամանց[7] և յերիս երրեակ որոշեալ[8] կարգապետութիւնք, և աստ՝ յեկեղեցւոջ ինը աստիճանք դասուց և նովին եռակի որոշմամբ. առաջին՝ կաթողիկոս, եպիսկոպոս և քահանայ, երկրորդ՝ սարկավագ, դպիր և կղերիկոս, երրորդ՝ միայնակեաց, սրբեալ ժողովուրդք և երեխայք՝ այս ըստ մեծին Դիոնիսեայ[9]: Իսկ ըստ այլոց՝ իբր ի ներքուստ ի վեր. առաջին կարգ է դռնապանութիւնն, երկրորդ՝ ընթերցողութիւնն, երրորդ՝ երգմնեցողութիւնն, չորրորդ՝ ջահավառութիւնն, հինգերորդ՝ կիսասարկավագութիւնն, վեցերորդ՝ սարկավագութիւնն, եւթներորդ՝ քահանայութիւնն, ութերորդ՝ եպիսկոպոսութիւնն[10], իններորդ՝ կաթուղիկոսութիւնն[11], որ է ընդհանուր ամենայնի: Զորրորդ, անդ փառաբանեալ պաշտի Երրորդութիւնն անլռելի սրբասացութեամբ, և աստ յեկեղեցիս բարեբանի Աստուած երեք սրբեան արտագոչութեամբ: Հինգերորդ, անդանօր երկոտասան կենդանակերպք հաստատեցան յերկինս, և աստ երկոտասան առաքեալք հաստատեալք յեկեղեցի: Վեցերորդ, անդ երկու լուսաւորքն մեծք իշխանական[12] տուընջեան և գիշերոյ, և աստ երկու Կտակարանք և օրէնք գիշերակերպ օրինացն և տուընջեանս շնորհաց: Եւթներորդ, անդ[13] դարձեալ ընդհանուր աստեղք, և աստ՝ բոլոր քրիստոնեայք: Ութերորդ, անդ ի մէջ դրախտին ծառն կենաց, աստ՝ յեկեղեցիս խաչն կենարար: Իններորդ, անդ Ադամ ստեղծաւ մարդն հող յերկրէ, և աստ երկ-

[1] A > Այս յաղագս առաւելութեան փառաց նորոյ տաճարի առ հնոյն
[2] BD ստորնայնոցս
[3] C սակաւօք
[4] B խորհրդոյ
[5] A յարկ
[6] BCD ըստ
[7] D դասք և պաշտամանց] դաս պաշտամանց
[8] D որոշեալք
[9] B Դիոնեսիայ
[10] ABCE եպիսկոպոսն
[11] ABCE կաթուղիկոս
[12] A իշխանականք
[13] BCDE > անդ

բորդ Ադամ՝ Տէր յերկնից: Տասնեբորդ, անդ փչեաց յերեսն շունչ կենդանի, և աստ նոյն Տէր փչեաց յառաքեալսն ասելով՝ «Առէք Հոգի Սուրբ» [Յովհ. Ի. 22]: Այսքան ըստ համանմանութեան[1]:

Բայց գիտելի է և զայն ևս, զի բազմազան առաւելութիւն ասացաք նոր նորոգմանս արարչակերտութեան[2] ի հնոյն նախաստեղծութենէ: Նախ՝ այսպիսի իմն օրինակաւ, զի այն չինուած ասաց Աստուած[3] և եղև, հրամայեաց՝ և հաստատեցան, զոմանս յէից և զայլս[4] յանէից, իսկ զայս[5] չինուած ինքեան մարդանալովն հիմն արկեաց և աւարտեաց, ըստ այնմ, որ առ Պետրոս նշանակեաց ասելով. «Դու ես վէմ[6] և ի վերայ այդր վիմի[7] չինեցից զեկեղեցի իմ[8]» [Մատ. ԺԶ. 18], իբր ասել, թէ ընդ[9] բանիդ, զոր դու դաւանեցեր զիս, այսինքն՝ Որդի Աստուծոյ ճշմարտապէս՝ ես[10] եմ վէմ և ի վերայ իմ չինեցից զեկեղեցի իմ: Եւ Պօղոս բացայայտէ զայս ասելով. «Հիմն այլ ոք[11] ոչ կարէ դնել քան զեղեալն, որ է Յիսուս Քրիստոս» [Ա. Կորն. Գ. 11]: Երկրորդ, զի Աստուած ասաց անդ՝ ի խաւարի լոյս ծագել զգալի ի տեսութիւն զգալեացս [Ծնն. Ա. 3], իսկ աստ նոյն ինքն ծագեցաւ[12] երկիւղածաց Արեգակն արդարութեան՝ ի լուսաւորութիւն փառացն Աստուծոյ[13] ի դէմս Քրիստոսի [Բ. Կորն. Դ. 6]՝ ասէ[14] առաքեալն: Երրորդ, անդ Հոգին Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց՝ ստեղծանելով մարմնապէս անբան թռչունս օդայինս և ջրայինս, աստ՝ նոյն Հոգին Սուրբ խառնեալ յաւազանին ջուրս՝ ծնանի հոգեպէս զորդիս մարդկան՝ որդիս Աստուծոյ, ուստի ասի՝ «Ծնեալն ի հոգւոյն հոգի է» [Յովհ. Գ. 6], և՝ իշխանութիւն ետ Որդիս Աստուծոյ լինել [Յովհ. Ե. 27]: Չորրորդ, անդ ի պատկեր նմանութեան է ստեղծ զմարդն, որպէս ասէ՝ «Արար Աստուած զմարդն ըստ պատկերի իւրում[15]» [Ծնն. Ա. 27] և ըստ նմանութեան, իսկ աստանօր զպատկերն տիրական խառնեաց միացոյց և եղև ի կերպ ծառայական, ըստ առաքելոյ. «Որ ի կերպարանս Աստուծոյ է, ...զկերպարանս ծառայի էառ» [Փիլիպ. Բ. 6-7], զի որպէս անձն էակցին Հօր և հասակն կուսածին[16] աճեցեալ և զօրացեալ՝ մի անձն է խոստովանեալ և ոչ կայ[17] շփոթումն: Նոյնպէս և[18] ըմբռնելի և անըմբռնելի բնութիւնն միաւորեալ մի է և ոչ է շփոթեալ, զի պատկեր աներևութին Աստուծոյ և նկարագիր էութեան նորին բանն մարմին եղև և կերպարանօք գտաւ մարդ, վասն որոյ՝ մի՛ դէմ, մի՛ Որ-

[1] E հոմանունութեան
[2] A արարչակերպութեան
[3] C > Աստուած
[4] A զայս, D այլս
[5] A զայլ
[6] D դէմ
[7] D վիմէ:
[8] C > զեկեղեցի իմ
[9] A ըստ
[10] A > ես
[11] E այլոց] այլ ոք
[12] B տեսութեանց

[13] B > Աստուծոյ
[14] B > ասէ
[15] B զպատկերի քում] ըստ պատկերի իւրում:
[16] C կուսածնին
[17] D գայ
[18] C > և

դի, մի՛ Քրիստոս, մի՛ Տէր Յիսուս՝ ի փառս Աստուծոյ Հօր խոստովանին զնա ամենայն լեզուք[1] և երկրպագեն[2] երկնաւորք և երկրաւորք և սանդարամետականք [Փիլիպ. Բ. 6-10], և որ ոք[3] այլ ազգ ինչ խորհիցի[4] բաժանմամբ[5] ընդդէմ այնմ, որ կամեցաւ և արար զմիաւորութիւնն, անկատար և վատթար՝ քան զսանդարամետականսն՝ ընդ նոսին և դատ նորին[6] եղիցի յանելանելի տանջանսն: Հինգերորդ, անդանօր ի կողիցն մարդոյն առաւ և չինեցաւ կին՝ որ է կէս իւր, իսկ աստանօր ի խոցմանէ կողիցն մարդանալոյն[7] Աստուծոյ չինեցաւ եկեղեցի՝ մարմին ի մարմնոյ նորա և անդամք յանդամոց[8] նորա, ըստ այնմ, որ ջրովն մկրտիմք և զարիւնն ըմպեմք՝ միանամք ընդ նմա: Վեցերորդ, անդ ծառ կենաց և[9] գիտութեան, որ յերկրէ[10] տնկեալ և հրաժարեցուցեալ, իսկ աստ՝ նոյն ինքն Տէր մեր Յիսուս Քրիստոս է ծառ տնկեալ ամենեցուն հպելի և կեանս շնորհէ յաւիտենից, որք ճաշակենն ի նմանէ, ըստ այնմ, թէ՝ ոք կերիցէ զմարմին իմ և ըմբէ զարիւն իմ[11], կեցցէ յաւիտեան [Յովհ. Զ. 55]: Եւթներորդ, անդանօր պատիժք մեղաց՝ անէծք և մահ, ըստ որում. անիծեալ լիցի[12] երկիր ի գործս քո, և փուշ և տատասկ բուսցի քեզ, և քրտամբք կերիցես զհաց՝ մինչև լուծցիս ի հող [Ծնն. Գ. 17-19]: Իսկ աստանօր Քրիստոս[13] գնեաց զմեզ յանիծից օրինացն, եղեալ վասն մեր անէծք, զի եղիցուք նոր՝ աւ յարդարութիւն Աստուծոյ, որով եբարձ զպատիժսն, այսինքն՝ քրտամբ[14] զքիրտսն, պսակաւն փշոց՝ զփուշսն, լեղեաւն՝ զճաշակումն և մահուամբն՝ զմահ[15], ըստ որում՝ նոյն ինքն է[16] յարութիւն մեր և կեանք [Յովհ. ԺԱ. 25], որպէս պտուղ ննջեցելոց[17] և անդրանիկ մեռելոց[18] [Ա. Կորն. ԺԵ. 20]: Եւ այսպէս օրհնեցաք ամենայն[19] հոգևոր օրհնութեամբ յերկնաւորս ի Քրիստոս:

Ութերորդ, անդ[20] հաւասարապէս թշնամութիւն եդ ի մէջ մեր և օձին՝ սպասել միմեանց գլխոյ և գարշապարանաց [Ծնն. Գ. 15], իսկ աստ քաջապէս կոխել մեզ հրամայէ զիմանալի «Օձն և զկարիճն և զամենայն զօրութիւն նորա, և ձեզ ինչ ոչ մեղանչիցեն[21]» [Ղուկ. Ժ. 19]՝ ասէ: Իններորդ, անդ նուազեալ կորուսաք զշնորհս հոգւոյն մարգարէութեան, քահանայութեան և թագաւորութեան՝ իբր յանցաւոր[22] շնորհաբաշխին, իսկ աստ վերստին արժանացեալ գտաք ի ձեռն Քրիստոսի, ըստ

1 D լեզուօք
2 E երկրպագանեն
3 A որք] որ ոք
4 D խորհեցի
5 A բաժան
6 D դատաւորին] դատ նորին
7 ABD մարդացելոյն
8 D յանդացոց
9 A է
10 D յերկրի
11 BCDE > և ըմբէ զարիւն իմ
12 A > լիցի
13 C > Քրիստոս
14 D քրտամբքն
15 D ցմահ
16 C > է
17 BCDE > ննջեցելոց
18 D մեղելոց
19 E > ամենայն
20 BCDE > անդ
21 D մեղիցեն
22 A անցաւոր

այնմ «Հեղից[1] յոգւոյ[2] իմոյ[3] ի վերայ ամենայն մարմնոյ[4] և մարգարէասցին...» [Գործք. Բ. 17],~ասէ Տէր, որ և արար քահանայս յաւիտենական ըստ կարգին Մելքիսեդեկի՝ պատարագելով զմարմին իւր ի հաց և ի բաժակ: Իսկ թագաւորս՝ ըստ որում՝ «Կացոյց զնոսա իշխանս ընդ ամենայն երկիր» [Սաղ. ԽԴ. 17], որպէս ասէ առաքեալ, թէ «Որ[5] հաստատեաց զմեզ ի Քրիստոս և օծ՝ Աստուած է, որ և կնքեաց զմեզ, և ետ մեզ զառհաւատչեայ հոգւոյն ի սիրտս մեր» [Բ. Կորն. Ա. 21]: Տասներորդ, անդ եհան վարեաց զնոսա ի փրկութեանն վայրէ[6] ընդդէմ ընակեցոյց տոչորելով, իսկ աստ[7] ժառանգակցելով ընդ Քրիստոսի ի խոստացեալն վերստին հրաւիրեցաք, ըստ աւետեաց աւազակին. «Այսօր ընդ իս իցես ի դրախտին» [Ղուկ. ԻԳ. 43], փոխանակ միոյն՝ բազումք մտին և ընդ զգայական վայրին՝ զիմանալին երկին, ըստ որում ըղձանայր հոգւովն Պօղոս ասելով, թէ «Երկրաւոր տաճար շինուածոյս մերոյ քակտեսցի, շինուած[8] յԱստուծոյ ունիմք, տաճար[9] առանց ձեռագործի՝ յերկինս[10]» [Բ. Կորն. Ե. 1], զորմէ ասէ մարգարէս՝ «Տէր ի տաճար սուրբ իւրում, Տէր յերկինս յաթոռ իւրում»:

Եւ արդ, որովհետև յայտնի եղև ըստ չափու[11] դիտաւորութիւն բանիս, թէ յաղագս որոյ և զինչ է, բե՛ր և յաղագս թարգմանութեան առաջարկեալ մարգարէական[12] բանիս սակաւապէս[13] կահաւորեսցուք: Եւ նախ ձեռնարկեսցի մեզ բանս նախկին[14], որ ասէ՝ «Տէր ի տաճար սուրբ...»:

Գիտելի է, զի[15] «տէրն» անուն է: Իսկ անուն է սահման կարճառօտ, որպէս և սահմանն՝ անուն ծաւալեալ, ապա ուրեմն՝ անունն սահման է: Իսկ սահմանն է յայտնիչ բնութեան ենթակայ իրին. նմին[16] իրի արգելի նահապետէն զխնդիր հարցմանն՝ իբր զանակնածելի իմացման, ասէ՝ «Զի՞ հարցանես զանուն իմ, զի է սքանչելի» [Դատ. ԺԱ. 18], ըստ այնմ՝ «Սքանչելի է անուն քո Տէր, Տէր մեր, ի վերայ[17] ամենայն[18] երկրի» [Սաղ. Ը. 1]: Յայսցանէ գիտելի է, զի սահմանել կարողութիւն է զսահմանելիսն, և զանսահմանելիսն ոչ գոյ կարողութիւն սահմանել, բայց թէ այլ հնարիւք ապացուցական յանդիման կացուցանել զսահմանելեացն բան, յորոց մի է և տիրական անուն, զոր ոչ ունիմք սեռ տալ և բաղկացուցիչ զանազանութիւնս, յորմէ սահմանն սովորեաց բաղկանալ, ապա ուրեմն՝ անանուն[19] է Աստուած և բազմանուն՝ որպէս ի

[1] D հեղեցի
[2] AC յոգւոյ] ի հոգւոյ
[3] D > իմոյ
[4] B > ի վերայ ամենայն մարմնոյ
[5] A > որ
[6] B > վայրէ
[7] A աստանօր
[8] D շինուածոյ
[9] B > տաճար
[10] E ունիմք յերկինս
[11] BD չափոյ
[12] C մարգարէութենէ
[13] D սակաւ որպէս] սակաւապէս
[14] B > նախկին
[15] D > զի
[16] B նմըմին
[17] D > ի վերայ
[18] ACE > ամենայն
[19] BD անուն

սրբազանիցն եղև կոչեցեալ: Անանուն է, զի յայսցանէ մի եղինապէս և անըմբռնելի[1] յամենեցունց[2] արտաքս է որոշեալ և անսահմանելի մնացեալ: Իսկ բազմանուն է ըստ բարերար նախախնամութեանն և պատճառին, որովք ի պատճառելեացս և ի նախախնամելոցս[3] օրհնաբանի, որպէս՝ ազնիւ, գեղեցիկ, լոյս, բարի և այլն ամենայն, յորմէ բարեացն ներգործութեանց հոլովելոց առ մեզ և ոչ թէ բոլոր բնութեանն է յայտնիչ[4]: Այլ զի ճշմարիտ աստուածաբանութիւնն ուսուցանէ մեզ ի միում[5] բնութեան աստուածութեանն երիս գոլ[6] անձնաւորութիւնս և երիս դէմս, վասն որոյ և նշանակութիւն կոչմանցս[7] այսոցիկ զանազանին. ոմա՛նք ի բնութենէ՝ որ հասարակականն է, և ա՛յլք ի դիմէ՝ որ անձնականն[8], և ոմա՛նք յերկոցունց սոցա՝ ի բնութենէ և ի դիմէ: Ի բնութենէ՝ յորժամ ասեմք Տէր, Աստուած, հզօր, սուրբ, ամենակալ, անմահ և անապական և այլք նմանք[9] սոցա[10] զբնութեանն[11] հասարակութիւն[12] նշանակեն: Իսկ դիմացն՝ յորժամ ասեմք Հայր, անծին, և ծնօղ, և յառաջ բերօղ, այսոքիկ դիմաց առ անձնաւորութիւնք ի Հօրէ[13] ենթակայութեան[14] ասին գոլ, և ոչ յարմարին սոքա Որդւոյ, և ոչ Հոգւոյն Սրբոյ, զի մի զդէմսն խառնակիցեմք: Իսկ եթէ ասեմք Որդի և Բան և միածին, այսոքիկ Որդւոյ ենթակայութեանն ենթակայանան[15] և ոչ փոփոխին[16] ի Հօր և ի Հոգւոյն Սրբոյ ենթակայութիւն[17], որպէս յառաջ բերիլն և անծնելաբար բղխումն՝ ի Հօրէ, և մխիթարիչ՝ ի սորին ենթակայութեան[18] տեսանին անփոփոխելի[19] գոլ ի Հօր և ի յՈրդւոյ ենթակայութիւն[20], զի թէպէտ ծնեալն զբնութիւն ունի ծնօղին իւրոյ, զի նոյն է բնութիւն, այլ դէմ ոչ ունի զիւրոյ ծնօղին, այլ զիւրն՝ ըստ իւրոց[21] առանձնական յատկութեանցն: Նոյնպէս յառաջ բերեալն զյառաջ բերօղին իւրոյ[22] ունի նոյն գոլ ըստ բնութեան, իսկ իւրով առանձնական յատկութեամբն դէմ զիւր և ոչ զյառաջ բերողին իւրոյ: Իսկ որ յերկոցունցն հանգիտաբար[23] ելեալ աստուածաբանութիւն, այսինքն՝ ի բնութենէ հասարակութեան[24] և ի[25] դիմէ առանձնութեան, այսպէսի իմն օրինակաւ. յորժամ ասիցեմք[26]՝ Հայր, Աստուած, կամ ամենակալ, կամ անեղ, կամ անապական: Նոյնպէս ծնիցելոյն ըստ միայնակութեան ծնանիլն, իսկ անմահութիւն

[1] A անըմպելի
[2] E > և անըմբռնելի յամենեցունց
[3] B նախախնամելեացս
[4] B յայտ ինչ] յայտնիչ
[5] B իմում] ի միում
[6] B > գոլ
[7] E կոչմանս
[8] BD առ անձնականն
[9] AE նման
[10] B նոցա
[11] B զբնութիւն
[12] B հասարակութեան
[13] A Հօր, BC Հօրէն
[14] A ընթակայութեան, D ենթակութեան
[15] A ընթակայանան
[16] D փոփոխեն
[17] A ընթակայութիւն
[18] A ընթակայութեան
[19] B անփոփոխել, C անփոփելի
[20] A ընթակայութիւն
[21] BCE իւրոյ
[22] A > իւրոյ
[23] ACE յանգիտաբար
[24] C > այսինքն ի բնութենէ հասարակութեան
[25] BCE > ի
[26] B ասեմք

և անեղութիւն՝ ըստ հասարակութեան[1] բնութեանն: Զնոյն իմաստիս և ի վերայ Հոգւոյն Սրբոյ:

Դարձեալ յաստուածային անուանակոչութիւնս՝ ե՛ն, որ յարքունական զօրութիւնն վերաբերին, որք վրէժխնդրութեանցն կոչին, և ե՛ն, որ յարարչականն, որք փրկականք անուանին: Առ որով[2] է և տնտեսականն, որ յերկուս բաժանի. ո՛մն՝ գեր ի վերոյ քան զմարմինն, և ո՛մն՝ ի մարմնի: Եւ արքունականին են այսոքիկ՝ Աստուած վրէժխնդրութեանց կամ զօրութեանց[3], Տէր տէրանց, Թագաւոր թագաւորաց, Աստուած աստուածոց՝ որպէս գտանի ի[4] Գիրս Սուրբս: Իսկ արարչական անուանք այսոքիկ՝ ողորմած, գթած, երկայնամիտ, փրկիչ, բարերար և այլ սոյնպիսիք: Իսկ տնտեսականին՝ Աստուած Աբրահամու, Սահակայ, Յակոբայ և որ ինչ առաքինիսն[5] վերաբերի: Աստ զանց արասցուք ըստ կոչմամբն[6] որ ըստ մարմնոյ տնտեսութեան են[7], զի մի բանս յապաղեսցի: Այլ յասացելոց[8] անուանցս լինի մեզ երիս բացորոշութիւնս՝ ծառայականն, և վարձկանականն[9] և որդիականն, զի երիւքս այսոքիւք[10] նախախնամիմք՝ կա՛մ տանջանօք, կա՛մ փրկութեանցն յուսով, կա՛մ առաքինական նահատակութեամբքն, զի վրէժխնդրութեանցն[11] անուն աւանդէ զերկիւղ, որով[12] լինիմք ի կարգ ծառայական, իսկ փրկութեացն՝ զյոյս[13], որ է վարձկանական, զի ըստ վաստակոցն ակն ունիցիմք[14] վարձուցն[15] հատուցման, իսկ տնտեսականն՝ զսէր, որ է որդիականն: Իսկ այսոքիկ ըստ հասարակ աստուածութեանն, որպէս ասա՛ ասէ՝ «Տէր ի տաճար սուրբ իւրում...»:

Եւ զի լիապէս հասարակ բնութիւնն է ի մի և ի նոյն անձնաւորութիւնն, զոր և տեսանիցես յերիցն զմի՝ յաղագս որոյ մարգարէս այժմ ի դիմաց Որդւոյ նշանակէ, ասելով՝ «Տէր ի տաճար սուրբ...», զոր և առաքեալ պարզաբար իբր մատամբ ցուցանէ նշանակելով յասելն՝ «Մեզ մի է Աստուած, Հայր՝ յորմէ ամենայն, և մի Տէր Յիսուս Քրիստոս, որով ամենայն և մեք նովաւ» [Ա. Կորն. Ը. 6]: Այսքան առ այս:

Իսկ նախդիրս[16] այս, որ ասէ՝ «Տէր ի տաճար սուրբ իւրում...», բազում կերպիւ առեալ լինի. քանզի երբե՛մն նշանակէ զներգործական պատճառն, որպէս յորժամ ասի Քրիստոս յղացաւ ի Հոգւոյն[17] Սրբոյ, երբե՛մն՝ զնիւթական պատճառն, որպէս յորժամ ասի Քրիստոս ծնեալ ի կուսէ, երբե՛մն ասէ զնոյնութիւն գոյացութեանն, որ-

[1] B հասարակութիւն
[2] D որովք
[3] A > կամ զօրութեանց
[4] B > ի
[5] A առաքինին
[6] A զկոչմամբն] ըստ կոչմամբն
[7] A մարմնատես տնօրէնութեան] մարմնոյ տնտեսութեան են
[8] B յուսացելոց
[9] B > և վարձկանականն
[10] BD այսոքիկ
[11] B վրէժխնդրութեամբն
[12] A որովք
[13] A զոյս
[14] B ունիմք
[15] D վարձուց
[16] B նախադիրս
[17] B > Հոգւոյն

պէս յորժամ ասի[1], որ է[2] ծնեալ ի Հօրէ, երբե՛մն նշանակէ զփոփոխումն գոյացութեան, որպէս[3] յորժամ ասի՝ մարմինն Քրիստոսի լինի ի հացէն, և արիւնն՝ ի բաժակէն, երբե՛մն՝ զկարգն, որպէս յորժամ ասի, թէ ստեղծուածս է ի յոչընչէ, իբր թէ յետ ոչընչին եղեալ է ինչ, և որպէս ասեմք, թէ[4] լինի օր հասարակն ի յառաւօտէն, և դարձեալ, թէ՝ գնաց մարդ ի տուն իւր յաւիտենից՝ սոքա և սոյնպիսիք զկարգն ցուցանեն: Այսպէս և որ ասէ աստ[5]. «Տէր ի տաճար սուրբ իւրում...»՝ զկարգէն[6] յայտ առնէ, որպէս թէ՝ ընդ յերկինս լինելոյն[7] բնակէ ի տաճարն և տաճարաւն՝ յերկինս: Իսկ այն, որ ասէ՝ «Տէր[8] ի տաճար սուրբ իւր», ըստ որում ասի՝ Աստուած սուրբ, և ի սուրբս բնակեալ[9] [Գ. Մակ. Բ. 10 կամ Եսայ. ԾԷ. 15], այսպէս ապա Աստուած ի[10] մաքրեալ օրհնութեամբ և ի սրբեալ օծութեամբ տաճարս[11] բնակէ: Այլ ոմանք առարկեն ընդդէմ այսմ[12] կրկին յեղանակաւ, թէ ոչ է պարտ սրբել օրհնութեամբ զտաճարն: Առաջին, թէ զամենայն, զոր ինչ արար Աստուած, ետես և ահա բարի[13] են յոյժ, և սա մի է[14] յարարելեացն[15] բարեաց՝ ապա ուրեմն ոչ է կարօտ սրբելոյ մարդոյ: Երկրորդ, զի տուն Աստուծոյ[16] անուանեմք, բաւական է այն առ ի սրբութիւն ասեն ի յորոյ անուն կանգնեմք[17] զտունն: Եւ թերևս[18] այսպիսի իմն պատճառաւ ո՛չ օծանեն զնշանն փրկական, և ո՛չ զկենդանագիր ինչ պատկերս, ո՛չ աւազան, և ո՛չ զայլ ինչ կահս սրբութեան, վասն որոյ պարտ և պատշաճ վարկանիմ նախ զլուծումն բանիս տալ և ապա՝ զպատճառս օրհնութեան: Առաջնոյն պատասխանեմ և ասեմ[19], զամենայն, զոր ինչ արար Աստուած, բարի են յոյժ, և զամենայն, ինչ զոր բարի է՝ արար Աստուած, այլ զիւրաքանչիւրսն յիւրումն պատշաճի. զոր օրինակ՝ բարի են ամենայն կենդանիք արարեալք յԱրարչէն, այլ ոչ բարի են ամենեքեան յողջակէզս, ըստ այնմ, որ ասէ մարգարէն՝ «Ամենայն չորքոտանիք չեն բաւական յողջակէզս» [Եսայ. Խ. 16]: Եւ բարի է ակն ի տեսանել, և ոչ բարի է ի լսել, այսպէս[20] ամենայն ինչ նիւթ շինուածոյ[21] բարի են յոյժ, այլ են ոմանք ի տաճար Աստուծոյ և կէսք ի մեհեանս կռոց, վասն որոյ հարկ է[22], զի օրհնութեամբն որոշեսցին սոքա[23] ի միմեանս[24]: Դար-

[1] A > ասի
[2] A էն
[3] CE նոյնպէս
[4] B > թէ
[5] B կարգ
[6] B զկարգն
[7] B լինելոցն
[8] CE > Տէր
[9] BE հանգուցեալ
[10] CE > ի
[11] B աղօթս և ի սրբեալ աստուածութեամբ] օրհնութեամբ և ի սրբեալ օծութեամբ տաճարս
[12] B > այսմ
[13] C զի բարի
[14] B են
[15] C յարարչեացն
[16] BCDE > Աստուծոյ
[17] BCDE > բաւական է այն առ ի սրբութիւն ասեն ի յորոյ անուն կանգնեմք
[18] BCDE > թերևս
[19] D > և ասեմ
[20] D այնպես
[21] BD շինուածոց
[22] B > հարկ է
[23] B > սոքա
[24] D միմեանց

ձեալ, զի ամենայն ինչ գեղեցիկ ստեղծան և բարի գոյութեամբ, այլ ընդ ապականութեան[1] մարդոյն գլուխ գոլով, և սոքա ամենեքեան ընդ ապականութեամբ[2] գրաւեցան, որպէս ասէ առաքեալ. «Ընդ ունայնութեան[3] արարածք հնազանդեցան՝ ո՛չ իւրեանց կամաւ» [Հռոմ. Ը. 20], և դարձեալ ասէ՝ «Ամենայն արարածք[4] հեծեն[5] և երկնեն[6] մինչև ցայժմ» [Հռոմ. Ը. 22], զի և ինքեանք իսկ ազատեսցին ի ծառայութենէ ապականութեան[7], ապա ուրեմն՝ պարտ է օրհնել և սրբել զսա օծութեամբ, զի անապական տաճար ասցի Աստուծոյ[8]: Երկրորդին պատասխանեմ, թէ բաւական է որպէս ասէքդ կոչումն Աստուծոյ՝ կոչեցելոյ իրին սրբութիւն[9] և է՛ իսկապէս, այլ զի ոչ եմք այնքան արժանաւոր մեք, զի ընդ կամելն մեր արդիւնասցի և բանն, վասն որոյ ի մէջ առեալ զբանս աստուածամերձ արանցն[10], զի նոցին բանիւք և սրբով իւղովն օծմամբ հաճութեամբ խոնարհեսցի[11] Աստուած, և դիցէ զանուն իւր ի նմա, որով և սրբեսցի իրն այն զինչ և իցէ: Եւ դարձեալ այսպէս, յորժամ Մովսէս զվրան ժամուն կանգնէր, ո՞չ ապաքէն խորան Աստուծոյ անուանէր[12] զնա և ընդէ՞ր ապա առեալ զարիւն ցլուցն[13] և նոխազացն, ջրով և բրդով[14], կարմրով և զոպայիւ սրսկէր զխորանաւն, և զկտակարանօքն և զամենայն կահիւ[15] սպասուն, որպէս պատմէ առ Եբրայեցիսն[16] Պօղոս [Եբր. Թ. 19]: Եւ ի Նորս դարձեալ վերնատունն իսկ ի Հոգւոյն իջումն ասէ Ղուկաս՝ նախ ելից զտունն, յորում նստէին և ապա նստաւ յիւրաքանչիւրսն բաժանեալ լեզուք իբրև ի հրոյ: Եւ ո՞չ ապաքէն մարդս ի պատկէր Աստուծոյ է, և ընդէ՞ր իսկ օրհնութեամբ արժանաւոր ի շնորհ ի քահանայութեան, մարգարէութեան կամ թագաւորութեան[17]: Եւ թերևս իցէ յանդգնագոյն եղիցի քեզ ամենայն հաց թարց օրհնութեան մարմին Քրիստոսի, նոյնպէս և բաժակք, եղիցի ապա ամենայն քառանկար[18] ձև[19] երկրպագելի նշան և այլն ամենայն: Բաւական է այս ընդդէմ նոցա անբանութեանն, մանաւանդ թէ կարի իսկ մոլորութեան:

Եւ մեք դարձցուք յառաջիկայս մերոյս խնդրոյ, թէ յաղագս[20] որո՞յ պատճառի օրհնի և սրբի եկեղեցի: Եւ նախ զայս, թէ վա՞սն էր յամենայն տեղիս շինի եկեղեցի[21]. զի որքան մարդն կայ յաշխարհիս

---

1 BD անապականութեան
2 BD անապականութեամբ
3 A ընդունայն] ընդ ունայնութեան
4 D > հնազանդեցան՝ ո՛չ իւրեանց կամաւ, և դարձեալ ասէ՝ ամենայն արարածք
5 D հեծծեն
6 B երկեն, C կրկնեն, D երկնեան
7 A > ապականութեան
8 D > Աստուծոյ
9 CE սրբութեան
10 D արարանցն
11 B խորհեսցի
12 B կանգնէր
13 B ցլուցն
14 B բրբրդով
15 A կաւիւ
16 D եբրայիսն
17 B մարգարէութեան
18 A քառանկիւնի
19 D քառանկարածև] քառանկար ձև
20 A > յաղագս
21 BCDE > Եւ նախ զայս, թէ վասն էր յամենայն տեղիս շինի եկեղեցի

յայսմիկ՝ մեղաւոր է, վասն որոյ և հաշտութեանն[1] Աստուծոյ կարօտ է, վասն այսորիկ հարկ է, զի տուն ինչ հասարակաց գտանիցի, յորում հաշտութիւնս այս կատարեսցի: Եւ մարդ ոչ կարէր ելանել յերկնային տունն, զի յոյժ[2] բարձր էր, և Աստուած ոչ իջանէր յերկրեղէն տունն, զի յոյժ[3] անմաքուր էր. վասն այսորիկ կամեցաւ Աստուած, զի լինիցի[4] տուն հասարակաց՝ Աստուծոյ եկեղեցի սրբեալ, որ թէ ոչ էր երկրեղէն՝ ոչ լինէր տուն մարդկան, և թէ ոչ էր սրբեալ՝ ոչ լինէր Աստուծոյ[5] բնակարան: Եւ վասն[6] զի մեղաւորք ամենայն ուրեք են յաշխարհի, յաղագս այնորիկ կամեցաւ Աստուած զայսպիսի տուն ամենայն ուրեք չինել և սրբել[7] և պատարագ մատուցանել, որպէս ասէ մարգարէն[8] Մաղաքիա. «Յամենայն տեղիս մատչին խունկք վասն անուան իմոյ և պատարագ[9] սուրբք» [Մաղ. Ա. 11]: Բայց գիտել պարտ է, թէ վասն չորից պատճառաց սրբի եկեղեցի Աստուծոյ. առաջին՝ առնու ի կողմանէ Աստուծոյ, երկրորդ՝ ի կողմանէ հրեշտակի, երրորդ՝ ի կողմանէ մերմէ, չորրորդ՝ ի կողմանէ սատանայի: Առաջին՝ ի կողմանէ[10] Աստուծոյ, առ ի բնակութիւն նմա, որպէս ասէ յերկրորդ Մնացորդքն. «Աչք իմ եղիցի[11] բաց և ականջք իմ[12] առ ի լսել զաղօթս ի տեղիս յայս, և արդ, ահա ընտրեցի զտունս զայս և սրբեցի առ ի լինել անուան իմոյ յաւիտեան. և եղիցին աչք իմ և[13] սիրտ իմ անդ զամենայն աւուրս» [Բ. Մնաց. Է. 15-16]: Ուստի ի բանիցս յայտ է, թէ ունի Աստուած զաչս իւր անդ, որով զմտերմութիւն բարեացն և զծնրադրութիւնն տեսանէ, նաև՝ զծուլութիւն երկմտիցն, որպէս ասէ Սողոմոն, աչք Տեառն առաւել լուսաւոր են, քան զարեգակն և շուրջանակի տեսանեն զամենայն ճանապարհորդս [Առակ. ԺԵ]: Ունի և զականջս իւր անդ, որովք լսէ զաղօթս և զարտասուս[14] հաւատացելոց, որպէս ասէ Եսայի. «Լուայ բարբառոյ աղօթից քոց, և տեսի զարտասուս քո» [Եսայ. ԼԸ. 5]: Նաև լսէ զբանս ունայնս և զբամբասանս[15] բազմաց: Ունի անդ և զանուն իւր՝ որ է Քրիստոս, որ թարգմանի օծեալ, որպէս ասէ յերգս. «Եւզ թափեալ է անուն նորա» [Երգ. Ա. 2]: Ունի անդ և զսիրտ իւր, որով զարժանաւորսն, որ անդ կան՝ սիրէ և զանարժանսն պատժէ և արհամարհէ, ըստ այնմ, որ եհան զամենայնսն ի տաճարէն զայնոսիկ, որ գնէին և վաճառէին [Յովհ. Բ. 15-16]: Երկրորդ պատճառ՝ օրհնի եկեղեցի վասն հրեշտակաց, զի սպասաւո-

[1] C հեշտութեանն
[2] A յայնժամ
[3] A > բարձր էր, և Աստուած ոչ իջանէր յերկրեղէն տունն, զի յոյժ
[4] C լինի
[5] A > Աստուծոյ
[6] B > վասն
[7] B զի լինիցի տուն հասարակաց և սրբեալ] զայսպիսի տուն ամենայն ուրեք շինել և սրբել
[8] A > մարգարէն
[9] BCE պատարագք
[10] ABCE կողմա

[11] ABCE եղիցին
[12] E > իմ
[13] AB > աչք իմ և
[14] A զարտօսր
[15] BC զբամբանս

բեն անդ չորեքկնաբար: Նախ, զի քահանայի սպասաւորողին հուպ կան ի ժամ պատարագին, զի ուր տէր է՝ անդ ի սպասու կան ծառայքն: Երկրորդ, սպասաւորէն, զի զաղօթս հաւատացելոց[1] Աստուծոյ մատուցանեն, որպէս ասէ Տուբիթն. «Յորժամ կացէր դու յաղօթս, ես մատուցի զյիշատակ աղօթիցն առաջի սրբոյն» [Տոբիթ. ԺԲ. 12]: Երրորդ, սպասաւորեն հրեշտակք, պահպանելով ի յարկածից դիւաց և ի կալն անդ և ի դառնալն, որպէս ասէ[2] Յուդիթն. «Պահեաց զիս հրեշտակն և ի բնակելն անդ, և ի դառնալն անտի»: Չորրորդ, սպասաւորեն, զի սաղմոսողացն զինքեանս կցորդեն ի յերգսն, որպէս ասէ Դաւիթ՝ «Կանխեցին իշխանք հանել զօրհնութիւն ի մէջ կուսանաց և գովչաց» [Սաղ. ԿԷ. 26]: Երրորդ պատճառ՝ օրհնի եկեղեցի վասն մարդկան, զի անդ ընդունին զամենայն բարեաց վայելումն երկնաւոր և երկրաւոր և զմերժումն[3] ամենայն չարեաց՝ որպէս ուսաք[4] յառաջնումն նուագին: Իսկ չորրորդ պատճառ՝ օրհնի եկեղեցի վասն դիւաց, վասն զի օրհնեալ եկեղեցին յոյժ ահարկու է դիւաց՝ ըստ հինգ պատճառի իրաց, որք ի նոյն եկեղեցին պարունակին: Նախ, զի անդ են հրեշտակաց օգնականութիւնք, որովք եկեղեցի ամրանայ, երկրորդ, զի անդ մարմին տէրունական պատարագի և պահի, երրորդ, զի[5] անդ խաչն կանգնի, որ է նշան յաղթութեան և սուր վիրաց նորին, չորրորդ, անդ և աղօթք հաւատացելոց հեղուն, հինգերորդ, անդ և նշխարք սրբոց ամփոփին, զոր ոչ միայն յուսացելոցս[6], այլ և յանուանէ սոցա հալածին դևք և ի բաց փախչին: Այս, որ ասէ՝ «Տէր ի տաճար սուրբ...»:

Դարձեալ, յայլ իմն ակնարկէ ծածուկ խորհրդով մարգարէական բանս, որ ասէ՝ «Տէր ի տաճար սուրբ իւրում, Տէր յերկինս...»: Այն, որ առ սրբութեան խորանն Աբրահամու եմուտ բանն երկու հրեշտակօք և եկեր առ նմա, յորում անուանեալ կոչեցաւ ի նմանէ տէր և դատաւոր յաւիտենական: Դարձեալ՝ «Տէր ի տաճար սուրբ իւրում...» ի[7] տեսիլն Յակոբայ սանդուխք յերկրէ յերկին և Տէր հաստատեալ ի նմա, ըստ որում՝ Էօծ զարձանն[8] իւղով և ասէ[9] ՝ ոչ այլ ինչ սա, եթէ ոչ տուն Աստուծոյ, յորում Տէր երևեցաւ աստ [Ծնն. ԻԸ. 8-19]: Դարձեալ, խորանն յանապատին, որպէս ասացաք, և տաճարն Սողոմոնի, զի յետ սրբութեան օրհնութեամբն և խնդրուածոյ նորին, ասէ Գիրն՝ «Փառք Տեառն ելից զտաճարն» [Բ. Մնաց. Է. 1]: Դարձեալ, տաճար մարգարէքն, յորում և բնակարան բանին լինէին, ուստի ի դիմաց բնակչին թարգմանեալ զբանն ասէին՝ «Եղև բան Տեառն առ իս» [Երեմ. Ա. 4, 11, 13; Բ. 1; ԺԳ. 3, 8 և այլուր], և թէ՝ «Այսպէս ասէ Ադովնիա Տէր» [Եզեկ. Ե. 5, 7, 8; Զ.

[1] A հայեցելոցն
[2] C > ասէ
[3] A զմերժ
[4] A > ուսաք
[5] B > զի

[6] CD յասացելոցս
[7] AE > ի
[8] D զարյանն
[9] B > ասէ

3, 11 և այլուր]: Դարձեալ, «Տէր ի[1] տաճար սուրբ...», աստուածածին[2] կոյսն Մարիամ[3] և մայրն, յորում բնակարան եղև անտանելի Բանին՝ յինքեան կրելով զբոլորիցն Տէր, զորոյ սրբութիւն նախաձայնեալ Դաւթի՝ Հօր նորա, ասէ՝ «Սուրբ է տաճար քո սքանչելի արդարութեամբ» [Սաղ. ԿԴ. 5-6]: Դարձեալ, տաճար Բանին կերպիւ ինչ ասի բնութիւնս Ադամային, յորում մարմին եղև և բնակեաց ի մեզ այն, որ ոչ արար մեղս, զոր Հայր սրբեաց և առաքեաց: Թերևս աստ յառաջ մատուսցեն դստերքն չարափառաց, եթէ վասն տաճարի մարմնոյ իւրոյ[4] ասաց, մանաւանդ և այնու ևս ունայն և նկուն լիցին, զի ի նմա բնակէ ամենայն լրումն աստուածութեանն մարմնապէս, որ է էապէս ըստ մեծին Կիւրղի: Իսկ տաճարաւն կամ բնակութեամբն՝ զանշփոթ խառնումն ի միութիւն բնութեանցն բացայայտէ: Դարձեալ, բանս այս կատարեցաւ առ ծերունոյն Սիմէոնի, յորում ընկալեալ զքառասնօրեայ մանուկն ընծայեալ[5] ի տաճարն, արտասուօք աղէրսէր. «Արձակեայ զիս Տէր[6] ի խաղաղութիւն» [Ղուկ. Բ. 29]: Դարձեալ, ի լրումն մարգարէին, յորժամ նստաւ ի վերայ յաւանակին, յորում և մանկուքն[7] ովսաննայիւ ընդ յառաջ պարէին՝ եկեալ թագաւորութիւն[8] Հօր մերոյ և եմուտ ի տաճարն ըստ վիպաբանութեանն[9] աւետարանչին [Մատ. ԻԱ. 1-12; Մար. ԺԱ. 1-11; Ղուկ. ԺԹ.30-38; Յովհ. ԺԲ. 14-17]: Դարձեալ, տաճարն վերնատունն սուրբ, յորում և բնակեալ էր Տէր ի տաճարն[10] ի ժամ պասեքին հնոյ օրինին[11]. «Դուք,- ասէ,- կոչէք զիս Տէր և վարդապէտ և եմ իսկ» [Յովհ. ԺԳ. 13]: Դարձեալ, տաճար՝ սիրտ առաքելոցն սրբոց, ճաշակելովն զմարմին և զարիւն բանին, վասն որոյ ասէ առաքեալ. «Քանիցս անգամ թէ ուտիցէք զհացս զայս[12] և զբաժակս՝ զմահ Տեառն պատմեցէք» [Ա. Կորն. ԺԱ. 26]: Դարձեալ, տաճար խաչն սուրբ, յորում «Հաճեցաւ Տէր ընդ Սիոն դիտանոցին, և ընտրեաց բնակիլ ի նմա[13]. ասէ՝ այս է հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից, ի սմա բնակեցայց, զի հաճեցաւ ընդ սա» [Սաղ. ՃԼԱ. 13-14], զի ուր խաչ է՝ ի նմա է խաչելեալն, անդ է և խաչելութիւնն: Դարձեալ, տաճար սուրբ[14] գերեզմանն սուրբ, ըստ որում ասէ[15] ՝ «Թաւալեցուցին վէմ ի մեծ դուռն գերեզմանին» [Մար. ԺԵ. 46], որ և Մարիամ խնդրէր բարձին զՏեառն ի գերեզմանէ անտի: Դարձեալ՝ «Տէր ի տաճար սուրբ իւրում...», զոր ի վեր[16] համբառ-

[1] A > Տէր ի
[2] AD է աստուածածին
[3] ACDE > Մարիամ
[4] A > իւրոյ
[5] C > զքառասնօրեայ մանուկն ընծայեալ
[6] B > Տէր
[7] B մանուկն
[8] B թագաւորութեան
[9] BCDE վիպաբան
[10] ACD տաճարին] ի տաճարն
[11] B օրինոյ
[12] A զՅիսուս
[13] CE սմա
[14] A > սուրբ
[15] A այնմ] որում ասէ
[16] B > վեր

նալն[1] յերկինս[2] հրեշտակք ասէին. «Համբարձէք իշխանք զդրունս ձեր... և մտցէ թագաւոր փառաց» [Սաղ. ԻԳ. 7,9], որ և հարցմամբ ի տեղեկագունիցն ասէին. «Սա ինքն է Տէր[3] զօրութեանց և թագաւոր փառաց» [Սաղ. ԻԳ. 10]: Դարձեալ, տաճար սիրտ հաւատացելոց սրբեցելոցն մկրտութեամբ, ուստի՝ ես և Հայր «առ նա եկեսցուք և օթևանեսցուք» [Յովհ. ԺԴ. 23], և «Ուր երկուք և երեք ժողովեսցին յանուն իմ՝ անդ[4] եմ ես ի մէջ նոցա» [Մատ. ԺԸ. 20]: Դարձեալ՝ ասելն[5] «Տէր ի տաճար սուրբ...», զհանդերձեալ խորհուրդն բացայայտէ[6], զոր առակ հարսանեացն նշանակէ[7], անդ, ուր[8] զանմաքուրն հանդերձիւ ընդ մէջ կտրել, հրամայէ և ի խաւարն արտաքին արտաքսեսցէ, և զդուրսն[9] փակեսցէ: Իսկ զարժանացեալսն ընդ իւր ի բազմօթևան առագաստին առ սեղան Հօրն բազմեցուսցէ և անցեալ պաշտեսցէ [Մատ. ԻԲ. 1-14]: Այսոցիկ ամենայնի յառաջագուշակ եղեալ մարգարէն ասէ՝ «Տէր ի տաճար սուրբ...»:

Իսկ այն, որ ասէ՝ «Տէր ի տաճար սուրբ իւրում»[10], գիտելի է, զի երեք կերպիւ ունի ոք տէրութիւն ի վերայ իրաց ինչ. նախ՝ թէ ինքն արար, երկրորդ՝ թէ տուաւ նմա, երրորդ՝ թէ գնեաց ինքն: Եւ ըստ այսմ երեք կերպիս Որդին Աստուծոյ է տէր ի տաճարի սրբոյ իւրոյ[11]: Նախ՝ զի ինքն արար, ասէ առաքեալ առ Կողոսացիս. «Ամենայն ինչ նովաւ հաստատեցաւ բովանդակ՝ որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի, և նա է գլուխ մարմնոյ եկեղեցւոյ իւրոյ» [Կող. Ա. 16-18]: Երկրորդ՝ զի տուաւ նմա, ինքն վկայէ. «Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հօրէ իմմէ[12]» [Մատ. ԺԱ. 21; Ղուկ. Ժ. 22] և թէ՝ «Քո[13] էին և ինձ ետուր զնոսա» [Յովհ. ԺԷ. 6]: Երրորդ՝ թէ գնեաց ինքն, ասէ մարգարէն. «Ո՛չ հրեշտակոք[14], և ոչ[15] մարգարէ, այլ ինքնին[16] Տէր եկեսցէ և փրկեսցէ[17] զմեզ» [Եսայ. ԿԳ. 9], և առաքեալն Պետրոս ասէ, թէ[18]՝ «Գնոց գնեցայք ո՛չ ապականացու[19] արծաթեղինօք և ոսկեղինօք, այլ պատուական և անբիծ արեամբ միածնին» [Ա. Պետ. Ա. 17-19]: Ապա ուրեմն, յիրաւի ասէ մարգարէն[20]. «Տէր ի տաճար սուրբ իւրում...»:

Իսկ այն, որ կրկին յիշէ զՏէրն ասելով՝ «Տէր ի տաճար սուրբ իւրում, Տէր յերկինս յաթոռ իւրում», առաջին պատճառ՝ զի մի և նոյն Տէր, որ յերկինս է ըստ աջմէ Հօր՝ նոյն Տէր է ի տաճար սուրբ իւր, և

---

1 A վերանալն] վեր համբառնալն
2 B > յերկինս
3 D թագաւոր] Տէր
4 A > անդ
5 D ասեն
6 B յայտնէ
7 B բացայայտէ
8 A անդանօր] անդ ուր
9 A զսոսա] և զդուրսն
10 C > Իսկ այն, որ ասէ՝ Տէր ի տաճար սուրբ իւրում
11 E > Եւ ըստ այսմ երեք կերպիս Որդին Աստուծոյ է տէր ի տաճարի սրբոյ իւրոյ
12 B > իմմէ
13 BC ոք
14 A հրեշտակք
15 A ոքն] և ոչ
16 B ինքն
17 A > և փրկեսցէ
18 BCDE > ասէ թէ
19 B ապականացաւ
20 A մարգարէս

այն[1] Տէր, որ[2] ի տաճարս է և յերկ-
րի, նոյն Տէր է յերկինս յաթոռ իւր,
ըստ[3] որում[4] «Զերկին և զերկիր ես
լնում, ասէ Տէր ամենակալ» [Երեմ.
ԻԳ. 24]: Երկրորդ, զի ըստ որում
Տէր բարձրեալ և թագաւոր ահար-
կու է ի վերայ ամենայն երկրի,
այսպէս և երկնայնոցն, ըստ այնմ՝
«Տէր զերկինս պատրաստեաց
աթոռ իւր և[5] արքայութիւն նորա
ամենեցուն տիրէ» [Սաղ. ՃԲ. 19]:
Երրորդ, զի որպէս Տէր և Դատա-
ւոր արդար է երկրաւորացս մարդ-
կան և հատուցանէ իւրաքանչիւր
զգործս[6], այսպէս և[7] Տէր և Դատա-
ւոր արդար է երկնայնոցն, և հա-
տուցանէ զպատիժ վրիպելոցն[8] ի
նոցանէ զխաւարն, որ պատրաս-
տեալ[9] է սատանայի և հրեշտակաց
նորա: Չորրորդ, զի որպէս[10] ըստ
արարչութեանն տիրէ ամենայնի
յերկինս և յերկրի, այսպէս և ըստ
տնտեսութեանն տիրէ Յիսուս[11]
Քրիստոս յերկինս և յերկրի, որում
կրկնի ամենայն ծունր, որպէս
ինքն[12] ասէր. «Տուաւ ինձ ամենայն
իշխանութիւն յերկինս և յերկրի[13]»
[Մատ. ԻԸ. 18], և առաքեալ. «Մեզ
մի է Տէր Յիսուս Քրիստոս, որով
ամենայն և մեք նովաւ[14]» [Եփես.
Դ. 5]:

Իսկ յաղագս երկնից ասացեալ
եղև սակաւ ի բազմաց՝ ի սրբազան
առաջնորդէն մերմէ աշխատա-
սիրութեանց: Այլ որ ասէ՝ «Տէր ի
տաճար սուրբ իւրում, Տէր յերկինս
յաթոռ իւրում», յաղագս աթոռոց
երիս իրս գիտելի է: Նախ, զի կոչի
աթոռ նշանակ հանգստեան՝ որպէս
աթոռ նիւթական, վասն նստելոյ
հասարակ մարդկան: Երկրորդ, ասի
աթոռ թագաւորական՝ ի նշանակել[15]
զմեծութիւն բարձրութեան, ըստ
այնմ, որ ասէ՝ որդիք նորա նստցին
յաթոռ թագաւորութեան նորա [Ա.
Մնաց. ԻԸ. 5]: Երրորդ, ասի աթոռ
դատողական՝ ի նշանակել զիշ-
խանութիւն քննութեան և դատո-
ղութեան, ըստ այնմ՝ «Նստջիք և
դուք յերկոտասան աթոռս՝ դա-
տել զազգն Իսրայէլի» [Մատ. ԺԹ.
28]: Արդ[16] ի վերայ ասացեալ երից
աթոռոցս է[17] բազմեալ Տէր մեր Յի-
սուս Քրիստոս՝ ոչ միայն յերկրի,
այլև յերկինս, որպէս ասէ մար-
գարէին. «Երկինք աթոռ իմ են՝ և
երկիրս պատուանդան ոտից[18] իմոց»
[Եսայ. ԿԶ. 1], զորմէ զիւրաքան-
չիւրսն բացայայտեսցուք յատ-
կապէս վկայութեամբ՝ եթէ տացէ
բանն զբան՝ յաղագս որոյ բանս է:
Վասն առաջնոյն՝ որ է հանգստեան
աթոռ, ասէ մարգարէն. «Աստուած
նստաւ յաթոռ սրբութեան իւրոյ[19]»

[1] A սոյն
[2] A > որ
[3] A ընդ
[4] B > որում
[5] A > աթոռ իւր և
[6] A > և հատուցանէ իւրաքանչիւր զգործս
[7] BCDE > և
[8] D վրիպելոյն
[9] A ըստ հրոյն որ պատրաստ] զխաւարն որ պատրաստեալ
[10] BCDE > որպէս
[11] BCDE > Յիսուս
[12] B > ինքն
[13] D յերկրէ

[14] BCDE > նովաւ
[15] B իշխանակել] ի նշանակել
[16] A չորրորդ, D երրորդ] արդ
[17] E ի
[18] A ոտ
[19] A նորա] սրբութեան իւրոյ

[Սաղ. ԽԶ. 9], զորմէ հաստատէ[1] առաքեալ. «Սրբութիւն մեղաց մերոց արարեալ, նստաւ ընդ աջմէ մեծութեանն ի[2] բարձունս» [Եբր. Ա. 3], և զի ամենայն ուրեք[3] նստելն[4] զհանգիստ նշանակէ, իսկ ընդ[5] աջմէն Աստուծոյ՝ զհաւասարն և զփառս աստուածութեանն մեզ թարգմանէ: Եւ թէ[6] այլ ուրեք կանգնեալ[7] ասիցէ, որպէս Ստեփաննոս. «Ահա տեսանեմ[8] զերկինս բացեալ՝ և զՅիսուս, զի կայ ընդ աջմէ Աստուծոյ» [Գործք. Է. 55]՝ այս ոչ են ընդդէմ միմեանց, զի անդանօր ի հանդէս մարտի նահատակի իւրոյ և նախնի վկային երկնից[9] ի յօգնութիւն եկեալ և ի կոչումն հրաւիրեալ, որ և բազմաց ի սրբոցն[10] հնչումն ձայնի լսելի լինէր, թէ՝ «Ես ընդ ձեզ եմ» [Մատ. ԻԸ. 20], «Զօրացարուք և մի երկնչիք» [Եսայ. ԼԵ. 4], և եթէ՝ «Եկայք առ իս[11] ամենայն[12]» [Մատ. ԺԱ. 28]: Եւ այս[13] վասն բազում պատճառի. առաջին՝ զի զնոսին զնահատակսն յուսադրեալ[14] հաստատեցէ[15] համբերել տանջանաց, ըստ այնմ՝ «Ես ընդ ձեզ զամենայն աւուրս մինչ ի կատարած աշխարհի» [Մատ. ԻԸ. 20], երկրորդ, զի և զայլս ի նոյն յորդորեսցէ, ըստ այնմ, թէ՝ «Ոչ վասն իմ[16] ինչ եկն բարբառս այս, այլ վասն ձեր» [Յովհ. ԺԲ. 30], երրորդ, զի անհաւատքն երկիցեն և դուցէ ի հաւատս եկեսցեն, ըստ այնմ, որ՝ «Կէսքն ասէին որոտումն լինել, և այլք[17] ասէին հրեշտակ[18] խօսեցաւ ընդ նմա» [Յովհ. ԺԲ. 29]: Այսքան առ այս՝ թերևս արտաքս ելաք ի բանէս:

Դարձցուք յառաջին բանս մեր, որովհետև նստելն յաթոռ[19] զհանգիստ նշանակէ՝ որպէս ասացաք: Առ այս գիտելի է, զի յերիս իրս հանգչի Աստուած: Նախ, հանգչի Աստուած ինքն յինքեան, ըստ այնմ, որ ասէ՝ «Դու Հայր յիս և ես ի քեզ» [Յովհ. ԺԷ. 21], որ և յայտ է ի հարցումն և ի պատասխանիս Սողոմոնի[20], թէ՝ ամենարարն Աստուած նախքան զստեղծանելն աշխարհի՝ էր ինքն յինքեան, և այժմ ի գոյանալն էիցս է ինքն յինքեան[21], և ի կատարածի եղիցի ինքն յինքեան[22], և գոյքս ի նմա, և նա ի սուրբ իւր փառաւորեալ[23], վասն զի անտանելի է երկնի և երկրի և անսահման ընութիւն, զի ոչ տեղեաւ և ոչ սահմանաւ, և ոչ իմացմամբ պարունակի, կամ ընդ սահմանաւ անկանի: Երկրորդ, հանգչի Աստուած ի գործս իւր, ըստ այնմ, թէ՝

[1] A հաւաստէ
[2] B այսինքն ի, CE Աստուծոյ ի, D Աստուծոյ իւրոյ ի
[3] E > ուրեք
[4] B նստեալ
[5] A > ընդ
[6] A > թէ
[7] E կանգնել
[8] A տեսանեմք
[9] Aերևէր
[10] BE սրբոյն
[11] D ասես] առ իս
[12] ABDE > ամենայն
[13] B թէ այս
[14] A ուսադրեալ, E յուսադրեալք
[15] E հաստատեսցի
[16] BCE > իմ
[17] D այլ
[18] ABD հրեշտակք
[19] E > յաթոռ
[20] A սաղմոսի
[21] BCDE > և այժմ ի գոյանալն էիցս է ինքն յինքեան
[22] C > և ի կատարածի եղիցի ինքն յինքեան
[23] E > փառաւորեալ

«Հանգեաւ Աստուած յաւուրն եւթ-ներորդի ի գործս իւր, զոր սկսաւ առնել» [Ծնն. Բ. 2-3], և թէ՝ «Ետես Աստուած զամենայն, և ահա բարի են յոյժ» [Ծնն. Ա. 31], այսինքն՝ հաճոյ Աստուծոյ: Երրորդ, հանգչի Աստուած ի գործս այլոց՝ ի լրումն կամաց իւրոց՝ և այս կա՛մ առ հրեշ-տակս, կա՛մ առ մարդիկ: Առ հրեշ-տակս՝ որպէս ասէ սաղմոսերգուն Դաւիթ. «Օրհնեցէք զՏէր ամենայն զօրութիւնք նորա, պաշտօնեայք և արարողք կամաց նորա» [Սաղ. ՃԲ. 21], և դարձեալ՝ «Օրհնեալ ես, որ նստիս ի վերայ աթոռոյ փառաց արքայութեան քոյ» [Դան. Գ. 54], և թէ՝ «Որ նստցիս ի քրովբէս» [Սաղ. ՂԸ. 1; Եսայ. ԼԷ. 16], այսինքն՝ հանգչիս ի նոսա: Իսկ առ մարդիկ՝ որպէս ասէ. «Գտի[1] զ Դաւիթ որդի յԵսսեայ... որ արասցէ զամենայն զկամս իմ» [Գործ. ԺԳ. 22], և թէ՝ «Ես յո՞ հանգեայց, եթէ ոչ ի հեզս և ի խոնարհս և յայնոսիկ, որ դո-ղան ի բանից իմոց» [Եսայ. ԿԶ. 2]: Մանաւանդ թէ այնոքիկ իսկ բո-վանդակ, որ ասացաւ վասն տա-ճարի բնակութեան՝ գեղեցկապէս իմանին և վասն աթոռոյ հանգս-տեան, այլ աստ առաւել յատ-կապէս ասացեալ լինի. առաջին՝ հանգիստն բնութեան, երկրորդ՝ գործոց, երրորդն՝ կամաց: Այս յա-ղագս առաջին աթոռոյն հանգս-տեան Աստուծոյ:

Իսկ վասն երկրորդին՝ որ է աթոռ թագաւորական, ասէ մար-գարէն. «Աթոռ քո Աստուած յա-ւիտեանս յաւիտենից, գաւազան ուղղութեան գաւազան արքա-յութեան քոյ» [Սաղ. ԽԴ. 7], և հրեշտակապետն առ աստուածա-ծին կոյսն ասէ. «Տացէ նմա Տէր Աստուած[2] զաթոռն Դաւթի[3] հօր իւրոյ և թագաւորեսցէ ի վերայ տանն Յակոբայ ի յաւիտեանս ան-վախճան» [Ղուկ. Ա. 32-33]: Արդ, վասն տալոյն որդւոյ իւրոյ[4] կրկին է[5] իմացումն: Նախ՝ ըստ տնօրէ-նութեանն եղանակի, զի զոր ու-նէրն[6] բնութեամբ՝ էառ մարմնա-նալովն, ըստ այնմ, որ՝ «Զինքն նուաստացոյց և զկերպարանս ծառայի էառ,- որպէս ասէ առա-քեալ,- վասն որոյ Աստուած զնա առաւել բարձրացոյց և շնորհեանց նմա անուն[7] ի վեր քան զամենայն անուն» [Փիլ. Բ. 7-9]: Եւ մարգա-րէն ասէ՝ «Խնդրեա յինէն և տաց քեզ զհեթանոսս ի ժառանգութիւն և իշխանութիւն քեզ զամենայն ծագս երկրի[8]» [Սաղ. Բ. 8] և թէ՝ «Իշխանութիւն ետ նմա դատաս-տան առնել» [Յովհ. Ե. 27]. զայս և այլ սոյնպիսիք ասեմք ըստ մարդ-կութեանն, զի ոչ ունէր բնութիւնս և յորժամ միացաւ՝ եղև առեալն որպէս առօղն[9] նոյն՝ իշխան և տէր ամենեցուն: Եւ թէ միայն ըստ աս-տուածութեանն իմանաս՝ ոչ է ան-տեղի, ասէ աստուածաբանն, զի որպէս ունի զէութիւն ի գոյութենէ Հօր, այսպէս զիշխանութիւնն և

[1] BCDE > գտի

[2] B > Աստուած
[3] B > Դաւթի
[4] A > իւրոյ
[5] B կրկնէ] կրկին է
[6] ACE ունէին
[7] B ունել
[8] C > իշխանութիւն քեզ զամենայն ծագս երկրի
[9] B առնօղն

զթագաւորութիւնն ի տէրութենէ[1] և յիշխանութենէ Հօր: Նմանապէս[2] և զայլսն իմասիցս, որպէս թէ ոք լեզու տայցէ ճառագայթից արեգականն, և նա ասիցէ, թէ զլոյսս զայս[3] և զամենայն որպիսութիւնս իմ[4] ետ ինձ արեգակ՝ ոչ սխալէ, զի ի նմանէ ունի, այսպէս և զօրինակեալն իմասցիս: Իսկ վասն թագաւորութեանն Աստուծոյ՝ և զայս ևս կրկին ուսուցանեն Գիրք սուրբ[5]. առաջին՝ ասի թագաւորութիւն Աստուծոյ ըստ արարչութեան՝ անսկիզբն և անվախճան, ըստ այնմ՝ «Թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի Աստուած է» [Սաղ. ԽԶ. 8], և[6] երկրորդ՝ ասի թագաւորութիւն Աստուծոյ ըստ տնտեսութեան սկսեալ և անվախճան, ըստ այնմ՝ «Թագաւորեաց Աստուած ի վերայ հեթանոսաց» [Սաղ. ԽԶ. 9]: Ըստ առաջին կերպին թագաւոր է Աստուած ի վերայ ամենեցուն կամողաց[7] և ոչ կամողաց, հրէից և հեթանոսաց, արդարոց և մեղաւորաց, իսկ ըստ երկրորդին՝ թագաւոր է միայն հնազանդեցելոցն հաւատովք, որպէս ի Հինն հրէից և ի Նորս քրիստոնէից, մանաւանդ և ընտրելոցն առաւել իսկ յատուկ: Բայց յորժամ ամենայն ծունր կրկնեսցի և ամենայն լեզու խոստովան լիցի զՏեառն Աստուծոյ, յայնժամ և ըստ տնտեսութեան ասի թագաւորել Աստուծոյ ըստ բոլորիցն հնազանդութեան, որպէս ասէ առաքեալ. «Յորժամ տացէ ի ձեռս զթագաւորութիւնն Աստուծոյ և Հօր... յորժամ[8] հնազանդեսցի նմա ամենայն, յայնժամ և ինքն որդի հնազանդեսցի[9] այնմ, որ հնազանդեցոյց նմա զամենայն» [Ա. Կորն. ԺԵ. 24; 28], զի դեռևս ըստ անհնազանդութեանս[10] մեր, և գլուխն մեր վասն մեր անհնազանդ ասի: Այսքան առ[11] աթոռոյ թագաւորութեանն Աստուծոյ:

Իսկ վասն դատողական աթոռոյն ասէ մարգարէն. «Յիրաւունս և յարդարութիւն ուղղեալ է աթոռ նորա[12]» [Սաղ. ՂԶ. 2], և ի Մատթեոս[13] ասէ. «Յորժամ նստցի որդի մարդոյ յաթոռ փառաց իւրոց, և ժողովեսցին առաջի նորա[14] ամենայն ազգ[15]» [Մատ. ԻԵ. 31-32]: Արդ՝ յասացեալ վկայութեանցս երիս իրս առաջի կայ մեզ հարցաքննել. նախ՝ վասն իրաց և իրաւանց դատաստանին, երկրորդ՝ վասն արդար ուղղութեան նորին, երրորդ՝ վասն փառաց դատաւորին: Վասն առաջնոյն գիտելի է, զի իրողութիւնք դատաստանին բաղկանայ ի չորից հարկաւոր իմն պատճառաց. առաջինն է դատաւորական իշխանութիւնն, երկրորդ՝ դատախազքն և դատեալքն[16], երրորդ՝ տեղի դատաստանին, չոր-

[1] A տիրութենէ
[2] D նոյնպէս
[3] A > զայս
[4] A > իմ
[5] A սուրբք
[6] A > Աստուած է և
[7] B կամեցողաց
[8] BCE յայնժամ
[9] D > նմա ամենայն, յայնժամ և ինքն որդի հնազանդեսցի
[10] B հնազանդութեանս
[11] B > առ
[12] B > է աթոռ նորա
[13] D մարդ
[14] A > նորա
[15] BD ազգք
[16] E դատեղքն

րորդ՝ իրաւունք դատաստանին: Եւ երկոքին սոքա[1] միմեամբք կոչին, վասն զի դատաստանն յիրէ և ի տեղւոջէ բաղկանայ. յիրէ՝ որ է դատ, այսինքն՝ քննին[2], և ի տեղւոյ՝ որ է աստան[3], որպէս և տեղի բնակութեան ազգաց անուանին՝ Հայաստան, Ասորեստան: Եւ յիրաւի խնդրին այսոքիկ, վասն զի ի դատաւորէ քննող է և ի դատախազաց՝ ի տեղւոջ ուրեք յօրինին իրաւունք դատաստանին: Այսոքիկ այժմ յայտնի եղելոյ՝ գիտելի է, զի ի համաշխարհական դատաստանին՝ է՛ դատաւոր Տէր մեր Յիսուս Քրիստոս, ըստ այնմ՝ «Ոչ եթէ Հայր դատի[4] զոք, այլ զամենայն դատաստան ետ Որդւոյ իւրոյ» [Յովհ. Ե. 22]: Իսկ արդ՝ դատէ Քրիստոս ըստ աստուածային իշխանութեանն[5], որպէս բնութեամբ դատաւոր, և դատեն առաքեալք և սուրբք ըստ պարգևի աթոռակցութեանն՝ իբր տեղեկագոյնք օրինաց Աստուծոյ: Այլև դատեսցեն հրեշտակք ըստ հաւաստի վկայութեան՝ որպէս տեսօղք գործոց նոցին: Այս յաղագս դատաւորաց: Իսկ վասն դատախազաց գիտելի է, զի ի ճանապարհ[6] աստի կենաց երկու են դատախազք, այսինքն՝ ոսոխք. առաջին՝ հոգին և մարմինն, զի ցանկան հակառակ միմեանց՝ ըստ այրւոյ առակին առ[7] անիրաւ դատաւորին[8] [Ղուկ. ԺԸ. 1-8], և երկրորդ՝ միտքն հոգւոյն և մարմնոյն, զորմէ ասէ ի Մատթեոս՝ «Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղագոյն, մինչդեռ իցես ընդ նմա ի ճանապարհի» [Մատ. Ե. 25]: Իսկ ի հանդերձեալն դատախազ և[9] ոսոխ է սոյն խիղճ[10] մտաց, զորմէ ասէ[11] Դանիէլ՝ դպրութիւնք բացան [Դան. Է. 10], և ապա հրեշտակք, ըստ այնմ, որ ասէ Մատթեոս. «Առաքեսցէ որդի մարդոյ զհրեշտակս իւր և ժողովեսցեն[12] յարքայութենէ նորա[13] զամենայն գայթակղութիւնս՝ և զայնոսիկ, որ գործեն զանօրէնութիւն: Եւ արկցեն զնոսա ի հնոց հրոյն բորբոքելոյ» [Մատ. ԺԳ. 41-42], և ապա սուրբք ամենայն, որպէս ասէ յառակ.«Յայնժամ կացցեն[14] արդարքն բազում համարձակութեամբ հանդէպ նեղչաց իւրոց» [Սող. Ե. 1], և ապա երկինք և երկիր՝ ըստ Յոբայ. «Յայտնեսցեն երկինք զանօրէնութիւնս նորա, յարիցէ ի վերայ նորա երկիր» [Յոբ. Ի. 27], և ապա դևք՝ որպէս ասէ Սիրաք. «Են հոգիք ստեղծեալք ի վրէժխնդրութիւն և ի ժամ կատարածի հեղցեն զսրտմտութիւն» [Սիրաք. ԼԹ. 34]: Իսկ վասն դատելոցն գիտելի է, զի ամենայն մարդիկ, այսինքն՝ արդարք և մեղաւորք, դատեսցին դատաստանաւ հատուցման, որպէս ասէ առաքեալն. «Մեզ ամենեցուն յանդիման լինել կայ առաջի ատենին Քրիստոսի, զի ընկալցի իւրա-

[1] A > սոքա
[2] ABCD քնին
[3] B դաստան
[4] E դատէ
[5] B շնորհաց
[6] A ճանապարհք
[7] D > առ
[8] D դատաւոր
[9] A առաջին] դատախազ և
[10] A խեղճ
[11] D > ասէ
[12] A ժողովեսցէ
[13] A > նորա
[14] E կայցեն

քանչիւր զոր ինչ գործեաց՝ եթէ բարի և եթէ չար» [Բ. Կորն. Ե. 10], և դարձեալ՝ «Դատեսցէ զկենդանիս և զմեռեալս» [Բ. Տիմ. Դ. 1]: Այլ ամենեքեան ոչ դատին դատաստանաւ քննութեան, զի ամենևին չար և անհաւատքն՝ ոչ ունին դատաստան ըստ քննութեան, զի ոչ ինչ ունին բարիս՝ որպէս ասէ մարգարէն. «Ոչ յարիցեն ամբարիշտք ի դատաստան, և ոչ մեղաւորք ի խորհուրդս արդարոց, զի ճանապարհք ամբարշտաց կորիցեն» [Սաղ. Ա. 5-6]: Նոյնպէս և բուն[1] արդարքն թռչին[2] «...ամպովք ընդառաջ Տեառն յօդս. և այնպէս յամենայն ժամ ընդ Տեառն լինին» [Ա. Թես. Դ. 16]: Իսկ դատաստան ըստ քննութեան նոցա է, որք ունին զհաւատս առանց գործոց կամ ի բարեգործութիւնս խառնեալ են մեղս ինչ ներելիս: Այս առ դատախազքն և դատեալքն: Իսկ տեղիք դատաստանին՝ ո՛չ է յերկինս, ուր ոչ կարիցեն ելանել[3] մեղաւորք, և ո՛չ է ի դժոխս, ուր ոչ իջանեն արդարք: Այլ է ի միջասահման տեղւոջ աշխարհի, որ է երկիրս և նոյն ինքն ի ձորն Յովսափաթու, որպէս ասէ Յովէլ. «Զարթիցեն և ելցեն ամենայն ազգ ի ձորն Յովսափաթու[4], զի անդ նստայց դատել զամենայն ազգս» [Յովէլ. Գ. 12]: Եւ աստ[5] վասն բազում պատճառի: Առաջին, զի պարտ է, որ տեղիք դատաստանին հասարակ վայր լինի[6], իսկ Երուսաղէմ և շրջակայք նորա է հասարակ և ի մէջ աշխարհի: Երկրորդ, տեղիք[7] դատաստանին պարտ է յայտնի լինել, այլ արդ՝ տեղին այն է յոյժ անուանի, զի փրկութիւնն մեր անդ կատարեցաւ: Երրորդ, զի յարմար է տեղին այնմ[8] իրի, որ անդ կատարի, այսինքն՝ գործոյ ողորմութեան առ[9] արդարսն և գործոյ[10] դատաստանի առ մեղաւորսն[11], զի լեառն ձիթենեաց, որ է մերձ ի ձորն այն՝ նշանակէ[12] զողորմութիւն, և Յովսափաթն թարգմանի դատաստան՝ որ նշանակէ զարդարութիւն: Այս առ տեղի[13] դատաստանին:

Իսկ վասն իրաւանց դատաստանին գիտելի է, զի երկու վճիռ հատցին ի դատաստանին. մին՝ վասն բարեացն և միւսն՝ ընդդէմ չարեացն: Վճիռն, որ վասն[14] բարեացն է[15]՝ պարունակէ յինքն եւթն մասունս. առաջին՝ կոչումն սիրական, ասէ՝ «եկայք», երկրորդ՝ աստուածային օրհնութիւնն, ասէ՝ «օրհնեալք», երրորդ՝ սէրն հայրական, ասէ՝ «Հօր իմոյ», չորրորդ՝ հատուցումն բարեաց, ասէ՝ «ժառանգեցէք», հինգերորդ՝ զմեծութիւն թագաւորութեան, ասէ՝ «զարքայութիւնն», վեցերորդ՝ զնախապատրաստութիւն փառացն, ասէ՝ «զոր պատրաստեալ

[1] B բոյն
[2] B թողին
[3] B > ելանել
[4] E > որպէս ասէ Յովէլ զարթիցեն և ելցեն ամենայն ազգ ի ձորն Յովսափաթու
[5] A արդ
[6] B լիցի
[7] A զի
[8] B այն
[9] B > առ
[10] Dգործոց
[11] Aմ եղապարտսն
[12] A որ նշանակէ
[13] E տեղն
[14] B ընդ
[15] B > է

է ձեզ», եւթներորդ՝ զյաւիտենականութիւնն, որ ասէ՝ «ի սկզբանէ աշխարհի» [Մատ. Իե. 34][1]: Իսկ վճիռն, որ ընդդէմ չարեացն, ունի մասունս վեց. առաջին՝ զհեռացումն յԱստուծոյ, ասէ՝ «երթայք յինէն», երկրորդ՝ զանէծս, ասէ՝ «անիծեալք», երրորդ՝ զբանտարգելն լինել, զոր ցուցանէ նախդիրն՝ «ի», չորրորդ՝ զդառնութիւն տանջանացն, ասէ՝ «հուր», հինգերորդ՝ զյուսահատութիւն ազատութեան, որ ասէ՝ «յաւիտենական», վեցերորդ՝ զընկերակցութիւն դիւաց, որ ասէ՝ «պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա» [Մատ. Իե. 41][2]: Այսքան առ[3] առաջին խնդիրն՝ վասն իրաց և իրաւանց դատաստանին:

Իսկ վասն երկրորդ գլխոյն, այսինքն՝ ուղիղ դատաստանին. և զի արդար են, ասէ[4], դատաստանն Աստուծոյ, յայտ է ի վկայութեանց Սուրբ Գրոց, որպէս ասէ մարգարէն Դաւիթ՝ «Արդար է Տէր՝ զարդարութիւն սիրէ, և ուղղութիւն տեսանեն երեսք նորա» [Սաղ. Ժ. 8], և դարձեալ[5] «Հաւատարիմ է Տէր յամենայն ի բանս իւր», այսինքն՝ ճշմարիտ, «և արդար է յամենայն ի գործս իւր» [Սաղ. ՃԽԴ. 13], և թէ՝ «Գործք ձեռաց նորա արդարութիւն և իրաւունք են» [Սաղ. ՃԺ. 7], և Մովսէս ասէ՝ «Աստուած հաւատարիմ է, և ոչ գոյ[6] ի նմա անիրաւութիւն. արդար և ճշմարիտ է Տէր» [Բ. Օրէնք. ԼԲ. 4], և ինքն Տէրն[7] ասէ՝ «Հայր արդար՝ և աշխարհ զքեզ ոչ ծանեաւ» [Յովհ. ԺԷ. 25], և թէ՝ «Ես եմ ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք» [Յովհ. ԺԴ. 6], և թէ՝ «Հոգին ճշմարտութեան, որ ի Հօրէ ելանէ[8]» [Յովհ. ԺԵ. 26]: Ապա ուրեմն, ճշմարիտ է դատաստան նորա:

Եւ դարձեալ բացայայտեսցուք օրինակաւ, զի դատաւորք երկրի թիւրեն զդատաստան վասն չորից պատճառաց. առաջին՝ վասն տգիտութեան, երկրորդ՝ վասն երկիւղի, երրորդ[9] վասն ակնառութեան, չորրորդ՝ վասն կաշառաց: Արդ, ասացեալ պատճառս թիւրութեան արտաքոյ է ամենևիմբ Աստուծոյ. ընդդէմ առաջնոյն ասէ առաքեալ ի Կողոսացիսն[10]. «Ի նմա են ծածկեալ ամենայն գանձք իմաստութեան և գիտութեան» [Կող. Բ. 3], ընդդէմ երկրորդին ասէ մարգարէն. «Ո հայի յերկիր, և տայ դողալ սմա» [Սաղ. ՃԳ. 32], ընդդէմ երրորդին[11] ասէ առաքեալ առ Գաղատացիս[12]. «Աստուած ակն մարդոյ[13] ոչ առնու» [Գաղ. Բ. 6], ընդդէմ չորրորդին ասէ մարգարէն. «Կաշառ ի վե-

[1] Յոթ կետով տրված է Մատթեոսի Ավետարանի հետևյալ հատվածը. «Եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զարքայութիւնն, զոր պատրաստեալ է ձեզ ի սկզբանէ աշխարհի» [Մատ. Իե. 34]:

[2] Վեց կետով տրված է Մատթեոսի Ավետարանի հետևյալ հատվածը. «Երթայք յինէն անիծեալք ի հուր յաւիտենական պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա» [Մատ. Իե. 41]:

[3] BCDE > առ

[4] A է] են ասէ

[5] A թէ

[6] D է

[7] B > Տէրն

[8] D ելանել

[9] D > երրորդ

[10] A > ի Կողոսացիսն

[11] B > երրորդին

[12] AD Գաղատացւոց

[13] CD մարդու

բայ իրաւանց նա ոչ առնու» [Սաղ. ԺԴ. 5], և թէ՝ «Իմ[1] է արծաթ, և իմ[2] է ոսկի» [Անգ. Բ. 9] և այլն:

Իսկ վասն փառաց դատաւորին, որ ասէ. «Նստցի յաթոռ փառաց իւրոց» [Մատ. ԻԵ. 31]: Գիտելի է, զի որպէս մեծութիւնն Աստուծոյ անչափ է և փառքն անհաս՝ ըստ իմաստնոյն Սողոմոնի, որ ասէ՝ «Փառքն Աստուծոյ ծածկեն զբանս» [Առակ. ԻԵ. 2], բայց որ ինչ ի մարդկային սովորութեանցս փառաւոր երևի՝ զնոյն և Աստուծոյ փառս վերակոչեմք: Իսկ անդանօր ի գալստեանն[3] Քրիստոսի[4] է առաջին փառք, զի փառաւոր երևեսցի սիրելեաց իւրոց, յայտնեալ զաստուածութեանն փառս[5] միաւորեալ ի մարմնի, որպէս ասէ առաքեալ Փիլիպեցիս[6]. «Փրկչին ակն ունիմք գալստեանն, որ նորոգեսցէ[7] զմարմին խոնարհութեան մերոյ, ըստ նմանութեան մարմնոյ փառաց իւրոց» [Փիլիպ. Գ. 20-21]: Երկրորդ, փառքն է, զի և՛ Հայր, և՛ Հոգին իւր ընդ նմա ի դատաստան գայցեն՝ ըստ տեսլեանն[8] Դանիէլի. «Աթոռք անկանէին,- ասէ-, և[9] հինաւուրցն նստաւ» [Դան. Է. 9], որ է Աստուած Հայր, և վասն Հոգւոյն Սրբոյ ասէ մարգարէն[10] Դաւիթ[11]. «Առաքես զոգի քո և ստանաս զնոսա, և նորոգես զերեսս երկրի[12]» [Սաղ. ՃԳ. 30]: Երրորդ, փառքն է բազմութիւնք երկնաւոր[13] զօրացն իջեալ ընդ նմա[14], որպէս ասէ Դանիէլ՝ «Հազարք հազարաց գան առաջի նորա և բիւրք բիւրուց պաշտեն զնա» [Դան. Է. 10], և Մատթեոս ասէ[15] ՝ «Զօրութիւնք երկնից շարժեսցին» [Մատ. ԻԴ. 29]: Չորրորդ, փառքն է հնազանդութիւնն բոլոր արարածոցս[16], ըստ այնմ[17] նմա «Կրկնեսցի ամենայն ծունր» [Հռոմ. ԺԴ. 11] և «Ամենայն լեզու խոստովան լիցի եթէ Տէր է Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր» [Փիլիպ. Բ. 11]: Հինգերորդ, զի դիցէ զթշնամիս իւր պատուանդան ոտից իւրոց[18], այսինքն՝ կորուսցէ զնեռն և զսատանայ և զամենայն դայթակղութիւն մարդկան, զմեղքն և զմահ, ըստ այնմ[19] «Ո՞ւր է մահ յաղթութիւն քո. ո՞ւր է դժոխք, խայթոց քոց[20]» [Ա. Կորն. ԺԵ. 55]: Վեցերորդ, զի ահագին փառօք[21] գայցէ, այսինքն՝ փողով մեծաւ և ամպախաղաց որոտմամբ և շարժմամբ և հրոյ բորբոքելոյ՝ որպէս ի Սինայ լերինն [Ելք. ԺԹ. 16-18]: Եւթնե-

---

1 BC մի
2 BC մի
3 B գալուստն
4 A > Քրիստոսի
5 CE փառք, BD փառ
6 A Փիլիպպոս
7 A նորոգեաց
8 A > տեսլեանն
9 A > աթոռք անկանէին ասէ և
10 A > որ է Աստուած Հայր, և վասն Հոգւոյն Սրբոյ ասէ մարգարէն
11 A և Դաւիթ ասէ] Դաւիթ
12 A > զերեսս երկրի
13 E երկնաւորաց
14 A բազմութեան հրեշտակացն] փառքն է բազմութիւնք երկնաւոր զօրացն իջեալ ընդ նմա
15 A > ասէ
16 A > փառքն է հնազանդութիւնն բոլոր արարածոցս
17 A զի] ըստ այնմ
18 B նորա
19 D ընդ նմա] ըստ այնմ
20 D քո
21 B փառք

րորդ, է[1], զի ահագնակերպ երևի մեղաւորաց[2], մինչ զի «Ասիցեն լերանց, թէ անկերուք ի վերայ մեր և բլրոց՝ թէ ծածկեցէք զմեզ յերեսաց բարկութենէ Գառին, որ նստի յաթոռ» [Յայտ. Զ. 16],- որպէս ասէ տեսիլն Յովհաննու: Ուրթերորդ, զի ահագին է անդառնալի վճռովն ըստ Յոբայ. «Մի անգամ խօսեսցի Աստուած՝ և զնոյն ոչ երկրորդէ» [Յոբ. ԼԹ. 35], այսինքն՝ «Երթայք յինէն[3] անիծեալք ի հուրն յաւիտենական[4]» [Մատ. ԻԵ. 41]: Իններորդ, փառք է դատաստան առնելն[5], որպէս ասէ Դանիել. «Աթոռք անկանէին և հինաւուրցն նստաւ. և որդի մարդոյ ընդ ամպս երկնից գայր. և նմա տուաւ իշխանութիւն և դատաստան առնել» [Դան. Է. 9-14], և ինքն իսկ ասէր[6]. «Ոչ եթէ Հայր դատէ զոք, այլ զամենայն դատաստան ետ Որդւոյ իւրում» [Յովհ. Ե. 22]: Տասներորդ, զի պսակէ զսուրբս իւր և փառաւորի[77] ի մէջ նոցա, որպէս[8] ասէ առաքեալ Թեսաղոնիկեցւոցն. «Յորժամ գայցէ փառաւոր լինել ի մէջ սրբոց իւրոց» [Ա. Թես. Ա. 10], և ինքն Տէր ասէր առ[9] Հայր[10]. «Կամիմ, զի ուր եսն իցեմ, և սոքա ընդ իս[11] իցեն, զի տեսանիցեն զփառս իմ» [Յովհ. ԺԷ. 24], որում արժանաւորք եղիցուք հասնիլ[12] ի մասն վիճակի սրբոցն ի լոյս, որով և ըստ որում Հօր միանգամայն և Հոգւոյն Սրբոյ վայելէ իշխանութիւն և պատիւ[13]: Աստանօր[14] բանս իրաւապէս առցէ զկայ[15]: Արդ, այսոքիկ բաւականասցին առ ի մէնջ ի տեսութիւն բանիս[16]: Եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս: Ամէն[17]:

---

[1] A > է
[2] B ի լերինն] մեղաւորաց
[3] ABCE > յինէն
[4] A > ի հուրն յաւիտենական
[5] E > առնելն
[6] A ըստ այնմ] և ինքն իսկ ասէր
[7] A փառաւոր լինել] փառաւորի
[8] D > որպէս
[9] D > առ
[10] A և ըստ Տեառն] և ինքն Տէր ասէր առ Հայր
[11] B > իս
[12] AD հասանել
[13] A > և պատիւ
[14] C այժմ աստանոր
[15] BE > Աստանօր բանս իրաւապէս առցէ զկայ
[16] BCDE > Արդ, այսոքիկ բաւականասցին առ ի մէնջ ի տեսութիւն բանիս
[17] A > Եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս: Ամէն

ՄԵԾ ՐԱԲՈՒՆԱՊԵՏԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՐՈՏՆԵՑԻՈՅ ԱՍԱՑԵԱԼ Ի ԲԱՆ ԱՌԱՔԵԼՈՅՆ ՊՕՂՈՍԻ[1], ՈՐ ԱՍԷ. «ՄԱՐԴՈՎ ԵՂԵՒ ՄԱՀ ԵՎ ՄԱՐԴՈՎ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԵՌԵԼՈՅ[2]» [Ա. ԿՈՐՆ. ԺԵ. 21]

Բնագիրը կազմված է հետևյալ վեց ձեռագրով.
A - Ձեռ. 1337, 319ա-330ա, B - Ձեռ. 1850, 164ա-174ա, C - Ձեռ. 2196, 262ա-276բ,
D - Ձեռ. 3979, 46բ-53բ, E - Ձեռ. 9801, 128ա-138ա, F - Ձեռ. 6573, 187ա-198բ

Ասէ ոմն ի սրբազանիցն դասուց, թէ անկարօտն և միայն հզօրն և ընութեամբ բարին Աստուած ոչ կամեցաւ միայն վայելել յիւրական ճոխութիւնն[3], այլ յաղթահարեալ ի մարդասէր կամաց[4] իւրոց, արար զմարդն ի պատկեր իւրոյ և բարերարութենէն առնելով զնա հաղորդս անպատում պարգևացն, զի ոչ յարաժամ նայելով յըսկզբնատիպն Աստուած արտահանեալ եղև յանմահական վայրացն օձապատիր խաբմամբ և յանձնիշխանութեան սակս, որով զվճիռ մահու ընկալաւ, վասն որոյ ասէ առաքեալս. «Մարդով եղև մահ և մարդով՝ յարութիւն[5]» [Ա. Կորն. ԺԵ. 21]:

Իսկ մեք աստանօր պարտիմք նախ տեսանել, թէ զի՞նչ է[6] մարդ և ուստի՞ ունի զբաղկացութիւն իւր, և ապա թէ՝ որպէ՞ս[7] եղև մարդով մահ:

Բե՛ր այսուհետև տեսցուք, թէ զի՞նչ է մարդ: Մարդ է կենդանի՝ բանաւոր, մահկանացու, մտաց և հանճարոյ ընդունակ: Իսկ թէ ուստի բաղկանայ մարդս՝ ի չորս գոյեղական բառից. ի կենդանւոյն ասեմ և ի բանաւորէն, ի մահկանացուէն և[8] ի մտաց և հանճարոյ ընդունակէն: Դարձեալ այլ իմն գլխաւորօրէն բաժանմամբ ասի՝ գոյանալ մարդ ի հոգւոյ իմանալւոյ և ի մարմնոյ զգալւոյ[9]:

Դարձեալ տեսցուք աստանօր, թէ զի՞նչ է մարմին և ուստի՞ բաղկանայ: Մարմին է գործարան հոգւոյ: Եւ դարձեալ՝ մարմին է ընդարմացուցիչ հոգւոյ[10]: Իսկ թէ ուստի՞ բաղկանայ մարմինն, այսինքն յերկու[11] գոյեղական տարերց՝ ի նիւթոյ ասեմ և ի տեսակէ:

Բայց այժմ պարտ վարկանիմ սակաւ ինչ քննութիւն առնել յաղագս ուսումնասէր[12] մտաց ձերոց: Նախերգաբար և մեկնողօրէն իմն քննութեամբ նախ և առաջին տեսանել, թէ զի՞նչ է հոգի[13] և ի քանի՞ս բաժանի: Երկրորդ, թէ որպէ՞ս

---

[1] BCDEF > Պօղոսի
[2] AC > մեռելոց
[3] BCDF ճոխութեանն
[4] E ի կամաց
[5] D եղև յարութիւն
[6] E > է
[7] B ոչ
[8] D > և
[9] AB և զգալւոյ
[10] AC > Եւ դարձեալ՝ մարմին է ընդարմացուցիչ հոգւոյ
[11] D յերկուց
[12] F ուսումնաւոր
[13] D քննութեամբ

ի[1] հոգւոյ իմանալւոյ և ի մարմնոյ զգալւոյ բաղկացեալ եղև մարդ:

Արդ, եկեսցուք առաջին գլուխն և ասասցուք՝ թէ զինչ է հոգի կամ թէ քանի տեսակ է սորա:

Եւ գիտելի է, զի հոգի է էութիւն անմարմին՝ պատճառ շարժութեան մարդոյ. այս թէ զի՛նչ է հոգի:

Բե՛ր տեսցուք, թէ քանի են տեսակք սորա[2]: Գիտել պարտ է, զի երեք են տեսակք հոգւոյ՝ տնկականն, զգայականն[3] և բանականն: Իսկ տնկական հոգին է, որ և բնաւորեալ է[4] լինել[5] ի տունկս, որ և շարժէ զնոսա յաճումն տեսակին և ի ծնունդս պտղոց: Իսկ զգայական հոգին է, որ և բնաւորեալ է լինել յանասունս, բայց ոչ առ անձինն, վասն զի անհնարին է նմա առանց տնկական հոգւոյ գոյանալ յանասուն կենդանիս, քանզի նախ պարտ է[6] ըստ տնկական[7] հոգւոյ առնուլ զաճումն և ապա ըստ զգայականին՝ տեսականալ: Որպէս ի մարդս է տեսանել, քանզի նախ՝ տնկականաւն զարդարի յարգանդ ի մօրն, և ապա ըստ զգայականին տեսականայ հոգւոյ[8] և ի կատարման[9] զգայականին[10], ապա գոյանայ բանականն: Յաղագս որոյ արարածապատումն Մովսէս յսկիզբն լինելութեան արարածոցս նա՛խ ասէ զլինելութիւն տնկոց յերրորդումն աւուր, և ապա երկրորդաբար ասէ զլինելութիւն անասնոցն ի հինգերորդումն աւուրն[11], և ապա ի վեցերորդումն ասէ երրորդաբար զլինելութիւն մարդոյն: Զոր թէ և ոմանք զայս կարգ ստեղծման ասեն լեալ վասն պիտոյիցն գոյութեանս. իբր թէ բոյսք վասն անասնոց եղեն, և անասունք՝ վասն մարդոյ[12]: Բայց ես ասեմ՝ լեալ զայս կարգ առ ի ցուցանել զկարգաւորութիւն երից տեսակաց հոգւոց և զհարկաւորութիւն ո՛չ գոյանալոյ զգայականին առանց տնկականին, և ո՛չ տնկականն առանց զգայականին, նաև՝ ո՛չ երկոցունցն առանց բանականին:

Այս վասն առաջին գլխոյն, թէ զինչ է հոգի և կամ թէ քանի են տեսակք սորա: Եկեսցուք յերկրորդ գլուխն և ասասցուք, թէ որպէս ի[13] հոգւոյ իմանալւոյ և ի մարմնոյ զգալւոյ բաղկացեալ լինի մարդ:

Եւ արդ, գիտել պարտ է, զի թէպէտ Պղատոն զհոգին միայն ասէ մարդ, իսկ զմարմինն գործի և օտար ի մարդոյն, բայց ո՛չ է ճշմարիտ, վասն զի ամենայն իմաստասէրքն ոչ ասեն լեալ առանձին զհոգին առանց մարմնոյն մարդ[14] և կամ[15] զմարմինն առանց հոգոյն մարդ, այլ յերկուցն միաւորութե-

[1] ABCD որպիսի] որպէս ի
[2] AC նորա
[3] CDF և զգայականն
[4] C >է
[5] AC > լինել
[6] AC պարտ է նախ] նախ պարտ է
[7] E տնկականին
[8] BD հոգւոյ տեսականայ] տեսականայ հոգւոյ
[9] F կատարումն
[10] D > հոգւոյ տեսականայ, և ի կատարման զգայականին

[11] ABCDF > և ապա երկրորդաբար ասէ զլինելութիւն անասնոցն ի հինգերորդումն աւուրն
[12] E մարդկան
[13] A որպիսի] որպէս ի
[14] B > մարդ
[15] D > կամ

նէ[1] ասի գոյանալ մարդ: Իսկ հոգի և մարմին օտար գոլով ի միմեանց, վասն զի էութիւն հոգւոյ բանականի է՛ իմանալի, անմահ և անմարմին, իսկ մարմինն է զգալի և թանձր, վասն որոյ ոչ է հնար սոցա երկոցունցս միաւորութիւն: Սակս որոյ արարիչն սոցա Աստուած կարգեաց զանասնական շունչն ի միջի սոցա, որ ունի երկու զօրութիւն՝ անօսրութիւն և թանձրութիւն, որպեսզի շաղկապեսցէ երկու ծայրիւն ի մի էութիւն զհոգի և զմարմինն, քանզի շունչն անօսրութեամբն զհոգին է ըմբռնեալ և թանձրութեամբն՝ զմարմինն: Եւ այսպես երկու հակառակ ծայրիւքն զերկու հակառակ բնութիւնսն անլուծանելի և անքակ պահէ մինչև ի կէտ ժամադրութեան կապողին և արձակողին և վերստին անլոյծ[2] կապողին[3] զսոսա՝ մեծին Աստուծոյ:

Այս յաղագս երկրորդ գլխոյն՝ թէ որպէս ի[4] հոգւոյ իմանալւոյ և ի մարմնոյ զգալւոյ բաղկացեալ լինի մարդ: Բե՛ր այժմ տեսցուք, թէ զի՞նչ է մահ և ի քանի՞ս բաժանի:

Եւ գիտելի է, զի մահն է բաժանումն հոգւոյ ի մարմնոյ. այս է մահն[5]: Եւ է սա այսպիսի իմն օրինակաւ. զի հոգին ի մարմինն միանայ[6] անասնական շնչովն, իսկ ապա ուրեմն, յորժամ անասնական շունչն բաժանի ի մարմնոյն՝ նա կոչի մահ: Եւ մահս այս բաժանի յերկու՝ ի հոգևոր և ի մարմնաւոր[7]: Հոգևոր, որպէս թէ բարէկենդանութեամբ մարմնոյն յոռէպէս գոլով հոգւոյն ածէ մահ, որպէս ասէ առաքեալն[8], թէ՝ «Որքան արտաքին մարդս մեր զօրանայ, այնքան ներքին մարդս մեր[9] տկարանայ» [Բ. Կորն. Դ. 16]: Իսկ մարմնաւոր մահն բաժանի յերկուս: Նախ, որ հոգովն բարի լինի՝ զմարմինն մահացուցանէ ի ձեռն առաքինութեան[10] գործոյ, որպէս ասէ սոյն առաքեալ, թէ՝ «Որքան ներքին մարդս մեր զօրանայ[11], այնքան արտաքին մարդս մեր տկարանայ»: Յաղագս մահու[12] դարձեալ, մահ ասի մարմնոյն՝ անջատումն հոգւոյն ի մարմնոյն: Իսկ այս մարմնաւոր մահս բաժանի ի չորս առաջս. նախ՝ բնական, երկրորդ՝ պատահական, երրորդ՝ անձնիշխանական[13], չորրորդ՝ նախախնամողական: Բնական մահն է, որպէս[14] յորժամ ծերանամք՝ մեռանիմք, որպէս նախահարքն[15] առաջին՝ Ադամ, Սէթ, Ենովս, Մաթուսաղայ և այլ[16] բազումք[17] սուրբք և ընտրեալ[18] նախահարքն[19], զոր վկայէ Աստուածաշունչ Գիրն, թէ՝ «Ալևորեալ և լի աւուրբք մեռան և յաւելան առ

[1] AC միաւորութեան
[2] D անլուծ
[3] F > կապողին
[4] A որպիսի] որպես ի
[5] E սահման սորա] մահն
[6] A միայն
[7] AC մարմնաւոր աշխարհ
[8] AC առաքեալն ասէ] ասէ առաքեալն
[9] AC > զօրանայ այնքան ներքին մարդս մեր
[10] D առաքինասէր
[11] AC տկարանայ
[12] BDEF > յաղագս մահու
[13] BDEF յանձնառական
[14] D > որպես
[15] D նախահայրքն
[16] F այլք
[17] F բազումք
[18] BF ընտրեալք
[19] D նախահայրքն

հարս իւրեանց» [Ծնն. Իե. 8]: Երկրորդ, մահն[1] պատահական, և այս լինի ի բազում պատճառաց, այսինքն՝ ի գազանաց, յաւազակաց, ի գետոց, յագահութենէ[2], ի վատախառնութենէ[3] տարերց[4] և յայլ բազում պատճառաց, որ պատահին մարդկան յանզգուշութեան, զոր ոչ է մահս այս յԱստուծոյ, որպէս վկայէ Տէրն Աւետարանին ասելով, թէ՝ «Որպէս զորոգայթ հասանիցէ[5] ի վերայ ամենեցուն» [Ղուկ. ԻԱ. 35]: Զոր չէ հնար յայս պատահական մահուս զերծանիլ[6], բայց միայն պահօք և աղօթիւք[7] ըստ տիրական հրամանին, որ ասէ, թէ[8] «Այս ազգ ոչ իւիք ելանէ, եթէ ոչ պահօք և աղօթիւք» [Մատ. ԺԷ. 20]: Երրորդն է անձնիշխանական մահն[9], և այս բաժանի յերկուս: Նախ այն, որ լինի չար ինքեանց[10], որպէս Ակիտոփէլայն[11] և Յուդային և այլոց բազմաց այնպիսեաց, իսկ երկրորդ մահն դարձեալ անձնիշխանական է[12] և է բարի ինքեանց[13], որպէս սուրբ վկայիցն, մարտիրոսաց, առաքելոց, մարգարէից և այլ[14] սրբոց, որք միացան յանապական սէրն Աստուծոյ և մարտիրոսական մահուամբ ելին յաշխարհէս: Իսկ չորրորդ[15] մահն՝ որ է նախախնամական, և այս ևս բաժանի յերկուս՝ յընդհանուր և մասնաւոր: Ընդհանուր մահ, որպէս առ Նոյիւ, քանզի ետես Աստուած, զի ապականեաց ամենայն մարդ զբնական[16] ճանապարհս իւր ի վերայ երկրի, սակս որոյ բարկացաւ Աստուած և էած զջուր ջրհեղեղին[17] ի վերայ երկրի և կորոյս զամենեսեան զգործող և զգործունեայս չարին՝ հանդերձ ամենայն չարութեամբն իւրեանց: Իսկ մասնաւոր մահ՝ որպէս քաղաքի, գեղի և միոյ առն. քաղաքի՝ որպէս սոդոմայեցւոցն և գոմորացւոց[18], գեղի՝ որպէս բազում անգամ ի ձեռն շարժման բառնայ զմի գեղ վասն արատօրէն[19] խառնակութեանց, իսկ միոյ առն, որպէս բազում անգամ տեսանէ Աստուած զծնօղս յանառակ և ի չար գործս, բառնայ Աստուած զարդարև[20] զառաքինի[21] մանկունս նոցա վասն երկու պատճառի՝ նախ, զի առաւել մորմոքեսցին աղիք ծնօղացն ի վերայ ծնելոց[22] զաւակացն, երկրորդ, զի զգաստացեալ եկեսցեն յուղղութիւն: Դարձեալ, թէ տեսանէ Աստուած զմարդիկ բազում ժամանակս կացեալ յառաքինութիւն և ի սրբութեան գործս՝ իմանալով զառաջիկայ[23] կեանս

[1] BCDEF երկրորդն] երկրորդ մահն
[2] AB յագահութեան
[3] AB վատախառնութեան
[4] A տարերաց
[5] F հասանիցի
[6] B զերծանին
[7] B աղօթք
[8] D > թէ
[9] A երրորդ մահն է անձնիշխանականն] երրորդն է անձնիշխանական մահն
[10] E չարինք իւրեանց] չար ինքեանց
[11] E Ակիտոփելին
[12] BDE > է
[13] F > դարձեալ անձնիշխանական է և է բարի ինքեանց
[14] F այլոց
[15] AC երրորդ
[16] D զբանական
[17] AC զջրհեղեղ] զջուր ջրհեղեղին
[18] AC > գեղի և միոյ առն, քաղաքի՝ որպէս սոդոմայեցւոցն և գոմորացւոց
[19] BCDEF արտօրէն
[20] F զարդար
[21] AC զառաքին, E զառաքի
[22] D ծնեցելաց
[23] A զառաջակա

նոցա, զի հանդերձեալ են կասիլ յառաքինութեանցն զոր ունին և անկանիլ ի մեղս, ածէ Աստուած մահ և մահուամբ հատանէ զնոսա աստեացս[1], զի մի զայնչափ[2] ջան և զգործ առաքինութեան ի սուղ ինչ ժամանակս կորուսցեն ի մեղս: Եւ կամ թէ հարկանել կամի Աստուած զաշխարհս՝ նախ բառնայ զարդար և զառաքինի[3] այր, որպէս ի հնումն, յորժամ պատուհասելոց էր զԻսրայէլ՝ նախ եբարձ զբարէպաշտն Յովսիայ թագաւորն, զի մի կրեսցէ կամ տեսցէ զնոցա[4] աղէտ տարակուսանացն: Լինի և յայլ բազում պատճառաց մահ՝ ի նախախնամութենէն և ի շնորհացն Աստուծոյ, զոր նմա միայնոյ[5] է գիտելի[6] և յարարածոց՝ անգիտելի: Այս՝ թէ զինչ է մահ և ի քանիս բաժանի:

Բե՛ր և աստանօր տեսցուք՝ նախ, թէ ուստի՞ եմուտ մահ ի բնութիւնս: Երկրորդ, թէ որպէս՞ եղև մարդով մահ: Երրորդ, թէ որպէս՞ եղև դարձեալ մարդով յարութիւն: Չորրորդ, թէ զի՞նչ է յարութիւն: Հինգերորդ, թէ ամենեցու՞ն լինի: Վեցերորդ, թէ ամենեքեան մի՞ ամանակաւ և մի՞ հասակաւ յառնեն[7]: Եօթներորդ, թէ կատարեալ անդամո՞ք յառնեն և թէ յո՞ր մարմնով յառնեն: Ութերորդ, յետ յարութեանն լինի՞ ուտել[8] և ըմպել[9] որպէս և աստ, և կամ թէ բոյսք և տունկք և անասուն[10] կենդանիք ապականին, թէ՞ ոչ: Իններորդ, թէ որք[11] այժմ մեռանին՝ փառք նոցա և տանջանք յապաղէ՞ մինչև ի վերջին օր յարութեանն, թէ՞ ոչ: Տասներորդ, թէ որպէ՞ս առնուն զփառքն[12] և զտանջանս յԱստուծոյ արդարք և մեղաւորք ի կատարածի աւուրն: Եւ ապա մանրամասնաբար քննութեամբ[13] աւարտումն բանիս արասցուք՝ ի փառս[14] Քրիստոսի[15]:

Արդ, եկեսցուք յառաջին գլուխն և ասասցուք, թէ ուստի՞ ծնաւ մահ ի բնութիւնս մեր: Եւ արդ, երևելի լինել մահն ի բնութիւնս մեր[16] ի մեղաց և յանհնազանդութենէ, որպէս ասէ Տեառն եղբայրն Յակոբ, թէ՝ «Յանկութիւն[17] յղացեալ[18] զմեղս ծնանի, և մեղքն կատարեալ՝ զմահ ծնանին» [Գործք. Ա. 15]: Այս յաղագս առաջին գլխոյն, թէ ուստի եմուտ մահն ի բնութիւնս[19]:

Բե՛ր տեսցուք և[20] զերկրորդ գլուխն, թէ որպէ՞ս եղև մարդով[21] մահ: Եւ արդ, այս եղև այսպիսի իմն օրինակաւ: Զի մարդն առաջին ունկնդիր եղև բանսարկուին

[1] F Աստուած աստեացս
[2] B զանչափ] զայն չափ
[3] D զառաքին
[4] A զնոսա
[5] E միայն
[6] D գիտելի է] է գիտելի
[7] A առնեն
[8] E ի ուտել
[9] E ի ըմպել
[10] D անասունք
[11] AC > որք
[12] D զփառսն
[13] E քննութեան
[14] C փառք
[15] F Քրիստոսի Աստուծոյ մերոյ] Քրիստոսի
[16] B > Եւ արդ, երևելի լինել մահն ի բնութիւնս մեր, D եկեսցուք յառաջին գլուխն մահն] երևելի լինել մահն ի բնութիւնս մեր
[17] B ցանկութեան
[18] C յղփացեալ
[19] F բնութիւնս մեր] բնութիւնս
[20] E > և
[21] D > մարդով

խրատու և էանց զկենարարին պատուիրանաւ՝ ընտրելով զխրատ[1] օձին, քան զհրաման և զպատուէր արարչին իւրոյ[2], սակս որոյ զվճիռ մահու ընկալաւ յԱստուծոյ, որպէս ասէ իմաստնացեալն յԱստուծոյ մեծն Սողոմոն, թէ[3] ՝ «Աստուած զմահ ոչ արար, այլ նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ[4]» [Իմաս. Ա. 13; Բ. 24], վասն զի թէպէտ մարդն ի մարմնոյ ապականացու է[5] ուներ զգոյացութիւն իւր, է՛ր հնար անմահութեան[6], թէ է՛ր պահեալ զեղեալ պատուիրան արարչին: Վասն զի միջնասահման ստեղծեաց Աստուած զմարդն ի մէջ մահու և կենաց՝ որ և պահելով զպատուիրանն անմահանայր ի դրախտին, իսկ ոչ պահելովն՝ զրկեալ լինէր յայսպիսի շնորհաց, որպէս եղև[7] իսկ: Քանզի բարեատեացն[8] սատանայ ետես, զի ընդ վայելման լուսապայծառ դրախտին պահելով զպատուիրանն սեփհականելոց և սէր զտեղին, յորում էրն զառաջինն բանսարկուն: Վասն որոյ մտանէ ի յօձն և ի ձեռն յօձին պատրէ զկինն, և նա՝ զԱդամ, և տայ ուտել ի պտղոյն, և ի ձեռն այսպիսի մեղացս և անհնազանդութեանս զրկեաց զմարդն յաստուածաստեղծ և յանմահական վայրաց[9] դրախտին. վասն որոյ ասէ[10] առաքեալս, թէ՝ «Մարդով եղև մահ»:

Բայց զայս ևս խնդրելի է, թէ ընդէ՞ր ոչ անընդմիջաբար[11] խօսի սատանայ ընդ Եւայ՝ և այս յաղագս երկու պատճառի: Նախ, զի Եւայի ո՛չ լինէր ընդունելի խրատ նորա, զի տեսանէր և ճանաչէր զնա որպէս թշնամի: Արդ, եթէ[12] զի թշնամի[13] զթշնամոյ խրատէ[14] ՝ զիա՞րդ ընդունի, վասն այն մտանէ յօձն և զգենու զկերպարան օձին, զի այսու ևս հաւատարմագոյն լիցի՝ կերպարանեալ[15]հին չարն նոր բարի: Երկրորդ, զի անմարմին էր, ոչ էր հնար մարմնաւոր աչաց երևիլ[16] անընդմիջաբար, յաղագս որոյ ի հարկէ զգեցաւ[17] զմարմին օձին, զի դյուրաւ ընդունելի լիցի զգայական աչաց: Այս յաղագս երկրորդ գլխոյն՝ թէ որպէս եղև մարդով մահ:

Բե՛ր տեսցուք զերրորդ գլուխն և ասասցուք, թէ որպէս[18] եղև մարդով յարութիւն: Եւ այս եղև այսպիսի իմն օրինակաւ, քանզի ասէ մեծն ի մարգարէս աստուածախօսն Մովսէս. «Արասցուք մարդ ըստ պատկերի» [Ծնն. Ա. 27], և թէ՝ «Ըստ պատկերի Աստուծոյ արար զնա» [Ծնն. Թ. 6]: Արդ, ոչ կամեցաւ արարիչն Աստուած այնքան մնալ պատկերին իւրոյ յաղտս[19] մե-

[1] E առավել զխրատ
[2] E Աստուծոյ
[3] ABCDF > թէ
[4] C արար
[5] D ապականեցուցանէ] ապականացու է
[6] E անմահ
[7] AC եղեն
[8] CD բարէատեացն
[9] E վայրուց
[10] D > ասէ
[11] A անմինջաբար
[12] E > եթէ
[13] D թէ նա մի] թշնամի
[14] BDEF խրատ
[15] E կերպարանել, F կերպարանիլ
[16] A երևելի
[17] A զկեցաւ
[18] ABCDF էր
[19] B յաղագս

ղաց, և վասն զի Ադամաւ ամենեքեան ի ներքոյ ծառայութեան սատանայի[1] գրեցան՝ ոչ էր հնար լինել փրկութիւն Ադամայ յատուկ ի ծնընդոցս նորա: Վասն որոյ միածին որդին՝ Բանն Հօր, էջ[2] յերկնից՝ կամաւ Հօր և հաճութեամբ Սուրբ Հոգւոյն: Վասն զի Հոգին Սուրբ նախ էջ և մաքրեաց զարգանդ սուրբ կուսին յսկզբնական մեղաց Ադամային և ի ներգործական փոշետեսակ մեղաց կուսին: Առեալ յամենամաքուր[3] և անշաղախ կուսին Մարիամայ աստուածածնին, որ ի[4] զանկուածոյն[5] Ադամայ, միացոյց ընդ աստուածութեան իւրում. անքննին և անճառելի խառնմամբ եղև յերկուց կատարեալ բնութեանց՝ աստուածայնոյն և մարդկայնոյն[6] մի կատարեալ բնութիւն[7], մի Տէր, մի Յիսուս: Եւ վասն զի էառ հաւաստեաւ զամենայն, որ ինչ էր ի մարդն՝ զհոգի, զմարմին և զմիտս, զատ և որիշ յսկզբնական մեղաց և միացուցանելով զսոսա ընդ աստուածութեան իւրում՝ եղև արտաքոյ ներգործական մեղաց: Եւ այսպիսի իմն օրինակաւ զերիս եղանակաւ մահացեալ հայրն մեր Ադամ վերստին յարոյց արդարութեամբ: Քանզի նախ և առաջին, մահացեալ հոգով ի մեղս վերստին յարոյց արդարութեամբ, ըստ այնմ՝ «Արդարութիւն արդարոյն ի վերայ նորին եղիցի, և անօրէնութիւն անօրին ի վերայ նորին եղիցի[8]» [Եզեկ. ԺԸ. 20]: Երկրորդ եղանակաւ էր մահացեալ՝ արտաքսելովն ի դրախտէն՝ վերստին դարձոյց ի դրախտն, ըստ որում՝ «Եւ զաւազակն եմոյծ առաջին պտուղ ննջեցելոցն»: Երրորդ եղանակաւ էր մահացեալ[9] հոգով և մարմնով՝ վերստին շնորհեաց մեզ յարութիւն հոգւոյ և մարմնոյ, ըստ որում ինքն մեռաւ և յարեաւ, ըստ որում ասէ առաքեալն. «Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց, առաջին պտուղ ննջեցելոց» [Ա. Կորն. ԺԵ. 20], քանզի «Որպէս Ադամաւ ամենեքեան մեռան, նոյնպէս Քրիստոսիւ[10] ամենեքեան կենդանասցին» [Ա. Կորն. ԺԵ. 22]: Այս յաղագս երրորդ գլխոյն՝ թէ որպէս եղև մարդով յարութիւն:

Բայց ոմանք ասա[11] տարակուսին, թէ Քրիստոս ընդ՞էր ոչ բանիւ միայն առնէր զազատութիւն մարդկային բնութեանս. այն, որ ասաց բանիւ միայն, թէ եղիցին երկինք՝ և եղև այնպէս, քան թէ մարմին էառ ի կուսէն և այնու ազատեաց զմեզ: Վասն որոյ[12] ասեմ այսմ տարակուսանացս պատասխանի՝ թէ բանիւ միայն առնել զազատութիւն՝ ոչ էր գործ Աստուծոյ[13]: Այլ ա՛յս է գործ արդարութեան, զի որպէս զգեցաւ սատանայ զօձին մարմինն ծածկոյթ իւրոյ խորամանկութեանն, և

[1] CD ստի
[2] A էր
[3] F յարենէ յամենամաքուր
[4] D > ի
[5] C զանկածոյն, F զանգուածոյն
[6] B մարդկայնուն
[7] A բնութեան
[8] ABCEF > և անօրէնութիւն անօրին ի վերայ նորին եղիցի
[9] C մահաց
[10] D > Քրիստոսիւ
[11] ACDE > աստ
[12] A սորայ] վասն որոյ
[13] AC գործալ] գործ Աստուծոյ

*ի ձեռն յօձապատիր մարմնոյն խո-
րամանկութեամբ զրկեաց զմարդն
առաջին յաստուածաստեղծ և լու-
սապայծառ[1] դրախտէն[2]: Յաղագս
որոյ փոխան[3] այնր Տէր մեր Յի-
սուս Քրիստոս զգեցաւ զօձապա-
տիր մարմին[4] մարդկային բնու-
թեանս[5] ծածկոյթ իւրոյ անմարմին
և անապական սուրբ աստուածու-
թեանն: Եւ այսպիսի իմն օրինա-
կաւ զրկեաց, խայտառակեալ նշա-
ւակեաց և մերկացոյց զսատանայ,
որ ծածկեալ[6] ունէր զբնութիւնս
սեփհական, իւր ծառայութիւն[7]
բևեռեաց[8] զնա ընդ խաչափայտին:
Եւ ամօթալի կապեալ կործանեաց
զնա և երևեցոյց զիւր ստեղծուածն
անմեղ և արդար և ի գործս բա-
րիս յինքենէ ստեղծեալ, իսկ միայն
յանցաւոր և պատժապարտ զորդին
կորստեան, զմայրն ամենայն չա-
րեաց՝ զպիղծն սատանայ: Յա՛յս
սակս Տէր մեր Յիսուս Քրիստոս
զգեցաւ զմարդկային բնութիւնս:*

*Բայց տեսանելի է աստանօր,
թէ զիա՞րդ առաքեալս զապագա-
յիցն իբրև զեղած[9] պատմէ, ասելով
թէ՝ «Մարդով եղև յարութիւն»:
Եւ այս վասն երկու պատճառի.
նախ՝ զի ասէ մարգարէն[10] Դաւիթ,
թէ[11]՝ «Հազար ամ յաչս Տեառն իբ-
րև[12]զմի օր» [Սաղ. ՁԹ. 4], երկրորդ,
զի ասաց Աստուած Ադամայ, թէ՝
«Յորում աւուր ուտիցես ի նմա-
նէ՝ մահու մեռանիցիս[13]» [Ծնն. Բ.
17]: Եւ զի կերաւ Ադամ ի պտղոյն,
բայց ոչ մեռաւ, իսկ թէպէտ զգա-
լի մահուամբ մարմին նորա ոչ մե-
ռաւ[14], բայց իմանալի մահուամբ
հոգի նորա մեռաւ[15], վասն զի ի[16]
ներքոյ մահու գրաւեցաւ[17]: Այս-
պէս և յարութիւնս Քրիստոսի. թէ-
պէտ ամենեցուն յարութիւն[18] զգա-
լի մարմնով ոչ եղև, այլ իմանալի
յարութիւն ամենեցուն եղև մարմ-
նով և հոգով[19], վասն զի ի ներքոյ
յարութեան գրաւեցաւ բնութիւնս
մարդկան, զոր և ի հեռաստանէ
առաքեալս ի ձեռն հաւատոյ[20] իբր
զմերձակայ իր պատմէ ասելով, թէ՝
«Մարդով եղև յարութիւն մեռե-
լոց»:*

*Եկեսցուք ի չորրորդ[21] գլուխն և
ասասցուք, թէ զի՞նչ է յարութիւն:
Յարութիւն է[22] վերստին կենդանու-
թիւն: Եւ դարձեալ, յարութիւն է
հոգւոյ և մարմնոյ վերստին նորո-
գիլ: Եւ ևս, յարութիւն է այնմ, որ
անկաւ վերստին նորոգիլ[23] ի կեն-
դանութիւն՝ յաւիտենական, ան-
մահ: Եւ զի կրկին էր մահ՝ հոգևոր*

[1] E ի լուսապայծառ
[2] BDE դրախտին
[3] D փոխն
[4] ABC > մարմին
[5] ACE բնութիւնս
[6] ABCEF կարծեալ
[7] EF ի ծառայութիւն
[8] E բևեռաց
[9] E ստեղծ
[10] D երկու պատճառի] ասէ մարգարէն
[11] E > թէ
[12] DF որպես
[13] C մեռանիցես
[14] B > իսկ թէպէտ զգալի մահուամբ մարմին նորա ոչ մեռաւ
[15] E > բայց իմանալի մահուամբ հոգի նորա մեռաւ
[16] D > ի
[17] AEF գրեցաւ, B > վասն զի ի ներքոյ մահու գրաւեցաւ
[18] E ամէն առ հասարակ] ամենեցուն յարութիւն
[19] E > առ հասարակ եղև հոգով] եղև մարմնով և հոգով
[20] BCDEF հաւատոց
[21] D յառաջին, E ի չորս
[22] A >է
[23] BCEF յառնել

և[1] մարմնաւոր, եւ դարձեալ, իւրաքանչիւրքն[2] ի սոցանէ կրկնակի. քանզի է՛ յարութիւն հոգևոր առ ժամանակեայ, որ և դարձեալ մեռանի՝ որպէս յառնել մարդ ի մեղաց[3] ի ձեռն խոստովանութեան և դարձեալ անկանիլ ի մեղս, իսկ երկրորդ, յարութիւն է հոգևորական, որ այլ ոչ մեռանի՝ որպէս առաքեալքն[4] գալստեամբ հոգւոյն Աստուծոյ ի վերնատունն, որք յարեան յերկբայութենէն, զոր վասն մահուն[5] Քրիստոսի ունէին և այլ ոչ ևս մեռան: Այսպէս և մարմնաւոր յարութիւնս. է՛, որ յառնէ առ ժամանակ մի և դարձեալ մեռանի՝ որպէս որդի այրոյն, զոր[6] Եղիայ յարոյց, և Ղազար, զոր Տէրն յարոյց[7] և այլք բազումք: Եւ դարձեալ, է՛ յարութիւն յաւիտենական, որ այլ ոչ ևս մեռանի՝ որպէս Քրիստոսի, որ մեռաւ և յարեաւ և այլ ոչ ևս մեռանի, որպէս ասէ առաքեալն. «Գիտեմք, զի Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց. այսուհետև ոչ մեռանի, և մահ նմա ոչ ևս[8] տիրէ» [Հռոմ. Զ. 9]: Այս՝ թէ զինչ է յարութիւն:

Դարձեալ, ոմանք վասն այսր յարութեան տարակուսեցան՝ թէ է՞ ճշմարտապէս յարութիւն մեռելոց, թէ ոչ, զոր ոչ է կարիս[9] այժմ[10] խնդիր առնել և կամ տալ պատասխանի վասն այսր հարցուածոյ[11] յաղագս երեք[12] պատճառի: Նախ և առաջին, զի ամենայնքն առ հասարակ հաւատացեալք և անհաւատք[13] խոստովանին, թէ գոյ յարութիւն: Երկրորդ, զի բազումք յարեան ի ընութենէս[14] մերմէ՝ որպէս որդի այրոյն, զոր Եղիայ յարոյց և Ղազար, զոր Քրիստոս յարոյց և այլք բազումք, զոր առաքեալքն յարուցին: Ապա ուրեմն, յայտ[15] եղև, թէ է՛ յարութիւն մասնաւոր՝ լինելոց է[16] յարութիւն ընդհանուր: Երրորդ, զի բոյսք և տունկք են իբրև զմշտաբարբառ քարոզ մեզ ի յեղանակս աշնանային մեռանելով և ի յեղանակս գարնանային յառնելով վերստին կենդանութեամբ՝ որպէս ասէ Յոբ, թէ՝ «Գոյ յոյս ծառոց, զի թէպէտ[17] կտրեսցի[18], դարձեալ միւս անգամ ծաղկեսցի» [Յովբ. ԺԴ. 7]: Ապա ուրեմն, քանի ևս[19] առաւել գոյ յոյս բանաւոր մարդոյ վերստին յառնել ի գերեզմանաց: Նաև մարգարէն վկայէ, ասելով՝ «Յարիցեն մեռեալք, կենդանասցին ամենեքեան, որ[20] եդեալ են ի գերեզմանս»: Եւ այլուր ասէ մարգարէն. «Ողջացուցեր զմեզ Տէր յետ[21] յերկուց աւուրց և յաւուրն երրորդի յարիցուք և կացցուք առաջի նորա» [Ովս. Զ. 3]:

[1] D > և
[2] E իւրաքանչիւր ոքն
[3] E մեռելոց
[4] AB առաքեալն, E առաքելոցն
[5] D > մահուն
[6] DF զի
[7] E > և Ղազար, զոր Տէրն յարոյց
[8] D > ևս
[9] E ոչ կարես] ոչ է կարիս
[10] AC այսմ
[11] A հարցուածոյս, B հերձուածոց, DF հարուածոց
[12] D որոյ
[13] AC անհաւատ
[14] B բնութենէ
[15] E յայս
[16] D էր
[17] D թէ
[18] C կորեսցի
[19] AC և
[20] EF որք
[21] AC > յետ

Բե՛ր տեսցուք զհինգերորդ գլուխն և ասասցուք, թէ ամենեցու՞ն լինելոց է յարութիւն:

Եւ գիտելի է, զի ոմանք ասացին ոչ գոլ յարութիւն հասարակաց[1] ընութեան ընդհանուր, այլ արդարոցն միայն՝ օժանդակ ունելով զբան մարգարէին Դաւթի, որ ասէ. «Ոչ յարիցեն ամբարիշտք ի դատաստան» [Սաղ. Ա. 5]: Բայց ոչ է ճշմարիտ այսմ այսպէս իմանալ[2], թէ արդարոցն միայն լինի յարութիւն, այլ է և մեղաւորացն ևս յարութիւն, վասն զի յարութիւն է սակս վարձատրութեան ըստ իւրաքանչիւր գործոց: Ապա ուրեմն, հարկ է, զի ամենեքեան յառնեն՝ արդարք և մեղաւորք. արդարքն՝ վասն փառաց և պատուոյ[3] և մեղաւորքն՝ վասն պատժոց և չարչարանաց, որպէս ասէ Տէրն, թէ՝ «Ոմանց յարութիւն կենաց, և ոմանց յարութիւն դատաստանաց» [Յովհ. Ե. 29], նաև դարձեալ ասէ, թէ՝ «Ամենեքեան, որ[4] ի գերեզմանս կայցեն[5], լուիցեն[6] ձայնի Որդւոյն Աստուծոյ և եկեսցեն արտաքս. որոց զբարիս գործեալ իցէ[7] յարութիւն կենաց, և որոց զչար արարեալ իցէ[8] յարութիւն[9] դատաստանաց» [Յովհ. Ե. 28,29]: Իսկ բան[10] մարգարէին, որ ասէ՝ «Ոչ յարիցեն մեղաւորք ի դատաստան» [Սաղ. Ա. 5], ոչ ասէ զբնաւ չյառնելն[11], այլ թէ ո՛չ յարիցեն հոգևոր յարութեամբ՝ որպէս զարդարսն ի կեանսն յաւիտենից[12], այլ միայն ի դատաստան մահու: Այս յաղագս հինգերորդ գլխոյն՝ թէ ամենեցուն լինելոց է[13] յարութիւն:

Բե՛ր տեսցուք զվեցերորդ գլուխն և ասասցուք, թէ ամենեքեան մի ամանակաւ և մի հասակաւ[14] յառնեն, թէ՞ ոչ:

Եւ արդ՝ գիտելի է, զի յարութիւնն Քրիստոսի պակասութիւն ոչ լինի, իսկ մանկութիւն է պակասութիւն, զի[15] ոչ է հասեալ ի կատարեալ չափ հասակի կատարմանն Քրիստոսի: Դարձեալ, ծերութիւն է պակասութիւն, զի անցեալ է զաւուրքք բազմօք, զառամացեալ և թուլացեալ ամենայն հոգեկան և մարմնական գործոց: Ապա ուրեմն, յայտ եղև, թէ կատարեալ հասակն է երիտասարդութիւնն, վասն որոյ Քրիստոս մինչև ի սոյն եհաս ժամանակ և ապա արար սկիզբն աստուածաբար նշանացն լուսաւոր և փրկաւետ քարոզութեանն: Վասն որոյ ցուցցէ[16] զսոյն[17] հասակ գոլ յարութեան առաքեալն Պօղոս ի Փիլիպեցւոց թուղթն, ասելով՝ «Ուստի փրկչին ակն ունիմք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի նորոգեսցէ զմարմին խոնարհութեան մերոյ

---

[1] D հասարակ
[2] B իմանալի
[3] D պատուոց
[4] E > որ
[5] AC կացցեն
[6] E լսիցեն
[7] D ի, BF > իցէ, E > գործեալ իցէ
[8] BF > իցէ, E > արարեալ իցէ
[9] D > կենաց, և որոց զչար արարեալ իցէ յարութիւն
[10] AB > բան
[11] E չառնելն
[12] D յարութեան, E կանոնսն յաւիտենականս] կեանսն յաւիտենից
[13] D էր
[14] B > և մի հասակաւ
[15] D է պակասութիւն զի
[16] B ցուցանէ
[17] ACE զայն

ըստ նմանութեան փառաց իւրոց» [Փիլիպ. Գ. 21]: Նաև Ադամ երեսնամեայ ստեղծեալ եղև յԱստուծոյ և եդեալ ի դրախտին: Իսկ այս ստեղծումս[1] ոչ այլ ինչ օտարս հրաշագործէ, բայց միայն քան զառաջինն, քանզի որպէս անդ հողն առաւ յերկրէ և ստեղծաւ կերպարան մարդոյ և ապա աստուածային փչմամբ եմուտ ի նա հոգի կենդանարար, այսպէս և երկրորդումս հողացեալ մարմինք և լուծեալ տարերքն դարձեալ ժողովին ի մի վայր[2] հրամանաւն Աստուծոյ և ապա դան հոգիքն սլացեալ մտանեն յիւրաքանչիւր մարմին՝ {որպես ասէ Տէրն յԱւետարանն, որ ըստ[3] Մատթէոսի. «Ուր դէշն իցէ, անդր արծուիք ժողովեսցին» [Մատ. ԻԴ. 28]:

Իսկ դատաստանի օրն հոգին և մարմինն որպէ՞ս ճանաչեն զմիմեանս և դարձեալ[4], թէ որպէ՞ս ճանաչէ հոգին զիւրաքանչիւր մարմինն}[5]:

Պատասխանէ այսմ սուրբ Գրիգոր Նիւսացին և ասէ, թէ հոգին և մարմինն ունին ինչ անյայտ նշան, զոր ինքեանց միայն է գիտելի և այսու[6] ճանաչեն զմիմեանս, զոր են կատարել[7] եթէ բարի և եթէ չար. իբր թէ հոգւոյ պայծառ տեսութիւնն ճանաչէ ի հեռաստանէ զմարմինն սպիտակացեալ[8] գործով և սոյն ծանօթութեամբ դան առ միմեանս և միանան ի հրամանէն Աստուծոյ:

Իսկ թէ մի՞ հասակաւ յառնեն. և այս յայտնի է ամենեցուն, զի կարի մեծն առաւել է, քան զչափն, և կարի փոքրն պակաս է, քան զչափն: Իսկ այս[9] երկու անկատարութիւնս բառնի յայնմ ստեղծագործութեան, և լինի կատարեալ հասակ, որ է միջինն՝ ո՛չ կարի փոքր և ո՛չ կարի մեծ, զի ասէ Սողոմոն. «Մեծ և փոքր՝ երկոքեանն պիղծ են առաջի Աստուծոյ» [Առակ. Ի. 10]: Այս յաղագս վեցերորդ գլխոյն՝ թէ մի ամանակաւ և հասակաւ[10] յառնեն:

Բե՛ր տեսցուք զեօթներորդ գլուխն և ասասցուք, թէ կատարեա՞լ անդամօք յառնեն և թէ որպիսի՞ մարմնով յառնեն[11]:

Արդ, երևի թէ կատարեալ անդամօք յառնեն, վասն զի անկատարութիւն անդամոց և աւելորդութիւն ի բնութենէ լինի, վասն զի Աստուած[12] զերկրորդաբար ստեղծումն եդ ի բնութիւնս, և բնութիւնս արուեստիւն իւրով ստեղծանէ զտեսակն: Նա իսկ թէ բնութիւնս մարդոյն առողջ[13] լինի՝ նա զիւրաքանչիւր անդամ յիւրում տեղւոջն գեղեցիկս կազմէ: Իսկ թէ

---

[1] BEF ստեղծումնս, D ստեղծմունս
[2] E զայր
[3] AC > որ ըստ
[4] BDF > դատաստանի օրն հոգին և մարմինն որպէս ճանաչեն զմիմեանս և դարձեալ
[5] E > {որպես ասէ Տէրն ... հոգին զիւրաքանչիւր մարմինն}
[6] A > և այսու
[7] F կատարեալ, E ես կարծեմ լեալ] են կատարել
[8] E սպիացեալ
[9] A > այս
[10] BE մի հասակ, DF միահասակ] մի հասակաւ
[11] D > և թէ որպիսի մարմնով յառնեն
[12] ABD > Աստուած
[13] DEF առաջին

բնութիւն մարդոյն[1] տկար լինի, նա զիւրաքանչիւր անդամ ոչ կարէ ողջ կազմել, վասն որոյ սխալի՝ է՛, որ աչօք[2], և է՛, որ ձեռօք[3], և է՛, որ ոտիւք[4]: Լինի և այս սխալումնս[5] ի պատահարաց կամ ի հարկանելոյ[6] զմայր մանկանն և կամ այլ բազում ինչ իրաց ի սոյն պատճառաց: Իսկ այս երկու անկատարութիւնս բառնի յայնմ ստեղծագործութեան, զի ո՛չ բնութիւն մարդոյն ստեղծանէ, այլ Բանն Աստուծոյ, և ո՛չ տկարութիւն արհեստից, այլ Քրիստոս Աստուծոյ[7] զօրութիւնն և Աստուծոյ իմաստութիւնն: Նաև ոչ է անդ ապականութիւն[8] անդամոց[9] որոգայթական, վասն զի որոգայթ ոչ կարէ մերձենալ ի զօրութիւնն Աստուծոյ: Ապա ուրեմն յայտ է, թէ կատարեալ անդամօք յառնեմք[10], երեսնամեայ՝ որպէս զԱդամ:

Իսկ եթէ որպիսի՞ մարմնով յառնեմք: Պատասխանէ[11] այսմ առաքեալն Պօղոս և ասէ. «Անմիտ, դու զոր սերմանես՝ ոչ կենդանանայ[12], թէ ոչ նախ մեռանի. և զոր սերմանէս՝ ոչ զնոյն մարմին, որ[13] ծնանելոցն իցէ[14] սերմանես[15], այլ հատ մերկ. թէ ցորենոյ և թէ այլոց սերմանեաց[16]. և Աստուած տայ նմա մարմին՝ որպէս և կամի. և իւրաքանչիւր սերմանեացն զիւր մարմին» [Ա. Կորն. ԺԵ. 36-39]: Եւ այս այսպիսի է[17], զոր ասէ Պօղոս, զի յարութիւն մեռելոց նմանի սերման վասն երկու պատճառի: Նախ, զի սերմն ընաւ ոչ բուսանի՝ թէ ոչ նախ մեռանի, նոյնպէս մարմինք[18] մարդկան ոչ յառնեն ի յարութեանն՝ թէ ոչ նախ մահանան մեռելութեամբ. վասն որոյ[19] ասացեալ է ոմն ի սրբոցն, թէ՝ «Նոքա յայնմ[20] ժամու[21] կենդանի լինին[22], յորժամ Տէրն գայ, վասն այս հարկիս նախ մեռանին և ապա[23] յառնեն, և այս ոչ ծախմամբ[24] ժամանակաց, այլ ի քթթելական»: Վասն որոյ և ոմանք այսպես մեկնեն զբան առաքելոյն, որ ասէ ի Թեսաղոնիկեցւոց[25] թղթին, թէ՝ «Մեք որ կենդանի մնացեալ իցեմք՝ հանդերձ նոքօք յափշտակեսցուք ամպօք ընդառաջ Տեառն. և այնպէս յամենայն ժամ ընդ Տեառն լինիմք[26]» [Ա. Թես. Դ. 16]. իբր[27] թէ[28] ասէ առաքեալն, թէ մեք յառաջագոյն ննջեցեալքս մնամք յայնմ[29] ժամու կենդանութեանցն[30], որք մեռանին

---

1 DEF մարմնոյն
2 E աչք
3 E ձեռք
4 DEF ոտք
5 A սխալումն
6 E հարկելոյ
7 E Աստուած, F > Աստուծոյ
8 E պակասութիւն
9 B անդամոյ
10 AC յառնեն
11 AC ի պատասխանէ
12 E կենդանայ
13 A ոչ
14 AC է
15 DEF սերմանեալ
16 BEF սերմանց
17 EF >է
18 E մարմին
19 D > որոյ
20 ABCE յայն
21 AC ժամ
22 B կենդանանան] կենդանի լինին
23 BCDEF > ապա
24 E ծախման
25 D Թեսաղոնիկ
26 BCF > ընդ Տեառն լինիմք
27 D իսկ
28 DEF զի
29 B յայն
30 E կենդանեացն

և յառնեն, և ապա մեք հանդերձ նոքօք յափշտակեսցուք: Երկրորդ, զի որպէս սերմն մերկ սերմանի, բայց մերկ ոչ բուսանի, այլ զարդարեալս և պայծառս մարմնով, և ոչ միայն մարմնով, այլև[1] հոգով: Եւ թէ որպէ՞ս լինելոց է, ասեմք, քանզի վեց ազգ[2] պակասութիւն ունի մարդս յայսմ աշխարհիս, որ[3] և յայն աշխարհին բառնին այսոքիկ, և յայսցանէ երեքն հոգևորք են և երեքն՝ մարմնաւորք: Արդ՝ բե՛ր ասասցուք նախ վասն հոգևորին, և ապա՝ վասն մարմնոյն[4]: Արդ, առաջին պակասութիւն հոգւոյ և իմացմանն՝ նսեմ և ընդ աղօտ գիտութիւն[5]: Իսկ ի յարութեանն բառնի այս, և լինի լուսաւոր իմացումն և պայծառ գիտութիւն[6] առ աստուածային տեսութիւնն՝ որպէս ասէ առաքեալ. «Այժմ տեսանեմք իբր[7] ընդ հայելի օրինակաւ, այլ յայնժամ դէմ յանդիման» [Ա. Կորն. ԺԳ. 12]: Երկրորդ պակասութիւն հոգւոյն տրտմութիւնն և[8] պակասութիւն ախորժակաց, զի բազում ինչ խնդրէ և ոչ առնու, և բազում ինչ, որ[9] ոչ խնդրէ՝ և լինի նմա: Նոյնպէս և այս բառնի անդ և լինի ուրախութիւն[10] հոգևոր[11] առ Աստուած՝ որպէս ասէ մարգարէն Դաւիթ. «Ուրախ լիցին ամենեքեան[12], որ յուսացեալ են[13] ի քեզ Տէր, յաւիտեան[14] ցնծասցեն, և բնակեսցես[15] դու ի նոսա» [Սաղ. Ե. 12]: Երրորդ պակասութիւն է հոգւոյ թուլութիւն մտաց, զի այսմ աշխարհի բազում մեղօք մոռանամք զԱստուած և որոշիմք չարեօք իմն, և այս ևս բառնի անդ, և լինի հոգւոյն ամրութիւն և հաստատութիւն, մինչ զի զԱստուած հաստատ[16] ըմբռնեմք և այլ ոչ բաժանիմք ի նմանէ ըստ իւրական հրամանին, թէ՝ «Ուր եսն եմ, անդ[17] և պաշտօնեայն իմ եղիցի» [Յովհ. ԺԲ. 26]: Իսկ մարմնոյ պակասութիւն է յայսմ աշխարհիս՝ նախ, զի է մահկանացու և ապականելի, նա ևս ընդունի քաղց[18] և ծարաւ, ջերմութիւն և ցրտութիւն, վաստակ և հիւանդութիւն: Նոյնպես և այս բառնի անդ ի[19] մարմնոյն և լինի անմահ և անապական, այլ ոչ ընդունի[20] քաղց[21] և ոչ ծարաւ՝ որպէս ասէ Յովհաննէս ի տեսիլն. «Ոչ քաղցիցեն, և ոչ[22] ծարաւիցեն[23]» [Յայտ. Է. 16]: Եւ վասն զի ի սեղան Հօր բազմին, և Տէրն յԱվետարանին ասէ, թէ ծարաւիքն ըմպեն զջուրն կենարար, սե-

[1] D այլ
[2] AC ազգք
[3] E ուր
[4] F մարմնաւորին] վասն մարմնոյն
[5] B տեսութիւն
[6] E պայծառագիտութիւն] պայծառ գիտութիւն
[7] BCDEF > իբր
[8] E այսինքն] և
[9] E > որ
[10] A հոգևոր ուրախութիւն
[11] D և տրտում հոգևոր, E տարփումն հոգևոր
[12] C > ամենեքեան
[13] BCEF > ամենեքեան, որ յուսացեալ են
[14] BF որ յուսացեալ են յաւիտեան
[15] C բնակես
[16] D > հաստատ
[17] BEF > անդ
[18] E քաղցր
[19] DF > ի
[20] A ունի
[21] E քաղցր
[22] F > ծարաւ՝ որպէս ասէ Յովհաննէս ի տեսիլն. ոչ քաղցիցեն, և ոչ ծարաւիցեն
[23] ACDEF ծարաւեսցին

ղան ոչ[1] հացի, այլ Բանին Աստուծոյ, և արբումն ոչ ջրոյ, այլ լսելոյ զԲանն Աստուծոյ: Այլև[2] ոչ ջերմ և ոչ ցուրտ, յորմէ լինին հիւանդութիւնք ապականարարք, վասն զի ոչ են անդ որակութիւնքս որպէս ասացաւ՝ ջերմութիւն, ցրտութիւն, վաստակ կամ հիւանդութիւն, որպէս ասէ առաքեալ. «Սերմանի ապականութեամբ և յառնէ[3] առանց ապականութեան[4]» [Ա. Կորն. ԺԵ. 42]: Երկրորդ պակասութիւն է մարմնոյն սևութիւն և աղտեղութիւն. և այս ևս[5] բառնի անդ[6] ի մարմնոյն և զարդարի լուսով իբրև զարեգակն[7] ըստ տէրունական հրամանին, թէ՝ «Յայնժամ արդարքն ծագեսցին իբրև զարեգակն արքայութեան[8]» [Մատ. ԺԳ. 43]: Երրորդ պակասութիւն մարմնոյն է[9], զի այժմ[10] մարմին մարդոյ[11] է յոյժ[12] ծանր և ստուար, ծոյլ և հեղգ յամենայն գործս հոգեկան և մարմնական: Իսկ յայնժամ բառնի[13] այս ի մարմնոյն և լինի թեթև, երագ և արի, մինչ զի ուր կամք հոգւոյն խնդրէ, վաղվաղակի ընթանայ անարգելաբար[14] յական թօթափելն՝ որպէս ասէ Պօղոս. «Սերմանի տկարութեամբ և յառնէ զօրութեամբ» [Ա. Կորն. ԺԵ. 43, 44], և Սողոմոն յիմաստութիւնն ասէ, թէ՝ արդարք «ի ժամանակի այցելութեան իւրեանց պայծառասցին, և իբրև կայծակն ընդ եղէգն ընթասցին» [Իմաս. Գ. 7,8]: Այս յաղագս եւթներորդ գլխոյն:

Բե՛ր տեսցուք զուրերորդ գլուխն , թէ է՞ յետ յարութեանն ուտել և ըմպել, որպէս ասա, կամ թէ բոյսք և տունկք և անասուն կենդանիք[15] ապականին, թէ՞ ոչ[16]:

Եւ արդ՝ գիտելի է, զի ասեն ոմանք, թէ է՛ անդ ուտել և ըմպել, կանայս առնել և արանց լինել, զոր Քրիստոս բառնայ ասելով, թէ ի յարութեանն «Ո՛չ արք կանայս առնեն, և ո՛չ կանայք արանց լինին[17]» [Մար. ԺԲ. 25], այլ իբրև[18] զհրեշտակ Աստուծոյ են[19] անկերակուր և առանց ամուսնութեան: Բայց ոմանք հակառակին[20] ասելով, թէ Քրիստոս յետ յարութեանն իւրոյ[21] կերաւ ընդ աշակերտսն ձկան խորովելոյ մասն և խորիսխ մեղու: Առ որս պատասխանեմք ասելով, թէ Քրիստոսի յարութիւնն ծածկաբար եղև և անյայտ ի մարդկանէ: Նա վասն այն կերաւ, զի հաստատեսցի յարութիւն նորա ճշմարտապէս մարդկութիւնն հանդերձ աստուածութեամբն: Իսկ մեր յարութիւնն, որ ի կատարածի[22] աշխարհի

[1] E > ոչ
[2] E այլ
[3] AC յառնսն
[4] AC ապականութեամբ
[5] D և
[6] D > անդ
[7] E զարեգական
[8] A արդարութեան, E յարքս, F > արքայութեան
[9] DE >է
[10] D յայնժամ
[11] AC մի մին մարդ] մարմին մարդոյ
[12] F > յոյժ
[13] D առնի
[14] A անարգաբար

[15] AC կենդանին
[16] AC + արքայութիւնն կանայք առնելն (լուսանցագիր)
[17] E > արանց լինին
[18] E են իբրև
[19] E > Աստուծոյ են
[20] D հակառակի
[21] ACF > իւրոյ
[22] AB կատարած

լինելոց է յաւուրն յետնումն, նա յայտնի է ամենայն մարդկային[1] բնութեանս, և հաստատ ոչ է անդ կարիս ուտելոյ, զի հաստատեսցի յարութիւն մեր[2]:

Բե՛ր տեսցուք և զայն ևս, թէ ի յարութեանն բոյսք և տունկք ապականին, թէ՞ ոչ:

Երևի թէ ապականին, քանզի ասացեալ են իմաստասէրքն և աստուածաբան վարդապետքն, թէ երեք ազգ մարմին մնայ աշխարհիս յետ յարութեանն: Նախ և առաջին՝ վերին մարմինքդ՝ երկինք, աստեղք և այլ լուսաւորք, զի ամենևին անապականք են[3]: Երկրորդ՝ տարերքդ, որ թէպէտ մասն ինչ ապականի, բայց բոլոր որակութիւն[4] հրոյն ոչ ապականի, այլ անապական մնայ, նոյնպէս երեք տարերքդ՝ որպէս ասէ Ժողովողն. «Ազգ գայ և ազգ գնայ՝ և երկիրս յաւիտեան կայ» [Ժող. Ա. 4]: Երրորդ՝ մարդս, որ թէպէտ ի կողմանէ մարմնոյն ապականի, բայց ի կողմանէ հոգւոյն անապական մնայ, բայց այլ ամենայն կենդանիք և բոյսք և տունկք ապականին վասն երկու պատճառի: Նախ, զի ամենայն անասունք և բոյսք և տունկք[5] ստեղծան վասն[6] մարդոյն, ոմա՛նք ի պէտս կերակրոց, ոմա՛նք ի պէտս բեռնակրութեան և ոմա՛նք ի պէտս բժշկութեան: Իսկ ի յարութեանն բառնի այս, վասն զի ոչ ունին անդ մարդիկ կարիս կերակրոյ[7] և կամ պէտք բժշկութեան և ոչ այլ ինչ իրաց, զի ասէ առաքեալն. «Սերմանի ապականութեամբ և յառնէ զօրութեամբ[8]» [Ա. Կորն, ԺԵ. 43, 44]: Երկրորդ, զի ամենայն իմաստասէրք ասեն լեալ պատճառ տնկոց և կենդանեաց և այլ անասնոց ծննդեան և աճման՝ զշարժումն երկնի և արեգականն[9] և այլ աստեղացդ: Իսկ այս ամենայն շարժումս և շրջագայութիւնս[10] դադարումն առնու և կատարի անդանօր[11] որպէս ասէ մարգարէն Դաւիթ, թէ՝ «Ծագեսցի յաւուր նորա արդարութիւն՝ մինչև կատարեսցի լուսին» [Սաղ. ՀԱ. 7]: Այս յաղագս ութերորդ գլխոյն:

Բե՛ր տեսցուք զիններորդ գլուխն և ասասցուք, թէ որք այժմ մեռանին՝ փառք նոցա և տանջանքն յապաղէ՞ մինչև ի վերջին[12] օրն յարութեանն[13], թէ՞ ոչ:

Արդ, վասն սորա երկու են կարծիք: Մին կարծիք է լատինացւոցն[14], զի նոքա ասեն, թէ որք այժմ[15] մեռանին՝ իսկոյն առնուն[16] զփառքն և զտանջանքն՝ այսպիսի իմն օրինակաւ, քանզի ասեն, թէ ամենևին արդարքն յորժամ մեռանին՝ նոյն ժամ այն առնուն զփառքն յԱստուծոյ: Նոյնպէս մահու չափ մեղաւորքն յորժամ մեռանին՝ նոյն

[1] A մարդկան
[2] B մերոյ
[3] C > են
[4] A որակութիւնք, DE բոլորակութիւն] բոլոր որակութիւն
[5] D > և բոյսք և տունկք
[6] E > վասն
[7] EF կերակրոց
[8] C զօրութեան
[9] AC արեգական
[10] A շրջագոյութիւնս
[11] ABCDF աստանօր
[12] BD վերջի
[13] F > յարութեանն
[14] B լատինացունցն
[15] BD այժմն
[16] CD առնոյն

ժամ այն[1] առնուն զտանջանսն յԱստուծոյ: Եւ տղայքն[2] այնոքիկ, որ ի Հինսն անթլփատք էին և ի Նորս անմկրտիլ, նոքա յորժամ մեռանին՝ երթան ի տեղի ինչ խաւարին: Եւ է խաւարն այն[3] տանջանք նոցա, բայց բարկութիւնն Աստուծոյ ոչ է ի վերայ նոցա: Իսկ այնոքիկ, որ ունին կիսոյ չափ արդարութիւն և կամ ևս աւելի, կամ կիսոյ չափ մեղք[4] կամ ևս աւելի՞ է՛ ինչ տեղի տանջանաց, զի երթան հոգիք նոցա և զայն չափ յանցանս[6] քաւեն անդանօր և ապա մաքրեալ[7] և պայծառացեալ[8] հոգով վերանան յարդարոցն դասս: Զորս ոչ ընդունի[9] զայսպիսի չար կարծիս և զհերձուած բանս եկեղեցի Աստուծոյ, վասն զի նոքա, որ զայս ասացին, հակառակ Քրիստոսի և ամենայն սրբոց խօսեցան, վասն զի Տէր մեր Յիսուս Քրիստոս խոստացաւ դալ աշխարհ[10] և առնել յարութիւն, դնել դատաստան և տալ հատուցումն ըստ[11] իւրաքանչիւր գործոց: Ապա յայնժամ[12] ամենայն ոք արդար և մեղաւոր ըստ իւրաքանչիւր գործոց առնուն զհատուցումն: Ապա յայնժամ ի՞նչ պէտս գայ Տէրն աշխարհս առնել յարութիւն մարդկան: Եւ ըստ այսմ[13] եղանակիս ստեն[14] և թիւրեն զդալուստն և զդատաստանն Քրիստոսի: Զոր մեզ[15] զայսպիսի բանս ասել[16] քաւ և մի լիցի: Այլ թէ որպէ՞ս է՞[17] ասասցուք ո՛չ զմարդկային սուտ և ունայն կարծիս[18], այլ զսրբոյ[19] աստուածաբանին Գրիգորի զճշմարիտ և զանսուտ բանն: Քանզի նա ասէ, թէ հոգի յորժամ ելանէ ի մարդոյն մինչև ի գալուստն Քրիստոսի ո՛չ փառք ունի[20] և ո՛չ տանջանք, այլ այսչափ միայն, զի վաղվաղակի յելանել հոգւոյն ի մարմնոյն՝ տեսանէ արդարն զբաժին ժառանգութեան իւրոյ և յուսովն վայելէ՝ որպես մերձակայ իր: Եւ մեղաւորքն տեսանեն զբաժին ժառանգութեան իւրեանց[21] և յուսով տանջանացն չարչարին՝ որպէս մերձակայ իր[22], վասն այն արդարքն ցանկան գալստեանն Տեառն[23] որպէս ասէ մարգարէն[24] Դաւիթ. «Քեզ սպասեն արդարքն մինչև հատուցես» [Սաղ. ճԽԱ. 8]: Իսկ մեղաւորքն ցանկան յապաղման Տեառն և[25] մինչ ի գալուստն Քրիստոսի ոչ առնուն կատարելապէս[26] հոգիքն[27] զփառքն և զտանջանքն, վասն զի ասէ առաքեալն, թէ՝ «Սոքա ամե-

[1] D յայնժամ] նոյն ժամ այն
[2] AF տղայն
[3] D ինչ] խաւարն այն
[4] E մեղս
[5] AC > կամ կիսոյ չափ մեղք կամ ևս աւելի
[6] B յանցս, D հոգասանս
[7] A մաքրեալք
[8] A պայծառացեալք
[9] D զոր չընդունի] զորս ոչ ընդունի
[10] EF յաշխարհ
[11] ABCDF > ըստ
[12] E յորժամ
[13] B ամենայն
[14] DEF սուտ
[15] D մի
[16] A > ասել
[17] E >է
[18] B կարծես
[19] AE զսրբոց
[20] DE ունին
[21] D իւրոյ
[22] C + է մեղաւոր հոգին տեսանէ զտանջանքն (ավելացված է ձեռագրի լուսանցքում)
[23] BDEF Քրիստոսի
[24] BCDEF > մարգարէն
[25] D >է
[26] D կատարեալ
[27] D հոգին

նեքին[1] վկայեալք ի հաւատոյ[2], և չև ևս են ընկալեալք զաւետիսն Աստուծոյ վասն մեր լաւագոյն համարեալ, զի մի առանց մեր կատարեսցին» [Եբր. ԺԱ. 3, 9] պաշտօնն, այսինքն՝ առանց մարմնոյ միաւորութեան ընդ հոգւոյն: Վասն զի անպատշաճ էր Աստուծոյ, թէ հոգի և մարմին ի մասին գործեցեալ[3] զչարն կամ զբարին՝ առանց մարմնոյ փառաւորէր հոգին[4] կամ տանջէր, նոյնպէս մարմինն: Վասն որոյ սակս արդարութեան լաւագոյն համարեցաւ ի միասին տալ զփառքն և զտանջանքն: Եւ թէ[5] ոք ասիցէ[6], թէ[7] հոգի էր կառավար մարմնոյն՝ նմա պիտոյ էր աւելի[8] տանջել[9], ասասցուք, թէ միայն բաւական էր վասն կառավարութեան առաջնորդականաւն[10], որ է տեսականաւն, այսինքն՝ յուսովն տանջել[11] կամ փառաւորել[12]:

Բե՛ր տեսցուք զտասներորդ գլուխն և ասասցուք, թէ որպէ՞ս առնուն զփառքն և տանջանսն յԱստուծոյ արդարքն և մեղաւորքն:

Եւ արդ՝ գիտելի է, զի եթէ փառք և եթէ տանջանք՝ ըստ չափոյ իւրաքանչիւր գործոցն հատուցանի[13], որպէս ասէ առաքեալն, թէ՝ «Մեզ ամենեցուն յանդիման լինել կայ առաջի ատենին Քրիստոսի[14], զի ընկալցի[15] իւրաքանչիւր ոք՝ եթէ բարի և եթէ չար» [Բ. Կորն. Ե. 10]: Այլ ե՛ն ոմանք, որ ասեն[16], թէ[17] ըստ առաւելութեան[18] և ըստ նուազութեան ունին զգործս արդարութեան՝ ո՛չ առաւել և ո՛չ նուազ փառաւորին, այլ հաւասարապէս՝ օժանդակ ունելով զբանն Տեառն, որ ասէ զվարձս մշակացն, զոր ի մետասան ժամուն հասեալ, գնացին գործել զայգին տանուտեառն և ընդ առաջին[19] ժամուն եկեալսն առին վարձ մէն մի դահեկան և նոքա: Զոր ոչ ասէ Քրիստոս վասն այսմ վարձառնութեան, այլ վասն յորդորելոյ[20] զառամացեալսն ի հաւատս, որք ի բաց կացին վասն վերջնոյ կողմանն՝ իբր թե ոչ ընդունիցին հաւասար նոցա: Վասն որոյ և Քրիստոս զայս յոյս տայ, թէ ոք սուրբ հաւատով և ջերմ սիրով գայցէ ի հաւատս և արիութեամբ[21] գործեսցէ զգործ Տեառն, թէպէտ ի սակաւ ժամանակս[22], բայց ընդ առաջագոյն եկեալն ի հաւատն և բազում ժամանակս կացեալ՝ սակայն ծուլութեամբ և հեղգութեամբ՝ ընդունիցին վարձս հաւասար նոցին՝ է՛[23], զի առաւել: Բայց այս տարակոյս է, թէ որք ի բազում ժամանակս

[1] AC ամենեքեան
[2] DF հաւատոց
[3] A գործեցին, C գործեցեր
[4] F > հոգին
[5] D եթէ] և թէ
[6] C ասիցես
[7] B > թէ
[8] E առաւել ի
[9] C տանջիլ, D տանջեալ
[10] E առաջնորդականուն
[11] B տանջեալ, F տանջիլ
[12] B փառաւորեալ, F փառաւորիլ
[13] A հատուցանէ
[14] E > ատենին Քրիստոսի
[15] D ընկալցին
[16] D առնեն
[17] ABCDF > թէ
[18] ABC աւելութեան
[19] D > առաջին
[20] AC վերջնոյ
[21] AC արիութեան
[22] E ժամու
[23] E վարձս է

ժրութեամբ և սրբութեամբ[1] գործեցին[2] զգործս Աստուծոյ՝ զիա՞րդ ի դոյզն ամանակեան ընկալցին զվարձս, որ է յոյժ անիրաւութիւն և տգիտութիւն այսպէս բաշխելն, զի արդարութեան գործ է ըստ արժանեացն տալ զբաժին և ոչ ըստ մարդաթուին: Իսկ եթէ առ մարդիկ է գործ արդարութեան ըստ արժանեացն տալ բաժին և ոչ ըստ մարդաթուին[3], ապա որչափ ևս առաւել առ Աստուած, որ նա[4] իսկ ինքն է արեգակն արդարութեան: Վասն որոյ և ի սոյն վարդապետութեան տան մեզ ծանօթութիւն Գիրք Սուրբ և Աստուածաշունչ. ըստ[5] զանազան գործոցն լինել զանազան տեղիսն և զփառքն՝ վասն տեղեացն ասելն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, թէ՝ «Ի տան Հօր իմոյ օթևանք բազում են» [Յովհ. ԺԴ. 2], իսկ վասն փառացն Պօղոս ասէ, թէ՝ «Որպէս ա՛յլ փառք արեգական, և ա՛յլ փառք լուսնի, և ա՛յլ փառք աստեղաց. և աստղ քան զաստղ առաւել է փառօք[6]» [Ա. Կորն. ԺԵ. 40, 41]: Այսպէս իմա վասն[7] փառաց և տանջանաց, զի զոր օրինակ ո՛չ է կարգ տանել երկու աստղ հաւասար ի մին լոյս, նոյնպէս ո՛չ է կարգ տանել երկու արդարք հաւասար փառք[8], և ո՛չ երկու մեղաւոր[9] հաւասար մին տանջանաց, այլ բաժանեալ և որոշեալ է ըստ չափոյ մեծութեան և նուազութեան մեղաց և արդարութեան, նաև ըստ ժամանակին քանակութեան[10] և ըստ տիոց և ըստ պատահման եղանակին, կարծեմ թէ և ըստ կազմութեան խառնուածոյ մարմնոյն, նաև կամաւորի և ակամայի[11]՝ անգիտութեան[12] դիւրաւ բժշկելոյ և գիտութեան[13] նախահոգութեան[14]: Մահու չափ անօրէն, որ ի բռնութեան[15] և որ յոժար կամաց ծերոց, մանկանցն գիտնոց[16], հայհոյիչ լեզուաց՝ արտաքոյ քաւութեան[17] մեղուցելոց[18] արդար կշռօք[19] անսխալ և ճշմարտապէս հատուցանելոց[20] է հատուցումն յԱստուծոյ՝ արդարոց և մեղաւորաց, չարեաց և բարեաց[21]:

Իսկ թէ զի՞նչ են փառք արդարոց կամ տանջանք մեղաւորաց՝ հաւաստի ոչ են յայտնի մեզ, վասն որոյ[22] ասէ առաքեալ. «Զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ[23]» [Ա. Կորն. Բ. 9]: Բայց սուրբքն, որ հասու եղեն խորհրդոցն Աստուծոյ

---

1 F արիութեամբ
2 ABCDF գործեաց
3 ABCF > Իսկ եթէ առ մարդիկ է գործ արդարութեան ըստ արժանեացն տալ բաժին և ոչ ըստ մարդաթուին
4 BDF նախ
5 B ընդ
6 D > փառօք
7 ABCDF > վասն
8 F փառօք
9 F մեղաւորք
10 AC մանկութեան
11 D կամայի
12 DEF անգիտութիւն
13 A > դիւրաւ բժշկելոյ և գիտութեան, E > և գիտութեան
14 B նախահարս գիտութիւն, DF նախահոգութիւն
15 BCEF բռնութենէ, D բնութենէն է] բռնութեան
16 C գիտնաց
17 D քաւութիւն, E թողութեան
18 C մեղուցելօք
19 AC կշռաւ
20 E լինելոց
21 B > և բարեաց
22 BDEF զի
23 E > լուաւ

և հազարապետ կամաց նորա կոչեցան, այսչափ միայն աւանդեցին ի[1] մեզ, թէ արդարոց հոգիքն այնու փառաւորին, զի առաւել փառք, քան զայժմուս[2], մինչ զի զԱստուած դէմ յանդիման տեսանեն[3] որպէս ասէ առաքեալ, թէ՝ «Այժմ տեսանեմք ընդ հայելի օրինակաւ, յայնժամ՝ դէմ յանդիման» [Ա. Կորն. ԺԳ. 12]: Իսկ մարմինք արդարոց այնու փառաւորին, զի իբրև զարեգակն լուսաւոր զգեստաւորին՝ որպէս ասէ Տէրն յԱւետարանին[4]. «Յայնժամ ծագեսցին արդարքն իբրև զարեգակն» [Մատ. ԺԳ. 43], իսկ մեղաւորաց մարմինքն տանջին խաւարաւ և անշէջ հրով[5]:

Բեր տեսցուք, թէ ուստի՞ է լոյսն այն, զոր զգենուն արդարոց մարմինք, կամ հուր խաւարին[6], որով տանջին մեղուցեալ մարմինքն՝ նո՞ր ստեղծանէ[7] զայս: Երևի թէ ոչ. քանզի ասէ մեծն Բասիլիոս[8], թէ Աստուած ի կատարածի աշխարհիս զգալի հուրս զայս յերկուս բաժանէ՝ ի լոյս և ի հուր, զլոյս[9] պայծառ արդարոցն կազմէ զգեստ առանց հրոյ, իսկ զմնացեալ[10] այրեցող հուրն հաւաքէ ի տեղի պատշաճաւոր և անդ արկանէ զմեղուցեալ մարմինքն հանդերձ հոգովն. որ և զմեզ փրկեսցէ ի յաւիտենից հրոյն[11] և արժանի արասցէ արքայութեանն իւրում:

Եւ նմա փառք յաւիտեանս յաւիտենից[12], ամէն[13]:

---

1 DEF > ի
2 D զայժմոյս
3 D յանդիմանենն] յանդիման տեսանեն
4 BF յԱւետարանն
5 ABCDF > և անշէջ հրով
6 E խաւարային
7 AC ստեղծեալ
8 B Բասելիոս
9 D > զլոյս
10 A մնացեալն
11 B ի հրոյն
12 A > յաւիտենից
13 C > յաւիտեանս յաւիտենից , ամէն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան.....5

Յովհաննու Որոտնեցւոյ տիեզերալոյս ռաբունապետի արարեալ
ի բան Աւետարանին ըստ Յովհաննու, որ ասէ. «Ի սկզբանէ էր Բանն.
և Բանն էր առ Աստուած. և Աստուած էր Բանն... Ամենայն ինչ
նովաւ եղև» [Յովհ. Ա. 1, 3] 35

Եռամեծի և երիցս երանեալ բազմերջանիկ և տիեզերալոյս մեծ հռետորի
և անյաղթ փիլիսոփայի հայոց մեծաց Յովհաննու Որոտնեցւոյ
արարեալ մեկնութիւն բանին, որ ասէ. «Ո ստեղծ առանձին
զսիրտս նոցա» [Սաղ. ԼԲ. 15] 69

Յովհաննու Որոտնեցւոյ ասացեալ ի բան մարգարէին Դաւթի, որ ասէ.
«Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր և գործք ձեռաց քոց
երկինք են» [Սաղ. ՃԱ. 26].....119

Մեծ ռաբունապետին Յովհաննու Որոտնեցւոյ ասացեալ ի բանն առաքելական,
որ ասէ. «Նայեցարուք ընդ առաքեալն և ընդ քահանայապետ
խոստովանութեան մերոյ ընդ Յիսուս, որ հաւատարիմ է արարչին
իւրոյ» [Եբր. Գ. 1].....183

Յովհաննու Որոտնեցւոյ՝ քաջ հռետորի և արդիւնաբան ռաբունապետի,
արարեալ ի բան մարգարէին, որ ասէ. «Արդարութիւն Տեառն ուղիղ է
և ուրախ առնէ զսիրտս, պատուիրանք Տեառն լոյս են և լոյս տան աչաց,
երկիւղ Տեառն սուրբ է և մնայ յաւիտեան» [Սաղ. ԺԸ. 9].....203

Եռամեծի և երիցս երջանկի վարժապետին իմոյ Յովհաննու Որոտնեցւոյ
ասացեալ ի յաւրհնութիւն նորակերտ շինուածոյ տաճարին և
զանկակատանն առաքելական աթոռոյ վանիցն Ստաթէի, որ է գլուխ
և աթոռ Սիւնեաց վիճակին, ի բանն, որ ասէ. «Տէր ի տաճար սուրբ
իւրում, Տէր յերկինս յաթոռ իւրում» [Սաղ. Ժ .5] 237

Մեծ ռաբունապետին Յովհաննու Որոտնեցւոյ ասացեալ ի բան
առաքելոյն Պօղոսի, որ ասէ. «Մարդով եղև մահ, և մարդով՝
յարութիւն մեռելոց» [Ա. Կորն. ԺԵ. 21].....283

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բ

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՈՐՈՏՆԵՑԻ

ՄԵԿՆՈՂԱԿԱՆ-ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՃԱՌԵՐ

Քննական բնագրերը, առաջաբանը և ծանոթագրությունները
ԱՆՈՒՇ ՄԻՆԱՍՅԱՆԻ

Հրատարակչության տնօրեն՝ Տ. Եզնիկ արք. Պետրոսյան
Էջադրումը՝ Ղևոնդ քահանա Մայիլյանի.
Սեդրակ քահանա Ազնավուրյանի

Չափսը՝ 70x100 1/16, ծավալը՝ 19 տպ. մամուլ,
կազմը կոշտ, տպաքանակը՝ 300:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ – 2009